



张雅文 百年钟声：香港沉思录

ZHANG YAWEN

**THE SUMMONS OF  
CENTURIES PAST**  
Reflections On Hong Kong:  
A True Account

Translation from English into Armenian -  
Khoren GASPARYAN

Stepanakert 2020

ՉԺԱՆ ՅԱԿԵՆ

## ԴԱՐԵՐԻ ԿԱՆՉԸ

Մտորումներ Հոնկոնգի մասին.  
իրական պատմություն

Թարգմանությունն անգլերենից՝  
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ 2020

ՀՏԳ 821.581-3 Յավեն  
ԳՄԴ 84(5Չ)-4  
Յ 415

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

**Չժան Յավեն**

Յ 415 **Դարերի կանչը:** Մտորումներ Հոնկոնգի մասին.  
իրական պատմություն:  
Թարգմ. անգլերենից՝ Խորեն Գասպարյանի:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2020, 368 էջ:

Կին գրող և լրագրող Չժան Յավենի «Դարերի կանչը» ստեղծագործությունը մեզ է ներկայացնում ավելի քան հարյուր յոթանասուն տարվա պատմություն՝ լի խռովքով ու ընդվզումով, պարտություններով, պայքարով ու հաղթանակներով: Ներկայացվում է Հոնկոնգի պատմությունը՝ անգլիական գաղթիչների կողմից պարտադրված՝ Յին գահատոհմի (1636–1912) ստորագրած Նանկինյան նվաստացուցիչ համաձայնագրից մինչև Հոնկոնգի՝ մայրցամաքային Չինաստանին վերադարձը: Հեղինակն անդրադառնում է Հոնկոնգի կյանքի բոլոր ոլորտներին: Նրա գրչին հատուկ է և՛ փաստավերագրողի օբյեկտիվ շարադրանքը, և՛ հետազոտողի սուր ու դիպուկ աչքը, և՛ հրապարակագրի կրթոտ խոսքը, և՛ հայրենասեր ու նվիրյալ գրողի «սուբյեկտիվ կողմնակալությունը»:

ISBN 978-9939-1-1128-5

ՀՏԳ 821.581-3 Յավեն  
ԳՄԴ 84(5Չ)-4



© Zhang Yawen  
© China Translation and Publishing House

© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2020

## ԱՌԱՋԱԲԱՆ

Կին գրող եւ լրագրող Չժան Յավենը ծնվել է 1944 թվականին: Չինաստանի Գրողների ընկերակցության կողմից ընտրվել է որպես «ազգային մակարդակի գրող»: Նա միաժամանակ հանդիսանում է կենտրոնական կառավարության պատվավոր թոշակառու. այդպիսի թոշակ տրվում է գրականության բնագավառում աչքի ընկած եւ մեծ վաստակ ունեցող գրչի մարդկանց: Չժան Յավենը «Լու Սին» գրական մրցանակի, «Լավագույն ստեղծագործություններ» ազգային մրցանակի եւ փաստավավերագրական ու հրապարակախոսական հանրամատչելի վեպերի՝ Սյույ Ցզիի անվան մրցանակի դափնեկիր է: Հեղինակել է «Կյանքը պայքար է», «Չինուիին գետապոյի նշանառության տակ», «Կորեայի նախագահի չին բժիշկը», «Կյանքն ու մահը Ռուսաստանում» եւ այլ գրքեր:

Նրա հրապարակած գործերը՝ գեղարվեստական եւ փաստավավերագրական, կենսագրական վեպեր, ակնարկներ եւ պիեսներ, տասնյակ հազարավոր էջեր են կազմում: Չժան Յավենի «Չինուիին գետապոյի նշանառության տակ» վեպը՝ ՉԺՀ նախագահ Սի Ցզինփինը նվիրել է Բեյգիայի թագավոր Ֆիլիպին:

Չժան Յավենի ստեղծագործությունները թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, հիւնդի եւ այլ լեզուներով:

«Դարերի կանչը» մեզ է ներկայացնում ավելի քան հարյուր յոթնասուն տարվա պատմություն՝ լի խռովքով ու ընդվզումով, պարտություններով, պայքարով ու հաղթանակներով: Ներկայացվում է Հոնկոնգի պատմությունը՝ անգլիական գավթիչների կողմից պարտադրված՝ Ցին գահատոհմի (1636-1912) ստորագրած Նանկինյան նվաստացուցիչ համաձայնագրից մինչեւ Հոնկոնգի՝ մայրցամաքային Չինաստանին վերադարձը եւ մինչեւ մեր օրերը: Հեղինակն անդրադառնում է Հոնկոնգի կյանքի բոլոր ոլորտներին: Նրա գրչին հատուկ է եւ՝ փաստավավերագրողի օբյեկտիվ շարադրանքը, եւ՝ հետազոտողի սուր ու դիպուկ աչքը, եւ՝ հրապարակագրի կրքոտ խոսքը, եւ՝ հայրենասեր ու նվիրյալ գրողի «սուբյեկտիվ կողմնակալությունը»:

«Դարերի կանչը մեզ ասում է, որ աշխարհը մի վայր է, որտեղ ուժեղներն ուտում են թույլերին: Երկչոտների վարձը հարձակումների ենթարկվելն է: Թույլերի վարձը ահաբեկչության և սպառնալիքի ենթարկվելն է: Հինավուրց ժամանակներից մինչ օրս մարդկային ցեղը, կրկին ու կրկին, վերապրել է այս պնդման անհերքելի ճշմարտությունը...

Պատմությունը հայելու է նման: Այն արտացոլում է անցյալի մեր օրերը և դրանց նախորդած բոլոր օրերը, ճիշտ այնպես, ինչպես արտացոլում է ժողովրդի ուժեղ և թույլ կողմերը: Նրանք, ովքեր մոռանում են անցյալի իրենց օրերը, մոլոր ու կորուսյալ՝ կթափառեն այսօրվա մեջ...», - գրում է Չժան Յավենը:

«Մենք չենք կարող ինքներս մեզ թույլ տալ՝ ընկղմվել կույր ու ինքնագոհ լավատեսության մեջ և չենք կարող ինքներս մեզ ձաղկել: Դա է ամենակարեւորը», - այսպիսի հետեւության է հանգում հեղինակը՝ կողմնակիցը լինելով ողջամիտ իրատեսության:

Խ.Գասպարյան

ԳԼՈՒԽ 1

**ՉԻՆ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՐԿԱՐ ՈՒ ԴԺՎԱՐԻՆ  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Հոնկոնգը Մալվիները չէ, Չինաստանն էլ Արգենտինան չէ»: -  
Նվաստացված եւ դարերով ճնշված ազգի հոգու խորքերից  
արձակված ճիչ:

**Պատմության կանչն արթնացնում է  
ազգի քնած հոգին**

2012 թվականի մայիսի 20-ն այն օրն էր, երբ ծաղկեց կրակե փյունիկը:

Երբ քայլում էի Հոնկոնգի փողոցներով, արքայական դելուսիքսների (որ չինարեն կոչվում են «փյունիկ ծաղիկներ») բոցավառ կարմիր ծաղկաթերթերն ամբողջովին ծածկել էին բարձր ճյուղերի կատարները: Հեռվից նայելիս դրանք ասես բոցե ողկույզներ լինեին: Երկաթբետոնից կառուցված աղմկաշատ աշխարհում այդ խաղաղ, տպավորիչ ծաղկաբույլերը հմայում էին իրենց փթթուն կենսականությամբ՝ տարածքին հաճելի ու գրավիչ տեսք հաղորդելով: Ծառից ծառ անցնելով անօրինակ գեղեցկություն ունեցող կարմրաբոց փյունիկ ծաղիկների մոտով՝ այնպիսի մի զգացումով էի համակված, ասես քայլում էի բանաստեղծության միջով: Դրանք կյանքի աննկուն հարատեւության նշան էին եւ Հոնկոնգի ոգու խորհրդանիշ:

Նայելով արեւն ու երկինքը ծածկող բարձրահարկ շենքերի ուղղությամբ, մարդկանց խառնիխուռն հոսանքին՝ չէի կարող կասեցնել երեւակայությանս դեգերումները մտքերիս անտառում: Գլխումս հնչում էին Վեն Իդոյի «Երգ յոթ որդոց մասին» հայտնի բանաստեղծության տողերը.

*Հոնկոնգ,  
Գիշերով հսկում եմ արթուն՝  
Կայսրության դարպասները պահպանող ընծառյուծ:  
Մայր: Խոնարհ եմ ես, բայց պատվար եմ կուռ,*

Չժան Յավեն

*Նողկայի, դաժան ծովառյուծն է հարձակվում վրաս,  
Մարմինս լափում, կուլ տալիս մնացորդներս:  
Մայր: Լալիս եմ ես՝ զուր ողբալով քեզ համար:  
Մայր: Թող թաքնվե՛մ քո գրկում:  
Մայր: Վերադառնա՛լ եմ ուզում, մայր:*

Սրտակեղեք եւ ահասարսուռ այդ ողբն իմ մեջ վաղուց քնած հիշու-  
ղություններ արթնացրեց:

Ես մեծապես հարգում եմ Վեն Իդոյին. չին ազգը նրա նման շատ  
մտավորականների, խիզախ եւ բարոյական ամուր ողնաշար ունեցող  
մարդկանց կարիք ունի: Չի կարելի ցավ չապրել այն երկարուձիգ տա-  
րիների համար, որ չին ժողովուրդն անց է կացրել ֆեոդալական տիրա-  
պետության ներքո: Մեզ գրկել են արժանապատվությունից, կերպ ու  
դիմագծից, բարոյական սկզբունքներից՝ դրանք փոխարինելով թա-  
գավորների եւ իշխանության հանդեպ ստրկամիտ ստորաքարշու-  
թյամբ: Բարոյական սկզբունքներ չունեցող մարդը նման է գետնին սո-  
ղացող՝ կոտրված ողնաշարով կենդանու: Բարոյական սկզբունքներ  
չունեցող ազգը թույլ է եւ հեշտությամբ բռնության ու ծաղրի ենթարկ-  
վող, զոհ եւ ավար՝ մեծ տերությունների, կերակուր՝ նվաճողների հա-  
մար:

Հոնկոնգում եղած ժամանակ հաճախ էի խորհրդածում պատմու-  
թյան եւ այսօրվա մասին՝ մտքով թափառելով իրականության եւ այն  
բանի միջեւ, ինչը սոսկ իմ երեւակայությունն էր: Սիրտս դուրս էր նա-  
յում աչքերիս միջով՝ Հոնկոնգի փողոցների պայծառ, շլացուցիչ հա-  
մայնապատկերից ներքին հայացք գցելով ոչ վաղուցվա պատմությա-  
նը:

Հյուրանոցիս սենյակի պատուհանի մոտ կանգնած՝ մոտեցող երե-  
կոյի մթնշաղի միջով նայում եմ ծովախորշում Վիկտորիա նավա-  
հանգստի՝ թանաքանկարի պես սփռված հանդարտ գեղեցկությանը՝  
պարզ, խաղաղ ու նրբագեղ: Բայց մարդկության պատմությունը թա-  
նաքանկար չէ: Ուժեղներն ամենուր ճնշում են թույլերին: Ամենուրեք  
դաժան թալան է եւ արյունոտ սպանդ:

Ավելի քան հարյուր յոթանասուն տարի առաջվա իրադարձություն-  
ներն ընդամենը մեկնած ձեռքի չափ են հեռու մեզնից:



Պատմության այդ շրջանը մեր ժողովրդի աչքերի առջեւ կախված հայելու է նման, մեր ազգի անցյալի ապացույց: Եվ զգուշացնում է Կրակե կայսեր եւ Դեղին կայսեր\* հետևորդներին՝ երբեք չմոռանալ, որ չին ազգը վերջին՝ ավելի քան հարյուր հիսուն տարվա ընթացքում շատ նվաստացումներ է տեսել:

1842 թվականի օգոստոսի 29-ը չին ազգի նորագույն պատմության մեջ ամենանվաստացուցիչ օրն էր: Այդ օրը երկինքը քողարկել էր իր դեմքը, եւ երկիրն արտասվում էր:

Շանհայի Նանկինյան փողոցի Ցզինան հիևավորոց տաճարի զանգերի՝ անհիշելի ժամանակներից ի վեր անփոփոխ թվացող ծորուն ձայնը ծավալվում էր օդում, այնուամենայնիվ, ասես վկայելով այդքան շատ փոփոխությունների մասին: Այդ զանգերը կարծես արթնության կոչնակ լինեին մեր ժողովրդի քնած հոգիների համար, որ չին ազգին նախազգուշացնում էին նվաստացման դարաշրջանի լուսաբացի մասին:

Նանկինի Սյազուան շրջանում բրիտանական քսանվեց ռազմական միագիծ շարված նավարկում էին Յանցզի գետով՝ տասնյակ թնդանոթներ ուղիղ Նանկին քաղաքի կողմը պարզած: Հեռվից նայելիս դրանք նման էին հզոր գետի հոսքը կասեցնող մալուխի, ճիշտ այնպես, ինչպես եղավ շուտով՝ կասեցնելու համար Ցին գահատոհմի կառավարումը: Բրիտանացիները Ցին գահատոհմի կառավարությանն իրենց դիվանագիտական վերջնագիրն ուղարկեցին: Եթե չինական կառավարությունը չընդուներ բրիտանական պայմանները, բրիտանական նավերն անմիջապես կրակ կբացեին Նանկինի վրա:

Պեկինի Արգելված քաղաքի գահասենյակում նստած էր վաթսու-նամյա Դաոզուան կայսրը՝ անհանգիստ ու խոժոռված: Խիստ լարված իրավիճակ էր:

Դեռ 1821 թվականի սկզբին, երբ երեսունիննամյա Դաոզուանը գահ բարձրացավ, Ցին գահատոհմի «Կանսիի եւ Ցյանլունի բարգավաճ դարաշրջանի»\*\* ավարտին, ձախողումների նշաններն արդեն ակն-

\* Չինաստանի ամենավաղ շրջանի կիսաառասպելականացված կառավարիչներից:

\*\* Այս ժամանակաշրջանն ընդգրկում է Քրիստոսից հետո 1661-1796 թվականները: Ցին գահատոհմի հարստությունն ու հզորությունն իր գագաթնակետին էր հասել Ցյանլուն եւ Կանսի կայսրերի իշխանության օրոք:

## Չժան Յավեն

հայտ էին, որոնք հետեւանք էին այսպես կոչված «Յգյացին-Դառգուան անկման»\*: Ազգը հազարամի խնդիրներ ուներ թե՛ ներսից, թե՛ դրսից, եւ հոգսերի տակ ծանրաբեռնված բնակչությունը հաճախ էր ապստամբում այլասերված ու կաշառակեր մանր պաշտոնյաների դեմ: Արեւմտյան տերությունները, թոյլ տեղ փնտրելով, որպեսզի միջամտեն երկրի ներքին գործերին, չին ժողովրդին թունավորում էին ափիոնով, որի գործածումը Յին կառավարության կողմից բազմիցս արգելվել էր: 1821-ից 1834 թվականներին արքունիքը ութ հռչակագիր հրապարակեց, որոնցով արգելում էր իր հպատակներին ափիոն ծխել, բայց, չնայած շարունակական արգելքներին, այդ սովորույթը շարունակեց գոյատևել: 1838 թվականի դեկտեմբերին Դառգուան կայսրը բարձրաստիճան պաշտոնյա Էին Յգեսյոյին ուղարկեց հարավարեւելյան Գուանդուն նահանգ՝ ափիոնի առետուրը դադարեցնելու կայսերական հանձնարարագրով: Լինը հայտարարեց. «Քանի դեռ ափիոնի առքուվաճառքը շարունակվում է, ես չեմ վերադառնա [Պեկին]: Երդվում եմ այս գործը հասցնել իր ավարտին: Ոչ մի անհաղթահարելի խոչընդոտ չեմ տեսնում»: 1839 թվականի մարտին, Լյանգուանի (ներկայիս Գուանդուն եւ Գուանսի նահանգները) գեներալ-նահանգապետ Դեն Տինչժեւի եւ Գուանդունի ռազմածովային ուժերի զլխավոր հրամանատար Գուան Տյանպեյի վճռական աջակցությամբ, Լինը անգլիացի առետուրականներից բռնագրավեց մոտ 1,2 միլիոն կիլոգրամ ափիոն պարունակող քսան հազար արկղ եւ դրանք հրապարակայնորեն ոչնչացրեց Հարավչինական ծով թափվող Բոկկա Տիգրիսի ափերին՝ գետաբերանի մոտ: Դա ուժգին հարված էր ափիոնի մանրավաճառությամբ զբաղվող անգլիացիներին:

Անգլիացիները խիստ վրդովվեցին: 1840 թվականի հունիսին նրանք Չինաստանի դեմ սանձազերծեցին Ափիոնային առաջին պատերազմը, որ տևեց երկու տարի: Յին գահատոհմի նավատորմն ու շարժակազմը չէին կարող մրցակցել բրիտանական նավատորմի նավերի ու զենք-զինամթերքի հետ: Գուան Տյանպեյն իր կյանքը տվեց հայրենիքի համար, իսկ Չեն Հուաչենը՝ Յյաննան նահանգում (ներկա-

---

\* Տյանլունին հաջորդած երկու կայսրերը: Կառավարել են Քրիստոսից առաջ 1796 -ից մինչեւ 1850 թվականները:

յումս՝ Ցզյանսու նահանգ, Շանհայի մունիցիպալիտետ եւ Անհոյ նահանգ) Յին կառավարության զինված ուժերի հրամանատարը, զոհվեց ճակատամարտում: Մանչժուր ազնվական Յիշանը դիմեց խաղաղության խնդրանքով, երբ իր մտերիմ ընկեր Իցզինի զորքերը ջախջախիչ պարտություն կրեցին ճակատամարտում, իսկ Իշանը եւ իր նման մյուս մանչժուր ազնվականները հանձնվեցին եւ սպիտակ դրոշ պարզեցին: Անգլիացիներն ի վերջո հարձակվեցին եւ գրավեցին Գուանչժուուն, Սյամենը, Դինհայը (այժմ՝ Չժոուշան քաղաքը Չժեցզյան նահանգում), Նինբոն, Ուսունը (այն ժամանակ առանձին նավահանգիստ, այժմ՝ Շանհայի մաս), Շանհայը եւ Չժենցզյանը՝ 1842 թվականի օգոստոսի 29-ին վերջնականապես սպառնալով Նանկինին:

Դառգուան կայսրն սկզբում հաշվի չէր նստում իրողության հետ՝ պնդելով, թե առաջին իսկ հարվածի դեպքում անգլիական ուժերը պարտություն կկրեն: Յին կառավարության ուժերի ջախջախումից հետո այդ թույլ, անկայուն անձնավորությունն ստիպված էր խելահեղորեն լուծումներ փնտրել առանց որեւէ հստակ ծրագրի ունենալու: Արքունիքի՝ կապիտուլյացիային կողմնակից խմբակցության պնդմամբ նա պատերազմի կողմնակից նշանավոր այնպիսի գեներալների, ինչպիսիք էին Լին Ցզեսյույը, Դեն Տինչժենը, Յան Ֆանը, դատի տվեց եւ պաշտոններն իջեցրեց: Լին Ցզեսյույը գրկվեց իր կոչումներից եւ «ուղարկվեց Իլի, որպեսզի մեղքերը քավի»: Կնոջից եւ երեխաներից բաժանվելիս Լինը գրեց իր բանաստեղծական հայտնի տողը. «Ես ապրում եւ մեռնում եմ իմ երկրի համար՝ անկախ իմ երջանկությունից կամ դժբախտությունից»: Դեն Տինչժենը նույնպես պաշտոնանկ արվեց ինչոր մի պատրվակով եւ նույնպես աքսորվեց Իլի՝ Չինաստանի հեռավոր հյուսիս-արեւելքում գտնվող ամայի մի տարածք:

Դառգուան կայսրը դարձյալ դիմեց կապիտուլյացիային կողմնակից խմբակցության անդամներին, այնպիսի մարդկանց, ինչպիսիք էին Մուջանգզան, Յիշանը, Իշանը եւ Քեյինգը, փնտրելով փոխգիջում, որը կդադարեցներ պատերազմը: Նա Քեյինգին եւ Իլիբուին՝ մեկ այլ մանչժուր ազնվականի, կայսերական մանդատով ուղարկեց օդային ճամփորդության դեպի Նանկին: Այդ երկու բարձրաստիճան անձինք չբանակցեցին, այլ ավելի շուտ ամբողջովին ընդունեցին անգլիացիների թելադրած «խաղաղության պայմանները»:

## Չժան Ցավեն

1842 թվականի օգոստոսի 29-ին բրիտանական HMS Cornwallis ռազմանավի տախտակամածին Քեյինգը, Իլիբուն եւ բրիտանական ներկայացուցիչ Սըր Հենրի Փոթինջերը ստորագրեցին ժամանակակից Չինաստանի համար նվաստացուցիչ, ինքնիշխանությունից զրկող առաջին անհավասար պայմանագրերից մեկը՝ Նանկինյան համաձայնագիրը:

Համաձայնագիրը բաղկացած էր տասներեք բաժիններից: Դրանցից ամենակարեւորներն էին՝ Բաժին 1-ը, որով Հոնկոնգը հանձնվում էր բրիտանացիներին, Բաժին 2-ը, որով բացվում էին հինգ «պայմանագրային նավահանգիստներ»՝ Գուանչժոուի, Սյամենի, Ֆուչժոուի, Նինբոյի եւ Շանհայի նավահանգիստները, եւ Բաժին 3-ը, որով Չինաստանը պարտավորվում էր քսանմեկ միլիոն արծաթե դոլար վճարել՝ որպես փոխհատուցում ափիոնի, ռազմական ծախսերի եւ առետրային պարտքերի դիմաց:

Անգլիացիներն էին ներխուժել Չինաստան, բայցեւայնպես Չինաստանն էր պարտավորվում տարածք զիջել բրիտանացիներին, փոխհատուցում վճարել եւ խոնարհ ենթակայությամբ զիջել ազգի ինքնիշխանությունն ու արծաթը: Դա չին ժողովրդի կրած առաջին ծանր կորուստն էր: Բայց Չինաստանի անկումն ու նվաստացումը դեռ նոր էին սկսվել:

19-րդ դարում Բրիտանիան առաջին երկիրն էր, որտեղ տեղի ունեցավ արդյունաբերական հեղափոխություն: Բրիտանիան դարձավ համաշխարհային առաջին կապիտալիստական տերությունը՝ հետագայում վերաճելով աշխարհի ամենահզոր գաղութային կայսրության: Բրիտանական կղզիներն ընդգրկում էին ընդամենը 244 000 քառակուսի կիլոմետր տարածք, մինչդեռ կայսրության ծաղկման գագաթնակետին անգլիացիները ներխուժելով գրավել եւ գաղութացրել էին Բրիտանական կղզիներից ավելի քան հարյուր քառասուն անգամ շատ տարածքներ:

Անտարկտիկայից դուրս՝ բոլոր մայրցամաքներում բրիտանական գաղութներ կային՝ Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հնդկաստան, Սյանմար, Պակիստան, Մալայզիա, Մինգապուր, Բանգլադեշ, Շրի Լանկա, Հարավային Աֆրիկա, Կամերուն, Տանզանիա, Զիմբաբվե, Ուգանդա, Մավրիկիա, Մոզամբիկ, Կիպրոս... նույնիսկ Միացյալ

Նահանգների շատ տարածքներ ժամանակին բրիտանական գաղութներ էին եղել: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Բրիտանիան վերահսկում էր երկրագնդի ամբողջ մակերեսի մեկ քառորդը: Բրիտանացիների կողմից յուրաքանչյուր գաղութի նվաճում ուղեկցվել է դաժան ներխուժումով և կատաղի թալանով:

Աշխարհի մեծ տերությունները վաղուց էին ազաի հայացքով նայում Չինաստանին՝ Արեւելքի այդ հարուստ հսկային: Բայց Չինաստանի ժողովուրդը, ուրախանալով իր խաղաղ բարգավաճմամբ, մեկուսացրել էր իրեն արտաքին կապերից ու շփումներից՝ անտեսելով դրսի տերությունների արագ հզորացումը, երանելիորեն անտեղյակ արտաքին ներխուժման վտանգներին: Այդ պատճառով դրսի տերությունները Չինաստանն անվանում էին «քնած առյուծ»: Տեսնելով, թե ինչպես է Բրիտանիան առանց մեծ ջանքերի առյուծի մարմնից մի մեծ կտոր պոկում, իսկ վերջինս անկարող է ընդդիմանալ, այդ տերությունները շտապեցին հետեւել Բրիտանիայի օրինակին: Նանկինյան համաձայնագրի ստորագրումը բացեց Պանդորայի արկը, և արտաքին տերությունները գիշատչաբար սկսեցին հոշոտել չին ժողովրդի մարմինը:

Չինաստանը դրսի տերությունների համար դարձավ թալանված հարստություն ձեռք բերելու հիմնական աղբյուր և գաղութների համար մղված պատերազմների թատերաբեմ:

- 1840 թվականին Բրիտանիան ներխուժեց Չինաստան: Սկսվեց պատմության մեջ հայտնի Ափիոնային առաջին պատերազմը, որը տևեց մինչև 1842 թվականը:

- 1856-ին բրիտանա-ֆրանսիական համատեղ ուժերը երկրորդ անգամ ներխուժեցին Չինաստան: Պատմության մեջ դա հայտնի է Ափիոնային երկրորդ պատերազմ անվամբ, որ տևեց մինչև 1860 թվականը:

- 1883 թվականին Ֆրանսիան իր հերթին ներխուժեց Չինաստան: Դա Չին-ֆրանսիական պատերազմն էր, որ տևեց մինչև 1885 թվականը:

- 1894 թվականին Ճապոնիան ներխուժեց Չինաստան: Դա Չին-ճապոնական առաջին պատերազմի շրջանն էր և տևեց մինչև 1895 թվականը:

## Չժան Ցավեն

- Իսկ 1900-1901 թվականներին ութ երկրներ իրենց համատեղ ուժերով կրկին ներխուժեցին Չինաստան:

Այս պատերազմներից յուրաքանչյուրն ավարտվեց Չինաստանի պարտությամբ: Ցին արքունիքի անկարողությունն ու կոռումպացվածությունը, ուժեղ բանակից զուրկ լինելը միայն մեկ բանի էին հանգեցնում. երկիրը մաս-մաս հանձնվում էր օտար տերություններին:

Հարյուր տարվա ընթացքում Ցին արքունիքը ստիպված էր ստորագրել տարբեր բնույթի ավելի քան հազար պայմանագրեր բոլոր այն երկրների հետ, որ կարելի է պատկերացնել: Պայմանագրերից յուրաքանչյուրը պահանջում էր տարածք եւ փոխհատուցում, նվաստացնում էր երկիրը եւ գրկում ինքնիշխանությունից:

Միայն Բրիտանիայի հետ տասնչորս պայմանագիր կնքվեց: Դրանք էին՝ Գուանչժոուի համաձայնագիրը, Նանկինյան համաձայնագիրը, Տյանցզինի համաձայնագիրը, Տյանցզինի լրացուցիչ համաձայնագիրը, Պեկինյան կոնվենցիան, Ալկոկի կոնվենցիան, Չեֆուի կոնվենցիան, Չեֆուի կոնվենցիայի լրացուցիչ համաձայնագիրը, Կալկաթայի կոնվենցիան, Պեկինյան երկրորդ կոնվենցիան, Չին-ռուս-բրիտանական «Եզրափակիչ արձանագրությունը» եւ Մեծ Բրիտանիայի ու Չինաստանի միջեւ կնքված՝ Տիբեթի մասին կոնվենցիան:

Նանկինյան համաձայնագիրը, Պեկինյան կոնվենցիան եւ Պեկինյան երկրորդ կոնվենցիան այն երեք պայմանագրերն էին, որոնցով Հոնկոնգը հանձնվում էր բրիտանացիներին:

Ասում են, որ Չինաստանի կողմից վճարված փոխհատուցումների ընդհանուր արժեքը հավասար էր ավելի քան 30 միլիոն կիլոգրամ արծաթի կամ տասնմեկ անգամ գերազանցում էր Ցին կառավարության 1901 թվականի տարեկան եկամուտը:

Չգիտեմ՝ այդ թիվը ճշգրիտ է թե ոչ, բայց գիտեմ, որ Եզրափակիչ արձանագրության մեջ, որ ստորագրվել էր Ռուսաստանի, Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի, Իսպանիայի, Նիդեռլանդների եւ Բելգիայի հետ, Չինաստանն ստիպված էր վճարել 450 միլիոն թաեյ (*մեկ թաեյը հավասար էր 50 գրամի- ծ. թ.*) արծաթին հավասար փոխհատուցում, որ վճարման ենթակա էր ավելի քան երեսունինը տարի՝ տարեկան 4% տոկոսադրույ-

քով: Վերջնական վճարումը գերազանցում էր 980 միլիոն թաեյը: Սիմոնոսեկիի չին-ճապոնական պայմանագրում նշված էր, որ Ճապոնիան ստանում է Թայվանը, Թայվանին մերձակա Պենսիու կղզիները, Լյաոդունի թերակղզին և երկու հարյուր միլիոն թաեյ Չինաստանից՝ որպես փոխհատուցում:

Օտար տերություններին արձաթով վճարված այդ փոխհատուցումների բեռն ուղղակիորեն ընկած էր հասարակ չին ժողովրդի ուսերին:

Կարելի էր ակնկալել, որ մաքուր խիղճ և ազգային ինքնասիրություն ունեցող ցանկացած մեկը Քեյինգի փոխարեն, լիազորված լինելով Բրիտանիայի հետ Նանկինյան համաձայնագիրը ստորագրելու կայսերական մանդատով, մի պայմանագիր, որ ստորագրվել էր պարտադրանքի ուժով, և մեկը, որ ներկայացնում էր ազգային նվաստացում ու ինքնիշխանության կորուստ, իր պարտքը կկատարեր ծանր սրտով, պատասխանատվության և ամոթի զգացումով: Ընդհակառակը: Համաձայնագրի ստորագրումը «տոնելու» համար կազմակերպված բանկետին այդ ծեր մանդարինը, որ արդեն հիսուն անց էր, փոխարենը շատ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում սեւ բալի լիկյորի և ելակի բրենդիի նկատմամբ, և մի քանի տասնյակ գավաթ դատարկելուց հետո անկառավարելի դարձավ ու սկսեց գոռոռալով մանջուրական ավանդական երգեր երգել: Բրիտանացիները վկայել են այս խեղկատակային վարքագծի մասին: Անգլիացի հեղինակ Ֆրենկ Ուելչն իր «Հոնկոնգի պատմություն» գրքում գրում է. «Ռազմածովային նավատորմում ծառայող ականատեսներից մեկն ասում էր, որ պարոն Զ-ն (Քեյինգը) ըստ երեւոյթին առնվազն հիսուն բաժակ ոգելից խմիչք էր կոնծել և երգում էր: Կարո՞ղ եք պատկերացնել այդ տեսարանը, երբ կայսեր հորեղբայրը երգում է»:

1843 թվականի հունիսի 26-ին Քեյինգը Հենրի Փոթինջերի հետ մեկնեց Հոնկոնգ՝ Նանկինյան համաձայնագրի տեքստերի պաշտոնական փոխանակումը նշող արարողության համար: Ճաշկերույթի ժամանակ Փոթինջերը Քեյինգին նվիրեց մանջուրական հին ընտանիքի մի դիմանկար: Քեյինգն արտասովելու չափ հուզվեց և անմիջապես հայտարարեց, որ Փոթինջերի որդին կլինի նաեւ իր հոգեզավակը: Ապա, որպես փոխադարձ երախտագիտության նշան, հանձնեց իր բերած ոսկե մատանիներն ու զեղազրույամբ զարդարված թղթե հովհարները:

## Չժան Յավեն

Փոթինջերը Քեյինգին նաեւ արեւմտյան մի դանակ նվիրեց: Յին պաշտոնյայի զգեստն արցունքներով էր ողողվել, եւ նա երկար ժամանակ երախտագիտությամբ գրկել էր Փոթինջերին:

Ո՞վ էր այդ Փոթինջերը՝ Հոնկոնգի առաջին նահանգապետը եւ Բրիտանիայի՝ Չինաստան ներխուժման առաջապահը: Նա անգլո-իռլանդական հայտնի ընտանիքում ծնված գինվոր էր եւ Ափիոնային առաջին պատերազմի ժամանակ հսկայական ծառայություններ էր մատուցել Բրիտանիային: Փոխարինելով չարաբախտ Չարլզ Էլիոթին՝ նա քսանվեց ռազմանավ էր ղեկավարել Հոնկոնգի հյուսիսում՝ հարձակում գործելով եւ գրավելով Չժոուշանը, Չժենհայը եւ Նինբոն, հասնելով Նանկին եւ Յին կառավարությանը ստիպելով ստորագրել Նանկինյան համաձայնագիրը:

Այստեղ ես կարող եմ ցած ղնել գրիչս եւ հառաչել՝

Որ երկիրը ներկայացնող կառավարական բարձր պաշտոնյան կարող էր այնքան տխմար լինել, կարող էր այնքան ստորաքարշ ու շողոքոթ լինել, որ թշնամուն նայել որպէս բարեկամի... եւ երկիրը քանիցս դիմել այդ նախարարի ծառայությանը: Էլ ինչպե՞ս Չինաստանը բաժան-բաժան չիներ օտար տերությունների կողմից:

Առավել ողբալի էր, որ Քեյինգը նմանատիպ վարքագիծ ունեցող միակ չինացին չէր, որը խոնարհվում էր օտարերկրացիների առջեւ ու քճնում նրանց՝ առանց վարանելու վաճառքի հանելով հարազատ երկիրն ու հարազատ ժողովրդի շահերը հանուն սեփական խղճով գոյության: Ժամանակին դա չինական սրբագործված ավանդույթ էր, մեր ժառանգության փտած, իր դարն ապրած տարրերից: Կայսերական ֆեոդալական տիրապետության օրոք չինացիներին թույլ չէր տրվում դիմադրել, նրանց սովորեցնում էին ստրուկների նման վարվել: Թույլատրված էր միայն խոնարհվել մինչեւ գետին՝ թե՛ կայսեր, թե՛ իրենց նախնիների ու ավագների առջեւ: Դրա համար էլ, երբ զավթիչներն եկան, նրանք միայն խոնարհվել գիտեին, ոչ թե դիմադրել:

Իր «Դավաճանության տարիները» խոհագրության մեջ գեներալ Լյու Յաչժոուն վերլուծում է դավաճանական այդ վարքագծի աղճատված արմատական պատճառները եւ գտնում, որ դրանք իսկապէս խորն են.

«Չինաստանը դավաճանների հարուստ պատմություն ունի: Եթե



անուն առ անուն թվարկենք, ապա դրան վերջ չի լինի: Բայց որտե՞ղ գտնենք իրական դավաճաններին: Մեր սրտերում: Չինաստանի պատմության մեջ զանգվածային դավաճանության երկու զագաթնակետային շրջան է եղել: Մեկը 1884-ին էր: Մյուսը՝ ճապոնական ագրեսիայի դեմ պատերազմի ժամանակ (1937-1945): Կա երկու բնորոշ գիծ, որոնցով կարելի է ճանաչել դավաճանին: Նախ՝ նրանք զուլխ են խոնարհում օտար իշխողների առջեւ. ստրուկի կատարյալ պատկեր: Երկրորդ՝ նրանք ներքաշվում են քաղաքացիական պատերազմի մեջ եւ զորքերն ուղղորդում են իրենց հայրենակիցների դեմ՝ նրանց պատժելու համար, ցուցաբերելով անօրինակ «հերոսություն»:

Չինաստանի դիմադրողական պատերազմն ընդդեմ Ճապոնիայի տեւեց ութ երկարուձիգ տարիներ. այդ ընթացքում մահացավ կամ վիրավորվեց երեսուն միլիոն չինացի:

Արդյո՞ք դա սոսկ այն պատճառով էր, որ մեր զենքերը հնացած էին: Արդյո՞ք այն պատճառով էր սոսկ, որ Չինաստանը չունեւ ամրակուռ ռազմականներ եւ հզոր թնդանոթներ:

Ո՛չ: Պատճառն այն էր, որ չին ժողովուրդը, մի դույլ սորուն ավազի պես, անկարող եղավ միավորվել ու դիմակայել ընդհանուր թշնամուն: Ու նաեւ այն, որ մեր ժողովուրդն այսօր հազվադեպ է Յուե Ֆեյի (1103-1142) ու Լին Ցզեսյույի նման հայրենասերներ ծնում, մինչդեռ թշնամու հետ Վան Ցզինվեյի (1883-1944) պես համագործակցողներն անպակաս են:

Ճապոնիայի՝ Չինաստան ներխուժման ժամանակ ի հայտ եկան երկու առանձին կեղծ «վարչակարգեր», երկուսն էլ՝ ճապոնական ավագակախմբերին խոնարհաբար ժպտացող խամաճիկներ՝ «Նանկինյան կառավարությունը» եւ «Մանչժուո-գո» («Մանջուրիա») պետությունը: Երկուսի խամաճիկային բանակներում էլ հսկայական թվով չին դավաճաններ էին ծառայում:

Լու Սինը մի առիթով չին ազգի նվաստ բնույթի մասին ասել է. «Չինաստանը սիրում է ասել, թե խաղաղություն է սիրում: Բայց իրականում սիրում է կռվել, սիրում է, երբ ուրիշներն են կռվում, եւ սիրում է, երբ սեփական ժողովուրդն է կռվում: Նա չի համարձակվում կռվել միայն օտար զավթիչների դեմ»:

Նույն թվականին բրիտանական «Փանչ» պարբերականն այսպես

## Զժան Յավեն

զնահատեց Նանկինյան համաձայնագիրը. «Կակաչի պատերազմն ավարտված է: Մեր փամփուշտներով եւ վառողով մենք խավարամիտ չին ժողովրդին կարելոր դաս ենք տվել եւ, բացի այդ, խիստ տպավորիչ շահույթ ենք ստացել: Բայց բանը փողը չէ: Տոն Բուլը չին ժողովրդի վրա այնքան շատ վառող ու փամփուշտ է ծախսել, այնքան չուզուներ ծուլածողեր է կիրառել, այսպիսով նա ճոխ փոխհատուցում կստանա: Նա օգտագործեց երկու կամ երեք հազար երկոտանի կենդանիների արյունը (չին ժողովրդի կյանքը) բարբարոսների հարցերը լուծելու համար: Փողից եւ շքեղությունից զատ մենք նաեւ չինական հինգ նավահանգիստներ ձեռք բերեցինք բրիտանական առետուրը զարգացնելու համար: Քաղաքական գործիչներն ու առետրականներն ուրախությունից խենթացել են՝ շահույթ ստանալու հույսով, պատկերացնելով չինական կայսերը Մանչեսթրում պատրաստված վերնաշապիկներ հագնելիս, նրա կանանց ու հարճերին՝ Մանչեսթրի բամբակյա վերնաշապիկներով, իսկ պալատական բոլոր պաշտոնյաներին՝ Շեֆիլդի դանակ-պատառաքաղ գործածելիս»:

Հողվածում խոսվում է նաեւ Չինաստանի նկատմամբ բրիտանացիների արհամարհանքի մասին: Չինացիները բնորոշվում են որպես «ծեծված, անուրախ մի ժողովուրդ, կոտրված ազգի անամոթ ստրուկներ»:

Ամերիկայի նախագահն այդ ժամանակ Չինաստանի փորձն ընդունեց որպես նախազգուշական դաս: Նա զգուշացրեց իր հայրենակիցներին. «Մենք չպետք է անենք այնպես, ինչպես Չինաստանն արեց: Եթե հետեւենք Չինաստանի նույն աղետաբեր քաղաքականությանը, եթե մնանք ինքնահավան ու ինքնագոհ եւ ձգտենք ապրել հանգստավետ հաճույքի գրկում՝ մեր սեփական սահմաններում ներփակված, աստիճանաբար կթաղվենք կոռուպցիայի եւ քայքայման մեջ՝ կորցնելով մեր երկրի սահմաններից դուրս ունեցած բոլոր հետաքրքրությունները, անձնատուր լինելով ճոխության ու շքեղ կյանքի: Պայքարի ազնիվ կյանքը, տքնաջան աշխատանքն ու խիզախումը կմոռացվեն իսպառ, մեր ամբողջ օրը կանցնի մարմնի անցողիկ ցանկություններին հազուրդ տալով: Այնժամ, անկասկած, կգա մի օր, երբ կհայտնվենք նույն վիճակում, ինչ վիճակում այսօր Չինաստանն է՝ երկիր, ուր ապրում է հակասություններից ու պայքարից վախեցած, ինքն իր մեջ ներ-

փակված, սոսկ հաճույքի ու հանգիստ կյանքի ձգտող եւ ռազմատենչ ու խիզախում սիրող ժողովուրդների ողորմածությանը ենթակա մի ազգ»:

Օտար տերությունները բաժան-բաժան արեցին Չինաստանը, կերան նրա մարմինն ու խմեցին արյունը: Ապա շուտ եկան եւ արհամարհեցին նրան, ծաղրեցին նրան եւ օրինակ բերեցին որպես նախազգուշացնող հեքիաթ իրենց ժողովուրդների համար:

Հարյուր քառասուն տարի՝ 1842-ից մինչեւ 1982 թվականը չինական կառավարությունը ժամանակ առ ժամանակ, նորից ու նորից, ամեն բան անում էր Հոնկոնգը վերադարձնելու համար: 1919 թվականին, Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած Փարիզի խաղաղության վեհաժողովի ժամանակ, չին հայտնի դիվանագետ Վեյինգթոն Կուն համարձակորեն դիմակայեց Ճապոնիայի, Ամերիկայի, Անգլիայի եւ Ֆրանսիայի բռնակալական մեքենայություններին, երբ նրանք փորձում էին բաժանել անազնիվ կերպով իրենց ձեռքբերածը, եւ հրաժարվեց ստորագրել պայմանագիրը, որպեսզի Շանհոյում պաշտպանի չինական ինքնիշխանությունը: Վեհաժողովն ամբողջությամբ անտեսեց Հոնկոնգի հարցը:

1943-ին Կահիրեի վեհաժողովում Չան Կայ-շին հավատում էր, որ Չինաստանը դարձել է Մեծ Բրիտանիայի դաշնակիցը՝ գտնվելով այսպես ասած նույն խրամատում: Նա Վեյինգթոն Կունի ուղարկեց Անգլիա՝ Չերչիլից դա պարզելու, հարցնելով նրան. «Վարչապետ Չերչիլ, մենք դաշնակիցներ ենք: Մեր հաղթանակից հետո կարո՞ղ եք մտածել Հոնկոնգի հարցի մասին», որպեսզի պարզապես ստանա Չերչիլի ամբարտավան, անզիջում առարկությունը. «Գրողը տանի, ինչո՞ւ եք այդ հարցն առաջ քաշում»:

Երկրի կառավարության թուլությունն ու անզորությունը նշանակում էին, որ նրա անընդհատ ջանքերը կարող էին հանգեցնել միայն ծանոթ, վշտալից հառաչանքի.

«Տգետ, հետամնաց Չինաստան... Ե՞րբ նորից ոտքի կկանգնես»:

## «Հոնկոնգը Մալվիները չէ, Չինաստանն էլ Արգենտինան չէ»

1949 թվականի հոկտեմբերի 1-ին ստեղծվեց Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը:

Հոկտեմբեր 17-ին ժողովրդական-ազատագրական բանակն ավարտեց դեպի հարավ իր արշավը՝ ազատագրելով Գուանչժոուն ընդհուպ մինչև Ըենչժեն: Հոնկոնգյան իշխանությունները սխալմամբ կարծում էին, թե ժողովրդական-ազատագրական բանակը հարձակվելու է Հոնկոնգի վրա, և 4500 մարդու, ուժի գործադրմամբ, շտապ գորակոչեցին: Բայց ժողովրդական-ազատագրական բանակը ոչ մի քայլ չձեռնարկեց դեպի Հոնկոնգ շարժվելու համար, փոխարենը դադարեցրեց իր առաջխաղացումը Ըենչժեն գետի հեռավոր ափին: 4-րդ դաշտային բանակի 44-րդ կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ու Ֆուշանը կանգնեց գետի ափին, հեռադիտակով նայեց Հոնկոնգի կողմը, ապա շրջվեց և հեռացավ:

ՉԺՀ կենտրոնական կառավարությունը բանակին հրահանգեց, որ Հոնկոնգը ետ վերցնելու ոչ մի հրատապություն չկա, ասելով, թե դա «երկար ժամանակ կպահանջի, և մենք պետք է օգտվենք մեր առավելությունից»: Բայց նոր Չինաստանի կառավարության վերաբերմունքը հոնկոնգյան ինքնիշխանության հարցի նկատմամբ վճռական էր. միջազգային ֆորումում նա մի շարք անգիջում հայտարարություններ արեց՝ ասելով. «Հոնկոնգը բրիտանական գաղութ չէ: Հոնկոնգը չինական տարածք է: Մենք չենք ճանաչի ոչ մի անհավասար պայմանագիր, որ ուժով պարտադրվել է չին ժողովրդի ղեկավարներին: Համապատասխան ժամանակ՝ մենք համապատասխան միջոցներ կձեռնարկենք Հոնկոնգի հարցը լուծելու համար»:

1972 թվականի մարտին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 27-րդ նստաշրջանի ժամանակ ՄԱԿ-ում Չինաստանի դեսպան Հուան Հուան պահանջեց Հոնկոնգը և Մակաոն դուրս բերել ՄԱԿ-ի ապագադրությամբ հատուկ հանձնաժողովի կողմից պաշտպանվող գաղութացված տարածաշրջանների ցանկից: Ի պատասխան Չինաստանի կառավարության պահանջի՝ Գլխավոր ասամբլեան ընդունեց մի բանաձև՝ եր-

կու տարածքն էլ հանելով ՍԱԿ-ի «Գաղութացված երկրներին եւ ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի» համապատասխան պաշտպանվող գաղութացված տարածաշրջանների ցանկից: Արեւելքի քնած առյուծը վերջապես արթնացավ:

Դա 1982 թվականի Սեպտեմբերի 24-ին էր:

Բրիտանիայի եւ Տիև կառավարության միջեւ Նանկինյան համաձայնագրի ստորագրումից անցել էր հարյուր քառասուն տարի:

Համաշխարհային կարգը, որ գոյություն ուներ համաձայնագիրն ստորագրելու ժամանակ, անճանաչելիորեն փոխվել էր՝ բոլոր մայրցամաքներում ժողովուրդների կողմից գաղութատիրության դեմ պայքարից մինչեւ գաղութ գաղութի ետեւից անկախության հռչակում, կապիտալիզմի եւ սոցիալիզմի միջեւ համաշխարհային պայքարից մինչեւ սոցիալիստական ճամբարի մասերի կազմալուծում... աշխարհն այլեւս չէր լինելու այնպիսին, ինչպիսին հարյուր քառասուն տարի առաջ էր: Չինաստանն այլեւս երբեք չէր լինելու Լույնքան անգոր եւ կոռումպացված՝ Տիև կառավարության նման հեշտությամբ կոտրվող կառավարությամբ: Իսկ Բրիտանիան, աշխարհն ընդգրկող իր կայսրությամբ, անկատելի կերպով հեռանալու էր անկախություն հռչակող Նախկին գաղութներից եւ այլեւս չէր կարողանալու վայելել հզոր կայսրության համբավը:

Սեպտեմբերի վերջին ամենագեղեցիկ օրերն են սկսվում հինավուրց մայրաքաղաք Պեկինում՝ բարձր ու կապուտակ երկինք եւ հաճելի եղանակ:

Սեպտեմբերի 24-ին, երեկոյան ժամը 9-ին, ժողովրդի մեծ դահլիճի Ֆուցզյան սրահում, Չինաստանի եւ Միացյալ Թագավորության բարձրաստիճան պաշտոնյաները հարյուր քառասուն տարվա պատմությունից հետո ձեռք ձեռքի տվեցին:

Նրանք ներկայացնում էին երկու շատ տարբեր երկրներ: Մեկը ևոր էր սկսում բարեփոխման եւ աշխարհի առջեւ բաց լինելու գործընթացը, մյուսը խավարման փուլում գտնվող կայսրություն էր: Մեկն արեւելյան հսկա էր՝ գրեթե 9,6 միլիոն քառակուսի կիլոմետր տարածքով, մյուսը կղզիների խմբավորում էր՝ 245 000 քառակուսի կիլոմետր տարածքով: Մեկը 1,3 միլիարդ բնակչությամբ, մյուսը՝ 60 միլիոնից էլ պակաս:

## Զժան Յավեն

Յուրաքանչյուրը ներկայանում էր համաշխարհային մակարդակի դիվանագիտական խաղացողով, եւ խաղն սկսվելու վրա էր:

Մարգարեթ Թեթչերը, կարմիր պուտերով կապույտ զգեստ հագած, սպիտակ մարգարտե մանյակով, բարձրակրունկ կոշիկներով, ինքնագոհ ժպիտը դեմքին, ողջունեց Դեն Սյաոպինին՝ ասելով. «Որպես պաշտոնական այցով Չինաստան ժամանած Բրիտանիայի վարչապետ՝ ուրախ եմ հանդիպել Ձեզ»:

«Այո, ես հանդիպել եմ Բրիտանիայի մի քանի վարչապետերի, որոնք բոլորն այժմ այդ պաշտոնը չեն զբաղեցնում: Բայց ողջունում եմ Ձեզ», - ժպիտը դեմքին պատասխանեց Դեն Սյաոպինը, որ Մաոյի ոճի բաց կապույտ կոստյումով էր: Այդ ժպիտն ամենեւին հաստատակամության պակաս չէր ենթադրում:

Կառավարությունների բանակցություններն անարյուն պատերազմ են: Եվ առաջին դեմամդեմ կատակ-դիտողությունները փոխանակելիս երկու կողմերը նուրբ նենգության ընդունակություն ցուցաբերեցին:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Թեթչերը հանրահայտ Երկաթե լեղին էր, որ հայտնի էր իր կարծր բնավորությամբ: Նույնիսկ այն ժամանակ, երբ նրա ամուսին Դենիս Թեթչերն առաջարկություն արեց նրան, նա չփորձեց թաքցնել իր գոռոզամտությունը՝ ասելով. «Ես չեմ կարող մյուս կանանց նման լինել, որոնք թաքնվում են իրենց ամուսինների ետևում կամ ամբողջ ժամանակն անց են կացնում խոհանոցում՝ գործերի մեջ թաղված: Ես պետք է արտասովոր կյանք վարեմ»:

Տղամարդկանց գերիշխանություն ունեցող Անգլիայում կանայք հեռու էին մնում քաղաքականությունից: Որ Թեթչերին հաջողվեց վարչապետ ընտրվել 1979 թվականին, տասնմեկ տարի շարունակել վարչապետ մնալ եւ վաստակել աշխարհահռչակ «Երկաթե լեղի» մականունը, խոսում էր այն մասին, թե իրոք ինչպիսի արտասովոր կյանք էր վարում նա:

1982 թվականը Թեթչերի դեկավաման ամենահաղթական տարին էր: Նա բրիտանական զորքերն ուղարկել էր Արգենտինայի դեմ՝ նվաճելու սակավաբնակ Ֆոլքլենդյան կղզիները (որ հայտնի են նաեւ որպես Մալվիններ): Նա ասում էր. «Ֆոլքլենդներում տարած հաղթանակով թե՛ Բրիտանիայի համաշխարհային դիրքը, թե՛ իմ սեփական կարգավիճակը կփոխվեն»: Արգենտինայի դեմ ռազմական արշավը բազմապատկել էր Երկաթե լեղիի նկրտումները, եւ նրան համակել էր այն

միտքը, թե կարող է կրկին հաղթել Չինաստանին, ինչպես հաղթեց Արգենտինային, ու ստիպել աշխարհին ուշադրությունը կենտրոնացնել իր եւ Բրիտանիայի վրա: Նա վճռականորեն տրամադրվել էր՝ Չինաստանին տեղը դնել:

Վարչապետի նստավայրում անցկացրած մի շարք հանդիպումների ժամանակ Թեթչերը հարցնում էր իր խորհրդականներին. «Հոնկոնգը հնարավորություն ունի՞ ռազմականորեն պաշտպանելու ինքն իրեն»: Եթե բանակցությունները վերաբերում էին հարավին, ապա նա պատրաստ էր ռազմական միջոցներ ձեռնարկել՝ դիմակայելու Հոնկոնգը ետ վերցնելու Չինաստանի ջանքերին:

Տեսնելով, որ խորհրդականները մեկը մյուսի ետեւից գլուխներն են տարուբերում, համառ, հաստատակամ Երկաթե լեդին հանդիմանեց նրանց՝ ասելով. «Եվ այդպես է միայն այն պատճառով, որ դուք ասում եք, թե այդպե՞ս է»:

Տեսնելով, որ իրենց վարչապետն այդպես երեխայի նման է իրեն պահում, հավաքված նախարարներն անհանգիստ դեմքերով իրար նայեցին:

Որքա՞ն գործ ուներ Մեծ Բրիտանիան Հոնկոնգում: Արդյո՞ք հնարավորություն ունեին դիմակայելու Չինաստանի հարձակմանը: Հոնկոնգի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ 1981 թվականի երկկողմ համաձայնագրով պայման էր դրված, որ Մեծ Բրիտանիան զաղուրթում տեղակայելու էր ութ հազարանոց զորք, երկու հազարը բրիտանական զինձառայողներ էին լինելու, իսկ վեց հազարը լինելու էին նեպալյան վարձկաններ: Հոնկոնգում չինական ծագում ունեցող մոտավորապես տասը հազար մարդ աշխատում էր քաղաքացիական ծառայության մեջ: Նրանք կարող էին զորակոչվել: Ներառյալ նաեւ՝ հինգ հետեւակային գումարտակ, հինգ պարեկային սալ եւ մեկ ուղղաթիռային եսկադրա: Թեթչերին դեռ թվում էր, թե գործ ունի Յին կառավարության հետ, որին կարելի էր ստիպելով նվաստացուցիչ պայմանագրեր ստորագրել տալ՝ ընդամենը քսանվեց ռազմանավով ահաբեկելով:

Նույնիսկ եթե Հոնկոնգում Մեծ Բրիտանիայի զորքերի գրեթե տասնութե հազար զինվորները գերմարդիկ դառնային, ոչ մի հնարավորություն չէին ունենա դիմակայելու Չինաստանի օդային, ցամաքային եւ ծովային համատեղ ուժերին:

## Զժան Յավեն

Պեկին ժամանելուց առաջ Թեթչերը նախ թռավ Ճապոնիա, ուր կանչեց Չինաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Փերսի Քրեդոքին: Նա դեսպանին ասաց, որ չինական կողմին փոխանցի ոչ մի զինքում չանելու իր դիրքորոշումը, եւ հայտնի, որ Հոնկոնգը չի վերադարձվի Չինաստանին:

Քրեդոքը պատասխանեց. «Չինացիները չեն նահանջի: Նրանք տնտեսական բարգավաճման խնդիրները քաղաքական հարցերից վեր չեն դասի: Քանի դեռ մենք Հոնկոնգի ինքնիշխանությունը եւ քաղաքական վերահսկողությունը Չինաստանին վերադարձնելու պատրաստակամություն չենք ցուցաբերել, ոչ մի առաջընթաց չենք գրանցի այս բանակցություններում»: Քրեդոքը լիովին հասկանում էր Չինաստանի ազգային իրավիճակը:

«Ո՛չ: Ես չեմ ընկրկի չինացիների առջեւ»:

Այդպիսին էր Թեթչերի դիրքորոշումը Դեն Սյաոպինի հետ հանդիպումից առաջ:

Այդ կոշտ դիրքորոշմանը նրան մղում էին ոչ միայն անձնական հատկանիշները: Առավել կարեւոր էին Բրիտանիայի հսկայական տնտեսական շահերը Հոնկոնգում: Ավելի քան հարյուր տարի Բրիտանիան զավթել էր Հոնկոնգը՝ ձկնորսական փոքր գյուղը վերածելով աշխարհահռչակ մեզապուլիսի եւ միջազգային առետորի կենտրոնի: Հոնկոնգը Մեծ Բրիտանիայի գաղութներից ամենազարգացածն էր, տնտեսապես ամենաձաղկունը: Բրիտանական կառավարության համար Հոնկոնգը «ոսկե ձվեր ածող սագ էր» եւ «Բրիտանիայի բանկոմատը»: Դա Բրիտանիայի համար իր գաղութատիրական համաշխարհային տիրապետությունից մնացած մսի վերջին փափուկ պատառն էր: Բոլոր մյուս գաղութները, որ թողել էր, լերկ կղզիներ էին, որոնցից ոչ մեկից հնարավոր չէր շահույթ կորզել:

Որքա՞ն փող էր Բրիտանիան ավարտել Հոնկոնգից ավելի քան մեկ դարի ընթացքում: Այդպիսի հսկայական տնտեսական հետաքրքրությունների ֆոնին՝ Թեթչերը կարող էր մտածել միայն Հոնկոնգը «երկրորդ Ֆոլքլենդներ» դարձնելու մասին: Եվ այժմ երկրներից յուրաքանչյուրի պետական բարձրագույն պաշտոնյաները նստած էին միասին: Նրանցից մեկը Երկաթե լեդին էր: Մյուսը Չինաստանի առաջնորդն էր, որը համբերատար տոկունությամբ 12 500 կիլոմետր երկա-



րությամբ ռազմերթ էր կատարել, լեզիոններին ուղղորդել էր ի մարտ եւ օգնել Նոր Չինաստանի հիմնադրմանն ու ղեկավարությանը:

Շախմատային ինչպիսի՞ մրցամարտ էին վարելու երկու կողմերը:

Ի սկզբանե Թեթչերը կոշտ դիրքորոշում ցուցաբերեց: Նա ամբարտավանորեն ասաց. «Բրիտանիայի համար Հոնկոնգը բրիտանական տարածք է: Դա հաստատվել է միջազգային իրավունքով ճանաչված երեք համաձայնագրերով, որոնցից երկուսը կոնցեսիոն համաձայնագրեր են: Եթե Չինաստանը ցանկանում է ետ ստանալ Հոնկոնգը, դրա միակ ճանապարհը երկկողմ բանակցությունների միջոցով այդ համաձայնագրերում փոփոխություններ մտցնելն է: Հոնկոնգի համար շարունակական բարգավաճում երաշխավորելու միակ միջոցը բրիտանական կառավարումը շարունակելն է, այլ կերպ ասած՝ եղած իշխանությունը շարունակելը: Ցանկացած հայտարարություն, թե Չինաստանը մտադիր է 1997-ին ետ վերցնել Հոնկոնգը, Հոնկոնգի վրա կործանարար ազդեցություն կունենա եւ սոսկալի անկայունություն կառաջացնի»:

Թեթչերի ամբարտավան կեցվածքը նյարդայնացնում էր Դեն Սյաոպինին: Վերջինիս կոշտ պատասխանը վախ առաջացրեց հավաքված պաշտոնյաների շրջանում, այդ թվում՝ արտգործնախարար Հուան Հուայի եւ նրա տեղակալ Չժան Վենցզինի, Բրիտանիայում Չինաստանի դեսպան Կե Հուայի, Փերսի Քրեդոքի: Իսկ Հոնկոնգի նահանգապետ Էդվարդ Յուդ Դենն ասաց. «Հոնկոնգի ինքնիշխանությունը քննարկման ենթակա չէ: Հոնկոնգը պետք է վերադարձվի Չինաստանին 1997-ին: Չինաստանը պետք է ետ ստանա ոչ միայն Նոր տարածքները, այլ նաեւ Հոնկոնգ կղզին եւ Կոուլունը: Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա այս հարցում փոխզիջման տեղ չկա: Չինաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ բանակցությունները կշարունակվեն նրանց հովանու ներքո, քանի դեռ մենք աշխատում ենք այն ուղղությամբ, թե ինչպես լուծենք Հոնկոնգի [հարցը]»:

Դեն Սյաոպինի կողմից Չինաստանի ինքնիշխանության կրքոտ պաշտպանությունը ցույց տվեց, որ նա պատրաստ է տալ նույնքան, որքան ստացել է բրիտանացիներից: Նա ասաց. «Եթե մինչեւ 1997 թվականը՝ Չինաստանի ժողովրդական Հանրապետության հիմնադրումից քառասունութե տարի անց, Չինաստանը ետ չստանա Հոնկոնգը, ոչ մի չինական առաջնորդ կամ կառավարություն չի կարող կանգնել չին ժո-

## Չժան Յավեն

ղովրդի առջեւ: Կամ աշխարհի առջեւ: Եթե [Հոնկոնգը] չվերադարձվի, դա կնշանակի, որ Չինաստանի կառավարությունը [ոչնչով չի տարբերվում] Ցին կառավարությունից, իսկ Չինաստանի առաջնորդները [ոչնչով չեն տարբերվում] ուշ շրջանի Ցին գահատոհմի բարձրաստիճան պաշտոնյա Լի Հունչժանից: Եթե մեր ժողովուրդը չի կարող մեզ վստահել, ապա Չինաստանի կառավարությունը պետք է հրաժարական տա: Այլ ընտրություն չի կարող լինել:

Ես պետք է տիկնոջն ասեմ, որ այս հարցն այլեւս չի կարող հետաձգվել: Մենք պետք է կարողանանք առաջիկա երկու տարում աշխարհին հայտնել, որ ետ ենք վերցնելու Հոնկոնգը: Այս որոշումը կայացնելիս՝ Չինաստանի կառավարությունը հաշվի է առել հնարավոր բոլոր տարբերակները:

Եթե, ինչպես տիկինն է ենթադրել, մի հայտարարություն, թե մենք ետ կվերցնենք Հոնկոնգը, աղետալի ազդեցություն կարող է ունենալ, ապա մենք պետք է համարձակորեն դիմակայենք աղետին: Եթե առաջիկա տասնհինգ տարվա ընթացքում ինչ-որ պահի մարդու կողմից կարող են լինել խախտումներ, դրանք կարող են ստեղծվել ինչպես չինացիների, այնպես էլ օտարերկրացիների կողմից, բայց հիմնականում դա կանեն բրիտանացիները:

Պետք է հիշեցնեմ տիկնոջը, որ Հոնկոնգը Մավիկները չէ, Չինաստանն էլ Արգենտինան չէ»:

Այս տողերը գրելիս, ինչպես այն ժամանակ, երբ լսեցի, թե Չինաստանի առաջնորդն ինչպես է այդքան ուժեղ ու համոզիչ արտահայտվում, դեպրեսիան, որ առաջացել էր իմ մեջ՝ կես տարի չինական ժամանակակից պատմությունը կարդալու հետեւանքով, իսպառ չքացավ եւ փոխարինվեց ուրախության հազվագյուտ զգացողությամբ: Սա ավելի քան հարյուր տարի ճնշված, բռնության ենթարկված եւ նվաստացված մի ժողովրդի հոգու ճիչն էր, որ հայտարարում էր աշխարհին՝ չին ժողովուրդը, որին երկար ժամանակ նվաստացրել են եւ տանջանքների ենթարկել, ոտքի է կանգնել: Չին ազգն այլեւս նման չէ ոչխարի հոտի, որ բաժան-բաժան արվի օտար տերությունների կողմից:

Դեռի խոսքերն արձագանքեցին չին-բրիտանական բանակցություններին մասնակցողների սրտում: Ավելին, դրանք արձագանքեցին Երկաթե լեղիի ամբարտավան սրտում:

Թեթևերը հարցրեց Դենին. «Գուցե կարող ենք շարունակել վարձակալել Նոր տարածքները»:

«Ո՛չ, չեք կարող», - հետեւեց Դենի խայթող առարկությունը, ավելի կտրուկ, քան շատ տարիներ առաջ Չերչիլն էր մերժել Վելինգթոն Կուլին:

«Տիկինը լավ կաներ չմոռանար,- անզիացիներին հիշեցրեց Դենը,- որ դա լուրջ անկայունության է հանգեցնելու Հոնկոնգում հետագա տասնհինգ տարվա ընթացքում, Չինաստանի կառավարությունը ստիպված կլինի լրջորեն մտածել Հոնկոնգը ետ վերցնելու ժամանակի եւ միջոցների մասին»: Նա դադար տվեց, իսկ հետո ավելացրեց. «Եթե անհրաժեշտ լիներ, Չինաստանը կվերցներ Հոնկոնգը հենց այսօր՝ մինչև երեկո: Չին ժողովուրդը կարող է աղքատ լինել, բայց չի վախենում զոհվել մարտում»:

Հենց այդ ժամանակ Թեթևերը վերջապես հասկացավ, որ իր դիմաց կանգնած այդ կարճահասակ, կնճռոտ ու չորուկ ծեր չինացին նախկին Ցին կառավարության թույլ ու ապիկար մանդարիններից մեկը չէ. Դեն Սյաոպինն ավելի շուտ քաջարի սերնդի ներկայացուցիչներից էր, այն սերնդի, որն աշխարհին տվել էր Մաո Ցզեդոնին եւ Չժոու Էնլային՝ Չինաստանի կոմունիստական կուսակցության՝ մարտերում կոփված առաջնորդներին: Նա Թեթևերին չզիջեց ոչ մի թիզ՝ ուշադրություն չդարձնելով վերջինիս նրբազգացությանը եւ նրան սակարկելու կամ հակահարվածի տեղ չթողնելով: Թեթևերը հանդիպել էր իր արժանի հակառակորդին եւ Չինաստանի հետ բանակցություններում տանուլ էր տվել առաջին ճակատամարտը:

Երկուսուկես ժամ տեւած հանդիպման ավարտից հետո Թեթևերը սայթաքեց եւ ընկավ սանդղաբազուկի վրա, երբ դուրս էր գալիս ժողովրդի մեծ դահլիճից: Այդ գիշեր, Ղյաոյոյթայի պետական հյուրատուն վերադառնալուց հետո, նա դեսպան Քրեդոքին ասաց. «Այդ մարդն (Դեն Սյաոպինը) անողոր է»:

Ես շատ կասկածում եմ, որ Թեթևերը մոռացել էր իր պատմությունը, մոռացել էր, թե ինչպես 140 տարի առաջ բրիտանացիները քսանմեկ ռազմականավեր էին ուղարկել Նանկինի Սյագուան շրջան՝ ստիպելով Չինաստանին ստորագրել Նանկինյան համաձայնագիրը, ստիպելով զիջել Հոնկոնգը եւ բացելով Գուանչժոուն, Սյամենը, Ֆուչժոուն, Նինբոն ու Շանհայը՝ որպես պայմանագրային նավահանգիստներ, նաեւ

## Չժան Ցավեն

ստիպելով վճարել քսանմեկ միլիոն արծաթ դոլար փոխհատուցում՝ ոմբակոծության սպառնալիքի ներքո: Դա ո՛չ միայն անողորմ արարք էր, դա դաժան ներխուժում էր:

Բայց Երկաթե լեդին ոչ մի դեպքում պատրաստ չէր զիջելու:

Բրիտանիան գերազանցապես կայսրություն էր, այնպիսի կայսրություն, որ աշխարհ էր եկել՝ իր գաղութների հարստությունը կողոպտելով: Նա թալանի ու ավարառության հմուտ մասնագետ էր, որ ամենայն խորությամբ գիտեր իր գործի հևարքները եւ այնտեղ, որտեղ հարցը վերաբերում էր իր սեփական շահերին, միշտ կայաքարեր յուրաքանչյուր վերջին սենթի համար: Նա հեշտությամբ չէր թողնի Հոնկոնգը՝ «ոսկե ձվեր ածող իր սագին», մեռնող կայսրությունից իրեն մնացած գաղութային վերջին փամփիկ պատառը:

Սեպտեմբերի 27-ին Թեթչերը մամուլի ասուլիս էր հրավիրել Հոնկոնգում: Ասուլիսի ժամանակ նա դատարկ հռետորաբանությամբ հանդես եկավ՝ ասելով. «Երեք համաձայնագրերը մնում են ուժի մեջ: Դրանք մնում են օրինական: Մեծ Բրիտանիան Հոնկոնգը կառավարում է այդ համաձայնագրերի հիման վրա»: Եվ ավելացրեց. «Բրիտանիան բարոյական պատասխանատվություն է կրում Հոնկոնգի հիևզ միլիոն բնակիչների առջեւ»:

Թեթչերի «ավազակային մտածելակերպը» Հոնկոնգի հայրենասեր երիտասարդների եւ ուսանողների բուռն բողոքները հարուցեց եւ խստորեն քննադատվեց Չինաստանի կառավարության, արտաքին գործերի նախարարության եւ «Սինհուա» լրատվական գործակալության կողմից: Նրանք խստորեն դատապարտեցին Թեթչերի այդ մոլորությունները եւ արձագանքեցին սպառնալից լեզվով. «Հոնկոնգը բրիտանական իմպերիալիզմի կողմից Չինաստան ներխուժման եւ «հրետանավակային դիվանագիտության» քաղաքականության արդյունքն է: Չինաստանի ժողովրդի գլխին կախված անհավասար պայմանագրերը բրիտանական իմպերիալիստների կողմից Չինաստանի տարածքը թալանի ու կողոպուտի ենթարկելու հաստատուն ապացույց են: Դրանք [հետեւաբար] ապօրինի եւ անվավեր են: Չինաստանը երբեք չի ճանաչի դրանք: Չինաստանը վճռական է [իր ցանկության մեջ]՝ ետ վերցնել Հոնկոնգը: Անօգուտ է ընդդիմանալ Հոնկոնգը ետ վերցնելու Չինաստանի վճռականությանը»:

1983 թվականի հունվարի 28-ին, իր բանակցող անձանց հետ հանդիպման ժամանակ, Թեթչերը մեկ այլ պայթյունավտանգ միտք արտահայտեց. «Եթե բանակցություններն արդյունք չտան, մենք կարող ենք քննարկել ՄԱԿ-ում [Հոնկոնգի] անկախությանը կամ ինքնավարությանն աջակցելու հնարավորությունը: Մենք կարող ենք թույլ տալ, որ Հոնկոնգում բոլորը քվեարկեն, որ հարցը դրվի հանրաքվեի»:

Միեւնույն ժամանակ, կողմերը հինգ ոչ պաշտոնական բանակցություններ էին վարել արտաքին գործերի նախարարության հյուրատանը, Պեկինի թիվ 3 Դունցյաոմին ծառուղում՝ փոխարտգործնախարար Յաո Գուանի և Բրիտանիայի դեսպան Զրեդոքի գլխավորությամբ: Բայց յուրաքանչյուրը պնդում էր իր դիրքորոշումը, և բանակցությունները մեծ առաջընթաց չունեցան:

Թեթչերի սադրիչ հայտարարություններից հրապուրված՝ Հոնկոնգի բնակիչների տրամադրությունը կտրուկ տատանվում էր, իսկ ասեկոսներն անպակաս էին: Ապագան ամպամած էր: Ի վերջո, Հոնկոնգը Բրիտանիայի՞ հետ էր լինելու, թե՞ Չինաստանի:

## Մահվան շեմին էլ նա մտածում էր Հոնկոնգը ետ բերելու մասին

Հիմա ուզում եմ խոսել մի մարդու մասին, որն արդեն մեզ հետ չէ:

Հոնկոնգի բնակիչները հիշատակել են նրա մասին բազմիցս, երբ ես իմ հարցազրույցներն էի անցկացնում, սիրով և քնքշությամբ անվանելով նրան «նախարար Լյաո»: Հիշում էին այդ սիրալիր ու բարյացակամ մարդուն և ասում, որ նա բարձրաստիճան պաշտոնյայի հովեր չունեք: Հաճախ էր ժամանակ գտնում՝ մարդկանց հետ նստելու, թեյ խմելու և զրուցելու: Նա նաև առաջարկում էր «երեք անցումներ» Հոնկոնգի և մայր ցամաքի միջև՝ նկատի ունենալով լաստանավերը, զնազքները և ինքնաթիռները, որպեսզի կյանքն ավելի հարմարավետ դառնար Հոնկոնգի բնակիչների համար:

Հոնկոնգցիների հիշատակած այդ «նախարար Լյաոն»՝ ՉժՎ Պետա-

## Զծան Յավեն

կան խորհրդի՝ Հոնկոնգի եւ Մակաոյի հարցերով վարչության նախկին ղեկավար Լյաո Չենչֆին եր\*:

Լյաո Չենչֆին Գոմինդանի ծախ թելի առաջնորդ Լյաո Չժունկայի եւ Չինաստանի ժողովրդավարական հեղափոխության առաջամարտիկ Հե Սյանինի որդին էր: Լյաո Չենչֆին ծնվել էր Ճապոնիայում, ավարտել էր Վասեդայի համալսարանը: Նրան տրված անվան հիերոգլիֆները, որ նշանակում են «բարձր պահել ձգտումները», արտահայտում են նրա հոր հույսերը, որ իրենց որդին կշարունակի հեղափոխությանը նվիրվելու իր ծնողների գործը եւ կպայքարի Չինաստանի անկախության ու ազատության համար: Լյաո Չենչֆին իր կյանքը նվիրեց Չինաստանի ազատագրման եւ ազգային միասնության գործին: Նա մասնակցեց Մեծ արշավանքին, չին-ճապոնական հարաբերությունների կարգավորման գլխավոր աջակիցն էր եւ հոգով ու մարմնով նվիրվեց Հոնկոնգն ու Մակաոն ետ վերադարձնելու գործին: Ցզյան Ցինգոյի հետ նրա բարեկամությունն սկիզբ էր առել դեռ դպրոցական տարիներից: 1982 թվականի սեպտեմբերին, անտեսելով Գոմինդանի աջ թելի ներկայացուցիչների կողմից ղեկավարվող գանգստերների կողմից իր հոր սպանությունը, ինչպես նաեւ իր անձնական թշնամությունը, որ բազմիցս հրահրել էին գոմինդանյան ուժերը, Լյաոն բաց նամակ հղեց Ցզյան Ցինգոյին՝ ի սրտե հույս հայտնելով, որ Թայվանի պաշտոնյաները կարող են մի կողմ թողնել անցյալի թշնամանքները եւ օգնել իրականություն դարձնելու հայրենիքի միասնությունը՝ ուշադրությունը կենտրոնացնելով իրենց ժողովրդի շահերի վրա: Ցավոք, Ցզյանից պատասխան չեղավ:

Այդ ժամանակ հոնկոնգցիների սրտերն ու մտքերը քառույ մեջ էին, նրանք չգիտեին՝ բրիտանական եւ չինական դիրքորոշումների միջեւ ինչպես զանազան են ճշմարտությունը կեղծիքից:

Հոնկոնգի եւ Մակաոյի հարցերով վարչության եւ Հոնկոնգում «Սին-հուա» լրատվական գործակալությունը ներկայացնող հինգ հոգանոց խմբի ղեկավարի իր դերում նա զբաղված էր Հոնկոնգի կյանքի մեջ խորանալով՝ մշտապես հանդիպումներ կազմակերպելով հասարակու-

---

\* Վարչապետի կողմից վերահսկվող Պետական խորհուրդը ՉԺՀ կառավարության բարձրագույն մարմինն է:

թյան տարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ժամանակ նա բացատրում էր, որ Չինաստանը վճռական է՝ Հոնկոնգը ետ վերադարձնել, ներկայացնում էր Հոնկոնգի հետ կապված՝ Չինաստանի քաղաքականությունը եւ հստակեցնում Չինաստանի մոտեցումները. «Մենք լի ենք վճռականությամբ եւ չենք տատանվի: Ոմանք ասում են, որ Բրիտանիան հույս ունի երկարաձգել իր իշխանությունը Հոնկոնգում: Ես այստեղ եմ, որպեսզի բոլորիդ տեղեկացնեմ, որ [գաղութային կառավարումը] ավտոբուսի կամ տրոլեյբուսի գիծ չէ. այն չի կարող երկարացվել քմահաճույքով»:

Լյաո Չենչժին ազատ տիրապետում էր Կանտոնի բարբառին եւ մի քանի մտերիմ ընկերներ ուներ Հոնկոնգում: Խոսելիս նա համոզիչ էր եւ ոգեշնչող: Ոչ ոք չէր էլ մտածում, որ այս յոթանասունչորսամյա տղամարդու սրտում երկու տարի առաջ Միացյալ Նահանգներում ստեղծ էր դրվել:

Լյաո Չենչժին կայացրեց այս հանդիսավոր որոշումը.

«1997 թվականի օգոստոսի 1-ին բրիտանական դրոշը կիջեցվի, եւ Հոնկոնգի նահանգապետարանը կդադարի գոյություն ունենալ: Ինչպե՞ս է հանձնվելու Հոնկոնգը: Կասեմ բոլորիդ՝ Հոնկոնգի ինքնիշխանության վերադարձը չի նախատեսում, որ կենտրոնական կառավարությունը ուղարկելու է մարդկանց [կառավարելու Հոնկոնգը]: Հոնկոնգի կարգավիճակը պահպանվելու է, եւ նրա սոցիալական կարգն ու կենսամակարդակն են պահպանվելու, ինչպես նախկինում, նա լինելու է ազատ նավահանգստի եւ առետրի ու ֆինանսների կենտրոնի կարգավիճակում... իշխանությունը կպահեն հատուկ վարչական շրջանը վերահսկող բարձրաստիճան պաշտոնյաները: Որտեղի՞ց են լինելու այդ մարդիկ: Նրանք լինելու են հենց Հոնկոնգից: Մայրցամաքից մարդիկ չեն ուղարկվի...»:

Հենց այդպես էին վճռել «նախարար Լյաոն» եւ Չինաստանի ժողովրդական-ազատագրական բանակի հինգ փորձառու ընտրյալները՝ որպես ամիսների ուսումնասիրությունից եւ հետաքննությունից հետո գործողությունների հնարավոր ընթացք: Նրանց զեկույցը կենտրոնական կառավարությանը, որն արժանացավ անձամբ Դեն Սյաոպինի հավանությանը, հիմք հանդիսացավ Դենի հետագա հռչակագրի համար, որ «բաժնետոմսերը դեռ կգործեն, ծիերը դեռ կվազեն, իսկ պա-

## Չժան Ցավեն

րերը կշարունակվեն», կշարունակվեն նաև քաղաքականությունները, ինչպես, օրինակ, «Մեկ երկիր, երկու համակարգ», «Հոնկոնգցիները դեկավարում են Հոնկոնգը ինքնավարության բարձր աստիճանով» եւ «Հիսուն տարի առանց փոփոխության»: Չինաստանն արդեն պատրաստվել էր ամենավատին: Եթե Բրիտանիան խուսափեր բանակցություններից՝ հրաժարվելով համագործակցելուց, Չինաստանն արդեն պատրաստել էր Հոնկոնգի հարցը միակողմանիորեն լուծելու ծրագրեր: 1983 թվականի հունիսին, ժողովուրդների ներկայացուցիչների համաժողովի բացմանը, ծրագրերը ներկայացվեցին քննարկման:

Հենց որ Չինաստանի ծրագրերի մասին հայտնի դարձավ, Թեթերի նախօրոք արված հաշվարկները խառնվեցին իրար: Նա հասկացավ, որ եթե ժողովուրդների ներկայացուցիչների համաժողովի կողմից ընդունվեն Հոնկոնգյան հիմնահարցի միակողմանի լուծման ծրագրերը, դա կնշանակեր, որ Չինաստանը պատրաստ է ուժով ետ վերցնել Հոնկոնգը: Բրիտանիան կկորցներ Հոնկոնգում իր տնտեսական բոլոր հետաքրքրությունները, եւ լիակատար ջախջախման կմատնվեր հոնկոնգյան ամբողջ հարցում: Երկաթե լեղիին այլ ընտրություն չէր մնում, քան ավելի մեղմ մոտեցում որդեգրել: Վարչապետ Չժան Ցզյանին հղած նամակում նա պատրաստակամություն էր հայտնում ընդունել «սահմանափակ զիջումներ»՝ չին-բրիտանական «զաղտնի» բանակցությունների փակուղուց դուրս գալու համար:

1983 թվականի օգոստոսի 12-ին սկսվեց բանակցությունների երկրորդ փուլը: Բայց նոր էին սկսել բանակցել, երբ չինական կողմը կորցրեց իր ամենաարժանավոր հրամանատարներից մեկին՝ Լյաո Չենչժիին:

1983 թվականի հունիսի 6-ին, ժողովուրդների ներկայացուցիչների վեցերորդ համաժողովի առաջին պլենումում, Լյաո Չենչժիի թեկնածությունն առաջադրեցին Չինաստանի ժողովրդական Հանրապետության փոխնախագահի պաշտոնում: Բայց հունիսի 10-ին նա մահացավ սրտի կաթվածից:

«Գեներալ, որ ընկավ իր հաղթանակից առաջ, նրա հերոսների թիկնոցներն արցունքներով են ներծծված»:



Երբ Լու Պինն ու մյուս գործընկերները հիվանդանոցում այցելեցին նրան, Լյանն արդեն ծանր էր շնչում: Բայց քանի շնչում էր, միշտ հետաքրքրվում էր Հոնկոնգով: Նա Լու Պիննի հետ քննարկեց, թե ինչ խոչընդոտներ կարող են առաջանալ չին-բրիտանական բանակցություններում, ինչպես նաև՝ ինչ խնդիրների կարող են բախվել Հոնկոնգը վերադարձնելուց առաջ:

Տեսնելով, որ «նախարար Լյանն» անհանգստացած է բանակցություններով և անընդհատ մտածում է Հոնկոնգը վերադարձնելու մասին, Լու Պինը խիստ վշտացավ ընկերոջ համար: Նրանք միասին աշխատել էին երկար տարիներ և կապված էին բարեկամության ու վստահության սերտ կապերով:

Լու Պինը ծնվել էր Շանհայի կոնցեսիոն շրջաններից մեկում: Նրա հայրը հայրենասեր պրոֆեսոր էր, որը մերժել էր հակառակորդի հետ համագործակցող «Վերակազմավորված ազգային կառավարության» իշխանությունը: Լու Պինն ավարտել էր Շանհայի Սբ. Հովհաննեսի համալսարանը և աշխատանքի անցել Սուև Ցին-Լինի գլխավորած՝ Չինաստանի բարեկեցության հիմնադրամում: Հետագայում տեղափոխվեց Լորաստեդ՝ «Բիլդինգ Չայնա» (օտարերկրյա լսարանի համար նախատեսված գովազդային հանդես)՝ որպես խմբագրական բաժնում գլխավոր խմբագրի տեղակալ: Մշակութային հեղափոխության ժամանակ որակվելով որպես «հակահեղափոխական»՝ նա ճնշման ենթարկվեց: Նրա տունը խուզարկեցին ու ավերեցին, և ամբողջ ընտանիքն ութ տարով աքսորվեց գյուղ՝ «աշխատանքի միջոցով բարեփոխվելու»: 1978 թվականի մայիսին Պետական խորհուրդը հիմնեց Հոնկոնգի և Մակաոյի հարցերով վարչությունը և դրա նոր ղեկավար նշանակեց Լյաո Չենչժիին: Լյանն անմիջապես գյուղից ետ կանչեց Լու Պինին: Հաջորդ հինգ տարիների ընթացքում երկուսն էլ «միասնական ճակատի» աշխատանքներ ձեռնարկեցին՝ նախապատրաստելով Հոնկոնգի վերադարձը: Լուև խորապես գնահատում էր Լյաոյի հումորը, լավատեսությունն ու անձնական քաջությունը: 1980 թվականին նա Լյաո Չենչժիի հետ գնաց Միացյալ Նահանգներ՝ նրա սրտի վիրահատության համար, և նյարդային, անքուն մի գիշեր անցկացրեց հիվանդանոցում, քանի որ Լյանն այնքան անտանելի էր խոմփում, ու այդպես շարունակվեց մինչև առավոտ:

## Չժան Յավեն

Լյանն ծիծաղելով ասաց. «Այս վիրահատությունն ինձ համար մեծ նշանակություն չունի: Արդեն հինգերորդ կյանքս եմ ապրում: Չորս անգամ կալանավորվել եմ եւ չորս անգամ ազատ արձակվել: Մեկ անգամ Չժան Գոտան\* մահապատժի վայր է քարշ տվել ինձ, որպեսզի գնդակահարեն: Իմ բախտը բերեց, որ Չժոու Էնլայը կարողացավ ժամանակին ինչ-որ մեկին ուղարկել, հակառակ դեպքում այսօր այստեղ չէի լինի»:

Լու Պինը ցանկանում էր, որ Լյանյի պես տոկուն, լավատես պաշտոնյան կարողանար աննկուն կերպով հարթել իր ճանապարհը՝ դժոխքի դարպասներից անցնելիս, ինչպես նախկինում էր քանիցս արել: Չին-բրիտանական բանակցությունների ժամանակ նրա կարիքն զգում էին հոնկոնգյան հայրենակիցներն ու, հատկապես, Հոնկոնգի եւ Մակաոյի գործերով վարչության իր ընկերները:

Իսկապես ցավալի էր: Լու Պինը չէր կարողանում ընդունել դաժան իրականությունը: Նա ուզում էր գրկել Լյանյին եւ վշտից աղաղակել: Բայց կարող էր միայն զսպել արցունքները, իրեն ստիպելով ժպտալ եւ հարգանքով ուշադիր լսել Լյանյի վերջին իրահանգները:

Վերջին բանը, որ Լուն հիշում էր՝ Լյանյի հետ կապված, նրա նախազգուշացումն էր, երբ ասում էր, թե ինչ խոչընդոտներ կարող են առաջանալ բանակցությունների հաջորդ փուլում եւ ինչ խնդիրներ կարող են ծագել Հոնկոնգը վերադարձնելուց առաջ: Նա Լու Պինին մի օրինակ էր թողնում, թե ինչպես պետք է ապրել կյանքում: Դրանից քիչ ժամանակ անց, երբ Լու Պինը ստանձնելու էր Հոնկոնգի եւ Մակաոյի հարցերով վարչության ղեկավարությունը եւ շարունակելու էր Բրիտանիայի հետ դժվարին բանակցությունները, ստիպված էր վիրահատվել կյանքին սպառնացող ստամոքսի քաղցկեղի պատճառով: Եվ այդ ժամանակ ցուցաբերած իր հանգստության ու անխռովության համար նա պարտական էր Լյան Չենչժին, որի օրինակն ուժ էր տալիս իրեն:

---

\* Չինաստանի կոմկուսից Գոմինդանի կողմն անցած բարձրաստիճան հայտնի դասավիճ:

## **Դժվարին եւ լարված բանակցությունների քսաներկու փուլ**

1983 թվականի հուլիսի 12-ին Պեկինի Դյաոյուտայ պետական հյուրատանը պաշտոնապես սկսվեց չին-բրիտանական բանակցությունների երկրորդ փուլը: Երկու պատվիրակություններին կրկին ղեկավարում էին փոխարտգործնախարար Յաո Գուանը եւ Մեծ Բրիտանիայի դեսպան Քրեդոքը, որոնց հետագայում փոխարինեցին փոխարտգործնախարար Չժոու Նանը եւ Ռիչարդ Էվանսը (Քրեդոքի իրավահաջորդը՝ Չինաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանի պաշտոնում):

Երկրորդ փուլը, վերջին հաշվով, ներառելու էր քսաներկու բանակցություններ, եւ այդ ընթացքում Բրիտանիան դիմում էր հայտնի ու անհայտ ամեն հնարքի՝ փորձելով խորամանկությամբ գերազանցել Չինաստանին: Թեթևերը փորձում էր ճնշում գործադրել Չինաստանի վրա՝ նրա դեմ միջազգային կարծիքի հրահրմամբ, այդ թվում ԱՄՆ ևախազահ Ռեյգանին ևամակ գրելով՝ հույս ունենալով ստանալ վերջինիս աջակցությունը: Ռեյգանը պատասխանեց՝ ասելով, որ ԱՄՆ-ը զգալի տևտեսական հետաքրքրություններ ունի Հոնկոնգում եւ չի կարող հրապարակայնորեն ճնշում գործադրել Չինաստանի վրա:

Բանակցությունների սեղանի շուրջ Բրիտանիան շարունակում էր պնդել, որ «երեք համաձայնագրերը» մնում են ուժի մեջ եւ առաջ քաշեց «գերիշխանությունը վերադարձնելիս կառավարելու» գաղափարը: Այլ կերպ ասած՝ Չինաստան, մենք ձեզ ետ ենք տալիս գերիշխանությունը Հոնկոնգի նկատմամբ, բայց բրիտանացիները կշարունակեն այնտեղ կառավարել: Չինաստանը համառորեն դեմ էր այս գաղափարին: Բրիտանիան առաջ քաշեց նաեւ «երեք ոտանի աթոռակ» հասկացությունը՝ հույս ունենալով Հոնկոնգին բանակցությունների մեջ ներգրավելով ստեղծել երկուսը մեկի դեմ դիմամիկա:

1984 թվականի հունիսին Բրիտանիան Հոնկոնգի ոչ պաշտոնական օրենսդիր մարմնի երեք ներկայացուցիչ ուղարկեց Պեկին, որպեսզի «խնդրելով միջնորդեն ժողովրդի կյանքի համար», այսինքն՝ փորձեն համոզել կենտրոնական կառավարությանը՝ ետ չվերցնել Հոնկոնգը: Նրանք հանդիպեցին Դեն Սյաոպինի հետ: Նրանց տեսնելուն պես Դեն Սյաոպինն, առանց քաղաքավարության դույզն-ինչ նշույլի, ասաց.

## Չժան Յավեն

«Պուք նրա՛ համար չեք այստեղ, որպեսզի ներկայացնեք Հոնկոնգի ժողովրդի կամքը, դուք այստեղ եք բրիտանացիների շահերը ներկայացնելու համար: Մենք բրիտանացիների հետ կուռծենք հոնկոնգյան հարցը: Այստեղ միայն երկոտանի աթոռակ կա, «երրորդ ոտքեր» չեն լինի: Կասկած չկա, որ Հոնկոնգը կվերադարձվի 1997-ին: Եվ մենք չենք հանդուրժի որեւէ կողմի միջամտությունը»: Երեք ներկայացուցիչները, որ եկել էին «միջնորդելու ժողովրդի կյանքի համար», մնացին ձեռնու-նայն:

Հոնկոնգի մի քանի բրիտանամետ անձինք պատվիրակություն հավաքեցին, որը մեկնեց Լոնդոն՝ բրիտանական կառավարությանը «հանրագիր» ներկայացնելու: Պատվիրակությունը հայտնում էր, որ Հոնկոնգի ժողովուրդը ողջունում է տարածքում բրիտանական կառավարման շարունակումը, եւ որ եթե Չինաստանի կոմունիստական կուսակցությունը ստանձնի վերահսկողությունը, դա կկործանի Հոնկոնգը: Միաժամանակ նրանք հայտնում էին, որ Հոնկոնգի վերադարձը Չինաստանին՝ վերջ կդնի Մեծ Բրիտանիա-Հոնկոնգ շահավետ հարաբերություններին, եւ խնդրում էին, որ Բրիտանիան «երկարած գիր պայմանագիրը»: Ոմանք էլ Հոնկոնգում առաջ քաշեցին «նոր պատմություն» դրույթը՝ հրապարակավ քննադատելով բրիտանացիների դեմ Լին Ցզեսյույի դիմադրողական պայքարը՝ որպես «իր ժամանակի հետ չհամապատասխանող քայլ»: Լին Ցզեսյույի եւ այլոց վերաբերյալ պատմության դատավճիռը շրջելու եւ իրենց խիստ ժամանակակից ճոճճան ու ցուցադրական խոսքերի համար ապացույցներ գտնելու փորձ կատարելով՝ նրանք առաջ քաշեցին այն անհեթեթ գաղափարը, թե քանի որ Չինաստանը չէր կարող մրցակցել Բրիտանիայի հետ, դիմադրելն իմաստ չուներ եւ, ուրեմն, հանձնվելը տրամաբանական էր:

«Ով ուզում է կորցնել իր երկիրը, նախ՝ պետք է կորցնի իր պատմությունը», - գրել է Չժոու Նանն իր հուշերում: Ապա շարունակել է. «Ընդլայնելով [նոր պատմության] տրամաբանությունը, [ազգային հերոսները, ինչպիսիք են] Յեյ Ֆուեն, Վեն Տյանսյանը եւ Շի Կեֆան, բոլորը սխալ կլինեին եւ բոլորն էլ կդառնային հիմարներ՝ «իրենց ժամանակների հետ ոչ համաքայլ»: Իսկ [դավաճանները, ինչպիսիք են] Տիև Հույը, Տիշանը եւ Այրի կայսրուհի Տի-սին, բոլորը կդառնային «իմաստուն եւ ողջամիտ պետական գործիչներ»: Եվ համաձայն այս մտածողու-

թյան՝ արդյո՞ք ճապոնական ազրեսիային մեր ութ տարվա դիմակայությունը նույնպես սխալ չէր, և ճիշտը դավաճան Վան Ցզինվեյի տեսակետը չէր՝ թե «Ճապոնիային դիմադրություն ցույց տալը պետք է ձախողվի»: Այդպե՞ս էր արդյոք»:

Ռեւիզիոնիստական շարժումը չէր կարող և չհասավ հաջողության: 1983 թվականի սեպտեմբերի 24-ը դարձավ մի օր, որը Հոնկոնգի ժողովուրդն անվանեց «Սեւ շաբաթ»: Դենի և Թեթչերի միջև բանակցությունների առաջին փուլը տեղի էր ունեցել մեկ տարի առաջ: Մեկ տարի անց, բանակցությունների չորրորդ փուլի ավարտին, բրիտանական կողմից տեղեկատվության արտահոսք եղավ մամուլին, որ բանակցություններն ընդհատվել են, և որ Հոնկոնգի ապագան կասկածի տակ է:

Լուրը համաճարակի պես տարածվեց ամբողջ Հոնկոնգում՝ սարսափ ու խռովք սփռելով քաղաքի բնակիչների սրտերում: Նրա ֆոնդային շուկաներում խառնաշփոթ տիրեց, բանկային գործառնությունները բազմապատկվեցին, գնաճն անվերահսկելի դարձավ, իսկ հոնկոնգյան դոլարի փոխարժեքը կտրուկ ու աննախադեպ անկում ապրեց: Քաղաքի բնակիչներն սկսեցին խուճապահար գնումներ կատարել, և վիճակը Հոնկոնգում կարծես փուլզան տեղի էր հասել:

Այդ պահին էր, որ Պեկինից փչող քամու ուժգին պոռթկումը բրիտանական իշխանությունների միջոցով սարսուռ տարածեց հայտարարությունների տեսքով.

«Եթե Հոնկոնգն ընկնի քաոսի մեջ, Չինաստանն առաջ կքաշի Հոնկոնգը գրավելու իր ժամանակացույցը»:

Հաստատակամ, սովորաբար սառնարյուն Երկաթե լեդին կորցրեց իննատիրապետումը: Նա իր գլխավոր խորհրդականների և Անգլիայի բանկի կառավարչի հետ արտակարգ խորհրդակցություն հրավիրեց՝ քննարկելու տրվելիք պատասխանը:

Նրանց հանդիպումից առաջ, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Էդվարդ Հիթի հետ դեմ առ դեմ քննարկման ժամանակ, Դեն Սյաոպինը ներկայացրեց էր Չինաստանի դիրքորոշումը՝ ասելով.

«Հուսով եմք, որ Բրիտանիան կրկին չի խառնվի կառավարման հարցերին: Ինքնիշխանությունը կառավարման հետ փոխանակելու նրա հույսը չի արդարանա: Եվ մենք հույս ունենք, որ Բրիտանիան չի

## Չժան Յավեն

ստիպի Չինաստանին՝ հրապարակել միակողմանի հայտարարություն՝ կապված Հոնկոնգը վերադարձնելու հետ. ավելի շուտ՝ Չինաստանը եւ Մեծ Բրիտանիան պետք է հանդես գան համատեղ հայտարարությամբ: Ինչ վերաբերում է Հոնկոնգին՝ հուսով ենք, որ Թեթչերը եւ իր կառավարությունը ողջամիտ դիրքորոշում կորդեգրեն եւ կխուսափեն ոչ մի տեղ չտանող ճանապարհներից»:

Մեկ տարվա ընթացքում բրիտանացիները դատարկել էին իրենց հնարքների ամբողջ պարկը: Նախ՝ նրանց անիմաստ հռետորաբանությունն էր «երեք համաձայնագրերի» շարունակական վավերականության մասին, հետո՝ միջազգային կարծիքով Չինաստանը պաշարելու նրանց փորձերն էին, «ինքնիշխանությունը կառավարման հետ փոխանակելը», «մարդկանց կյանքի համար խնդրելը», «երեք ոտանի աթոռակը» գլորելը եւ «ժողովրդավարության քարտը խաղարկելը»՝ վերջին խաղը հանրային կարծիքի վրա խաղալով՝ բանակցությունները դեպի փակուղի մղելով: Կիրառելու ուրիշ հնարքներ այլեւս չունենալով՝ բրիտանացիները հայտնվեցին հին չինական ասացվածքի նկարագրած վիճակում՝ «փորձելով բարձրացնել քարը, կոտրեցիր ոտքը»: Դեն Սյաոպինը 1984 թվականի սեպտեմբերը սահմանեց որպես Հոնկոնգը վերադարձնելու համար բանակցությունների վերջնաժամկետ: Չինական կողմն այն սկսեց անվանել «մահվան օր»: Երբ «մահվան օրը» գար, Չինաստանն աշխարհին հայտարարելու էր Հոնկոնգը ետ վերցնելու իր մտադրության մասին: Եվ հիմա «մահվան օրվան» մնացել էր ընդամենը մեկ տարի: Եթե Բրիտանիան շարունակեր խուսափել ուղիղ պատասխանից, երբ օրը գար, Չինաստանը միակողմանիորեն կհայտարարեր Հոնկոնգը վերադարձնելու իր վճռականության մասին՝ այնպիսի արդյունքներով, որոնց մասին Բրիտանիան կգերադասեր չմտածել:

Բրիտանացիներն այլ ելք չունեին, քան վերադառնալ բանակցություններին, որոնք իրենք էին փակուղի մտցրել: Երբ երկու կողմերն սկսեցին բանակցությունների հինգերորդ փուլը, չինացիների կողմից բանակցությունները վարող գլխավոր անձը՝ Յաո Գուանը, կոշտ դիրք գրավեց. «Եթե Բրիտանիան չփոխի իր դիրքորոշումը, մենք ստիպված կլինենք մտածել, թե արժե՞ արդյոք շարունակել այս բանակցությունները»:

Բանակցությունների մնացած տասնութ փուլերը բացվեցին, ինչպես լեռնային ճանապարհի տասնութ շրջադարձեր՝ ոլորուն ու մարտահրավեր նետող:

Բրիտանական կողմը անընդհատ անհեթեթ առաջարկներ էր անում, այդ թվում՝ «կառավարությունը ժողովրդին վերադարձնելու» առաջարկը: Այդ առաջարկի արդյունքում Հոնկոնգը, որն իր պատմության մեջ երբեք ժողովրդավարական չէր եղել, անցկացնելու էր ուղղակի ընտրությունների: Դա փորձ էր՝ երաշխիք տալու, որ Հոնկոնգի օրենսդիր խորհուրդը (հայտնի է որպես LegCo, հայերեն կլինի՝ Օրենսդիր) անմիջականորեն կընտրվի 1997-ին՝ Հոնկոնգը հանձնելուց հետո: Փաստորեն, առաջարկն արդեն անցել էր LegCo-ով:

Բրիտանական կառավարման օրոք Հոնկոնգը համարվում էր ազատ հասարակություն՝ առանց ժողովրդավարության: Նահանգապետը նշանակվում էր Բրիտանիայի կողմից, նա էլ իր հերթին նշանակում էր պաշտոնյաներին՝ կառավարման համակարգի բոլոր մակարդակներում: Ուղղակի ընտրություններ չէին լինում: Այժմ, երբ Հոնկոնգը վերադարձվելու էր Չինաստանին, Բրիտանիան նախապատրաստվում էր «կառավարումը վերադարձնել ժողովրդին»: Շատ չանցած՝ բրիտանական կողմը մի շարք իռացիոնալ պահանջներ ներկայացրեց: Դրանք էին՝ Հոնկոնգի բարգավաճումը պաշտպանելու համար նրա կապերը Մեծ Բրիտանիայի հետ պետք է պահպանվեին, եւ նրա կապիտալիստական համակարգը պետք է գերծ պահվեր Չինաստանի սոցիալիզմից, Բրիտանիան Հոնկոնգում հյուպատոսություն չէր հիմնելու, այլ, ավելի շուտ, ստեղծելու էր «բարձրագույն հանձնակատարի գրասենյակ», Հոնկոնգում օտարերկրյա չինովնիկներին ոչ միայն թույլ էր տրվելու մնալ իրենց դիրքում, այլեւ նրանք կարող էին տարածաշրջանում ծառայել ամենաբարձր պաշտոններում, Հոնկոնգի կառավարությունը կարող էր անցումային ժամանակահատվածում մտցնել տարածքի կանոնակարգերի եւ օրենքների ցանկացած փոփոխություն՝ ընդհուպ մինչեւ 1997 թվականի հունիսի 30-ը:

Ամենաձիճաղելի պահանջը Բրիտանիայի կողմից ժողովրդական-ազատագրական բանակին Հոնկոնգ մտնել թույլ չտալն էր: Պատճառաբանում էին, թե դա կվախեցնի քաղաքի բնակիչներին, եւ մայրցամաքային զորքերը տեսնելուն պես՝ նրանք կհեռանան:

## Չժան Յավեն

Ես այնպիսի անսպասելի զգացողություն եմ ունենում, թե Բրիտանիան ոչ թե պարզապես բանակցություններ էր վարում Չինաստանի հետ Հոնկոնգի վերադարձի շուրջ, այլ ապարդյուն փորձ էր անում ընդմիջտ պահպանելու իր գաղութարար տիրապետությունը՝ «վարագույրի ետեւից իշխելով», հանձնումից հետո Ցի-սիի նման փաստացի կառավարելով:

Հոնկոնգը Չինաստանին վերադարձնելուց հետո Բրիտանիան ի՞նչ ուներ՝ պահանջելու, որ նա կապ չունենար եւ «մեկուսացված» լիներ մայրցամաքային Չինաստանից: Ի՞նչ իրավունք ունեին նրանք պահանջելու, որ օտարերկրյա պաշտոնյաները ոչ միայն շարունակեին մնալ, այլեւ կարողանային ամենաբարձր պաշտոնները զբաղեցնել: Երբ Հոնկոնգը Չինաստանին վերադարձվեւր, դրանից հետո ի՞նչ իրավունք ուներ Բրիտանիան՝ թույլ չտալու, որ նա փոխեր իր սեփական օրենքները: Դա բացահայտ անհեթեթություն էր:

Չինաստանի արձագանքն այդ ծիծաղելի մտադրություններին, իհարկե, դրանք մերժելն էր:

Չժոու Նանի առարկությունը. «Մի՞թե դա ողջամիտ բան է: Դուք կարող եք տեղակայել ձեր զորքերը, իսկ մենք չե՞նք կարող: Չորքերի տեղակայումը ինքնիշխանության էությունն է, դա համընդհանուր ճանաչում գտած ճշմարտություն է»:

Դեն Սյաոպինը բազմիցս ասել է. «Մենք չենք կարող մեղմ լինել անգլիացիների հետ: Մենք պետք է կոշտ լինենք»:

Մի անգամ, բարձրաստիճան մի պաշտոնյա, լավ տեղյակ չլինելով Հոնկոնգում տիրող իրավիճակին, տեղի լրագրողներից մեկի՝ իրեն տրված հարցին անզգուշորեն պատասխանեց. «Պարտադիր չէ, որ մենք զորքեր տեղակայենք [տարածքում]»: Հաջորդ օրը Հոնկոնգի բոլոր գլխավոր թերթերի վերնագրերը ճշում էին. «Չին դեկավարն ասում է, որ կառավարությունը զորքերի կարիք չունի»:

Երբ միջադեպը տեղի ունեցավ, Դեն Սյաոպինը հանդիպման էր հոնկոնգյան պատվիրակության հետ: Նա շտապ կերպով ետ կանչեց մի քանի հոնկոնգցի լրագրողների, որոնք իրենից հարցազրույց էին վերցրել, ասելով. «Վերադարձե՛ք: Բան ունեմ ասելու: Բոլորը կզնաք եւ կներկայացնեք իմ խոսքը, որ այդ պաշտոնյայի ասածն անհեթեթություն է: Օգնեք ինձ ցրելու ասեկոսները, քանի որ դրանք աղբ են: Ինչ-



պե՞ս կարող էինք մենք զորքեր չմտցնել Հոնկոնգ: Կայագորային զորքերն ինքնիշխանության եությունն են: Ինչո՞ւ Բրիտանիան կարող է զորքեր տեղակայել Հոնկոնգում, իսկ Չինաստանը չի կարող: Մենք կարող ենք վերականգնել ինքնիշխանությունը, բայց չե՞նք կարող զորքեր տեղակայել սեփական տարածքում: Աշխարհում որտե՞ղ է սա ողջամիտ համարվում: Հոնկոնգում զորքեր մտցնելն ինքնիշխանության խորհրդանիշ է: Եթե նույնիսկ այդ ուժը չունենանք, մի՞թե կարող ենք իսկապես ասել, որ վերականգնել ենք ինքնիշխանության գոյության իրավունքը: Մենք պե՛տք է զորքեր տեղակայենք [Հոնկոնգում]:»

Դեն Սյաոպինի հաստատակամությունը չին բանակցողներին տրամադրեց իրենց հերթին հաստատակամ լինել: Բրիտանական կողմի հետ հարաբերություններում նրանք ո՛չ միայն թուլություն չէին ցուցաբերի, այլև փոխզիջման չէին գնա:

Երկու տարվա «զորաշարժերից»՝ հինգ ոչ պաշտոնական նստաշրջաններից ու քսաներկու պաշտոնական բանակցություններից հետո բրիտանական եւ չինական կողմերը վերջապես կարողացան հայտարարել պատմական պահի մասին:

1984 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 17: 30-ին, Ժողովրդի մեծ դահլիճում, Չինաստանը եւ Մեծ Բրիտանիան պաշտոնապես ստորագրեցին Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության Համատեղ հռչակագիրը Հոնկոնգի հարցի վերաբերյալ, որն ավելի շատ հայտնի է որպես Չին-բրիտանական համատեղ հռչակագիր:

Հռչակագրի ստորագրումը նշանավորեց ամբողջ մի դարաշրջանի ավարտը: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը պաշտոնապես վերականգնելու էր Հոնկոնգի նկատմամբ ինքնիշխանությունը 1997 թվականի հուլիսի 1-ին՝ վերջ դնելով հարյուր տարվա ազգային նվաստացմանը:

Հռչակագրի ստորագրումից հետո Դեն Սյաոպինն ասաց. «Չին-բրիտանական բանակցությունների հաջողությունն այն պատճառով չէր, որ մենք՝ մասնակիցներս, առանձնապես շնորհալի էինք, այլ որովհետեւ մեր երկիրը հզոր է: Թույլ երկրները դիվանագիտություն չունեն: Որպեսզի մեր ձայնը լսելի դարձնենք, պետք է ապավինենք մեր ուժերին»:

## Չժան Ցավեն

Նա ճիշտ է: Եթե Չինաստանը չանցներ բարեփոխումների եւ բաց քաղաքականության ճանապարհով, չին ժողովուրդը դեռ կշարունակեր իր ուժն ու եռանդը կենտրոնացնել «դու ընդդեմ ինձ, ես ընդդեմ քեզ» դասակարգային պայքարի վրա: Եվ եթե Դեն Սյաոպինն ու իր գործընկերները բանակցային գործընթացում կոշտ դիրքորոշում չորդեգրեին, կլինե՞ր արդյոք Հոնկոնգի վերադարձը:

1985 թվականի մայիսին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, ՄԱԿ-ում Չինաստանի դեսպանը Համատեղ հռչակագրի ստվարաձավալ տեքստը փոխանցեց դրան սպասող ՄԱԿ-ի պաշտոնյաներին: Չինաստանի դեսպանը Լին Ցինն էր, ոչ այլ ոք, քան Լին Ցզեյսյույի թոռան թոռան թոռը:

Պատմությունն աշխարհին ի գիտություն էր ծառայել. Չինաստանը վերջապես վրեժխնդիր էր եղել անցյալի իր նվաստացումների համար:

## Ծեր հոր զգուշացումն իր որդուն

Չին-բրիտանական բանակցությունները հսկայական ազգային նախագիծ էին: Չինաստանի բանակցող խմբի չափը նույնպես նմանապես ապշեցուցիչ էր: Գագաթին էին Դեն Սյաոպինը, արտաքին գործերի նախարար եւ Պետական խորհրդի փոխնախագահ Ցյան Ցիչենը եւ Հոնկոնգի ու Մակաոյի հարցերով վարչության ղեկավար Լու Պինը: Նրանց հաջորդում էին ավելի քան հազար փորձագետներ եւ պետական համապատասխան գերատեսչությունների աշխատակիցներ: Ես չէի կարող նրանցից յուրաքանչյուրի հետ անհատական հարցազրույց վարել: Նմանապես՝ չէի կարող անդրադառնալ չին-բրիտանական բանակցություններին առնչվող յուրաքանչյուր միջադեպի եւ անհատի: Էլ ավելի քիչ հնարավորություն ունեի ապահովելու տասնհինգ տարվա համատեղ բանակցությունների ամբողջական մատուցումը: Ես կարող եմ միայն ներկայացնել հարցազրույց վարողի եւ հետազոտողի տեսակետը, գրի առնել ընթերցողին հետաքրքրող իմ մտորումները անցկացրածս հարցազրույցների, այցելածս վայրերի եւ հավաքածս նյութերի վերաբերյալ:

Այս գիրքը սկսելուց առաջ իմ տպավորությունն այնպիսին էր, թե

Համատեղ հռչակագրի հրապարակումից հետո մնացած ամեն ինչ անցնում էր առանց խոչընդոտների, եւ այն ամենն, ինչ մնացել էր Չինաստանին անելու, 1997 թվականին Հոնկոնգի վերադարձի տոնակատարությանը սպասելն էր: Դա բացառապես միամիտ մի բան էր իմ կողմից. ըստ էության, հռչակագիրն ազդարարելուց հետո, իրական պայքարը դեռ առջեւում էր:

Ինչպես նշված է Համատեղ հռչակագրում, 1985 թվականի մայիսի 27-ին երկու երկրների կառավարությունները ստեղծեցին չին-բրիտանական Համատեղ կապի խումբ, որին յուրաքանչյուր կողմից աշխատակցում էին դեսպանական դասի բարձրաստիճան մեկ ներկայացուցիչ եւ էլի այլ չորս ներկայացուցիչ: Երկու կողմերին էլ թույլ տրվեց փորձագետներ եւ անձնակազմի այլ անդամներ բերել՝ անհրաժեշտության դեպքում աջակցություն ցուցաբերելու համար:

Չինական կողմի չորս բարձրաստիճան ներկայացուցիչներն էին՝ դեսպան Կե Ցզայշոն, դեսպան Գո Ֆենմինը, դեսպան Չժաո Ցզիհուան, դեսպան Վան Գույշենը եւ դեսպան Ու Հունբոն: Բանակցություններին ավելի ուշ մասնակցեցին շատ այլ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Չեն Ցզոերը եւ Վան Վեյյանը (Վան Վեյյանը նաեւ երկու կողմերի միջեւ պաշտոնական կապ հաստատողն էր):

Բրիտանական կողմի հինգ ներկայացուցիչներն էին՝ դեսպան Դ. Չ. Ուիլսոնը, դեսպան Ռ. Տ. Թ. Մաքլարենը, դեսպան Ա. Բ. Գոլստորդին, դեսպան Հ. Լ. Դեյվիսը եւ Դեսպան Ալան Փոլը (Փոլը նաեւ բրիտանական կողմի համար պաշտոնական կապ հաստատողն էր):

Կապի խումբը ստեղծվել էր Համատեղ հռչակագրում ամրագրված սկզբունքների համաձայն, եւ աշխատանքը սկսեց 1985 թվականի հունիսի 1-ին, Հոնկոնգում: Այն պաշտոնապես լուծարվելու էր 2000 թվականի հունվարի 31-ին: Այդ տասնչորս տարիների եւ յոթ ամիսների ընթացքում խումբը Պեկինի, Լոնդոնի եւ Հոնկոնգի միջեւ քառասունյոթ առանձին հանդիպումներ անցկացրեց, որոնցից 14-ը Պեկինում, տասնհինգը՝ Լոնդոնում, իսկ տասնութը՝ Հոնկոնգում՝ Քենեդի Ռոուդ թիվ 28-ում:

Կապի խմբի խնդիրներն անդրադառնում էին Հոնկոնգի ինքնիշխանությանը հանձնելու բոլոր կողմերին, ներառյալ՝ օրենքը, տնտեսու-

## Չժան Ցավեն

թյունը, առեւտուրը, բեռնափոխադրումը, կապը, արդյունաբերությունը, ավիացիան, մշակույթը եւ սպորտը: Խումբն, ի վերջո, ստեղծելու էր մասնագիտացված ենթահանձնաժողովներ՝ ի թիվս այլ հարցերի հստակեցնելու համար պաշտպանության, հանրային անվտանգության, ներգաղթի եւ կացության, նոր օդանավակայանի կառուցման, տարածքի հետագա հանձնման, պաշտոնական փաստաթղթերի եւ պետական ակտիվների ու սոցիալական բարեկեցության փոխանցման համար բարձր ատյանի ստեղծման վերաբերյալ պայմանավորվածությունները: Երկու կողմերն էլ ուղարկել էին մի շարք հայրենական փորձագետների՝ մասնակցելու բանակցություններին, որոնց յուրաքանչյուր թեման ենթակա էր սպառիչ քննարկման: Հենց որ հասնում էին համաձայնության, այն քննարկման էր ներկայացվում կապող խմբի լիիրավ մարմնի բոլոր անդամներին, որից հետո այն դառնում էր պարտադիր երկկողմանի համաձայնագիր:

Միեւնույն ժամանակ, ընթացք էր տրվում եւս մեկ հրատապ համատեղ նախագծի՝ «Չինաստանի ժողովրդական Հանրապետության Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հիմնական օրենքի» (որ լայնորեն հայտնի է որպէս «Հիմնական օրենք») մշակմանը, որն ուժի մեջ էր մտնելու Հոնկոնգը Չինաստանին վերադարձնելուց հետո:

Հիմնական օրենքի գործառույթը «Մեկ երկիր, երկու համակարգ» հարացույցի համար հատուկ, համակարգային, իրավական ուղեցույցներ կազմելն էր: 1985 թվականի ապրիլին ստեղծվեց Հիմնական օրենքը մշակող հանձնաժողովը: Կոմիտեի երեսուներեք մայրցամաքային եւ քսաներեք հոնկոնգյան անդամները բաժանվեցին մի քանի աշխատանքային խմբերի, որոնց հանձնարարված էր մշակել Հիմնական օրենքի հարյուր վաթսուն կետերի առանձին մասերը: Խումբն անձամբ ղեկավարում էր Լու Պինը:

1989 թվականի հունիսին, լայնորեն հայտնի միջադեպի արդյունքում, Չինաստանը հայտնվեց աշխարհի ուշադրության կենտրոնում: Չին-բրիտանական բանակցությունները դրամատիկ շրջադարձ ունեցան բրիտանական վերաբերմունքի՝ հարյուր ութսուն աստիճանի փոփոխության հետեւանքով: Խորհրդային դաշինքի շարունակվող մասնատմանը նայելով՝ անգլիացիները սխալ կարծիք կազմեցին Չինաստանի ներսում առկա միտումների վերաբերյալ եւ ջանք էին թափում

փոխելու իրենց քաղաքական կուրսը՝ ապարդյուն փորձելով ետ շրջել ժամացույցի սլաքները՝ Համատեղ հռչակագիրը վերափոխելով: Նրանք նորից սկսեցին իրենց խառնակչությունը՝ խոչընդոտներ ստեղծելով Համատեղ կապի խմբի համար: Մասնագիտացված ենթահանձնաժողովների աշխատանքը դադարեց: Մի քանիսինը հետաձգեց չորս, հինգ, վեց տարի՝ անկանխատեսելի հետեւանքներով:

Հունիսի կեսերին բրիտանացիները չեղյալ հայտարարեցին կապի խմբի տասներեքերորդ հանդիպումը, որը նախատեսված էր անցկացնել Լոնդոնում հուլիսի 17-ից հուլիսի 21-ը, ասելով, որ հանդիպումը հետաձգվելու է անորոշ ժամանակով: Բրիտանացիները նաեւ անհեթեթ մի քայլ կատարեցին Սյույ Ցզյատունի՝ այդ ժամանակ Xinhua News Agency-ի (Սինհուայի լրատվական գործակալության) Հոնկոնգի գրասենյակի ղեկավարի հանդեպ:

Չժոու Նանն իր հուշերում գրում է. «Բրիտանացիները պայմանավորվեցին մի քանի հոգու ուղարկել Սյույ Ցզյատունի մոտ, որպեսզի նա ներկայացնի անհեթեթ մի առաջարկություն, թե Չինաստանը չի շտապում ետ վերցնել Հոնկոնգը, եւ այն պետք է մնա բրիտանական վերահսկողության ներքո: Նրանք ասում էին, որ Հոնկոնգը կարող է միջոց գտնել՝ միասին բավականաչափ գումար հավաքելու եւ ներկայացնելու կենտրոնական կառավարությանը՝ «վարձակալության» տեսքով քողարկված՝ ամեն տարի մի քանի միլիարդ դոլար կամ ավելին արժեցող «նվեր-առաջարկով»: Բայց արդյո՞ք դա չէր նշանակում պարզապես մի կողմ նետել Համատեղ հռչակագիրը: Սյույ Ցզյատունը դա անվանեց «կարեւոր քաղաքականություն» եւ ուղարկեց Պեկին: Կենտրոնական կառավարությունը ցասման մեջ էր...»

Դեկտեմբերի 4-ին Սարգարեթ Թեթչերն իր արտաքին քաղաքականության գծով խորհրդական Փերսի Զրեդոքին, վարչապետի համար հատուկ դեսպանորդի կարգավիճակում, գաղտնի այցով ուղարկեց Չինաստան: Զրեդոքն իր հետ Թեթչերից Ցզյան Ցզեմինին ուղղված պաշտոնական նամակ էր տանում:

Ինչպես հիշում է Ցյան Ցիչենը, Թեթչերն իր այդ նամակում հույս էր հայտնում, որ երկու կողմերը կարող են աշխատել երկկողմ կապերի վատթարացումը շտկելու եւ անցյալի ամուր կապը վերականգնելու համար: Նա իր կողմից երաշխավորում էր, որ Հոնկոնգն ակամա դառնա-

## Չժան Ցավեն

յով Չինաստանի տապալմանը ձգտող մարդկանց հեռակետ, հոնկոնգյան հարցը «միջազգայնացնելու» ուղղությամբ քայլեր չէր անի: Ապա անմիջապես անցնում էր սամակի բուն եռությանը. 1991 թ.-ին Բրիտանիան ստիպված էր զգալիորեն ավելացնելու LegCo-ի ուղղակի ընտրված անդամների թիվը եւ առաջարկեց, որ Չինաստանը, Հիմնական օրենքը մշակելիս, դա համաձայնեցնի բրիտանական կողմի պայմանավորվածություններին:

Ցզյանի հետ հանդիպման ժամանակ Քրեյդըն ասաց. «Եթե երկու կողմերը կարողանան ընդհանուր լեզու գտնել Հիմնական օրենքի եւ ուղղակի ընտրությունների հարցում, դա դուռ կբացի առողջ երկկողմ հարաբերությունների համար»:

Ցզյանն անմիջապես մերժեց չեղած տեղը հաղթաթուղթ ձեռք բերելու այդ փորձը: Հիշելով Թեթչերին գրած իր պատասխան սամակը՝ Ցզյանն ասաց. «Ես վարչապետ Թեթչերին ասացի, որ Հոնկոնգի կայունության եւ բարգավաճման պահպանումը մեր ազգային հիմնարար քաղաքականությունն է: Բրիտանիան կրակի հետ էր խաղում ժողովրդավարության խաղաթուղթը խաղարկելով: Նույնիսկ մարդիկ կային, ովքեր Մեծ Բրիտանիայի համար նախատեսված սխեմաներ էին պատրաստում, որպեսզի 1997-ից հետո Հոնկոնգի համար տարեկան մեկ միլիարդ ֆունտ վճարեն: Ես ասացի՝ դուք առաջարկում եք մեկ միլիարդ, բայց ես Հոնկոնգը չեի վաճառի տասը միլիարդով կամ հարյուր միլիարդով: Ես բացարձակապես չեի պատրաստվում վերածվելու մեկ այլ Լի Հունչժանի»:

Միեւնույն ժամանակ՝ Հիմնական օրենքը մշակող հանձնաժողովը խնդիրների առջեւ էր կանգնել: Հոնկոնգից նշանակված նրա մի քանի անդամներ, Բրիտանիայի կառավարության կողմից հրահրված, փորձեցին վերաշարադրել արդեն համաձայնեցված հարյուր վաթսուսն դրոյթները: Դրան հասնելու համար հանձնաժողովի անդամներն արդեն հանդիպել էին ավելի քան տասն անգամ ու կազմել հարյուր վաթսուսն կետերից յուրաքանչյուրը՝ տող առ տող, եւ այդ դրոյթների յուրաքանչյուր կետի վավերացման համար պահանջվում էր հանձնաժողովի անդամների երկու երրորդի հաստատումը: Ազգային ժողովրդական կոնգրեսը (ԱԺԿ) շուտով պետք է գումարվեր՝ 1990-ի մարտին: Եթե հանձնաժողովի անդամները մինչ այդ չկարողանային ընդունել Հիմնա-

կան օրենքի նախագիծը, ապա ոչ մի կերպ հնարավոր չէր լինի հիմնական օրենքը ներկայացնել ԱԺԿ-ին՝ այն հաստատելու համար: Իրադարձությունների այս շրջադարձը խենթացրեց Լու Պիևին:

1990 թվականի փետրվարի 16-ին մշակող հանձնաժողովն անցկացրեց իր իններորդ լիազումար նիստը, որի ժամանակ վերջնական փակ գաղտնի քվեարկություն անցկացվեց Հիմնական օրենքի ընդունման հետ կապված: Երբ արդյունքները հաշվարկվեցին, Հիմնական օրենքը, բարեբախտաբար, ստացավ հանձնաժողովի անդամների ավելի քան երկու երրորդի ձայները:

1990 թվականի մարտին ժողովրդի մեծ դահլիճում գտնվող ԱԺԿ-ի քվեարկության վայրում, իմանալով, որ Հիմնական օրենքը հաստատվել է ԱԺԿ-ի պատվիրակների կողմից, 56-ամյա Լու Պիևը հուզմունքից արտասվեց: Ոչ ոք նրանից ավելի լավ չէր հասկանում, թե որքան բարդ էր ու դժվար Հիմնական օրենքի նախագծի մշակումը, որի համար հանձնաժողովի հիսունինը անդամները չորս տարի եւ ութ ամիս շարունակ տքնել էին կյանքի գնով: Յուրաքանչյուր բաժին, յուրաքանչյուր նախադասություն, յուրաքանչյուր տող, յուրաքանչյուր բառ, մինչ ընդունվելը, հանձնաժողովի անդամների միջեւ լուրջ քննարկման եւ բուռն վեճերի առարկա էր եղել:

1997 թվականի հուլիսի 1-ին Հիմնական օրենքն ուժի մեջ էր մտնելու Հոնկոնգում՝ փոխարինելով ավելի քան հարյուր տարվա «Հոնկոնգյան շնորհագրերին» եւ «Թագավորական հրահանգներին»: Դեռ Սյաոպինը բարձր գնահատեց Հիմնական օրենքը. «Մոտ հինգ տարի տեւած քրտնաջան աշխատանքի արդյունքում դուք բոլորը ստեղծել եք պատմական եւ միջազգային նշանակություն ունեցող օրենք: Դրա պատմական նշանակությունը միայն անցյալի եւ ներկայի համար չէ, այլ նաեւ ապագայի համար: Դրա միջազգային նշանակությունը միայն երրորդ աշխարհի համար չէ: Այն հարատեւ նշանակություն է ունենալու մարդկային ողջ ցեղի համար: Այդ [օրենքը] ստեղծագործական գլուխգործոց է»:

Մեր հարցազրույցների ժամանակ, երբ Լու Պիևը քննարկում էր Հիմնական օրենքը, նրա դեմքը որոշ թախիժ ու փստսանք էր արտահայտում: Նա ասում էր, որ այն ժամանակ կարծում էին,- հասարակական անվտանգության հետ կապված,- թե Չինաստանի ազգային անվ-

## Չժան Ցավեն

տանգության մասին օրենքը հարմար չէ Հոնկոնգի համար: Այդ պատճառով Հիմնական օրենքի 23-րդ կետով ամրագրված էր, որ Հոնկոնգին կվերապահվի ստեղծելու անվտանգության մասին իր սեփական օրենքը: Բայց ավելի ուշ, երբ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի՝ այն ժամանակվա գլխավոր գործադիր տնօրեն Տուն Չի-Հունան խնդրեց LegCo- ին վավերացնել Հիմնական օրենքի 23-րդ կետը, հանդիպեց բուռն դիմադրության, որն ի վերջո խոչընդոտելու էր դրա ընդունմանը: Արդյունքն այն եղավ, որ Հոնկոնգը դարձավ հազվագյուտներից ամենահազվագյուտը՝ աշխարհի միակ տարածքը՝ առանց իր հասարակական անվտանգության լիարժեք իրավական երաշխիքի:

Իրենց խարդախությունների պարկը դատարկելով՝ բրիտանացիները դիմում էին էլ ավելի չար ու անբարո հնարքների:

1989-ի վերջին՝ Բրիտանիայի վերահսկողության տակ գտնվող Հոնկոնգյան կառավարությունը հայտարարեց մի շարք խոշոր շինարարական ծրագրերի նախագծերի մասին, որ շարունակվելու էին մինչև 1997 թվականը: Առաջինը նոր օդանավակայանի համար էր, որ կոչվում էր «Վարդերի պարտեզ նախագիծ», որը շրջանառության մեջ կդնէր հարյուր քսանյոթ միլիարդ հոնկոնգյան դոլար:

Հոնկոնգի հին՝ Կայ Տակ օդանավակայանը գերձանրաբեռնված էր, եւ իսկապես նոր օդանավակայան էր անհրաժեշտ: Սակայն բրիտանացիներն այդ մասին նախապես չհայտնեցին Չինաստանին, եւ աստղաբաշխական գին ունեցող նոր օդանավակայանի հետ կապված որոշումը կայացրին սեփական նախաձեռնությամբ: Ռա, իհարկե, անընդունելի էր Չինաստանի համար:

Չինական կողմը կարծում էր, որ Շենչժենի օդանավակայանը արժեցել է ընդամենը երեք միլիարդ յուան, իսկ Մակաոն՝ ընդամենը յոթ միլիարդ, մինչդեռ բրիտանացիները ծրագրեր էին կազմում Հոնկոնգում օդանավակայան կառուցելու համար, որն արժենալու էր հարյուր քսանյոթ միլիարդ հոնկոնգյան դոլար: Կոուլունից Շենչժեն քառասուն կիլոմետրանոց երկաթուղային թունելը՝ Պեկին-Կոուլուն երկաթուղային գծի վրայի վերջին հանգույցը, որ նախագծվել էր բրիտանացիների կողմից, նրանց կանխատեսումներով արժենալու էր ութսուն միլիարդ հոնկոնգյան դոլար: Միեւնույն ժամանակ, Բրիտանիայի կողմից վերահսկվող հոնկոնգյան կառավարությունը վաճառում էր տարածքի



հողերը: Խոշոր շինարարական ծրագրերին, ինչպիսիք են օդանավակայանը եւ երկաթուղային գծերը, հատկացվող միջոցների մեծ մասը հոսում էր բրիտանական, ամերիկյան, ճապոնական եւ արեւմտյան ֆինանսական այլ խմբերի գրպանները:

Բրիտանիայի՝ գաղութային կայսրության հին պահապանի դավաճանությունն ու խորամանկությունն ավելին էր, քան երբեւէ պատկերացրել էր Չինաստանը: Նախքան 1997 թվականին իրենց հեռանալը բրիտանացիները փորձում էին գրպանները լիքը լցնել գողացված կանխիկ փողերով եւ, քանի դեռ այդտեղ էին, դատարկել այդ տարածքի գանձարկղերը: Հոնկոնգի ֆինանսական ռեսուրսները թալանելով՝ նրանք դատարկություն եւ դրամական խառնաշփոթ էին թողնելու հատուկ վարչական տարածաշրջանի հետագա կառավարության համար: Վերջին հաշվով՝ Բրիտանիան ընդամենը հինգ միլիարդ հոնկոնգյան դոլար էր թողնելու հատուկ վարչական տարածաշրջանի նոր կառավարության ֆինանսական ռեզերվներում՝ այդ գումարը բազմակի անգամ գերազանցող պարտքերով:

Ինչպես լրատվամիջոցներից մեկի ներկայացուցչին ասաց Լու Պի-նը. «Հինգ միլիարդ, նրանք մեզ պարզապես փշուրներն են թողել: Ի՞նչ ենք անում: Ի՞նչ ենք անում: Ի՞նչ ենք անում»: Նա իրեն ճնշված էր զգում այդպիսի ահռելի բեռան տակ, այն աստիճան ճնշված, որ երեք անգամ կրկնեց՝ «Ի՞նչ ենք անում», եւ Հոնկոնգում ստացավ «Պարոն Ինչենքանում» մականունը:

Հոնկոնգում կային մարդիկ, ովքեր չէին հասկանում խնդիրը եւ կարծում էին, թե կենտրոնական կառավարությունը չափազանցնում է ամեն բան: Լրագրողներից մեկը հարցրեց Լու Պինին. «Նոր օդանավակայան կառուցող Հոնկոնգն ի՞նչ կապ ունի կենտրոնական կառավարության հետ: Ձեր ի՞նչ գործն է, թե նա ինչ է անում: Հոնկոնգը փող ունի եւ ուզում է օդանավակայան կառուցել: Դա բացարձակապես ձեր գործը չէ»: Ճիշտ է, որ դա ոչ մի կապ չունեւ Լու Պինի կամ կենտրոնական կառավարության հետ: Բայց Լու Պինը խորապես գիտակցում էր Հոնկոնգի շահերը պաշտպանելու իր պարտականությունները: Այն ամենն, ինչ նա անում էր, անում էր Հոնկոնգի կայունության եւ բարգավաճման համար: Ե՛վ այսօրվա, ե՛ւ վաղվա Հոնկոնգի:

Ինչպես Դեն Սյաոպինը մի անգամ նշել էր, Հոնկոնգի հանձնմանը

## Զժան Ցավեն

Նախորդող անցումային ժամանակահատվածում, հինգ ոլորտներ կային, որ արժանի էին առանձնահատուկ ուշադրության: Նախ՝ չպետք է լիներ հոնկոնգյան դոլարի ապակայունացում, երկրորդ՝ չպետք է վաճառքի ոչ ենթակա հողերն օգտագործվեին եկամուտ ստանալու համար, երրորդ՝ տարածաշրջանի հետագա կառավարության ֆինանսական բեռի վրա նոր բեռ չպետք է ավելանար, չորրորդ՝ բրիտանացիներին չպետք է թույլ տրվեր գլխավորել տարածքից կանխիկ փողի արտահանումը, եւ հինգերորդ՝ բրիտանացիները չպետք է պարտադրեին իրենց սեփական ղեկավարներին տարածաշրջանի հետագա կառավարությանը:

Ըստ չինական կողմի վերլուծության՝ բրիտանացիները հարյուր քսանյոթ միլիարդ հոնկոնգյան դոլար էին շրջանառության մեջ դրել նոր օդանավակայանի կառուցման համար: Այդ հսկայական գումարը պետք է վճարեր Հոնկոնգի կառավարությունը՝ տարածքը Չինաստանին վերադառնալուն պես: Առանց Չինաստանի կառավարության երաշխիքների ոչ մի բանկ չէր ցանկանա բրիտանացիներին տրամադրել այդպիսի հսկայական գումար: Արդյունքում՝ HSBC-ի, Citibank-ի եւ արտասահմանյան այլ բանկերի ղեկավարները մշտապես փնտրում էին Լու Պինին՝ պահանջելով ապացույցներ, որ Չինաստանը կերաշխավորի վարկերը, իսկ տարածաշրջանի ապագա կառավարությունը կմարի պարտքերը:

Լու Պինը խիստ կտրուկ հակադարձում էր նրանց. «Ներողություն եմ խնդրում, բայց ես ձեզ ոչինչ չեմ կարող երաշխավորել: Անգլիացիները երբեք ինձ հետ չեն խորհրդակցել: Ես տեղյակ չեմ այդ խնդրի մասին»:

Անգլիացիները, չկարողանալով մեկ ցետ ֆինանսավորում անգամ հավաքել, վերջապես հասկացան, որ առանց Չինաստանի համագործակցության իրենց նախագծերը ոչնչի չեն հանգեցնի: 1990 թվականի սեպտեմբերին Մեծ Բրիտանիան արտգործնախարար Դուգլաս Հարդին եւ նրա մի քանի դիվանագետների ուղարկեց Պեկին՝ Չինաստանի արտաքին գործերի նախարար Ցյան Ցիչենի հետ քննարկումների համար: Երկու կողմերը կարողացան համաձայնության գալ նոր օդանավակայանի վերաբերյալ. դա նախատեսում էր հատուկ աշխատանքային խմբի ստեղծում եւ ամիսներ շարունակ փակուղում գտնվող բանակցությունների լճացած գործընթացի վերսկսում: Բայց յուրահա-

տուկ դյուրահավատություն էր պահանջվում՝ հավատալու համար, թե բրիտանացիներն այդուհետ կհետեւեին իրենց ստանձնած պարտավորություններին:

1991 թվականի ապրիլի 7-ին, առավոտյան 9: 30-ին, նոր օդանավակայանի կառուցման փորձագիտական աշխատանքային խմբի երկու գլխավոր ներկայացուցիչները, պատշաճ հազնված, իրենց համապատասխան անձնակազմի հետ, Պեկինում մտան Ղաոյոյտայի պետական հյուրատան 15-րդ սենյակը: Չինական կողմի գլխավոր ներկայացուցիչը Հոնկոնգի եւ Մակաոյի հարցերով վարչության ղեկավարի տեղակալ՝ 47-ամյա Չեն Ցզոերն էր: Չենը միջին կառուցվածքով, մեղմ բնավորությամբ, քաղաքավարի անձնավորություն էր: Բայց բանակցությունների սեղանի շուրջ նրան վերջին հաշվով բրիտանական կաբինետի նախարարը կարող էր բնութագրել որպես «մեկը նրանցից, ում հետ շատ դժվար է գործնական հարաբերություն ունենալ, բայց նաեւ այն մեկն, ում հետ ամենաշատ գործարքներն ենք կատարել»: Բրիտանական կողմի գլխավոր ներկայացուցիչը Էնդրյու Բըրնսն էր՝ Ասիայում պետքարտուղարի տեղակալի օգնականը, բարձրահասակ, բարեկազմ, ինքնավստահ մի դիվանագետ:

Երբ Չեն Ցզոերն ու իր աշխատախումբը, բոլորն էլ վճռականությամբ լի, տեղ զբաղեցրին բանակցությունների սեղանի շուրջ, Բըրնսի հարթ, լավ խնամված դեմքի վրա նկատեցին սեփական գերազանցությունը ցուցադրող ամբարտավանություն: Նա իր ձեռքերում շարունակ խաղացնում էր հաստ մի մատիտ, որի վրա չինական ոսկեգույն հիերոգլիֆներով գրված էր «Ղաոյոյտայի պետական հյուրատուն», եւ լայն շրջանակով ակնոցի ետեւում թաքնված նրա դեղնականաչավուն աչքերն արհամարհանք էին արտահայտում: Նրա շուրթերից հնչած առաջին բառերն այն մասին էին, որ ընթացիկ բանակցությունները պարզապես «չինական կողմին տեղեկացնելու» համար են: Եթե հարցեր լինեն, բրիտանացիները պատրաստ են պարզաբանելու: Երբ Չեն Ցզոերն ասաց, որ Չինաստանը ցանկանում է մասնակցել «փոխանցման-հանձնման» նախագծերին, նրա գործընկերն արձագանքեց բարձրաձայն «Ո՛չ» արտաբերելով:

Բարի կամք դրսևորելով՝ Չեն Ցզոերը մի քանի անգամ հիշեցրեց իր գործընկեր Բըրնսին, որ հույս ունի, թե բրիտանացիները կարող են

## Չժան Ցավեն

մոտենալ բանակցություններին՝ իրական համագործակցության ոգով: Բայց Բըրնսը ոչ միայն փորձ իսկ չարեց զսպելու իրեն, այլև մի քանի անգամ հարվածեց սեղանին, եւ այդ հարվածի ձայնն արձագանքում էր նիստերի դահլիճով մեկ: Չենն այլ բան չէր կարող անել, եթե ոչ նույնակերպ պտասխան տալ՝ խիստ ձայնով ասելով Բըրնսին. «Պարոն Բըրնս, խնդրում եմ որոշակի հարգալից վերաբերմունք դրսևորել դիվանագիտության սկզբունքների նկատմամբ: Եվ խնդրում եմ որոշակի հարգանք ցուցաբերել այս բանակցությունների երկու կողմերը ներկայացնող անձանց արժանապատվության հանդեպ»:

Չին-բրիտանական բանակցությունները տեսցին չորս օր եւ անցան չափազանց անհաջող, անելանելի մթնոլորտում: Անգլիացիները ժամանակի զգացողություն չունեին: Անկախ նրանից, թե որ ժամին պետք է սկսվեին բանակցությունները, նրանք ուշանում էին եւ ուսերն էին միայն թոթվում ու շատ դեպքերում ներողություն անգամ չէին խնդրում:

Ապրիլի 11-ի կեսօրին Բըրնսը մտավ բանակցությունների սենյակ եւ ասաց. «Վաղը ես վերադառնալու եմ Բրիտանիա: Իմ տոմսն արդեն պատվիրված է: Այսօր մինչեւ երեկո մենք պետք է գործերն ավարտած լինենք»:

Ամբողջ կեսօրն անցավ անելանելի վիճակում: Երբ ժամանակը սպառվեց, Բըրնսը փակեց իր թղթապանակը եւ ոտքի կանգնեց՝ ասելով. «Այսպես, ուրեմն, վաղը ես մեկնելու եմ: Եթե ինչ-որ բան լինի, ազատ զգացեք եւ զանգահարեք ինձ»:

Չեն Տզոերը նույնպես ոտքի կանգնեց՝ պատասխանելով Բըրնսին. «Բարի ճանապարհ: Ես չեմ զանգի Ձեզ: Եթե ինչ-որ բան լինի, կարող եք կապվել ինձ հետ՝ զանգահարելով Չինաստանի արտաքին գործերի նախարարություն»:

Իրականում Չենը անհանգստանում էր: Առաջին անգամն էր, որ նրա անցկացրած բանակցությունները ձախողվել էին: Նա կարծում էր, որ չի կարողացել արդարացնել այն մեծ վստահությունը, որ իր երկիրը ցուցաբերել է իր հանդեպ: Այդ նույն գիշեր նա ճանապարհ ընկավ դեպի Լու Պիևի տուն՝ զեկուցագիր ներկայացնելու իր ղեկավարին:

Լու Պիևը մխիթարեց նրան՝ ասելով. «Մի՛ անհանգստացեք դրա համար: Եթե [բանակցությունները] տապալվեցին, ուրեմն տապալվեցին:

Բանն այն է, որ մենք պետք է ամուր եւ հաստատուն մնանք»: Ապա ավելացրեց. «Տեսնե՞ք, թե վաղն ինչ կբերի»:

Չենը Հոնկոնգի եւ Մակաոյի հարցերով վարչությունն էր տեղափոխվել 1987 թվականին: Չինաստանի լրատվական ծառայության Ֆուցզյանի մասնաճյուղում եւ Չինաստանի լրատվական ծառայության շտաբ-գրասենյակի Հոնկոնգի եւ Թայվանի լրատվական բաժնում իր կատարած գերազանց աշխատանքի շնորհիվ նրա պահանջարկը մեծ էր կառավարության մի շարք գերատեսչություններում: Նա ընտրեց Հոնկոնգի եւ Մակաոյի հարցերով վարչությունը հատկապես այն բանի համար, որպեսզի մասնակից լինի Հոնկոնգը Չինաստանին վերադարձնելու գործին:

Վարչության ղեկավար անձնակազմը բարձր կարծիքի էր նրա մասին, քանի որ նա տիրապետում էր թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի բարձր կուլտուրայի, եւ զգույշ էր իր մտքերն արտահայտելիս: Նա Չինաստանի գրողների ընկերակցության անդամ էր, տպագրված մի քանի գիրք ուներ: Սակայն, անկախ անցյալում ունեցած իր փորձից, առաջին անգամ էր, որ հանդես էր գալիս որպես բանակցության գլխավոր ներկայացուցիչ:

Ուշ գիշեր էր, երբ Չենը վերադարձավ Պեկինի հյուսիս-արեւմտյան Հայոյան շրջանում գտնվող իր տուն: Շենքի վերելակներն այդ ժամին չէին աշխատում: Երբ աստիճաններով վեր բարձրացավ եւ հանեց բանալին ու բացեց բնակարանի դուռը, տեսավ, որ իր ծեր, ավեհեր հայրը,- որը երկար ժամանակ տառապում էր տկարամտությունից,- նստած էր հյուրասենյակի բազմոցին եւ սպասում էր որդուն՝ ինչպես նախկին օրերին:

Հայրը հենց որ տեսավ Չենին ներս մտնելիս, բարի հայացքով նրան նայեց ծերունու իր խամրած աչքերով, ապա հանդարտ ու արժանապատվորեն լսեց որդու հարցը. «Հայրիկ, ինչո՞ւ քնած չես»: Հետո քմծիծաղեց եւ խռպոտ ու սիրալիր ձայնով կրկնեց իր ամենօրյա հորդորը, որ միշտ տալիս էր Չենին. «Բրիտանիան խորամանկ ծեր աղվես է: Զգույշ պետք է լինես»:

Լսելով հոր խոսքերը՝ Չենը կրծքավանդակում սեղմոց զգաց եւ արտասվելու չափ հուզվեց: Նա քաջատեղյակ էր հոր կյանքի դժվարին ճանապարհին: Հայրը Շանհայում գործող «Միայնակ կղզու գրակա-

## Զժան Յավեն

նություն» շարժման հայտնի գրողներից էր եղել Ճապոնիայի հետ պատերազմի ժամանակ: Նա մի շարք վեպերի եւ ակնարկների հեղինակ է, որոնց թվում են «Կնոջ դժբախտությունը» եւ «Մահվան հաղթանակը»: Երբ ճապոնացիներին հաղթեցին, հայրն ավարտել էր Շանհայի քաղաքացիներին ուղղված բաց նամակի սեւագրությունը: Նա դատապարտում էր Գոմինդանի պաշտոնյաներին բարձր աշխատավարձ տալը եւ հայտարարում էր, որ առանց վարանելու աջակցում է ընդհատակում գտնվող կոմունիստական կուսակցության աշխատանքներին: Նոր Չինաստանի հիմնադրումից հետո նա դարձավ Սյամենի համալսարանի պրոֆեսոր: Հետագայում նրան մեղադրեցին որպես «պատմական հակահեղափոխականի», եւ նա քսան տարի հալածանքների ենթարկվեց ծայրահեղ ձախերի կողմից: Հոր պատճառով էր, որ 1960-ին Չենը, որն ընդունելության քննության իր գնահատականներով առաջիններից մեկն էր Ֆուցզյան նահանգի ազգային քոլեջի հումանիտար բաժնում, հնարավորություն չունեցավ ընդունվելու Պեկինի էլիտար համալսարան եւ փոխարենը՝ ընդունվեց Ֆուցզյանի մանկավարժական համալսարանի օտար լեզուների բաժին: Եվ հիմա նրա թռչակառու հայրը տառապում էր տկարամտությամբ, այն աստիճանի, որ աղբը դուրս տանելուց հետո չէր կարողանում գտնել տան ճանապարհը: Հայրը մոռացել էր ամեն ինչ, մոռացել էր սեփական տան դուռը, մոռացել էր, որ համալսարանական պրոֆեսոր էր, մոռացել էր իր անունը: Բայց չէր մոռացել, որ իր որդին ներկայացնում է Չինաստանը՝ Հոնկոնգը վերադարձնելու համար տարվող՝ Բրիտանիայի հետ ուղենշային բանակցություններում: Այդ պատճառով էլ երբեք չէր մոռանում հորդորել որդուն. «Բրիտանիան խորամանկ ծեր աղվես է: Զգույշ պետք է լինես»:

Դողդոջուն ու տկարամիտ ծեր հոր այս խոսքերն ավելի մեծ ազդեցություն էին գործում, քան անցյալի իմաստունների ցանկացած հայտնի ասացվածք: Դրանք զանգի պես մշտապես դողանջում էին նրա որդու սրտում:

Հաջորդ օրը երեկոյան դեմ Չենը հեռախոսազանգ ստացավ Արտաքին գործերի նախարարության կազմում գտնվող Փոխնախարարությունների համատեղ խմբի անդամ եւ Հոնկոնգի ու Մակաոյի բյուրոյի ղեկավար Զժան Ցիհուայից: Զժանն նրան ասաց, որ Բըրնսը, փաստո-

րեն, չի հեռացել Պեկինից եւ ասել է, որ վաղը կշարունակի բանակցությունները:

Չենը չէր կարող չհիշել հոր նախազգուշացումը. «Բրիտանիան խորամանկ ծեր աղվես է: Զգույշ պետք է լինես»:

Չնայած հրազեն կամ դանակներ չկան, բանակցությունների սեղանը մարտադաշտ է, վայր, որտեղ խելքն ու քաջությունը փորձարկվում են կենաց-մահու պայքարում:

Ապրիլի 13-ին Բրիտանիայի եւ Չինաստանի բանակցող թիմերը կրկին հանդիպեցին Պյաոյույտայի պետական հյուրատանը: Բըրնսի դեմքին այս անգամ ոչ թե ամբարտավան, այլ քաղաքավարի ժպիտ էր: Նա Չենին հրավիրեց իր հետ զբոսնելու պարտեզում, որտեղ կարող էին առանձին զրուցել: Այնտեղ նա խնդրանքով դիմեց Չենին. «Պարոն Չեն, վաղը չէ մյուս օրը կնոջս ծննդյան օրն է: Երեխաներս բոլորը Լոնդոն են վերադառնալու: Ես շատ եմ սիրում կնոջս ու ընտանիքս, եւ անկեղծորեն հույս ունեմ, որ կարող եմ այդ օրն անցկացնել նրանց հետ: Բայց արտգործնախարարն ինձ պարտավորեցրել է մնալ այստեղ՝ շարունակելու բանակցությունները՝ Հոնկոնգի նոր օդանավակայանի հետ կապված: Կարո՞ղ եք ինչ-որ կերպ օգնել ինձ լուծելու այս խնդիրը»:

Չենը պատասխանեց, որ երկու կողմերն էլ պարտավոր են պահպանել Համատեղ հռչակագրի սկզբունքները, որ դա է նրանց բանակցությունների հիմքը: Սիայն եթե դրանց հիման վրա իրականացվի ամեն բան, բանակցություններն արդյունավետ կլինեն: Չնայած այդ օրը բանակցությունների տրամադրությունը բարյացակամ էր, դրանք որեւէ էական արդյունք չէին տվել:

Հաջորդ օրը, Բըրնսը վերադարձավ Լոնդոն՝ կնոջ ծննդյան օրը նշելու: Առաջին շրջանի բանակցությունները եւս վեց օրով տապալելուն բան չէր մնում:

1991 թվականի մայիսի 18-ին երկու կողմերը սկսեցին Հոնկոնգի համար նոր օդանավակայանի հարցի հետ կապված իրենց բանակցությունների երկրորդ փուլը: Նրանք դարձյալ գտնվում էին Պյաոյույտայի պետական հյուրատան 15-րդ շենքում: Քանի որ մեկ օրը ձգձգվելով չորս օր էր դարձել, երկու կողմն էլ մեկը մյուսի հասցեին սուր ու խայթող արտահայտություններով էր հանդես գալիս: Չորս օրն ավարտին

## Չժան Ցավեն

Եր մոտենում, բայց դեռ շատ տարածայնությունները կային: Նույնիսկ ամբարտավան Բըրնսն իր ամբարտավանությունը դրսևորելու եռանդ չունեց:

22-ը բանակցությունների վերջին օրն էր: Թեև նախատեսված էր սկսել առավոտյան 10:30-ին, բրիտանական կողմը ձգձգեց մինչև երեկոյան ժամը 4-ը՝ սպասելով հրահանգների Լոնդոնից: Բանակցությունները տեւեցին մինչև կեսգիշեր, բայց կրկին ավարտվեցին առանց արդյունքի:

1991 թվականի հունիսի 27-ին սկսվեց չին-բրիտանական բանակցությունների երրորդ փուլը:

Մեծ Բրիտանիայի նոր վարչապետ Տոն Մեյջորը հատուկ դեսպալնորդ էր ուղարկել՝ արտաքին գործերով իր խորհրդական Եւ «Չինաստանի ձեռք» (Եւ Չինաստանում նախորդ դեսպալ) Փերսի Քրեդոքին, որն իր հետ Պեկին բերեց,- Ֆրանկֆուրտով շրջանցիկ գաղտնի թռիչքի միջոցով,- նոր ծրագրեր Հոնկոնգի օդանավակայանի կառուցման համար: Նրա դիմաց նստած էին Լու Պինը՝ Հոնկոնգի Եւ Մակաոյի հարցերով վարչության ղեկավարը, Եւ վերջինիս օգնական Չեւ Տզոերը:

Բարձրահասակ Եւ սլացիկ, արծվաքիթ Քրեդոքը փորձառու դիվա-նագետ էր: Նա զգույշ էր իր խոսքերի մեջ Եւ երբ նստում էր բանակցելու, դեմքին լուրջ ու խիստ մի դիմակ, անհողողող հայացքը սեւեռում էր գործընկերոջ վրա, ասես միայն հայացքի ուժով ընկճելու էր նրան:

Քրեդոքը սեւեռուն նայեց Լու Պինին՝ առանց դեմքի վրա մի մկան իսկ շարժելու: Լուի անսասան, իմաստուն հայացքը դեմառդեմ հանդիպեց Քրեդոքի ներթափանցող հայացքին, մինչև որ Քրեդոքն ինքն ի վերջո տեղի տվեց: Քանի՞ անգամ էին բանակցությունների սեղանի մոտ հանդիպել այդ տարիներին, Եւ ոչ մեկը մի թիզ անգամ չէր ընկրկել: Մի կողմ թողնելով կատակներն ու հաճոյախոսությունները՝ նրանք անմիջապես անցան գործի:

«Պարոն Քրեդոք, որպես ֆինանսական ռեզերվներ՝ որքա՞ն գումար են բրիտանացիները նախատեսել թողնելու Հոնկոնգի ապագա կառավարությանը»:

«Վեց միլիարդ»:

«Կատակո՞ւմ եք հաստատ»:

«Ի՞նչ կասեք յոթ միլիարդի մասին»:



«Խնդրում եմ մի՛ կատակեք ինձ հետ»:

«Այդ դեպքում... ութ միլիարդի մասի՞ն ինչ կասեք»:

«Խնդրում եմ վերջ տալ կատակներին»:

Նրանք սակարկում էին անընդմեջ՝ տարբեր թվեր նշելով, ասես շուկայում բանջարեղեն գնող երկու ծեր կին լինեին: Այդպես շարունակվեց չորս օր: Ինչպես սեղմվող պարկուճից ելնող ատամի մածուկ, քիչ-քիչ, աստիճանաբար այդ թիվն աճեց՝ հինգ միլիարդից հասնելով տասը միլիարդի, այնուհետև քսան միլիարդի, ապա, վերջապես, քսանհինգ միլիարդի:

Այդ պահին Քրեդոքը կարող էր միայն խնդրել, որ իրեն խնայեն: «Պարոն Լու, քսանհինգ միլիարդից ավելին չեմ կարող առաջարկել: Իսկապես, ավել [փող] տալու հնարավորություն չկա: Հուսով եմ կհասկանաք»:

Լու Պինը մտքում հաշվեց գումարը: Նրանք հինգ միլիարդից հասել էին քսանհինգ միլիարդի: Հոնկոնգի կառավարությունն, ընդհանուր հաշվով, ավելի քան յոթանասուն միլիարդ դոլար կստանար հողի վաճառքից 1997 թվականին: Այդ ամենը միասին կկազմեր շուրջ հարյուր միլիարդ հոնկոնգյան դոլար: Չնայած դա շատ չէր, բայց սկզբնական շրջանում բավական կլիներ, որ նոր կառավարությունը կարողանար ծայրը ծայրին հասցնել: Եվ նոր օդանավակայանի նախագիծը, որ իր հետ բերել էր Քրեդոքը, պարունակում էր բրիտանական կառավարության համաձայնագիրը՝ անցումային ժամանակահատվածում լսել չի նական կողմի տեսակետները: Ի վերջո երկու կողմերը կարողացան ընդհանուր հայտարարի գալ նոր օդանավակայանի հարցում, որի ընդհանուր արժեքը իջեցվեց մինչև 98,6 միլիարդ հոնկոնգյան դոլար:

Երբ Քրեդոքն առաջարկեց, որ անմիջապես պայմանագիր ստորագրեն, Լու Պինը հապաղեց. «Եկեք շատ չշտապենք: Մման հսկայական համաձայնագրի համար մենք երկուսս կարող ենք միայն նախագծային տարբերակ ստեղծել: Որպեսզի ուժի մեջ մտնի պաշտոնական համաձայնագիր, կպահանջվի երկու երկրների կառավարությունների ղեկավարների ստորագրությունը Պեկինում»:

Այդ լսելով՝ Քրեդոքը սաստիկ զայրացավ: «Այդ դեպքում գործարքն ավարտված է: Մենք չենք ստորագրի: Մեր վարչապետը չի կարող Պեկին գալ»:

Չժան Յավեն

«Հիմա ի՞նչ. ե՞տ եք կանգնում,- ասաց Լու Պինը խիստ ձայնով:- Դուք միանգամայն հստակ ասացիք, որ ձեր վարչապետը կարող է գալ Պեկին»:

Քրեդոքը ձեռքի ափով զարկեց սեղանին եւ ընդոստ վեր կացավ. «Չե՛մ ասել»:

Լու Պինը նույնպես ձեռքն իջեցրեց սեղանին. «Պարոն Քրեդոք, կուզե՞ք հանեմ գրառումները եւ Ձեզ ցույց տամ: Ուզու՞մ եք բանակցել, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում ենք հենց հիմա վերադառնալ Անգլիա»:

Լու Պինը հասկանում էր, որ 1989 թվականի հունիսից հետո արեւմտյան երկրները մեկուսացրել էին Չինաստանը, եւ որ արեւմտյան պետությունների ղեկավարներից ոչ մեկը չի գա Չինաստան: Չինաստանը հույս ուներ, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Տոն Մեյջորը կլինի այն մարդը, ով կխախտի այդ արգելքը:

Քրեդոքը կարող էր միայն խոնարհաբար բարձրացնել սպիտակ դրոշը:

«Ներողություն եմ խնդրում, պարոն Լու: Ես չպետք է այսպես վարվեի: Խնդրում եմ նստել, եւ մենք կշարունակենք մեր քննարկումը: Գուցե մեր երկու պետությունների ղեկավարները կարող են մեկնել եվրոպական մի երրորդ երկիր...»:

«Իսկ ինչո՞ւ պետք է մի երրորդ երկիր գնան,- կտրուկ առարկեց Լու Պինը:- Սա մեր երկու երկրների գործն է: Եվ բացարձակապես կապ չունի որեւէ երրորդ երկրի հետ»:

Քրեդոքը միայն կարող էր ասել, որ ինքը կզանգի վարչապետին: Կարճ ժամանակով բացակայելուց հետո նա վերադարձավ սենյակ՝ ասելու, որ Մեյջորը համաձայնել է գալ Պեկին՝ Չինաստանի վարչապետ Լի Պենի հետ պաշտոնական համաձայնագիր ստորագրելու համար: Բայց նրանք պահանջում էին, որ չինական կողմը խախտի ավանդույթը եւ Բրիտանիայի վարչապետին դիմավորելու պաշտոնական արարողությունը կատարի Պեկինի օդանավակայանում:

Լու Պինը դարձյալ մերժեց նրանց. «Ո՛չ, դիմավորելու արարողությունը պետք է կատարվի Չինաստանի կառավարության սովորույթների համաձայն եւ անցկացվի Տյանանմեն հրապարակում»:

Քրեդոքը հայացքը հառեց Լու Պինի վրա: Երկար ժամանակ նա ոչինչ չէր ասում:

Այդ գիշեր ուշ ժամի երկու կողմերը ստորագրեցին «Հոնկոնգում նոր օդանավակայանի կառուցման եւ հարակից հարցերի վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի» համաձայնագրի նախագիծ: Ինչպես ընդունված էր նման դեպքերում, շամպայնի շիշ բացվեց, եւ երկու կողմերը խմեցին բանակցությունների հաջողության համար:

Քրեդոքն անկեղծորեն առաջարկեց խմել Լու Պինի կենսացր. «Պուք ձեր երկրի շահերի հավատարիմ պաշտպանն եք»:

Լու Պինը փոխադարձաբար խմեց նրա կենսացը՝ Քրեդոքին նույնպես անվանելով իր երկրի շահերի հավատարիմ պաշտպան:

Երկուսն էլ իսկապես իրենց երկրի շահերի հավատարիմ պաշտպանն էին:

1991 թվականի սեպտեմբերի 3-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Տոն Մեյջորը ժամանեց Պեկին՝ պաշտոնապես ստորագրելու Հոնկոնգի նոր օդանավակայանի կառուցման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը՝ խախտելով արեւմտյան պետությունների ղեկավարների՝ Չինաստան այցելելու վերաբերյալ 1989-ի հունիսից հետո ընդունված մորատորիումը:

Ութ ամիս տեւած բանակցությունների երեք փուլերի եւ տասնյակ դաժան բախումների արդյունքում երկու կողմերը վերջապես կարողացան հասնել ընդունելի համաձայնության:

Բայց մտածել, թե բրիտանացիներն ազնվական ջենտլմեններ էին, որ կաշկանդված էին իրենց տված խոսքով, մտածել, թե երկու երկրների պետությունների ղեկավարների ստորագրած համաձայնագրին բրիտանացիները չեն վերաբերվի որպես Էժանագին թղթի կտորի, հատկապես ծանր սխալ կլիներ:

Կես տարի անց՝ 1992-ի մարտին, բրիտանացիները Չինաստանին ներկայացրին իրենց նախատեսվող ծախսերը նոր օդանավակայանի համար: Դրանք՝ պայմանավորված 98,6 միլիարդ հոնկոնգյան դոլարից աճել եւ հասել էին մինչեւ 112,2 միլիարդ հոնկոնգյան դոլարի: 13,6 միլիարդի այս աճը նույնպես վերածվեց 22,5 միլիարդ հոնկոնգյան դոլարի «պայմանական պարտավորությունների»:

Բրիտանացիների առաջարկած նախագիծը լիովին հակասում էր երկու երկրների պետությունների ղեկավարների կողմից ստորագրված փոխըմբռնման հուշագրում ամրագրված սկզբունքներին:

## Չժան Ցավեն

Չինաստանն անողոր էր բրիտանացիներին քննադատելիս: Կողմերը երկու անգամ հանդիպեցին Պեկինում՝ քննարկելու հարցը, երկուսն էլ առանց արդյունքի:

Այստեղ ես պետք է կանգ առնեմ եւ խորհեմ:

Չինաստանը բացահայտում էր մեկը մյուսին հաջորդող անգլիական խարդավանքները եւ վերջ տալիս դրանց: Ցանկացած ողջամիտ մարդ կակնկալեր, որ բրիտանական կառավարությունը կբախվի իրականությանը եւ կընդունի Հոնկոնգը Չինաստանին վերադարձնելու անխուսափելիությունը, որքան էլ որ դա անցանկալի լիներ: Եվ այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ նրանք համառորեն շարունակում էին ոտնահարել երկու կողմերի պայմանավորվածությունները:

Բրիտանիայի պատմությունն ուսումնասիրելիս դժվար չէ հանգել այն եզրակացության, որ թեեւ անգլիացիներն առաջին հայացքից կարող են թվալ ազնվական եւ քաղաքակիրթ, բայց միևնույն ժամանակ բարբարոս են, աներկյուղ եւ թալանի ծարավ: Այլապես Բրիտանիան երբեք չէր դառնա աշխարհի ամենագլխավոր գաղութարարը եւ երբեք չէր կառավարի աշխարհն այդքան երկար ժամանակ: Նրանք քաղաքակիրթ, ազնվական շուքն ու փայլը սևվում էր գաղութացված ժողովուրդների անթիվ մարդկանց քրտինքով եւ արյունով, որոնց թվում էր նաեւ Չինաստանի ժողովուրդը: Այդ հարցում նրանք շատ առումներով նման էին ռազմատենչ ճապոնացիներին: Ճապոնիայի տնտեսության զարգացման հետ բարձրացավ նաեւ երկրի քաղաքակրթության մակարդակը, բայց այն դաժան հանցագործություններով, որ նրանք գործեցին Չինաստանի եւ Ասիայի մյուս ժողովուրդների դեմ, ճապոնացիները բացահայտեցին նաեւ իրենց ժողովրդի տգեղ կողմը՝ վայրագություն եւ արյունարարու դաժանություն: Անգլիացիներն առանձնանում էին իրենց անսասանությամբ եւ աննկուն ոգով: Ռմբակոծված ավերակների քարակույտերի կողքին նրբագեղ ու թեթևոտն վալս պարող անգլիացիների տեսքն ամբողջ աշխարհին էր հայտնի դարձել:

Համեմատության համար նշենք, որ Չինաստանի պատմության վերջին շրջանում իշխանության տիրապետողների մեծ մասը զուրկ էր ինչպես քաղաքակիրթ լինելուց, այնպես էլ նրբաճաշակությունից: Նրանք չունեին այն խիզախ ոգին, որպեսզի անհրաժեշտության դեպքում ռիսկի դիմեին, ապրում էին ճոխության մեջ, ցոփ ու շվայտ կյանքով:

քով՝ անձնատուր լինելով կրքերին ու ազահությանը: Վերջնական արդյունքն այն ժողովուրդն էր, որը ցանկություն չունեի վեր բարձրանալու եւ անզոր էր դիմակայելու օտար ավազակների ներխուժումներին: Ինչպես ժամանակին ասել է Ամերիկայի նախագահ Թեոդոր Ռուզվելտը. «[Այս աշխարհում] այն ազգը, որ իրեն սովորեցրել է ոչ ռազմատենչ, մեկուսացած, հեշտ ու անվտանգ ապրելակերպի, հարկադրված է, ի վերջո, նվաստանալ այլ ազգերի առջեւ, որոնք չեն կորցրել իրենց առևանականությունն ու քաջությունը»:

Ավելի քան հարյուր տարի առաջ օտարերկրյա տերությունների նկատմամբ Ցին կառավարության դրսևորած կարճամիտ անհեռատեսությունն ու անկարողությունը, օտար ամեն ինչի կույր երկրպագումը, նվաստացումներ ընդունելու հլու պատրաստակամությունը՝ աշխարհի վրա չին ժողովրդի հագեցեցրած ժամանակին սխալ ու վնասակար տպավորություն էին գործում եւ ավելի խթանում արտասահմանյան տերությունների՝ արդեն իսկ չափազանց ինքնավստահ բարբարոսությունը: Ինչ վերաբերում էր Հոնկոնգին, բրիտանական կառավարությունը այն կարծիքին էր, թե Չինաստանն այնպիսին էր, ինչպիսին եղել էր՝ թույլ եւ հեշտ ահաբեկվող, կարճամիտ եւ անկարող, ընկրկող եւ ծնկի իջնող՝ իր հանդեպ ուժի առաջին իսկ ցուցաբերման դեպքում: Ահա թե ինչու անգլիացիներն ամեն տեսակ խորամանկ հնարքների ու խարդավանքների էին դիմում՝ Չինաստանի կառավարությանը նվաստացնելու ապարդյուն փորձեր անելով: Նրանք չէին ուզում զրկվել ավելի քան հարյուր տարի առաջ հափշտակած համեղ պատառից: Բայց այս դեպքում բրիտանացիներն իրենց ճտերը հաշվում էին նախքան դրանց ձվից դուրս գալը:

## Հոնկոնգի «հազարամյակի հանգագործի» թաքուն դրդապատճառները

1992 թվականի Նոր տարվա օրը մառախլապատ Լոնդոնի կառավարական բարձրահարկ մի շենքից Բրիտանիայի կառավարությունը կարեւոր մի որոշում ուղարկեց բարձր պաշտոնյաների իր լեզեռններին. Հոնկոնգի սահանգապետ Դեյվիդ Ուիլսոնը հեռացվելու էր պաշտոնից եւ ստիպված էր լինելու 57 տարեկանում վաղաժամկետ թոշակի անցնել:

Բրիտանիայի կառավարությունը նախապես չէր տեղեկացրել նահանգապետ Ուիլսոնին: Նա Հոնկոնգի առաջին նահանգապետն էր, որ նման վերաբերմունքի էր արժանացել:

Հոնկոնգի հասարակական կարծիքը խռովված էր: Ուիլսոնն ինքը տարակուսանքի մեջ էր. ինչո՞ւ հանկարծ հայտարարվեց իր հարկադիր պաշտոնանկության մասին: Չինաստանի կառավարությունն այդ ամենը տարօրինակ համարեց. ի՞նչ խաղ էր խաղում Բրիտանիայի կառավարությունը:

Պարզվեց, որ Հոնկոնգում որոշ մարդիկ հայցով դիմել են Բրիտանիայի կառավարությանը՝ պնդելով, որ նահանգապետը չափազանց մեղմ վերաբերմունք է դրսեւորում Չինաստանի նկատմամբ, որ չափազանց շատ է զիջում՝ շարունակաբար նահանջելով Բրիտանիայի բնակցային դիրքերից:

Ինքը՝ նահանգապետ Ուիլսոնը, լրագրողի հարցին ի պատասխան, ասաց. «Համոզված եմ, որ չափազանց կարեւոր է Չինաստանի եւ Հոնկոնգի միջեւ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումը: Չինաստանը մեծ դեր է խաղալու ինչպես Հոնկոնգի առօրյա կյանքում, այնպես էլ ապագա հեռանկարներում: Մենք *պետք է* հաստատենք առողջ համագործակցություն»:

Դեյվիդ Ուիլսոնը Օքսֆորդի համալսարանի շրջանավարտ էր, եւ մանդարինի կրթություն էր ստացել Հոնկոնգի համալսարանում: Նա նաեւ խոհեմ, հեռատես քաղաքական գործիչ էր: 1987 թ.-ին ստանձնելով նահանգապետի պաշտոնը՝ նա շարունակ պնդում էր, որ Հոնկոնգի եւ Չինաստանի կառավարության միջեւ պետք է համագործակցություն

լինի: Որպես չին-բրիտանական Համատեղ կապի խմբում բրիտանական առաջին առաջատար ներկայացուցիչ՝ Նա մշտապես անդրկուլիսյան կապի մեջ էր Լու Պինի հետ: Երկուսն էլ հնարավոր ամեն առիթ օգտագործում էին՝ հանդիպելու լրատվամիջոցների հարցախոյզ հայացքից հեռու:

Նման դեպքերում Լու Պինը Շենչժենից սեղան ավտոմեքենայով գնում էր Սանկամոյի հսկիչ անցագրային կետ, դուրս էր գալիս մեքենայից Լոհու կամրջի մոտ, նստում մեկ այլ սեղան (նահանգապետ Ուիլսոնի կողմից ուղարկված), ապա շրջվում է շարժվում դեպի Հոնկոնգ՝ բարձրանալով մոտակա փոքրիկ մի բլուր եւ կանգ առնելով իրեն սպասող ուղղաթիռի մոտ, որ սպասում էր, որպեսզի նրան տեղափոխի Ֆանլինգում գտնվող երկհարկանի մեկուսի առանձնատուն, որտեղ ապրում էր Ուիլսոնը: Գաղութատիրական ոճով կառուցված այդ առանձնատանը Չինաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ առկա հիմնախնդիրներից շատերն էին լուծում գտնում հանգիստ մթնոլորտում երկու տղամարդկանց գաղտնի քննարկումներում:

Լու Պինի վերջին գաղտնի հանդիպումը նահանգապետ Ուիլսոնի հետ 1991-ի աշնանն էր, հանգստյան օրվա մի առավոտ: Զրույցն արդյունավետ անցավ, եւ նրանք միասին նախաճաշեցին նահանգապետի պաշտոնական նստավայրում:

Եվ հիմա լայնախոհ այդ նահանգապետը պաշտոնանկ էր արվել:

Մեծ Բրիտանիա վերադառնալուց հետո Ուիլսոնը թագուհու կողմից արժանացավ ազնվականի տիտղոսի եւ դարձավ Լորդերի պալատի անդամ: Տեսնելով, որ չին-բրիտանական համագործակցությունը լիովին ձախողվել էր Քրայսթ Փաթենի ձեռքով, նա իր ցավն արտահայտեց՝ բողոքի ձայն բարձրացնելով եւ դատապարտելով Փաթենի գործելաոճը: Նա ասաց. «Չին-բրիտանական Համատեղ հռչակագիրը դրել է սահուն անցման հիմքերը, եւ «ուղիղ գնացքի» տարբերակը հիանալի պայմանավորվածություն է... Միայն Չինաստանի հետ բարեկամական համագործակցությունն ու խորհրդատվությունն իսկապես օգուտ կբերեն Հոնկոնգին»:

Բայց Մեծ Բրիտանիայի նոր վարչապետ Տոն Մեյջորն այնքան էլ ցանկություն չունեւ Հոնկոնգում իր դեսպանորդին սատարելու: Այդ պաշտոնի համար նրա ընտրությունը կանգ էր առել իր անձնական մո-

## ԶԺան Յավեն

տիկ ընկեր եւ Թորի կուսակցության նախագահ Քրայսթ Փաթենի վրա: Փաթենն առանձնապես աչքի էր ընկել նախընտրական պայքարի ժամանակ, որը հանգեցրեց Տոն Մեյջորի՝ վարչապետ ընտրվելուն: Բայց Փաթենի սեփական ընտրարշավը Համայնքների պալատի անդամ դառնալու համար՝ արդյունք չտվեց (մասամբ՝ իրեն որոշ ազատություններ թույլ տալու եւ դրանք ճշմարտության տեղ ներկայացնելու պատճառով): Այժմ նա գրկվել էր խորհրդարանի անդամի աթոռից եւ դուրս էր մնացել քաղաքական խաղում: Դա, անկասկած, ծանր հարված էր 48-ամյա Փաթենի համար: Ընկերոջը փոխհատուցելու եւ Չի-նաստանի հանդեպ Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ փոփոխության հասնելու համար Մեյջորը որոշեց ձախողված Փաթենին շնորհել Հոնկոնգի նահանգապետի՝ առատորեն վարձատրվող պաշտոնը՝ այն հույսով, որ իր վճռական, անգիջում, Օքսֆորդում կրթված վաղեմի բարեկամն ավելի կոշտ միջոցներ կձեռնարկի Չինաստանի նկատմամբ: Մեյջորը հույս ուներ բանակցությունների սեղանի շուրջ փոխել իրավիճակը եւ իր նոր վարչակազմի միջազգային վարկը բարձրացնելով՝ վերականգնել Մեծ Բրիտանիայի կառավարության սասանված հեղինակությունը:

Փաթենը խորապես գիտակցում էր, որ Հոնկոնգի վերջնական նահանգապետությունը մրցանակային պաշտոն չէ: Ինչպես նա տրտմորեն ասում էր. «Գաղութի նահանգապետերը, Սումատրայի ռեզեդյուտների, [կամ] Ֆլորիդայի ծովացույցների նման... գրեթե բնաջնջված տեսակ են»:

Բայց այդ «վտանգված տեսակը» մտադրություն չունեւ հանգիստ ընդունելու իր «բնաջնջումը»: Վարագույրը խաղաղ ցած իջեցնելու փոխարեն Փաթենը վճռականորեն տրամադրված էր ամեն ինչ ավարտել աշխարհը ցնցող նվաճումով: Քաղաքական գործիչ, որն ընդունակ էր եւ՛ խորամանկության, եւ՛ հիմարության, Փաթենը կարող էր կտրուկ լինել իր խոսքում: Հավանաբար այդ պատճառով նա հայտնի էր որպես զրավոր խոսքում բառի փորձառու եւ զգույշ կիրառող: Մեծ Բրիտանիայի կառավարության ներքին գեկույցում, որ ներկայացվել էր նախքան Հոնկոնգում պաշտոն ստանձնելը, նրա խոսքը հակիրճ էր. «Պեկինի վարչակարգը չի դիմանա մինչեւ 1997 թվականը: Այն կփլուզվի, ինչպես փլուզվել են ԽՍՀՄ-ում, Արեւելյան Գերմանիայում եւ Լեհաստանում



տիրող վարչակարգերը»: Նա կոշտ դիրք որդեգրեց՝ ասելով, որ ցանկանում է Չինաստանից աննախադեպ զիջումներ կորզել բանակցությունների սեղանի շուրջ եւ որ ինքը պատրաստ է անտեսել թե՛ իր հեղինակությունը, թե՛ պայմանագրի բոլոր պարտավորությունները՝ դա անելու համար:

Բրիտանիայի կառավարությունը, հավատալով, որ Չինաստանի կառավարությունը կփլուզվի նախքան Հոնկոնգի հանձնումը, մտադրությունը փոխեց՝ Համատեղ հռչակագիրը ստորագրելու հետ կապված: Կարճ ժամանակամիջոցում Մեծ Բրիտանիան մեկը մյուսի ետեւից մի շարք քայլեր ձեռնարկեց, որոնք կոչված էին Չինաստանի դեմ «պատժամիջոցներ» կիրառելու, ներառյալ հետեւյալները. հոնկոնգյան էլիտայի 225 000 ներկայացուցիչների եւ նրանց ընտանիքների զաղտնի շնորհել Միացյալ Թագավորության անձնագրեր եւ Մեծ Բրիտանիայում մշտական բնակության իրավունք, օգտագործելով նոր ընդունված Հոնկոնգյան իրավունքի օրինագիծը՝ Հոնկոնգում ի կատար ածել մարդու իրավունքների պաշտպանության երկու պայմանագրեր, որոնք ամբողջությամբ չէին ընդունվել նույնիսկ Մեծ Բրիտանիայում, եւ առաջ քաշելով մի շարք խոշոր, կապիտալ ինտենսիվ շինարարական նախագծեր, որ ավարտված չէին լինի Հոնկոնգի հանձնումից հետո, փորձել սպառել Հոնկոնգի կառավարության հարկաբյուջետային պաշարներն ու կործանարար հաշիվը փոխանցել հաջորդ վարչակազմին:

Այս եւ ցանկացած այլ եղանակներով, Մեծ Բրիտանիան այնքան շատ խոչընդոտներ էր հարուցում Հոնկոնգի փոխանցման համար, որ չին-բրիտանական բանակցությունները սկսեցին նմանվել խոչընդոտներ հաղթահարելով օլիմպիական մրցավազքի, երբ ամեն քայլափոխի նոր խոչընդոտ էր հայտնվում, եւ միշտ էլ առաջանում էր նոր դժվարություն՝ բանակցությունները փակուղի մղելու համար:

1992-ի հուլիսի 9-ին Փաթենը անցավ իր պաշտոնին՝ մտմտալով ի կատար ածել ամեն բան խափանելու իր ծրագրերը: Այն նույն օրը, երբ նա վայրէջք կատարեց Հոնկոնգում՝ անհամբեր սպասելով իր պաշտոնը ստանձնելուն, որպես Հոնկոնգի քսանյոթերորդ գաղութարար վարչակարգի նահանգապետի՝ նրան բերեցին Հոնկոնգի քաղաքապետարանի համերգասրահ՝ երդման արարողության:

Փաթենի երդումը խախտեց ավելի քան մեկդարյա նախադեպը. նա

## Զժան Ցավեն

ազնվականի պատվի չէր արժանացել Բրիտանիայի միապետի կողմից եւ չէր կրում այն պաշտոնական զգեստները, որ հագել էին իր քսանյոթ նախորդները: Իրեն դիմավորելու համար անցկացված միացյալ զինված ուժերի արարողությանը Փաթենը հագել էր պարզ, մոխրագույն գործնական կոստյում: Այն ժամանակ նա չէր կարող իմանալ, որ իր մոխրագույն կոստյումը նախանշանն էր այն մռայլ պաշտոնի, որ բաժին էր ընկել իրեն՝ որպես նահանգապետի:

Հոկտեմբերի 7-ին, Հոնկոնգի օրենսդիր մարմնում, Փաթենը հանդես եկավ առաջին պաշտոնական ճառով՝ որպես նահանգապետ: Ավելի քան երեսուն հազար բառանոց ճառի ընթացքում նա շարադրեց «քաղաքական բարեփոխումների» իր ծրագիրը:

Նրա «ծրագիրը» երկու հիմնասյուն ուներ. նախ՝ Հոնկոնգի քաղաքական մոդելի հիմնովին փոփոխում՝ կառավարության գործադիր եւ օրենսդիր ճյուղերի տարանջատման միջոցով, երկրորդ՝ LegCo-ի որոշ անդամների նշանակումների չեղարկում, որպեսզի ամբողջ մարմինն ուղղակիորեն ընտրվի:

Այդ ժամանակի մասին իր հուշերում Չեն Ցզոները գրել է. «Հոնկոնգում իր կառավարման հարյուր հիսուն տարվա ընթացքում Անգլիան երբեւէ հիշատակե՞լ էր «ժողովրդավարություն» բառը: Հոնկոնգի նահանգապետը եւ՛ գաղութի գլխավոր հրամանատարն էր, եւ՛ նրա օրենսդիր մարմնի նախագահը: Նա հնարավորություն ուներ չեղարկելու դատարանների դատավճիռները: Նա բացարձակ բռնապետ էր: Հոնկոնգի բոլոր բարձրագույն ղեկավարները նշանակվում էին անգլիացիների կողմից: Նրա՝ այսպես կոչված «օրենսդիր մարմինը» ավելի շուտ խորհրդատվական էր, քան վարչական մարմին: LegCo-ի «պաշտոնական» անդամները նահանգապետի կողմից նշանակված բարձրաստիճան պաշտոնյաներ էին, իսկ «ոչ պաշտոնական» անդամները ներկայացնում էին հասարակության բոլոր խավերը, բայց այդուհանդերձ նշանակվում էին նահանգապետի կողմից: Միայն չին-բրիտանական Համատեղ հռչակագրից հետո, երբ Չինաստանը սահմանեց «Հիմնական օրենքը»՝ Հոնկոնգի ժողովրդավարությունը աստիճանական, կանոնավոր կերպով զարգացնելու համար, Մեծ Բրիտանիան ջանք գործադրեց աջակցելու «ներկայացուցչական ժողովրդավարությանը» եւ «կառավարությունը ժողովրդին վերադարձնելուն»»:

Չինական կողմը հանդես եկավ կոշտ հայտարարությամբ՝ դատապարտելով Փաթենի գործողությունները, սրան անվանելով «հետադիմական», մեղավոր՝ «երեք խախտումների» համար՝ Համատեղ հռչակագիրը, Հիմնական օրենքը եւ Չինաստանի ու Մեծ Բրիտանիայի միջեւ ձեռք բերված նախորդ պայմանավորվածությունները խախտելու համար:

Երկու կողմերի միջեւ նախկինում կնքված պայմանագրերը նախատեսում էին, որ Հոնկոնգը կարող էր աստիճանաբար ժողովրդավարական համակարգ զարգացնել Չինաստանին անցնելուց հետո, բայց դրանք չէին նախատեսում հանկարծակի անցում դեպի ամբողջական ուղղակի ընտրություններ: Ամբողջական ուղղակի ընտրությունները քառսի բաղադրատոմս էին:

Արտասահմանյան մեկնաբաններից մեկի խոսքերով՝ «Հոնկոնգը Չինաստանին փոխանցվելուց հետո առաջին անգամ վայելեց ժողովրդավարությունը եւ սահմանադրորեն երաշխավորված ազատությունը, դա շատ ավելին էր, քան եղել էր Մեծ Բրիտանիայի՝ դարուկես տեսած կառավարման ընթացքում»:

Փաթենի սխեման այսպիսին էր. օգտագործել ուղղակի ընտրություններին անցումը՝ ստեղծելու բրիտանամետ հիմնական մի խումբ: Դա ապարդյուն փորձ էր՝ Հոնկոնգը վերածելու անկախ քաղաքական սուբյեկտի, ըստ էության՝ երկրորդ Սինգապուրի:

Երբ Փաթենն իր «քաղաքական բարեփոխումն» էր անցկացնում, սինգապուրցի Լի Կուան Յունն ելույթ ունեցավ Հոնկոնգի համալսարանում: Ինչպես նա արտահայտվեց բավականին պարզ եւ առանց այլեւայլության՝ «[Փաթենի] բարեփոխումները չեն համապատասխանում Համատեղ համաձայնագրի պայմաններին: Դրանք ոչ մի տեղ չեն տալիս»:

Միջոցառումն ուղիղ հեռարձակող հեռուստատեսախցիկներն արձանագրեցին Փաթենի կարմրատակած դեմքը եւ սրա զայրացած պատասխանը. «Այդքան մի՛ շտապեք Ձեր խոսքում: 1997 թվականից հետո, երբ մենք լուծած կլինենք Հոնկոնգի խնդիրը, Լոնդոն վերադառնալիս ես կանգ կառնեմ Սինգապուրում: Այդ ժամանակ կխոսենք այն մասին, թե արդյո՞ք դրանք ոչ մի տեղ չեն տալիս»:

Չին-բրիտանական բանակցություններին մասնակցող բրիտանա-

## Չժան Ցավեն

կան ներկայացուցիչներն ու բարձրաստիճան անձնակազմը, բոլորն առանց բացառության, դատապարտում էին Փաթենի մեթոդները՝ որպես պատմությունը ետ շրջելու փորձ՝ ի հակադրություն Համատեղ հռչակագրի:

Չինաստանում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Փերսի Զրեդոքն ասում էր. «Փաթենի ծրագիրն իրականացնելով՝ LegCo-ն կստորագրեր իր մահապատժի մասին հրամանը եւ ժողովրդավարությունը չէր բերի Հոնկոնգ»:

Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ բարոն Հարթլի Շոքրոսը, որն ավելի քան իննսուն տարեկան էր, թռավ Հոնկոնգ, որպեսզի նստի խոսելու Չժոու Նանի հետ, որը «Սինհուա» գործակալության հոնկոնգյան բյուրոյի ղեկավարն էր: Նա Չժոուին ասաց. «Բրիտանիայից ամբողջ չորս հարյուր տարի պահանջվեց, որպեսզի ժողովրդավարական համակարգ հաստատի, եւ նույնիսկ այսօր մենք դեռ ունենք ոչ ժողովրդավարական Լորդերի պալատ: Համեմատության համար պետք է ասել, որ Հոնկոնգի «ժողովրդավարական առաջընթացն» արագորեն զարգանում է: Եթե դա արագացվեր, ապա ոչինչ չէր տա Հոնկոնգի ապագայի համար»:

Մեծ Բրիտանիայի նախկին արտգործնախարար Ֆեֆրի Հոուն ասում էր. «Հոնկոնգը որպես հենակետ օգտագործելը Չինաստանում չափազանց անհեռատես քայլ կլիներ: Դա կհանգեցներ Հոնկոնգի կործանմանը»:

Ինչպե՞ս պետք է արձագանքեր Չինաստանը բրիտանացիների կիրառած մեթոդներին ու մարտահրավերներին: Դա Չինաստանի առաջնորդների առջեւ ծառայած լրջագույն հարցն էր:

Նախքան Փաթենի ժամանումը Դեն Սյաոպինն իր մտորումներն էր ներկայացրել Հոնկոնգի հարցի վերաբերյալ.

«Հոնկոնգի հարցը կարող է ամփոփվել մեկ նախադասությամբ՝ մենք չենք կարող նույնիսկ մի փոքր մեղմ լինել բրիտանացիների հանդեպ: Պետք է վճռական ու հաստատակամ լինենք եւ հակադրվենք նրանց դավաճանությանը: Մենք բացարձակապես չենք կարող նահանջել: Անհրաժեշտ է հարց բարձրացնել նրանց առջեւ՝ արդյոք Համատեղ հռչակագիրը դեռ ուժի մեջ է, թե՞ ոչ: Եթե նրանք կտրականապես որոշեն անառարկելի ու դոգմատիկ լինել այդ հարցում, մենք պար-

զապես պետք է պատռենք այդ ամենը եւ սկսենք սկզբից: Պետք է համոզվենք, որ մեր նախապատրաստությունն ընդգրկում է բոլոր ոլորտները, ներառյալ ռազմական պատրաստականությունը:

Ինչ վերաբերում է Հոնկոնգին, արդեն բավականաչափ զիջումներ ենք արել: Այլևս չենք կարող զիջել: Ինչքան շատ ենք զիջում, այնքան ավելի բարդանում է ամեն բան, եւ այնքան ավելի շատ ցնցումների պատճառ կարող է դա դառնալ: Բրիտանիայի նման գաղութատիրական հին համակարգի պետության հետ գործ ունենալիս մեր ընկերները պետք է բացարձակապես զերծ մնան ավելորդ միամտությունից»:

1992 թվականի հոկտեմբերի 22-ին, տարվա վերջին ավագահողմը պայթեց Պեկինում: Փաթենը, ներկայացնելով «քաղաքական բարեփոխումների» իր ծրագիրը, սկսել էր այցելել մայրաքաղաք: Չինաստան ժամանելուց առաջ Փաթենը նախ թռավ Միացյալ Նահանգներ, որտեղ ամերիկյան կառավարությանը տարբեր միջոցներով քարոզում էր ճնշում գործադրել Չինաստանի վրա: ԱՄՆ-ում հանդես եկան Փաթենին աջակցող հայտարարությամբ եւ հայտնեցին Հոնկոնգի գործերին ակտիվորեն միջամտելու իրենց մտադրության մասին:

Օդանավից իջնելուց հետո քառասունութ ժամվա ընթացքում, մինչեւ հոկտեմբերի 24-ին Պեկինից մեկնելը, Փաթենին կարելի է լավագույնս նկարագրել՝ օգտագործելով այն բառերը, որ տարածված են Չինաստանում հասարակ մարդկանց շրջանում՝ «պայթյունի գսպում»: Պեկինում գտնվելու իր երկրորդ օրվա առավոտյան, Արգելված քաղաք այցելության ընթացքում, ցրտաշունչ աշնանային քամուց Փաթենը մրսեց: Կեսօրից հետո, չին պաշտոնյաների հետ բանակցությունների մեկնելու ճանապարհին, նոր էր Հոնկոնգի նահանգապետը մտել Դյաոյոյտայի պետական հյուրատան տարածք, երբ բրիտանական դեսպանատան կողմից ուղարկված Ռոլս-Ռոյսի անվադողերից մեկը վնասվեց եւ պայթյունի ձայն արձակեց: Փաթենն ստիպված էր սառնաշունչ քամու տակ ոտքով անցնել մինչեւ 18-րդ շենք ընկած ճանապարհը: Այդ երեկո խնջույքի ժամանակ նա պատահաբար ընդհարվեց սերուցքով լի ափսե տեղափոխող մատուցողի հետ: Սերուցքը թափվեց նրա կոստյումի վրա: Տխուր տեսարանն ստիպեց սենյակում բոլոր ներկա գտնվողներին ցնցվել ծիծաղից:

Փաթենի ուղեւորության ընթացքում ամենավատ պահն այն ժամա-

## ԶԺԱՆ ՅԱՎԵՆ

Նակ էր, երբ Նա ձեռքը մեկնեց՝ սեղմելու արտաքին գործերի նախարար Յյան Ցիչանի ձեռքը, որն ականատեսներով ու լրագրողներով լի սենյակում բոլորի աչքի առջև կարճ հանդիմանանք տվեց նրան: Յյանն առիթն օգտագործեց Փաթենին հրապարակայնորեն կշտամբելու համար՝ մեկ անգամ եւս նրան «երեք խախտում» պիտակը կպցնելով. «Պարոն Փաթեն, Դուք խախտել եք չին-բրիտանական Համատեղ հռչակագիրը, խախտել եք Հիմնական օրենքը եւ խախտել եք Չինաստանի ու Մեծ Բրիտանիայի միջեւ ձեռք բերված նախորդ պայմանավորվածությունները»:

Փաթենի համար առավել անցանկալի էին Լու Պինի խոսքերը, որն իր տեղն զբաղեցրեց բանակցությունների սեղանին՝ միայն նրան ասելու համար. «Պարոն Փաթեն, Ձեր առաջարկած կուրսն ամբողջությամբ տապալում է «ուղիղ ավտոբուս» տարբերակը, որը մենք առաջարկել էինք, եւ լրիվ խաթարել է ինչպես Հոնկոնգի սահուն հանձնման, այնպես էլ խաղաղ անցումային գործընթացը: Ժամացույցի սլաքները ետ շրջելու Ձեր փորձերը Ձեզ ոչ մի տեղ չեն տանի»:

«Ո՛չ, ո՛չ: Պարոն Լու, իմ առաջարկած ծրագիրը Հոնկոնգի բնակիչների շահերից է բխում», - ասաց Փաթենը՝ հուսահատ փորձ անելով փրկել դրությունը:

«Պարոն Փաթեն, «ուղիղ ավտոբուսի» մեր այդ տարբերակը մեկ կողմի արդյունքը չէ: Ավելի շուտ, դա Մեծ Բրիտանիայի հետ պայմանավորվածություն էր, որ ձեռք էր բերվել դիվանագիտական խողովակներով փոխադարձ քննարկման միջոցով: Մեր երկրների արտգործնախարարները յոթ նամակ փոխանակեցին [այդ հարցի հետ կապված]»: Ապա Լուն խաղարկեց իր հաղթաթուղթը. «Անցումային ժամանակաշրջանի վերաբերյալ շատ հարցերի լուծումներ տրված են այդ յոթ նամակներում: Դրանք բոլորը դիվանագիտական փաստաթղթեր են, որ ներկայացնում են պետական պարտավորությունները, եւ իրավաբանորեն պարտավորեցնող ապացույց են»:

Փաթենն ապշած մնաց: Նա շրջվեց դեպի իր կողքին գտնվող աշխատակիցը՝ հարցնելով. «Դա ճի՞շտ է»:

Աշխատակիցը գլխով արեց՝ թղթապանակից արագ հանելով յոթ նամակները:

Լու Պինը միջամտեց. «Պարոն Փաթեն, Ձեր համառությունը խախ-

տում է բրիտանական կառավարության կողմից ստանձնած պարտավորությունները: Մենք պատրաստվում ենք հրապարակել այս նամակները եւ դրանք մեկ առ մեկ համեմատել Ձեր «քաղաքական բարեփոխումների ծրագրի» հետ»:

«Ո՛չ, ո՛չ: Դուք չեք կարող դրանք հրապարակային դարձնել: շտապ ասաց Փաթենը: Այդ յոթ նամակները չափազանց կարեւոր են, դրանք երկու երկրների միջեւ գաղտնի փաստաթուղթ են, որ պետք է պահպանվեն: Դուք չեք կարող պարզապես հրապարակել դրանք, որքան էլ ցանկանաք: Եթե այդպես անեք, կխախտեք մեր վաղեմի համաձայնագիրը»:

Այդպիսով, մերկացնելով իրենց դաշույնները, երկու կողմերը բաժանվեցին տխուր պայմաններում:

Անմիջապես բանակցությունները դադարելուց առաջ Լու Պիևը վերջնական մի հարված հասցրեց Փաթենին. «Պարոն Փաթեն, եթե ուզում եք շարունակել այսպես, ես ավելի քան ուրախ կլինեմ շնորհ անել Ձեզ»:

Դեռ նախքան Փաթենի ինքնաթիռ բարձրանալը Լու Պիևը մամուլի ասուլիս էր հրավիրել, որպեսզի աշխարհին ցույց տար չին-բրիտանական բանակցությունների ժամացույցի սլաքները ետ շրջելու նրա մտադրությունը: Այդտեղ Լուսն ասաց. «Այն ծրագիրը, որն առաջարկել է Փաթենը, ամբողջովին խախտում է չին-բրիտանական Համատեղ հռչակագիրը, Հիմնական օրենքը եւ Չինաստանի ու Մեծ Բրիտանիայի միջեւ ձեռք բերված նախորդ պայմանավորվածությունները: Դա դիտավորյալ փորձ է՝ խափանել չին-բրիտանական բանակցությունները եւ Հոնկոնգի նկատմամբ [Փաթենի] ծայրաստիճան անպատասխանատու վերաբերմունքի դրսևորում է: Նա հաշվի չի առել Հոնկոնգի շահերը: Հոնկոնգի համար նա դառնալու է «հազարամյակի հանցագործ»:

Հոկտեմբերի 27-ին՝ Հոնկոնգ վերադառնալու իր երրորդ օրը, Փաթենը հրապարակավ հայտարարեց, որ բանակցություններն ընդհատվել են, եւ որ չինական կողմը խոչընդոտում է նոր օդանավակայանի կառուցման առաջընթացին: Բրիտանացիները որոշել էին միակողմանիորեն իրականացնել նախագիծը եւ սկսելու էին աշխատանքը՝ նախ այն մի քանի փոքր նախագծերի բաժանելով:

Յոթ օր անց Փաթենը Պեկինում բրիտանական դեսպանատան մի-

## Չժան Ցավեն

ջոցով Չինաստանին տեղեկացրեց, որ Մեծ Բրիտանիան երկու երկրների արտաքին գործերի նախարարների միջև յոթ նամակները կիրապարակի այդ երեկո ժամը 8-ին, եւ որ նամակների հետ բրիտանական կողմը կներկայացնի նաեւ բացատրական փաստաթղթեր:

Չինական կողմը վրդովված էր, եւ նրան այլ բան չէր մնում, քան «ժողովրդական օրաթերթի» այդ օրվա երեկոյան համարում իր կողմից հրապարակել այդ նամակները՝ դրանց բովանդակության սուր վերլուծության հետ մեկտեղ:

Պեկինում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Չեն Ցզոները, իր վերադասների ցուցումով, հանեց դիմակը Հոնկոնգում բրիտանական իշխանությունների խաղացած էժան հնարքների վրայից՝ քողագերծելով ճշմարտությունը, թե ինչպէս էին նրանք բարձրացնում նոր օդանավակայանի՝ նախահաշվով գնահատված արժեքը,- որը չին-բրիտանական Փոխըմբռնման հուշագրով սահմանվել էր 98,6 միլիարդ հոնկոնգյան դոլար,- այն հասցնելով մինչեւ 112,2 միլիարդ հոնկոնգյան դոլարի՝ բեռնափոխադրման համար եւս 22,5 միլիարդ հոնկոնգյան դոլարի «պայմանական պարտավորություններով»: Նա բացահայտեց ճշմարտությունը, թե ինչպէս բրիտանացիները կես տարվա ընթացքում նոր օդանավակայանի համար նախահաշվով սահմանված իրենց ծախսերը բարձրացրին 13,8 տոկոսով, եւ ծրագրում էին Հոնկոնգի հետագա կառավարությանը յոթանասուներեք միլիարդ հոնկոնգյան դոլարի պարտքեր թողնել:

Այդ երեկո, երբ Չենը տուն վերադարձավ, տեսավ, որ ճերմակահեր ծեր հայրը դեռ նստած է բազմոցին եւ սպասում է իրեն: Երբ հայրը տեսավ որդուն ներս մտնելիս, դողդոջուն դեմքին ժպիտ հայտնվեց, եւ նա կրկին հնչեցրեց իր ամենօրյա նախազուշացումը՝ «Բրիտանիան խորամանկ ծեր աղվես է: Չգույշ պետք է լինես»:

Բայց չինական մի հին ասացվածք կա. «Աղվեսը, որքան էլ խորամանկ, չի կարող գերազանցել լավ որսորդին»:

Չենն այդ երեկո ուշ պառկեց քնելու՝ տքնելով Պետական խորհրդին ուղղված հրատապ մի առաջարկի վրա, որը վերնագրեց «Բրիտանացիներին լուսավորել բանականության միջոցով, այն ժամանակ, երբ նրանց գայթակղում են շահույթով. Հոնկոնգի նոր օդանավակայանը պետք է հնարավորինս արագ կառուցվի»: Նա շարադրեց նոր օդանա-



վակայանի կառուցման շուրջ բանակցությունների ծրագիրը եւ երկու կողմերին առաջարկում էր վերադառնալ բանակցությունների սեղանի մոտ՝ խուսափելու համար Հոնկոնգի ապագա կառավարությանը հսկայական վնաս պատճառելուց:

Մի քանի օր անց Չենը հեռախոսազանգ ստացավ Պետական խորհրդի գլխավոր վարչությունից: Նրան հայտնում էին, որ փոխվարչապետ Չժու ժունցզին իր առաջարկության վրա երկու բառ է գրել. «Անչափ խորաթափանց»:

Բրիտանացիները կարծում էին, որ առանց չինացիների համագործակցության, նոր օդանավակայանի համար վարկերի հարցը, ինչպես նաեւ մի շարք այլ խնդիրներ դժվար կլինի լուծել: 1993 թվականի ապրիլի 27-ին բրիտանացիները չինական կողմին ներկայացրին Հոնկոնգի համար իրենց երրորդ առաջարկվող բյուջեն: Նախատեսվում էր մետրոյի եւ օդանավակայանի համար Հոնկոնգի իշխանությունների պարտքերը յոթանասուներեք միլիարդ հոնկոնգյան դոլարից կրճատել՝ հասցնելով մինչեւ քառասունհինգ միլիարդի: Շատ չանցած՝ օդանավակայանի համար չին-բրիտանական բանակցությունները վերսկսվեցին: Յոթերորդ եւ ութերորդ քննարկումներից հետո, 1994-ի փետրվարի 2-ին, բրիտանացիները ներկայացրին չորրորդ առաջարկվող բյուջեն: Այդ բյուջեով, ինչպես Չինաստանն էր առաջարկում, Մեծ Բրիտանիան ավելացնելու էր կապիտալի իր ներդրումը մինչեւ 60,3 միլիարդ հոնկոնգյան դոլար, եւ կրճատելու էր մետրոյի եւ օդանավակայանի համար Հոնկոնգի իշխանությունների պարտքերը քառասունհինգ միլիարդից մինչեւ քսաներեք միլիարդ: Նոր օդանավակայանի արժեքը նույնպես նվազելու էր 112,2 միլիարդ հոնկոնգյան դոլարից մինչեւ հարյուր ութ միլիարդ հոնկոնգյան դոլար:

Հոնկոնգի նոր օդանավակայանի համար նախատեսված ֆինանսական նախահաշիվները վերջապես մոտենում էին իրականության ոլորտին:

1994 թվականի նոյեմբերի 4-ին, Հոնկոնգի նոր օդանավակայանի կառուցման հարցերով աշխատանքային խմբի երրորդ նիստում, Չինաստանի առաջատար ներկայացուցիչ Չժաո Յիհուան եւ Բրիտանիայի առաջատար ներկայացուցիչ Հյու Ռեյվիսը վերջապես կարողացան գրիչը թղթին հպել եւ վավերացնել դժվարությամբ ձեռք բերված այդ

## Զժան Ցավեն

համաձայնությունը: Ապագա կառավարության համար տասնյակ միլիարդավոր հոնկոնգյան դոլարներ խնայելը երկու կողմերից պահանջել էր հինգ տարի շարունակ, 1989-ից մինչև 1994 թվականը, սրեր խաչածելել բանակցությունների տասներեք փուլերում:

Փաթենի «քաղաքական բարեփոխումների» փաթեթը տասնյոթ անգամ քննարկվեց Չինաստանի և Մեծ Բրիտանիայի միջև նախարարների մակարդակով բանակցություններում՝ առանց երկու կողմերի փոխըմբռնման գալու: Ի վերջո, Փաթենը միակողմանի դադարեցրեց բանակցությունները. արդյունքում դա հանգեցրեց երկու կողմերի միջև լիակատար խզման:

Այդ պահին Պեն Սյաոպինն ազդարարեց, որ Չինաստանը ստիպված կլինի նոր մոտեցում որդեգրել՝ ստեղծելով նախապատրաստական հանձնաժողով և ժամանակավոր օրենսդիր մարմին: Այլապես, 1997 թ. հուլիսի 1-ին՝ Հոնկոնգը հանձնելու օրը, իրավական վակուում ձեւավորված կլինեի Հոնկոնգում, և մի շարք հարցերի լուծման ուղիներ չէին լինի:

Լու Պինը մամուլի ասույիսում լուրջ խոսքեր ուներ ասելու Փաթենին. «Եթե Փաթենը համառի և պնդի իրենը, Չինաստանը «նոր սկիզբ կդնի», ինչպես նախատեսված է Հիմնական օրենքում: Այն «սկիզբը», որն առաջարկում է Փաթենը, ոչ մի կերպ համատեղելի չէ Հիմնական օրենքի հետ և, հետեւաբար, տեղ չունի 1997 թվականից հետո: Ժամանակն ավելի ու ավելի է կարճանում, մենք պետք է արագացնենք մեր աշխատանքը բոլոր ոլորտներում, որպեսզի պատրաստ լինենք»:

Չինաստանը հայտարարեց, որ ստեղծելու է «Հոնկոնգյան հատուկ վարչական շրջանի նախապատրաստական կոմիտե» (այսուհետ՝ «Նախապատրաստական կոմիտե»), ինչպես նաև՝ ապագա կառավարության համար ժամանակավոր օրենսդիր մարմին:

Երկու հայտարարություններն էլ թշնամաբար ընդունվեցին Փաթենի և Հոնկոնգում բրիտանական իշխանությունների կողմից, որ հարյուր տարբեր ձեւերով ձգտում էին խանգարել դրանց իրականացմանը:

Բրիտանական կառավարությունը Հոնկոնգում տարածքի բոլոր քաղաքացիական ծառայողներին արգելեց ծառայել Նախապատրաստական կոմիտեին կամ մասնակցել դրա ցանկացած նիստերի: Նախապատրաստական կոմիտեն նա համարեց ապօրինի կազմակեր-

պոթյուն եւ արգելեց նրա հավաքույթները Հոնկոնգում: Կոմիտեի անդամները սպառնալից հեռախոսազանգեր էին ստանում. նրանց նախազգուշացնում էին կոմիտեի աշխատանքներին մասնակցելու հետեւանքների մասին: Նրա հարյուր հիսունից ավելի անդամները ստիպված էին հանդիպել Շենչժենում մինչեւ Հոնկոնգի վերամիավորումը մայրցամաքի հետ, երբ կոմիտեն ինքը կարող էր վերադառնալ Հոնկոնգ՝ իր տուն:

Փաթենի մեթոդները խորհրդանշում էին բրիտանական կառավարության ուխտադրուժ գործելաճոճը: Դրանք ի չիք էին դարձնում ամեն մի հույս՝ թե չին-բրիտանական բանակցությունները կարող են ընդհանրապես պտուղ տալ: Դրանք նաեւ խափանում էին Հոնկոնգի սահուն վերադարձը՝ անկանխատեսելի բացասական հետեւանքներ ստեղծելով տարածքի ապագայի համար:

## **Աշխարհի ամենաերկար, ամենադժվարին, ամենաբարդ բանակցությունները**

Բանակցությունների ամենալարված պահերին չինական կողմի ամենանշանավոր գեներալը ֆիզիկական խնդիրներ սկսեց ունենալ:

Լու Պինը չի հիշում, թե դա երբ սկսվեց, սակայն ամեն անգամ, երբ նստում էր մի բան ուտելու եւ հոնկոնգյան թերթերը նայելու, ստամոքսում թույլ ցավ էր զգում: Նա չգիտեր՝ ցավը սրտո՞ւմ է, թե՞ ստամոքսում, բայց միշտ, երբ կարդում էր հոնկոնգյան թերթերի հոգևեցուցիչ ու դատապարտող հրապարակումները չին -բրիտանական Համատեղ կապի խմբի մասին, սիրտը ցավում էր: 1995 թվականի մայիսին նրան հստակ ախտորոշում տրվեց. նա ստամոքսի քաղցկեղ ուներ, եւ բժիշկները խորհուրդ էին տալիս անհապաղ վիրահատություն կատարել:

Բայց հենց հաջորդ օրը նա ճանապարհին էր. այցելելու էր Հոնկոնգ եւ Մակաո: Կես ամիս անց, երկու տեղերում էլ իր առջեւ դրված խնդիրները լուծելով, նա վերադարձավ Պեկին: Պեկինի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ու Վեյժանը, Լու Պինի ձեռքը բռնելով, ասաց. «Առաջնորդ Լու, ես գիտեմ, որ Դուք ի վիճակի եք դրա մասին չմտածել: Բայց ուզում եմ անկեղծ լինել Ձեզ հետ. Դուք ստամոքսի քաղցկեղ ունեք: Հարկա-

## Զժան Ցավեն

վոր է անհապաղ հիվանդանոց գնալ: Անձամբ ինքս Ձեզ կվիրահատեմ»:

«Այդպես չի լինի: Ես սոր եմ վերադարձել, եւ շատ աշխատանք ունեմ անելու: Ավարտելուց հետո իմ այս ծեր կյանքը ձեր ձեռքերին կհանձնեմ»:

Թեւեւ կյանքը մազից էր կախված, բայց Լու Պինը սեփական կյանքի մասին չէր մտածում, այլ այն մասին, թե իր վիրահատությունն ինչպես կազդի Հոնկոնգում իրավիճակի վրա. տարածաշրջանում դրությունը չի՞ ապակայունանա արդյոք: Հոնկոնգում շատ զգայուն եւ բարդ իրավիճակ էր: Փաթենը կատաղած էր, եւ եթե իմանար, որ Լուն պատրաստվում է դանակի տակ մտնել, կասկած չկա, որ կսկսեր եւս մեկ խառնաշփոթ ստեղծել: Լու Պինը հիվանդանոցում ստուգվել էր «Լին Ցզյան» անունով. այդ կեղծանունը նա օգտագործում էր այն տարիներին, երբ աշխատում էր կոմունիստական ընդհատակում: Երբ հոնկոնգյան լրագրողների անզուսպ բանակը վրա հասավ՝ Լու Պինի մի քանի օրվա «անհետացումից» հետո խուզարկելու Պեկինի հիվանդանոցները, լրագրողների որոնումներն ապարդյուն անցան:

68-ամյա Լու Պինի մոտ ախտորոշել էին ստամոքսի լիմֆոմա՝ ուռուցքի ամենաչարորակ տեսակը: Հետվիրահատական քիմիաթերապիայի դժոխային տանջանքների ընթացքում նա ոչինչ չէր կարողանում ուտել, սպիտակ մազերն ամբողջովին թափվում էին: Առանց այն էլ նիհար մարմնով՝ նա ավելի քան քսան ֆունտ նիհարել էր: Երբ Չժու ժունցզին եւ Լի Պենը հիվանդանոց եկան նրան տեսնելու, աչքերին չէին հավատում, որ այդ մարդը Լու Պինն է: Լու Պինը կենտրոնական կառավարությանը խնդրեց շտապ իրեն փոխարինող գտնել՝ իր աշխատանքը շարունակելու համար: Դա կենտրոնական ղեկավարներին դժվարին դրության մեջ դրեց. հարմար մեկը չկար, ոչ ոք ավելի լավ գլուխ չէր հանում չին-բրիտանական բանակցություններից, քան Լու Պինը: Հոնկոնգի հանձնման գործընթացը միայն ու միայն նա կարող էր կարգավորել, կային նրա վերադարձին սպասող բազմաթիվ այլ լուծելիք խնդիրներ:

Հիվանդանոցի մահճում պառկած՝ Լու Պինն ինքն իրեն հրաման տվեց. չպետք է թողներ, որ քաղցկեղն իրեն հաղթի: Նա պատրաստվում էր ապրել եւ 1997 թվականի հուլիսի 1-ին տեսնել, թե ինչպես է

Հոնկոնգը վերադարձվում մայրցամաքային Չինաստանին: Նա իրեն ստիպեց ուտել, քայլել, ավելացնել մարմնի կշիռը՝ ետ պահելով իրեն մահվան անդունդի եզրից: Քիմիաթերապիայի առաջին կուրսից հետո հիվանդանոցը նրան երկու ամիս հանգիստ նշանակեց՝ երկրորդ փուլից առաջ: Նա հրաժարվեց: Երբ Լուին վերջապես հաջողվեց իր տանջահար, ամբողջովին փոխված տեսքով հայտնվել Հոնկոնգի բնակիչների առջեւ, բոլորը ցնցված էին, նույնիսկ իր այն հակառակորդները, ովքեր նախկինում նրան ծաղրում էին՝ «Ճաղատ Լու» անվանելով:

Ես ամբողջ մի երեկո գրուցել եմ ութսունհինգամյա այդ մարդու հետ: Նա զարմանալիորեն լավ հիշողություն ուներ, եւ մտքերը սուր էին ու սթափ: Երբ պատմում էր չին-բրիտանական բանակցությունների մասին, ասաց. «Եթե իր կյանքի ընթացքում ինչ-որ մեկը կարող է ինչ-որ լավ բան անել իր երկրի, իր ժողովրդի համար,- անկախ նրանից՝ մեծ թե փոքր,- ուրեմն իզուր չի ապրել: Ինձ վստահեցին այդ գործը, եւ ես պետք է ավարտին հասցնեի այն, ինչ սկսել էի անել: Պետք է ավարտին հասցնեի, նույնիսկ եթե դա ինձ սպաներ»:

Իսկ Բրիտանիայի վարչապետ Տոն Մեյջորը դեռ ցուցադրականորեն մեծախոսում էր. «Եթե Չինաստանը խախտի իր պայմանավորվածությունները Մեծ Բրիտանիայի հետ, Մեծ Բրիտանիան պատժամիջոցներ կկիրառի Չինաստանի նկատմամբ»:

1992 թվականին Ռիո դե Ժանեյրոյում կայացած «Երկրի գագաթնաժողովում» Մեյջորը Չինաստանի վարչապետ Լի Պենին ասաց. «Փաթենն իմ ներկայացուցիչն է: Հոնկոնգին վերաբերող հարցերում, երբ Չինաստանի կառավարությունը խոսում է նրա հետ, նույնն է, թե ինձ հետ է խոսում»:

Պաշտոնն ստանձնելուց հետո Փաթենի գործողություններն ամենեւին շահավետ չէին Հոնկոնգի ո՛չ անցյալի, ո՛չ էլ ներկայի համար: Նա առաջ էր քաշում իր «քաղաքական բարեփոխումների» առաջարկը՝ ամեն զնով փորձելով նախկին ոչ ժողովրդավարական Հոնկոնգին պարտադրել ուղղակի ընտրությունների կտրուկ ներմուծման միջոցով «կառավարությունը ժողովրդին վերադարձնելու» հանդեպ ունեցած իր վերաբերմունքը: Հսկայական շինարարական նախագծերի միջոցով նա փորձում էր սպառել Հոնկոնգի ապագա կառավարության ֆինանսական պաշարները: Տանում էր ապագա կառավարությանը պար-

## Զժան Յավեն

տադրել այնպիսի ծրագիր, որն իրավունք կվերապահեր վերջնական դատական բողոքարկում ներկայացնելու Բրիտանիայի «գաղտնի խորհրդին»՝ տարածքի բարձրագույն դատական իշխանությունը Հոնկոնգի բրիտանական իշխանությունների պատկերացումների համաձայն ձեւավորելու փորձ կատարելով: Թաքուն ջանք էր թափում Հոնկոնգի արդարադատության նախարարության ամեն անկյունում ապահովել Բրիտանիայի հանդեպ հավատարիմ հոնկոնգցիների ներկայությունը՝ դա մատուցելով «Հոնկոնգի կառավարության համար սահուն ներքին անցում ապահովելու» փառավոր լուսապսակի ներքո: Փաթենը ստիպեց Հոնկոնգի կառավարության՝ ներգաղթի հարցերով վարչության տնօրեն՝ ազնիվ, աշխատասեր Լուրենս Լյունին վաղաժամկետ կենսաթոշակի անցնել՝ ասելով, որ ինքը «կորցրել է վստահությունը» Լյունի նկատմամբ: Եվ գաղտնի՝ Միացյալ Թագավորությունում մշտական բնակության իրավունք շնորհեց հոնկոնգյան Էլիտայի 225 000 ներկայացուցչի՝ նրանց ընտանիքների անդամների հետ մեկտեղ:

1995 թվականի սեպտեմբերի 23-ին Փաթենը բրիտանական լրատվամիջոցներին հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան մշտական բնակության իրավունքներ կտրամադրի բրիտանական անձնագրեր ունեցող հոնկոնգյան երեք միլիոն քաղաքացիների: 1996-ի մայիսին Հյուսիսային Ամերիկա կատարած այցի ժամանակ նա հետեւյալ անհեթեթությունը բարբառեց. «1997 թվականից հիսուն տարի հետո էլ Բրիտանիան կշարունակի հետաքրքրություն ցուցաբերել Հոնկոնգի նկատմամբ: Եթե չինացիներն այդ բանը չեն հասկանում, դա լուրջ սխալ է: Մենք չենք ուզում, որ մարդիկ մտածեն, թե 1997 թվականի հունիսի 30-ից հետո բրիտանացիները հանկարծ Հոնկոնգի հանդեպ այլ վերաբերմունք կունենան»:

Այս անհեթեթ հայտարարությունը բուռն դիմադրության հանդիպեց Հոնկոնգի հասարակության հայրենասեր անդամների կողմից, ովքեր օղանավակայան էին եկել մեծ պլակատներով, որոնց վրա գրված էր. «Փաթեն, փակի՛ր բերանդ»:

Էլ ավելի արհամարհելի էր, որ Հոնկոնգի բնակիչների բարօրությունը հոգալու պատրվակով Փաթենը կտրուկ ավելացրեց սոցիալական ապահովության ծրագրերի համար կատարվող ծախսերը՝ ամբողջ աշխարհի դիտորդներին լռեցնելով: Հաշվի առնելով գևաճը՝ այդ ծախսե-

րը հինգ տարվա ընթացքում աճեցին 66,5 տոկոսով՝ տարվա կտրվածքով՝ 27 տոկոս տարեկան աճով: Միեւնույն ժամանակ նա կրճատեց հարկերը եւ սառեցրեց եկամուտները: Բարձրացնելով նպաստները եւ կրճատելով հարկերի մուտքը՝ նա կառավարության հաշիվների մեջ խառն վիճակ առաջացրեց: Բրիտանիան փորձում էր օգտվել ստեղծված իրավիճակից, շահել Հոնկոնգի բնակիչների սրտերը՝ իր ետեւից խառնաշփոթ թողնելով:

Հոնկոնգում բրիտանական վարչակազմի Սոցիալական ապահովության վարչության տնօրեն Իեն Սթրեչանը հրապարակային իր ուղերձում ասաց. «Հոնկոնգի սոցիալական ապահովության համակարգը համաշխարհային մակարդակի է, եւ այն արագությունը, որով բարելավում է կատարվում, որեւէ այլ երկրում իր հավասարը չունի»:

Բրիտանական այս գործողությունների հիմքում ընկած ծածուկ դրոպաատճառներն ակնհայտորեն Հոնկոնգը ոչնչացնելու ապարդյուն փորձ էին:

1995 թվականի նոյեմբերին Միասնական կապի խմբի փորձագիտական աշխատանքային խումբը հանձնարարություն ստացավ նախահաշիվ կազմել՝ տարածաշրջանի հարցով Պեկինում հինգերորդ անգամ հանդիպման համար: Դիմելով լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ Չեն Ցզոները պահարակեց Փաթենին եւ անկեղծորեն ներկայացրեց Հոնկոնգում բրիտանական վարչակազմի նկատմամբ չինական քննադատությունները:

Չեն Ցզոներն ասաց. «Եթե կարողանայի մի քանի խորհուրդ տալ պարոն Փաթենին, կասեի, որ 1995 թվականը չփոթի 1842 թվականի հետ: 1842-ին Բրիտանիան կարող էր ստիպել Չինաստանին ստորագրել Հոնկոնգը զիջելու անհավասար պայմանագիր: Բայց այսօր դա բացարձակապես անհնարին կլիներ»: Ապա շարունակեց. «Այն պահից, երբ Փաթենը նահանգապետ դարձավ Հոնկոնգում, բրիտանական իշխանությունների սոցիալական ապահովության ծախսերը տարածաշրջանում դարձել են «Ֆորմուլա 1» մրցարշավային մեքենա, որը մեծ արագությամբ սլանում է լեռնային ոլորուն ճանապարհով: Եթե Փաթենը շարունակի այդպես առաջ գնալ, շատ տարիներ չեն անցնի, եւ մահացու վթար տեղի կունենա: Բայց այդ մեքենան տանում է Հոնկոնգի վեց միլիոն սովորական քաղաքացիներին: Ցանկացած մարդ կարող է

## Չժան Յավեն

ասել, որ այդ [վարքագիծը], որ սեւեռված է միայն նրա վրա, ինչ ձեր առջեւ է, առանց ապագան հաշվի առնելու, միայն ձեր օրվա խնդիրները խաղարկելով, կամ անմաքուր խղճի, կամ էլ քաղաքական հասունության բացակայության արդյունք է»:

Չեն Տգոերի ներկայացրած «մահացու վթարի» մեղադրանքը խիստ գայրացրեց Փաթենին: Այդ նույն օրը երեկոյան նա մամուլի ասուլիս հրավիրեց՝ Չենի բնորոշումներն ու մեկնաբանությունները հերքելու համար: Նա հայտարարեց, որ «Հոնկոնգի բնակիչները լավագույն վարորդներն են, եւ Հոնկոնգի սոցիալական ապահովության ծախսերը նրա ներքին գործն են: Չինացի ոչ մի պաշտոնյա իրավունք չունի կարծիք հայտնելու եւ մեկնաբանելու»:

Մեկ գիշերվա ընթացքում Փաթենը մեկուսացրեց Չեն Տգոերին՝ ներկայացնելով նրան որպես «չարագործ», որն «անտեսում է Հոնկոնգի բնակիչների շահերը եւ միջամտում Հոնկոնգի ներքին գործերին»: Հոնկոնգի այն բնակիչների համար, ովքեր չէին կարողանում ճշմարտությունը տարբերել ստիգ եւ միայն իրենց անձնական շահերի մասին էին մտածում, դա անկասկած սաղրիչ, կախարդական ազդեցություն ունեցավ:

Հաջորդ օրը բոլոր մեծ ու փոքր թերթերը, ռադիոկայաններն ու հեռուստակայանները բազմաթիվ հրապարակումներով դատապարտեցին Չենին: Քննադատությունը համատարած էր եւ ախտաբեր ձյան շերտի նման ծածկում էր փողոցների բոլոր անկյունները: Չենը դատապարտվում էր որպես «Հոնկոնգի բնակիչների շահերն անտեսող եւ Հոնկոնգի ներքին գործերին միջամտող» անձնավորություն: Նույնիսկ այնքան հեռուն գնացին, որ քննադատեցին Չեն Տգոերի լացը տարածքի բնակիչների փոքրիկ «վանդակականման տներ» այցելելու ժամանակ, նրա արցունքները համարելով «կոկորդիլոսի արցունքներ» եւ նրան մեղադրելով՝ թե Հոնկոնգի համար շուրջ է ցուցադրում: Քննադատների խոսքերով՝ Չենը «մեղսագործ» էր Հոնկոնգի աչքում:

Չենը, որն այդ պահին զբաղված էր Պեկինում փորձագիտական խմբի հանդիպումներով, լիովին անտեղյակ էր Հոնկոնգում ծրագրված դավերին:

Էրագրողներից մեկը նրան հարցրեց. «Պարոն Չեն, Հոնկոնգի նահանգապետն ասաց, թե Հոնկոնգի ժողովուրդն է վարում «Ֆորմուլա 1»



մրցարշավային մեքենան, եւ որ հոնկոնգցիները լավագույն վարորդն են, որ կարելի է պատկերացնել: Ի՞նչ կասեիք այս մասին»:

Չենը պատասխանեց. «Նահանգապետը բրիտանացի է, որի միակ իշխանությունը կախված է Անգլիայի թագուհուց: Եթե համեմատենք Հոնկոնգի ապագա գործադիր իշխանության ղեկավարի հետ, որն ընտրվելու է Հոնկոնգի ժողովրդի կողմից, նահանգապետը բռնապետ է: Չնայած միայն նա է, որ վարում է մեքենան [իենց հիմա], նա հիմքեր չունի իրեն Հոնկոնգի ժողովրդի ներկայացուցիչ համարելու, եւ նրա համար Հոնկոնգի ապագա կառավարությունում չի լինելու «վարորդական իրավունքի վկայական»»:

Չենի կողմից Փաթենին «բռնապետ» որակելը յուր լցրեց այն կրակին, որ բորբոքվել էր «ավտովթարի» մասին նրա նախորդ դիտողության պատճառով: Երբ լուրը հասավ Լոնդոն, դա եւս մեկ դիվանագիտական «միջադեպ» հարուցեց: Երկրորդ պետքարտուղարի տեղակալ Էնդրյու Բըրնսը զանգեց Լոնդոնում Չինաստանի դեսպանատան դիվանագետ Վան Ցիյանին, որպեսզի իր բողոքը հայտնի, ինչպես ինքն էր ասում, Փաթենի դեմ Չենի անձնական հարձակման առիթով՝ ասելով, որ դա անընդունելի է Բրիտանիայի համար:

Չենը պատասխանեց՝ ասելով, որ իր պնդումները վերցվել են Բրիտանիայի «Հոնկոնգյան թագավորական հրահանգներից» եւ «Հոնկոնգյան նամակների արտոնագրից»: Այս երկու օրենքները Հոնկոնգի նահանգապետին համարում էին Բրիտանիայի թագուհու լիազոր ներկայացուցիչ, ում տրված էին Հոնկոնգի գործադիր, օրենսդիր եւ դատական բոլոր լիազորությունները: Նա նաեւ Հոնկոնգում բրիտանական զինված ուժերի հրամանատարն էր եւ ուներ հարկեր գանձելու ու ներում շնորհելու իրավունք: Եթե «բռնապետ» չէր, ապա ի՞նչ էր:

Մեկ շաբաթ անց Չենը դուրս եկավ Պեկինից, որպեսզի վերադառնա Հոնկոնգ՝ իր տուն: Հոնկոնգում նա տեսավ, որ կինը,- որն ամբողջ այդ ժամանակ եղել էր իր տոկոն, լավատես, լուռ եւ հուսալի օգնականն ու գործի աջակիցը,- տանջահար տեսք ունի: Այդ ժամանակ միայն իմացավ, թե իրեն պախարակող հրապարակումների ինչպիսի տարափ էր եղել:

«Մի՛ տխրիր, սա պարզապես քաղաքական պայքար է,- ասաց Չենը՝ ստիպելով իրեն ժպտալ եւ փորձելով մխիթարել կնոջը:- Այն ամենն, ինչ անում ենք, անում ենք մաքուր խղճով՝ մեր երկրի եւ Հոնկոնգի մեր

## Չժան Ցավեն

հայրենակիցների համար: Պետք է հավատաս, որ պատմությունն անաչառ դատավոր է եւ մեր հանդեպ բարեհաճ կլինի»:

Այդ գիշեր, ուշ ժամի, Չենը սստեց գրասեղանի մոտ, ի մի բերեց մտքերը՝ ամեն բան գրի առնելով եւ պատրաստվելով ապագային, երբ կգրեր Հոնկոնգի պատմության այդ շրջանի մասին:

Չենը մտաբերեց, թե ինչպես, ինչ իրեն ուղարկել էին Հոնկոնգ Լախորդ տարվա մարտին (1994), որպեսզի Հոնկոնգում ստանձնի չին-բրիտանական կապի խմբում Չինաստանի առաջատար ներկայացուցչի պաշտոնը, անգլիացիներն ամեն բան անում էին իր դեմ պայքարելու համար: Սկզբում փորձում էին հնարավոր բոլոր միջոցներով սիրաշահել իրեն, մինչդեռ հիմա նշանառության տակ էին առել: Երբ Լոր էր ժամանել Հոնկոնգ, Ալան Պոլը՝ այն ժամանակ Մեծ Բրիտանիայի գլխավոր ներկայացուցիչը, խնդրեց միասին ճաշել բարձր երկնաքերում գտնվող արեւմտյան մի ռեստորանում, իսկ հետո գաղտնալսել էր իր հեռախոսային խոսակցությունները:

Չենը պարզեց, որ բրիտանացիները գաղտնալսում էին Չինաստանի արտգործնախարարության աշխատակազմի՝ Քենեդի Թաունի հանրակացարանի հեռախոսները, ինչպես ևաեւ իր բջջային հեռախոսը: Նա ստիպված էր երեք տարբեր բջջային հեռախոս պահել եւ անընդհատ փոխել հեռախոսահամարը: Բանակցությունների ժամանակ ևա երբեք հեռախոսով ներսից չէր գանգում, իսկ գանգելիս միշտ դուրս էր ելնում: Բրիտանացի գաղտնալսողները խոսում էին եւ՛անգլերեն, եւ՛ չինարեն, այնպես որ, երբ բանակցությունները դժվարին փող մտան, հեռախոսազանգերի ժամանակ Չենը ստիպված էր խոսել իր եւ Լու Պի-նի հարազատ՝ Շանհայի բարբառով: Գաղտնալսողները չէին կարողանում հասկանալ երկու շանհայցիների զրույցը եւ որոշ ժամանակ չէին կարողանում պարզել, թե կոնկրետ ինչ են խոսում նրանք:

Մի անգամ, երբ Չենը տաքսի սստեց, հոնկոնգցի վարորդը ճանաչեց նրան եւ ասաց. «Ներկայացուցիչ Չեն, այդ հին բրիտանական սրիկաները հեռանալուց առաջ փորձում են ծախսել մեր ամբողջ գումարը: Դուք պետք է ուշադիր լինեք եւ աչքներդ Հոնկոնգի փողի վրա պահեք: Վստահում եմ Ձեզ եւ հավատում եմ, որ այդպես կանեք»: Վարորդը հրաժարվեց Չենից փող վերցնել, բայց Չենը պնդեց՝ ի վերջո համոզելով նրան ընդունել իր ուղեվարձը:

Չենը հուզված էր: Նա մտածում էր, որ այս սովորական տաքսիստը մատը դրել է բազմաթիվ խնդիրների վրա, որոնք ավելի մեծ մարդիկ կամ չէին հասկանում, կամ հրաժարվում էին հասկանալ:

Դիմակայելով սաստիկ ճնշմանը՝ Չենը ոչ միայն չընկճվեց, այլև իր առջեւ դրված բոլոր առաջադրանքներն ավելի մեծ եռանդով սկսեց կատարել՝ հանդիպումների ժամանակ տիրապետելով ինքն իրեն եւ նիստերին նախազահեղով ժպիտը դեմքին ու կատակը շուրթերին: Նա մեծահոգաբար էր վերաբերվում իր վրա հարցերի տարափ տեղացող լրագրողներին, որովհետեւ հավատում էր, որ, ի վերջո, ամեն ինչ կանցնի:

Եթե չլիներ այն տասն օրերը, որ անցկացրի նրա հետ հարցազրույցներ վարելով, երբեք չէի հավատա, թե որքան մեծ ջանքեր էին պահանջում չին-բրիտանական բանակցությունները, եւ որքան լարված էր մրցակցությունը երկու կողմերի միջեւ: Դա նման էր ավելի քան մեկ տասնամյակ ձգվող մարաթոնի: Բայց այդ մարաթոնում ընդամենը երկու վազորդ կար, որոնցից մեկն իր սրտում չարակամ էր եւ մյուսի համար ծուղակներ էր լարում:

Հոնկոնգի նահանգապետ եղած ժամանակ Զրիս Փաթենը մեծապես ազդել էր Չինաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ բանակցությունների վրա՝ դրանք հասցնելով լիակատար խզման: Նա փակուղի էր մտցրել Համատեղ կապի խմբի աշխատանքները եւ խիստ դանդաղեցրել քսանից ավելի փորձագիտական աշխատանքային խմբերի առաջընթացը: Առավելագույն կարեւորություն ունեցող շատ հարցերի քննարկումը, որոնք կապված էին Հոնկոնգի խաղաղ ու սահուն փոխանցման հետ, ըստ էության ինքնահոսի էր թողնված՝ պատճառելով կորուստներ, որոնք պարզապես հնարավոր չէր փոխհատուցել, եւ ցանելով ապագա անկանխատեսելի վտանգների սերմերը:

Զինվորական հողօգտագործման հարցերի փորձագիտական աշխատանքային խումբն, օրինակ, աշխատանքի մեջ էր եղել յոթ տարի եւ անց էր կացրել անհավանական լարված քննարկումների տասնվեց փուլ:

1992 թվականի հունիսի 6-ին գեներալ Վան Յզինը հրաման ստացավ միանալ խմբին: Այդ ժամանակ նա նոր էր դարձել 60 տարեկան եւ ծառայել էր որպես ռազմածովային գերատեսչության աշխատակազմի սպա եւ ռազմածովային նավի նավապետ: Նա բնածին զինվորականի

## Չժան Ցավեն

հերոսական տեսք ուներ, եւ երբ հիշատակում էին չին-բրիտանական բանակցությունները, երբեմն ի սրտե եւ անբռնագրոսիկ ծիծաղում էր՝ արտահայտիչ շարժումներ անելով ու ձեռքը թափով «շրխկացնելով» իր առջեւ դրված սուրճի սեղանին: Վան Ցզինն ասում էր, որ զինվորական հողօգտագործման մասին համաձայնագիրն առաջին բանն է, որին երկու կողմերը կկարողանային հասնել: Բրիտանացիները համաձայնեցին տասնչորս հողատարածք առանձնացնել չինական զինծառայողների համար, բայց չնշեցին, թե որ տասնչորսն են դրանք լինելու: Բրիտանական զորքերը Հոնկոնգում 39 հողատարածքներում պահպանում էին ավելի քան 1 միլիարդ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ռազմակայաններ, զորանոցներ, ավիաբազաներ, ուսումնամարզական հրաձգարաններ եւ գերեզմանատներ: Երկու կողմերի միջեւ եղած վեճը այն հիմնական հարցի շուրջ էր, թե այդ 14 հողատարածքներից որոնք էին բրիտանացիները թողնելու Չինաստանին:

Բրիտանիան եւ նրա հոնկոնգյան վարչակազմը վաղուց համաձայնության էին եկել այդ տարածքում բրիտանական զորքերի տեղակայման ծախսերը բաժանելու բանաձեւի շուրջ: 75% -ը վճարվում էր Հոնկոնգում բրիտանական վարչակազմի կողմից, իսկ 25% -ը՝ Բրիտանիայի կառավարության կողմից: Բրիտանիայի կառավարությունը ցանկանում էր իր ռազմական գույքը վաճառել Հոնկոնգում գտնվող իր վարչակազմին՝ դրանով իսկ արտահանելով զգալի գումար: Այդ հողատարածքներից ամենակարեւորներն էին Շեկ Կոնգի թռիչքադաշտը, Մեծ Բրիտանիայի թագավորական «Թամար» ռազմածովային կայանը (Ուելսի նշանավոր արքայազնի տան շենքը, բրիտանական բանակի, ռազմածովային նավատորմի եւ օդուժի շտաբ-գրասենյակը) եւ սպաների մի քանի հանրակացարաններ: Չինացիների կարծիքով՝ շատ կարեւոր էր, որ իրենք բանակցություններից դուրս գային այդ հողատարածքները ձեռք բերած:

1994-ի մայիսից սկսած՝ Չեն Ցզոները ղեկավարում էր մի խումբ, որը բաղկացած էր մեկ տասնյակից ավելի ռազմական փորձագետներից, որոնք ընտրվել էին Գլխավոր շտաբից եւ Նյութատեխնիկական ապահովության գլխավոր գերատեսչություններից, օդուժից, նավատորմից ու բանակից: Նրանք մի քանի անգամ պայքարի մեջ մտան բրիտանացի բանակցողների հետ, ինչից պարզ դարձավ, որ երկու կողմերը չեն

կարող համաձայնության գալ: Բրիտանիայի ներկայացուցիչ Ալան Պոլը մինչև վերջ անսասան էր եւ անզիջում Չինաստանի պահանջները բավարարելու իր մերժողական դիրքորոշման մեջ:

Բանակցությունների տասնչորսերորդ փուլի ժամանակ Վան Ցզինը նկատեց, որ բրիտանական բանակցողների պորտֆելների ներքեւի մասերը մաշված են, իսկ թաշկինակները, որ հանում էին իրենց գրպաններից, հին էին եւ ճմրթված: Չնայած այդ փոքրիկ մանրամասները բանակցությունների հետ որեւէ առնչություն չունեին, բայց չինական խմբի ներկայացուցիչների վրա այն անարտահայտելի տպավորությունը թողեցին, որ Բրիտանիայի կայսերական իշխանությունն իսկապես մայրամուտ է ապրում: Նրանք նույնիսկ չէին կարողանում պահպանել արտաքին պատշաճությունը:

Երկու կողմերն էլ ուժասպառ էին լինում բանակցությունների սեղանի շուրջ: Հատկապես պաշտոնական քարտուղարների համար անչափ դժվար էր թաքցնել իրենց հոգնածությունը եւ ստիպված էին սուրճի գավաթներն իրար ետեւից դատարկել, որպեսզի առույգ մնային: Վան Ցզինը չինական թիմի պաշտոնական քարտուղարն էր. բանակցություններին վերաբերող բոլոր փաստաթղթերը նրա գրչի տակով էին անցնում: Հիշելով բանակցությունները՝ նա ասում էր. «Ես արեւմտյան պատուհանից նայում էի, թե արեւն ինչպես է մայր մտնում, ապա արեւեյան պատուհանից տեսնում, թե ինչպես է նորից հայտնվում: Մենք միայն ասում էինք, որ «աշխատում ենք ուշ ժամերին», երեկոյան 11-ից հետո, եւ երբեք շաբաթ օրերին ազատ չէինք լինում: Վստահ չէինք, թե կիրակի օրը կարող ենք հանգստանալ»: Բանակցությունների յուրաքանչյուր նստաշրջանից հետո Վան Ցզինը եւ Չեն Ցզոները փակվում էին անլուսամուտ սենյակում, որպեսզի քննարկեն այն հեռագիրը, որ մինչև կեսգիշեր պետք է ուղարկեին Կենտրոնական ռազմական կոմիտե: Դրանից հետո Վան Ցզինը նստում էր՝ հաջորդ օրվա համար բանակցությունների ձեռագրերը պատրաստելու: Համակարգիչ օգտագործելու մասին խոսք անգամ լինել չէր կարող, դրա համար էլ նա փաստաթղթերը գրում էր մատիտով՝ հատ-հատ հանձնելով Չենին, որպեսզի վերջում ստուգի: Մինչև ավարտում էին, առավոտյան երեքն էր լինում: Վանն այնուհետեւ ձեռագրերը Հեփի Վելլիի իր գրասենյակից տանում էր քայլով քսան րոպե հեռավորության վրա գտնվող Սինհուա-

## Չժան Ցավեն

յի գրասենյակներ տպագրելու՝ պատրաստելով դրանք հաջորդ առավոտ բրիտանացիներին հանձնելու համար: Նա հատուկ զգուշություն էր ցուցաբերում, որպեսզի ճանապարհին իրեն չհետեւեն: Տպագրությունն ավարտելուց հետո, երբ նա այրած էր լինում սեւագիր օրինակները, երկինքը շառագունում էր արեւելքում, լույսը բացվում էր, եւ լուսաբացի առաջին շողերը ողջունում էին նոր օրը: Վանը վերադառնում էր՝ քնելու համար մի քանի րոպե գտնելու, ապա պատրաստվում էր նոր սկսվող հաջորդ օրվա պայքարին:

1994 թվականի մայիսի 13-ին երկու կողմերն անցկացրին իրենց բանակցությունների տասնհինգերորդ փուլը՝ ռազմական նշանակության հողատարածքների վերաբերյալ, բայց դարձյալ նրանց չհաջողվեց համաձայնության գալ: Երբ նստեցին բանակցությունների սեղանի մոտ, Բրիտանական կողմը ներկայացնող Ալան Պոլը հանդես եկավ հետեւյալ դիվանագիտական ելույթով. «Մեծ Բրիտանիայի արտգործնախարարը եւ Հոնկոնգի նահանգապետը ցանկանում են հայտնել իրենց մեծ շահագրգռվածությունը եւ հիասթափությունը այսօրվա բանակցությունների նկատմամբ: Մեծ Բրիտանիան այդ մասին պաշտոնական հայտարարություն կիրապարակի հանդիպումների վերջին օրվա ավարտից հետո՝ այսօր»:

Չեն Ցզոներն ուներ բրիտանացիների համար պատրաստած իր դիվանագիտական ելույթը. «Այս բանակցությունների ընթացքում Չինաստանն աշխատել է լավագույն արդյունք ապահովելու համար՝ միաժամանակ նախապատրաստվելով ամենավատին: Եթե բանակցություններն արդյունք չեն տալիս, դա մեծ կորուստ չէ: Այն օրը, երբ Հոնկոնգը կվերադարձվի Չինաստանին, Հոնկոնգում ռազմական նշանակության հողատարածքների նկատմամբ ամբողջ վերահսկողությունը պարզապես կանցնի այնտեղ գտնվող չինական կայագրին: Եթե բրիտանացիներն այսօրվա բանակցություններից հետո հանդես գան հայտարարությամբ, չինական կողմը լիովին կարող է հանդես գալ դրան հետեւող հայտարարությամբ, որով մենք կարող ենք պարտավորվել հրապարակելու մեր լիակատար մերժումը՝ ճանաչել ռազմական նշանակության հողատարածքներում որեւէ փոփոխություն մինչեւ 1997 թվականի հուլիսի 1-ը, եւ պատասխանատու կլինենք մեր ասածի համար Հոնկոնգի վերադարձից հետո»:

Չենը խոսում էր հեղինակավոր եւ հանգիստ տոնով: Դրանից հետո երկար ժամանակ Պոլը ոչինչ չէր խոսում:

Բանակցությունները տեւեցին մի քանի օր, եւ ոչ մի պայմանավորվածություն ձեռք չբերվեց:

1994 թվականի հունիսի 11-ին Պաշտպանության եւ հասարակական կարգի փորձագիտական խումբը կրկին հանդիպեց բանակցությունների վեցերորդ փուլի համար:

Նրանց քննարկում-բանավեճերը տեւեցին ինևսուն օր ու գիշեր, մինչեւ հունիսի 30-ի գիշերը, երբ Քենեդի Ռոուդ 28-ում վերջապես լսվեցին երկու կողմերի բանակցողների բարձրացվող բաժակների զրնգուն հնչյուններն ու տոնական բաժակաճառերը:

Հունիսի 30-ի առավոտյան չին-բրիտանական Համատեղ կապի խմբի քսանիններորդ ժողովը պաշտոնապես հաստատեց Հոնկոնգում ռազմական նշանակության հողատարածքների հետագա օգտագործման համաձայնագիրը: Այդ համաձայնագրով Չինաստանը վերահսկելու էր Շեկ Կոնգի թռիչքադաշտը, Մեծ Բրիտանիայի թագավորական «Թամար» ռազմածովային կայանը, սպաների հանրակացարանները եւ մի քանի այլ կարեւոր հողատարածքներ: Ընդհանուր առմամբ, Չինաստանը ստանալու էր հոնկոնգյան ռազմական նշանակության հողատարածքների 80,3% -ը, իսկ Բրիտանիան 19,7%-ը: Բրիտանացիները նաեւ համաձայնեցին վերակառուցել մի քանի կարեւոր ռազմական շենքեր, այդ թվում գինվորական հոսպիտալը եւ մատակարարման պահեստը:

Դա, ընդհանուր առմամբ, շատ բարենպաստ արդյունք էր:

Այն օրը, երբ Հոնկոնգը վերադարձվեց Չինաստանին, երբ մենք հեռուստացույցով դիտում էինք, թե ինչպես ժողովրդական-ազատագրական հզոր բանակը մուտք գործեց Հոնկոնգ, մեզնից շատ քչերն էին տեղյակ, թե բրիտանացի եւ չին բանակցողների միջեւ տեղի ունեցած ինչպիսի բախումների արդյունք էր ներկայացվող արարողությունը, քանի անգամ էր երկու կողմերի համբերությունը հասել վերջին սահմանագծին, ապա նրանք զսպել էին իրենց, ետ քաշվել եւ իրար ձեռք սեղմել, ասես ոչինչ էլ չէր պատահել, քանի անգամ էին հերթական անքուն գիշերից հետո կարմրած աչքերով դիմավորել վաղ առավոտյան մշուշը ճեղքող լուսաբացի առաջին շողերը:

## Չժան Ցավեն

Ընդհանուր հաշվով, չին-բրիտանական Պաշտպանության եւ հասարակական կարգի փորձագիտական խումբը բանակցությունների քսաներեք փուլ անցկացրեց:

Հոնկոնգ գործեր ուղարկելու Չինաստանի ծրագրերը,- ներառյալ գործերի առաջադրանքները, քանակը եւ շարքերը, ինչպես նաեւ Հոնկոնգ մուտք գործելու ժամանակը, դրանց իրավական կարգավիճակը, կապ-հաղորդակցությունն ու նավարկությունը, եւ անձնակազմի ու պարագաների տեղափոխումն ու առաքումը,- այդ ամենը նախապես հաստատվել էին բրիտանացիների հետ: Եվ այնուամենայնիվ, բրիտանացիները հնարավորության դեպքում հապաղում էին՝ ամեն անգամ չնչին մի խնդիր գտնելով չինական կողմի առաջարկությունների հետ կապված:

Բանակցությունների սեղանի մոտ Ալան Պոլը, թվում էր, անուշադիր է, ցրված ու մտահոգ, երբեմն գլուխն էր թափահարում եւ ուները թոթվում: Ժամանակ առ ժամանակ նա կրկնում էր. «Այստեղ ոչ մի նոր բան չկա: Ոչ մի նոր բան չկա»:

1997 թվականի մարտի 12-ին, Հոնկոնգի վերադարձից ընդամենը երեք ամիս եւ տասնութ օր եւ Չինաստանի կողմից պահանջվող գործերի առաջին կայազորի ժամանումից ընդամենը մեկ ամիս եւ ինն օր առաջ, երկու կողմերի միջեւ բանակցություններում դեռ պետք է համաձայնության գային պաշտպանության եւ հասարակական կարգի վերաբերյալ: Մարտի 12-ին նշանակված փորձագիտական խմբի քսաներեքերորդ նիստի ամսաթիվն արդեն հրապարակված էր մամուլում: Մարտի 11-ի կեսօրից հետո չինական կողմը հանկարծակի գանգ ստացավ բրիտանացիներից, որոնք հայտնում էին, որ հաջորդ օրվա նիստը փոխվել է. փոխարենը տեղի է ունենալու բնակության իրավունքի փորձագիտական խմբի նիստ: Եվ հավելում էին, որ բրիտանացիների մասնակցությունը նիստին՝ կախված կլինի բնակության իրավունքի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի առաջարկությունները չինացիների կողմից ընդունելուց: Այս դիրքորոշումը հանդիպեց Չեն Ցզոնգի կտրական մերժմանը. «Ոչ մի դեպքում: Գրաֆիկն արդեն հրապարակվել է: Ոչ մի կերպ չենք կարող փոխել դա»: Այս ասելով՝ նա շրխկոցով ցած դրեց հեռախոսը:

Հաջորդ օրն առավոտյան 9:30-ին Չենը Պաշտպանության նախա-



րարության, Արտաքին գործերի նախարարության և Հոնկոնգի ու Մակաոյի գործերով վարչության մի խումբ փորձագետների հետ ժամանեց Քենեդի Ռոուդ 28, որպեսզի միայն տեսնի բրիտանական անձնակազմից դատարկ բանակցությունների սենյակը: Դեռ այդտեղ գտնվող երկու լրագրողները խմբին ասացին, որ բոլոր լրատվամիջոցները գնացին այն բանից հետո, երբ Հոնկոնգում բրիտանական վարչակազմի մամուլի ծառայության գրասենյակն ինչ-որ մեկին ուղարկեց հայտնելու, որ պաշտպանության և հասարակական կարգի վերաբերյալ այդ օրվա բանակցությունները չեղյալ են հայտարարվել:

Չենը պատասխանեց. «Ոչ, նիստը չեղյալ չի հայտարարվել: Ահա թե ինչու մենք այստեղ ենք հանդիպման համար: Խնդրում ենք ետ կանչել մյուս լրատվամիջոցների անդամներին»: Նա մայրցամաքային Չինաստանի լրատվամիջոցների ներկայացուցիչներին պատվիրեց հանդիպել և չինական պատվիրակության անդամներին հյուրասենյակ բերեց՝ սպասելու բրիտանացիների ժամանմանը: Ժամը 11-ն էր մոտենում, բայց բրիտանական պատվիրակությունից ոչ ոք այդպես էլ չերեաց:

Ժամը 11-ին Չենն իր պատվիրակությանը դուրս բերեց հյուրասենյակից և հավաքված լրագրողների խմբին հանդիսավոր ասաց. «Չինական կողմի ներկայացուցիչները Պաշտպանության և Հասարակական կարգի փորձագիտական խմբի նիստի անցկացման համար ժամանեցին հրապարակավ հայտարարված վայր՝ հայտարարված ժամին: Մենք սպասեցինք մեկուկես ժամ առանց բրիտանական պատվիրակության կողմից որեւէ նշանի կամ նրանց ուղղված մեր կոչերին որեւէ պատասխան ստանալու: Կարծում ենք, որ սա իսկապես ցավալի արդյունք է: Չին փորձագետներն ընտրվել են Պաշտպանության նախարարությունից, Արտաքին գործերի նախարարությունից և կառավարության մի շարք այլ գերատեսչություններից: Մենք բարեխղճորեն ներկայացել ենք այս հանդիպմանը և չենք կարող հասկանալ, թե ինչու բրիտանացիները որոշեցին «քվորում» չապահովել մեր բանակցությունների համար»:

«Քվորումի միջադեպ» ի վերջո տարածվեց Հոնկոնգի բոլոր թերթերի առաջին էջերում: Դա բրիտանացիներին անհարմար դրության մեջ գցեց, այնպես որ՝ նրանք ստիպված էին այդ ամենը «թյուրիմացություն» համարել իրենց իսկ ինքնապաշտպանության համար:

## Չժան Ցավեն

Հաջորդ օրն առավոտյան բանակցությունների քսաներեքերորդ փուլը վերջապես վերսկսվեց: Պոլը կարծես դժվարին դրության մեջ էր, դեմքի կարմիրը մատնում էր նրա շփոթմունքը: Բսաներեք փուլից հետո երկու կողմերի միջեւ շախմատային հանդիպումը վերջիվերջո արդյունք էր տվել. համաձայնություն էր ձեռք բերվել Հոնկոնգ մուտք գործել թույլատրվող գործերի քանակի եւ զինատեսակների, մուտք գործելու ժամկետների եւ մի շարք այլ հարցերի շուրջ:

1997 թ. ապրիլի 21-ի առավոտյան, ժամը 11-ին, ժողովրդական-ազատագրական բանակը Շենչժենի Ֆուտյան շրջանում գտնվող՝ Հոնկոնգի հետ իր կապի հենակետից քառասուն սպա եւ զինվորներ ուղարկեց: Հենակետի հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Չժոու Բորոնգի գլխավորությամբ՝ գործերը, «Կամավորների քայլերգի», ՉժԿ-ի պետական օրհներգի հնչյունների եւ մարդկանց ողջույնների ներքո, հատկապես այդ առիթի համար թողարկված համարանիշներ կրող ութ մեքենաներով անցան Շենչժենի կամրջով՝ առաջին անգամ ոտք դնելով Չինաստանին պատկանող Հոնկոնգի մի մասի վրա:

Բայց ՉժԿ-ի՝ Հոնկոնգ մուտք գործելու հետ կապված բանակցությունները, ինչպես պարզվեց, դեռ ավարտին չէին հասել:

Հունիսի 16-ին Հոնկոնգը մայրցամաքային Չինաստանին վերադարձնելուն մնում էր ընդամենը տասնչորս օր: Կեսօրին Չենը հեռախոսազանգ ստացավ փոխարտգործնախարար Վան Ինֆանից, որը նրան հանձնարարեց ստանձնել Պաշտպանության եւ Հասարակական կարգի փորձագիտական խմբի կառավարումը՝ ժողովրդական-ազատագրական բանակի վաղաժամ մուտքի հարցով բրիտանացիների հետ բանակցելու համար: Փորձագիտական խումբը հենց այդ երեկո թռչելու էր Պեկինից Հոնկոնգ: Վանի հանձնարարությունը Չենին այսպիսին էր. «Ժամանակը կարճ է: Պետք է մեկ շաբաթվա ընթացքում համաձայնության գաք բրիտանացիների հետ»:

Դրանից առաջ Բրիտանիայի եւ Չինաստանի արտաքին գործերի նախարարությունների միջեւ ավելի քան մեկ ամիս բարձր մակարդակի բանակցություններ էին ընթանում՝ ՉժԿ-ի կողմից Հոնկոնգ նախնական մուտքի հարցի շուրջ: Չինաստանի դիրքորոշումը հետեւյալն էր. եթե մուտքը հետաձգվեր մինչեւ 1997 թվականի հուլիսի 1-ի գրոժամը, ամբողջ Հոնկոնգի տասնչորս ռազմական օբյեկտներում տեղա-

կայվող կայազորի զորքերի ժամանելու համար կպահանջվե՞ր երկու-երեք ժամ: Չէր կարելի թույլ տալ, որ Բրիտանիայից Չինաստան իջխա-նությունը հանձնելու արարողության ժամանակ այնպիսի դատարկու-թյուն ստեղծվե՞ր, որի դեպքում Հոնկոնգը կմնար բառացիորեն ան-պաշտպան: Բայց ՉԺՀ-ի շուտափույթ մուտքը Հոնկոնգ՝ հանդիպեց Բրայան Դաթթոնի՝ Հոնկոնգում բրիտանական ուժերի գլխավոր հրա-մանատարի եւ Հյու Դեյվիսի՝ բանակցություններում Բրիտանիայի գլ-խավոր ներկայացուցչի կատաղի դիմադրությանը:

Հունիսի 17-ի առավոտյան Զենեդի Ռոուզ 28-ում, բանակցություննե-րի փոքր շենքում պաշտպանության եւ հասարակական կարգի շուրջ բանակցությունների նոր փուլ սկսվեց, որի երկու կողմերը դեռեւս ներ-կայացնում էին Չենը եւ Ալան Պոլը: Չենն առաջ քաշեց Չինաստանի պահանջները. առաջնային կայազորն ընդգրկելու է 1070 զինծառայող եւ հագեցած է լինելու անհրաժեշտ սպառազինությամբ, իրենք Հոն-կոնգ են մտնելու Հուանգան եւ Ման Կամ Տո վայրերից, կայազոր են ու-նենալու, համապատասխանաբար, Նոր Տարածքներում՝ Շեկ Կոնգում եւ Ման Վայում, Զարագործների կղզում ու Կոուլունի Գան Զլաբ Հիլ գո-րանոցներում եւ Սթենլիում՝ Հոնգկոնգ կղզում, ռազմական շտաբներ են ունենալու Ուելսի արքայազնի շենքերում, եւ զորքերը սկսելու են Հոնկոնգ տեղափոխվել վեց ժամ առաջ՝ հունիսի 30-ին, երեկոյան ժա-մը 6-ին:

Պոլը պատասխանեց, որ Չինաստանի կողմից պահանջվող կայա-զորը չափազանց մեծ է, որ բրիտանացիներն իրենք ընդամենը երկու հարյուր հիսուն զինծառայող ունեն տեղակայված Հոնկոնգում, եւ որ չինական զորքերի ներկայությունը պետք է համաչափ լինի բրիտանա-ցիների հետ: Չեն կարող թույլատրել, որ զրամբեքները մուտք գոր-ծեն Հոնկոնգ, որովհետեւ դրանից բրիտանացիները կկորցնեն իրենց հեղինակությունը, իսկ Հոնկոնգի բնակիչները կահաբեկվեն: Բրիտա-նացիները կհամաձայնեին միայն առաջատար երկու կայազորների տեղակայմանը, նրանք մերժեցին չինական պահանջները՝ առաջնա-յին կայազորները տեղակայելու Կոուլունում, Սթենլիում եւ Ուելսի ար-քայազնի շենքերում:

Չեն Տզոները դրան զայրալից պատասխանեց. «Պարո՛ն Պոլ, մեզ պե՛տք է թողնեն Ուելսի արքայազնի շենք եւ Սթենլիի զորանոցներ»:

## Չժան Ցավեն

Առաջինը բրիտանական միավորված զինված ուժերի շտաբն էր Հոնկոնգում, վերջինը՝ միակ կայազորն էր Հոնկոնգի հարավային սահմանում: Չինաստանին պե՛տք է թույլատրվեր այդտեղ կայազոր տեղակայել:

Այսպես շարունակվեց երեք օր: Կողմերից յուրաքանչյուրն իրենն էր պնդում ուժասպառ լինելու չափ եւ չէր ուզում մեկ թիզ անգամ զիջել: Չինաստանի բանակցող խումբը լարվածություն էր զգում. մինչեւ հուլիսի 1-ը՝ Հոնկոնգի հանձնումը, մնացել էր ընդամենը տասն օր, իսկ Հոնկոնգի առաջնային կայազորի տեղակայումը դեռ չէր կատարվել:

Հունիսի 20-ին երկու կողմերը մեկ այլ առավոտ գուր վատնեցին հոգնեցուցիչ վեճ ու խոսքակռվի մեջ: Ճաշի ժամանակ Չենը եւ փորձագետների խումբը գործերի վերաբերյալ կյութերն էին նայում, երբ Չենը պատահաբար հանդիպեց մեկին, որը նկարագրում էր հնարավոր «կանխարգելիչ հարվածի» ռազմավարությունը:

Երբ կեսօրին բանակցությունները վերսկսվեցին, չինական խումբը, գլխավոր շտաբի կայազորային գրասենյակի ղեկավարի տեղակալ, ավագ գեղապետ Չժոու Չժենյուանի հետ, անցավ հարձակման՝ առաջին համազարկն արձակելով բրիտանացիների վրա:

«Պարոն Պոլ, կարո՞ղ եմ հարցնել, եթե չինական կողմը չհամազորձակցի ձեզ հետ հուլիսի 1-ին, զրո ժամին, ինչպե՞ս են ձեր զորքերը եւ սպաներին տեղափոխող նավերն ու ինքնաթիռները հեռանալու: Չինաստանի ջրերից եւ օդային տարածքից: Եթե Չինաստանի կողմից համազորձակցություն չլինի, ապա ձեր հռչակավոր երկրի գործադրած բոլոր ջանքերը՝ «արժանապատիվ նահանջ» ապահովելու համար, իզուր կլինեն: Երբ զրո ժամը գա, Հոնկոնգը մեզ՝ Չինաստանին է պատկանելու: Այդ պահին Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի ներգաղթի գերատեսչությունը ոչ մի պարտավորություն չունի ամեն բան անել այնպես, ինչպես ձեզ է հարմար: Համաձայն Հոնկոնգի հիմնական օրենքի՝ նա կարող է ստուգման ենթարկել ձեր զորքերի կողմից փոխադրված ուղեբեռի եւ զենքի անգամ ամենավերջին առարկան: Չեր արքայական զբոսանավը՝ HMS Britannia-ն, որ փոխադրում է ձեր իշխան Չարլզին եւ Հոնկոնգի վերջին նահանգապետին, եւ նրան ուղեկցող HMS Chatham-ը կարող են, չինական զինվորականների հրամաններով, ստիպված լինել տախտակամածի վրա ի ցույց դնելու իրենց

մոտ եղած բոլոր զենքերը՝ նախքան նրանց կթույլատրվեն լքել չինական ջրային տարածքները: Հակառակ դեպքում ստիպված կլինեք հանձնելու ձեր զենքը»:

Չժոուի պոռթկումն անհրաժեշտ թեթեւացում էր: Տասնհինգ տարի անընդմեջ դուք՝ բրիտանացիներդ, դժվարացնում էիք մեզ համար ամեն բան՝ ամեն քայլափոխի խոչընդոտներ առաջացնելով, ամենուր դժվարություններ ստեղծելով: Կգա հուլիսի 1-ը, եւ կտեսնեք, թե ինչպես ենք ձեր հարցերը լուծում:

Սենյակը թաղվեց հեղձուցիչ լռության մեջ: Բրիտանացի բանակցողները, շնչելով օդորակիչներից փչող սառն օդը, կարող էին զգալ չինական կողմի անդրդվելիությունը: Անելանելի վիճակը շարունակվեց մինչեւ մթնշաղ, երբ երկու թիմերը նորից դժգոհ բաժանվեցին: Դուրս ելնելիս Չենի եւ Պոլի՝ երկու առաջատար ներկայացուցիչների քայլերը մի փոքր ավելի ծանր էին թվում, քան իրենց տեղակալների քայլերը: Միջանցքի լույսերը ստվերներ էին նետում նրանց կերպարանքների վրա՝ մեկը կարճահասակ, մյուսը բարձրահասակ: Երբ հասել էին աստիճաններին, երկուսի հայացքները հանդիպեցին: Պոլը համարձակվեց անզլերեն դիմել Չենին. «Մենք երկուսս մեկ անգամ էլ կզրուցե՞նք»:

Աշխատակազմի անդամները կարգի էին բերում գլխավոր սենյակը, եւ նրանք երկուսն ստիպված էին առանձնանալ փոքր մի պահեստասենյակում: Ոչ ավելի, քան երեք կամ չորս քառակուսի մետր մակերեսով այդ փոքրիկ սենյակում երկու ոխերիմ թշնամիները նստեցին մի նստարանի վրա կողք կողքի: Դարակազմիկ այդ պահին երկուսով նստած էին անլույս սենյակում, որ լուսավորվում էր միայն նրանց բաց թողած դռան արանքից ընկնող բարակ մի շողից: Նրանք միմյանց դեմքերը պարզ չէին տեսնում, բայց կարող էին զգալ մեկը մյուսի շնչառությունը:

Պոլն առաջինը խոսեց. «Չինական դիրքորոշման մեջ որեւէ զիջում չկա՞»:

Չենը պատասխանեց՝ կրկնելով Չինաստանի վերջնական պահանջը. նախ՝ նրանք կարող էին ապրել առանց Կոուլունի Գան Բլաք Հիլ գորանոցի նախնական կայազորի, բայց նախնական կայազորների տեղակայումը Ուելսի արքայազնի ռազմական շտաբում եւ Սթենլիի

## Զժան Ցավեն

զորանոցում քննարկման ենթակա չէր: Երկրորդ՝ նրանք կարող էին կրճատել առաջնային զինուժի մարդկանց թիվը: Եվ վերջապես՝ այս անկեղծ, վճռական ու սրտաբաց հայտարարությունն էր. «Բրիտանացիները պետք է զիջող լինեն»: Այն ամենն, ինչ ի պատասխան լսեց Չենը, եղածի հետ համաձայնելու Պոլի քրթմնջոցն էր:

Ո՛վ կմտածեր, որ այդ փոքրիկ մութ պահեստում բանակցությունները, որ արդեն մի քանի օր ու գիշեր փակուղի էին մտել, վերջապես առաջընթաց կունենան: Բրիտանացիներն ակնհայտորեն մտածում էին Նահանջի մասին: Որպեսզի ամբողջ աշխարհի առջեւ իրենց դեմքը չկորցնեին, նրանք միայն կարող էին տեղի տալ:

Եվս հինգ օրվա բախումներից հետո, վերջապես, բավարար արդյունք ձեռք բերվեց: Օգտագործելով կենտրոնական կառավարության վերջնական թիվը՝ հինգ հարյուր զինվորներով գործեր, Չենը ներկայացրեց 509 զինվորներով կայագորային գործերի մասին առաջարկություն: Երբ ամեն բան ասված եւ արված էր, նրանք կանգ առան հուսալի թվի վրա:

Բայց բանակցությունները հեռու էին ավարտվելուց: Երկու կողմերն էլ հանձնարարականներ էին ստացել իրենց համապատասխան կառավարություններից՝ 1997 թ. հուլիսի 1-ին զրո ժամին Հոնկոնգի հանձնմանը ժամանակին Նախապատրաստվելու համար:

Բրիտանացիներն առաջարկեցին, որ մինչեւ հունիսի 30-ի ամենավերջին պահը իրենց դրոշը կանգուն մնա, եւ իրենց պետական օրհներգը հնչի, եւ պահանջեցին, որ Չինաստանը մեկ վայրկյան հետաձգի իրենց դրոշը դնելը: Չինական կողմը կտրուկ մերժեց այդ առաջարկը: Կենտրոնական կառավարությունից հրամայված էր՝ չինական դրոշը պետք է բարձրացվի, եւ Չինաստանի ժողովրդական Հանրապետության ազգային օրհներգի հնչյունները պետք է հնչեն հե՛նց հուլիսի 1-ի կեսգիշերին, ո՛չ մի վայրկյան շուտ կամ ուշ:

Չին փորձագետ Ան Վենթինը եւ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Հյու Ղեյվիսը տասներեք անգամ հանդիպեցին բանակցություններ վարելու հարցի առնչությամբ, բայց երկու հակառակորդ կողմերն իրենցն էին պնդում, եւ մեկը մյուսին չէին ցանկանում զիջել: Տասնչորսերորդ հանդիպման ժամանակ բրիտանացիները դժկամորեն համաձայնեցին, որ Չինաստանի դրոշը բարձրացվի եւ ՉԺՀ-ի ազգային օրհներգը

հնչի հունիսի 30-ին՝ կեսգիշերից մեկ վայրկյան պակաս, երբ մինչև հաջորդ օրն ընդամենը մեկ վայրկյան է մնում:

«Ո՛չ: Մենք պահանջում ենք դրոշի բարձրացումը սկսել կեսգիշերից երկու վայրկյան պակաս: Խմբավարին երկու վայրկյան է պետք իր փայտիկը բարձրացնելու համար», - համառորեն ասաց Անը:

«Ո՛չ: Ո՛չ: Ո՛չ», - հնչեց Դեյվիսի նույնքան վճռական պատասխանը:

Անն անմիջապես գրոհեց Դեյվիսի վրա. «Պարոն Դեյվիս, դուք բուրդ ներխուժեցիք եւ ավելի քան հարյուր հիսուն տարի գրավել էիք Հոնկոնգը: Նախապես ձեզնից եւս մեկ վայրկյան ենք խնդրում ընդամենը, եւ դուք դա էլ չէք տալիս մեզ: Դա պարզապես ծիծաղելի է»:

Անի գրոհից Դեյվիսը պապանձվեց, իսկ ներկաները ցնցվեցին: Հարյուր հիսուն տարին համեմատել մեկ վայրկյանի՝ հետ: Այդպիսի խոր հակասությունից կարելի էր միայն տխուր հառաչել:

Բրիտանացիները ջախջախված էին եւ գիտեին դա: Այդ մեկ վայրկյանի համար երկու կողմերն անցել էին բանակցությունների տասնչորս փուլ:

Հունիսի 30-ին՝ հանձնման գիշերը, արքայազն Չարլզի ելույթը 23 վայրկյանով ավելի երկար տեւեց: Ան Վենբինն արդեն նախապատրաստվել էր նման իրավիճակի համար եւ որոշեց գործի դնել արտակարգ իրավիճակների իր ծրագիրը: Անկախ նրանից, թե ինչ կպատահեր, չինական զինվորական նվազախմբի խմբավար Յոյ Յոյանֆանը կեսգիշերից երկու վայրկյան առաջ պետք է վերցներ իր փայտիկն ու հնչեցներ պետական օրհներգը, եւ ուղիղ կեսգիշերին բարձրացվելու էր Չինաստանի դրոշը: Բայց Անը շուտով հասկացավ, որ բրիտանական «Աստված փրկի թագուհուն» պետական օրհներգը նվազարկվում էր սովորականից ավելի արագ ռիթմով: Իր սովորական՝ 51 վայրկյանի փոխարեն այն ավարտվեց 39 վայրկյանում: Բրիտանական դրոշն իջեցվեց, եւ չինական զինվորական նվազախումբը կարողացավ ժամանակին սկսել պետական օրհներգը, ինչպես նախապես ծրագրված էր, եւ բարձրացնել Չինաստանի ժողովրդական Հանրապետության դրոշը:

## Հարյուր հիսուն տարվա կոչն իրականանալիս

Առավոտ էր: Ես եկել էի Քենեդիի Ռոուդ 28: Ստա այդ փոքրիկ շենքը՝ մի վայր, որտեղ այդքան շատ բանակցություններ էին տեղի ունեցել: Դուն Չի-հուայի քարտուղարն այդտեղ էր, որպեսզի ինձ ընդունի:

Շենքը կառուցվել էր 1905 թվականին՝ իտալական վերածննդի ոճով: Մեկդարյա գոյության ընթացքում այն մեծ փոփոխություններ էր տեսել, բայց դեռ պահպանել էր իր սկզբնական ինքնատիպ ոճը: Կանգնեցի շարժասանդուղքին եւ բարձրացա ընդարձակ բակ: Բակում բանյանի երկու միահյուսված ծառեր կային, որոնց փարթամ ամպիովանիները ձուլվել էին անսովոր մի գրկախառնությամբ: Բակում նաեւ մի փոքրիկ, հարյուրամյա երկհարկանի շենք կար, որին կարծես անցնող տարիները չէին վնասել, եւ չէր ենթարկվել հարյուր տարվա քայքայիչ ավերածություններին: Մաքուր ու նրբագեղ մի բան կար նրա մեջ, ինչպես աշխարհիկ, լավ պահպանված մեծ տանտիկնոջ, որ իր հայացքն է հառել մեր սանձարձակ աշխարհի վրա՝ ճակատագրի հեղհեղուկ փոփոխականությանն անտարբեր:

Մտնել այդ շենքից ներս՝ նույնն էր, թե մտնել Հոնկոնգի հարյուրամյա պատմության մեջ: Ամեն ինչ պահպանվել էր այնպես, ինչպես իր ժամանակին էր եղել. դռան դասական զանգեր, բուխարիներ, ապակենախշ լուսամուտներ, հռոմեական ոճի սանդուղքներ եւ սյուներ... Նույնիսկ հատակի սալիկները պահպանել էին իրենց թեթեւ սրճա-շագանակագույն տեսքը: Յուրաքանչյուր քայլը կարծես կրում էր պատմության ծանրությունը, ասես ոտք էիր դնում հենց պատմության կրծքին: Խոսք ու բառերի անթիվ բախումներ եւ բանավեճեր չինացիների ու բրիտանացիների միջեւ, անհաշիվ հուսահատ պտույտներ ու շրջադարձեր, այդ ամենն այստեղ էր եղել:

Փոքրիկ շենքը մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցել: Եղել էր մասնավոր նստավայր, դպրոց, որոշ ժամանակ այն գրավել էին ճապոնացիները: Այժմ այդտեղ Հոնկոնգի նախկին ղեկավարներ Դունի եւ Դոնալդ Յանգի գրասենյակներն էին: Դունի քարտուղարն ինձ ուղեկ-



ցեց շենքի առաջին հարկի՝ բազմոցներով կահավորված երկու փոքր սենյակների միջով. դրանք օգտագործվում էին այն ժամանակ, երբ բանակցող երկու կողմերի ներկայացուցիչները ցանկանում էին մի փոքր հանգիստ առնել: Ապա վերադարձանք երկրորդ հարկի դահլիճ, որն այժմ օգտագործվում էր որպես Դունի գրասենյակային տարածք: Նա այստեղ չէր, ուստի ես նստեցի բազմոցին՝ թեյ խմելու եւ գրուցելու:

Շենքի ներսում խաղաղ էր ու հանգիստ: Բայց եթե ուշադիր ականջ դնեիր, ասես կարող էիր լսել լարված բանակցությունների ելեւեջների ձայները...

Ես չէի կարող իմանալ, թե քանի անգամ են այստեղ բանակցել Չի-նաստանը եւ բրիտանացիները, թերեւս միայն փոքրիկ շենքն էր այդ ամենի մասին վկայում: Բայց գիտեի, որ շենքից բացի կա մի դիվանագետ, ով տեսել էր այստեղ տեղի ունեցած ամեն բան:

Դա Հոնկոնգի, Մակաոյի եւ Թայվանի գործերով ՉԺՀ-ի արտաքին գործերի նախարարության նախկին գլխավոր տնօրենի տեղակալ, Էդինբուրգում Չինաստանի հյուպատոսության գլխավոր հյուպատոս, չին-բրիտանական Համատեղ կապի խմբի ներկայացուցիչ, փորձագիտական խմբի անդամ եւ դեկավար Վան Վեյյանն էր:

Վանը Հոնկոնգի վերադարձի շուրջ բանակցություններով զբաղվել էր տասնչորս տարի՝ 1985 թվականի նոյեմբերից մինչեւ 1999 թվականի սեպտեմբերը: Համատեղ կապի խմբի քառասունյոթ հանդիպումներից նա մասնակցել էր երեսունութին: Երկու անգամ հանձնարարականով գործուղվել էր Հոնկոնգ՝ ամեն անգամ վեց տարով, եւ Համատեղ կապի խմբի չինական կողմի ամենաներկարակյաց անդամն էր: Դեկավարել կամ մասնակցել էր փորձագիտական խմբի ավելի քան հարյուր հանդիպումների: Նա եւ իր գործընկերները պատասխանատու էին հարյուրից ավելի միջազգային պայմանագրերը պատշաճ կերպով վարելու համար, որոնց Հոնկոնգը դեռ մասնակից էր լինելու 1997 թվականից հետո, եւ տասնյակ միջազգային կազմակերպությունների հետ Հոնկոնգին առնչվող հարցերի լուծումների համար:

Ես հարցազրույց եմ վարել այդ պաշտոնաթող դիվանագետի հետ Պեկինում: Այդ ժամանակ նա յոթանասունն անց էր եւ արտակարգ հիշողություն ուներ: Բանակցությունների յուրաքանչյուր առարկա, յուրա-

## Զժան Յավեն

քանչյուր միջադեպ, յուրաքանչյուր պահ, վայր եւ անձ... ամեն բան հիշում էր՝ պարզ ու հստակ:

Վանը ծնվել էւ մեծացել էր Յանչժոուում, Յոյանսու նահանգում: Անգլերենի բակալավրի աստիճան էր ստացել Պեկինի արտաքին ուսումնասիրությունների համալսարանում: Որպես դիվանագետ՝ տասնյակ տարիների ընթացքում անձամբ թարգմանել էր անթիվ գործեր եւ մասնակցել մի շարք կարեւոր դիվանագիտական փաստաթղթերի, պետական բարձրաստիճան ղեկավարների ելույթների, միջազգային իրավական համաձայնագրերի մշակմանը, ինչպես նաեւ Մաո Յզեդու-նի «Ընտիր երկերի» հինգ բաժինների անգլերեն պաշտոնական թարգմանության վերջնական հաստատմանը: Նրա բարձրակարգ անգլերենը երկար տարիներ խիստ օգտակար էր եղել չին-բրիտանական բանակցությունների ժամանակ:

Վանն ինձ մի պատմություն պատմեց, որ քչերին էր միայն հայտնի: 1988 թվականի օգոստոսի 22-ի գիշերը նա հանկարծ խիստ տխուր լուր էր իմացել, որ մայրը մահացել է: Ընտանիքը զանգել էր նրան՝ այն հույսով, որ նա կարող է շտապել տուն՝ մոր թաղմանը: Լուրը նրան մեծ վիշտ էր պատճառել: Վանն անքուն մի գիշեր էր անցկացրել՝ դառնորեն արտասովորով: Մայրն ամբողջ կյանքում աշխատել էր Յոյանսուի Լյուպու գյուղի ընտանեկան ագարակում: Երբեք չէր զգացել հարստության վայելքը: Դիվանագետ աշխատելիս՝ երկար տարիներ Վանը միշտ ցանկացել էր մորը բերել Պեկին, որպեսզի հենց որ ավարտեր Հոնկոնգի հետ կապված աշխատանքը, մայրն ապրեր իր հետ, եւ ինքը ցույց տար նրան մայրաքաղաքը: Բայց հիմա ցնցված էր անողոք լուրից: Համատեղ կապի խումբը նոր էր տեղափոխվել Հոնկոնգ, եւ նա կապված էր աշխատանքով: Նրա համար դժվար կլիներ ազատ օր վերցնել: Պատահաճի մասին ոչ ոքի չէր ասել: Այն ամենն, ինչ կարող էր անել, ժամանակ գտնելն էր եւ հանգիստ տեսքով, ասես ոչինչ չէր եղել, Շենչժեն մեկնելն ու ընտանիքին մի քիչ կանխիկ գումար ուղարկելը: Վանը կարծում էր, որ դա լավագույնն էր, ինչ կարող էր անել մոր համար:

Մոր մասին պատմելիս ծերունին շնչահեղձ էր լինում եւ չէր կարողանում խոսել:

Նա ասաց, որ 1997 թվականի մայիսի 28-ից մայիսի 30-ը, Հոնկոնգում կայացած չին-բրիտանական Համատեղ կապի խմբի քառասուներորդ հանդիպման ժամանակ, երկու կողմերը կնքեցին տասներեք համաձայնագիր: Հանդիպման ավարտից հետո նա եւ խմբի երկու փորձագետներ՝ Դեն Չժունհուան եւ Չժաո Ցզիհուան, գնացին Դուն Չի-հուայի ժամանակավոր գրասենյակներ եւ նոր կնքված համաձայնագրերի միլիոնավոր բառեր պարունակող փաստաթղթերի տրցակներն անձամբ հանձնեցին այն մարդուն, ով շուտով ստանձնելու էր Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը: Այն ժամանակ Վանն զգում էր, որ սրբազան մի բան է կատարում՝ թանկարժեք նվիրաբերություն անելով Հոնկոնգի հատուկ վարչական շրջանին ու նրա ժողովրդին: Դրանք Չինաստանի հազարավոր մասնագետների միասնական փութաջան, ուժասպառ անող աշխատանքի պտուղներն էին: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ յուրաքանչյուր թղթապանակում դրված յուրաքանչյուր փաստաթուղթ տոգորված էր չինական կողմի աշխատակիցների ու փորձագետների իմաստությամբ, քանի որ նրանք արդար եւ հիմնավոր փաստարկներ ու ապացույցներ էին ներկայացրել բրիտանացիների դեմ: Փաստաթղթերը լի էին այն պատասխանատվության խոր զգացումով, որ ունեցել էին չինական աշխատակազմի ու Համատեղ կապի խմբի փորձագետները կառավարության եւ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի ժողովրդի նկատմամբ: Դա երկուսի հանդեպ ունեցած խոր սիրո եւ բարեկամական ջերմ զգացումների արդյունք էր:

Վան Վեյյանն ասաց, որ չին-բրիտանական բանակցություններին մասնակցելու հնարավորություն ունենալը, չինական կողմի այդքան շատ այլ անդամների հետ աշխատելը, որպեսզի կատարեն իրենց երկրի կողմից իրենց տրված կարեւորագույն առաջադրանքը եւ անմիջականորեն ականատես լինեն Հոնկոնգի սահուն, անցնցում հայրենիքին վերադարձնելուն, ամենամեծ պատիվն էր իր կյանքում: Հոնկոնգը հանձնելու երեկոյան նա արտասովելու չափ հուզված էր, ինչպես շատ շատերը:

Չինական կողմից ավելի քան հազար պաշտոնյաներ եւ փորձագետներ էին մասնակցում չին-բրիտանական բանակցություններին: Ես չէի կարող նրանցից ամեն մեկի հետ առանձին հարցազրույց վարել, ոչ

## Չժան Ցավեն

Էլ կարող էի թղթի վրա գրի առնել նրանց բոլորի պատմությունները կամ գրել փորձագիտական խմբերից յուրաքանչյուրի կողմից ձեռնարկված ծանր բանակցությունների մասին: Բայց շարունակում եմ խոր հարգանք տաձել բոլոր նրանց հանդեպ, ովքեր աշխատանք են տարել Հոնկոնգի վերադարձի համար: Եթե չլիներ նրանց լուռ աջակցությունն ու ներդրումը կուլիսներից անդին, հնարավոր չէր լինի այն ամենն, ինչ եղավ հետո:

Հոնկոնգի վերադարձից յոթ օր անց Լու Պինը, որն այժմ 70-ն անց է, թոշակի անցավ:

Նույնպես յոթերորդ օրն էր, որ «Սինհուա» լրատվական գործակալության Հոնկոնգի ղեկավար Չժոու Նանը վերջապես գնաց հիվանդանոց: Նա սպասում էր Հոնկոնգի վերադարձին: Երեք օր անց նա վիրահատության ենթարկվեց ստամոքսի չարորակ ուռուցքի պատճառով:

1982 թվականի սեպտեմբերի 24-ին Սարգարեթ Թեթչերի հետ Դեն Սյաոպինի առաջին հանդիպումից մինչև 1997 թվականի հուլիսի 1-ին Հոնկոնգի վերադարձը ավելի քան տասնհինգ տարի էր: Ընդհանուր հաշվով, երկու կողմերն անցել էին ոչ պաշտոնական հինգ բանակցությունների առաջին փուլի, պաշտոնական քսաներկու բանակցությունների երկրորդ փուլի, պաշտոնական տասնյոթ բանակցությունների երրորդ փուլի, չին-բրիտանական Համատեղ կապի խմբի պաշտոնական քառասունյոթ հանդիպումների եւ փորձագիտական տարբեր խմբերի հարյուրից ավելի հանդիպումների միջով:

Ընդամենը թղթի մի կտոր էր, որով հանձնվեց Հոնկոնգը, բայց ինչպիսի՛ տառապանքներ պահանջվեցին, ինչքան մեծ ջանքերի գնով ձեռք բերվեց այդ թուղթը:

Երբ ես ժամանեցի Հոնկոնգյան համաձայնագրերի եւ ցուցահանդեսների կենտրոն, նախասրահը լուռ էր, ոչ ոք չկար այնտեղ: Երկար ժամանակ կանգնել էի մուտքի մոտ՝ զննելով հանգիստ նստարանների շարքերը, եւ չէի կարող մտքով ետ չգնալ դեպի տասնհինգ տարի առաջ տեղի ունեցածը...

Ասես լսում էի ամբողջ աշխարհի չինացիների ձայները, որ ակնկալիքով լի՝ խմբով բարձրաձայնում էին Հոնկոնգի վերադարձման ետհաշվարկը. «5! 4! 3! 2! 1!»:

«Դո՛ւ...»: Վերջապես հնչել էր պատմության խոր արձագանք սփռող զանգը: Դա այն կոչնակն ու կանչն էր, որին ավելի քան հարյուր հիսուն տարի սպասում էր չին ժողովուրդը, ձայն, որ ազդարարում էր հին դարաշրջանի վախճանը եւ նորի ծնունդը:

Չին ժողովուրդը վերջապես լվացել մաքրել էր մեկդարյա նվաստացումը եւ ետ վերցրել Հոնկոնգը:

Նույն զգացողությունն էր՝ ասես լսում էի «Կամավորականների քայլերգի» վեհ մեղեդին, որ տարածվում էր երկինքում Հոնկոնգի վրա, ասես տեսնում էի հինգ դեղին աստղերը կարմիր ֆոնին, երբ Չինաստանի դրոշը դանդաղ բարձրանում էր քաղաքի վրա, ասես լսում էի Նախագահ Ցզյան Ցզեմինի հայտարարությունը. «Այսօր Չինաստանի եւ Մեծ Բրիտանիայի կառավարությունները ժամանակին անցկացրին Հոնկոնգի հանձնման արարողությունը: Չինաստանը վերսկսեց ինքնիշխանության իրականացումը Հոնկոնգի նկատմամբ»:

Չին ժողովուրդը կռվել էր, այդքան երկար պայքարել էր այս օրվա համար: Մոր գրկից խլված երեխան վերադարձվել էր: Չան Կայ-չին, Մաո Ցզեդունը, Դեն Սյաոպինը լի էին Հոնկոնգը վերադարձնելու վճռականությամբ, բայց նրանցից ոչ ոք չտեսավ այն օրը, երբ իրենց այդ վճիռն իրականացված էր: Ընդամենը հարյուր երեսունհինգ օր էր մնում, որ Դեն Սյաոպինը հնարավորություն ունենար «զնալ Հոնկոնգ, քայլել մեր հայրենի հողի վրա, տեսնել այն»:

Ասես տեսնում էի արքայազն Չարլզին՝ հայացքը խոնարհած, տեսնում էի հուլիսի 1-ի նրա օրագրային գրառումը. «Այսօր կայսրության վախճանն է»: Չինաստանի պետական օրհներգի արձագանքը լսելով, տեսնելով քամուց փողփողացող Չինաստանի դրոշը՝ ըստ երեւոյթին նա տրամադրության անկում ունեցավ: Հուզական այդ տրամադրության մեջ՝ նա խառնեց իր ելույթի բառերը եւ մոռացավ, որ Ցզյան Ցզեմինի ելույթի ավարտից հետո պետք է լուսանկարվի նրա հետ:

Բայց Չինաստանի ժողովուրդը երբեք չպետք է մոռանա նվաստացուցիչ այն օրը՝ 1842-ի օգոստոսի 29-ը, երբ բրիտանացիները, ատրճանակի փողի սպառնալիքի ներքո, Ցին կառավարությանը ստիպեցին ստորագրել Հոնկոնգը զիջելու անհավասար պայմանագիրը:

Վերհիշեցի Չինաստանի բանակցող թիմին ուղղված՝ Դեն Սյաոպի-

Զժան Յավեն

նի պատվիրանները. «Չեք կարող մեղմ լինել բրիտանացիների հանդեպ: Պետք է վճռական ու հաստատակամ լինեք»:

Կարծում եմ՝ այդ բառերը ոչ միայն չինացի բանակցողների համար էին, այլև ամբողջ չին ազգի: Ճիշտ այնպես, ինչպես չենք կարող մեղմ լինել բրիտանացիների նկատմամբ, նույնպես չենք կարող մեղմ լինել ցանկացած պետության եւ ազգի նկատմամբ: Թույլ լինելով՝ կարող ես միայն նվաստացում, հպատակություն եւ շահագործում վաստակել:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅՐԵՆԻԹՆ ՈՒԺԵՂ Է, ԶԱՆԻ ՈՐ ԻՆՁ ՈՒՆԻ:  
ՀՈՆԿՈՆԳՆ ՈՒԺԵՂ Է, ԶԱՆԻ ՈՐ ԻՆՁ ՈՒՆԻ

**Փող, կանայք եւ մշտական փորձություններ**

Չինաստանի ժամանակակից պատմությանը հայացք գցելը դեղատոմս է դեպրեսիայի համար:

1840 թվականին Չինաստանը դեռ հզոր, առասպելականորեն հարուստ երկիր էր: Հարյուր տարի անց ադեոտի ենթարկված ամայի մի տարածք էր՝ բզկտված ու բաժան-բաժան արված գորեղ օտարազգիների կողմից, տուն ու տեղից զրկված ժողովրդով, որի ողբածայն աղաղակը կախված էր օդում: Օտարերկրյա տերությունների զորք ու զորաբանակները ներխուժել էին, ոտնատակ տվել երկիրը, իրենց գեկքերով ու թնդանոթներով Չինաստանին պարտադրել տարածքային զիջումներ եւ փոխհատուցումներ: Չին ժողովուրդը դարձավ ոչխարի հոտ, որին կարելի էր ոտնահարել, երկիրն ինքը՝ մսի մի կտոր, որից ամեն մեկն ազատ էր պատառ պոկել: Չինաստանի ազգային պաշտպանությունը դարձել էր քանդված բարիկաղ, որով ազատ կարող էին ներս թափանցել երկրի տարածքը մասնատել փորձող գիշատիչները:

Ողբերգություն էր, որ հինգ հազար տարվա պատմություն եւ աշխարհի ամենամեծ բնակչությունն ունեցող մի երկիր կարող էր այդպես խորտակվել: Ինքս ինձ հարցրել եմ՝ ի՞նչ դասեր պետք է քաղեր Չինաստանն այդ դարի կանչերից: Գիտնականները վաղուց տվել են իրենց պատասխանն այդ հարցին. այլասերված, անիրազեկ Ցին կառավարությունը փակ էր պահել Չինաստանը, եւ Չինաստանի քաղաքական համակարգը, սպառազինությունն ու նույնիսկ նրա ժողովրդի որակը, ամեն բան էտ էր մնացել արեւմտյան տերությունների մակարդակից:

Մտքովս անցնում է, որ Չինաստանը ոչ միայն հզոր զորք ու զինվորականության կարիքն ուներ, այլ նաեւ իր ժողովրդի միասնականության, ընդհանուր թշնամու հանդեպ ատելության եւ զավթիչների դեմ

## Զժան Յավեն

Կենաց-մահու ճակատամարտում պայքար մղելու վճռականության: Ֆեոդալական կառավարության իշխանության ներքո Չինաստանի ժողովուրդը կորցրել էր քաջությունն ու ուղղամտությունը, փոխարենը խաղաղություն էր հայցում զավթիչներից՝ շողոքորթելով ու քծնելով նրանց: Յին կառավարության օրոք դատարանը հայրենասեր գեներալներ Լին Ցզեսյույի եւ Գուան Տյանպեյի հարգը չիմացավ: Փոխարենը՝ կայսրը դիմեց կապիտոլյացիոնիստներին, ովքեր վաճառում էին իրենց երկրի ինքնիշխանությունը հանուն «խաղաղության»:

Քայլելով Հոնկոնգի փողոցներով, հեռվից տեսնելով Ուելսի արքայազնի հայտնի շենքի «գինու բաժակի» ուրվագիծը, ժողովրդական-ազատագրական բանակի Հոնկոնգի կայազորի շտաբ-գրասենյակները՝ չկարողացա մտքով չթռչել այս ու այնտեղ. պատմություն եւ իրականություն, երեկ եւ այսօր, առկայծելով ու միահյուսվելով, պտտվեցին երեսակայությանս մեջ:

Հուլիսի 1-ին, ժամը 6-ին, Հոնկոնգում տեղակայվելիք ցամաքային, ծովային եւ օդային կայազորները բոլորը միաժամանակ մուտք գործեցին տարածք: Տասը սավերը սավարկեցին Շեկոուի Մավան սավահանգստից՝ վեհորեն ուղեորվելով դեպի Քարագործների կղզին: Վեց ուղղաթիռ քաջաբար առաջ էին սլանում՝ դեպի Շեկ Կոնգի գորանոցներ՝ ճանապարհին անցնելով Շենչժեն գետը: Վերջոյա գորքերը Հոնկոնգ մտան երեք տարբեր կետերից՝ Ման Կամ Տոյի վերահսկիչ կետից, Հուանգանգ սավահանգստից եւ Սա Տաու Կոկի միջով: Նրանք եկան հարյուրավոր ռազմական տրանսպորտային միջոցներով, որոնցից մի քանի տասնյակը գրահապատ էին, տեղակայվելով տասնչորս գորանոցներում՝ Սթենլիում, Նորին գերազանցության Թամար սավահանգստում, Քարագործների կղզում, Գան Քլաբ Հիլում եւ այլն, հինգ առանձին էշելոններով:

Այդ էշելոնների սպաներն ու զինվորները գիտեին, որ Հոնկոնգում իրենց ոտք դնելու պահից յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր գործողություն ներկայացնում է ոչ միայն իրենց՝ որպես անհատների, այլեւ ժողովրդական-ազատագրական բանակը եւ Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը: Ցանկացած պահի նրանք մտածում էին. «Այս առաքելությունը շատ կարեւոր նշանակություն ունի: Կարգապահությունն ավելի կարեւոր է, քան իմ կյանքը: Իմ պատկերն ու վարկն արտա-



ցում են ինչպես իմ երկրի, այնպես էլ իմ բանակի հեղինակությունը»:

Կայազորի՝ Հոնկոնգ մուտք գործելու պահին, այնտեղ անցկացվող «հասարակական կարծիքի հարցումների» արդյունքները ցույց էին տալիս, որ տարածքի բնակիչների երեսուն տոկոսից պակասը, կամ որոշ հարցումներով՝ քսան տոկոսից պակասն էր հավանություն տալիս այդտեղ կայազորի ներկայությանը: Հոնկոնգ մուտք գործելուց հետո մի շարք դեպքեր եղան կայազորում:

Նման մի դեպք տեղի ունեցավ Ուելսի արքայազնի շենքում 1997 թվականի հուլիսի 1-ի առաջին ժամերին, հանձնման արարողության ավարտից անմիջապես հետո: Կեզիշերը Նոր էր անցել, եւ Նորին գերագանցության Չաթեմ Նավը Նոր էր դուրս եկել Նորին գերագանցության Թամար Նավամատույցից՝ խավար գիշերով, անձրեւային եղանակին պերսիանան մեջ ընկնելով: Նավի վրա էին արքայազն Չարլզը եւ Զրայսթ Փաթենը: Բրիտանացի համակիրների մի ամբոխ, որ հավաքվել էր տեսնելու իշխան Չարլզին, մոտեցավ Ուելսի արքայազնի կայազորի դարպասին՝ շրջապատելով այնտեղ պահակ կանգնած երկու զինվորներին՝ Չժան Ցզյանվեյին եւ Չա Հայյանին, ու սկսեց անգլերեն հայիտանքներ տեղալ նրանց հասցեին: Չինվորների դեմքերի առջեւ ծածանելով բրիտանական դրոշմ՝ նրանք մի փոքրիկ քարով խփեցին Չժանի սաղավարտին՝ այսպիսի արտահայտություններ գոչելով՝ «Դու մսագործ ես», «Ձեզ պես լողկալի մարդիկ կստանան այն, ինչին արժանի եք»:

Ոչ ոք չէր սպասում այսպիսի նվաստացումներ Հոնկոնգում առաջին իսկ օրը: Չորքերը պատրաստվել էին վերահսկել իրենց եւ լռել՝ անկախ իրենց նվաստացման աստիճանից: Կրողվումների լույսիսկ մեկ վայրկյանը կարող էր հսկայական բացասական ազդեցություն ունենալ: Երկու զինվորները մնացին անշարժ՝ սադրանքի չենթարկվելով:

Չինական ծագմամբ սինգապուրցի Չեն Դինգրուն, որ հետեւում էր այդ վեճին, այլևս չէր կարող անտարբեր կայել: Նա նետվեց շրջապատողների կողմը եւ անգլերեն բղավեց. «Վերջ տվեք: Չինվորներին հրամայված է պահակ կանգնել, մի՛ նվաստացրեք նրանց: Նրանք արժանի չեն, որ դուք այդպես վարվեք իրենց հետ»:

Բայց ամբոխն ավելի ագրեսիվ դարձավ, սկսեց ավելի թունոտ վիրավորանքներ հասցնել, մինչեւ որ ոստիկանությունն եկավ, որպեսզի վերացնի շրջափակումը:

## Չժան Յավեն

Քանիցս տեղացի կանայք էին վեճի բռնվում կայագորի գինվորների հետ:

Հոնկոնգում ժողովրդական-ազատագրական բանակի կայագորային ռազմաճովային նավերից մեկի օդաչու Վան Յունչենը «Միցուբիշի» ավտոմեքենայով գնում էր իր ծառայողական պարտականությունները կատարելու, երբ նրա ձախ շրջադարձի ազդանշանը շարքից դուրս եկավ: Նա ստիպված կանգ էր առել կայանատեղիում՝ ազդանշանը կարգի բերելու համար, երբ հանկարծ լսեց, որ ծաղկուն հասակի երկու երիտասարդ կին ամոթխած ձայնով իրեն են կանչում. «Հէ՛յ, գինվոր տղա: Եկ այստեղ, նկարների արվում գնիր: Հրաշալի բան է, ամբողջ աշխարհը սիրում է դա»:

Երիտասարդը մի հայացք զգեց նրանց կողմն` ասելով. «Ոչ, շնորհակալություն»:

Ապա գլուխը կախ շարունակեց իր գործը: «Մի հատ գնիր, լա՛վ: Կախարդական գիրք է փրկության մասին»:- Երկու կանայք սկսեցին բացատրել, թե ինչպես «բարեպաշտ մարդը կարող է երկինք բարձրանալ» ու «երկնքում հավերժական կյանքի արժանանալ»:

Երիտասարդը ոտքի կանգնեց եւ ողջունեց երկու աղջիկներին` լուրջ դեմքով ասելով. «Ցավում եմ, բայց ես մեքենաս եմ կարգի բերում: Ես կարելու ծառայողական աշխատանքի եմ: Չէի՞նք կարող հետո հանդիպել»:

Երկու աղջիկները դժկամորեն հեռացան:

Մեկ ուրիշ անգամ հետեւակային գինվոր Լի Կայը հերթապահում էր գիշերային պահակախմբում: Խաղաղ գիշերվա կեսին երկու կին մոտեցան նրան: Երկուսն էլ վտանգավոր լինելու աստիճան գրավիչ էին, բավականին բաց զգեստով: Դիմելով Լիին` նրանք ասացին. «Հէ՛յ, գինվոր տղա, մենք այստեղ ենք քեզ սպասարկելու համար: Եթե ձեռքից ձեռք փող չի անցնում, օրենքի հետ կապված խնդիր չկա»:

Ապա շարունակեցին. «Առաջ այստեղ հերթապահող գուրկխաները սեւ էին ու գարշահոտ: Մենք նրանց հետ չէինք քնի, եթե նույնիսկ կրկնակի գին վճարեին»:

Լին երբեք նմանատիպ ճակատամարտի չէր մասնակցել: Կարմրատակած դեմքով` նա արագ ասաց. «Շնորհակալություն: Մեր կայագորն այդպիսի ծառայության կարիքը չունի: Խնդրում եմ անմիջապես հեռացե՛ք»:

Երկու կանայք հմայիչ ժպտացին՝ նորից ու նորից Լիին խոստովանելով, թե որքան պաշտելի է իրենց համար «զինվոր տղայի» մարմինը, որքան գնահատելի է նրա քաջարի տեսքը, որքան ցանկալի է նրա հետ ընկերանալը, չմոռանալով ակնարկել, որ իրենց ծառայության համար վճար չեն ուզի: Դեմքի լուրջ արտահայտությամբ՝ Լին խստորեն պահանջեց հեռանալ: Կանայք քմծիծաղելով հեռացան՝ իրենց ետելից օձանելիքի բույր թողնելով:

Այդ նույն օրը երկու զինծառայող, Հու եւ Գառ ազգանուններով, ժամապահ էին կանգնած իրենց զորանոցների մոտ, երբ կարմիր մի մեքենա մոտեցավ: Մեքենայից դուրս եկան նորածեւ հագուստով երկու երիտասարդ կին: Նրանցից մեկի պարանոցից փոքրիկ տեսախցիկ էր կախված:

«Հե՛յ, զինվոր տղերք», - ասացին կանայք՝ ժպտալով եւ մոտենալով ժամապահներին:

Ժամապահներն իսկույն ուղղեցին նրանց. «Կներեք, բայց մենք ժողովրդական-ազատագրական բանակի ներկայացուցիչ ենք, այստեղ «զինվոր տղերք» չկան: Խնդրում ենք ասել ով եք դուք»:

«Դե մի՞թե «զինվոր տղան» մի փոքր ավելի բարեկամաբար չի ասված: Ինչո՞ւ այդքան լրջացնել,- ասացին կանայք՝ ավելի ամաչկոտ, խորամանկ ու սադրիչ տոնով:- Պարոն զինվոր տղան, որ այստեղ ստիպված է պահակ կանգնել, պետք է որ շատ մենակ լինի: Նայեք, թե որքան գեղեցիկ տեսք ունի Հոնկոնգի կղզին: Եկեք միասին ափ իջնենք զբոսնելու»: Ամեն մեկը բռնեց զինվորներից մեկի թելից՝ քաշելով դեպի իրեն:

Ժամապահներն անմիջապես խիստ տոնով ասացին. «Ներողություն, բայց մենք հերթապահում ենք: Խնդրում ենք մի՛ խանգարեք մեզ»:

«Այդքան լո՛ւրջ: Եվ ինչի՞ համար: Դե, ուրեմն, եկեք զբոսնենք զորանոցների շուրջը, հը՞»: Այս ասելով՝ կանայք ժամապահներին սկսեցին քաշել զորանոցների բակի կողմը:

Ժամապահները խստորեն ասացին. «Խնդրում ենք մի փոքր հարգանք ցուցաբերել: Մենք չենք կարող բավարարել ձեր պահանջները: Կխնդրեինք՝ երկուսդ էլ անմիջապես հեռանաք»:

Տեսնելով, թե որքան վճռական են իրենց հեռակետերը չլքող զինվորները, երկու կանայք ստիպված էին հուսախաբված հեռանալ: Եր-

## Չժան Յավեն

կուսն էլ հոնկոնգյան լրատվամիջոցների ներկայացուցիչ լրագրողներ էին, որ հատուկ եկել էին, որպեսզի զորանոցներ մտնեին: Հոնկոնգում դրան ասում էին «օձերն ազատ արձակել»: Նրանք սենսացիա էին փնտրում:

Ռազմաձուլային զորանոցի մի նավաստի՝ Սյոյ ազգանունով, որ բավականին համակրելի տեսք ուներ, լուսանկարվել էր, եւ այդ լուսանկարը տպագրվել էր հոնկոնգյան թերթերից մեկում:

Արեւը մայր էր մտնում: Սյոյն իր զորանոցների դիմաց կանգնած հերթապահում էր այդ երեկո, երբ մի գեղեցիկ երիտասարդ կին մոտեցավ, հանեց թաշկինակը եւ սկսեց նրա քրտինքը մաքրել:

Սյոյն իսկույն դիտողություն արեց նրան. «Շնորհակալություն: Չի կարելի դա անել»:

Երիտասարդ կինն աշխույժ պատասխանեց՝ խոսելով մանդարինի բարբառով, հոնկոնգյան հնչերանգով. «Պարոն զինվոր տղա, չեք պատկերացում, թե ձեզ գտնելն ինչքան դժվար էր»:

Նա ասաց, որ Սյոյի նկարը տեսել էր թերթում եւ առաջին իսկ հայացքից սիրահարվել էր: Ասաց, որ ծնողները գիտեն իր զգացմունքների մասին եւ դեմ չեն, որ սիրահարվել է այդ գեղեցկատես զինվորին: Այսպես խոսելով՝ նա իր շքեղ պայուսակից տասը հազար հոնկոնգյան դոլար հանեց: Այդ փողը դրեց Սյոյի ձեռքի մեջ՝ ասելով. «Տասը հազար դոլար է, պետք է վերցնեք դա»:

«Չեմ կարող: Բացարձակապես չեմ կարող»:

«Լուրջ եմ ասում: Չեմ կատակում»:

Սյոյն անդրդվելի էր. «Երբ ասում եմ՝ չեմ կարող, հենց դա՛ նկատի ունեմ: Նախ՝ զինվորական կանոնակարգում ասվում է, որ կայազորի զինվորները չեն կարող կապեր հաստատել ու հարաբերություններ ունենալ: Իսկ Հոնկոնգում: Խոսք անգամ լինել չի կարող: Երկրորդ՝ զինվորական կանոնակարգում ասվում է, որ...»:

Երիտասարդ կինն ընդհատեց. «Ի՞նչ կա բոլոր կանոնակարգերով: Մտածում ես, որ տգե՞ղ եմ»:

«Ոչ, ոչ . . . բայց ես պարզապես չեմ կարող»:

«Իսկապե՞ս չեք կարող: Նույնիսկ որպես սովորական ընկերներ...»:

«Բացարձակապես ո՛չ: Խնդրում եմ անմիջապես հեռանալ»:- Սյոյի պատասխանը կտրական էր:

Երիտասարդ կինը վրդովված ու վիրավորված հեռացավ:

Հոսկոնգյան կայազորում տեղակայված զինվորներն ընտրվում էին ժողովրդական-ազատագրական բանակի ամբողջ կազմից: Բոլորն էլ բարձրահասակ էին ու գեղեցկատես: Չինվորական համազգեստով՝ առավել առնական տեսք ունեին, եւ աղջիկները, բնականաբար, հետաքրքրվում էին նրանցով: Բայց Հոսկոնգը մի հասարակություն էր, որը ղեկավարվում էր օրենքով, եւ մարդիկ իրենց պատվի մասին հոգ էին տանում, ինչպես թռչունն է հոգում իր փետուրների մասին: Եվ Հոսկոնգը, առավել եւս, մի վայր էր, որտեղ մարդիկ իրատեսորեն էին վերաբերվում փողին: Ի՞նչն էին այդ աղջիկներն իրականում սիրում զինվորների մոտ: Ի վերջո, նրանք պարզապես զինվորներ էին՝ առանց հատուկ էլիտար իշխանության կամ մասնագիտության: Տեղակայման ավարտից հետո նրանք նույնիսկ չէին մնալու Հոսկոնգում: Եվ այդուհանդերձ, այդ աղջիկները պատրաստ էին առանց քաշվելու իրենց սրտերն առաջարկել հենց միայն այն պատճառով, որ «պարոն զինվոր տղան» գեղեցիկ տե՞սք ուներ: Ի՞նչ դրդապատճառներ էին նրանք թաքցնում իրենց սրտի խորքում, որ կարողանում էին այդպես բացեիբաց ու հետեւողական, այդպես անամոթ կերպով հետապնդել զինվորներին: Չես կարող չմտածել էրոտիկ լրտեսական սիրավեպի մասին...

Ինձ հետաքրքրում էր, թե ինչ էին մտածում այդ քաղցրախոս կանայք զինվորների մասին եւ ինչ էին սպասում նրանցից՝ «գրոհից» հետո: Դա գեղեցիկ սիրո պատմությունն էր, թե՛ սարսափելի ծուղակ: Ամեն կնոջ ետեւում կա՞ր, արդյոք, թելերը քաշող ինչ-որ մեկը: Եվ եթե կային այդպիսիք, ովքե՞ր էին դրանք: Ես չեմ կարողացել գտնել պատասխանը, բայց շարունակում եմ անհանգստանալ երիտասարդ զինվորների համար:

Գիշերները կայազորի տրանսպորտային միջոցների սպասարկման կորպուսում գտնվող կանայք հաճախ հեռախոսազանգեր էին ստանում նախապես ձայնագրված քարոզչական հաղորդագրություններով, նաեւ սպառնալիքներ: Չանգեր էին ստանում նաեւ անձանցից, ովքեր ձեւացնում էին, թե իբր բարձրաստիճան պաշտոնյաներ են:

Կայազորի զինվորները հաճախ տեսնում էին պատերին գրված «Խանգարենք Չինաստանին քայքայել Հոսկոնգը» կարգախոսը:

Մայիսի 1-ին, Աշխատանքի օրվա տոնին, երբ ժողովրդական-ազա-

## Չժան Յավեն

տագրական բանակի բոլոր զորանոցները Հոնկոնգում բացօթյա միջոցառումներ էին անցկացնում, չորս անտոմս տղամարդ մուտք գործեցին զորանոցներ, միայն թե նրանց քաղաքավարի կերպով արգելք հանդիսացավ Վան Լուն՝ տրանսպորտային միջոցների սպասարկման կորպուսի ղեկավարը: Տղամարդկանցից մեկը հազար հոնկոնգյան դոլար հանեց եւ առաջարկեց նրան: Տեսելով, որ Վան Լուն նրբանկատորեն հրաժարվում է, նա եւս հազար դոլար հանեց, բայց կրկին մերժում ստացավ: Միայն այդ ժամանակ տղամարդիկ հանեցին իրենց տոմսերը՝ ժպտալով, ասելով. «Մենք բոլորս լրագրողներ ենք Հոնկոնգում...»:

Մեկ ուրիշ անգամ սերժանտ Վան Յունֆենը մեքենայով Հոնկոնգ էր գնում ծառայողական գործերով, երբ նրբաճաշակ հագնված մի տղամարդ մոտեցավ նրան՝ խոսակցություն սկսելու համար: Տղամարդը հայտնեց, որ աշխատում է Հոնկոնգի ամսագրերից մեկում եւ ամսագրի սյունակի համար չինական ռազմական հետախուզության մասին հրապարակում է պատրաստում: Նա սերժանտ Վանին ասաց, որ կարող է աշխատել որպես «հատուկ թղթակից» ամսական երեք հազար հոնկոնգյան դոլարով: Սերժանտ Վանն անմիջապես մերժեց նրան՝ ասելով. «Խնդրում եմ ազատվեք այդ պատրանքից: Միայն ես չեմ, որ չեմ պատասխանի ձեզ. հոնկոնգյան կայազորի զինվորներից ոչ մեկը չի պատասխանի: Ձեզ պատասխանելը «Կայազորի մասին օրենքի» խախտում կլիներ»: Այս պատմությունը հիշեցնում է «Ժամապահը նեոնային լույսերի տակ» հին շարժանկարը: Ֆիլմում սերժանտ Չեն Սիի՝ զգոնություն չցուցաբերելը Հին Շանհայի շողողացող նեոնային լույսերի ներքո՝ պատճառ դարձավ, որ նա իրեն կորցնի կին լրտեսի նրբագեղ, դյուբիշ խոսքերից եւ բաժանվի Չեն Նիից՝ իր պարզ ու անմեղ սիրեցյալից: Իրավիճակը, որին առնչվում էր Ժողովրդական-ազատագրական բանակի կայազորը Հոնկոնգում, շատ ընդհանրություններ ուներ անցած տարվա Շանհայի իրավիճակի հետ, թեեւ կարելի է տարբերություններ կային: Հին Շանհայում մի վարչակարգը փորձում էր տապալել մեկ այլ վարչակարգի, եւ մեկ դասակարգը փորձում էր տապալել մեկ այլ դասակարգի: Հոնկոնգը բոլորովին այլ էր:

Ժողովրդական-ազատագրական բանակի կայազորը Հոնկոնգում էր որպես «ազգային ինքնիշխանության խորհրդանիշ»: Կայազորի հակադրվող հասարակությունը ազատագրման կարիք չուներ. ավելի

շուտ դա հասուն կապիտալիստական համակարգի օրենքով կառավարվող հասարակություն էր: Կայագորի ծանր խնդիրն ու առաքելությունն էր՝ պահպանել «Մեկ երկիր, երկու համակարգ» եւ «Հոնկոնգի ժողովուրդը ղեկավարում է Հոնկոնգը» սկզբունքը, ապահովել եւ ամրապնդել Հոնկոնգի բարեկեցությունն ու կայունությունը, ինչպես նաեւ պահպանել տարածքի օրենքն ու անվտանգությունը: Ի տարբերություն հին Շանհայի լրտեսների, կայագորի առաքելությունը չէր՝ հին աշխարհը ջախջախելն ու մասերի բաժանելը եւ նրա տեղում նորը կառուցելը: Դրա համար կայագորը, ի թիվս շատ այլ շերտերի, պետք է ծանոթանար եւ վարժվեր հոնկոնգյան օրենքի գերակայությանը, նրա մշակույթին եւ սովորույթներին, ինչպես նաեւ նրա բարոյական վարքականոսին: Անկախ նրանից, թե ինչ իրավիճակ էր, կայագորը չէր կարող հակասության մեջ ներքաշվել Հոնկոնգի բնակիչների հետ: Իր հանդեպ եղած քննադատական վերաբերմունքին չէր կարող նույն կերպ պատասխանել: Կարող էր միայն հանգիստ, խիստ մերժման վերաբերմունք որդեգրել: Իմ հարցազրույցների ժամանակ ես իմացա, որ Հոնկոնգում կայագորի տասնհինգ տարվա ընթացքում նրա զինվորներից ոչ մեկը չէր տրվել կանաչի հմայքների գայթակղություններին, եւ նրա հերոսական կին զինվորներից ոչ մեկը չէր ծնրադրել փողի զոհասեղանի առջեւ:

## **Գետափին կանգնած՝ առանց կոշիկները ցեխոտելու**

Հոնկոնգի հատուկ իրավիճակի պատճառով այնտեղ գտնվող կայագորը մեկուսացված էր քաղաքից: Նույնիսկ տոն օրերին տղամարդկանց չէին թույլատրում քաղաք դուրս գալ: Կայագորի որոշ կանայք ի վիճակի չէին ապրել այդ «գերության» մեջ եւ խորապես ընկճվում էին: Չնայած դրան, հոնկոնգյան լրատվամիջոցները դեռ կարողանում էին նյութեր հորինել կայագորի վերաբերյալ իրենց հրապարակումների համար:

Մի անգամ արտասահմանյան եւ հոնկոնգյան լրատվամիջոցները

## Զժան Յավեն

սենսացիոն մի լուր հրապարակեցին այն մասին, որ Հոնկոնգում գտնվող Ժողովրդական-ազատագրական բանակի կայազորը զբաղվել է ապօրինի մաքսանենկությամբ: Լուրը հրդեհի փոթորիկ առաջացրեց Հոնկոնգի հասարակության շրջանում:

Կայազորի տնտեսական ընկերության անձնակազմի աշխատակիցներն ու սպաները սաստիկ զայրացած էին. նրանք կարծում էին, որ դա վիրավորանք է կայազորի համար: Հոնկոնգի անմաքս քաղաքականությունն ուղեկցվում էր ապրանքները տարածք ներմուծելու և արտահանելու վերաբերյալ խիստ օրենքներով և կանոնակարգերով: Այդ օրենքների և կանոնների կատարումը խստագույնս ապահովելու համար կայազորը կառուցեց հատուկ «անվտանգության անցակետեր» ինչպես Հոնկոնգում, այնպես էլ Շենչժենում, մշակեց անվտանգության ստուգումների էլ ավելի խիստ համակարգ, քան Չինաստանում, ինչը նախատեսված էր Չինաստանի պետական մաքսային օրենսդրությամբ, և տեղադրեց անվտանգության ապահովման ժամանակակից սարքավորումներ: Ամեն օր տնտեսական անձնակազմի աշխատակիցներն ու սպաները երթեւեկում էին Հոնկոնգ-Շենչժեն ճանապարհով, ինչը «Մեկ երկիր, երկու համակարգ»-ի ակնառու մարմնավորումն էր: Աստճո ամեն օր նրանց հոգին ենթակա էր երեւակայելի ամեն տեսակի փորձության և գայթակղության:

Հոնկոնգի և մայրցամաքի միջեւ գների տարբերությունը մեծ էր: Պերճանքի որոշ առարկաների կամ բարձրակարգ ապրանքատեսակների համար տարբերությունը կարող էր սկսվել մի քանի հարյուր յուանից և հասնել մինչեւ հազար կամ մի քանի տասնյակ հազար յուանի: Նույնիսկ մի փոքր նախածեռնություն ունեցող զինվորը կարող էր գրպանները լցնել: Բայց նրանց սպասվում էր դաժան օրինական պատիժ:

Տնտեսական ընկերության անձնակազմի քաղաքական հրահանգիչներից մեկը՝ Ցզյան Ցինցի անունով, մի անգամ գնաց Շենչժենի համակարգչային շուկա՝ համակարգիչներ գնելու: Այնտեղի խանութի տերերից մեկը, երբ իմացավ, որ Ցզյանը աշխատում է կայազորում, առանձնահատուկ բարեկամական վերաբերմունք սկսեց ցուցաբերել նրա հանդեպ՝ հրավիրելով նստելու, ծխելու և թեյ խմելու: Նա Ցզանին ասաց, որ եթե կարողանա հազար միավոր օպերատիվ հիշողության



սարքավորում բերել Հոսկոնգից, որոնցից յուրաքանչյուրն արժեր մոտ քսան յուան, ապա ինքը նրան անվճար նոսրաբուր Կտա: Տգյանը դիվանագիտորեն մերժեց՝ ասելով. «Ցավում եմ, բայց չեմ կարող այդ հարցում ձեզ օգնել»:

Խանութի սեփականատերը մտածեց, որ Տգյանը նկատի ունի, թե ինքը բավականին գումար չի առաջարկում, այդ պատճառով մի կապոց հոսկոնգյան դուլար հանեց՝ Տգյանին առաջարկելու համար: Նա այդ փողն անվանեց կանխավճար՝ ասելով. «Օպերատիվ հիշողության սարքավորումներն իսկապես փոքր են, պարզապես մեքենայի մեջ ինչոր տեղ խցկեք, եւ ոչ ոք չի գտնի: Երբ ետ գաք, կստանաք քսանհինգ հազար յուանը՝ մինչեւ վերջին սենթը»:

Տգյանի դեմքը սառեց, եւ նա ասաց առանց քաղաքավարության նշույլի. «Եթե ամեն ինչ արվեր այնպես, ինչպես դուք եք կարծում, աշխարհը վաղուց դժոխք գնացած կլիներ»: Նա ոտքի կանգնեց եւ դուրս եկավ՝ թողնելով խանութի ապշահար տիրոջն այնտեղ նստած: Երկար ժամանակ անց միայն վերջինս կարողացավ արտաբերել «միամիտ ապուշ» բառերը:

Տնտեսական ընկերության անձնակազմի զինվորներից շատերն էին հայտնվում այսպիսի իրավիճակում:

Տնտեսական ընկերության անձնակազմի քաղաքական հրահանգիչ Լու Հայցյունին փնտրում էր հայրենի քաղաքի իր ընկերներից մեկը: Վերջինս նրան կամացույց ասաց. «Հէ՛յ, համաքաղաքացի ընկեր, ի՞նչ կասես միասին գործարքով զբաղվելու մասին: Օգնիր ինձ մի քանի կենտրոնական մշակիչ հանգույց (պրոցեսոր) ուղարկել Հոսկոնգից Շենչժեն, եւ ես քեզ վարձահատույց կլինեմ: Յուրաքանչյուր ուղեւորության ժամանակ հազար պրոցեսոր: Դրանք այնքան փոքր են, որ նույնիսկ ամբողջ մի արկղ չեն կարող լցնել: Ոչ ոք չի գտնի»:

Լուն խստորեն պատասխանեց. «Զինվորական տրանսպորտային միջոցները նախատեսված են միայն ռազմական գործի համար: Մյուս անգամ այդպիսի հիմար բան չասես: Մեր՝ նույն քաղաքից լինելը ոչինչ չի նշանակում: Ես քեզ նմանին ընկեր չեմ լինի երբեք: Խնդրում եմ անմիջապես հեռացիր»:

Մի անգամ ընկերության անձնակազմի հրամանատարի տեղակալ Ու Շենպինը Շենչժենի շուկաներից կահույքի խմբաքանակ էր տեղա-

## Չժան Յավեն

փոխում Հոնկոնգ: Երբ բեռնատարն արդեն բարձել էր, շուկայի տերը հանգիստ կայեց մեքենայի ետեւի մեկուսախցին, ապա կամացուկ ասաց Ուին. «Ես մի ընկեր ունեմ Հոնկոնգում: Կարո՞ղ եմ որոշ ժամանակով վերցնել ձեր բեռնատարը, որպեսզի ընկուզենու փայտից կահույքի մի քանի կտոր ուղարկեմ նրան»: Այս ասելով՝ նա մի հաստ ծրար հանեց և ուզում էր սահեցնել Ուի գրպանը:

Ուն կտրուկ ընդհատեց նրան. «Ե՛տ տարեք ձեր ծրարը: Եթե նույնիսկ ինձ ոսկու լեռ տաք, ես ձեր կահույքը չեմ տանի»:

Կայազորի գործերի զինվորները գիտեին, որ այդպես վարվելը մայրցամաքային Չինաստանում սովորական մի բան կդիտվեր: Բայց Հոնկոնգում դա համարվում էր կաշառակերություն և Ենթակա էր իրավական պատժամիջոցների: Սեփական ապագայի խորտակումը ոչինչ էր համարվում կայազորի հեղինակության վրա սովոր գոող բժի կողքին:

Տասնհինգ տարվա ընթացքում Հոնկոնգի և Շենչժենի միջև բեռների փոխադրությամբ զբաղվող տնտեսական ընկերության անձնակազմի տասնյակ հազարավոր ուղեորությունների ժամանակ ոչ մի արտառոց դեպք տեղի չի ունեցել, ոչ էլ որեւէ դեպք է եղել, որի համար պահանջվեին իրավական կարգապահական գործողություններ:

Եղել են նաեւ մի շարք դեպքեր, երբ կայազորի գործերը գույքն են վերադարձրել օրինական տիրոջը:

Յան Յուն անունով կին զինծառայողներից մեկը մի անգամ վերցրեց գետնին ընկած կանացի LV մոդայիկ մի դրամապանակ: Դրամապանակում կային երեք բանկային քարտ, կանխիկ հազար յուան և հինգ հազար հոնկոնգյան դոլար: Նա կանգնեց այնտեղ, որտեղից վերցրել էր դրամապանակը, սպասելով, մինչև դրա խիստ վախեցած տերը վազքով ետ եկավ: Յանը վերադարձրեց դրամապանակը, որից հետո դրամապանակի տերը կանխիկ երկու հազար հոնկոնգյան դոլար հանեց՝ մտադիր լինելով տալ Յանին՝ ի նշան շնորհակալության: Յանը հրաժարվեց վերցնել: Կինը հարցրեց նրա անունը, իսկ Յանը պատասխանեց. «Ես Ժողովրդական-ազատագրական բանակի անդամ եմ»:

2011 թվականին կայազորի հատուկ քննչական ընկերության ղեկավար Շեն Յոյանցյանը որոշ ժամանակով արձակուրդ վերցրեց: Շենչժենի օդանավակայանի զուգարանում նա կաշվե մի պայուսակ գտավ,

որի մեջ կանխիկ քառասուն հազար յուան կար: Նա պայուսակն անմիջապես հանձնեց օդանավակայանի ղեկավարությանը: Պայուսակի տերը կայազորի հասցեով մի նամակ գրեց, որը կարդաց հրամանատարը: Երբ հրամանատարը Շենին հարցրեց դեպքի մասին, վերջինս հումորով պատասխանեց. «Գիտե՞ք ով ենք մենք: Մենք հոնկոնգյան կայազորն ենք: Ինչպե՞ս կարող ենք մեզ վաճառել սոսկ փողի համար»:

Կայազորի գրեթե յուրաքանչյուր անդամ ամեն պահի բախվում էր այսպիսի իրավիճակի հետ: Ընկերներն ու ընտանիքի անդամները նրանց նամակներ էին գրում՝ խնդրելով գնել բջջային հեռախոսներ, համակարգիչներ կամ թվային ժամացույցներ: Կայազորի տղամարդիկ եւ կանայք բոլորին մերժում էին:

Մայրցամաքում բնակվող մարդիկ պարզապես չէին հասկանում Հոնկոնգը, էլ ավելի քիչ էին հասկանում կայազորի իրավիճակը, որ տարբերվում էր մայրցամաքային իրավիճակից: Նրանք ստանձնել էին դժվարին, սրբազան մի առաքելություն, որ թույլ չէր տալիս դուրս-ինչ անգույշ կամ անփույթ լինել: Ամենափոքրիկ միջադեպն անգամ կարող էր քաղաքական սաստիկ վեճեր հարուցել:

Հոնկոնգի յոթ միլիոն բնակիչների աչքերը բոլորն էլ սեւեռված էին կայազորի վրա: Արտասահմանցի ցանկացած լրագրող իր «հրետանու» թիրախն էր դարձնում կայազորի տասնչորս զորանոցները՝ զանգվածային հեռակառավարվող ոսպնյակներով զօր ու գիշեր դիտելով, որպեսզի «նորություն» հիշեցնող որեւէ բան գտնի: Հոնկոնգում լրատվամիջոցները նույնիսկ ավելի շատ էին շահագրգռված «հետաքննություն» անցկացնել, քան ոստիկանությունը: Ամեն անգամ կայազորի ուժերի պարբերական հերթափոխի ժամանակ մի քանի հազար զինվորի տեղափոխություն կարելի էր տեսնել: Մի գիշեր, կեսգիշերից անմիջապես հետո, փոխադրումներից մեկի ժամանակ, մեկ տասնյակից ավելի ռազմական մեքենաներ Հոնկոնգի երրորդ երթուղով անցնում էին Տայ Լամ թունելի վճարովի ճանապարհով: Այդ ժամանակ լրագրողներից մեկը լսեց, թե ինչպես է տարանցիկ ոստիկանության անդամներից մեկը մի քանի բառ փոխանակում զորքերի հրամանատարի հետ.

«Այստեղ վերջացրի՞նք (վճարելը)»:

«Դեռ չորս հարյուր քառասուն էլ պիտի տաք թունելն անցնելու համար»:

## Զժան Յավեն

Հաջորդ օրը Հոնկոնգյան լրագրերից մեկում մի հրապարակում հայտնվեց՝ «Ժողովրդական-ազատագրական բանակի կայազորի փոխադրման բեռնատարը՝ գրավ դրված Տայ Լամ թունելում» վերնագրով: Կայազորի հրամանատարը բազմիցս բացատրեց լրատվամիջոցներին, որ կայազորը թունելի իր վարձերը վճարում է կտրոնների միջոցով, իսկ Տամ Լամ թունելը ղեկավարող ընկերությունը մի քանի անգամ շեշտեց, որ կայազորը երբեք չի ուշացնում վճարները, բայց դա անօգուտ էր. լրատվամիջոցները հետքի վրա էին ընկել եւ ապացույցներ էին փնտրում կայազորի ու ընկերության հետ կապված: Միայն երբ կառավարող ընկերությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ ասելով. «Ժողովրդական-ազատագրական բանակի ավտոշարասյունները վճարել են թունելի օգտագործման բոլոր կտրոնները», լրատվամիջոցները դադարեցին քննարկել այդ թեման:

Մեկ ուրիշ անգամ երկու լրագրող Շեկ Կոնգի գորակոնցների մոտ որոշեցին բարձրանալ ավտոբուսի վրա: Օգտագործելով բարձրորակ ֆոտոխցիկ՝ նրանք կարողացան նկարահանել ամբողջ գորակոնցը: Նկարներից մեկը շատ լավ էր ստացվել. լուսամուտից դուրս կանոնավոր շարված՝ մաշված կամ ծոմոված ճտքավոր կոշիկների զույգերը, արեւի տակ չորացվող ձկների նման, վկայում էին իրենց գործին զինվորների նվիրվածության մասին: Հաջորդ օրը լուսանկարները սփռվեցին թերթերով մեկ՝ այսպիսի վերնագրով. «Կայազորի ժամապահների համար պետք է որ շոգ լինի, բայց տեսեք նրանց հագած մաշված կոշիկները»:

Սա օրինակ է այն բանի, թե իրերի տեսքը որքան տարբեր կարող է ընկալվել՝ կախված աշխարհայացքից:

Մայրցամաքային Չինաստանում կոշիկների այդ տեսքն ամենեւին վրդովմունք չէր առաջացնի: Դրանք պարզապես կոհիտվեին որպես մեր զորքերի պարզ, աշխատանքին նվիրված կյանքի նշան եւ կրկնվեին որպես գործին լրջորեն պատրաստ լինելու ապացույց: Բայց Հոնկոնգի բնակիչների աչքերում դա դիտվեց որպես «փնթի», «անշնորհք», «տգեղ» երեւոյթ:

Հոնկոնգում ամեն ինչ, անկախ չափից կամ նշանակությունից, արվում էր ըստ օրենքի:

Կայազորի արած ամեն ինչի համար,- կործանիչ ինքնաթիռների

թռիչքի, նավահանգստից մեկնող նավերի, մարտական փամփուշտներ կրակելու, ռազմական երգեր երգելու, ամենօրյա աշխատանքի եւ հանգստի, զորքի շարք կանգնելու, կարգախոսներ բացականչելու, մաքսատնով մի քանի ծխախոտատուփ բերելու համար,- մանրամասն օրենքներ եւ կանոնակարգեր կային, որոնցից յուրաքանչյուրը պետք է հարգված լիներ բոլոր ժամանակներում, որպեսզի երբեք չհատվեին օրինական կարմիր գծերը: Օրենքը խախտող ոչ ոք, մասնավոր անձ լինելը թե գեներալ, չէր կարող խուսափել իրավական հետեւանքներից:

Հոնկոնգն այնքան օրենք ուներ, որքան կովը մազ ունի: Կայազորի զինվորները ստիպված էին ոչ միայն լավ հիշել կայազորի օրենքները եւ ծանոթանալ Հիմնական օրենքին, այլ նաեւ պետք է հասկանային բոլոր այն տարբեր օրենքները, որոնց կարող էին առնչվել: Կայազորը ստեղծեց իր իրավաբանական գրասենյակը, մասնավորապես՝ զորքերի եւ սպաների շրջանում իրավագիտակցության բարձրացմանը նպաստելու համար:

Կայազորի ռազմաճովային ստորաբաժանման վարորդ Սյույ Հույը մի օր իր պաշտոնական պարտականություններն էր կատարում, երբ բարձր արագությամբ սլացող մի տաքսի փորձեց կարգը խախտելով անցնել նրա մոտով: Աղմուկ-ճռնչոցով տաքսին առջեւի մասով հարվածեց Սյույի մեքենայի ետնամասին: Սյույը դուրս ցատկեց՝ ստուգելու, թե արդյոք իր մեքենան չի՞ վնասվել: Տաքսու վարորդը վազելով մոտեցավ նրան եւ սկսեց գոռոռալ. «Էս ի՞նչ գրողուցավ է պատահել ժողովրդական-ազատագրական բանակի ներկայացուցիչներիդ: Ինչո՞ւ ես էդքան դանդաղ քշում: Քշել չգիտե՞ս, ի՞նչ է»:

Սյույը հանգիստ պատասխանեց. «Խնդրում եմ փաստերով խոսեք: Դո՛ւք էիք, որ չարգելակեցիք եւ հարվածեցիք իմ մեքենային: Գուցե պետք է ստուգե՞ք՝ ձեր արգելակներն աշխատո՞ւմ են արդյոք: Տրանսպորտի մասին Հոնկոնգի օրենքը սահմանում է, որ արգելակները չգործող ավտոմեքենային չի թույլատրվում երթելու: Վստահ եմ՝ հասկանում եք»:

Հանկարծ Սյույն ալկոհոլի ուժեղ հոտ զգաց եւ խստորեն ասաց. «Հոնկոնգի «Ճանապարհային եւ տրանսպորտի կառավարման կանոնակարգի» համաձայն՝ ոգելից խմիչք օգտագործելուց հետո ավտոմեքենա վարելն անօրինական է: Այդպիսի խախտումը պատժվում է տա-

## Չժան Յավեն

սը հազար հոնկոնգյան դոլար տուգանքով եւ վեց ամիս բանտարկութեամբ»:

Տաքսու վարորդն իսկույն հանդարտվեց եւ ժպտաց՝ Սյույի առջեւ խոնարհվելով, ապա շողոթորթելով խնդրեց նրան. «Կներեք, այդ ես խախտում արեցի: Ներեցեք ինձ, խնդրում եմ»: Նա արագ հանեց յոթ հարյուր հոնկոնգյան դոլար եւ փորձեց խցկել Սյույի ձեռքի մեջ»:

«Ե՛տ վերցրեք ձեր փողը, խնդրում եմ: Ես կարող եմ ներել իմ հանդեպ ձեր վատ վերաբերմունքը, բայց օրէնքը չի կարող ներել, որ մեքենա եք վարել ոգելից խմիչք օգտագործած վիճակում»: Սյույը հանեց հեռախոսն ու զանգեց ոստիկանություն:

Հոնկոնգցիներին օգնելու համար, որպէսզի նրանք ծանոթանան կայազորին, եւ վերանա կայազորի ու բնակչության միջեւ եղած հեռավորությունը, կայազորն իր գորանոցում կանոնավոր կերպով բաց դռների օրեր էր անցկացնում:

Բաց դռների օրերին բոլորը Հոնկոնգում հրավիրվում էին անվճար այցելելու գորանոց եւ տեսնելու, թե ինչպէս են ժողովրդական-ազատագրական բանակի զորքերն ուսումնական վարժություններ կատարում, մարզվում ու սովորում գէնք գործածել: Յուրաքանչյուր բաց դռների օր յուրաքանչյուր գորանոց պատասխանատու էր սննդի առկայության համար: Երիտասարդ տղամարդկանց խումբը, որին հանձնարարված էր կերակուր պատրաստել, ամբողջ գիշեր աշխատում էր՝ դիտորդների համար պատրաստելով խմորագնդիկներ, տանյուան (չինական անուշեղեն), ռուլետներ եւ տապակած մսով կարկանդակներ, իսկ հաջորդ օրը կեսօրին հյուրասիրում Հոնկոնգի բնակիչներին:

Բաց դռների օրը ժամանեց կայազորի օդային թեւի քաղաքական կոմիսար, գնդապետ Յոյաո Չունլայը: Նա Շեկ Կոնգի գորանոցների ամենաբարձրաստիճան սպան էր: Տեսնելով անվասայլակին նստած մի ծերունու, որին ոչ ոք չէր հետեւում, նա մոտեցավ եւ մեղմ ձայնով անգլերէն հարցրեց. «Պարո՛ն, օգնության կարիքը ունե՞ք»: Այս ասելով՝ նա զգուշորէն հրեց անվասայլակը:

Երբ ծերունին լսեց, որ Յոյաոն կարող է անգլերէն խոսել, ուրախացած պատասխանեց. «Օ՛, թոռս հերթ է կանգնել, որպէսզի յուսանկարվի զինվորների հետ: Մի քիչ հետո կվերադառնա: Տեսնում եմ, որ բարձր դիրք ունեք ժողովրդական-ազատագրական բանակում եւ կա-

րող եք անգլերեն խոսել: Դա բացառիկ բան է: Դուք պատիվ եք բերում ժողովրդական-ազատագրական բանակին»: Այսպես խոսելով՝ ծերունին սկսեց շարժվել դեպի մոտերքում կանգնած լրագրողը, որի պարանոցից լուսանկարչական սարք էր կախված: «Հե՛յ: Կարո՞ղ եմ մի բան խնդրել»:

Լրագրողն արագ մոտեցավ, եւ ծերունին հանդիսավոր ձայնով ասաց նրան. «Իմ ազգանունը Լյուն է, յոթանասունվեց տարեկան եմ: Կուզե՞ի օգնե՞իք ինձ մի երկու նախադասություն թերթում տպագրել՝ նշելով, որ պարոն Լյունն ասաց դրանք: Հողվածը գրե՞իս կխնդրե՞ի դրական արտահայտվել ժողովրդական-ազատագրական բանակի մասին: Ինչպիսին է մայրցամաքը՝ իմ հոգն էլ չէ: Ես դրա վրա որեւէ վերահսկողություն չունեմ: Բայց Հոնկոնգում ժողովրդական-ազատագրական բանակի կայազորն ընտիր է: Նայեք այս գիւժկականին այստեղ. երկու շերտագիծ եւ երեք աստղ: Գիտե՞ք ինչ աստիճան է: Նա գնդապետ է: Բրիտանական գնդապետը ոչ միայն չէր հրի հաշմանդամ ծերունու անվասայլակը, այլ անգամ մի հայացք չէր գցի ինձ վրա: Եթե լրագրողներդ ժողովրդական-ազատագրական բանակի մասին շարունակեք վատ խոսել, ապա պարզապես անբարեխիղճ եք՝ առանց պատճառի»:

Հաջորդ օրն, իսկապես, ծերունու խոսքերը հայտնվեցին թերթում:

Քարագործների կղզու զորանոցների բաց դռների օրը երկու տղամարդ՝ մեկը գեր, մյուսը նիհար, միմյանց վրա բղավում էին հոնկոնգյան խիստ շեշտված մանդարինի բարբառով եւ իրար մատնացույց անում:

«Նրանք մեզ խնդրում են գալ տեսնել, երբ տեսնելու բան չկա: Հը՛մ, այս ամենն այնքան հնացած է», - արհամարհանքով փնջացնում էր նիհարը:

«Փակի՛ր բերանդ: Ի՞նչ գիտես, թե սա առաջնագիծ չէ», - լսվեց գեր տղամարդու խիստ առարկությունը:

«Ի՞նչ գրողի տարած առաջնագիծ: Տեսե՞՛ր ես ամերիկյան նավատորմը: Տեսե՞՛ր ես [գերտերություն] ԱՄՆ-ի *Kitty Hawk*-ը: Ա՛յ, դա՛ է նավատորմը»:

«Եվ ի՞նչ կապ ունի *Kitty Hawk*-ը: Դա իրենցն է: Դա կապ չունի մեզ հետ: Մեր նավատորմը չի ցանկանում տիրանալ ամբողջ աշխարհին: Նա դրա կարիքը չունի»:

## Չժան Յավեն

«Ա Թյու: Իսկական Ա Թյու\*»:

Որքան ավելի շատ էին այդ երկու տղամարդիկ վիճում, այնքան ավելի էին բորբոքվում: Արդեն քիչ էր մնում կռվելին:

«Չե՞ս կարծում, որ Ա Թյու ես: Դու պարզապես կուրորեն...»:

Մինչ կհասցներ արտաբերել «կուրորեն երկրպագում ես օտարներին» բառերը, սպաներից մեկը՝ Տզյան Չժիվեյ անունով, շտապեց բաժանել երկու տղամարդկանց՝ հորդորելով զսպել իրենց տարածայնությունները:

«Նայիր, թե որքան հիանալի է ժողովրդական-ազատագրական բանակը: Այստեղ կան որոշ մարդիկ, ովքեր իրական խնդիրներ ունեն», - վրդովված ասաց գեր տղամարդը:

«Ախ, ցավում եմ: Ներողություն, - ասաց նիհար տղամարդը՝ շտապելով բացատրել Տզյանին: - Ես խոսում էի գենքի մասին, ոչ թե ժողովրդական-ազատագրական բանակի: Այդտեղի մեր ընկերներն իսկապես լավ մարդիկ են՝ օրինակներ, թե ինչպես պետք է մարդիկ իրենց պահեն»:

Հոնկոնգյան խճճված, բարդ հասարակության մեջ կայազորը հաստատուն կանգնած էր իր դիրքերում՝ ձգտելով սահմանափակել իր եւ քաղաքի միջեւ եղած հեռավորությունը, անցկացնելով բաց դռների օրեր եւ այլ միջոցառումներ, կազմակերպելով ամառային ճամբարներ, որտեղ հոնկոնգյան երիտասարդությունը կարող էր հանդիպել զինվորների հետ՝ ներգրավվելով ծառատունկի աշխատանքներում, մասնակցելով տարեցների ու երիտասարդների՝ կամավոր արյուն հանձնելուն եւ կապ պահպանելով հոնկոնգյան համալսարանների ուսանողների ու դասախոսների հետ:

---

\* Նշանավոր վիպասան Լու Սինի կողմից ստեղծված հայտնի կերպար Ա Թյուն մարմնավորում է չին ժողովրդի թուլությունները, թերություններն ու ձախողումները:



## Առեղծվածային «Գիտու բաժակ» շենքի ներսում

Այդ օրը, Վիկտորիա նավահանգստից փչող ուժեղ քամիների միջով, ես ժամանեցի Կենտրոնի Էդինբուրգ թիվ 2 վայր՝ ժողովրդական-ազատագրական բանակի հոսկոնգյան շտաբ-գրասենյակ, որը նաեւ հայտնի է որպես Ուելսի արքայազնի շենք: Շենքն սկզբնապես Մեծ Բրիտանիայի ցամաքային, ծովային եւ օդուժի հրամանատարական կենտրոնն էր տարածքում: Այստեղ անցկացվեց չին-բրիտանական ռազմական հանձնումը:

Կայագորը զորանոցներ կամ հենակետեր ունի Կենտրոնական, Սթենլի, Քարագործների կղզի, Շեկ Կոնգ, Սան Վայ, Գան Բլաք Հիլ եւ ուր այլ վայրերում: Նրա շտաբ-գրասենյակը գտնվում է Հոնկոնգ կղզու կենտրոնական շրջանում, մինչդեռ Քարագործների կղզին ծովային ուժերի, իսկ Շեկ Կոնգը՝ օդային հրամանատարության կենտրոնն է:

Ես ուշադիր նայում էի զորանոցների աշտարակին՝ գնահատելով այս յուրահատուկ ձեւ ունեցող շենքի չափը: Շենքի հիմքը նեղ էր, այնպես որ, հեռվից նայելիս, այն նման էր գիտու քառակուսի բաժակի: Չարմանալի չէ, որ շենքն ուներ «գիտու բաժակ» մականունը: Զորանոցների աշտարակը կառուցվել էր 1979 թվականին: Թեեւ այն ընդամենը երեսուն տարեկան էր, բայց ինձ հիանավոր մի կառույց էր պատկերանում: Ինչ վերաբերում էր նրա խորհրդանշական նշանակությանը, այն իսկապես հին էր:

Երբ ներս մտա այնտեղ, ուր նախկինում Հոնկոնգի բրիտանական միավորված ուժերի հրամանատարական կենտրոնն էր, չէի կարող տխրությունից չհառաչել: Մտքերս պատմական անցյալից տեղափոխվեցին ներկա, ապա՝ տասնվեց տարի առաջ՝ դեպի չին-բրիտանական ռազմական հանձնման արարողությունը, երբ իրար փոխարինեցին երկու երկրների կայագորային հրամանատարները: Դա 1997 թվականի հունիսի 30-ին էր, կեսգիշերից 10 րոպե առաջ: «Փոխգնդապետ

## Զժան Յավեն

Տան Շան'այ, Ուելսի արքայազնի շենքի նախապատրաստական աշխատանքներն ավարտված են, խնդրում եմ, ընդունեք այն հիմա: Մաղթում եմ ձեզ եւ ձեր ծառայակից զինվորներին հաջողություն եւ սահուն անցում: Փոխգնդապետ, խնդրում եմ, թույլ տվեք ինձ հրաման տալ Ուելսի արքայազնի զորանոցի կայազորին՝ հեռանալ:»

«Որպես ժողովրդական-ազատագրման բանակի հոնկոնգյան կայազորի ներկայացուցիչ, որին հանձնարարված է ստանձնել զորանոցի վերահսկողությունը, սույնով ձեզ հրամայելու թույլտվություն եմ տալիս: Երբ դուք հեռանաք, մենք կփոխարինենք: Մաղթում եմ ձեզ խաղաղ, բարեհաջող վերադարձ:»

Երկուսից մեկը բրիտանական պահակախմբի հրամանատար, փոխգնդապետ Էլլիսն էր: Մյուսը չինական պահակախմբի հրամանատար, փոխգնդապետ Տան Շան'այն էր:

Մեկը հանձնում էր իր նախկին հրամանատարությունը, իսկ մյուսը ստանձնում էր իր նոր հրամանատարությունը: Մեկը խոսում էր վիատված ձայնով, թերեւս հիասթափված եւ դժգոհ: Մյուսի ձայնն ասես հետզհետե բարձրացող՝ աշխարհը ցնցող կոչնակ լինեք: Մեկը ներկայացնում էր երկրազնդի առաջին՝ երբեմնի հզոր գաղութարար ուժը, որն այժմ անկում էր ապրում, որի նախկին ագրեսիվությունից ոչ մի վկայություն չէր մնացել: Մյուսը ներկայացնում էր 1,3 միլիարդ մարդու աճող ուժը, Արեւելքում վեր բարձրացող անկասելի զորությունը:

Փոխգնդապետ Էլլիսը հրաման տվեց. «Պահակախմբի հրամանատարի տեղակալ, դուրս հանեք ձեր զինվորներին Ուելսի արքայազնի զորանոցից»: Տասնութ բրիտանացի ժամապահներ շրջվեցին եւ շարքով դուրս ելան շենքի դարպասներից: Տասնութ չինական ժամապահներ ճանապարհեցին նրանց՝ համաժամանակյա ողջույններով: Նրանց փառահեղ, անսասան հայացքները հետետում էին բրիտանական ժամապահների հուսալքված երթի քայլերին, երբ վերջիններս դուրս ելնելով հեռացան Ուելսի արքայազնի շենքից, հեռացան չին ժամապահների տեսադաշտից, հեռացան հարյուր հիսունհինգ տարվա պատմությունից:

Մտնելով երբեմնի բրիտանական ռազմական շենք, քայլելով ժամա-

նակից քայքայված, փշփշոտ բետոնե հատակի վրայով, այնպես էի զգում, ասես օդում փոշեհատիկներն անգամ, դուրս սահելով թաքսված անկյուններից, ինձ պատմելու բան ունեին:

Այո, սա չինական տարածք էր, որը բրիտանացիները գրավել էին հարյուր հիսունհինգ տարի:

Ո՞ր քաջարի եւ բարեխիղճ չինացին կարող էր քայլել անցած տարիների բրիտանական բանակատեղով եւ չազդվել ու չմտահոգվել, նաեւ չհուզվել արտասվելու չափ:

Մենք չենք կարող մոռանալ պատմությունը: Մոռանալ պատմությունը նշանակում է մոռանալ մեր ժողովրդի արմատները:

Պատմությունը մեզ ասում է, որ 1841 թվականի մայիսի 27-ից սկսած, երբ բրիտանացիները ոմբակոծեցին Գուանչժոուն, ճեղքելով Չինաստանի պատնեշն ու ներխուժելով առջեւի դարպասից, ստիպելով, որ անկարող, խավարամիտ Ցին կառավարությունն ստորագրի Կանտոնի պայմանագիրը, Չինաստանի ամրաշինությունները դարձան ոչ ավելին, քան երերուն ցանկապատեր, որ անզոր էին կասեցնել ներխուժող հրոսակախմբերին:

Ապա հայացքս ընկավ գրանիտե գրքին, որի բաց էջերին մի նախադասություն էր փորագրված:

1997 թվականի հուլիսի 1-ին Հոնկոնգը վերադարձվեց մայրցամաքային Չինաստանին:

Հոնկոնգյան ժողովրդական-ազատագրական բանակի կայազորը ստանձնեց իր սուրբ պարտականությունը՝ չին ժողովրդի պատմության փառահեղ մի էջ գրելով:

Նախասրահի պատին գրված էր «Կայազորի մասին օրենքի» տեքստը: Կայազորի ավագ սպաներից մեկի ուղեկցությամբ՝ Հոնկոնգում եւ ծանոթացա զորանոցներին, ժողովրդական-ազատագրական բանակի կայազորի շտաբ-գրասենյակներին:

Մտնելով յուրաքանչյուր սենյակ՝ զգում էի, որ համակված եմ առաջին հայացքից անտեղի թվացող հարցերով: Դա պատմության ներկայությունն էր, որ զբաղեցնում էր միտքս, տարբեր վայրերի եւ ժամանակների կենտրոնացումը մեկ շենքի մեջ: Ստածեցի՝ գուցե հենց այս

## Զժան Յավեն

դահլիճում էր, որ բրիտանացի զինվորները բարձրացրին վիսկիով ու բրենդիով լի իրենց բաժակները՝ խմիչքից կաշկանդվող լեզուներով ծաղրելով Ցին կառավարության անկարողությունն ու այլասերվածությունը, քննարկելով տարածքային զիջումների եւ դրամական փոխատուցումների պայմանագրերը: Գուցե քննարկում էին, թե Բրիտանական կայսրությունն ինչ գաղութներ կարող է թալանել դրանից հետո: Գուցե Սեյշելյան կղզիները կամ Կարիբյան ծովը: Կամաց-կամաց, նույնիսկ երբ խոսում էին, գաղութներն ամբողջ աշխարհում սկսեցին դիմադրել նրանց, նրանց տարածքն ավելի ու ավելի էր փոքրանում, այնքան, մինչեւ որ մնաց «ոսկե ձվեր ածող սագը»՝ Հոնկոնգը: Եվ վերջում լույսը չքացավ նրանց աչքերից, երբ տեսան, որ Բրիտանական կայսրության դրոշմ,- ռազմական ուժի խորհրդանիշը, որը փողփողում էր Հոնկոնգի երկնքում հարյուր հիսունհինգ տարի,- ցած իջավ:

1996 թվականի սեպտեմբերի 15-ին բրիտանական դրոշն իջեցվեց Նոր Տարածքների Շեկ Կոնգ գորանոցում: Այդտեղ էր, որ 1899 թվականի ապրիլի 16-ին բրիտանացիներն առաջին անգամ իրենց դրոշմ բարձրացրին Հոնկոնգ ներխուժելուց հետո: 1997 թվականի ապրիլին Թագավորական նավատորմի երեք պարեկային նավեր հանգիստ դուրս սահեցին Նորին գերագանցության Թամար նավահանգստի իրենց նավամատուցներից եւ բռնեցին տունդարձի իրենց երկար ճանապարհը՝ հետեւելով հարյուր հիսուն տարի առաջ իրենց նախորդների անցած երթուղուն:

1997 թվականի հունիսին Թագավորական օդուժի թիվ 28 ավիաչուկատը դանդաղ հեռացավ՝ մեկնելով Մեծ Բրիտանիայի հեռավոր կղզիներ: 1996-ի օգոստոսին Հոնկոնգում բրիտանական բանակի կայազորը կազմող զորքերի 3 259 զինվորներն արձակվեցին՝ բաժանվելով չորս խմբի եւ ետ ուղարկվեցին տուն՝ Մեծ Բրիտանիա: Նախքան նրանց հեռանալը բրիտանական զորանոցներն արդեն վերածվել էին հնոտիների շուկայի, ուր վաճառվում էր ամեն շարժական բան՝ մեքենաներից մինչեւ մանկական խաղալիքներ: Թեեւ Հոնկոնգում սովորական մարդը կարող էր ապրել «աղավառ վանդակում», - երեք կամ չորս հոգի՝ խցկված մի քանի մետր քառակուսուց ոչ մեծ մակերեսով սենյա-

կում,- եւ տասնյակ հազարավոր ընտանիքներ ստիպված էին ապրել Էլ ավելի փոքր «վանդակ-տներում», բրիտանական կայազորի զինվորները բոլորն ապրում էին առանձին՝ մեծ հանրակացարանների ընդարձակ բնակարաններում: Նրանք կարող էին իրենց ընտանիքներին բերել իրենց հետ: Նաեւ ֆիլիպինցի աղախիներ ունեին եւ ազնվականի կյանք էին վայելում: Նույնիսկ բրիտանական կայազորի տների զուգարանները ենթակա էին խիստ դասակարգման եւ կանոնակարգերի. դրանց մի մասը բարձրաստիճան պաշտոնյաների օգտագործման համար էին, իսկ մյուսները՝ ցածրաստիճան պաշտոնյաների, զինվորների եւ տնային աշխատողների ու ծառաների համար: Ամեն բան կատարելապես հստակ կարգավորված էր, այնպես, որ ոչ ոք ոչինչ չէր կարող շփոթել: Այնտեղ, ուր ժամանակին ապրում էր բրիտանացի ցածրաստիճան մի պաշտոնյա, այժմ չինացի զինվորների ամբողջ մի ջոկատ էր քնում:

1997 թվականի հուլիսի 1-ին ժողովրդական-ազատագրական բանակի հոնկոնգյան կայազորը լուսաբացի առաջին ճառագայթները դիմավորեց Վիկտորիա ծովածոցում. այդ ճառագայթներն ընկնում էին կայազորի տասնչորս գորանոցներում կանգնած ժամապահների դեմքին: Չինվորներն ասես կաղապարված նմուշօրինակ լինեին՝ նոր, արդուկաճ ու թարմ համազգեստներով, սվիներով հրացանները ձիգ եւ ուղիղ թիկունքներին, սպիտակ ձեռնոցներով, սեւ, կաշվե կոշիկներով եւ կաշվե գոտիներով: Նրանց աչքերը փայլում էին, ձախ ձեռքերը հրացանների վրա էին, յուրաքանչյուրը լի էր վճռականությամբ, քաջությամբ եւ հերոսական կամքով:

Այդ ժամանակ գավեշտալի մի դեպք պատահեց. հինգ թե վեց տարեկան փոքրիկ մի աղջիկ, երբ առաջին անգամ տեսավ պահակ կանգնած զինվորներին, նրանք շատ տարօրինակ թվացին: Աղջնակը բարձրացրեց իր անմեղ դեմքը, որպեսզի երկար ժամանակ լրջորեն նայի նրանց, ապա մորն ասաց. «Մայրիկ, այնտեղ գտնվող զինվորը պատրաստված է պլաստմասից: Նա մոմից չի պատրաստված»:

Կայազորի քաղաքական կոմիսարներից մեկը, լսելով փոքրիկ աղջկան, չկարողացավ չկատակել նրա հետ. «Փոքրիկս, զինվորը պլաստ-

## Չժան Յավեն

մասից կամ մոմից չէ: Նա իսկական մարդ է»:

Աղջկա՝ կասկածով լի աչքերը լայն բացվեցին, եւ նա վազեց դեպի զինվորը: Նա կամթեց զինվորի ոտքը, ապա շրջվեց եւ բղավեց մոր կողմը. «Մայրի՛կ, զինվորը պլաստմասից չի պատրաստված: Նա իսկական զինվոր է: Իրոք այդպես է: Եթե չես հավատում, արի դու էլ ձեռք տուր»:

Փոքրիկ աղջկա միամտությունը մեծերին ստիպեց ծիծաղել: Պահակ կանգնած զինվորը ժպտաց: Բայց դեմքին նորից խիստ արտահայտություն տալով՝ անշարժ կանգնած մնաց իր տեղում:

Բրիտանական կայազորի զինվորների հետ համեմատած՝ ժողովրդական-ազատագրական բանակի զինվորները տարբերվում էին ինչպես արտաքին տեսքով, այնպես էլ կանոնակարգերով: Բրիտանացիները կրում էին բրոյա կարմիր գնդիկներով զարդարված կարմիր սահավարտներ, իսկ կայազորի շոտլանդացի անդամները կարճ ծալվոր շրջազգեստներ՝ կիլտեր էին հագնում: Նրանք անփույթ ձեռով էին պահակ կանգնում եւ շրջում էին աշխարհի հանդեպ անտարբեր տեսքով, ասես ինչ-որ ընկերության անվտանգության պահակներ լինեին:

Ձավեշտալի մի պատմություն այն օրերից, երբ բրիտանացիները տեղակայվել էին Հոնկոնգում.

Մի օր առավոտյան, Ուելսի արքայազնի շենքի դիմաց, դարպասի մոտ, բրիտանական կայազորի երեք անդամներ, շոտլանդական կիլտեր հագած, կատարում էին դրոշի բարձրացման առավոտյան արարողությունը: Քամու ուժեղ պոռթկումից զինվորներից մեկի կիլտը վեր բարձրացավ՝ ի ցույց դնելով շողացող ճերմակ հետույքը: Ստակայքում կանգնած լրագրողներից մեկն այդ տեսարանը լուսանկարեց, եւ արդյունքում զինվորի մերկ հետույքը հայտնվեց օրվա թերթերի առաջին էջում, իսկ կատակը՝ Հոնկոնգում բոլորի շուրթերին: Լրագրողներից մեկին հաջողվեց կապվել Հոնկոնգում բրիտանական կայազորի հրամանատար, գեներալ-մայոր Բրայան Դաթթոնի հետ, որպեսզի հարցնի, թե ինչու նրա զինվորները ներքևազգեստ չեն հագնում: Դաթթոնի պատասխանը զվարճալի էր. «Ես միայն կանոններ եմ սահմանում, թե ինչ հագնեն իմ զինվորները դրսից, ոչ թե ներսից»:

Չինական կայազորը երբեք այդքան անփույթ չէր լինում: «Առաքելությունը խիստ կարեւոր նշանակություն ունի: Կարգապահությունն ավելի կարեւոր է, քան իմ կյանքը»: Կայազորի հաստատման օրվանից այս երկու նախադասությունները սկզբունք ու վարքականոն էին, որոնք ընդունում ու որոնցով առաջնորդվում էին յուրաքանչյուր զինվոր եւ սպա:

Կայազորի զինվորների կյանքը միապաղաղ ու լարված էր՝ վարժանքներ, ժամապահի հերթապահություն, մարզումներ, դասեր, ուտելու ժամ, քնի ժամ: Միայն կիրակի օրն էին ազատ եւ զորանոցի տարածքից դուրս գալ չէր կարելի: Չէին կարող գնալ գնումներ կատարելու, օգտվել համացանցից կամ բջջային հեռախոսներով զանգել իրենց ընկերներին ու ընտանիքին: Կարող էին միայն նամակներ գրել: Նրանց տեղակայման ժամկետը երկու տարի էր, որի ընթացքում միայն երկու անգամ էին տեղափոխվում քաղաքով: Առաջինը նրանց Հոնկոնգ գալու օրն էր, երբ ավտոբուսով անցնում էին քաղաքում՝ մյուս տոր զինվորների հետ: Երկրորդը՝ Հոնկոնգից հեռանալուց մեկ օր առաջ էր, երբ տորից խմբով ուղևորվում էին քաղաք: Դա նրանց միակ հնարավորությունն էր՝ քիչ թե շատ տեսնել Հոնկոնգի իրական դեմքը: Քաղաքի փոքր չափի պատճառով ոմանք այն անվանում էին «զևիկ»։ Տրանսպորտային միջոցների պահպանման կորպուսի կին զինծառայողներն իրենց սահմանափակված կյանքը համեմատում էին «քնջութի սերմի» հետ: Այդ տաքարյուն երիտասարդների համար դժվար էր հարմարվել «վանդակված» զինվորական կյանքին, հատկապես նրանց համար, ովքեր մեծացել են քաղաքներում եւ սովոր էին խաղալ իրենց հեռախոսների ու համակարգիչների հետ: Նրանց մեջ որոշ զվարճախոսներ շուտասելուկ էին մտածել «Հոնկոնգի կայազորի տասը տարօրինակ բաների մասին»։ «Հոնկոնգյան կայազորն իսկապես տարօրինակ է, որովհետեւ սիրային նամակներ կարող եմ գրել միայն այն դեպքում, եթե կինս ինձ ստիպի գրել...»:

Չինվորների կառավարման խիստ ձեւը Հոնկոնգի եզակի միջավայրի եւ պայմանների արդյունք էր: Երբ կայազորն առաջին անգամ տեղափոխվեց Հոնկոնգ, լրատվամիջոցների «հասարակական կարծիքի

## Զժան Յավեն

հարցումները» ցույց էին տալիս, որ տարածքի մարդկանց միայն երեսուն տոկոսն է հավանություն տալիս նրանց ներկայությանը, իսկ որոշ հարցումներով այդ ցուցանիշը ցածր էր քսան տոկոսից: Ահա թե ինչու, բոլոր առումներով, կայազորը պետք է խստորեն ինքնակազմակերպված լիներ: Նրանք չէին կարող նույնիսկ մեկ թիզ շեղվել իրենց համար նախասահմանված ուղուց:

Անցած տասնվեց տարվա ընթացքում կայազորը մի քանի անգամ շարունակաբար փոփոխել է իր գործերը, ինչպես նաև նրա հրամանատարներին: Ըստ կայազորի շտաբի տրամադրած նյութերի՝ 2011 թվականին «կարծիքի հարցումները» ցույց էին տալիս, որ կայազորի ներկայությանը հավանություն տալու մակարդակը Հոնկոնգի բնակչության շրջանում հասել էր վաթսուն տոկոսի: Քսանից վաթսուն տոկոս բարձրանալն այնպիսի բան չէ, որ անտեսվի:

Հոնկոնգյան լրատվամիջոցներից մեկը մի անգամ «հարցում» անցկացրեց տարածքի երիտասարդ կանանց շրջանում: Կանանց հարցրին՝ պատրաստ կլինե՞ն ամուսնանալ կայազորի անդամի հետ: Պատասխանները հաշվելիս լրագրողները ցնցված էին: Կանանց հարյուր տոկոսն ասել էր «այո»: Իհարկե, դա միայն կայազորի փափուկ ուժի գնահատումն էր: Առավել կարեւոր էր Հոնկոնգում տեղակայված երեք ծառայությունների ջանքերի համատեղումը: Հենց այդ հնարավորությունն էր, որ թույլ էր տալիս պաշտպանել Հոնկոնգը եւ պաշտպանել հայրենիքը: Կայազորը բազմիցս պարգեատրվել է Կենտրոնական ռազմական հանձնաժողովի՝ Ժողովրդական-ազատագրական բանակի բարձրագույն մարմնի կողմից: Նրա նախագահը կայազորին արժանացրեց բարձր գնահատականի՝ ասելով, որ այն իսկապես «հզոր ուժ է, քաղաքակիրթ ուժ»:



## **Հայրենիքն ուժեղ է, քանի որ ինձ ունի: Հոնկոնգն ուժեղ է, քանի որ ինձ ունի**

Այն օրը, երբ ես այցելեցի Շեկ Կոնգի գորանոցը, ջերմաստիճանը երեսուն աստիճան ցելսիուսից բարձր էր, եւ արեւը կիզում էր: Ձեռքերիս վրա ընկնող արեւի ճառագայթներն ասես կրակե ասեղներ լինեին: Երբ մտա գորահրապարակ, սաստիկ տապն ինձ պարուրեց: Դեմքս լվացող ջերմությունը բխում էր վարժություններ կատարող զինվորներից, որոնցից յուրաքանչյուրը լի էր առնական եռանդով: Այդ օրը շրջազգեստ էի հագել եւ մինչ կանգնած էի գորահրապարակի մոտի ծառի ստվերում, զլուխս քրտինքի մեջ կորել էր: Նայում էի այրող արեւի տակ մարտական քողարկազգեստ հագած զինվորներին, որ առաջ էին սողում կամ ցատկում: Ասես հենց նոր էին գետից դուրս ելել:

Կայազորի անդամների մեծ մասը սովորական ընտանիքներից էր: Նրանք, որպես կանոն, պարզ ու անկեղծ, հասարակ, ինչպես ասում են՝ երկրի աղը հանդիսացող, արժանավոր մարդիկ էին: Շատերի նման՝ նրանց մեծ մասը դեռ երեխա էր: Նրանք երագում էին հաջողության եւ սիրո մասին: Բայց ավելի շատ երագում էին իրենց հայրենիքի համար այնպիսի բան անել, որ պատիվ կբերեր իրենց ծնողներին: Նրանք հպարտ էին, որ իրենց անվանում էին հոնկոնգյան կայազորի անդամներ: Անկախ այն բանից, թե որքան ծանր էր իրենց վիճակը, կամ որքան էին հոգնած, երբեք չէին դժգոհում, երբեք չէին նեղվում եւ չէին խուսափում իրենց պարտքը կատարել: Նրանք բացառապես երախտապարտ էին իրենց կյանքի պատմության մեջ կարճ, փառահեղ զլուխ գրելու հնարավորության համար:

Բայց որքան էլ տոկուն կամ համարձակ լինեին, ի վերջո մարդ արարած էին: Նրանք զգացմունքներ եւ ցանկություններ ունեին: Ոմանք բախվում էին անհաղթահարելի խոչընդոտների:

Զինճառայողներից մեկը նամակ ստացավ իր սիրած աղջկանից: Աղջիկն ասում էր, որ այլեւս չի կարողանում տանել վանական կարգա-

## Չժան Ֆավեն

պահույթունը, որն իր զինվորներին պարտադրում է կայագորը: Տղային չէին թողնում ևույնիսկ համացանցով շփվել նրա հետ: Ժամանակն էր, որ իրար հրաժեշտ տային: Չինվորն իր ընտանիքից լուր ստացավ, որ տեսել են աղջկան՝ ուրիշ մի տղամարդու հետ թեանցուկ զբոսելիս: Անասելի վշտացած՝ նա քաշվեց մի անկյուն եւ դառնացած արտասվեց:

Կայագորի ծովային զորակազմի մաս կազմող թիվ 771 նավի նավապետ Ֆան Սյուեգանը մոր մահվան վշտից հետո նոր էր հանդարտվել, երբ լուր ստացավ, որ հայրը հանկարծամահ է եղել: Յնցող լուրն ստանալով՝ երկաթե կամքի տեր այդ մարդը ձվի կեղեի պես փխրուն դարձավ: Նա փակվեց իր սենյակում եւ ինքն իրեն շարունակ հարցնում էր. «Ինչի՞ համար է կյանքն ընդհանրապես»:

Չժուու Սյաոպինը թիվ 771 նավի քաղաքական կոմիսարն էր: Ավելի քան տասը տարի էր անցել այն օրից, երբ նա տանը Գարնանային փառատունն էր անցկացրել իր ընտանիքի հետ, եւ հիմա ինքն ու կինը բաժանված էին եւ ապրում էին առանձին տներում: Ամեն անգամ նրա վեց տարեկան որդին զանգում էր ու հարցնում, թե հայրը երբ է տուն գալու եւ մի՞թե այլեւս չի սիրում իրեն ու մայրիկին: Որդու հեկեկոցն ու կշտամբանքը լսելիս Չժուուի սիրտը փլվում էր: Ուզում էր լաց լինել, բայց փոխարենը որդուն ասում էր, որ ինքը շատ, անչափ շատ է սիրում տղային եւ նրա մորը:

Ավելի հաճախ, երբ նրանց կանանց ծննդաբերելու ժամանակն էր, երբ անհրաժեշտ էր, որ իրենց ամուսինները մի քանի օր իրենց մոտ լինեն, կայագորի զինվորները չէին կարողանում այնտեղ լինել: Նրանք առաքելություն ունեին: Նրանք միայն կարեկցանքով ու զոջումով լի հայացքով կարող էին փաղաքշել իրենց նորածին երեխաներին եւ շոյել իրենց նեղսրտած կանանց դեմքերը:

Նմանատիպ դեպքերը շատ տարածված էին:

Բայց, ի վերջո, զինվորները պարզապես զինվորներ էին:

Թեեւ նրանց մարմինը ևույն միս ու արյունից էր, ինչ սովորական մարդկանց մարմինն է, նրանք ծայրաստիճան տարբեր էին իրենց դիմացկունությամբ: Չինվորները կարող էին լեռ բարձրացնել իրենց քաջ

ու տոկոսն ուսերի վրա: Ի՞նչ էր մի փոքր գրկանքը, մի փոքր տանջանքը, որ կրում էին սիրելիների համար, որոնց կարոտում էին:

Այդ «հզոր ուժը», այդ «քաղաքակիրթ ուժը» կոփվել էր ամենասովորական, ամենաերիտասարդ ու սիրարժան զինվորների խմբի կողմից:

«Նվիրվածություն, որ նմանը չունի, պարտականություն, որ վախ չի ճանաչում, ոչ մի խնդիր՝ առանց լուծման, ոչ մի տեղ՝ առանց հաղթանակի»: Ահա՛ այդ բացառիկ կայազորի կարգախոսը:

Իմ համոզմունքն է, որ Հոկոնգի կայազորի զինվորներն իրենց կյանքի այդ հատուկ ժամանակն ապրելուց հետո կլինեն բարձրակարգ անհատներ՝ դժվարությանը դիմակայելու իրենց ունակությամբ, օրենքի հանդեպ ունեցած հարգանքով, մեծահոգությամբ, լայնախոհությամբ ու վեհանձնությամբ, ավելի լավ հասարակություն կառուցելու իրենց խիզախությամբ:

Այս պահին հիշեցի մի բան, որ ժամանակին ասել է գեներալ Դայ Սյույը: Դա խորը միտք էր, որ արտացոլում էր տառապանքի եւ պատասխանատվության զգացումի հազվագյուտ մի ընկալում:

Նա ասում էր. «Չեք կարող գայլին համոզել, որ հեռանա: Պետք է քշեք նրան»:

«Քանի՞ չինացի զոհվեց կամ վիրավորվեց Ճապոնիայի դեմ դիմադրության պատերազմում: Երեսունհինգ միլիոն: Որովհետեւ մենք երկաթե Մեծ պարիսպ չունեինք, որ մեզ պաշտպաներ, մենք կարող էինք միայն ապավինել մարդկային միս ու արյունից կառուցված Մեծ պարսպին»:

Նա ասում էր. «Չինաստանը ստրատեգների կարիք ունի: Բայց նույնիսկ դրանից ավելի՝ նա կարիք ունի վճռական եւ խիզախ սրտով մարդկանց: Նա կարիք ունի մարդկանց, ովքեր հասկանում են, թե ինչ է տառապելը: Չկա թշնամի, որին հնարավոր չլինի հաղթել, եւ չկա դժվարություն Չինաստանի առջեւ, որը հնարավոր չէ հաղթահարել: Ամենամեծ վտանգը վտանգն անտեսելն է: Մեր շատ պաշտոնյաներ եւ ակադեմիկոսներ տեսնում են միայն ծաղիկներ, լավ գինի, համախառն ներքին արտադրանք: Նրանց աչքերը սեւեռված են իշխանության, քաղաքականության եւ կանանց վրա: Մենք պետք է ունենանք բարձր

### Չժան Յավեն

նպատակներ: Մենք պետք է ունենանք առաջ շարժվելու համարձակություն, որպեսզի դիմակայենք յուրաքանչյուր դժվարության եւ մարտահրավերի, ջախջախենք մեզ պաշարողներին, գրկենք հաղթանակը՝ բոլոր ժամանակներում խաղաղության համար, եւ ստեղծենք նոր, հզոր ու բարգավաճ Չինաստան ապագա սերնդի համար:

Ճապոնիայի դեմ պատերազմի ժամանակ չինացիները մի ասացվածք ունեին.

«Չինաստանը մեռած չէ, քանի որ ինձ ունի»:

Այսօր մենք պետք է նույնն ասենք՝ «Չինաստանն ուժեղ է, քանի որ ինձ ունի: Կեցցե՛ հայրենիքը:»

ԳԼՈՒԽ 3

ԱՌՅՈՒԾԻ ԺԱՅՈՒ ՏԱԿ\*. ՀՈՆԿՈՆԳԻ  
ՊԱՅՔԱՐԻ ՈԳԻՆ

**Ինչ ժառանգեց Տուն Չի-հուան իր հորից**

Յուրաքանչյուր ոք, ով գրում է պատմության այս ժամանակահատվածի մասին, չի կարող անտեսել Տուն Չի-հուային:

Ես նախատեսել էի հարցազրույց վարել նրա հետ եւ հարմար առիթ էի որոնում՝ օգտագործելով բոլոր աղբյուրները, հնարավոր ամեն միջոցի դիմելով, որպեսզի կարողանամ հաջողացնել դա: Բայց, ավաղ, դա վիճակված չէր: Ամեն բան հասկանալի է. նա ականավոր անհատ է, իսկ ես՝ սովորական մի գրող:

Բայց պետք է մի կողմ թողնեմ այն տխուր փաստը, որ չկարողացա խոսել նրա հետ եւ վերաբերվեմ նրան՝ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի առաջին գործադիր ղեկավարին, ամենայն ազնվությամբ ու մեծահոգությամբ, որ սպասվում է գրողից:

Եթե խոսելու այլ բան չլիներ, կխոսեի նրա հետ՝ իմանալու այն վեհ զգացմունքների մասին, որ Տունը ժառանգել է իր հորից, եւ հորից որդուն փոխանցված առաքելության ու պատասխանատվության զգացումների մասին:

Մեծ հաջողություն էր, որ կարողացա խոսել Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի արդարադատության նախկին քարտուղար Էլսի Լյունի հետ: Նա Տունի կողմից առաջադրված միակ պետական պաշտոնյան էր, որ նախորդ վարչակարգի քաղաքացիական ծառայության

---

\*Առյուծի ժայռը Կոուլունի եւ Նոր տարածքների միջեւ ընկած սահմանի գտնվող ցցվածք է: 1949 թվականից հետո Հոնկոնգ փախած մարդկանցից շատերը որպես ապօրինի բնակիչներ ապրում էին այդ ցցաժայռի տակ: Նրանց վերաբերյալ եւ այդօրինակ այլ պատմություններ են պատկերված 1970-ականների հոնկոնգյան «Առյուծի ժայռի տակ» հայտնի հեռուստասերիալում, որը Երկրորդ աշխարհամարտից հետո վերակառուցվող քաղաքի մասին է: Յուցադրումը եւ նույն թեմայով երգը դիտվում էին որպես Հոնկոնգի ոգու խորհրդանիշեր:

## Չժան Յավեն

մնացուկ չէր: Տարիների ընթացքում նրանք շատ բաների միջով անցան: Էլսին լավ էր հասկանում Տունին եւ շատ բարձր կարծիք ուներ նրա մասին: Նրան համարում էր հազվագյուտ տրամաչափի առաջնորդ, այնպիսի մեկը, ով ո՛չ դժգոհում էր, ո՛չ էլ ափսոսանք ապրում, եւ ով անձնվիրաբար աշխատում էր ի բարօրություն Հոնկոնգի միլիոնավոր մարդկանց՝ սովորական տղամարդկանց եւ կանանց համար աներեւակայելի ու անըմբռնելի դժվարություններ հաղթահարելով:

Տուն Չաո Յունը աշխարհի յոթ բարձրակարգ ծովային բեռնափոխադրողներից մեկն էր: Նա եւ՛ միլիարդատեր էր, եւ՛ կրակոտ հայրենասեր, հազվագյուտ խորաթափանցությամբ ու ներըմբռնումով եւ Չին ժողովրդի հանդեպ անսահման խոր սիրով օժտված մի անձնավորություն: Դրա համար էլ, երբ 1937 թվականին Շանհայում զավակ ունեցավ, իր որդուն անվանեց «Չի-հուա»՝ Չինաստանը կառուցող: Դա օտարերկրյա ներխուժման ամենամռայլ օրերին էր: Երբ Չի-հուան երկու տարեկան էր, հայրը լուսանկարեց նրան եւ լուսանկարի ներքեւի մասում գրեց հետեւյալ բառերը՝ «ժպտա եւ ողջունիր մեծ դարաշրջանի գայլատը»: Հայրն անսահման մեծ հույսեր էր կապում որդու հետ: Տուն Չաո Յունը խստապահանջ հայր էր, հատկապես իր ավագ որդու նկատմամբ: Նա որդուն չէր թողնում իրենց սեփական մեքենաներից մեկնումեկով դպրոց գնալ: Տղան պետք է մյուս երեխաների պես դպրոց գնար՝ ավտոբուսով կամ մետրոյով: Երբ Չի-հուան դեռահաս էր, մեկնեց Անգլիա՝ սովորելու Լիվերպուլի համալսարանում: Նույնիսկ այնտեղ նա ստիպված էր կատարել խստաբարո հոր հրահանգները: Չի-հուան չպետք է ցուցադրեր իր հարուստ լինելը եւ պետք է ապրեր պարզ ու հասարակ, անպաճույճ կյանքով: Ամեն շաբաթ նա իր հանրակացարանի համար վճարում էր երեք ֆունտ տասը պենս, իսկ ամեն երեկո հիսուն պենս էր վճարում ընթրիքի համար: Ամեն օր հեծանվով էր գնում-գալիս հանրակացարան-համալսարան ճանապարհը: Ամառային արձակուրդի ժամանակ, ինչպես մյուս ուսանողները, նա ստիպված էր աշխատանք գտնել՝ մի քիչ լրացուցիչ գումար ձեռք բերելու համար: Երբ 1960 թ.-ին համալսարանն ավարտեց, հայրը նրան ստիպեց գնալ Միացյալ Նահանգներ եւ աշխատել «Ջեներալ մոթորս»-ում սկսելով ամենաներքեւից՝ որպես շարքային աշխատող:

Հայրը նրան ասաց. «Ես կասկած չունեմ քո իդեալների ուժի հան-

դեպ: Ինձ անհանգստացնում է, թե արդյո՞ք դու ի վիճակի ես տառապել դրանց համար: Չպետք է մտածես, թե կարող ես ինչ-որ հարցում ետ կանգնել: Դու պետք է գտնես քո սեփական տառապանքը, կամքդ կոփես եւ ամրացնես այնպես, որ կարողանաս ընդունել կյանքի բոլոր մարտահրավերներն ու դիմակայես դրանց: Ուրեմն պետք է քեզ վարժեցնես ամեն առումով եւ պետք է սկսես ամենաներքելից: Միայն լավ աշխատող լինելուց հետո կարող ես հասկանալ, թե ինչպես պետք է վերաբերվես քո աշխատակիցներին եւ ինչպես կարող ես սովորել ուրիշների փորձերից: Դա լավ հիմք կլինի, երբ ժամանակը գա սեփական ճանապարհդ անցնելու»:

Դա լայնախոհ հոր հեռահար պատվիրանն էր որդուն, հայր, որ շատ բան է անում որդու կյանքի ուղին հարթելու համար:

Տուն Չառ Յունն ամուր կապեր ուներ ամերիկյան էլիտար հասարակության հետ: Նախագահներ Քարթերը, Ռեյգանը, Նիքսոնը եւ Ֆորդը բոլորը նրա ընկերներն էին: Բոլորը հրավիրում էին նրան այցելել Սպիտակ տուն, բոլորն առաջարկում էին, որ նա դառնա Ամերիկայի քաղաքացի: Նա լավ հարաբերությունների մեջ էր նաեւ Եղիսաբեթ թագուհու եւ արքայազն Չարլզի հետ. բրիտանացիները նրան քանիցս համոզում էին դառնալ Միացյալ Թագավորության քաղաքացի՝ խոստանալով լորդի տիտղոս եւ համաշխարհային դատավորի աստիճան: Բայց անկախ այն բանից՝ դրանք ամերիկյան նախագահների արտառոց բարի առաջարկներն էին թե բրիտանական թագուհու հրավերները, բոլորն էլ մերժվեցին բեռնափոխադրման մագնատի կողմից:

«Կյանքը պետք է իմաստ ունենա: Ես պետք է հպարտ լինեմ, որ չինացի եմ եւ աշխատեմ Չինաստանը վերականգնելու համար»:

Սրանք էին Տուն Չառ Յունի պատվիրաններն իր որդուն եւ նրա կյանքն ուղղորդող անկոտրում զգացմունքը: Այսպիսի վեհ հոգեկերտվածքն անջնջելի «չինական հետք» թողեց Տուն Չի-հուայի վրա՝ դառնալով նրա կյանքի գործի հիմքը: Ուր էլ լիներ, հարուստ լիներ թե աղքատ, Չինաստանը միշտ նրա սրտում էր: Նա ծառայում էր հայրենիքին, ծառայում էր Հոնկոնգին, ծառայում էր իր ժողովրդին:

Իհարկե, հայրենիքը Տուն ընտանիքի համար մշտական, հաստատուն աջակցության աղբյուր էր: 1980-ականներին, երբ ընտանեկան բիզնեսը ճգնաժամի մեջ հայտնվեց, Չինաստանի բանկը միջամտեց՝

## Չժան Ցավեն

օգնության ձեռք մեկնելով ճակատագրական այդ պահին:

1996 թվականին, երբ Տուն Չի-հուան որոշեց մասնակցել Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի գլխավոր գործադիր ղեկավարի ընտրություններին, ասաց.

«Ես որոշեցի առաջադրվել գլխավոր ներկայացուցչի ընտրություններում՝ որպես չինացի՝ գիտակցելով իմ առաքելությունը, 21-րդ դարում Հոնկոնգի համար հոյակապ հեռանկար ստեղծելու առաքելությունը: Դա նշանակում է, որ մեր պարտքն է մեր ուսերին վերցնել Հոնկոնգի պատմության մեջ ցանկացած այլ սերնդի կրած բեռից տարբեր մի բեռ»:

1997 թվականի հուլիսի 1-ի կեսգիշերին Տունը կանգնեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Եւ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի դրոշների ներքո՝ որպես տարածքի առաջին գործադիր ղեկավար, Եւ տվեց այս երդումը,- պետական գործչի երդումը,- Հոնկոնգին, Չինաստանին ու ամբողջ աշխարհին.

«Սույնով իմ հավատարմությունն ու նվիրվածությունն եմ հայտնում ՉԺՀ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանին, որին հավատարիմ կլինեմ մինչեւ վերջ: Կպաշտպանեմ օրենքը, հանրային աշխատանքը կղեկավարեմ ազնիվ Եւ շիտակ ձեռով՝ հանդես գալով որպես Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի ծառայող Եւ պատասխանատու լինելով ինչպես Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կենտրոնական կառավարության, այնպես էլ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի հանդեպ»:

Պաշտոնն ստանձնելով՝ վաթսուամյա Տունն իր աշխատասենյակ մտավ միայն երկու քարտուղարների Եւ վարորդի ուղեկցությամբ: Նա չունեւ կառավարման նախկին փորձ Եւ «Մեկ երկիր, երկու համակարգ»-ի մոդել, որի վրա հիմներ իր գործողությունները: Հոնկոնգը, որը նա պետք է ղեկավարեր, նոր էր բոլորել բրիտանական կառավարման հարյուր հիսունհինգ տարին Եւ քաղել Քրայսթ Փաթենի հինգ տարվա հոգսաշատ պտուղները.

Մեծ Բրիտանիան գաղտնի կերպով մշտական բնակության իրավունք էր տարածել հոնկոնգյան էլիտայի երկու հարյուր քսանհինգ հազար անդամների վրա.

Այն Հոնկոնգի մարդու իրավունքների վրա պայմանագրեր տարա-



ծեց, որոնք Մեծ Բրիտանիան ինքն ամբողջությամբ չէր իրականացրել.

Դա հանգեցրեց Հոնկոնգի քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի եւ սոցիալական բարեկեցության համար ծախսերի հսկայական աճի՝ դժվարին դրության մեջ դնելով հատուկ վարչական շրջանի կառավարությանը.

Հոնկոնգում բրիտանական վարչակազմը տեղում թողեց երեք գերատեսչություն, տասնմեկ գրասենյակ եւ հարյուր ութսուն հազար քաղաքացիական ծառայող.

Բնակարանային գները Հոնկոնգում աճում էին, այն աստիճանի, որ ցածր եկամուտ ունեցող շատ մարդիկ դժվարանում էին տներ գնել.

Հոնկոնգում շատերը չէին ցանկանում վերամիավորվել հայրենիքի հետ...

Ամերիկյան «Ֆորչըն» ամսագիրը գրպարտչական մի կարծիք հրապարակեց, թե «Հոնկոնգը մեռած է»՝ իր շապիկին դնելով «Հոնկոնգի մահը» հանդուզն վերնագիրը: Ուղեկցող հոդվածը մի շարք մտայն կանխատեսումներ էր անում, այդ թվում՝ որ Հոնկոնգի մարդիկ խմբվում են, որպեսզի արտագաղթեն, որ հանցագործությունների աճն սպառնալից է դառնում, որ օրենքի գերակայությունը կազմալուծվում է, եւ որ տարածքի ընտրական համակարգը խարխուլվում է: Հոնկոնգի՝ մայրցամաքային Չինաստանին վերադարձը պատկերվում էր որպես ապոկալիպտիկ մի բան, դժոխք երկրի վրա:

Երբ ստանձնեց նոր աշխատանքը, Տունը շունչ քաշելու ժամանակ չունեց: 1997 թվականի հոկտեմբերին, երբ Հոնկոնգը դեռ մայրցամաքային Չինաստանին վերադառնալու տոնակատարություններն էր նշում, տարածքը հայտնվեց միջազգային տնտեսական ճգնաժամի հորձանուտում, որ հղի էր ամեն բան խորտակելու վտանգով: Տունը նոր էր գեկույց հրապարակել, որում ներկայացված էին ութսունհինգ հազար միավոր նոր տներ կառուցելու ծրագրեր, երբ «միջազգային մեծ երեւելիների» կադրային մի խումբ, որի գլխավորը Տորջ Սորոսն էր՝ դժոխքից ելած կատաղի մի շուն, կայծակնային գրոհ սկսեց Հոնկոնգի ֆոնդային եւ արժույթային շուկաների վրա: 1997 թվականից մինչեւ 1998 թվականը չորս առանձին գրոհ եղավ, որ մեկ գիշերվա մեջ Հոնկոնգը «անվտանգ նավահանգստից» վերածում էին «մահվան նա-

## ԶԺԱՆ ՅԱՎԵՆ

վահանգստի»: 1998-ի ամռանը ամերիկյան եւ եվրոպական ներդրումային բանկերը եւ ներդրումային հեջ ֆոնդերը խմբային ուղղորդված պատերազմ սկսեցին Հոնկոնգի արժութային, ֆոնդային եւ Հեն Սենի ֆոնդային բորսայի ֆյուչերսային շուկաների վրա՝ դեմպինգի ենթարկելով՝ արհեստականորեն արժեզրկելով հսկայական քանակությամբ ֆյուչերսներ եւ հոնկոնգյան արժույթ: Տարածքի Հեն Սենի ֆոնդային ինդեքսը կտրուկ անկում ապրեց՝ 16 673-ից հասնելով 6 600-ի:

Այդ ժամանակ հաշվետվություններում նշվում էր, որ արտարժույթի պահուստի կորուստները Հոնկոնգի համար կազմում էին ութ միլիարդ ԱՄՆ դոլար: Հոնկոնգի Դրամավարկային եւ արժութային քաղաքականության վարչության պաշտոնյաները ենթադրում էին, որ Հոնկոնգի «փամփուշտները վերջանում են» եւ որ եթե որեւէ գործողություն չձեռնարկվի, Հոնկոնգը կարող է հնգօրյա ժամկետում «բենզինը սպառել»:

Որոշ ժամանակ աշխարհի այքերը սեւեռված էին Հոնկոնգի ֆոնդային բորսայի մեծ տախտակի վրա եւ հետեւում էին, թե ով հաղթող դուրս կգա միջազգային առաջատար շահարկողների եւ Տուն Չի-հուայի՝ ևորաստեղծ հոնկոնգյան հատուկ վարչական շրջանի կառավարության միջեւ ընթացող կենաց-մահու այդ պայքարում: Միջազգային մեկնաբանները, որոնք կանխատեսել էին «Հոնկոնգի մահը», տեղի ունեցող այդ ամենին հետեւում էին իրենց իրավացիությունը գիտակցողի լայն ժպիտով՝ անհամբեր սպասելով դաժան ճակատամարտի արյունալի հետեւանքներին, որ կապացուցեր իրենց դատավճռի ճշգրիտ լինելը:

Այդ կարեւորագույն պահին Տունը վճռական, վիճահարույց որոշում կայացրեց. օգոստոսի 14-ից օգոստոսի 28-ը հատուկ վարչական շրջանի կառավարությունը մոբիլիզացնելու է հարյուր քսան միլիարդ հոնկոնգյան դոլար արտարժույթի պահուստներում՝ շուկայի միջամտության համար, «դարի խաղաղորոյքը» դնելով ընդդեմ բորսային շահարկողների՝ ֆոնդային բորսայում եւ ֆյուչերսների շուկաներում: «Մեծ երեւելիները» դուրս մղվեցին, Հոնկոնգը փրկվեց, եւ վերջ դրվեց օրհասական ճակատամարտին: Հատուկ վարչական շրջանի կառավարությունը վերջին հաշվով երկու միլիարդ հոնկոնգյան դոլարի շահույթ ստացավ իր ֆյուչերսների խաղաղորոյքից, մինչդեռ բորսային շահարկողներն ստիպված էին մոտ 1,2 միլիարդ դոլար արժողությամբ կորուստներ կրել:

Բայց չնայած թայֆունն անցել էր, այն իր ճանապարհին ավերածություններ էր թողել:

Հաշվետվությունների համաձայն՝ 1997 թվականի օգոստոս ամսվա 16 673-ի գագաթնակետից, մինչև մեկ տարի անց իր ամենացածր՝ 6 600 կետը, Հոնկոնգի ֆոնդային բորսան ավելի քան վաթսույն տոկոսով նվազում արձանագրեց՝ ներկայացնելով անձնական հարստության հարյուր միլիարդավոր հոնկոնգյան դոլարների կորուստ:

Հոնկոնգի տնտեսությունը վիրավոր էր, ֆոնդային շուկաները քայքայվել էին, գրոհի էր ենթարկվել գույքի շուկան: «Ութսունհինգ հազար» տոր բնակելի տների հետ կապված Տունի ծրագիրը նույնպես վեճեր հարուցեց: Ոմանք ասում էին, թե ծրագրով բնակարանային շուկայում հաստատված սահմանափակումներն ուժեղացնում են ֆինանսական ճգնաժամի հետեւանքները Հոնկոնգում: Արդյունքում այն արագորեն լքվում էր: Ոմանց կարծիքով՝ հատուկ վարչական շրջանի կառավարությունը խաթարել էր Հոնկոնգի ազատ շուկայի համակարգի գործունեությունը: Ասում էին, որ նա չպետք է մոբիլիզացներ արտարժույթային պահուստները՝ բորսային շահարկողներին խոչընդոտելու համար: Արեւմտյան լրատվամիջոցներն ավելի շատ աղմուկ ու զարշահոտություն էին տարածում՝ տարածքի հեղինակությանը կրկին հարված հասցնելով «Հոնկոնգի մահի» վերաբերյալ մոլորությամբ:

Միաժամանակ՝ սկսեցին գլուխը բարձրացնել բրիտանացիներից մնացած կոռումպացված սովորություններն ու բարքերը: Քաղաքացիական ծառայողների ուժնացված աշխատավարձերը նվազեցնելու եւ սոցիալական բարեկեցության հսկայական ծախսերի հետեւանքով պետական ֆինանսների վրա դրված ճնշումը մեղմելու համար Տունը որոշեց իր 3 25 միլիոն հոնկոնգյան դոլար տարեկան աշխատավարձը կրճատել տասը տոկոսով եւ ասաց, որ մտադիր է պետական հատվածում աշխատավարձերը կրճատել: Այս նախաձեռնությունը լավ չընդունվեց հոնկոնգյան 180 000 քաղաքացիական ծառայողների կողմից: Աշխատավարձերն ու նպաստները բարձրացնելը հեշտ էր, դրանք կրճատելը, մյուս կողմից, ավելի դժվար էր, քան երկինք բարձրանալը:

2001 թվականի հունվարին հատուկ վարչական շրջանի կառավարության գլխավոր քարտուղար Անսոն Չանը հրաժարական տվեց: 2003-ի մարտին ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշը

## Չժան Ցավեն

հարվածեց Հոնկոնգին: 2002-ից 2003 թվականներին LegCo-ն անընդհատ հրաժարվում էր ընդունել Հիմնական օրենքի 23-րդ կետը: Հոնկոնգի բնակիչները դուրս ելան փողոց՝ ցույց տալու, որ դեմ են այդ կետին:

23-րդ կետում սսվում է. Հոնկոնգի հատուկ վարչական շրջանը պետք է ընդունի օրենքներ՝ արգելելու համար Կենտրոնական ժողովրդական կառավարության դեմ պետական դավաճանության, անջատման, խռովություն եւ պառակտում հրահրելու կամ պետական գաղտնիքներ հափշտակելու ցանկացած գործողություն, որպեսզի թույլ չտա արտաքին քաղաքական կազմակերպություններին կամ մարմիններին քաղաքական գործունեություն ծավալել տարածաշրջանում եւ թույլ չտա տարածաշրջանի քաղաքական կազմակերպություններին կամ մարմիններին կապեր հաստատել արտաքին քաղաքական կազմակերպությունների կամ մարմինների հետ:

Քանի՛ քանի անգամ է Տուն Չի-հուան ի սրտե արտահայտվել, ասելով, որ 23-րդ կետի ընդունումը կնշանակեր Հոնկոնգի ժողովրդի եւ նրա կառավարության կողմից Հիմնական օրենքի ամբողջական իրականացումը եւ որ ազգային անվտանգության ապահովումն իրենց սրբազան պարտականությունն է: Դա չափազանց մեծ նշանակություն ուներ ազգային պատվի եւ ազգի հեղինակության համար: Ազգային անվտանգության պաշտպանությունը «Մեկ երկիր, երկու համակարգ» եւ «Հոնկոնգը ղեկավարում են հոնկոնգցիները» սկզբունքների հաջող իրականացման հիմնական նախադրյալն էր: 23-րդ կետի նպատակները ոչ մի դեպքում չէին խախտի քաղաքի բնակիչների իրավունքներն ու ազատությունները: Բայց նույնիսկ այսօր 23-րդ կետը դեռ սպասում է իրագործման:

1997-ի հուլիսի 1-ին Հոնկոնգը մայրցամաքային Չինաստանին վերադարձվելու պահից այն պաշարված էր անախորժություններով՝ եւ՛ ներքին, եւ՛ արտաքին: Տնտեսական արյունահոսություն, քաղաքական պատերազմ... համարյա այնպես էր, ասես հրեշավոր մի դեպի ձեռքեր լինեին, որ նպատակադրվել էին սեղմելով դուրս քամել կյանքը հատուկ վարչական շրջանի կառավարության եւ արդեն վաթսուներկուամյա Տուն Չի-հուայի միջից:

Գուցե կանխորոշված էր, որ Հոնկոնգը՝ հենց նոր իր մորը վերա-

դարձված զավակը, պետք է անցներ չարչարանաց մի ժամանակահատվածի միջով, գուցե երկինքը որոշել էր, որ այդ չարչարանքները կոփելու են Տունի կամքը՝ նրան ուժասպառ անելով:

Բայց սովորական ժամանակները կարող են միայն միջակ արդյունքներ ստեղծել, հերոսներն ի հայտ են գալիս դժվարությունների մեջ:

Կենտրոնական կառավարության աջակցությամբ՝ Տունը կարողացավ տանել հատուկ վարչական շրջանի կառավարությունը մի շարք փորձությունների միջով՝ վճռականորեն դիմակայելով դժվարություններին: 2002 թվականին, հանդիպման ժամանակ, երբ Տունը հայտարարեց, որ կառաջադրվի եւս մեկ ժամկետ, բոլոր հավաքվածները բուռն ծափահարեցին: Միակ մարդը, որ լուռ էր եւ մի կողմ քաշված հեկեկում էր, Տունի կինն էր: Նա տեսել էր իր ամուսնու չարչարանքն ու տառապանքը, տեսել էր, թե ինչպես է նա աշխատում օրը տասնվեց կամ տասնութ ժամ: Տունն ստացել էր «7-11» մականունը (առավոտյան 7-ից երեկոյան 11-ը):

2004 թվականին Հոնկոնգի տնտեսությունն աճեց 7,5%-ով. դա նշան էր, որ նրա տնտեսական դժվարությունները մնացել են ետևում: 2005 թ. մարտի 10-ին Տունը հայտարարեց իր հրաժարականի մասին՝ կենտրոնական կառավարության համաձայնությամբ թողնելով իր պաշտոնը՝ ֆիզիկական պատճառներով:

Երբ մի լրագրող հարցրեց նրան, թե ինչ կուզեր անել պաշտոնաթողությունից հետո, նա ծիծաղեց եւ ասաց, որ պարզապես ուզում է գնալ տուն եւ գիշերը մի լավ քնել:

Որպես առաջին գլխավոր գործադիր, որը պատասխանատու էր Հոնկոնգի վերադարձին հաջորդած «Մեկ երկիր, երկու համակարգ» քաղաքականության իրականացման համար, Տունը մեծ գին էր վճարել պատմությունը կերտելու համար: Նա առաջնորդել էր հատուկ վարչական շրջանի կառավարությունը Ասիայի ֆինանսական ճգնաժամի միջով, բնակարանային շուկայում ստեղծված «պղպջակի պայթյունի» եւ ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշի վիրուսի բռնկման տարիներին: Ի վերջո, կենտրոնական կառավարության աջակցությամբ եւ Հոնկոնգի ժողովրդի պայքարով ու մաքառումով, նրան հաջողվեց Հոնկոնգի տնտեսությունը կրկին դնել վերականգնման, բարգավաճման եւ կայունության ուղու վրա:

## Միլիոնատերերն ունեն արդյոք «Դա Վինչիի ծածկագիր»

Երբ գիշերն իջավ՝ ես մեկ օրվա վրա վարագույր քաշելով, ես դանդաղ քայլում էի Հոնկոնգի փողոցներով: Ձեփյուռը մեղմորեն շոյում էր դեմքս: Նայում էի քաղաքի երկնաքերների առկայծող լույսերին գիշերվա քողի ներքո եւ մտածում՝ այս փողոցիկ վայրում, այս «զնդիկում», ուր յոթ միլիոն մարդ կա, ինչպե՞ս էին հայտնվել այդքան միլիոնատերեր:

2013 թվականին, ամերիկյան «Ֆորբս» ֆինանսական ամսագրի միլիարդատերերի ամենամյա ցանկով, Հոնկոնգն ուներ հիսուն միլիարդատեր՝ ԱՄՆ դոլարով: Ցանկում առաջինը Լի Կա-շինն էր, որը շարունակում էր զբաղեցնել առաջին տեղը՝ ավելի քան երեսուն միլիարդ ԱՄՆ դոլար զուտ արժեքով: Երկրորդը Լի Շաու-կին էր՝ ավելի քան քսան միլիարդ ԱՄՆ դոլարով: Երրորդը Թոմաս Բվոքս ու նրա եղբայր Ռեյմոնդն էին՝ 19,2 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Չորրորդը Չեն Յույ-տունն էր՝ տասնվեց միլիարդ ԱՄՆ դոլար զուտ արժեքով: Հինգերորդ տեղում էր Լուի Չե-վուն՝ 9,5 միլիարդ ԱՄՆ դոլար արժեքով: Վեցերորդը Մայքլ Կադուրին եւ նրա ընտանիքն էին՝ ինը միլիարդ ԱՄՆ դոլարով: Յոթերորդ տեղում Փիթըր Վուն եւ նրա ընտանիքն էին՝ ութ միլիարդ ԱՄՆ դոլարով: Ութերորդ տեղում էր Տոգեֆ Լաուն՝ 7,3 միլիարդ ԱՄՆ դոլար զուտ արժեքով: Իններորդը Վիկտոր եւ Ուիլյամ Ֆանգ եղբայրներն էին՝ վեց միլիարդ դոլար ընդհանուր արժեքով: Եվ տասներորդ տեղում էին Դեն Յաուն ու նրա ընտանիքը՝ հինգ միլիարդ դոլար զուտ արժեքով:

Ո՞րն էր հոնկոնգյան միլիարդատերերի հաջողության գաղտնիքը: Արդյո՞ք նրանք ունեին ինչ-որ խորհրդավոր «Դա Վինչիի ծածկագիր»: Թե՞ Աստված առանձնահատուկ ուշադրության էր արժանացրել նրանց: Որտե՞ղ էին թաքցրել այն ոսկե բանալին, որով բացում էին ֆանտաստիկ հարստության դուռը:

Ես մտածում էի այդ հարցերի շուրջ՝ պատասխաններ փնտրելով:

Երբ մտածում էի Հոնկոնգի հին միլիարդատերերի սերնդի մասին, մտքովս անցնում էր, թե նրանց մեծ մասը հարստության համար չէր ծնվել. նրանք ոտաբոբիկ էին եղել, ցնցոտիներով ու քաղցած: Ոմանք

երիտասարդ հասակում թողել էին դպրոցը, ոմանք էլ վաղ տարիքում կորցրել էին իրենց հայրերին: Մյուսներն ստիպված էին ընտանիքները պահելու համար աշխատել դեռահաս տարիքից:

Ինձ այնպես էր թվում, թե տեսնում եմ վտիտ մարմնակազմով սովորողների մի շքերթ՝ մարդկային ամբոխների մեջ տրորված ու ճզմված: Նրանք դժվարությամբ էին շարժվում՝ հրմշտվելով մյուս անցորդների կողմից: Ընկած տեղից բարձրանում էին՝ դեմքներն արցունքներից թաց, եւ երերալով առաջ շարժվում: Նրանք չէին հանձնվել, թույլ չէին տվել, որ իրենց ընկճեն ու կոտրեն աղքատությունը, քաղցը կամ իրենց ընտանիքի անդամների վաղաժամ մահը: Վերահաս դժվարություններից, կեղություններից ու դժբախտություններից անկախ՝ նրանք բարձր էին պահում իրենց խոնարհ գլուխները՝ հյուժված մարմիններով առաջ շարժվելով կյանքի դժվարին սկզբի խորդուբորդ, տառապալից ճանապարհով:

Հանգուցյալ Հենրի Ֆոքը ծնվել էր մի ընտանիքում, որն ապրում էր նավի վրա: Երբ ծնվեց, նրա ընտանիքն այնքան աղքատ էր, որ նույնիսկ կոշիկ չունեին: Իր երկու ավագ եղբայրները զոհվել էին թայֆունից: Յոթ տարեկան էր, երբ հայրը մահացավ, եւ ընտանիքը միայն կարողացավ հապճեպ թաղել նրան Հոնկոնգի հեռավոր կղզիներից մեկում: Մայրը մեծ դժվարությամբ ու տառապանքով էր կարողանում պահել իր տարաբախտ երեք զավակներին եւ հոգալ հանգուցյալ ամուսնու թողած բեռնափոխադրման գործի մասին: Նա բացարձակապես անգրագետ կին էր, բայց հույս ուներ, որ իր որդիները եւ դուստրերը կդառնան կիրթ ու գրագետ մարդիկ: Ֆոքին ուղարկեցին Հոնկոնգի թագավորական վարժարան՝ բակալավրի կրթություն ստանալու: Որպես աղքատ ընտանիքի զավակ՝ Ֆոքը հասկանում էր, որ սովորելու համար իրեն ուղարկվող գումարը հեշտությամբ չի ձեռք բերվում: Նա առաջատար ուսանող էր: Երբ պատերազմը բռնկվեց խաղաղօվկիանոսյան տարածքում, նա ստիպված էր թողնել ուսումը: Ֆոքն աշխատեց որպես շագենավի հնոցապան, օդանավակայանի բանվոր եւ սովորեց, թե ինչպես լաբորատոր փորձարկումներ իրականացնել շաքարի գործարանի լաբորատորիաներում: Լաբորատորիայում տեղի ունեցած պայթյունի ժամանակ քիչ էր մնում դեմքն այրեր: Հետագայում նա մոր եւ մի քանի գործարար ընկերների հետ մթերային խանութ բացեց: Երբ

## Զժան Յավեն

1945 թվականին պատերազմն ավարտվեց, նրանք խանութը վաճառեցին յոթ հազար հոսկոնգյան դոլարով և գումարը ներդրեցին Ֆոքի հոր հին՝ Նավային բեռնափոխադրման գործի մեջ ու նպատակադրվեցին օգտվել պատերազմից հետո ստեղծված մեծ հնարավորություններից: Հանգամանքները որքան էլ բարդ ու դժվարին՝ Ֆոքը մշտապես հիշում էր մոր հորդորը՝ եղիր ազնիվ և աշխատիր տքնաջան:

Բայց նույնիսկ Ֆոքի դժվարին մանկությունը խամրում էր՝ համեմատած Յան Հին-չիի կյանքի հետ:

Նա միշտ ոտաբոբիկ էր, երբեք կուշտ փորով հաց չէր ուտում, չորս տարեկանում կորցրեց հորը և դպրոցը շուտ թողեց, որպեսզի գյուղում աշխատի: Երբ Յան Հին-չին իր առաջին գործն սկսեց Հոնկոնգում, ընտանիքում վեց ուտող բերան ուներ, որ նեղվածքի մեջ ապրում էին վարձակալած «վանդակ-տանը»: Նա ապավինեց իր կարի մեքենային, մկրատին և դերձակի ժապավեն-մետրին՝ ապրուստի միջոց ապահովելու համար փողկապներ դրոշմահատելով: Փողկապներ պատրաստելուց հետո ստիպված էր շրջել փողոցներով, որպեսզի դրանք վաճառի: Եթե օրական առևձագն հինգ փողկապ չվաճառեր, չէր կարողանա կերակրել տանն իրեն սպասող վեց հոգուն:

Աշխարհի ամենահարուստ չինացի Լի Կա-չինը նույնպես դժվար մանկություն ուներ:

Պատերազմական տարիների քաոսից խուսափելու համար Լիի հայրն ընտանիքը Գուանդուն նահանգի Չաոչժոու քաղաքից տեղափոխեց Հոնկոնգ՝ հորեղբոր տուն: Հոնկոնգ ժամանելուց շատ չանցած՝ հայրը մահացավ: Մահվան մահճում պառկած՝ նա բռնեց Լիի՝ իր ավագ որդու ձեռքը և թախանձագին խնդրեց. «Որդի՛ս, ապավինիր ինքդ քեզ, ոչ թե ուրիշներին: Լավագույնները նրանք են, ովքեր պատրաստ են ամենադժվար աշխատանքը կատարել: Հիասթափվելիս թե՛ աթափ մի՛ եղիր և հպարտությունից մի՛ կորցրու ինքդ քեզ»: Այս խոսքերն ասելով՝ նա ընդմիշտ փակեց աչքերը:

Մորը, երեք քույրերին և եղբայրներին պահելու հոգսն ընկավ տասնչորսամյա Լիի ուսերին: Նա այլ ելք չուներ, քան դպրոցից դուրս գալ և սեփական գործով զբաղվել: Թեյարանում աշխատեց որպես մատուցող՝ օրական տասնհինգ ժամ: Սովորեց ժամացույց նորոգել, աշխատեց որպես երկաթեղեն վաճառող, պլաստիկ ծաղիկների գործա-



րանում բանվոր: Ինչ էլ աներ, հիշում էր մահվան մահճում հոր տված պատվիրանները. «Լավագույնները նրանք են, ովքեր պատրաստ են ամենադժվար աշխատանքը կատարել»:

1948 թվականին Լին, որը նոր էր քսանամյակը բոլորել, նշանակվեց իր ծաղիկների գործարանի ղեկավարի պաշտոնում: 1950-ին քսաներկուամյա Լին բացեց իր սեփական պլաստիկ գործարանը Սաուկեյվանում՝ յոթ հազար հոնկոնգյան դոլարով, որ կարողացել էր հավաքել: Նա գործարանն անվանեց «Չեոնգ Կոնգի պլաստիկ իրերի գործարան» (Չինաստանի ամենաերկար գետի կանտոնյան անվանումով): Նա դարձավ պլաստիկ ծաղիկների գլխավոր մատակարարը Հոնկոնգում՝ վաստակելով «պլաստիկ ծաղիկների արքա» մականունը: Նրա ծեռնարկատիրական գործունեությունը ծաղկեց՝ ունենալով վիթխարի հաջողություն, այն աստիճան, որ առաջարկը չէր կարող բավարարել պահանջարկը, և սկսեցին ի հայտ գալ որակի խնդիրներ: Հաճախորդներն սկսեցին պատվերները վերադարձնել, և գործարանն ընկավ ճգնաժամի մեջ, Լին հայտնվեց սնանկության եզրին: Այդ ժամանակ էր, որ մայրը նրան պատմեց, թե ինչպես էր Կայյուան տաճարի (հայտնի տաճար Ցյուանչժոուում) վարպետը ազնվությունն օգտագործում որպես փորձարկում՝ իրեն փոխարինող ընտրելու համար: Նա որդուն սովորեցրեց, թե որն է դառնալու նրա կյանքի փիլիսոփայությունը. «Գործարարությամբ զբաղվելը նույնն է, ինչ լավ մարդ լինելը: Ազնվությունն ամեն ինչից վեր դասիր, և չի լինի այնպիսի վտանգ, որ չհաղթահարես»: Այդ պահից սկսած՝ ազնվությունը լինելու էր այն ամենի հիմքը, ինչ անում էր Լին, նրան ուղղորդելով դեպի հաջողություն:

Որքան սովորական է Չինաստանի ամենահարուստ մարդու՝ հաջողություն ձեռք բերելու այս պատմությունը, և այդուհանդերձ որքան արտառոց:

Լին տասը դաս ուներ իր որդու համար՝ եղիր աշխատասեր և չափավոր, ճոխություն մի՛ փափագիր. զարգացրու ինքնուրույն ապրելու ունակությունդ. փող վաստակել կարելի է հնարավորությունների հաշվին, բայց հաջողության կարելի է հասնել հեղինակության շնորհիվ. հաջողությանն սպասիր համբերատար. ունեցիր համարձակություն և խորաթափանցություն, բայց ունեցիր նաեւ ծրագիր. երբ ուրիշները նահանջում են, քո հարձակվելու ժամանակն է. հաջողության նախա-

## Չժան Ցավեն

պայմանը հասկանալն է, թե ինչպես մարդկանց լավագույնս օգտագործել. մի՛ սիրահարվիր քո ոչ մի նախագծի. միշտ մտածիր գործընկերներիդ շահերի մասին. ջանասիրաբար մտածիր ապագայի մասին:

Դիքսոն Փունն իր գործերը կարգավորում է՝ «մարդկանց ազնվորեն վերաբերվելով, նրանց հարգանքը նվաճելով առաքինությամբ»:

Երբ Լի Շաու-կին տասնինը տարեկանում տնից հեռացավ, որպեսզի աշխատեր Հոնկոնգում, իր մոտ ընդամենը հազար հոնկոնգյան դոլար կանխիկ փող ուներ: Հիմա, շատ տարիներ անց, արդեն բազմամիլիոնատեր դարձած, նա ասում է. «Հարստությունը եւ իմ հանդեպ կատարված՝ անարդարությունները, երկուսն էլ ինձ համար անցողիկ են, ինչպես չվող ամպերը»:

Բայց յուրաքանչյուր միլիարդատիրոջ՝ դեպի հարստություն տանող պայծառ, հարթ ու կոկիկ ճանապարհը դառն արցունքներ է թաքցնում, որոնք ոչնչով չեն տարբերվում օլիմպիական ոսկե մեդալի ներկայացված մարզիկի քրտինք ու արցունքի գետերից:

Ես պարզել եմ, որ Հոնկոնգի միլիարդատերերից յուրաքանչյուրը,- ի հավելումն խոչընդոտների հաղթահարման համար կենտրոնացված համառ կամքի, դժվարություններն ընդունելու արտառոց պատրաստակամության եւ բացառիկ մտավոր կարողության,- բոլորն էլ տիրապետում են անօրինակ եւ սուր մի ներդրման: Նրանք ի վիճակի են հնարավորություն գտնել իրարանցման եւ ցնցումների ժամանակ եւ տիրապետում են ստրատեգիական որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ բացառիկ քաջության ու խորաթափանցության: Այդ կերպ նրանք կարողացան կուտակել իրենց հարստությունը եւ գերազանցել մրցակիցներին: Այդ երեսույթը չպետք է շփոթել շահարկման տաղանդի հետ. ավելի շուտ, դա հնարավորություններից օգտվելու ունակություն է:

Ինչպես Լի Կա-շինն է ասում. «Երբ փողոցներում արյուն է, այդ ժամանակ պետք է ներդրումներ կատարեք»:

1967 թվականին Մշակութային հեղափոխության «ջարդն ու կողպուտը» մայրցամաքային Չինաստանից հասավ Հոնկոնգ: Միլիարդատերերը Հոնկոնգից նավակներով փախան, եւ հողի գներն անկում ապրեցին: Լին օգտագործեց իր հնարավորությունը՝ հող ձեռք գցելով եւ, ի վերջո, մեծ շահույթ ունեցավ:

2005 թվականին Չինաստանի կենտրոնական կառավարությունը

մակրոտնտեսական ճշգրտման քաղաքականության մի շարք միջոցներ ներդրեց՝ ուղղված անշարժ գույքի շուկային, մայրցամաքային անշարժ գույքի արդյունաբերությունը վատնելու համար: Էին նկատեց եւս մեկ «արյունոտ» հնարավորություն՝ պատեհ առիթից օգտվելով՝ հող գնել Պեկինում, Տյանցզինում եւ Շանհայում: Անշարժ գույքի նրա գնումների եռուզեռը նորից նման էր 1967-ի Հոնկոնգին ու հանգեցրեց հսկայական շահութաբերության եւս մեկ ալիքի:

Մի անգամ, 1990-ականներին, Չեն Յույ-տունը շրջում էր Պեկինի փոքրիկ նրբանցքներով: Նա տեսավ, որ Չունվենի շրջանի փողոցները, Պեկինի հարավ-արեւելքում, հին ու փլուզված էին, եւ տարածքի բնակիչներից շատերը կիսավարտիքներ էին փռել բազմամարդ բակերում: Չեն Յույ-տունը գնաց Պեկինի բարձրագույն ղեկավարության մոտ եւ ասաց, որ Պեկինը մայրաքաղաքն է, եւ այդպիսի քանդված հին տները ստվեր են գցում Չինաստանի վարկի վրա: Ասաց, որ իր կարծիքով, կարող է ինչ-որ բան անել: Նա կարողացավ հողամասեր ձեռք բերել Չունվենի մի քանի շրջաններում՝ մի շարք հսկայական բնակելիներ կառուցելու նախագծեր կյանքի կոչելով, որտեղ կենտրոնացան եւ հիմնավորվեցին անթիվ բնակիչներ: Այդպիսով փոխվեց ամբողջ հարավային Պեկինի դեմքը:

Սա, իրոք, արտառոց եւ արտակարգ գործարարի խելամիտ քայլ էր:

Հոնկոնգցիներն ապավինում էին տքնաջան աշխատանքին եւ իմաստությանը՝ իրենց հարստությունը ստեղծելու համար, ոչ թե Էժան խարդախություններին, խնամիությանը կամ պաշտոնյաների հետ կապերին: Առավել եւս չէին ապավինում «գորշ» եկամուտներին՝ իրենց հարստության եւ հաջողության համար:

Հոնկոնգում պետք է ընդամենը երկու հազար հոնկոնգյան դոլար զրանցման վճար մուծեք համապատասխան ընկերությանը եւ մեկ շաբաթ անց կարող եք գործարարությամբ զբաղվել: Եվ բացի 16,5 տոկոս հարկից, այլ հարկեր չեն լինի, ու ոչ մի գերատեսչության ղեկավար որեւէ պատրվակով ձեզնից զումար չի ուզի շահույթ ստանալու համար:

Հոնկոնգը հարուստ է հնարավորություններով, բայց այն դրախտ չէ գիշերային միլիոնատերերի համար:

Հոնկոնգի ժողովուրդը երկրպագում է Առյուծի ժայռի ոգուն՝ մաքառելով:

## Չժան Յավեն

Լյուն Չուն-ինը մի անգամ մի հողված հրապարակեց «Մին Պաո» թերթում: Նա գրում էր. «Հանգստի համար շատ ժամանակ չունեմ: Իմ երկիրը, իմ Հոնկոնգը, իմ ընտանիքը այնպիսի պայմաններում են, որ չեմ կարողանում ոտքերս գետնից կտրել եւ հանգստանալ: Ես ընդամենը երեսուն տարեկան էի, երբ սկսեցի իմ վերելքը: Ես չէի ապավինում գուանսիին (*ծանոթ-բարեկամական կապեր- ծ. թ.*) կամ ազդեցություն ունեցող մարդկանց: Չէի սպասում, որ տիկին Հաջողությունն ինձ ժպտա: Հույս դրեցի միայն մի քիչ գիտելիքների, մի քիչ հաստատակամության եւ ծանր աշխատանքի մեծ չափաբաժնի վրա»:

Լյունը ծնվել էր աղքատ ընտանիքում: Նրա հայրը սովորական ուստիկան էր: Մայրը երբեք դպրոց չէր գնացել: Մայրն արհեստական ծաղիկներ էր պատրաստում տանը, որպեսզի ընտանիքի համար մի քիչ ավելի գումար վաստակեր: Երեք-չորս տարեկանում Լյունը գրպանը հացի փոքրիկ բոքոն էր դնում եւ գնում նախակրթարան՝ իր հետ տանելով մի փոքր արծնապատ գավաթ, որի մեջ տաք ջուր էր լցնում՝ բոքոնը թաթախելու համար: Երբ տուն էր գալիս, առաջին բանը խոհանոցում կաթսայի կափարիչը բարձրացնելն էր, որպեսզի տեսնի՝ ուտելու բան կա՞րոյոք:

Լյունը ծագումով աղքատ ընտանիքից էր: Նա չէր ապավինում քաղաքական կամ ընտանեկան կապերին, ոչ էլ ուժեղ ֆինանսական աջակցություն ուներ: Հենց այդ պատճառով էլ, տեսնելով Հոնկոնգի ամենաաղքատների այսօրվա դժվարությունները, նա կարողացավ խոսել նրանց ձայնով. «Ինչո՞ւ է կյանքն այդքան ճնշող Հոնկոնգի սոցիալական սանդուղքի ամենաներքեւում գտնվող մարդկանց համար: Պարզապես այն պատճառով, որ նրանք հույս չեն տեսնում: Մեր կառավարությունը օգնի նրանց հասկանալ, որ կան փոփոխությունների հնարավորություններ, պետք է օգնի նրանց հույս տեսնել»:

Լյունին որպես Հոնկոնգի գլխավոր գործադիր ղեկավար ընտրելը՝ ինքնըստինքյան նրա պայքարի արդյունքն էր:

## «Երկուսակցական» ձեռնարկատիրական զույգ

Ես Թայ-Չին Լոյի հետ հարցազրույց վարեցի Չայ Վանի մոտ, Լի Չիուն փողոցի թիվ 34 հասցեում, W. Haking Enterprises նիստերի դահլիճում: 56-ամյա Լոն ուներին թափված երկար մազեր ուներ եւ դեռատի աղջկա նրբագեղ կազմվածք: Նա արագ էր խոսում, ավելի արագ՝ մտածում: Այդ կինը մեծ անձնավորություն էր՝ բնության կողմից օժտված անհոգ բնավորությամբ:

Չակ-Լյուն Թայի հետ նրա սիրո պատմությունը բավականին հետաքրքիր է: Թայը ծնվել էր շարքային քաղաքացիական ծառայողների ընտանիքում: Հայրը թարգմանիչ էր աշխատում Հոնկոնգյան դատարաններում: Նրանց ընտանիքն ազնիվ եւ անհավակնոտ կյանք էր վարում: Թայն ավարտեց տղաների թեմական դպրոցը եւ մեկնեց Միացյալ Նահանգներ՝ համալսարանում սովորելու՝ բակալավրի աստիճան ստանալով Կոլումբիա համալսարանում, իսկ փիլիսոփայության դոկտորի կոչում՝ Միչիգանի համալսարանում: Նա սիրում էր Չինաստանը, սիրում էր կոմունիստական կուսակցությունը եւ համոզված ձախակողմյան էր:

Լոն ծնվել էր Թայվանում: Բակալավրի աստիճան էր ստացել Թայվանի ազգային համալսարանում, իսկ փիլիսոփայության դոկտորի կոչում՝ Իլիոյսի համալսարանում, Շամպեյն Ուրբանայում: Նրա հայրը գեներալ էր Գոմինդանում եւ ներկայացուցիչ էր Թայվանի Ազգային Ժողովում: Լոն մեծացել էր հակակոմունիստական ընտանիքում՝ որպես կայուն աջակողմյան:

Նրանք հրաշալի զույգ էին. մեկը՝ գեղեցիկ մի երիտասարդ, լի ազնիվ իդեալներով եւ հայրենիքի կողմից իրեն ցուցաբերված բարությունը փոխհատուցելու վառ ցանկությամբ, մյուսը՝ լուսավոր գեղեցկության տեր, նրբագեղ ու զրուցասեր, աշխույժ ու զրազետ թայվանցի մի աղջիկ: Այս երկու երիտասարդները, որոնց անձնական նախապատմությունները չէին կարող ավելի տարբեր լինել, լքել էին իրենց տները եւ մեկնել հեռավոր երկրներ: Նրանց առաջին հանդիպումը տեղի ունեցավ փոխադարձ մեղադրանքների բուռն հորձանուտում:

## Զժան Յավեն

Այդ ժամանակ Միացյալ Նահանգներում սովորող՝ Թայվանի եւ Հոնկոնգի ուսանողները նույնքան տարբեր էին, որքան Արեւելքն ու Արեւմուտքը՝ բաժանված երկու ճամբարի: Մեկը ձախակողմյան ճամբարն էր, որն ընդգրկում էր նոր Չինաստանը, մյուսը՝ հակակոմունիստական աջակողմյաններն էին: Երկու ճամբարների՝ իրարից տարբեր հայացքների պատճառով նրանք հաճախ էին բանավիճում եւ գաղափարական ճակատամարտի մեջ հայտնվում միմյանց հետ: Բայց ինչ վերաբերում էր Դյաոյոյ կղզիների ինքնիշխանության հարցին, երկու կողմերը նույն համոզմունքին էին: Այս հարցի շուրջ նրանք կարողացան համաձայնության գալ՝ արտերկրի չին ուսանողների շրջանում ամենավաղ՝ «Փրկենք Դյաոյոյները» շարժման հիմքը դնելով:

1971 թվականի սեպտեմբերի 21-ին Միացյալ Նահանգների չին ուսանողները կազմակերպեցին համատեղ հանրահավաք, որը պայքարում էր Միավորված ազգերի կազմակերպությունում Չինաստանի ժողովրդական Հանրապետության տեղի համար: Նրանք բարձրացրել էին ՉԺՀ-ի դրոշը եւ գոչում էին. «Կեցցե՛ ժողովրդական Հանրապետությունը»: Սառ Ցզեդունի նկարները ձեռքներին՝ նրանք հանդիսավոր երթով շարժվեցին Ամերիկայի փողոցներով: Չակ-Լյուն Թայը «Փրկենք Դյաոյոյները» շարժման հիմնադրամ էր: Ամեն անգամ, երբ երթ կամ բողոք էր լինում, այդ խիզախ երիտասարդը միշտ առաջին շարքերում էր:

Այնպես պատահեց, որ Կուպիդոնի նետը հայտնվեց մայր մտնող արեւի վերջին շողերի հետ՝ փայլելով ռեստորանում սեղանի շուրջ հավաքված կենսախինդ ու ծիծաղկուն աղջիկների հմայիչ խմբի վրա: Թայը դժվարին մի հարց ուղղեց աղջիկներին: Միայն մեկի պատասխանը գոհացրեց նրան: Թայ-Չին Լոն էր դա՝ գեղեցիկ մեծ աչքերով այդ աղջիկը:

Տեսնելով այդ հմայիչ, քնքուշ աղջկան՝ Թայը սիրով համակվեց եւ անմիջապես որոշեց նվաճել նրա սիրտը:

Այս պատմությունը պատմելիս՝ Լոն այստեղ ծիծաղեց. «Ամուսինս իսկապես գործարարությամբ է հետաքրքրված, բայց իմ հարցում չէր կարող սխալվել: Ես քնքուշ եւ գեղեցիկ չեմ: Բայց գիտեմ ինչպես պետք է գործ անել»:

Հենց այդպես էլ ստեղծվեց Գոմինդանի (Չինաստանի ազգայնա-

կան կուսակցության) և Չինաստանի կոմունիստական կուսակցության միջև այդ «երկկուսակցական» դաշինքը, և նրանք երկուսով շատ շուտով իրենց մեղրամիսն էին նշում: Փիլիսոփայության դոկտորների ամուսին-կին «երկկուսակցական» զույգն աներեակայելի հաջողակ դուրս եկավ՝ ընտանեկան ամուր «դաշինքի» հիմքը դնելով: «Կոմունիստասեր» ամուսին Թայ Չակ-Լյունը ներդրումներ կատարելու գործում հմուտ էր և ուներ ստրատեգիական ուժեղ ներքմբռնում: Նրա՝ փիլիսոփայության դոկտոր կինը տքնաջան և փորձառու աշխատող էր, չափազանց պերճախոս, և ամենայն հավանականությամբ՝ անսահման աշխատունակ: Նա օգնում էր ամուսնուն՝ զրոյից սկսել գործարարի իրենց աշխատանքը:

Երբ ԱՄՆ-ում իրենց դոկտորական դիսերտացիան ավարտել էին, Թային հրավիրեցին վերադառնալ Հոնկոնգ՝ պրոֆեսորի պաշտոն զբաղեցնելու Հոնկոնգի գիտության և տեխնիկայի նորաբաց համալսարանում: Դրանից շատ չանցած՝ Լոն թողեց իր աշխատանքը Կալիֆոռնիայում և հետեւեց ամուսնուն՝ գնալով Հոնկոնգ, որպեսզի օգնի նրան սկսելու իր աշխատանքը Հոնկոնգի գիտության և տեխնիկայի համալսարանում:

Այն ժամանակ պրոֆեսորները Հոնկոնգում լավ էին վարձատրվում. նրանց աշխատավարձը գերազանցում էր տարեկան մեկ միլիոն հոնկոնգյան դոլարը, և մեծ հարգանք էին վայելում: Բայց Թայն ավելի մեծ հավակնություններ ուներ: Նա ուզում էր ինքնուրույն բիզնես սկսել: 1985 թվականին, լսելով, որ Չինաստանի պետական խորհուրդը հաստատել է երեք ափամերձ տնտեսական «եռանկյունների» ստեղծումը Մարգարտե (Չժուցզյան), Յանգզի և Մին (Մինցզյան) գետերի դելտաներում, ցնցվեց հանկարծակի նախազգացումից. ահա՛ իր հնարավորությունը: Լսարանն այլևս չէր գրավում նրան:

Թայը դիմեց համալսարանին՝ աշխատանքից հրաժարվելու համար և ցատկեց արդյունաբերության աշխարհը: Նա ներդրումներ կատարեց Գուանդուն նահանգի Դունգուան քաղաքում գտնվող տարածքում կառուցելով չորս հարկանի, քառասուն հազար քառակուսի մետր մակերեսով արտադրամաս: Թայը Հոնկոնգի առաջին ձեռներեցներից էր, որ Դունգուանում ձեռնարկություն բացեց՝ արտադրելով անձնական հիգիենայի էլեկտրոնիկա՝ էլեկտրական ածելիներ, մազեր խուզելու

## Զժան Ցավեն

Էլեկտրական մկրատներ, քթի մազերը կտրելու էլեկտրական մկրատներ եւ կանանց համար էլեկտրական սափրիչներ:

Թայի եւ Լոյի ամուսնական թիմը առաջին տորարարներից էր Մարգարտե գետի դելտայում: Նրանք նաեւ առաջիններից էին, որ քաղեցին իրենց աշխատանքի պտուղները: Նրանց ակնառու անհատական կարողություններին գումարվում էին մայրցամաքային Չինաստանում բարենպաստ քաղաքականությունը եւ Էժան աշխատուժը: Մի քանի դրական ընդմիջումից հետո շատ արագ հսկայական շահույթ ստացան: Ընդամենը երեք տարում նրանք ետ էին բերել Դուստուանում ներդրած իրենց գումարը:

1997-ին, Հոնկոնգի վերադարձից հետո, մայրցամաքի զարգացող կապերը Հոնկոնգի հետ նշանակում էին, որ Թայը եւ Լոն այնպիսի վիճակում էին, ինչպես ծուկը ջրում, եւ հասել էին մեծ հաջողության: Նրանց բիզնեսը ծաղկում էր: 2002 թվականին նրանք ձեռք բերեցին բաժնետոմսերի 51 տոկոս բաժնեմասը «Կոդակ» տեսախցիկների արտադրության ձեռնարկությունում, որն ստեղծվել էր հայտնի հոնկոնգի ձեռներեց Հաքինգ Վոնգի կողմից: Նոր էին սկսել այդ գործով զբաղվել, երբ ընկերության գործերը շրջվեցին դեպի վատը, եւ գործարանում հիվանդության բռնկում եղավ: Մեկ ամսում նրանք կորցրին յոթ միլիոն հոնկոնգյան դոլար:

Բայց քաղաքավարի, բարեկիրթ Թայը խելացի, կամքի ուժ ունեցող անձնավորություն էր եւ հեշտ հանձնվողներից չէր: Նրա կարծիքով՝ տեսախցիկի բիզնեսն անցնում էր «պահակախմբի փոփոխության»։ Ժապավենային տեսախցիկը տեղը զիջում էր թվայինին: Միայն նրա ընկերությունը չէր, որ փող էր կորցնում. «Կոդակն» ինքը փող էր կորցնում, ինչպես տեսախցիկ արտադրող բոլոր խոշոր ընկերությունները: Եթե նրա ընկերությունը փորձեր հաղթել արտասահմանյան խոշոր մրցակիցներին տեխնոլոգիայի ոլորտում, փորձեր գոյատևել առաջնագծում, իրենք հնարավորություն չէին ունենա: Բայց եթե փոխարենը արտադրեին միջին եւ ցածր մակարդակի բարձրորակ թվային արտադրանք, ինչպես, ասենք, թվային ֆոտոխցիկներ, տեսախցիկներ եւ նկարների շրջանակներ, նույնիսկ թվային խցիկներ երեխաների համար,- ապրանքներ, որոնց թիրախային սպառողները միջին եւ ցածր եկամուտ էին ստանում,- այդ դեպքում հեռանկարն ավելի լավատեսական կլիներ:



Ճիշտ ռազմավարությունն ապահովում է բիզնեսի գոյատևումը: Ութ ամսվա ընթացքում ընկերությունը դադարեցրել էր «արյունահոսությունը» և վերստին սկսել էր ապահովել շահութաբերությունը: Նրանց արտադրանքն արագորեն շուկաներ նվաճեց ամբողջ աշխարհում՝ Հյուսիսային Ամերիկայում, Օվկիանիայում, Հարավարևելյան Ասիայում, Եվրոպայում, Աֆրիկայում, Արևմտյան Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, ինչպես նաև մայրցամաքային Չինաստանում և Թայվանում:

Նույնիսկ այսօր, Թայի և Լոյի բիզնեսը շարունակում է մնալ չափազանց հաջողակ: Մի քաղաքում, որտեղ անշարժ գույքի յուրաքանչյուր թիզն իր քաշով ոսկի արժե, նրանք ունեն մի շարք սեփականություններ, իսկ նրանց բիզնեսը շարունակում է առողջ լինել:

Թայը H. Waking Company-ի խորհրդի նախագահն է, իսկ Լոն՝ փոխնախագահը և գլխավոր գործադիր տնօրենը: Երկուսն էլ խորապես նվիրված են մարդասիրական գործին: Թայը Հոնկոնգի չինական արդյունաբերողների ընկերության Ընդհանուր գործերի մշտական հանձնաժողովի նախագահն է, իսկ Լոն՝ Յան Օյ Տոնգ բարեգործական կազմակերպության խորհրդի ղեկավարն էր:

Հանկարծ մտածեցի, որ Թայը և Լոն, որոնց երեւի նախասահմանված էր թշնամիներ լինել, ի վերջո դարձան ամուսնական գեղեցիկ մի գույգ, հաջողակ՝ կյանքում և բիզնեսում: Գուցե երկար ժամանակ չի անցնի, և Թայվանի նեղուցների երկու կողմերը նույնպես կարող են ձեռք ձեռքի տալ, որպեսզի աշխատեն միասին, օգնեն միմյանց՝ իսկական միասնության նոր դարաշրջան կերտելով չին ազգի համար:

## Ծանոթություն Չեն ժանի՝ Լյուն Չուն-Ինի գրասենյակի տնօրենի հետ

Երբ Հոնկոնգում էի, ինձ հաջողվեց հանդիպել ամերիկյան Dechert LLP իրավաբանական ընկերության փաստաբան Վան Յանին, որի միջոցով կարողացա ծանոթանալ Լյուն Չուն-Ինի գրասենյակի գլխավոր գործադիր տնօրեն Չեն ժանի հետ:

Այն ժամանակ, երբ Լյունը դեռևս ստանձնել էր պաշտոնը, Հոնկոնգի հասարակական կարծիքը Չենին անսխառնություններ պատճառեց: Հեռուստատեսային եւ լրագրային հրապարակումներում մեկը մյուսի ետեւից այն փաստի մասին էր խոսվում, որ ևս Հոնկոնգի մշտական բնակիչ չէ, եւ որովհետեւ դեռ երեք ամիս կար, որ ևս յոթ տարի ապրած լինելու Հոնկոնգում, նրան չէր թույլատրվում աշխատել որպես քաղաքացիական ծառայող: Լրատվամիջոցները նաեւ բացահայտել էին, որ ևս մայրցամաքային Չինաստանում եղել է կոմունիստական երիտասարդական լիգայի անդամ: LegCo-ի որոշ անդամներ, գիտնականներ եւ հասարակական այլ գործիչներ առաջ քաշեցին այն միտքը, թե Չենը տեղավորվել էր Լյունին մոտիկ՝ որպես մայրցամաքային խլուրդ, ասելով, որ «երիտասարդական լիգայի կինը ճանապարհ է հարթել դեպի գլխավոր գործադիր իշխանություն», որ ևս դավաճանին հավասար մի բան է, եւ իրավական գործողություն պետք է ձեռնարկվի նրա դեմ:

Ինձ համար այդ ամենը կարծես մեծ աղմուկ էր ոչնչից: Մայրցամաքային մարդիկ բոլորը գիտեն, որ երիտասարդական լիգան նման է պատանի պիոներների՝ իրենց կարմիր վզկապներով. տասնչորսից քսանութ տարեկան յուրաքանչյուր ոք կարող է դիմել եւ անդամագրվել:

Ինձ համար հետաքրքիր էր, թե արդյո՞ք Չենը, հսկայական ճնշման տակ Հոնկոնգում ինքնուրույն պայքարող մի կին, կարող էր խղճալ ինքն իրեն: Կարո՞ղ էր թողնել եւ փախչել այդտեղից:

Երբ նստած էի Tsui Hang Village ռեստորանում, տեսա սահուն քայլերով դեպի ինձ եկող՝ սեւ զգեստով մի աղջկա: Մենք իրար ձեռք սեղ-

մեցինք եւ գրկախառնվեցինք: Իմ առջեւ պայծառ, արեւաշող երիտասարդ մի կին էր: Չենը բարձրահասակ էր, բնական գեղեցկությամբ, դեմքին լայն ժպիտ էր փայլում: Նա մանկության թարմ անմեղություն էր ճառագում: Մռայլության կամ իրեն հեռու պահելու ոչ մի նշույլ չէր ցուցաբերում, բաներ, որոնք վախենում էի, թե կտեսնեմ:

Արդեն իրիկնանում էր, եւ ռեստորանի ներսում լույսը թույլ էր: Բայց իմ հարցազրույցը, ինչպես համոզվեցի, դեռ լի էր արեւի լույսով:

Պատմությունը, որը Չենն ինձ պատմեց, ճիշտ այնպես, ինչպես նրա պայծառ երիտասարդությունը, հագեցած էր կենսունակությամբ եւ դիւնամիզմով: Դա մեկուկես ժամի մեջ «փաթեթավորված» պատմություն էր քսանվեցամյա շանհայցի մի աղջկա մասին՝ պատմված անուշաբույր քրիզանթեմի թեյ խմելիս:

Չենի հայրը քաղաքացիական ծառայող էր, մայրը՝ գործարար կին: Նրա պատանեկությունը լույսով էր լի եւ շողում էր նոր ծագող արեւի պայծառ ճառագայթների պես: Նա երազել էր լինել դիվանագետ, հեռուստահաղորդավար կամ լրագրող: Չենի բնատուր խելքը եւ դպրոցում աշխատելու ու պարելու շնորհքը տարավ նրան Շանհայի համաշխարհային օտար լեզուների միջնակարգ դպրոց, որտեղից նա իր բախտը փորձեց Ցինհուայի համալսարանի ժուռնալիստիկայի եւ հաղորդակցության դպրոցում: Այնտեղ ընդամենը մեկ տարի սովորելուց հետո արժանացավ Հոնկոնգի համալսարանի ժուռնալիստիկայի եւ լրատվամիջոցների ուսումնասիրությունների կենտրոնի լիարժեք կրթաթոշակի՝ հետագայում սովորելով համալսարանի ասպիրանտուրայում:

Հոնկոնգում սովորած ժամանակ նրա համար ուսանելի երկու շրջան կար:

Առաջինն այն ժամանակ էր, երբ լրագրող էր սովորում Հոնկոնգի համալսարանում: Ծրագրում օգտագործվում էին Հարվարդի համալսարանի դասավանդման նյութեր եւ աշխատանքում ընդգրկված էին մի շարք բարձրորակ արտասահմանյան մասնագետներ: Ծրագիրը նախատեսված էր ուսանողներին խրախուսելու եւ ոգեշնչելու, որ գործեն իրենց անձնական նախաձեռնությամբ:

Երկրորդն այն ժամանակ էր, երբ համալսարանի երկրորդ կուրսում

## Զժան Յավեն

Եր, երբ մի կիսամյակ անցկացրեց՝ սովորելով Միացյալ Նահանգների Իթակա քոլեջում եւ Քորնելի համալսարանում: Հասկացավ, որ այնտեղի գիտական միջավայրն ավելի շատ անկախություն է թույլ տալիս, քան Հոնկոնգում: Կարող էր զգալ իր համակուրսեցի ուսանողների ամերիկյան երազանքները: Ամերիկացի իր վեց դասընկերների հետ, Էմմի մրցանակակիր ուսուցչի հսկողությամբ, նա մի աչքի ընկնող վավերագրական ֆիլմ նկարահանեց՝ նվիրված աբորտի դեմ պայքարի իրավական պայքարին:

Այդ ժամանակ Հարավային Դակոտայում ընդունված՝ աբորտների մասին օրենքները վիճահարույց խնդիր էին դարձել ամերիկյան միջնաժամկետ ընտրություններում: Յոթ ուսանողներ լցվեցին մեքենայի մեջ եւ քսանչորս ժամ մեքենան վարեցին ԱՄՆ հյուսիս-արեւելքից ուղիղ դեպի Հարավային Դակոտա: Նրանք անցան Ամերիկայի միջին արեւմուտքի մի քանի առավել աղքատ վայրերով, որտեղ նկարահանեցին ֆեմինիստների բողոքները, ինչպես նաեւ կրոնական ծայրահեղականների արմատական պահվածքը եւ աբորտի վերաբերյալ կառավարական թեկնածուի կողմից ընդունված դիրքորոշումը: Բողոքի երթեր նկարահանեցին համալսարանների տարածքներում, քաղաքների փողոցներում եւ թաղամասերում: Արտադրության ուղիով արագացնելու համար նա եւ մեկ այլ աղջիկ աշխատեցին երեք օր շարունակ՝ գիշերն արագ վերադառնալով համալսարանի տարածք: Նրանց մեքենան սլախում էր ամերիկյան կենտրոնական շրջանի անձայրածիր, վայրի տափաստանով: Կեսգիշերին կանգ էին առնում հանգստանալու եւ մի քանի վայրկյան աչք փակելու համար: Մեռյալ լուծության մեջ նրանք զգոն էին եւ արթուն: Անկյանք, ձյութի պես սեւ խավարն ասես իր մեջ մի տեսակ անսահման սարսափ էր պահում: Չենը գիտեր, որ ինքը ճիշտ ուղու վրա է: Չենի համար՝ փորձն ավելին տվեց, քան պարզապես իր ուսուցչի գովեստին արժանացած վավերագրական ֆիլմը: Նա դրանից սովորեց նաեւ կյանքի համար անհրաժեշտ ինքնատիրապետում եւ հաստատակամություն: Միաժամանակ զգաց եւ ճաշակեց ամերիկացի ուսանողների պատրաստակամությունը՝ կասկածի ենթարկել ու մարտահրավեր նետել իշխանությանը, ինչպես նաեւ ուսման հանդեպ ունեցած նրանց ստեղծագործական, քննախույզ մոտեցումը:

2008 թվականին, երբ Չեն ժանն ավարտեց բակալավրիատը, South China Morning Post-ը եւ շատ այլ լրագրեր ցանկանում էին վարձել նրան: Նա, սակայն, ընդունվել էր նաեւ Հոնկոնգի համալսարանի ավարտական մագիստրատուրա: Այդ ժամանակ Լյուն Չուն-ինն իր պաշտոնական բիզնեսի համար օգնական էր որոնում: Ինչ-որ մեկը Չենին խորհուրդ տվեց ստանձնել այդ գործը: Չենն այդ պաշտոնն ստանձնեց ամենայն ջանասիրությամբ՝ ամբողջ ժամանակ տքնաջան աշխատելով, միաժամանակ տքնելով ֆինանսների գծով իր մագիստրոսական աշխատանքի վրա: Նա տեղեկացավ, որ Լյունն ակնառու առաջնորդ է՝ առաքելության այն հազվագյուտ զգացողությամբ, որ պետք է ունենան հաջողակ մարդիկ: Այսպիսով, երբ ավարտեց իր ֆինանսական ծրագիրը, փոխանակ աշխատելու օտարերկրյա բանկում՝ իր ներկայիս աշխատավարձից անհամեմատ բարձր աշխատավարձով, որոշեց մնալ Լյունի հիմնարկությունում: Այդտեղ, չորս տարվա ընթացքում, նա ոչ միայն սովորեց, թե ինչպես պիտի աշխատի եւ ինչպես պիտի վարվի, այլ նաեւ ամենայն մանրամասնությամբ ճանաչեց ու հասկացավ Հոնկոնգը եւ աշխատեց մի շարք նախագծերի վրա, որոնք շահավետ եղան տարածքի համար:

Ձարմանալի չէր, որ նա իրեն զգում էր ինչպես տանը:

Երբ մեր զրույցի ընթացքում շոշափվեց իր հետ կապված հասարակական աղմուկի հարցը, Չենի դեմքին ժպիտ հայտնվեց: Նրա վերաբերմունքն անկողմնակալ էր, նույնիսկ ներողամիտ: Ասաց, որ չնայած զգում էր, որ իր հանդեպ անարդար են, բայց չէր կարող դժգոհել: Նա այդ հարվածը դիտում էր որպես մարդ աճելու արժեքավոր հնարավորություն:

Լրատվամիջոցների հարձակումները կոփեցին Չենին, ստիպեցին նրան պարել փշրվող ալիքի կատարին: Նա ասաց, որ ինքը միայն «Լյունին օգնող մարդկանց խմբի» անդամ էր եւ կենտրոնացած էր սեփական գործը լավ կատարելու վրա: Եվ հույս հայտնեց, որ իր շուրջ եղած հակասությունները բացասական չեն ազդի Լյունի աշխատանքի վրա:

Երբ բաժանվում էինք, խոստացանք, որ իրար հետ կապ կպահպանենք:

Չժան Յավեն

2013 թվականի հունվարին ես կրկին տեսա Չեն ժանին՝ Հոնկոնգում գտնվող Cyberport բարձրահարկ շենքի հյուրասենյակում: Կրկին կիսաշրջազգեստ էր հագել, եւ կրկին թարմություն էր բխում նրանից, ամբողջովին ժպիտ էր, երիտասարդությամբ լի, եւ նման էր գարնանային գեփյուռի: Այդ ժամանակ արդեն Լյունի մոտ չէր աշխատում, թողել էր քաղաքացիական ծառայությունը եւ աշխատում էր որպես նախագահի օգնական մասնավոր ընկերությունում:

Նայեցինք արեւի տակ առկայծող ծովի կողմը: Մեր գրույցը բավականին երկար տեւեց եւ բավականին տարողունակ էր ու խորքային: Խոսեցինք կյանքի մասին, ապագայի մասին, սիրո մասին: Դա նման էր բարեկամի հետ գրույցի: Ես ասացի նրան. «Փոքրիկ ժան, դու նշանավոր երիտասարդ կին ես: Ինչ էլ որ անես, գիտեմ՝ հաջողության կհասնես»:

Նա գլխով արեց եւ ծիծաղեց. «Ես էլ գիտեմ»:

## Դրախտ՝ պայքարողների, դժոխք՝ պարտվողների համար

Հոնկոնգը հնարավորությունների երկիր է՝ եւ՛ շատ փոքր աշխատելու, եւ՛ վերջին շապիկը կորցնելու երկիր:

Իմ հարցազրույցների ժամանակ լսում էի մայրցամաքային ներդրողների բազմաթիվ պատմություններ. նրանք պատմում էին, թե ինչպես են կորցրել իրենց կյանքի խնայողությունները:

1985 թվականին, չին-բրիտանական համատեղ հոշակագրի հրապարակումից հետո, մայրցամաքային Չինաստանում հիմնվեցին Հոնկոնգի Bank of China («Չինաստանի բանկ»), Merchants Bank («Առեւտրականների բանկ»), China Resources («Չինաստանի ռեսուրսներ») եւ մի շարք այլ բանկերի մասնաճյուղեր: Դրա համար քաղաքական պատճառ կար. մտավախությունն այն էր, որ մայրցամաքային Չինաստանին Հոնկոնգի վերադառնալուց հետո հոնկոնգի գործարարները

հսկայական քանակությամբ կապիտալ կտեղափոխեն օֆշորային գոտի՝ տարածքը լքելով ֆինանսական դատարկ խեցու պես: Դա կանխելու համար մի շարք խոշոր պետական ձեռնարկություններ Հոնկոնգում հաստատություն հիմնեցին՝ հետագա տնտեսական կայունությունն ապահովելու համար:

Ամբողջ Չինաստանի նահանգային եւ քաղաքային մարմիններում տարածվեց այն միտքը, թե Հոնկոնգը ոսկու հանք է: Բոլորն իրենց մարդկանց ուղարկեցին ընկերություններ գրանցելու եւ «հանքարդյունաբերություն» սկսելու համար: Մարդկանց մեծամասնությունը, որ ուղարկվում էր այդ ընկերությունները ղեկավարելու համար, կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ բարձր պաշտոնյաներն էին, ովքեր ձեռներեցի փորձ չունեին, չէին կարողանում խոսել անգլերեն կամ կանտոնյան բարբառով եւ ովքեր շտապում էին հաջողության հասնել: Հոնկոնգի լավագույն խարդախներն ընկնում էին նրանց հետքի վրա, ինչպես գրիզի արջերն են ջրի մեջ որսում գետի հոսանքով վեր շարժվող սաղմոնածկներին: Նրանք իրենց երախները լայն բացած՝ սպասում էին, թե մայրցամաքային ընկերությունները երբ են սկսելու ներդրումներ կատարել:

Հոնկոնգյան խելացի խարդախներն օգտագործում էին ամեն մի հնարք, ներառյալ գայթակղությունները, մայրցամաքային ընկերություններից հսկայական գումարներ լցնելու համար իրենց գրպանները: Եթե ուզեիք դատի տալ նրանց, բախտներդ չէր բերի: Սրիկաները հոնկոնգյան օրենքը գիտեին ծայրեծայր եւ ամեն բան կարգավորած էին լինում: Եթե նրանց դատի տայիք, ոչինչ չէր ստացվի: Իրավաբանական փաստաթղթերից մինչեւ դատական ընթացակարգեր՝ ամեն ինչ անգլերեն լեզվով էր լինելու: Նույնիսկ դատավորներն էին անգլիացիներ, իսկ թարգմանիչներ վարձելն էժան չէր: Նույնիսկ եթե մայրցամաքային ղեկավարները ամբողջ մի կարողություն ծախսեին հայցի վրա, ամեն ինչ կարող էր ավելի վատ ավարտվել, քան սկսվել էր:

Գլխավոր տնօրեններից մեկը, միջին օղակի մի աշխատակից հյուսիսային Չինաստանից, մինչեւ ականջները սիրահարվեց գեղեցիկ, երիտասարդ մի կնոջ, որի հետ գինի էր խմում խնջույքի ժամանակ: Մի

## Զժան Յավեն

քանի օր անց նա արդեն այդ կնոջ ձեռքում էր: Որոշ ժամանակ հետո մի տեսանյութ հայտնվեց այդ մարդու գրասեղանին, որ մահու չափ ահաբեկեց նրան: Նա անմիջապես սպիտակ դրոշ պարզեց: Դրանից շատ չանցած՝ ընկերության հաշվից մի քանի միլիոն ամերիկյան դոլար հոսեց դեպի հոնկոնգցի գործարարի գրպանը:

Մայրցամաքից եկած մեկ այլ ղեկավար հենց միայն իր ազնվության պատճառով հայտնվեց դժվարին դրության մեջ: Դյուրահավատ լինելով՝ նա կարծում էր, թե բոլորն էլ իր նման են՝ միմյանց հանդեպ բարի եւ ազնիվ: Նա ֆինանսներից կամ բիզնեսից ոչինչ չէր հասկանում, դրա համար էլ այնպես արեց, ինչպես իրեն խնդրեց հոնկոնգցի ձեռնարեց իր գործընկերը. հաշվարկաթուղթ ստացավ եւ յոթ, ութ անգամ կանխիկ գումարի վերածեց, այնքան, որ գլխապտույտ ունեցավ: Մինչ կսթափվեր եւ կպարզեր, թե ինչ է պատահել, ավելի քան տասը միլիոն ԱՄՆ դոլար իր ընկերության հաշվից հոսեց հոնկոնգցի գործարարի գրպանը: Նա այնքան կատաղած էր, որ անընդհատ զարկում էր ճակատին՝ կրկնելով. «Ի՞նչ է կատարվում այստեղ, գորհըդ տանի»:

Եվս մեկ մայրցամաքային ղեկավար հայտնվեց էլ ավելի վատ վիճակում: Հոնկոնգցի մի գործարար նրան Նիդեռլանդներ տարավ խնջույքի: Նրանք այցելեցին կարմիր լապտերների թաղամաս, որտեղ հոնկոնգցի գործարարը մայրցամաքային չինացուն ասաց, որ վերջինս կարիք ունի իր հորիզոններն ընդլայնելու՝ իր ցանկությամբ ընտրելով սպիտակ կնոջ եւ փորձելով մի քիչ «օտար միս» ճաշակել: Հոնկոնգ վերադառնալուց հետո նա մի տեսագրություն ստացավ՝ սպառնալիքով. մայրցամաքային ղեկավարը պետք է քսան միլիոն ԱՄՆ դոլար փոխանցեր հոնկոնգցի գործարարի հաշվին՝ համատեղ ներդրումային ծրագրի անվան տակ: Գործարարը մի փոքրիկ գումար նետեց ղեկավարին՝ ասելով, որ կօգնի նրան ներգաղթել աֆրիկյան մի երկիր եւ ԱՄՆ դոլարների մի տոքակ կտա: Դեկավարը կարող էր միայն լքել իր կնոջն ու երեխաներին եւ հեռանալ ամոթը սրտում:

Էլ ավելի շատ էին այն ղեկավարները, որոնք չէին կարողանում դիմակայել խաղատների գայթակողությանը եւ ի վերջո կորցնում էին ամեն բան: Նրանցից ոմանք իրենց վերջին շապիկն էին կորցնում Մա-



կառնի շքեղ խաղատներում: Ոմանք կորցնում էին հարյուր միլիոն կամ ավելին, եւ մայրցամաքային օրենսդրությամբ կյանքով պատասխան տալիս: Մայրցամաքային շատ ընկերություններ էին ներդրումներ կատարում Հոնկոնգում: Շատերն էին գումար կորցնում, բայց կային նաեւ այնպիսիք, որոնք աճ էին նկատում՝ դառնալով Հոնկոնգի գործարար կյանքի անբաժանելի մասը: Որոշ հաջողություններ ունեցան «CTS Hong Kong», «China Overseas Land and Investment» եւ «Shanghai Industrial Investments» ընկերությունները:

Իհարկե, մայրցամաքային ոչ բոլոր ներդրողներն էին Հոնկոնգում ձերբակալվում, կամ կորցնում իրենց վերջին շապիկը: Պատմության այս որոշակի հատվածում լավն ու վատը միախառնված են, պատմության մեծ ալիքները վեր են հանում օվկիանոսի եւ՝ աղբը, եւ՝ հարստությունը:

Երբ խորհում եմ, թե ինչպես կարող էր Հոնկոնգը, փոստային նամականիշի չափ մի բուռ հողամասում խցկված իր յոթ միլիոն բնակչությամբ, այդքան շատ միլիարդատերեր տալ, տեսնում եմ, որ, - բացի ձգտման ու մաքառումի ոգուց, որ իրենք հոնկոնգցիներն էին ավանդել, եւ բացի մայրցամաքային Չինաստանում բարեփոխումների ու բաց քաղաքականության երեսուն տարիների ընթացքում առաջացած զարգացման հնարավորությունների ընձեռած՝ Հոնկոնգի համար ստացվող հսկայական տնտեսական օգուտներից, եւ բացի 1,3 միլիարդ մարդու պահանջարկից,- մեկ այլ պատճառ էլ կար. Արեւմուտքի կողմից Հոնկոնգ բերված օրենքի գերակայությունը եւ արդար մրցակցության ոգին բերրի հող էին գտել: Հոնկոնգի քաղաքացիները կարող են լիարժեք դրսևորել իրենց ունակություններն ու իմաստությունը ազատ եւ արդար հասարակության մեջ եւ արժանի հատուցում ստանալ իրենց օրինապահ աշխատանքին:

Այսօրվա Հոնկոնգն ունի առավելություններ, որոնց հետ մյուս վայրերը պարզապես չեն կարող մրցակցել: «Մեկ երկիր, երկու համակարգ» քաղաքականության շնորհիվ՝ այն մայրցամաքային երկրի կողմից արտոնյալ վերաբերմունք է վայելում, ունի ազնիվ, որակյալ պաշտոնյաներ եւ առողջ իրավական միջավայր: Ամենակարեւորը՝ դիմա-

Չժան Յավեն

Կայում է աշխարհին, բայց իր թիկունքում ունի հսկայական մայրցամաքային շուկան:

Այդպիսի ուժեղ կողմերն իսկապես հազվադեպ են:

Հոնկոնգն, անկասկած, դրախտ է պայքարողների համար:

ԳԼՈՒԽ 4

ԼՈՒՌ ՍԵՐ, ՄԱՔՈՒՐ ԶԳԱՑՍՈՒՆՔՆԵՐ

**Ցան Հին-չին ինձ ստիպեց արտասվել**

Այստեղ գալուցս առաջ իմ պատկերացրած Հոնկոնգը կապիտալիստական հասարակություն էր: Նրա բնակիչները սառն ու անտարբեր էին միմյանց նկատմամբ, միշտ երթեւեկի մեջ էին եւ գործերով զբաղված՝ հարստությունը վեր դասելով առաքինությունից: Դա մի վայր էր, որտեղ «աղքատների ոսկորները սառչում են, իսկ հարուստներն ագահաբար միս են խժռում եւ գիսի կոնծում»: Իհարկե, իրականում Հոնկոնգում երբեք այդքան ցուրտ չի լինում, որ որեւէ մեկը սառչելուց մեռնի:

Հոնկոնգցի ավագ լրագրողներից մեկն ինձ ասաց. «Մի կես տարի այստեղ անցկացրեք, եւ կսիրահարվեք այս վայրին»:

Ես տարակուսած էի. ի՞նչ կար Հոնկոնգում սիրելու: Փոքրիկ մի վայր, ուր բոլորը փակված են վանդակներում: Գլուխդ բարձրացրու՝ եւ չես կարողանա տեսնել երկինքը, շենքերը կփակեն տեսադաշտդ: Վայրի ձիերը չէին կարող ինձ ստիպել այստեղ մնալ:

Բայց քանի իմ հարցազրույցները շարունակվում էին, Հոնկոնգը հանում էր իր արտաքին փայլուն վերնահագուստը եւ ի ցույց դնում զարմանալի մի գեղեցկություն՝ ստիպելով ինձ ամաչել իմ նախորդ անտեղյակությունից:

Հենց այդ առավոտ հարցազրույց ունեցա Goldlion (Far East) Limited-ի՝ «Ոսկե առյուծ» (Հեռավոր Արեւելք) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության խորհրդի նախագահի հետ: Երբ արդեն պետք է սեղմեի Ցան Հին-չին ձեռքը, նա մանդարինի բարբառով մի նախադասություն արտաբերեց գուանդունյան ծանր հնչերանգով, որն ինձ ստիպեց արտասվել:

«Ներեցեք, բայց չեմ կարող կանգնել եւ սեղմել Ձեր ձեռքը: Ես երկամյա հիվանդություն ունեմ, տասնյոթ տարի դիալիզ եմ ընդունում, դրա համար էլ չեմ կարող կանգնել: Ձեռքերս այլեւս այնքան ուժեղ չեն, որ գրիչ բռնեն: Նախկինում գեղեցիկ ձեռագրով գրում էի, բայց ոչ հի-

## Չժան Ցավեն

մա: Փոխպատվաստումը չօգնեց: Ես շատ անգամ եմ մահվան շեմին եղել: Այն, որ պարզապես կարող եմ լինել այստեղ, որպեսզի խոսեմ Ձեզ հետ, երկնային պարգեւ է»:

Երբեք մտքովս չէր անցել, որ այդ գործարարը, որը մասնակցել էր տարերային աղետներից տուժածների, կրթական ծրագրերի, օլիմպիական խաղերի եւ տիեզերական թռիչքների համար կատարված բարեգործական նվիրատվության այդքան շատ արարողությունների, կարող էր այդպիսի թույլ ու փխրուն մարմին ունենալ: Դա հեռու էր այն լուսաշող հերոսական, ամուր եւ առողջ տպավորությունից, որ նա թողել էր այլոց վրա: Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչու Աստված կարող է այդքան դաժան, այդքան անողորմ լինել այդպիսի ողորմած ու գթասիրտ ծերունու հանդեպ, մի մարդու, որն օգնել է անհամար ուրիշ մարդկանց:

Սիրտս հարգանքով, հիացմունքով լցվեց այդ մարդու հանդեպ, որն ամբողջովին լի էր իր երկրի եւ ժողովրդի կողմից իրեն արված բարությունը հատուցելու ցանկությամբ: Ցանը Հոնկոնգի հարուստներից ամենահարուստը չէր, բայց, անշուշտ, ամենահին եւ ամենաառատածեռն բարերարներից մեկն էր մայրցամաքային Չինաստանին արած իր բարեգործական նվիրատվություններով: Ոչ լրիվ հաշվարկով՝ երեսուներորս տարում՝ 1978-ից մինչեւ 2012 թվականը, նա մայրցամաքային Չինաստանում եւ Հոնկոնգում ավելի քան հազար նվիրատվություն է կատարել՝ ավելի քան մեկ միլիարդ յուանի չափով: Նա իր անունով ստեղծել է երեք առանձին հիմնադրամ՝ կրթական, դեկավարվող տիեզերական սարքավորումների թռիչքների եւ աթլետիկայի: Նույնիսկ այն բանից հետո, երբ երիկամներն սկսեցին շարքից դուրս գալ, եւ նա սկսեց տասնյոթ տարի շարունակ ամեն շաբաթ բազմիցս դիալիզային բուժումներ ընդունել, մայրցամաքային Չինաստանին արված նրա նվիրատվությունները չդադարեցին:

2009 թվականին հաջորդած տարիներին նա ընդհանուր առմամբ քսանմեկ միլիոն հոնկոնգյան դոլար նվիրաբերեց Ուհանի համալսարանին, Հուացյաոյի համալսարանին, Նինսյայի կրթական համակարգին, Ցզյաինի համալսարանին, Մեյչժոու Ֆուդայի Ցան Հին-չիի կենտրոնի տարրական դպրոցին, Մեյչժոուի Ցան Հին-չիի միջնակարգ դպրոցին, Ցզյաոյինի միջնակարգ դպրոցին: Պեկինի ջրային ազգային

կենտրոնին ևս սվիրաբերեց քսան միլիոն յուան, քսանհինգերորդ, քսանվեցերորդ և քսանյոթերորդ օլիմպիական խաղերի չինական չեմպիոններին՝ ընդհանուր առմամբ մոտ քսան միլիոն յուան: 2008 թվականին՝ ղեկավարվող տիեզերական սարքավորումների թռիչքների նրա հիմնադրամը տասնհինգ միլիոն յուան մրցանակ տվեց հաջողությամբ ղեկավարված տիեզերական թռիչքի համար: 2012 թվականի օգոստոսի 23-ին Ցանին անվասայլակով բերեցին ժողովրդի մեծ դահլիճ, որտեղ ևս մասնակցեց 2012 թվականի Լոնդոնի օլիմպիական խաղերի չեմպիոններին 25,2 միլիոն հոնկոնգյան դոլար սվիրաբերելու արարողությանը:

Այս հսկայական գումարներից յուրաքանչյուրը խոսում էր հաջողակ գործարարի մաքուր սրտի մասին, ինչպես նաև աղքատ ընտանիքի երեխայի պարզ, անկեղծ,- համարյա հիմարության աստիճանի լուրջ,- ցանկության մասին՝ փոխհատուցել աշխարհի կողմից իրեն ցուցաբերված բարության դրսևորումները: Մայրցամաքում բոլորը գիտեն Goldlion (Ոսկե առյուծ) գոտիների մասին և գիտեն, որ Ցան Հին-չին հոնկոնգյան հարուստ մագնատ է: Բայց շատերը չգիտեն, թե ինչերի միջով է ևս անցել, և չգիտեն սեփական հայրենիքին ու ժողովրդին վարձահատույց լինելու նրա վճռական ցանկության մասին:

Ես նրան հարցրի. «Պարոն Ցան, ինչպե՞ս եղավ, որ Ձեր երիկամների հետ կապված այդպիսի լուրջ խնդիրներ առաջացան»:

«Հա՛... Երբ երիտասարդ էի, ամեն ինչ շատ դժվար էր: Ես չափազանց շատ աշխատեցի: Սպառեցի ինքս ինձ»:

Խոր հոգոց հանելով՝ պարոն Ցանն իր սիրտը բացեց իմ առջե: Ես ինձ պատմեց հոնկոնգի հարուստ և հզոր մի սերնդի ծանր կյանքի պատմությունը, քանի որ նրա պատմությունն այդքան շատ մարդկանց պատմությունն ընդհանրացնող միկրոկոսմոս էր:

Ցանը Ցզենցզիի\* շառավիղներից է, նրա տոհմաձառի յոթանասունչորսերորդ սերունդը: 1934 թվականի փետրվարի 2-ին, աղքատության ճիրաններում հայտնված ընտանիքում է ծնվել Ցանը, Գուանդուն նահանգի Մեյսյան գյուղում: Ընտանիքի անդամներից մի քանիսն արտագաղթել էին՝ աղքատությունից խուսափելու համար:

\* Հայտնի կոնֆուցիական փիլիսոփա:

## Չժան Ցավեն

Մանկության մասին ունեցած նրա ամենաազդու հիշողությունը քաղցն է, այն, որ երբեք կուշտ չի եղել: Նա ամբողջ տարին ոտաբոբիկ էր ման գալիս, երբեք կոշիկներ չէր հագնում: Երբ չորս տարեկան էր, հայրը մահացավ՝ մորը թողնելով վշտաբեկ ու անսփոփ: Մայրը տղային եւ նրա եղբայրներին հետը տանում էր դաշտեր, որտեղ աշխատում էր լուսաբացից մինչեւ մայրամուտ: Աղքատությունն սովերի պես հետետում էր նրանց: Ընտանիքը նույնիսկ վարսակի ջրիկ շիլա ուտելու հնարավորություն չուներ: Բայց Ցանի մանկության ամենադառն հիշողությունը քաղցի հետ չէր կապված. դա կապված էր դպրոցից դուրս մնալու հետ:

Երբ ավարտեց տարրական դպրոցը, ուսումը կիսատ թողեց, քանի որ այլ ընտրություն չուներ: Փախավ գյուղի ամառի մի տարածք եւ աղեկտուր լաց եղավ: Այն ժամանակ դեռ պատանի էր, բայց արդեն չափազանց շատ էր աշխատել հողագործի բրիչը ձեռքին: Ձեռքերն ամբողջովին կոշտուկներով էին ծածկված: Բայց գիտելիք ձեռք բերելու ցանկությունը բոցի պես այրում էր նրան: Պատանու հոգու խորքում արտառոց մի ցանկություն էր բուն դրել. երբ կարող էր վերադառնալ դպրոց, ինչպես մյուս ընտանիքների երեխաները:

Նոր Չինաստանի հիմնադրումից հետո նրա կյանքում վերջապես տեղի ունեցավ երկար սպասված շրջադարձը: Նրա տուն եկան կառավարության հողային բարեփոխումների ծրագիրն իրականացնող երկու աշխատակից: Տեսնելով, որ նա սիրում է սովորել, հարցրին. «Ուզո՞ւմ ես դպրոց գնալ»:

«Այո»:

Տասնութ տարեկանում նրան ուղարկեցին հայտնի Մեյսյան Դունշան միջնակարգը (Meixian Dongshan Junior High), այնպիսի լուսավոր մարդկանց ավա մատերը, ինչպիսիք են՝ Մարշալ Ե Ցյանյինը, գեներալ Սյաո Սյանժունը եւ Չինաստանի Գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Ցզեն Ին: Կառավարությունը նրան ամեն ամիս երեք յուան կրթաթոշակ էր տալիս՝ իրականություն դարձնելով դպրոց հաճախելու մասին նրա մանկության երազանքը: Դպրոց վերադառնալու հնարավորություն ստանալը վերաճնվելու պես մի բան էր: Նա ամբողջովին օգտագործեց այդ մեծ հնարավորությունը՝ ավագ դպրոցն ավարտելով ամենաբարձր գնահատականներով եւ հաղթող ճանաչ-

վեց՝ ընդունվելով Չժունշանի համալսարանի կենսաբանության բաժին, որտեղ դառնալու էր դպրոցի հպարտությունը: Ավարտելուց հետո նշանակվեց Գուանդունի գյուղատնտեսական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրայում:

Չքավոր ընտանիքների երեխաները, ովքեր փրկվել են աղքատությունից, բուլոբից լավ են հասկանում, թե ինչ է նշանակում շնորհակալ լինել, զգալ, որ պարտքեր ունես մարելու: Տանը շատ լավ գիտակցում էր, որ առանց Նոր Չինաստանի, առանց կոմունիստական կուսակցության ինքը երբեք չէր կարող այդքան հեռուն գնալ: Եվ անսահման երախտապարտ էր կուսակցությանն ու Նոր Չինաստանին:

1963 թվականին, հոր ժառանգությունը տնօրինելու համար, Տանը տեղափոխվեց Թաիլանդ՝ ճանապարհին անցնելով Հոնկոնգով:

Երբ Շենչժենում ոտք դրեց Լուտիու կամրջի վրա, շրջվեց ու նայեց իր հայրենիքին՝ աչքերն արցունքով լի եւ լուռ երդվեց. «Մայր հայրենիք, երբ աշխարհում հարթեմ իմ ուղին, կփոխհատուցեմ այն ամենն, ինչ տվել ես ինձ»:

Հինգ տարի ապրեց Թաիլանդում, որտեղ յուրացրեց հմտություններ եւ փողկապ պատրաստելու համար անհրաժեշտ վարպետությունն ու տեխնոլոգիան: 1968-ին ներգաղթեց Հոնկոնգ՝ իր հետ բերելով մորը, կնոջը եւ երեք երեխաներին՝ վերամիավորելով ընտանիքը: Վեց հոգով ապրում էին նեղ, էժանագին վարձու սենյակում: Տանը հորեղբորից պարտք վերցրեց վեց հազար հոնկոնգյան դոլար, որով ինքն ու կինը կարի մեքենա, մկրատ ու դերձակի ժապավեն-մետր գնեցին. փողկապներ էին պատրաստելու: Տանը դիզայներ-նախագծող էր, բանվոր, մատակարար եւ վաճառող, բուլոբը՝ մեկ մարդու մեջ: Հենց որ փողկապները պատրաստ էին լինում, նա դուրս էր ելնում փողոց՝ դրանք վաճառելու: Եթե օրական առնվազն հինգ փողկապ չվաճառեր, չէր կարողանա կերակրել տանն իրեն սպասող վեց հոգուն: Գիշերը երեքից չորս ժամ էր քնում ընդամենը:

Բայց երկինքը պարզեատրում է համբերատար եւ աշխատասեր մարդկանց: Իր վարպետությունը կատարելագործելու ձգտումով, հավատը պահպանելով, զայրույթը զսպելու եւ համբերատար լինելու, ամենաձանր ու դառն դժվարություններին դիմակայելու պատրաստակամությամբ նա կարողացավ իր համար տեղ ապահովել գերմրցակ-

Չժան Յավեն

ցայիս Հոնկոնգում՝ գնելով վեց հազար քառակուսի մետր տարածքով գործարան՝ ընդլայնելու համար տղամարդու հագուստի իր բիզնեսը: Երեխան, որը մեծացել էր առանց նույնիսկ բավարար չափով սկսվելու, համառ պայքարի միջոցով, ի վերջո, հասել էր իր «Ոսկե առյուծի թագավորությանը» (Goldlion Kingdom): 1984 թվականին նա կառուցեց ութսուն հազար քառակուսի մետր տարածքով Goldlion շենքը իր հայրենի Մեյչժոու գյուղում: 1992-ին Հոնկոնգում ստեղծվեց Goldlion Group ընկերությունը՝ երեսուն հազար քառակուսի մետր տարածքով շենքում հիմնելով իրենց գլոբալ գործողությունների կենտրոնը: Նույն տարում ընկերությունը հանրայնացավ: Այդ պահի դրությամբ նրանք մանրածախ առևտրի կետեր էին հիմնել Սինգապուրում, Նանկինում, Չժեցզյանում, Շենյանում, Գուանչժոուում, Շանհայում, Պեկինում եւ մի շարք այլ վայրերում:

1997 թվականին Goldlion-ը Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից ընտրվեց որպես աշխարհի ամենաարագ զարգացող ընկերություն, 1999 թ.-ին Fortune ամսագիրն այն անվանեց «Չինաստանի ամենահիասքանչ, հարգանքի արժանի ընկերություն»՝ հատուկ նշելով՝ «համայնքին նվիրվածության համար»: Չինաստանում Goldlion-ն արժանացել է քսանից ավելի ազգային մրցանակների:

## **«Մեկ նպատակ ունեմ՝ ամբողջ կյանքումս փոխհատուցել հայրենիքիս պարտքը»**

Էյնշտեյնը մի անգամ ասել է. «Կյանքում ամենամեծ երջանկությունը հարստությունը չէ, այլ հասարակությանը հարստություն բերելը»:

Ցան Հին-չին ասում է. «Որպես մեկը, որ մեծացել է աղքատ տան մեջ, եւ որպես համալսարանի ուսանող, որին մեծապես աջակցել է Նոր Չինաստանը, եւ որը հնարավորություն է ունեցել փոքրիշատե հաջողության հասնել աշխարհում, ես մի նպատակ ունեմ՝ ամբողջ կյանքումս փոխհատուցել հայրենիքիս պարտքը»:

Մարդու որակական հատկանիշները պայմանավորված են ոչ թե նրա ունեցած փողի քանակով, այլ այդ փողի հանդեպ ունեցած նրա վերաբերմունքով:



Ոմանք ապրում են արտառոց, ցոփ կյանքով՝ իրենց գոյությունից քամելով շքեղության եւ հաճույքի ամենավերջին կաթիլները, ամենեին չմտածելով ուրիշների մասին:

Ոմանք որոշում են առաջին անհանգստանալ հասարակության խնդիրներով եւ վերջինը վայելել հաճույքները՝ ապրելով տնտեսող եւ ազնիվ կյանքով, մեծ ջանքերով վաստակած իրենց փողն առատաձեռնորեն բաշխելով իրենց ժողովրդին եւ երկրին:

Երախտագիտության պարզ արարքը կյանքի ամենապարզ, ամենամաքուր, ամենագեղեցիկ հույզերից մեկն է:

1978 թվականին, երբ Ցանը Հոնկոնգից իր առաջին այցելությունը կատարեց հայրենի գյուղ, սաստիկ ցավ զգաց՝ տեսնելով գյուղի թշվառ վիճակը: Լուսինը լեռներում ճիշտ այնպիսին էր, ինչպիսին նախկինում էր, բայց նույնն էր նաեւ աղքատությունը: Դպրոցի շենքն անտանելի վիճակում էր, աշակերտները ցնցոտիների մեջ էին: Գյուղի մարդիկ ապրում էին ծանր ու դժվարին կյանքով:

Հենց տեղում նա անմիջապես որոշեց՝ երեք հարյուր հազար հոնկոնգյան դոլար է նվիրելու իր հին դպրոցին՝ եռահարկ շենք կառուցելու համար: Անցած ավելի քան երեսուն տարում նա հայրենի քաղաքում ավելի քան երկու հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար է նվիրաբերել հարյուրից ավելի հաստատությունների եւ ավելի քան երեք հարյուր նախագծերի: Երբ քայլում ես Մեյժոուում, ամենուր նկատում ես՝ «Ոսկե առյուծի կամուրջ» (“Goldlion Bridge”) կամ «Հին-չիի զբոսայգի» (“Hin-chi Boulevard”) կամ «Ցան Հին-չիի միջնակարգ դպրոց» (“Tsang Hin-chi Junior High”):

Ցանը բոլորից լավ գիտե, որ եթե կրթությունը ծաղկում է, ծաղկում է նաեւ ազգը, եւ եթե ծառ աճեցնելը կարող է տեսել տասը տարի, ժողովրդի պատշաճ ինքնակատարելագործումը կարող է տեսել մեկ դար կամ ավելի:

1992 թվականին նա հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար նվիրաբերեց՝ Չինաստանի կրթության նախարարության հետ համատեղ՝ ստեղծելու «Ցան Հին-չի կրթական հիմնադրամը»: Ավելի քան քսան տարվա ընթացքում հիմնադրամն ավելի քան քառասունհինգ միլիոն յուան արժողությամբ կրթաթոշակ է տվել յոթ հազարից ավելի ականավոր ուսուցիչների եւ ավելի քան 80,8 միլիոն յուանի լրացուցիչ կրթա-

## Չժան Ցավեն

թռչակային օգնություն է տրամադրվել ամբողջ Չինաստանի երեսունհինգ հիմնական համալսարաններում բարձր առաջադիմությամբ սովորող 22 750 կարիքավոր ուսանողների: Նա նաև ավելի քան երկու հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար է նվիրաբերել այնպիսի ուսումնական հաստատությունների, ինչպիսիք են՝ Պեկինի համալսարանը, Ցինհուայի համալսարանը, Չինաստանի ժողովրդական (ժենմին) համալսարանը, Տյանցզինի համալսարանը, Շանհայի Ցզյաոտուն համալսարանը, Սուն Ցաթ-սենի համալսարանը, Նանկինի համալսարանը, Սի'ան Ցզյաոտուն համալսարանը, Չժեցզյան համալսարանը, Հոնկոնգի պոլիտեխնիկական համալսարանը և ցանկացած այլ մի շարք համալսարաններ ու միջնակարգ դպրոցներ: Միայն Ցզյանսու նահանգի Սույնին լեռնային աղքատ մարզում օգնել է կառուցելու կամ նորոգելու առնվազն քսանվեց տարրական դպրոցներ:

Տեսնելով, թե ինչպես է «Շենչժուու հինգ» ղեկավարվող տիեզերանավը երկինք բարձրանում, Ցանը հուզմունքից արտասվեց: Նա հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար նվիրաբերեց «Tsang Hin-chi Manned Spaceflight Fund» («Ցան Հին-չիի ղեկավարվող տիեզերական թռիչքների հիմնադրամ») հիմնադրամի ստեղծման համար, որպեսզի պարզեցատրեն Չինաստանի տիեզերական թռիչքներով զբաղվող հերոսներին և աշխատող պաշտոնյաներին. հիմնադրամը պարզեցներ հանձնեց Շենչժուու հինգ, վեց, յոթ և ինը տիեզերական հերոսներին: Նա տիեզերազնագներին ասաց. «Չինաստանի ամբողջ ժողովուրդը, Չինաստանի բոլոր որդիներն ու դուստրերն ամենուրեք ուրախ են այն բանի համար, ինչ դուք արել եք մեր երկրին ի նպաստ: Ձեր հաջողությունը հեղինակություն է բերել Չինաստանին, և աշխարհի աչքերում բարձրացրել է նրա ժողովրդին»:

Պատանեկության տարիներին Ցանը սպորտի կրքոտ երկրպագու էր: Սիրում էր ֆուտբոլ, բասկետբոլ և թենիս խաղալ: Երազում էր ներկա լինել Օլիմպիական խաղերին: Երբ 2008-ի Պեկինի Օլիմպիական խաղերի ժամանակ հնարավորություն ունեցավ Հոնկոնգում օլիմպիական ջահակիր լինել, դա համարեց իր կյանքի ամենաերջանիկ պահը: Նրա նվիրատվությունները աթլետիկային և օլիմպիական բարձրակարգ մարզիկներին ամենամեծ ներդրումներն են՝ կրթական համակարգին և աղետից տուժածներին ցուցաբերած օգնություններից հե-

տո: Քսանիններորդ Օլիմպիական խաղերին Պեկինի հաջող հայտից հետո Ցանը հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար և վիրաբերեց՝ մարզական հիմնադրամ ստեղծելու համար, ևս նաև Պեկինին և վիրաբերեց տասը միլիոն յուան, որպեսզի աջակցի Տրի տարողության կառուցման ֆինանսավորմանը, ինչպես նաև 25,16 միլիոն հոնկոնգյան դոլար հատկացրեց ոսկե մեդալակիրների մրցանակների համար:

Ցանը կարծում է, որ սպորտը պարզապես չի ստուգում մարզական կարողությունները: Նա ավելի շուտ դա համարում է ազգային ուժի եւ ազգային հեղինակության փորձարկում համաշխարհային ասպարեզում: Մարզական մրցախաղերը երկրի հարստության եւ ամրության կարեւոր խորհրդանիշ են եւ նրա տնտեսական ու քաղաքական համակարգերի արդյունավետության դրսեւորում:

Այսպիսով, մարզական մրցակցությունը պարզապես խաղ չէ: 1932 թվականին Չինաստանի Գոմինդանի կառավարությունը հայտարարեց, որ միջոցների բացակայության պատճառով Չինաստանը մարզիկներ չի ուղարկելու Լոս Անջելեսում անցկացվող տասներորդ Օլիմպիական խաղերին: Ապա Ճապոնիայի մարիոնետային՝ Մանչժուրիայի կառավարությունը հեռագիր ուղարկեց Միջազգային օլիմպիական կոմիտեին՝ ասելով, որ Լյու Չանչունը եւ Յույ Սիվեյը՝ Չինաստանի ամենատաղանդավոր երկու մարզիկները, մասնակցելու են Խաղերին՝ ներկայացնելով Մանչժուրիան: Այդ լուրն ամբողջ երկրում իրարանցում առաջացրեց: Լյու Չանչունը կտրականապես հրաժարվեց մասնակցել, հրապարակավ հայտարարելով. «Ես դեռ խիղճ ունեմ: Երակներիս միջով դեռ տաք արյուն է հոսում: Ինչպե՞ս կարող եմ մոռանալ հայրենիքս: Ինչպե՞ս կարող եմ Մանչժուրիայի խամաճիկային վարչակարգի բեռնակիր գրաստը լինել»: Ավելի ուշ, Չժան Սյուեյանի եւ այլոց աջակցությամբ, շտապ կարգով վերակազմվեց չինական պատվիրակությունը, եւ, ծանր ու դժան խոչընդոտներ հաղթահարելով, ավելի քան քսան օրվա հոգնեցուցիչ ճանապարհորդությունից հետո կարողացավ Խաղերից առաջ ժամանել Լոս Անջելես: Բացման արարողությանն ազգային հավաքականների ներկայանալու ժամանակ Չինաստանը միայն մեկ մարզիկ ուներ՝ Լյու Չանչունը: 1979 թվականին Միջազգային օլիմպիական կոմիտեն վերահաստատեց Չինաստանի օրինական տեղն այդ կազմակերպությունում՝ երեսուն տարվա ընդմիջու-

## Չժան Յավեն

մից հետո վերականգնելով Խաղերին Չինաստանի մասնակցությունը: Չինաստանը հսկայական պատվիրակություն ուղարկեց 1984 թվականի քսաներեքերորդ Ամառային խաղերին, որ հենց Լուս Անջելեսում էին անցկացվում: Չինաստանի հավաքականն ուներ ոչ պակաս, քան երկու հարյուր քսանհինգ անդամ, որոնք տուն վերադարձան տասնհինգ ոսկե, ութ արծաթե եւ ինը բրոնզե մեդալով՝ ոսկե մեդալների քանակով չորրորդը լինելով:

Ցանն ասում է. «Հիմա վերջապես գիտեմ, թե ինչպես փոխհատուցեմ իմ երկրին: Անկախ նրանից, թե ինչ եմ անում, իմ ամբողջ կյանքում հնարավոր ամեն բան պիտի անեմ պաշտպանելու համար իմ երկիրը, պաշտպանելու համար կուսակցության շահերը: Ես ուզում եմ դառնալ կուսակցության անդամ, որը կուսակցության անդամ չէ: Սա այն է, ինչի համար պայքարելու եմ, քանի դեռ շնչում եմ, մինչեւ կյանքիս վերջը»:

«Քանի դեռ Goldlion-ը չի սնանկացել, քանի դեռ կա Ցան Հին-չին, ես պետք է անեմ հնարավոր ամեն բան, որպեսզի փոխհատուցեմ իմ երկրին»:

«Թվում է, թե Goldlion-ը չի սնանկանա, բայց ես անմահ չեմ»: Նա գիտեր, որ իր «դատավճռի կատարումը» հետաձգվում է միայն: «Ես կարող եմ ցանկացած պահի հեռանալ այս կյանքից, բայց երեք հիմնադրամ ունեմ, որոնք իմ որդին է ղեկավարելու [իմ մահից հետո]: Նա պետք է շարունակի իմ գործը: Ես նրան ասել եմ, որ պետք է սովորի, թե ինչպես է փոխհատուցելու իր երկրին: Միայն խոսքերով չէ. պետք է գործով ցույց տաք ձեր սերը ձեր երկրի հանդեպ»:

Անկեղծ սիրտը շողում է գիշեր ու զօր:

Հոնկոնգում ոմանք նրան «պանդա գրկող» անվամբ են պիտակավորել (*արեւմտյան քաղաքական ակտիվիստ կամ պաշտոնյա, որն աջակցում է կոմունիստական Չինաստանի քաղաքականությանը*- ծ. թ.): Նրա պատասխանը. «Հոնկոնգի ժողովուրդը չիևացի է: Ո՞րն է մեղքը, երբ սիրում ես քո երկիրը: Ինչ վերաբերում է հայրենասիրությանը, ես միշտ իմ համոզմունքները պաշտպանելու քաջությունն ունեմ»:

Ցանը պարզապես արհամարհում է նրանց, ովքեր «դեմ են չինական ամեն ինչին» եւ «դեմ են կոմունիստական ամեն ինչին», եւ ծաղրում է այդպիսիներին: Ի պատասխան՝ նրանք, ովքեր Ցանին պիտակավորում են

որպես «պանդա գրկող» եւ «ընդհատակյա կոմունիստ», այնքան հեռուն գնացին, որ սպառնացին նրան եւ այրեցին նրա մեքենան: Նույնիսկ դա չազդեց իր երկրի հանդէպ Ցանի անկեղծ, նվիրական սիրո վրա:

Նա ասում է. «Հուսով եմ, քանի դեռ իմ մեջ շունչ կա, ես կարող եմ լավ բաներ անել երկրիս համար: Միգուցե այն, ինչ անում եմ, աննշան մի բան է: Բայց եթե ես իմ սեփական ջանքերով կարող եմ ազդեցություն գործել եւ ուրիշներին համախմբել, որպեսզի աշխատեն չին ազգի վերածննդի համար... այսպես ասենք՝ եթե բոլորը վառելափայտ են բերում, ապա կրակի բոցն ավելի բարձր է լինում, այնպես չէ՞: Երբ այդ օրը գա, չին ազգի մեծ վերածնունդը յոթ սարից այն կողմ չի լինի»:

Այսօր, նյութապաշտությամբ լեցուն մի հասարակության մեջ, այնպիսի մի ժամանակ, երբ մեր երկրի ժողովուրդը ողբում է չին ազգի բարոյական անկումը, այն իրողությունը, որ Հոնկոնգից այդպիսի մի մարդ կարող էր լինել, ով կօգտագործեր իր կյանքի սահմանափակ լույսը՝ մարմին ու ձեւ տալու Չինաստանի ազգային ոգու ամենավսեմ կողմերին, այդ ոգու առավել բարձր հայրենասիրական տրամադրություններով տոգորված, ոչ միայն պարզապես հիացմունքի է արժանի, այլև օրինակ է, որը խորհելու տեղիք է տալիս:

Երբ մեր հարցազրույցը մոտեցավ ավարտին, Ցանը, անվասայլակում նստած, ինձ հրավիրեց շրջագայելու այն սենյակում, որտեղ ցուցադրվում էին իր պարզեւները: Դա մի մեծ սենյակ էր, չորս կողմում ցուցադրության համար նախատեսված պահարաններով, որ լի էին հաղթանշաններով, վկայագրերով, պարգեւներով ու պատվոգրերով եւ նվիրական լուսանկարներով: Դրանց մի մասը լուսանկարներ էին ՉԺՀ-ի առաջնորդների հետ, մյուսները՝ տիեզերագնացների կամ օլիմպիական չեմպիոնների հետ: Կային նաեւ նրա բարեգործական նվիրատվությունների լուսանկարներ: Նա մասնակցում էր յոթերորդ Ազգային ժողովրդական համագումարին եւ ութերորդ, իններորդ ու տասներորդ համագումարների մշտական հանձնաժողովներում էր: Հանդես էր գալիս որպես հոնկոնգյան գործերով կենտրոնական կառավարության խորհրդական, հոնկոնգյան Հիմնական օրենքի նախագծի մշակման խորհրդատվական հանձնաժողովի անդամ էր եւ Չինաստանի Առեւտրի գլխավոր պալատի նախագահն էր երեք տարբեր ժամկետներում: Չինաստանի ձեռներեցների համաշխարհային ասոցիացիան նրան

Զժան Յավեն

շնորհում էր իր մրցանակը՝ անվանելով «Չինաստանի նշանավոր մարդ ամբողջ աշխարհում», իսկ քաղաքացիական հարցերի նախարարությունը շնորհում էր «Չինական բարեգործական մրցանակ»: Արժանանում էր պատվավոր դոկտորի կոչման Հոնկոնգի պոլիտեխնիկական համալսարանի կողմից և ստանում Հոնկոնգի Մեծ Բառնիսիայի մեդալը՝ նրա բարձրագույն պարգևը:

Ճանապարհորդությունն այդպիսի փայլուն, փառահեղ կյանքի միջոցով իսկապես ապացուցն էր այն բանի, որ այդ մարդն իզուր չի ապրել:

Այդ օրը Ցանն ինձ հրավիրեց ճաշելու Հոնկոնգի Jockey Club's Sha Tin Clubhouse-ում: Երբ ավարտեցինք, և հրաժեշտ տալու ժամանակն էր, նայեցի նրա հեռացող թիկունքին, տեսա, թե ինչպես է բուժքույրը հրում անվասայլակը: Ինձ այնպես դժբախտ զգացի, և կրկին արտասվել էի ուզում: Լուռ մի օրհնություն մրմնջացի ծերունու համար. «Թող ազնվական այս ծերունին երկար և առողջ կյանք ունենա: Թող բարեհաջող և անփորձանք լինի լավ մարդու ճանապարհը»:

## **Բարեգործություն աղքատների հանդեպ. հոնկոնգյան ավանդույթ**

Էնդրյու Քարնեգին մի անգամ ասել է. «Մարդը, որը մահանում է հարուստ, մահանում է անվանարկված»:

Այս հայտնի ասույթը հետք է թողել արեւմտյան մի շարք միլիոնատերերի և միլիարդատերերի՝ հարստության հանդեպ ունեցած վերաբերմունքի վրա և փոխել է նրանց տեսակետներն այն մասին, թե ինչպես պետք է բաշխեն իրենց գումարները, ընդ որում շատերը նախընտրում են առատաձեռն ու հաճախ նվիրատվություններ անել:

Բիլ Գեյթսը քանիցս լրատվամիջոցներին ասել է, որ ամբողջ հիսուսուկուս միլիարդ դոլարի հարստությունը նվիրաբերելու է իր անունը կրող՝ Բիլ և Մեյլինդա Գեյթս հիմնադրամին՝ ոչ մի սենթ չթողնելով իր երեխաներին: Նա ասում է. «Մենք մեր փողերը չենք թողնի մեր երեխաներին: Եվ հուսով ենք, որ կարող ենք հնարավորինս ամենադրական ձեռով վերադարձնել հասարակությանը»:

Ուորեն Բաֆեթը հավելում է. «Ես երբեք չեմ հավատացել դիւսա-

տիական ժառանգությանը»: Նա կարծում է, որ իր երեխաներին եւ թոռներին ահռելի գումարներ թողնելով՝ նրանց կրկեր կյանքի հանդեպ ունեցած խանդավառությունից եւ ձեռքբերումներից հետո ինչ-որ բանի հասած լինելու զգացողությունից, այն աստիճանի, որ կարող էին կորցնել կամքի ուժն ու սեփական արժանապատվության զգացումը: Նա կարծում է, որ հարստությունը գալիս է հասարակությունից եւ պետք է վերադարձվի հասարակությանը:

Հարցազրույցներիս ընթացքում հասկացա, որ Հոնկոնգի մեծահարուստներն ընդունում են աղքատներին բարեգործություն անելու այս ոգին եւ հանրային բարեկեցության համար ծառայելը կարեւոր ավանդույթ են համարում:

Յուե-Կոնգ Պաոն՝ «ծովի արքան», իր առաջին սվիրատվությունը մայրցամաքային Չինաստանին կատարեց 1981 թվականին: 1981-ի հուլիսի 6-ին նա եւ իր հայրը՝ Չժաոլուն Պաոն, այցելեցին Պեկին եւ հանդիպեցին Դեն Սյաոպինի հետ: Յուե-Կոնգ Պաոն ցանկանում էր ինչ-որ բան անել իր երկրի համար եւ սվիրաբերեց տասը միլիոն ԱՄՆ դոլար, որպեսզի Պեկինը կարողանա համաշխարհային կարգի հյուրանոց կառուցել: Հետագայում նա քսան միլիոն դոլար սվիրաբերեց Նինբոյի համալսարանը հիմնելու համար: Հենրի Իս-տուն Ֆոքը, որ հանդես էր գալիս որպես խոշոր բարերար, մայրցամաքային Չինաստանի բոլոր անկյուններում ավելի քան տասնհինգ միլիարդ հոնկոնգյան դոլարի սվիրատվությամբ ակնառու ներդրում ունեցավ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, թեթեւ արվեստիկան եւ հեռավոր գյուղական վայրերում աղքատության դեմ պայքարը: Լի Կա-շինը՝ աշխարհի ամենահարուստ չինացին, բարեգործությանը վերաբերվում էր որպես բիզնեսի՝ դարձնելով այն իր «երրորդ երեխան»: Ամեն տարի նա մեկ միլիարդ հոնկոնգյան դոլարի սվիրատվություն է կատարում տարբեր բարեգործական նպատակներով: 2008 թվականին Սիչուան նահանգում Վենչուանի երկրաշարժից հետո Լիի հիմնադրամը եւ «Չունգ Կոնգ» խումբը հարյուր երեսուն միլիոն յուան սվիրաբերեցին՝ երկրաշարժի հետեւանքների վերացման համար: Հոնկոնգյան կինեմատոգրաֆիայի եւ զվարճանքի մագնատ Ռան Ռան Շոուն նույնպես սվիրաբերեց ավելի քան տասը միլիարդ հոնկոնգյան դոլար: Նա ասում էր. «Մեր ազգի վերակենդանացումը կախված է

## Չժան Ցավեն

մարդկային տաղանդից, իսկ այդ տաղանդը զարգացնելու համար կրթություն է պահանջվում: Մարդկային տաղանդի զարգացումը մեր չինական ազգի բարեկեցության հիմնական աղբյուրն է»: 2012 թվականի սեպտեմբերի դրությամբ Շոուն քսան տարվա ընթացքում ավելի քան 4,5 միլիարդ հոնկոնգյան դոլար էր նվիրաբերել մայրցամաքային Չինաստանի կրթական զարգացմանը: «Շոուի շենքերը» տարածված են Չինաստանի խոշոր համալսարանների տարածքներում: Առատածեռն նվիրատվության միջոցով նա ստեղծեց «Շոու» մրցանակը՝ «Արեւելքի Նոբելյան մրցանակը», որը կոչված է խրախուսելու գիտական զարգացումը եւ հետազոտությունը՝ դրամական մեծ պարգևներ տրամադրելով գիտության եւ տեխնիկայի առաջնագծում գտնվող մարդկանց: Սիչուանի երկրաշարժից հետո Շոուն եւ նրա կինը հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար նվիրաբերեցին երկրաշարժի հետեւանքների վերացման համար: Լի Շաու-կին՝ «Henderson Land Development» ընկերության նախագահը, երեք հարյուր երեսուն միլիոն յուան նվիրաբերեց «Սիրո ջերմություն» նախագծին, որ նախատեսում էր Չինաստանի գյուղական վայրերի միլիոնավոր բժիշկների ուսուցում՝ նպաստելու համար գյուղացիների կենսամակարդակի բարձրացմանը եւ նրանց կենսապայմանների փոփոխությանը: Այդ նախածեռնությունն օգնել է փոխել գյուղի ավելի քան մեկ միլիոն բնակիչների կյանքը:

Ռիչարդ Լին (Լի Կա-շինի կրտսեր որդին), Տոգեֆ Լաուն, Տոն Չանը, Ալբերտ Յունը, Չարլզ Յունը... նրանք պարզապես շատ են, այդ գործարարները, որոնք հսկայական ներդրումներ են ունեցել բարեգործության ոլորտում: Առավել գովելի է նրանց որդիների, դուստրերի եւ թոռների վերաբերմունքը, ովքեր յի են վճարակալությամբ՝ շարունակել բարեգործության ավանդույթը՝ դա համարելով որպես պարտականություն, կատարվելիք աշխատանք: Փիթեր Լի Կա-կիտը եւ Մարտին Լի Կա-շինը՝ Լի Շաու-կիի որդիները, Դուգլաս Վուն՝ «Wharf Holding» ընկերության նախագահ Փիթեր Վուի որդին, Արեւելյան Ասիայի բանկի նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրեն Դեյվիդ Լիի որդիներ Ադրիանը եւ Բրայեն Դեյվիդը, Ռոբերտ Եգ-ի որդի Դերիլը, Հենրի Ֆոքի թոռներ Քեննեթ եւ Մելիսսա Ֆոքերը, Չեն Յու-տունի թոռ Ադրիան Չենը, Սյույ ժունմաոյի որդի Տեյսոն Սյույը, Տոգեֆ Լաուի որդի Լաու Սին-վայը, Սե Յե-Չինի որդի Այրոնս Սեն եւ «Tomson Group» ընկերության նա-



խագահ՝ տիկին Սյույ Ֆենի որդի Ալբերտ Տոնը... հարուստ ծնողների այս զավակները ոչ միայն իրենց ավագ սերնդի բիզնեսի իրավահաջորդներն են, այլ նաև նրանց բարեգործական գործունեության իրավահաջորդները: Նրանք բոլորը եռանդուն մասնակցություն են ունեցել Փիթեր Լի Կա-կիտի ջանքերով ստեղծված «Centum Caritas Foundation» բարեգործական կազմակերպությունում: Հիմնադրամի նպատակն է համախմբել բարեգործությամբ հետաքրքրվող մի խումբ երիտասարդ ձեռներեցիների: Ուշադրությունը կենտրոնացնելով Հոնկոնգի սակավ ապահովված խմբերի կարիքների վրա, ներառելով երիտասարդների հեռանկարները եւ ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին ցուցաբերվող օգնությունը, նրանք նպատակադրվել են խթանել կարեկցանքի ոգին եւ իրենց ներդրումն ունենալ հոնկոնգյան հասարակության մեջ: Հոնկոնգի ամենահայտնի դերասաններից ոմանք բարեգործության կրքոտ նվիրյալներ են. ինչպես Տեքի Չանը, այնպես էլ Էնդի Լաուն ստեղծել են իրենց բարեգործական հիմնադրամները՝ հասարակությանը փոխհատուցելով կարիքավորներին ցուցաբերած օգնության միջոցով: Ինչպես ասում է Չոու Յուն-ֆատը. «Մենք պարավոր ենք հասարակությանը վերադարձնել այն, ինչ նա մեզ տվել է»:

Միջուանում 2008 թվականի մայիսի 12-ին վեներական աղետալի երկրաշարժից հետո Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի կառավարությունն ինը միլիարդ հոնկոնգյան դոլար հատկացրեց՝ ստեղծելու համար հավատարմագրային հիմնադրամ, որը կոչված էր աջակցելու վերակառուցման աշխատանքների իրականացմանը. հիմնադրամը հնարավորություն էր ընձեռում ավարտին հասցնել 151 օգնության ծրագիր: Հատուկ վարչական շրջանի կառավարությունը նաև հավանություն տվեց երեսուներեք հիւ-ների օգնության նախագծերի: The Hong Kong Jockey Club-ը նույնպես հատկացրեց մեկ միլիարդ հոնկոնգյան դոլար՝ վերականգնման յոթ նախագծերին աջակցելու համար:

Հոնկոնգի բարեգործական ձեռնարկություններ ստեղծած հարուստների եռանդի եւ ակտիվության համեմատությամբ՝ մայրցամաքային մեծահարուստները դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու:

Ոմանք ասում են, թե քանի որ Միացյալ Նահանգները հնարավորությունների երկիր է, դրա համար էլ կարողացել է ստեղծել Ուորեն Բաֆեթի նման մեկին: Նրանք պետք է ասեն, որ Չինաստանը նույնպես

## Չժան Ցավեն

հնարավորությունների երկիր է, որտեղ բարեփոխումներն ու բաց լինելու քաղաքականությունը, ընդամենը երեսուն տարիների ընթացքում, ստեղծեցին այդքան հարստություն ունեցող տղամարդիկ եւ կանայք:

2007թվականի «Հուրուն հարստության մասին» գեկույցով՝ Չինաստանը երկրորդ տեղում էր աշխարհի ամենամեծ թվով ԱՄՆ դոլարով միլիարդատերեր ունեցող երկրների ցանկում՝ անցնելով Գերմանիային եւ լինելով երկրորդը Միացյալ Նահանգներից հետո: Զեկույցի 2013 թվականի հրատարակության արդյունքում պարզվեց, որ Չինաստանն անցել էր ԱՄՆ-ին՝ 212 միլիարդատեր՝ ԱՄՆ-ի 211-ի դիմաց: Հոնկոնգյան «Վեն Վեյ Պո» թերթը նշել է, որ մայրցամաքային Չինաստանը ոչ թե միլիարդատերերի, այլ սոցիալական պատասխանատվության զգացումով միլիարդատերերի պակաս ունի: Երկրի «բարեգործական անտարբերության» հարցի լուծումը կպահանջի ավելին, քան պարզապես կարեկցանքն ու հարստության հանդեպ պատշաճ վերաբերմունքը. դա կպահանջի ստեղծել հարկային ու ֆինանսական քաղաքականություն եւ համակարգեր: Չինաստանի մեծահարուստները պետք է ուսումնասիրեն, սովորեն եւ որպես օրինակ փոխառեն հարուստ անձանց աշխարհայացքը՝ Հոնկոնգում ու Արեւմուտքում եւ դառնան սոցիալական պատասխանատվություն: Չինաստանի մեծահարուստները պետք է ուսումնասիրեն, սովորեն եւ ընդօրինակեն Հոնկոնգի ու Արեւմուտքի հարուստ անձանց աշխարհայացքը եւ դառնան սոցիալապես պատասխանատու:

Ամերիկացի մի մեկնաբան ասում է. «Մեծահոգի բարեգործությունը դարձել է մի տեսակ չգրված կանոն ամերիկացի միլիարդատերերի համար, գործարարների ու ձեռնարկատերերի անհրաժեշտ հատկանիշ, հարուստ մարդկանց համար հասարակական ճանաչման նշան»:

Մայրցամաքային Չինաստանը դեռ նոր է տեսնելու այդ տեսակ բարձր տեսլականի, այդպիսի հոյակապ հոգեւոր օրինակի զարգացումը: Երբ մայրցամաքային մասի մարդիկ հարստանում են, նրանց մեծամասնությունը թաղվում է մարդկային բնույթին հատուկ թուլությունների մեջ:

Մարդիկ փոխվում են՝ հենց որ հարստանում են: Բայց ինչպե՞ս են փոխվում: Դեպի լավ՞ը, թե՞ դեպի վատը: Ոմանք «միայն բարգավաճումից հետո են ճանաչում պատիվն ու ամօրը»: Մյուսների համար «ցուփ

կյանքը գալիս է ջերմության եւ լիքը ստամոքսի հետ»: Դեռ զարգացող մայրցամաքային Չինաստանը շատ ետ է մնում, լինի դա գիշերային միլիոնատերերի բնույթով, գանգվածների շրջանում իրազեկվածության, կառավարության բարեգործական սվիրատվությանն աջակցելու մեխանիզմներով կամ բարեգործությանն աջակցելու համար հարկային քաղաքականությամբ. բոլոր առումներով՝ մայրցամաքային Չինաստանը մեծահարուստների հարստության արագ կուտակմանը համաքայլ չի ընթացել: Այդ պատճառով ի հայտ են եկել մի շարք խախտումներ, որոշ անձանց հարստությունն ձեռք է բերվել «ստվերային» միջոցներով, այդ թվում՝ գործարարների եւ պաշտոնյաների միջեւ ապօրինի համագործակցությամբ: Այսօր այդ գործարարներից եւ պետական բարձրաստիճան պաշտոնյաներից ոմանք կարող են լինել բավականին հաջողակ հասարակական գործիչներ, վաղը նրանք կարող են հայտնվել բանտերում եւ փտել՝ մոռացության մատնված: Սովորական մարդը, շատ հաճախ, մեծահարուստների հանդեպ հարգանք չունի եւ ընդհանրապես հոգև էլ չէ, թե նրանք ինչ ձեռքբերումներ են ունեցել իրենց աշխատանքով: Փոխարենը, համընդհանուր ատելություն կա հարուստների նկատմամբ, համոզմունք, որ հարստությունը ձեռք է բերվում հանցանքներով արատավորված անազնիվ ճանապարհով: Եվ վատն այն է, որ բարեգործությունը կառավարելու համար օգտագործվող մեխանիզմները մնում են թերի, չկա բավարար թափանցիկություն եւ բարեգործական հիմնադրամների հոսքի նկատմամբ պատշաճ վերահսկողություն. դա օրենքի գերակայության պակաս է: Արդյունքն այն է եղել, որ մարդիկ բարեգործական կազմակերպություններից օգտվել են, որպեսզի կուտակեն,- ապա եւ ապօրինի յուրացնեն,- հսկայական գումարներ՝ հասարակության ներկայացուցիչների շրջանում բարեգործությունների նկատմամբ մեծ անվստահություն, եւ իսկական բարեգործական աշխատանք կատարող ազնիվ մարդկանց շրջանում դժգոհության ու վիրավորանքի խոր զգացողություն առաջացնելով: Որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ եւ հարուստներ չունեն պարտավորվածություն, զուրկ են սոցիալական պատասխանատվության զգացումից: Նրանք ապրում են ցոփ ու շվայտ կյանքով, այլոց փողերը մսխում են սիրուհիների վրա, այն աստիճանի են հասել, որ այդ կանանց համար գյուղեր են հայտնվել Միացյալ Նահանգներում:

Չժան Յավեն

Սա հսկայական բացասական ազդեցություն է թողել մայրցամաքային Չինաստանի բարեգործության վրա:

## Տարեց զույգի բարեգործությունը

Հոնկոնգում միայն հարուստները չեն բացառապես բարեգործությամբ զբաղվում: Բարեգործությունն այդտեղ, ավելի շուտ, համընդհանուր արժեք է, ավելի քան մեկ դարի պատմությամբ, և աջակցություն է ստանում գրեթե բոլոր հաստատությունների կողմից:

Շենգ Վանում, Queen's Road 302 հասցեում գտնվող խորհրդակցությունների սենյակ մտնելիս, եթե սեփական աչքերովս տեսած չլինեի, երբեք չէի հավատա, որ իմ առջեւ գտնվող այդ թույլ, ծեր զույգն իր մեջ այդպիսի էներգիա և կիրք ուներ, երբեք չէի հավատա, որ նրանք կարողացել էին կազմակերպել բարեգործական այդպիսի հոյակապ ձեռնարկումներ:

Դրանք էին՝ «Հաջողություն և իմաստություն» բարեգործական հիմնադրամի հիմնադիր-նախագահ և «Բուդդայի լույսի միջազգային ընկերակցության» հոնկոնգյան մասնաճյուղի պատվավոր նախագահ Իմ Ֆուն-Քուն և «Բուդդայի լույսի միջազգային ընկերակցության» գլխավոր խորհրդի հրահանգիչ (ինչպես նաև նրա հոնկոնգյան մասնաճյուղի խորհրդի անդամ) և «Հաջողություն և իմաստություն» բարեգործական հիմնադրամի կին-փոխնախագահ Յզույ Սոն-Մանը: 1997 թվականին նրանք ստեղծեցին «Հաջողություն և իմաստություն» բարեգործական հիմնադրամը՝ Լույ Չի-Վահ և Լույ Յաո Վայ-Նամ ամուսին-կին զույգի հետ համատեղ:

Նրանց մազերը ճերմակել էին, և երկուսն էլ խորշումել էին տարիքից, բայց դեմքերին բարյացակամ արտահայտություն էր դրոշմված: Երկուսի կյանքն էլ Հոնկոնգի պատմության մանրանկարն էր:

1974-ին, տասնյակ միլիոններ վաստակած լինելով բիզնեսում, նրանք արտագաղթեցին Միացյալ Նահանգներ՝ իրենց երեխաների կրթության համար: Բայց չնայած տունուտեղ էին դրել արտասահմանում, ոչնչով չէին տարբերվում Չուն Սին Սենի «Իմ չինական սիրտը» երգի անանուն կերպարից. «Թե օտարաոճ շորեր էլ հագնեմ, էլի իմ

սիրտը սիրտ է չինական: Օտար հողերում որքան էլ լինեմ, չի փոխվի բնավ սիրտս իմ չինական»: 1987-ին իրենց երեխաներին ետ բերեցին Չինաստան, նրանց հետ հեծանիվներով անցան Պեկինի տների միջև ընկած նեղ անցուղիներով՝ հուտուններով, այցելեցին Արգելված քաղաք եւ Ամառային պալատ, երեխաներին ծանոթացրին Չինաստանի պատմությանը: Նրանք ուզում էին, որ իրենց զավակները հասկանան Պեկինը, հասկանան Չինաստանը, ուզում էին նրանց մեջ արթնացնել հայրենասիրությունը: Նրանք երկուսով 1994 թվականին կրկին վերադարձան Չինաստան: Ճանապարհորդելով երկրում՝ տեսան, որ, չնայած տեղի ունեցած ցնցող փոփոխություններին, Չինաստանի հյուսիսարեւմտյան եւ հարավարեւմտյան շրջաններում դեռ շատ են հետամնաց, աղքատության ճիրաններում գտնվող բնակավայրերը: Երկրի լեռնային շատ գյուղերում երեխաների համար դեռ դժվար էր դպրոց գնալ, Լույնիսկ դպրոցական շենքեր չկային: Լեռնային ճանապարհները երկար էին, երեխաները ստիպված էին դպրոց գնալու եւ վերադառնալու համար ամեն օր երեք-չորս ժամվա ճանապարհ անցնել: Նրանցից շատերը ժամանակից շուտ թողնում էին դպրոցը:

Ծեր ամուսինների բարի սրտերը խորապես խոցվում էին այդ ամենից: Նրանք շատ լավ գիտակցում էին, որ գիտելիքը կարող է փոխել կյանքը, իսկ գիտությունը կարող է փոխել երկրները: Որպեսզի այդ ամենը փոխելու հույս լիներ, որպեսզի փոխվեր աղքատությունից տանջահար հայրենիքի դեմքը, երեխաները պետք է դպրոց գնային: Հակառակ դեպքում, այդ երեխաներն, իրենց ծնողների սման, դատապարտված էին Լույն ողբերգական ճակատագրին՝ ապրելով անգրագետ տգիտության մեջ: Հենց Լույն երեկոյան, երբ Հոնկոնգ վերադարձան, Իմ Ֆուն-Քուն հավակնոտ մի նպատակ որդեգրեց՝ ֆինանսական օգնություն տրամադրել աղքատ լեռնային շրջանների աշակերտներին եւ օգնել այդ շրջաններում կրթության զարգացմանը: Շատ չանցած՝ ևս թողեց իր տունը Հյուսթոնում, որպեսզի վերադառնա Հոնկոնգ:

1997 թվականին թե՛ կինը, թե՛ ամուսինը հուզմունքից արտասվում էին, երբ Հոնկոնգը վերադարձվեց մայրցամաքային Չինաստանին: Նրանք ասում էին, որ անցյալում իրենց միշտ զգացել են անմայր երեխայի սման եւ հիմա կարծես վերադարձել էին իրենց մոր գիրկը: 1997-ի հոկտեմբերին ամուսինները երեսուն միլիոն հոնկոնգյան դոլար

## Չժան Յավեն

հատկացրին «Հաջողություն եւ իմաստություն» բարեգործական հիմնադրամն ստեղծելու համար:

Հիմնադրամի կամավորները շուտով ուղեւորվելու էին Շենսի, Գանսու, Հենան, Հուբեյ, Յոյանսի, Սիչուան, Գույժոու եւ Յունան նահանգների աղքատ լեռնային վայրերը՝ ի վերջո կառուցելով ավելի քան երեք հարյուր տարրական ու միջնակարգ դպրոցների շենքեր եւ տասը հիվանդանոց, կրթաթոշակներ հիմնելով ավելի քան քսան համալսարանում, ինչն օգնելու էր տասնյակ հազարավոր անապահով ուսանողներին՝ ավարտին հասցնել իրենց ուսումը, անմիջական խնամք տանելով Սիչուան նահանգի Լյանշան շրջանի ավելի քան երկու հազար որբերի նկատմամբ եւ օգնելով Չինաստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող Նինսյա Հույ ինքնավար երկրամասի հեռավոր Սիցզի մարզի բնակիչներին լուծելու խմելու ջրի խնդիրները՝ հարյուր քսան խոշոր ջրամբարներ կառուցելու համար միջոցներ նվիրաբերելով:

Այս ամենը՝ ամուսնական զույգի քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Ամեն տարի նրանց «Հաջողություն եւ իմաստություն» հիմնադրամն ավելի քան տասը միլիոն հոնկոնգյան դոլար է ներդնում բարեգործության համար:

Ամուսիններն իրենք ապրում են պարզ ու հասարակ կյանքով: Նրանք Հոնկոնգում տուն չունեն, փոխարենը վարձակալում են վաթսուներեք քառակուսի մետր տարածքով բնակարան: Երբ խոսք է լինում իրենց հարստությունը փոխանցելու մասին, նրանք ասում են. «Այն կրթության հետ, որ տվել ենք մեր երեխաներին, նրանց փոխանցել ենք մեր չափանիշները՝ ինչպես լինել լավ մարդիկ, որպեսզի նրանք կարողանան մեծանալ՝ դառնալով հասարակությանն իրենց նպաստը բերող լիարժեք անդամներ»:

Երբ նրանց հարցնում են երջանկության մասին, ասում են, թե չկա այնպիսի երջանկություն, ինչպիսին աղքատ աշակերտին անձամբ նվիրատվություն անելն է, չկա ավելի մեծ երջանկություն, քան տեսնելը, թե ինչպես է լեռներում ծնված պարզամիտ երեխան աթարով ծածկված արահետներով ոգեւորված դեպի դպրոց վազում: Ավելի մեծ երջանկություն չկա, քան ժպիտ տեսնելն այն երեխայի դեմքին, որի կյանքը խորտակվել է՝ ծնողներին ՉԻԱՀ-ից կորցնելու հետեւանքով առաջացած մենությունից ու զրկանքից: Ավելի մեծ երջանկություն չկա,

քան ծնողների կողմից լքված՝ ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող երեխային խնամատար, սիրող մոր գրկում տեսնելը: Չկա ավելի մեծ երջանկություն, քան կարողալ երեխայի նամակը, որն ասում է. «Առանց հիմնադրամի օգնության, ես ոչ մի տեղ չէի լինի: Դուք փոխեցիք իմ կյանքը, փոխեցիք այն տառապանքը, որն ինձ սպասվում էր»:

Ամուսնական զույգն ասում է. «Մեկ մարդը կարող է փոխել այդքան շատերի ճակատագրերը, մի՞թե կարող է ավելի մեծ երջանկություն լինել»:

Խոսելով վերջերս կոռուպցիայի համար կալանավորված մայրցամաքային մի պաշտոնյայի մասին՝ Լուկ Յզույ Սոն-Մանն ասում է. «Իսկապես չեմ կարող հասկանալ: Ինչի՞ համար է նրանց պետք այդ ամբողջ գումարը: Ի՞նչ օգուտ դրանից»:

Տարեց մի զույգ, որ կյանքին նայում է շատ ավելի երիտասարդ մարդկանց մաքուր, բարի ու սրտացավ հայացքով, մարդիկ, ովքեր իրենց վրա են վերցրել այսքան աղքատ ընտանիքների հույսերն ու ապագան... Սովորական մարդկանց համար դժվար է ըմբռնել այդպիսի բարձր, մաքուր ոգին:

## **Ճարտարագիտության պրոֆեսորի ողորմածությունը**

Հոնկոնգյան համալսարանի տարածքում գտնվող սրճարանում նստած զրուցում էի համալսարանի Մասնագիտական և շարունակական կրթության դպրոցի տնօրեն և «Հաջողություն և իմաստություն» բարեգործական հիմնադրամի տնօրեն պրոֆեսոր Լի Չակ-Ֆանի հետ:

Մեղմ, բարեկիրթ, ակնոցավոր մի տղամարդ է Լին՝ մեծահոգի և բարի դեմքով: Խոսքով և պահվածքով՝ ուսյալ մարդու բազմագիտակ նրբաճաշակություն և իմաստուն մարդու անկողմնակալություն ու հանդարտություն է դրսևորում: Մինչ սուրճի թույլ բուրմունքը կախվում է օդում, մարդկանց և նրանց կյանքն ընկալելու հազվագյուտ ունակություն ունեցող մի մտավորականի կերպարանք է ուրվագծվում արտասովոր օրվա ֆոնին: Եվս մեկ ուշագրավ մարդ էր տեղ գտել իմ պատ-

## Չժան Յավեն

մության մեջ:

Լին Հոնկոնգի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի, Կանադայի ճարտարագիտական ակադեմիայի եւ Չինաստանի ճարտարագիտական ակադեմիայի գիտաշխատող է: Նա ասում է. «Չինաստանի ճարտարագիտական ակադեմիայի գիտաշխատող դառնալն ամենամեծ պատիվն էր ինձ համար: Որպես Չինաստանի որդի, որ ինչ-որ բան է անում, որպեսզի օգնի իր երկրի կառուցմանը, եւ ճանաչման է արժանանում դրա համար, դա իսկապես մեծագույն պատիվ էր»:

Լին ջրի պահպանման գծով հայտնի մասնագետ է, եւ նրա ամենամեծ ներդրումն իր մայր երկրում բարեգործության տեսքով չի եղել, այլ նրա հիդրոլոգիական խոշոր սախագծերի ստուգման եւ սերտիֆիկացման գործում ունեցած ներդրումով, ինչպես «Երեք կիրճեր» էլեկտրակայանը եւ Սյաոլանդի ամբարտակները:

Լին ծնվել է 1945 թվականին, Գուանդուն Նահանգի Չժունշան քաղաքին մերձակա Սյաոլան գյուղում, գրագետի համբավ ունեցող տեղական ընտանիքում: Գերազանցությամբ ավարտել է Հոնկոնգի համալսարանի քաղաքաշինության ֆակուլտետը՝ հիդրոլոգիական ճարտարագիտություն մասնագիտությամբ, ուսումը շարունակել Կանադայի Արեւմտյան Օնտարիոյի համալսարանում՝ գեոտեխնիկական ճարտարագիտության դոկտորանտուրայի համար, որից հետո մնացել է Կանադայում աշխատելու: 1980-ականներին, Չինաստանի ջրային ռեսուրսների սախարարության ղեկավար Յյան Չժենյինի հրավերով, Լին, որն այդ ժամանակ ղեկավարում էր Օնտարիոյի էլեկտրաէներգիայի արտադրության ճարտարագիտության բաժինը, ժամանակավորապես տեղափոխվեց Չինաստան՝ աշխատելու որպես հիդրոլոգիական սախագծերի տեսուչ, որտեղ նա մասնակցելու էր «Երեք կիրճեր» ամբարտակի իրագործելիության եւ սախագծման վերաբերյալ բանավեճերին: 1990-ականներին Չինաստանում ամենուր ծաղկում էին հիդրոլոգիական սախագծերը՝ Լիցյասյա ամբարտակը Դեդին գետի (Խուանխե) վրա, Սյաոլանդին, Երեք կիրճերը, Էրտան ամբարտակը Սիչուանում եւ Սունհուա գետի ավազանը: Ամենուրեք լայնամասշտաբ հիդրոլոգիական սախագծեր կային, որոնցից շատերին Լին մասնակից եղավ: Նա ճանապարհորդել է Յանցզի գետի երկայնքով, Դեդին գետի երկայնքով, Սիչուանի, Գույչժոուի, Գանսուի եւ Ցինհայի լեռնային կիր-



ճերով: 1993 թվականին, երբ պաշտոնապես սկսվեց «Երեք կիրճերի» աշխատանքը, ևս գրեթե ամեն շաբաթ Կանադայից թռչում էր Չինաստան: Չինաստանի ջրային ռեսուրսների նախարար Ցյան Չժենյինը նրան անվանում էր Դայուի\* իրավահաջորդ: Հետագայում ևս վերադառնալու էր Հոնկոնգի համալսարան՝ աշխատելու:

Լին ասում է, որ հիշում է հայտնի բուդդայական վանական Սին Յու-նի խոսքերը. «Մարդիկ չգիտեն, թե որքան ժամանակ են ապրելու: Ուրեմն, մենք պետք է գիտակցաբար կառչենք ներկայից, անենք հնարավոր ամեն բան՝ մեր [ժամանակավոր] սահմանափակ կարողություններին համապատասխան, որպեսզի հաջողություն բերենք հասարակությանը եւ հաջողություն բերենք մեր մերձավորներին»:

Հիդրոլոգիական նախագծերի վերաբերյալ իր աշխատանքի ընթացքում ևս անմիջականորեն տեսավ այնպիսի վայրերի աղքատությունն ու հետամնաց լինելը, ինչպիսին Լյանշանն է, ականատես լինելով այնտեղի նվաստացուցիչ եւ դժվարին կյանքին, ականատես լինելով, թե աղետալի պայմաններում ինչպիսի ուշադրությունից դուրս եւ անօգնական վիճակում են մարդիկ, ականատես լինելով աշխարհի ճանապարհներին մոլորված՝ անփորձ որբերի վշտին եւ հուսահատությանը, որոնք իրենց ծնողներին կորցրել էին անժամանակ: Նա տեսավ ամայացած, ավերված շատ տներ, որոնցից միայն պատերն ու հատակն էին մնացել, անթիվ որբեր, որ ամեն օր միայն կարտոֆիլով էին կարողանում սնվել: Այդ փորձառությունները խորացրին կյանքի նրա ընկալումը եւ նրա համակրանքը դժբախտություն ու ցավ ապրող մարդկանց հանդեպ:

Լին եւ նրա կինը որոշեցին սկսել աշխատանքը «Հաջողություն եւ իմաստություն» բարեգործական հիմնադրամի հետ: Ի վերջո, Լին ընտրվելու էր հիմնադրամի տնօրեն՝ իր ազդեցիկ սոցիալական դիրքն օգտագործելով նվիրատվություններ կազմակերպելու համար: Նա բազմիցս գնացել է հեռավոր լեռնային բնակավայրեր, ջրավոր երեխաներին անձամբ հատկացրել այն ամենն, ինչի կարիքը խիստ ունեին նրանք՝ նրանց վիրավոր, տառապյալ հոգիները ջերմացնելով անսահ-

\* Դայուն վաղնջական Չինաստանի առասպելական կառավարիչ էր, հայտնի է նրանով, որ մեծ ջանքեր է գործադրել ջրհեղեղի դեմ պայքար մղելու համար:

## Չժան Յավեն

ման սիրով եւ ջերմությամբ: Եվ ամեն անգամ, երբ հեռանում էր, երեխաները լալիս էին նրա ետեւից ու հարցնում, թե երբ է վերադառնալու:

Լին հաճախ է նամակներ ստանում ուսանողներից, որոնք օգտվել են նվիրատվություններից: Հենանի համալսարանի՝ կրթաթոշակով սովորող ուսանողներից մեկը գրում էր. «Այս չորս տարիների ընթացքում ինձ հսկայական աջակցություն եք ցուցաբերել. անկախ նրանից՝ նյութական, հոգեւոր, կենսական թե գիտական աջակցություն է, Դուք այնքան շատ եք տվել: Հիմա ես ուղղություն ունեմ, ունեմ ճանապարհ, որով պետք է առաջ գնամ եւ պայքար մղեմ: Այն, որ ես կարողացա նվաճել այդքան շատ պարգևներ եւ մրցանակներ, որ ինձ նման գյուղացի մի երեխա կարողացավ չորս տարում հաջողությամբ ավարտել համալսարանը, հենց Ձեր հիմնադրամի օգնության շնորհիվ է: Ամեն անգամ, երբ Ձեզ հետ նամակներ եմ փոխանակում, սիրտս երախտագիտությամբ է լցվում: Ամեն մի բառը գրված է սրտիս խորքից»:

Չինաստանի Ճարտարագիտական ակադեմիայի գիտաշխատող եւ «Հոնկոնգյան արծաթե Բաուսիինիա աստղի» մրցանակակիր Լիի պարգևներն ու տիտղոսները երկնքի աստղերի պես շատ են: Բայց նա շարունակում է անտարբեր մնալ փառքի եւ հարստության նկատմամբ. նրա այդ մղումը Բուդդիզմից եւ բարեգործությունից է բխում, դրա հետ է կապված նրա համակրանքը գյուղական վայրերում ծանր կյանքով ապրող աղքատների հանդեպ, եւ նրա սերտ բարեկամությունը թայվանցի ուսուցիչ Սին Յունի հետ: Լին Հոնկոնգի համալսարանում ստեղծեց բուդդիստական ուսումնասիրությունների կենտրոն: Նա գրել է այնպիսի գործեր, ինչպիսիք են՝ «Ապրել ներկայի մեջ», «Խաղաղ եւ ազատ», եւ «Բուդդայի իմաստության կիրառումը ներկայում»: Նա կարծում է, որ «Գիտությունը հետամուտ է բնական աշխարհի հիմքում ընկած կանոններին: Հումանիտար գիտությունները եւ կրոնը զբաղվում են հոգեւոր աշխարհով: Փիլիսոփայությունը ձգտում է միավորել այդ երկուսը՝ մարդուն եւ բնությունը»:

Լին բուդդայական է, բայց մտահոգ է ոչ միայն իր բարոյական արդարակեցությամբ. նա իր համար ապաստան չի գտնում կրոնական կյանքում՝ աշխարհից թաքնված: Նա, ավելի շուտ, խորապես կարեկցող մարդ է, ով իր խաղաղ, առանձնակի ճանապարհով ձգտում է փրկել եւ ոտքի կանգնեցնել ծանր ու դժվարին կյանքով ապրողներին:

Նա ասում է, որ «մարդու առաջին պարտականությունն է բարոյապես անթերի լինել, լինել աշխարհի լավ քաղաքացի»:

Երբ իմ գնալու ժամանակը եկավ, Լին դուրս ելավ ինձ հետ:

Ես շրջվեցի, որ ձեռքով անեմ, եւ տեսա երկու շենքերի միջեւ շեղակի ընկնող վերջալույսի մի ճառագայթ, որ իջել էր Լիի վրա՝ նրա գլուխը շրջանակելով ոսկեգույն լուսապսակով:

Դա ինձ հիշեցրեց լուսապսակը Բուդդայի գլխի շուրջ եւ մի սուտրա, որը Լին սիրում է հնչեցնել.

*Դրախտն ու դժոխքը մեկ տարածություն են,  
Գարունը ծաղիկներ ունի, աշունը՝ լուսին:  
Ամառն ունի զեփյուռ, ձմեռը՝ ձյուն:*

Լավագույնն այն եղանակն է, երբ մարդ չի թողնում տաղտուկը երկարի:

## Բարեգործության արմատները

Ինձ համար հետաքրքիր էր՝ բարեգործության հանդեպ հոնկոնգցիների սերը պարզապես այն պատճառով էր առաջացել, որ դա երկնային պատվիրան էր, թե՞ պատմության որոշ արտակարգ հանգամանքներ ստեղծել էին իրենց անօրինակ յուրահատկությունը եւ ձեռավորել այդ անզուգական ավանդույթը:

Պատասխաններ որոնելու համար սկսեցի փորփրել Հոնկոնգի պատմությունը: Բրիտանական կառավարման սկզբնական շրջանում Հոնկոնգի տարածքում ապրող չինացիները պայքարում էին զոյատելու համար՝ ընդդեմ աղքատության, հիվանդության եւ խտրականության: Գաղութարարները նրանց գնում եւ վաճառում էին, ինչպես խոզերի: Նրանք մեռած ընկնում էին փողոցներում՝ աղքատության, հիվանդության եւ բուժօգնության բացակայության պայմաններում: Այն ժամանակվա բրիտանական իշխանությունները քիչ էին հոգ տանում իրենց չինացի հպատակներն ապրում են թե մահացել են: Գուանդուն նահանգի Դունգուան քաղաքի գործարար Լու Լիպինը համախմբեց մի խումբ չին վաճառականների, որպեսզի դիմեն բրիտանական իշխա-

## Զժան Յավեն

նություններին՝ չինացիների համար հիվանդանոց կառուցելու համար միջոցներ հատկացնելու հարցով: Բայց պաշտոնական պատասխանն ամբողջ մի հավերժություն տեսց: Այդ պատասխանը չտրվեց, մինչև որ Հոնկոնգի վեցերորդ նահանգապետ Ռիչարդ Մակդոնելը չբավարարեց չինական համայնքի խնդրանքը:

1872-ին իր դռները բացեց չինական նվիրատվություններով չինացիների համար կառուցված առաջին հիվանդանոցը՝ Տունգ Վա հիվանդանոցը Շեն Վանի Պո Յան փողոցում: Նրա ղեկավար սկզբունքներն էին՝ կարեկցանք ցուցաբերել կարիքավորների հանդեպ, գթասիրտ լինել, դեղորայք մատակարարել հիվանդներին, փրկել աղքատության մեջ ծնված երեխաներին, կարիքավորների համար դագաղներ տրամադրել եւ ապահովել անվճար ուսուցում: Վերջապես Հոնկոնգի չինացիները, որոնց բրիտանացիները պարզապես համարում էին մեծաքանակ վնասատուներ, ունեցան օգնություն ցուցաբերող իրենց հաստատությունը: Շատ չանցած՝ չինական համայնքի համար եւս երկու հիվանդանոց՝ Կվոնգ Վան եւ Արեւելյան Տունգ Վան, բացելու էին իրենց դռները: Բոլոր երեքն էլ բարեգործական հիվանդանոցներ էին եւ հայտնի դարձան որպես «Տունգ Վա» հիվանդանոցներ:

Այդ ժամանակ ձկնորսական փոքրիկ գյուղ Հոնկոնգը հեղեղվեց հասարակաց տներով, եւ ծաղկեցին անպարկեշտ հաստատությունները: Մայրցամաքային առեւանգողների հրոսակախմբերը հաճախ խաբում էին երիտասարդ աղջիկների, բռնաբարում եւ շահագործում՝ ստիպելով պոռնկությամբ զբաղվել: Հասարակական տներից լսվում էին խղճալի, սրտակեղեք աղաղակներ: Երեքից տասը տարեկան աղջիկներին վաճառում էին հիսուն յուանով, տասից տասնչորս տարեկաններին՝ հարյուր հիսուն, իսկ տասնհինգ տարեկանից բարձր գեղեցիկ աղջիկներին կարող էին ձեռք բերել երեքից չորս հարյուր յուանով: Եթե կարողանում էին այդ աղջիկներին վաճառել Սան Ֆրանցիսկոյի գևորդներին, ապա վաստակում էին մինչև հազար յուան:

Պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ 1865-ից մինչև 1981 թվականը Հոնկոնգում 1 481 կանանց եւ երեխաների առեւանգում է եղել, միջին հաշվով՝ տարեկան 54,9: 1893-ից մինչև 1900 թվականը այդ թիվը եղել է 1 527, տարեկան միջինը՝ 190, կամ մեկ անհետացում յուրաքանչյուր երկու օրում:

1878 թվականի նոյեմբերի 8-ին Լու Լիպինը, Ֆեն Պուսիի, Սե Ռաշե-նի, Շի Շենցզիի եւ Հոնկոնգի չինական համայնքի այլ նշանավոր անդամների հետ համատեղ, պաշտոնական բողոք ներկայացրին Հոնկոնգի նահանգապետ Տոն Հենեսիին՝ բացահայտելով անհետացումները եւ պահանջելով, որ նա խստորեն պատժի հանցագործներին՝ կանանց եւ երեխաների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար: Խումբը նաեւ գումարներ էր հավաքել, որպեսզի պարզել սահմաններ նրանց համար, ովքեր կնպաստեն հանցագործներին պատասխանատվության ենթարկելուն: Նրանք հիմնեցին «Կանանց եւ երեխաների պաշտպանության ընկերություն» կազմակերպությունը կամ Կանտոնի բարբառով՝ «Պո Լյուն Կուկ»-ը եւ մշակեցին կազմակերպության կանոնադրությունը: Մի քանի տարի անց կանոնադրությունը հաստատվեց բրիտանական իշխանությունների կողմից, որոնք ընկերությանը հատուկ արտոնություններ շնորհեցին՝ վերացնելու առեւանգումները եւ պահպանելու խաղաղությունն ու առաքինությունը: Լու Լիպինը նշանակվեց ընկերության առաջին նախագահ, որի գործառնական բյուջեն ամբողջությամբ ապահովվում էր նրա եւ չին մեծահարուստ այլ գործարարների նվիրատվություններով: Հիսուն տարի շարունակ ընկերության գործունեությունն ամբողջությամբ վճարվում էր չինական համայնքի կողմից, որից հետո բրիտանական վարչակազմն սկսեց դրամական փոքր, սիմվոլիկ օժանդակություն տրամադրել: Ընկերության կայացմամբ վերջապես հնարավոր եղավ օգնություն ցուցաբերել անթիվ անօթեւանների ու ջրավորների եւ առեւանգված անթիվ կանանց ու երեխաների:

Անցնելով թույլ մշուշի միջով՝ եւ մտա Պո Լյուն Կուկի շենքը՝ Լեյթոն ռոուդ 66 հասցեում: Դրսում գտնվող հուշահամալիրը հարյուր տարի անց էլ դեռ կանգուն էր, իսկ դրա ետեւի շենքը դարձել էր Պո Լյուն Կուկի պատմությունը ցուցադրող թանգարան: Յուցասրահի խաղաղ տարածք մտնելով ասես մտնում էի Հոնկոնգի հարյուրամյա պատմության մեջ. յուրաքանչյուր դեղնած լուսանկար, նվիրատուի յուրաքանչյուր ձեռագիր, փրկված ամեն մի աղջկա յուրաքանչյուր ուրվագիծ կարծես պատմում էր ինձ ողբերգական մի պատմության մասին՝ ասելով, որ սա կանանց եւ երեխաների համար ապաստան էր առեւանգողներից ու կողոպտիչներից: Պո Լյուն Կուկը վաղուց դադարել էր ծառայել որպես

## Չժան Ցավեն

այդպիսի ապաստան՝ դառնալով բազմակողմանի բարեգործական մի կազմակերպություն, որն այսօր է: Այստեղ էր, ահա, որ վերջապես հասկացա, թե ինչու Հոնկոնգի ժողովուրդն այդքան ուժեղ հակում ունի դեպի բարեգործությունը. եզակի մի պատմություն, որ զարգացրել է եզակի մի մշակույթ, եւ եզակի փորձառություն, որ ծնունդ է տվել բարեգործության հանդեպ եզակի վերաբերմունքի:

Եվ աստացած լինելու փորձը սոցիալական պատասխանատվության զգացում արթնացրեց խորաթափանց տղամարդկանց ու կանանց մեջ՝ խթանելով Լախաձեռնողի ու ձեռներեցի ջիղը, եւ ստեղծեց Հոնկոնգի ժողովրդին հատուկ՝ արժեքային եզակի մի համակարգ: Ամենահրաշալիս այն է, որ պատասխանատվության զգացումն ու Լախաձեռնող լինելու շնորհքը ժամանակի հետ կամ հարստության կուտակումով չնվազեցին: Ընդհակառակը, ավելացան՝ դառնալով ավելի կայուն եւ ամբողջական:

Այսօրվա Հոնկոնգում բարեգործությունները բազմաթիվ են. բարեգործությունը մի բան է, որը բոլորն են անում: Բարեգործական շատուշատ կազմակերպությունների շարքում են «The Community Chest», «The Tung Wah Hospitals», «Yan Chai Hospital», «Po Leung Kuk», «The Hong Kong Red Cross», «The Children's Medical Foundation», «Oxfam» կազմակերպությունները: «The Hong Kong Jockey Club» ակումբը ոչ միայն Հոնկոնգի ամենամեծ բարեգործական Լճիրատուն է, այլ ևս եւ աշխարհում ամենամեծերից մեկը: Ակումբն իր շահույթի մեծ մասը Լճիրում է բարեգործությանը: Անցած տասը տարիների ընթացքում ակումբը տարեկան մեկ միլիարդ հոնկոնգյան դոլար է Լճիրել կրթության, բուժօգնության, սոցիալական ծառայությունների եւ թեթեւ աթլետիկայի ոլորտներին: Հոնկոնգում բարեգործական կազմակերպությունները պետք է պահեն գրքեր, ուր ամեն ինչ ներկայացված է ճշգրիտ ու թափանցիկ, եւ պարբերաբար հրապարակվում են բոլոր Լճիրատվությունների հասցեատերերի տվյալները: Ապօրինի յուրացումը եւ կոռուպցիան չեն հանդուրժվում: Երբ հոնկոնգյան բարեգործական կազմակերպությունների անդամները որպես կամավորներ մեկնում են մայրցամաք, Լրանք ճանապարհորդական ծախսերը սեփական գրպանից են վճարում: Բարեգործության անվան տակ քողարկված ծախսերը չեն թույլատրվում, եւ շքեղ բնակարաններ ու մեքենաներ գնելու

համար բարեգործական փողերի յուրացումն ամբողջովին դատապարտելի է:

Համեմատության համար նշենք, որ մայրցամաքային Չինաստանում բարեգործական կազմակերպությունները դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու:

Պաշտոնական լինի թե հանրային բարեգործություն, դրանց պակասը միշտ զգացվում է: Սովորական մարդիկ ավելի հաճախ կասկածներ ունեն, թե ինչպես են բարեգործական կազմակերպություններն օգտագործում միջոցները. դա նշան է այն բանի, որ վերահսկողությունը, թափանցիկությունն ու խստապահանջությունը, օրինական կառավարումը չեն գերիշխում: Եվ բարեգործությունը չի դիտվում որպես հասարակական բարոյականության ձեռնարկ, ոչ էլ սովորական սոցիալական պրակտիկա: Դրա պատճառները շատ են՝ ներառյալ վստահության պակասը եւ ընդհանուր բարոյական սնանկությունը:

Չին ժողովուրդը մի ժամանակ պարզ, ազնիվ եւ բարեսիրտ էր: Եվ եթե անգամ աղքատ էլ լինեիր, միշտ աչքի էր ընկնում այլոց օգնելու պատրաստակամությամբ: Մայրցամաքային Չինաստանը ե՞րբ սկսեց կորցնել իր այս տարբերակիչ առանձնահատկությունը՝ օգնության այս պատրաստակամությունը: Պատասխանների որոնումը մեզ ետ է տանում դեպի տասնամյա Մշակութային հեղափոխության աղետը, որը ոչնչացրեց Չինաստանի ավանդական բարոյական աշխարհայացքը, հակառակ երեսի շրջեց մեր ավանդական արժեքներն ու համոզմունքները, ճնշելով խեղդեց մեր բոլոր ամենաակնառու որակները, գրկեց մեր ժողովրդին իր հավատից ու բանականությունից եւ մեզ զցեց մի տեսակ հավաքական խելագարության մեջ: Այս մոլորեցնող, ապակողմնորոշիչ կործանումից հետո շեշտադրումը հետզհետե փողի վրա դնելով՝ մենք ողջ ազգի բարոյական սկզբունքներն իջեցրինք անսխալեպ ցածր մակարդակների:

Որպեսզի չին ժողովուրդը նորից վեր բարձրանա, իր տեղը գրավի աշխարհի հզորների մեջ, կպահանջվի ավելին, քան պարզապես տնտեսական զարգացումն է: Կպահանջվի շտկել մեր բնույթը՝ դարձնելով այնպիսին, որ ներառի ինչպես բարոյականությունը, այնպես էլ բարեգործության նկատմամբ մեր վերաբերմունքը:

Իմ որոնման ընթացքում պարզեցի, որ Հոնկոնգում յուրաքանչյուր

## Չժան Ցավեն

գործարարի նվաճում, Հոնկոնգի հսկայական ձեռքբերումներից յուրաքանչյուրը, բոլորն սկսվել են հոնկոնգցի մեր հայրենակիցների անկոտրում պայքարով, որ բնորոշվում է «երբեք մի՛ ասա մեռնել» արտահայտությամբ: Արյան եւ արցունքների միջով են դրանք իրականություն դարձել: Դրանք պարզորոշ են դարձրել չին ժողովրդի ակնառու բնավորությունը՝ խոչընդոտների դեմ պայքարելու եւ հաղթահարելու կամք, նախաձեռնությունը ստանձնելու քաջություն եւ հայրենի երկրի բարգավաճման համար եռանդուն աշխատելու պատրաստակամություն: Հոնկոնգի ժողովուրդը շարունակել է գործել Չինաստանի ավանդական բարոյականության ոգով՝ նրա մեջ ներարկելով Արեւմտյան մշակույթի լավագույն արժեքները, կերտելով լիովին ամբողջական եւ ավարտուն սեփական բնավորությունը:



ԳԼՈՒԽ 5

ԿՈՐՈՒՄՅԱԼ ՏԱՐԻՆԵՐ ԱՐՏԱՈՈՑ ԿՅԱՆՔԻՑ

**Հոնկոնգյան բոլոր ժամանակակից վերաբնակիչների ճգնաժամը**

Ես հաստատ համոզված եմ, որ գաղտնի ճանապարհով Հոնկոնգ մեկնած՝ մայրցամաքի ցանկացած բնակիչ շուտ չի մոռանա վիզաների գրասենյակի առաջին դարպասը Queensway Road-ում գտնվող Pacific Place հասցեում: Եվ նրանք հատկապես չեն մոռանա 1980 թվականին այդտեղ տեղի ունեցածը:

Մի օր, 1980-ին, չկարողանալով հաղթահարել մայրցամաքից Հոնկոնգ տեղափոխվող մեծաթիվ «անտոմս ուղեւորների» հետզհետե աճող ճնշումը, Հոնկոնգի բրիտանական վարչակազմը որոշեց, որ դուռը փակելու են: Մայրցամաքից եկած ցանկացած ոք, ով հասցրել էր այդ օրը կեսգիշերից առաջ մուտք գործել Հոնկոնգ, կհամարվեր հպատակագրված: Մնացած բոլոր նրանք, ում բռնել էին դրանից հետո Հոնկոնգ մտնելու փորձ անելիս, անմիջականորեն ուղարկվելու էին մայրցամաքային Չինաստան:

Այդ կարեւոր օրը Հոնկոնգի բնակիչները հեռուստացույցով դիտեցին մի տեսարան, թե ինչպես են վերաբնակվել ցանկացողները, հոգնած եւ ուժասպառ, իրար հրմշտելով, փորձում ներս մտնել դարպասով: Կեսգիշերին դուռն սկսեց փակվել: Դուռը լրիվ փակվելուց անմիջապես առաջ եւս երկուսը փորձեցին ներս սահել, եւ նրանց գլուխները մնացին փակվող դռան արանքում: Դուռը ետ բացվեց, եւ նրանք ընկան ներս՝ գետնին: Նրանց ետեւից երկու վերաբնակվել ցանկացողներ էլ հայտնվեցին, բայց արդեն ուշ էր: Վերջիններս հուսահատ գետնին ընկան դռան մյուս կողմում:

Նախորդ տասնամյակների ընթացքում Հոնկոնգն ապաստան էր ծառայել մայրցամաքից եկածների համար: 1957 թվականին աջերի դեմ ծավալված արշավը, Մեծ ցատկի երեք դժվարին տարիները, Մշակութային հեղափոխության տասը տարիները երկար, դժվարին ժամա-

## Չժան Յավեն

Նակաշրջան էին: Ուտելիք հայթայթելու, ծայրահեղ ձախերի հալածանքներից խուսափելու, ազատություն փնտրելու համար՝ անհաշիվ մարդիկ վտանգում էին իրենց կյանքն ու առողջությունը՝ անցնելով բարձրաբերձ լեռներով, մոլեգին տարերքին ենթարկվող գառիվեր լեռնաշղթաներով, հաղթահարելով շնածկերով լի ջրերը եւ բրիտանական սահմանապահների զենքերի մութ փողերին դեմդիմաց ելնելով: Նրանք պատրաստ էին այդ բոլոր վտանգներին դիմակայելու:

Հնարավոր չէ միանշանակ ասել, թե այդ տարիներին մայրցամաքային Չինաստանից որքան մարդ է տեղափոխվել Հոնկոնգ: Ոմանք ասում են՝ միլիոններ: Ոմանք էլ ասում են, թե քչերն են հաջողության հասել, գուցե քսան կամ երեսուն տոկոսը: Ներգաղթել ցանկացողների ճնշող մեծամասնությունը ողբերգական ճակատագիր ունեցավ: Ոմանք թաղվեցին ծովում, ոմանք կորան լեռնային անապատում, ոմանք ընկան չին եւ բրիտանացի սահմանապահների զենքերի փողերի առջեւ: Նրանց միայնակ հոգիները հավերժ թաղված կմնան Հոնկոնգի գաղտնի ճանապարհներին: Չեն Բին'անը, ծագումով Շենչժենից, ուսումնասիրել է պատճառված ամբողջ վնասը՝ հեղինակելով մի զեկույց՝ գրքույկի ձեւով, որը կոչվում է «Ելք դեպի Հոնկոնգ»: Այդ ժամանակ Շենչժենում մի փոքրիկ երգ էր միշտ հնչում. «Բաո'ան [մարգում] ոչինչ չմնաց, բացի ճանճերից, մոծակներից ու ոստրեներից: Տասից ինը տուն դատարկ են, բոլորը գնացել են Հոնկոնգ, ոչ ոք չի մնացել, ջահելներից ու ծերերից բացի»:

Խիստ հուսահատ վիճակում՝ որոշ մարդիկ բազմաքանակ պահպանակներն օգտագործում էին որպես լողալու հարմարանքներ, իսկ ոմանք էլ թիավարելու համար օգտագործում էին թենիսի թիակները: Ոստիկանական շների հետապնդումից թաքնվելու համար շատերը քաղաքային կենդանաբանական այգուց վերցնում էին վագրերի չորացած կղանքը եւ քայլելիս շաղ տալիս իրենց ետեւից: Շները, հետքերը հոտոտելով, շատ էին վախենում եւ չէին հետապնդում նրանց:

Այլ գրառումներից երեւում է, որ այն գաղթողները, որոնք հաջողության չէին հասել, Շենչժենում հիմնել էին «դիակի ձկնորս» համքարությունը: Նրանք իրենց ապրուստը վաստակում էին մահացածների մարմինները ջրից հանելով, այդ պատճառով էլ տեղացիները նրանց այդպես էին անվանում: Շենչժենի ծայրամասում գտնվող Շեկուուի ծո-

վաճոցի մերձակա ոստիկանական բաժանմունքը տեղեկացրեց, որ «ձկնորսները» ջրից դուրս հանած յուրաքանչյուր դիակի համար Շեկոուի համայնքից որպես «աշխատավարձ» իրավունք ունենի պահանջելու տասնհինգ յուան: Ոմանք օրական յոթ հարյուր հիսուն յուան աշխատեցին: Պարզվեց, սակայն, որ նրանց թաղած հիսուն մարմինների մեջ իրենց չորս հարազատներն էին:

Սա խոսում է այն դաժան ճշմարտության մասին, որ գաղթել ցանկացողների շրջանում մահվան դեպքերը հսկայական քանակի էին հասնում: Գաղթողների աղետալի աճը շարունակվելու էր 1950-ականներից մինչև Շենչժենի հատուկ տնտեսական գոտու ստեղծումը 1980 թվականի օգոստոսի 26-ին: Հոնկոնգյան միլիարդատերերից շատերը չեն, ենթադրաբար, նրանց շարքերից, ովքեր համարձակվել են ճանապարհորդություն կատարել այդ տարածքում 1960-ականներին եւ 1970-ականներին:

### **Տիու Կին Լենի տարօրինակ, սարսափելի ավանդությունը**

Մի անգամ, շատ վաղուց, օտարերկրացի մի մարդ ջրաղաց բացեց լեռան վրա: Բայց այնպես եղավ, որ ջրաղացը սևանկացավ՝ մնալով առանց փողի, եւ օտարերկրացին կախեց իրեն: Այդ օրվանից բլուրները կոչվեցին Կախվածի լեռնաշղթա (որ կանտոնյան բարբառով հնչում է Տիու Կին Լեն): Մի մեծ խումբ՝ գոմինդանյան զինվորներից, որոնց խայտառակ կերպով դուրս էին շարտել մայրցամաքային Չինաստանից, փախստականների ճամբար հիմնեց այդտեղ:

Երեկո էր, երբ իմ մեքենան մոտեցավ բլրի ստորոտին,- որը հետո կոչվեց պակաս հիշարժան անվամբ,- առաջ շարժվելով ասֆալտապատ լայն ճանապարհով: Ճանապարհի երկու կողմում կարճ թփեր ու խոտեր էին: Ես կանգ առա ճանապարհի վերջում՝ բուդդայական հիվանդանոցի փակ դարպասի դիմաց: Դարպասին մոտիկ բլրի լանջին Բողիսատվայի մի քանի քանդակներ էին կանգնեցված: Մոտակա անտառում մի քանի մոխրագույն կուռքերի ձողապույներ ծխի փոքրիկ քուլաներ էին արձակում: Վեր նայելով՝ տեսա հիվանդանոցի շենքը՝

## Չժան Ցավեն

մայրամուտի մարող լույսի վերջին շողերով ողողված: Անցյալի ավերածությունը վերացել էր, որպեսզի այլևս չկրկնվեր, ինձ թողնելով միայն սրընթաց երեակայությունս:

Ետդարձի ճանապարհին հանդիպեցի բլրալաջի խոտերում ծածկված մի քանի քանդված պատերի: Երբ քայլելով փտած տերեւների միջով՝ այդ նախկին տների անդուռ եւ անլուսամուտ շրջանակներից ներս էի մտնում, զգում էի պատմության տեսական շունչը: Երկար մնացի այդտեղ: Այն ամենն, ինչ մնացել էր փլատակների ներսում, ջարդված լուսամուտների մի քանի շրջանակ եւ դռների տախտակներ էին, արժեքավոր ոչինչ չկար:

Ասում են, որ գոմինդանյան հազարավոր պարտված զինվորներն այստեղ են իրենց վախճանը գտել՝ ի վիճակի չլինելով հասնել Թայվան, չկարողանալով վերադառնալ մայրցամաք: Քամուց քշված օդապարուկների նման, ոչ մի տեղ վայրէջք չկատարելով, հավաքվել են այստեղ, ուր ամայությունից բացի նրանց ոչինչ չէր սպասում:

Հոնկոնգում բրիտանական իշխանություններն այդ զինվորներին համարել էին փախստականներ եւ տեղավորել Հոնկոնգ կղզու Ղեյվիս լեռան վրա: Սի տարի, Վիշապ-նավակների փառատոնի ժամանակ, փախստականների մի խումբ նախաճաշում էր, երբ այդտեղով անցնող զբոսաշրջիկներ երեւացին: Չբոսաշրջիկների խմբի անդամները թմբուկ էին զարկում եւ ժողովրդական երգեր երգում՝ գլխավերեւներում պահած ՉԺԿ-ի դրոշը: Կոպիտ ասած, դա նման էր գոմինդանյան զինվորների սիրտը դաշույն խրելուն: Նրանք բռունցքները սեղմած հարձակվեցին զբոսաշրջիկների խմբի վրա՝ պատռելով ՉԺԿ-ի դրոշը եւ ծեծելով խմբի՝ տասնյակից ավելի մարդկանց: Բրիտանական իշխանությունները, անհանգստանալով, որ փախստականներն ավելի մեծ անախորժություններ կպատճառեն եւ կխաթարեն գաղութի հասարակական կարգը, անհապաղ նրանց տեղափոխեցին Տիու Կին Լեն: Տիու Կին Լենը գտնվում է Տոնկա ծովածոցի (Junk Bay) հարավային ծայրամասում, Նոր տարածքների Սայ Կուն շրջանում: Դա հեռավոր, ամայի մի տարածք է՝ երեք կողմից օվկիանոսով շրջապատված, առանց ընդհանրապես որեւէ բնակչության: Միակ կապն արտաքին աշխարհի հետ մի փոքր լաստանավ է դեպի Հոնկոնգ կղզում գտնվող ՇաուԿեյ Վան:

Գոմինդանի զինվորներից ոմանք ընտանիքներով էին, մյուսները

մենակ էին եկել: Այդ մարդիկ ոչ փող ունեին, ոչ տուն, որտեղ կարողանային ապրել, և լեռնալանջին փոքրիկ խրճիթներ կառուցեցին տանիքը ծածկելու համար նախատեսված թաղիքից: Ամռանը սրանք խաշվում էին, իսկ ձմռանը ցրտահարվում: Հեռվից նայելիս սրանց հյուղակները նման էին լեռնալանջին թափված փտող տերեւների: Ջրին մոտ տարածքում ուժեղ քամիներ էին լինում, և հաճախ փոթորիկները տեղահան էին անում թշվառ խրճիթները՝ ողբալի ոռնոց-աղաղակներ արձակելով:

Գիշերները զինվորներն զբաղվում էին մուրացկանությամբ: Չգիտեին, թե ուր գնան, ում դիմեն, որտեղից կգա իրենց վաղվա օրը: Նրանք հույս չուներին: Միակ բանը, որ բարձրացնելու էր սրանց ոգին՝ կապույտ և սպիտակ դրոշը, կախված էր Տիու Կին Լենի վրա (որը, պետք է նշել, բրիտանական դրոշ չէր): Ամեն տարի հոկտեմբերի 10-ին, բոլոր փախստականները հավաքվում էին հրապարակում՝ Գոմինդանի «Ազգային օր» տոնը նշելու արարողության համար:

1952-ին Թայվանից մի նավակ եկավ և տարավ փախստականներից մի քանիսին: Նրանց մեջ էր Մա ընտանիքը՝ Հուան Նահանգի Հենշան քաղաքից: Ամուսնու անունն էր Մա Հոույին, կնոջ անունը՝ Չին Հոու-սյու: Նրանք ունեին երկու տարեկան գեղեցիկ մի որդի, որը ծնվել էր 1950 թվականի հուլիսի 13-ին: Երեխան ճամբարի ամենակրտսեր փախստականն էր: Նրա անունն էր Մա Ին-ցզյու: Մի քանի տասնամյակ անց փախստականների ճամբարի այս երեխան ընտրվելու էր Թայվանի բարձրագույն պաշտոնում:

Այդ ժամանակներում Տիու Կին Լենը հայտնի էր որպես «Փոքրիկ Թայբեյ»: Չինվորները կոմունիստների համակիրներին երբեք չէին թողնում իրենց տարածք. այդպես անելը ճակատամարտի հրավեր էր: Չզվելի գոյության կռիվն աղավաղել էր սրանց հոգիները և բռնության ու արյունահեղության տեղիք տվել: Թալանը, սպանությունն ու հրկիզումը օտար բաներ չէին լեռան տարածքում: Բրիտանական իշխանությունները, որ մտահոգ էին հասարակական կարգի վրա ազդեցության համար, զինվորներին ապահովեցին անհրաժեշտ պարենամթերքով, կառուցեցին դպրոց և սրանց աշխատանքի տեղավորեցին: Զրիստոնեության հովանու ներքո սրանք ձեռնամուխ եղան փրկագնելու այդ հուսահատ հոգիները:

## Չժան Յավեն

1996-ի վերջին՝ Տիու Կին Լենի «Փոքրիկ Թայբեյը» ապամոնտաժվեց բրիտանական իշխանությունների կողմից: Հոնկոնգի՝ մայրցամաքային Չինաստանին վերադարձվելուց հետո լեռան անունը փոխվեց Տիու Կին Լենի: Լեռան լանջին կանգնած՝ հայացքս հառել էի լանջն ի վեր ձգվող մացառների փոքրիկ անտառին, եւ անհանգիստ միտքս խռովվում էր իրարամերժ հույզերի խառնուրդից: Գիտեի, որ գոմինդանյան շատ զինվորների մարմիններ էին այստեղ թաղված, Տիու Կին Լենի վերջին պահապանների մարմինները: Դա չին ազգի պատմության մեջ անցած ժամանակահատվածի փորձության վկայությունն էր:

Որոնումներիս ժամանակ մի լուսանկար տեսա: Լուսանկարում մարդիկ չկային, միայն լեռնալանջին մի գերեզման էր: Ամբողջովին խոտով ծածկված: Անուն չկար, ոչ ոք չգիտեր՝ ով է այդտեղ թաղված: Ընդամենը հողաթումբ էր: Լուսանկարի տակ գրված տողն ինձ ասում էր, որ սա մի մարդու գերեզման է, ով փորձել էր Շենչենից փախչել Հոնկոնգ:

Երկար ժամանակ անխոս նստել էի ու դրան էի նայում՝ խոր ցավ ապրելով այդ կորուսյալ անմեղ կյանքերի համար: Նրանք չապրեցին, որ տեսնեին Բարեփոխումներն ու Բաց դռների քաղաքականությունը, չապրեցին, որ տեսնեին հատուկ տնտեսական գոտու ստեղծումը Շենչենում, չապրեցին, որ տեսնեին այսօրվա Չինաստանը: Նրանք բացահայտում են խոր մի ճշմարտություն. անկատար, թերարժեք համակարգ ունեցող երկիրը,- առանց օրենքի լիարժեք գերակայության,- դառնում է շոգեգլանի ավերիչ մի ուժ՝ իր տակ խորտակելով ու ճզմելով ամեն մի երագանք, խորտակելով ու ճզմելով անթիվ անմեղ կյանքեր: Լուռիության անցակետում, կամրջին կանգնած, նայելով նորոգված Շենչենի կողմը, եւ ապա ավելի հեռուն՝ Հոնկոնգ - Չժուհայ - Մակաո կամրջի ուղղությամբ, համակվեցի այն զգացողությամբ, որ Չինաստանը վերջապես անցյալում է թողել այդ ամենը, եւ դիմավորել է նոր օրվա լուսաբացը:

## Ինչու ներում ստացած մի մարդ, որին թույլ էին տվել վերադառնալ Թայբեյ, չկարողացավ

Հիմա պատմելու եմ ես մի զինվորի մասին, բայց այս մեկը զոմինդանյան փախչող բանակից չէ: Ցայ Շենսանը Գոմինդանի գեներալ-մայոր էր, որին 25 տարով բանտարկել էին Ֆուչունի՝ պատերազմի հանցագործների կառավարման կենտրոնում: Ներում ստանալով 1975 թվականին՝ նա այսօր զոմինդանյան պատերազմի վերջին կենդանի մնացած հանցագործն է:

Իմ՝ Հոնկոնգում եղած ժամանակ Ցայն այդտեղ չէր: Նրան թույլատրել էին բնակություն հաստատել Գուանդուն նահանգի Չժանմուտու ավանի գրողների գաղութում: Դրա համար էլ գնացի նրա հետքերով: Ինձ համար այնտեղ տրված ճաշի ժամանակ ես հանդիպեցի Ցային իր երկրորդ կնոջ՝ իրենից երեսունչորս տարով երիտասարդ գրող Ու Ցյունի հետ: Ինձ զարմացրեց ոչ թե լեզենդար Ցային անձամբ տեսնելը, այլ նրա տեսքը: Նա իննսունհինգ տարեկան էր, եւ իր կյանքի մեկ քառորդը բանտում էր անցկացրել՝ որպես պատերազմի հանցագործ: Կյանքի դժվարությունները, ծանր զրկանքներն ու բաժանումները, այդ ամենն իրենց հետքն էին թողել նրա ծեր մարմնի վրա: Ցայը միայն փոքր-ինչ կորացած էր, բայց վայելուչ կեցվածք ուներ, եւ խոսքը հստակ էր ու հասկանալի: Հիշողությամբ կարող էր *Դատուն Շուն*\* ամբողջությամբ անգիր ասել: Անկախ նրանից՝ թեման երեկվա աշխարհն էր թե Հոնկոնգում այսօր կատարվող իրադարձությունները, խելամիտ եւ արագ արձագանքում էր, չափազանց զրուցասեր էր եւ յուրօրինակ խորաթափանց մտքի տեր:

Ու Ցյունն ինձ ցույց տվեց երիտասարդ Ցայի լուսանկարը: Նա գեղեցկատես էր, նուրբ դիմագծերով եւ իմաստուն հայացքով: Ասես կիսոյի աստղ լիներ: Լուսանկարն արված էր Հոնկոնգում՝ Ցային իր պա-

\* Ցին դարաշրջանի վերջերի գիտնական եւ քաղաքական փիլիսոփա Կան Յու-վեյի գլխավոր աշխատությունը:

## Զժան Յավեն

տերազմական հանցագործությունների համար ներում շնորհելուց եւ ազատ արձակելուց հետո: Այդ ժամանակ եւ հիսունվեց տարեկան էր: Հետաքրքրվեցի՝ այդքան գեղեցիկ՝ հիսունվեց տարեկանում, արդյոք նկարում ավելի երիտասարդ չէ՞ր: Գուցե հենց իր գեղեցկության պատճառով էր, որ այդքան մեծ հաջողություն ուներ կանանց մոտ:

Երբ Յայի առաջին կինը լսեց, որ նրան ներում է շնորհվել, բաժանվեց իր երկրորդ ամուսնուց (նա երկրորդ անգամ էր ամուսնացել Յայի դատավճռից հետո) եւ թռավ Հոնկոնգ՝ կրկին միավորվելու առաջին ամուսնու հետ: Կնոջ մահից հետո Յայը հանդիպեց Ու Յյունին, որը խորապես սիրահարվեց նրան: Անտեսելով ընտանիքի անհամաձայնությունը՝ Ու Յյունն ամուսնացավ իրենից երեսունչորս տարով մեծ Յայի հետ: Բայց այդ պայծառ ու հմայիչ, բնական ու անկաշկանդ, նշանավոր մարդը ծանր կյանք էր ունեցել, որն իր համար դժվար էր վերապրել:

Յայի հետ իմ հարցազրույցը սկսվեց այն հարցից, թե ինչպես երեսուկյոթ տարի առաջ նրան ներում շնորհեցին:

1975 թվականի մարտի 19-ին Ֆուչունի՝ պատերազմի հանցագործների կառավարման կենտրոնի բանտարկյալներին հրամայվեց, որ բոլորը հավաքվեն հրապարակում՝ կարելու լուրի հեռարձակում լսելու համար: Երբ բոլորն արդեն հավաքվել էին, հրապարակի բարձրախոսները, Չինաստանի ազգային ռադիոյի տղամարդ հաղորդավարի հանդիսավոր, հստակ ձայնով, ներկայացրին մի կարելու հայտարարություն: Այդ հայտարարությունն ապշեցրեց պատերազմի հանցագործներին:

«Ազգային ժողովրդական կոնգրեսի երկրորդ նիստը քննարկել եւ ընդունել է կալանքի տակ պահվող՝ պատերազմի բոլոր հանցագործներին հատուկ ներում շնորհելու եւ կալանքից ազատելու մասին Նախագահ Մաոյի եւ կուսակցության Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ ձեւակերպված՝ Պետական խորհրդի առաջարկությունները: Որոշումն ազատում է գոմինդանյան պատերազմի բոլոր հանցագործներին, ինչպես նաեւ պատերազմի այն 239 հանցագործներին, որոնք աշխատում էին խամաճիկային Մանչժուրիա պետության համար: Այս կապակցությամբ ազատված բոլոր պատերազմական հանցագործներին քաղաքացիություն կտրվի: Բոլոր աշխատունակներն



աշխատանք կունենան: Հիվանդները, պետական աշխատողների նման, բուժօգնություն կստանան պետական ծախսերի հաշվին: Անաշխատունակները սոցիալապես կապահովվեն պետության կողմից: Թայվան վերադառնալ ցանկացողներին կտրամադրվի ճանապարհաձախս եւ կտրվի մեկնելու հնարավորություն: Եթե գնացածները կցանկանան վերադառնալ, մենք կողջունենք նրանց»:

Պատերազմի հանցագործներն իրենց լսածին չէին հավատում: Խոր լռությունից հետո պատերազմի հանցագործների կալանավայրը, որը տասնամյակներ շարունակ հանգիստ էր ու հանդարտ, շնորհավորանքների խլացուցիչ աղմուկով արձագանքեց այդ ամենին:

«Կեցցե՛ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը»: «Կեցցե՛ Նախագահ Մաոն»:

Ծափահողջույնները, ուրախ բացականչություններն ու հեկեկոցները երկար ժամանակ չէին լռում:

Պատերազմի հանցագործները, որ անցած քսան տարիներն անկացրել էին բանտում, ազատության մասին չէին էլ երազել: Նրանք կարծում էին, թե իրենց ողջ կյանքը բանտում կանցնի: Սեւազգեստ այդ մարդիկ, ինչպես միայնակ փոքրիկ թռչուններ, նայում էին երկնքի աստղերին, եւ հույս չունեին, թե երբեւէ ազատ կլինեն այս կյանքում: Երբեք չէին սպասում, որ հանկարծ երկնի կապույտից այդպիսի անակնկալ լուր կհնչի իրենց ներում շնորհելու մասին. ինչպե՞ս կարող էին չարտասվել ուրախության արցունքներով:

Դա պատերազմի հանցագործների յոթերորդ եւ վերջին խումբն էր, որ հատուկ ներում ստացավ կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից: Վեցերորդը 1966 թվականին էր ստացել: Տին գահատոհմի վերջին կայսր Պու Ին նույնպես տասնհինգ տարով բանտարկված էր Ֆուշուն կենտրոնում եւ ներում ստացավ 1959 թվականի դեկտեմբերին:

Պատերազմի հանցագործներն իսկույն սկատեցին, որ իրենց ներումը տարբերվում է վեցերորդ խմբի ներումից. այդտեղ ավելացված էր. «Թայվան վերադառնալ ցանկացողներին կտրամադրվի ճանապարհաձախս եւ կտրվի մեկնելու հնարավորություն: Եթե գնացածները կցանկանան վերադառնալ, մենք կողջունենք նրանց»:

Նրանք կասկածում էին. կարո՞ղ էր դա ճիշտ լինել: Մի տեսակ փորձարկում չէ՞ր արդյոք:

## Չժան Ցավեն

Մի հանդիպման ժամանակ կենտրոնի ղեկավար Ցզին Յուանը հայտարարեց. «Ֆուշունի՝ պատերազմի հանցագործների կառավարման կենտրոնը լուծարված է: Այն կվերածվի VIP հյուրատան, «պատերազմի հանցագործ» տերմինն այլևս կիրառելի չէ: Այսօրվանից սկսած՝ դուք բոլորը Չինաստանի ժողովրդական Հանրապետության քաղաքացի եք: Դուք տղամարդիկ եք, եւ դուք մեր ընկերներն եք»:

Ներումը պարզապես սկիզբն էր: Էլ ավելի մեծ եւ անակնկալ ուրախություններ էին սպասվում այդ մարդկանց:

Ներում ստացածներն, այժմ արժանապատվորեն եւ ուրախությամբ ընդունելով Չինաստանի ժողովրդական Հանրապետության քաղաքացու իրենց նոր կարգավիճակը, Ֆուշունի, Ցզինանի, Սի՛անի բանտերից եւ Պեկինի Ֆինչեն բանտից տեղափոխվեցին Պեկինի տարածք: Մարտի 23-ին, հինգ ավտոբուս նրանց բերեցին Պեկինի հյուրանոց՝ հանդիպելու եւ ճաշելու բարձրաստիճան այնպիսի ղեկավարների հետ, ինչպիսիք են Ե Ցզյանինը, Հուա Գոֆենը եւ Ու Դեն:

Եի, Հուայի եւ Ուի հետ հանդիպման ժամանակ Ցայն առաջին շարքում էր, նստած էր Գոմինդանի նախկին գեներալ-լեյտենանտ Հուան Վեյի հետ միասին: Հուան Վեյը դուրս եկավ բեմ՝ խոսելու պատերազմի հանցագործների անունից՝ ներկայացնելով Ցայի զրած շնորհակալական նամակը Նախագահ Մաոյին, որը ստորագրվել էր ներում ստացած բոլոր մարդկանց կողմից: Հուանի խոսքի ավարտից հետո միջոցառումը վարողը Ցային խնդրեց վեր կենալ եւ իր կողմից մի քանի խոսք ասել:

Ցայն անակնկալի եկավ: Դա անսպասելի պատիվ էր, եւ ոչ ոք նրան չէր ասել, որ ինքը բեմ է բարձրանալու եւ խոսելու: Այդ պահին նրա միտքը եռացող կաթսայի էր նման, անցյալը հորդում էր նրա վրա սրընթաց, անզուսպ ալիքներով: Նա մտածում էր այն ժամանակի մասին, երբ թաքստոցում էր, ապա ձերբակալվեց, դատավարության ենթարկվեց, մտածում էր իր հետաձգված մահապատժի եւ բանտում անցկացրած կյանքի քսանհինգ տարիների մասին:

Ցայի մտքերը խառնաշփոթ էին, հույզերը՝ ճնշող: Բեմ բարձրանալու պահին արտասվեց:

Նա ասաց, որ Չինաստանի ողբերգական պատմության մեջ ինքն ակամա խաղացել է ողբերգական դեր, որ ակամա զոհաբերել է իր երի-

տասարդ տարիքը: Երեսունմեկ տարեկան էր, երբ իրեն ձերբակալեցին, եւ հաջորդ քսանհինգ տարին անցկացրեց բանտում: Հիմա հիսունվեց տարեկան է: Մեկ կյանքի ընթացքում մարդուն քանի՞ քառորդ դար է հասնում: Քանի՞ անգամ է լրանում նրա հիսունվեց տարին:

Արցունքներն աչքերին նա ասաց. «Երիտասարդությունս, կյանքիս հիմնական մասը, իմ ապագան. այդ ամենը մեռած եւ թաղված են: Եվ հանուն ոչնչի՛: Ես ամբողջ սրտով հույս եմ փայփայում, որ Չինաստանի մարդիկ, չին ժողովրդի զավակները երբեք այլեւս զենք չեն բարձրացնի միմյանց վրա: Որպեսզի այդպես լինի, Ցայ Շենսանը կանցնի ցանկացած փորձություն, կստանձնի ցանկացած առաջադրանք»:

Ցայն ամբողջովին դատարկեց իր սիրտն ու հոգին՝ խոսելով այն խորին ցավի մասին, որ զգում էին պատերազմի հանցագործները, եւ արտահայտելով այն մտքերը, որ ցանկացած իմաստուն մարդ ուներ. չին ժողովրդի զավակներն այլեւս երբեք իրենք իրենց դեմ չպե՛տք է պատերազմեն:

Բեմի վրա Ցայի ցավն ու ափսոսանքն ավելի խորն էին, եւ միայն սեփական կյանքի համար չէր ցավ ապրում: Նա խորապես հուսախաբված էր, որ վարչապետ Չժոու Էնլայը,- Հուանպուի Ռազմական ակադեմիայի շրջանավարտ, Գոմինդանի եւ Չինաստանի կոմունիստական կուսակցության միջեւ զինադադարի ճարտարապետ եւ Գոմինդանի հետ կապերի գլխավոր կողմակից (ու նաեւ կոմունիստական առաջնորդ, որով Ցայն ամենաշատն էր հիանում եւ որին շատ էր ուզում տեսնել),- այդտեղ չէր:

Նա նախկինում հանդիպել էր Չժոուին. իրականում՝ վեց անգամ:

Առաջին անգամ 1938 թվականին էր, երբ Գոմինդանը եւ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը համագործակցում էին՝ ճապոնական ներխուժմանը դիմակայելու համար: Ցայն այդ ժամանակ երեսունինը տարեկան էր, լի ուժ ու եռանդով, տոգորված անսահման սիրով իր երկրի հանդեպ: Նա փորձառություն էր ստանում Ուհան քաղաքում՝ գոմինդանյան կառավարության ռազմական կոմիտեի պատերազմի ուսումնական կենտրոնում, ուսուցում անցնողների առաջին խմբում եւ Ցզյանսի նահանգի բոլոր թեկնածուների մեջ ցուցաբերեց ամենաբարձր արդյունքը: Նրա խմբի ղեկավարը Չան Կայ-շին էր: Չժոու Էնլայը ծառայում էր որպես Չինաստանի կոմունիստական կուսակ-

## Չժան Յավեն

ցության ներկայացուցիչ եւ Գոմինդան- Չինաստանի կոմունիստական կուսակցություն միասնության կառավարությունում քաղաքական բաժնի փոխտնօրեն: Նա խոսում էր ուսանողների հետ: Բավականին ուժեղ, գեղեցկատես եւ հանգիստ մարդ էր: Եւլայը խորը տպավորություն թողեց Յայի վրա. նրա հայրենասիրությունն ակնհայտ էր, իսկ խոսքը՝ ոգեշնչող: 1944 թվականին Չան Կայ-շիի որդին՝ Չիան Չին-կուոն (Յզյան Ցինգո), Յային տեղափոխեց Չունցին՝ աշխատելու Գոմինդանի երիտասարդական լիգայի կենտրոնական կադրային դպրոցի հետ: Այդ ընթացքում նա բազմիցս հանդիպեց Չժոուի հետ: Վերջին անգամ 1945-ի օգոստոսին էր: Մաո Ցզեդունը երկու օրով Չունցին էր եկել բանակցությունների, որոնք ողջունում էր չին-խորհրդային Մշակութային միությունը: Չժոու Եւլայը, որն ուղեկցում էր Մաո Ցզեդունին, Յային ներկայացրեց նրան՝ ասելով. «Մա Յայ Սիգզենն է (Յայի իսկական անունը), պարոն Չին-կուոյի օգնականը եւ պատերազմի ժամանակ մայրաքաղաքի երիտասարդների առաջնորդներից»: Մաո Ցզեդունը պատասխանեց՝ ասելով. «Լավ: Երկրի երիտասարդությունը պետք է միավորվի»:

Չժոու Եւլայի ապշեցուցիչ լավ հիշողությունը եւ համեստ պահվածքը խորապես ազդել են Յայի վրա իր ամբողջ կյանքում: Այդ պատճառով էլ նա մեծ ցավ ապրեց, երբ տեսավ, որ Չժոուն հանդիպմանը ներկա չէր: Բայց չգիտեր, որ Չժոուն մեկ տարի առաջ՝ 1974 թվականին, զնացել էր հիվանդանոց՝ վիրահատվելով միզապարկի քաղցկեղի դեմ: 1974-ի նոյեմբերին ախտորոշել էին հաստ աղիքի քաղցկեղ, եւ նա մնացել էր հիվանդանոցում:

Պատերազմի հանցագործները չգիտեին էլ, որ Չժոուն բազմիցս զեկույցներով ներկայացրել էր իրենց վիճակի բարելավման մասին առաջարկներ: 1971 թվականի մայիսին այդպիսի մի փաստաթղթում նա երկար մեկնաբանություն առաջարկ էր ներկայացրել.

«Ֆուշունի՝ պատերազմի հանցագործների կառավարման կենտրոնը հաջողության է հասել իր քաղաքական աշխատանքում... Պրոլետարիատի մշակութային մեծ հեղափոխության ժամանակ հանրային անվտանգության նախարարությունը չէր կարող հրահանգներ տալ, ոչ էլ կարող էր ստուգել իրավիճակը: Այդ իսկ պատճառով պատերազմի հանցագործներից շատերը հիվանդանում էին եւ մահանում: 1966-ին

մեկ մահ է եղել, 1967-ին՝ հինգ, 1968-ին՝ ութ, 1969-ին՝ ինը, 1970-ին՝ տասը եւ 1971-ի առաջին երկու ամիսների ընթացքում երեք մահ: Սա ապացույց է, որ աշխատանքի մակարդակը [կենտրոնում] անընդհատ անկում է ապրում. . . մինչդեռ այն պետք է արտահայտեր Սառ Յգեդունի պրոլետարական մեծ քաղաքականության ոգին եւ պատերազմի հանցագործներին պետք է ներման արժանանալու հնարավորություն տրվեր: Հակառակ դեպքում մարդիկ կասեն. «Դուք ներում շնորհեցիք պատերազմի մեծ հանցագործներին, իսկ փոքրերին փակեցիք, որպեսզի մահանան: Դուք ներում շնորհեցիք պատերազմի օտարերկրյա հանցագործներին, մինչդեռ փակի տակ եք պահում նրանց, ովքեր ձեր երկրացի են»: Սա չի համապատասխանում Սառ Յգեդունի՝ նրանց [առջեւ] ճանապարհ բացելու քաղաքականությանը: Նրանք դատապարտվել են երկար ժամանակով: Վաղուց արդեն նրանցից դուրս է քամվել օգտակար ամեն բան: Ուշադրության կենտրոնում պետք է լինի բարեփոխումը, որ նրանց կրկին կվերադարձնի դեպի կյանք»:

Պատերազմի հանցագործները չէին կարող իմանալ, որ 293 անուններով ցուցակը Չժոուն կազմել էր հիվանդանոցում պառկած, 1974 թվականի դեկտեմբերի 23-ին: Այդ փաստաթուղթը՝ պատերազմի 293 հանցագործների անուններով ներման հրամանը, վերջին փաստաթուղթն էր, որ Չժոուն կարելու էր: Ավարտելուց հետո նա քարշ տվեց իր թուլացած մարմինը դեպի ինքնաթիռ եւ բժիշկների հետ թռավ Չանչա՝ փաստաթուղթը Սառ Յգեդունին հասցնելու համար:

Պատերազմի հանցագործների ազատ արձակվելուց երեք օր անց՝ 1975 թվականի մարտի 26-ին, Չժոու Էնլայը հերթական անգամ վիրահատվեց: Այդ ժամանակ 1,73 մետր հասակ ունեցող Չժոուն կշռում էր ընդամենը 30,5 կիլոգրամ: 1976 թվականի հունվարի 8-ին Չժոուն հեռացավ այս աշխարհից:

Հոգու խորքում Ցայն ավելի խորը մելամաղձ էր փորձում հաղթահարել. ո՞ր էր գնալու հիմա, երբ բանտից դուրս էր ելել: Որտե՞ղ էր այժմ իր տունը: Ո՞ր էր վերադառնալու: Այս հարցն էր անհանգստացնում ներում ստացած պատերազմի բոլոր հանցագործներին:

Նրանցից ոմանք տուն ունեին, ուր կարող էին վերադառնալ, ոմանք էլ ունեին տուն, բայց դժվար թե վերադառնալը հնարավոր լիներ: Մինչդեռ Ցայը տուն չունեւ, որ վերադառնար:

## Չժան Ցավեն

Նա երբեք չէր մոռանալու ավելի քան քսան տարի առաջվա իրադարձությունները:

1951 թվականի հոկտեմբերի 26-ին Ցզյանսի նահանգի Շանժաո շրջանում տեղի ունեցավ հասարակական զանգվածային դատավարություն: Ավելի քան քառասուն պատերազմական հանցագործներ կանգնեցին դատարանի առջեւ՝ ձեռքները թիկունքներին կապված եւ պարանները վզներին: Վեցը դատապարտվեցին մահվան: Նրանց թվում էր Նաեւ Ցայը, որն այդ ժամանակ երեսուներկու տարեկան էր: Երբ լսեց, թե ինչպես հայտարարվեց, որ «Ցայ Շենսանը դատապարտվել է մահվան», գիտեր, որ, առանց որեւէ կասկածի, իր ժամանակը եկել է: Կոմունիստական կուսակցությունն արդեն երեք անգամ ձերբակալել էր ազատ էր արձակել նրան: Անհնար էր, որ նրանք այս անգամ խնայելին գոմիսնական համառ հակառակորդին:

Առաջին անգամ նրան բանտարկեցին 1949 թվականի ապրիլին: Չինաստանի երիտասարդության ազգային փրկության կորպուսի ղեկավար Հու Գույյուն, Թայվան փախչելու ընթացքում, Չիան Չին-կուոյի հրամանով մեկ ժամով կանգ առավ Ցզյանսի նահանգի Գույսի շրջանում: Այդտեղ Հուն Ցային խնդրեց միանալ իրեն եւ Թայվան գնալ: Ցայը հրաժարվեց: Նա երիտասարդ էր ու եռանդով լի եւ ցանկանում էր հատուցել այն ամենն, ինչ իրեն տվել էր Գոմիսնակը, եւ բարձրացավ լեռները՝ կռվելու որպես պարտիզան: Ցայը սխալմամբ կարծում էր, թե կոմունիստների հաղթանակից հետո Չինաստանը կդառնա խորհրդային գաղութ: Նա ուզում էր մինչեւ արյան վերջին կաթիլը կռվել կոմունիստների դեմ: Ինքը, կինը՝ Ցաո Յունսյան, եւ մի խումբ տղամարդիկ ձիերով բարձրացան լեռներ՝ պարտիզանական պատերազմի նախապատրաստվելու համար: Ցաոն ծնվել էր Հունանում եւ իր հոր նման ավարտել էր Հուանպուի ռազմական ակադեմիան: Նա հայտնի էր այն բանով, որ միաժամանակ կարող էր երկու ատրճանակ գործածել, ամեն ձեռքին՝ մեկը: Սայիսի 4-ին Ցայի զինված խումբը գրոհի ենթարկվեց Չինաստանի ժողովրդական-ազատագրական բանակի կողմից: Նրանց բոլորին գերի վերցրին: Խառնաշփոթի ժամանակ Ցային հաջողվեց փախչել եւ մեկնել Շանժաո:

Ցայի երկրորդ ձերբակալությունը 1950 թվականի դեկտեմբերին էր: Շանժաոյի հանրային անվտանգության ղեկավար Լու Ֆուն նրան

հարցրեց. «Ցայ Շենսան, ի՞նչ ես կարծում, մենք ի՞նչ պետք է անենք քեզ հետ՝ հաշվի առնելով քո արածը: Նույնիսկ հիմա դու դեռ պահպանում ես հակառակ դիրքորոշումդ: Որտեղի՞ց է այն համոզմունքդ, թե կարող ես ուզածդ անել»:

Ցայի պատասխանն ուղիղ էր. «Կարծում եմ, որ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը հաջողության չի հասնի»:

«Ինչո՞ւ»:

«Բացատրելու համար որոշ ժամանակ կպահանջվի»:

«Լավ, ես թեյ կպատրաստեմ»:

Ցայը չէր էլ սպասել, որ հանրային անվտանգության նախարարության պաշտոնատար անձը համբերատար կլսեր իր շատախոսությունը, կլսեր իր պնդումը, թե ՉԿԿ-ն երբեք չի կարողանա գլուխ հանել երկրի արտաքին քաղաքականությունից, հասարակությունից, մշակույթից, քաղաքականությունից կամ տնտեսությունից եւ ղեկավարել երկիրը: Է՛լ ավելի քիչ էր Ցայն սպասում, որ այդ նույն պաշտոնյան թույլ կտար իրեն տուն գնալ՝ տնային կալանքի տակ, եւ կթողներ, որ ինքը գիրք գրի՝ շարադրելով իր հայացքները:

Ցայը պետք է միայն հայթայթեր տեղեկատու գրքերի ցանկը, իսկ ղեկավար Լուն պետք է ինչ-որ մեկի միջոցով հնարավոր դարձներ փնտրելու եւ գտնելու նրան անհրաժեշտ նյութերը: Կես տարի անց նա ավարտեց «Նոր Չինաստանի տնտեսական խնդիրների բացատրությունը» աշխատանքի սեւագրությունը: Ղեկավար Լուն այն ուղարկեց հրատարակչություն, որը պատասխանեց. «Այսպիսի գիրքը չի մտնում մեր հրատարակչատան իրավասության շրջանակների մեջ»: Շատ չանցած՝ հանրային անվտանգության նախարարությունը հրամայեց, որ Ցային ձերբակալեն:

Այս անգամ Ցայը դատապարտվեց մահվան. նա կասկած չուներ, որ սա վերջն է: Կինն արդեն պատրաստել էր նրա դագաղը: Ցային տարան մահապատժի վայր, նա լսեց կրակոցների ձայնը եւ այդպես պարզեց, որ դեռ ողջ է, իսկ կողքին գտնվող երեք տղամարդիկ մեռած ընկան գետնին: Մեկը վախից էր մահացել: Ցայը գիտեր, որ չնայած իրեն չէին գնդակահարել, բայց իր օրերը հաշված են: Նա որոշեց խնդրագրով դիմել կառավարությանը, որպեսզի իրեն ամուսնալուծեն:

Դատարանում, 1951 թվականի դեկտեմբերի 24-ին, դատավորը

Չժան Յավեն

Նրան հարցրեց, թե ինչու է ուզում ամուսնալուծվել: Ցայռ պատասխա-  
նեց. «Ես սիրում եմ կնոջս: Եվ ուզում եմ, որ նա գտնի ինչ-որ մեկին ու  
հետն ամուսնանա, որպեսզի բնականոն կյանքով ապրի»: Վերջում նա  
դատարանին խնդրեց թույլ տալ իրեն, որ կնոջը մի բանաստեղծություն  
ուղարկի.

*Բանտարկյալ եմ մի, որ սպասում է իր մահվան վճռին,  
Աղոթում եմ լուկ, որ դու երջանիկ՝ նոր կյանքով ապրես,  
Որ պայծառ լինի քո վաղվա օրը:  
Եվ մնաս բարով հավիտյան, իմ սե՛ր:  
Ուզեցի մեկ էլ, մի վերջին անգամ նայել քո դեմքին,  
Բայց արցունքներն են դեմքս ողողում:*

Ցայն արտասվալից հրաժեշտ էր տալիս կնոջը՝ իրենց երկարատե-  
տարանջատումն սկսվելուց առաջ:

Ազատ արձակվելուց հետո, հենց իր ամենաանհարմար պահին,  
Ցայռ հեռագիր ստացավ, որում ասվում էր, թե երբեմնի կինը՝ Ցառ  
Յունայան, գալիս է Պեկին՝ նրան տեսնելու, եւ իրենց աղջկան էլ հետն  
է բերելու:

Պեկինի երկաթուղային կայարանում քսանհինգ տարի իրարից հե-  
ռու ապրած այդ զույգն ամուր գրկախառնվել էր: Նրանց դուստրը, որ  
հինգ տարեկան փոքրիկ աղջիկ էր, երբ Ցային բանտարկեցին, այժմ  
երեք երեխաների մայր էր:

Օրեր շարունակ նրանք գրուցում էին գիշեր-ցերեկ, խոսքերին ու  
արցունքներին ասես վերջ չկար: Կինը մեծացել էր,- այլեւս չէր ունենա  
իր երիտասարդ տարիքի շքեղ տեսքը,- բայց Ցայռ դեռ անսահման սի-  
րում էր նրան: Սակայն Ցայռ գիտեր, որ այլեւս ոչինչ հնարավոր չէ. նա  
վաղուց պատկանում էր մեկ ուրիշին:

Մոտավորապես այդ ժամանակ էր, որ ներում ստացած բանտարկ-  
յալներից ինը թայվան մեկնելու խնդրագիր ներկայացրին, որպեսզի  
միանային իրենց հարազատներին: Ցայռ երկընտրանքի մեջ էր.  
պե՛տք է գնա թայվան, թե՛ պիտի մնա մայրցամաքային Չինաստա-  
նում: Թայվանում հարազատներ չունեւր եւ միայն մեկ իսկական մտե-  
րիմ ընկեր ուներ՝ Չիան Չին-կուոն: Ցայի համար Չիանն ավելին էր,



քան հարազատը. ևա Չիանին պարտք էր այն բանի համար, որ իր տա-  
 դանդն ու շնորհքը գնահատվել էի օգտագործվել էին:

1937 թվականին Ցայը,- որ ծնվել էր մեծահարուստ ընտանիքում,  
 ավարտել Շանժաոյի ավագ դպրոցը եւ Ցզյանսիում քննություն հանձ-  
 նելիս ամենաբարձր արդյունքներն էր ցուցաբերել,- ստուգման են-  
 թարկվեց Գոմինդանի կառավարության ռազմական կոմիտեի՝ պատե-  
 րազմի կադրերի ուսումնական կենտրոնում վերապատրաստվողների  
 առաջին խմբում: Ցայի գեղեցիկ արտաքինը, բազմաշնորհությունն ու  
 քաջությունը 1938 թ.-ի Ուհանի ռազմարշավի ժամանակ նրան արժա-  
 նացրին Չիանի ուշադրությանն ու խոր հիացմունքին: Եւ արագ նշա-  
 նակվեց Ցզյանսիի երիտասարդական քարոզչական լիգայի ղեկավար:  
 Ցաո Յունայան Չիանի ուսանողուհին էր, եւ Չիանը նրան հանձնարա-  
 րեց միանալ Ցայի գլխավորած առաջնագծի արտագնա խմբին: Ցայի  
 եւ Ցաոյի սերը ծաղկեց պատերազմի ժամանակ: 1941թվականի նոյեմ-  
 բերի 17-ին նրանք ամուսնացան, եւ Չիան Չին-կուն դարձավ նրանց  
 ամուսնության վկան: Չիանը նրանց տոնական երկտող կվիրեց. «Մեկ  
 սրտով, մեկ առաքինությամբ՝ երկրի համար եւ նրա ժողովրդի»: Դրա-  
 նից հետո Ցայը շարունակ պաշտոնի բարձրացում ունեցավ: Շատ չան-  
 ցած՝ ևա գեներալ-մայորի կոչում ստացավ եւ նշանակվեց Չինաստա-  
 նի երիտասարդության ազգային փրկության կորպուսի տնօրեն: Այդ  
 ժամանակ Չիանը բարեհաջող «վագրի որս» էր անում Շանհայի իշխող  
 դասակարգերի շրջանակներում, եւ Ցայը գիրք գրեց՝ «Չիան Չին-կու-  
 նն Շանհայում» վերնագրով: Ցայն իր քսանհինգ տարիները, որպես  
 պատերազմի հանցագործ, անցկացրեց, ինչպես ինքն էր համարում,  
 անվերջ մութ ու խավար մի թունելի մեջ՝ լույսի շողերից իսպառ զրկ-  
 ված: Այժմ վերականգնել էր իր ազատությունը եւ կարծես այն ամենն,  
 ինչ տեսնում էր, արեւի լույսն էր: Սա երջանիկ կյանքի նրա վերջին  
 հնարավորությունն էր: 1949 թվականին իր վերջին հնարավորությունը  
 ևա, ցավոք, կորցրել էր: Այդ ժամանակ ծաղկուն հասակում էր եւ Թայ-  
 վան փախչելու առիթը չէր օգտագործել: Արդյունքն այն եղավ, որ  
 քսանհինգ տարի անցկացրեց պատերազմի հանցագործների կառա-  
 վարման կենտրոնի ներսում փակված: Եվ հիմա ոչ մի կերպ չէր կարող  
 այս հնարավորությունը բաց թողնել: Հակառակ դեպքում մինչեւ կյան-  
 քի վերջը կզոջար:

## Չժան Ցավեն

Ցայը հայտ ներկայացրեց Թայվան մեկնելու համար: Այդ մտքից հազիվ էր հուզմունքը զսպում, երբ գնում էր Պեկինի Վանֆուցզին առեւտրային փողոցում գտնվող խանութ՝ ձեռք բերելու Հանչժոուի ասեղնագործ մետաքսե գորբելեն, որպեսզի նվիրի Չիան Չին-կուոյին, երբ հասնիպեն:

Դա 1975 թվականի ապրիլի 14-ին էր, ժամը 12:30-ին, Թայվանում Չան Կայ-շիի վախճանվելուց ընդամենը ինն օր անց: Տասը ներում ստացած՝ պատերազմի գոմիսդասյան տասը հանցագործներն առաջին դասի իրենց վագոնից դուրս եկան Կոուլուն-Գուանչժոու երկաթուղային գծում եւ ոտք դրեցին Լուտիու կամրջի վրա, որ տանում էր դեպի ազատ Հոնկոնգ: Նրանք արեւմտյան կոստյումներ էին հագել եւ ազատ տղամարդկանց արժանապատիվ պահվածք ունեին, վայելում էին իրենց համար վաղուց մերժված արեւի լույսը, եւ այն երազանքը, որին հասնելու հույս անգամ չէին համարձակվում ունենալ անցած քսանհինգ տարիներին, այժմ իրականություն էր դարձել: Ամեն մեկի մոտ երկու հարյուրական յուան կար, որ ստացել էին կուսակցության կենտրոնական կոմիտեից, հարյուր ֆուստ արժողությամբ սևնդի օրաբաժինների կտրոններով: Հուզված էին, լքված, սպասող, անհամբեր... բառերն անկարող են նկարագրել նրանց համակած խառն ու իրարամերժ հույզերը: Բոլորն էլ եղել էին Գոմինդանի բարձրաստիճան գինվորականներ, Չան Կայ-շիի հավատարիմ հետևորդներ: Նրանք էին՝

Գեներալ-լեյտենանտ Վան Բինյուն՝ Գոմինդանի 51-րդ բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Չեն Շիչանը՝ Գոմինդանի 25-րդ բանակի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Վան Յունպեյը՝ Գոմինդանի անվտանգության մարմինների նախկին փոխտնօրեն Չժեցզյան նահանգում, գեներալ-մայոր Չժոու Յանհանը՝ Գոմինդանի հետաքննությունների եւ վիճակագրության բյուրոյի հարավ-արեւմտյան շրջանի ղեկավարի նախկին տեղակալ, գեներալ-մայոր Ցայ Շենսանը՝ Չինաստանի ազգային փրկության երիտասարդական կորպուսի «Գուանդուն» ծառայության շտաբի նախկին ղեկավար, գեներալ-մայոր Դուան Կյունը՝ հետաքննության եւ վիճակագրության բյուրոյի նախկին պաշտոնյա, գնդապետ Չժան Հայիշանը՝ Գոմինդանի երիտասարդական լիգայի 204-րդ կորպուսի նախկին ղեկավար, գնդապետ Յան Նանցունը՝ Գոմինդանի բանակի 150-րդ դիվիզիայի նախկին

հրամանատար, գնդապետ Չժան Տիեշին՝ 68-րդ բանակի քաղաքական աշխատանքի վարչության նախկին պետ, և գնդապետ Չժառ Իսյուն՝ Գոմինդանի բանակի 281-րդ դիվիզիայի հրամանատար:

Տասը հոգի՝ երկու գեներալ-լեյտենանտ, չորս գեներալ-մայոր, չորս գնդապետ: Ամենատարեցն ավելի քան յոթանասուն տարեկան էր, ամենաերիտասարդը՝ հիսունվեց տարեկան Ցայ Շենսանն էր: Նրանցից մեկը՝ Չժոու Յանհան, կոմունիստական «Կարմիր ժայռ» հայտնի լրտեսական վեպի հետախույզների ղեկավար Շեն Յանցզայի ոգեշնչող նախատիպն էր:

Նախկինում Չժոուն աշխատել էր Գուիչժոուի Սիֆեն բանտում, և հայտնի էր Գոմինդանի բանակում որպես «գիտնական-մարդասպան» և «ժպտացող վագր»: Ժողովրդական Հանրապետության հիմնադրման նախօրեին նա գաղտնի ծրագրեր կազմեց՝ Չունցին հեղափոխականներ ուղարկելու, նրանց թվում՝ գեներալ Յան Հուչենի և նրա քարտուղար Սոն Ցիյունի ամբողջ ընտանիքները: Բանտում եղած ժամանակ Չժոուն հրաժարվել է խոստովանել Յանի ընտանիքի սպանությունը. թեև, նախքան Հոնկոնգից հեռանալը, նա խոստովանեց իր հանցանքը Ցայ Շենսանին:

Չինաստանի կառավարությունը փոխհատուցեց Չինաստանի տուրիստական ծառայությանը՝ Հոնկոնգում բարձրակարգ հյուրանոցներում տասը տղամարդու տեղավորելու համար: Գիշերը նրանցից և ոչ մեկը աչք չփակեց: Նրանց մտապատկերում իրենց աչքերի առջև խայտացող՝ Թայվանի նեղուցներն էին, և մտքով թռչում էին դեպի հարազատները, որոնց չէին տեսել քսանհինգ տարի:

Նրանց վիզաները Հոնկոնգում ուժի մեջ էին միայն մեկ շաբաթ՝ 1975-ի ապրիլի 14-ից 21-ը: Բայց մեկ շաբաթ անց Թայվանից ոչ մի տեղեկություն չեկավ: Մի քանի շաբաթ առաջ, մարտի 19-ին, Չիան Չինկունն հիվանդ պառկած հորը հայտնել էր բանտարկյալներին ներում շնորհելու մասին լուրը: Նույնիսկ մահվան մահճում կյանքին թելով կապված՝ Չան Կայ-չիին հաջողվեց մի քանի կոպիտ խոսք արտաբերել. դրանց մեջ նաև չարությամբ լի այս խոսքն էր, որ իր հետ գերեզման էր տանելու. «Այդ կոմունիստ Մաոն իմ կյանքն է ուզում»: Քիչ անց նա վախճանվելու էր:

Արդար կլինի ասել, որ այդ ժամանակ Թայվանը դժվարությունների

## Չժան Ցավեն

առջեւ էր կանգնած՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Նոր էր վտարվել Միավորված ազգերի կազմակերպությունից, նոր էր Չան Կայ-շին վախճանվել, եւ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը ետ էր ուղարկում պատերազմի տասը հանցագործի: Ապրիլի 23-ին ամերիկյան «Նյուգուիք» ամսագիրը Չան Կայ-շիի գրեթե անկյանք մարմնի լուսանկարի կողքին հրապարակեց մի լուսանկար, որ պատկերում էր Ցայ Շենսանին եւ Վան Բինյուին՝ Հոնկոնգ մտնելիս:

Ցայն էր, որ ամենաշատ վրդովմունքը պատճառեց Թայվանին ու նրա առաջնորդներին: Պեկինի հյուրանոցում նրա դառն ու տխուր ելույթը Թայվանի իշխանությունների ականջն ընկավ: Նրանք կարծում էին, թե Չինաստանի կոմունիստական կուսակցությունն ազատում է պատերազմի հանցագործներին՝ որպես «միասնական ճակատի աշխատանքի»\* գործիքների, եւ որ նրանց ուղարկում են Թայվանը կործանելու եւ «Մայրցամաքային գլխավոր երկիրը» գրավելու Թայվանի պլանը ձախողելու համար: Ապրիլի 18-ին Թայվանը մի խումբ ուղարկեց, որ անձամբ տեսնի այդ տասը տղամարդուն եւ ներկայացնի չորս պահանջ. նախ՝ բացատրել Թայվան մուտք գործելու պատճառները, երկրորդ՝ հայտնել, որ իրենք որպես փախստական են մուտք գործում Թայվան, երրորդ՝ տեղեկացնել, որ Թայվանում իրենք պարտավորվում են պահպանել օրենքը, չորրորդ՝ տեղեկացնել, որ բոլորի համար կգտնվեն մարդիկ, ովքեր հանդես կգան որպես իրենց երաշխավորներ:

Նրանցից ինը համաձայնեցին պահանջներին: Միայն Ցայ Շենսանը չհամաձայնեց. «Ինչո՞ւ պետք է ընդունեմ, որ փախստական եմ: Մայրցամաքային Չինաստանն իմ հանդեպ քաղաքավարություն ցուցաբերեց՝ հրավիրելով հանդիսավոր ճաշկերույթի: Ես չեմ վտարվել, ոչ էլ դիմել եմ փախուստի: Թայվանում ցանկացած մարդ կարող է խոսել այն մասին, ինչ տեղի ունեցավ մինչեւ 1949 թվականը: Բայց 1949 թվականից հետո մայրցամաքային Չինաստանի՝ պատերազմի հանցագործների կառավարման կենտրոնում իմ բերանը փակվեց: Ո՞վ կլինի

---

\* «Միասնական ճակատի աշխատանք» տերմինն օգտագործվում է Չինաստանի կոմունիստական կուսակցության կողմից չինական հասարակության այլ հատվածների հետ հաղորդակցվելու համար, ներառյալ Հոնկոնգը եւ Թայվանը:

այնտեղ իմ երաշխավորը»: Ապա, բորբոքված, շարունակեց. «Ես գալիս եմ միասնական ճակատի աշխատանք կատարելու, բայց ոչ մեկի գործիքը չեմ, առավել ես՝ կոմունիստներին ծառայելու գործիք չեմ: Եթե մենք՝ չինացիներս, աշխատանք չտանենք միավորվելու համար, արդյո՞ք չենք վատնի ամբողջ մեր եռանդը՝ միմյանց դեմ կռվելու եւ իրար սպանելու վրա»:

Չնայած այդ ամենին՝ ինը տղամարդիկ, ովքեր համաձայնել էին պայմաններին, մուտքի թույլտվություն չստացան: Ժամանակ առ ժամանակ բոլոր տասի վիզաները հետաձգվում էին: Հինգերորդ հետաձգումից հետո դեռեւս ոչ մի կշան չկար, թե նրանց թույլ կտան մեկնել Թայվան: Նրանք վտանգել էին իրենց կյանքն ու առողջությունը Գոմինդանի համար՝ քսանհինգ տարի անցկացնելով բանտում, բաժանված լինելով կանանցից ու երեխաներից, մատների ծայրերով մի կերպ կառչելով կյանքից, եւ հիմա,- երբ իրենց վերջին օրերն էին մոտենում,- հույս ունեին միայն վերադառնալ ընտանիքների գիրկը եւ մի քանի օր միասին ուրախություն վայելել: Այս օրվա համար նրանք դիմացել էին քսանհինգ դառը տարիներ, անցնելով բոլոր խոչընդոտները՝ համարյա դռան շեմին էին հասել, եւ միայն նրա համար, որ Թայվանի իշխանություններն ամեն բան այդպես բարդ ու դժվարին դարձնեն: Ղառը հիասթափություն էր դա: Նրանք Պեկինից մեկնել էին ուղղակի ցածուծայան մեջ: Բայց հիմա սաստիկ հիասթափված էին, վշտացած, վրդովված եւ վերջապես հուսահատ:

Հունիսի 4-ին նրանք ցնցվեցին անսպասելի ողբերգական լուրից. տղամարդկանցից մեկն ինքնասպան էր եղել: Չժան Տիեշին Տեյիսից էր՝ Լյանին նահանգից: Նախկինում 68-րդ բանակի քաղաքական աշխատանքի վարչության պետն էր եղել: Բանտարկվելուց առաջ ուներ մեկ կին եւ մեկ հարճ: Այժմ նրա ընտանիքի անդամները բոլորը Թայվանում էին: Նա միայն ուզում էր ընտանիքի մոտ վերադառնալ եւ զաղտնի հանդիպումներ էր ունեցել Թայվանի «ազգային կառավարության ներկայացուցչի» հետ՝ փորձելով մուտք գործել կղզի, ևույնիսկ կարողացավ կապվել նոր հյուրանոցի հետ: «Ազգային կառավարության ներկայացուցիչը»,- որը ներկայացավ Յյան ազգանունով,- պահանջեց կանխավճար ԱՄՆ դոլարով: Չժանը Յյանին տվեց դոլարով իր մոտ եղած ոչ մեծ գումարը: Դրանից քիչ անց խոսք եղավ, որ պարոն

## Չժան Ցավեն

Ցյանը կաշառք էր վերցրել, եւ նրան ետ ուղարկեցին Թայվան: Տեսելով, որ Թայվան վերադառնալու իր պլանը ձախողվեց, Չժանը հուսահատության գիրկն ընկավ:

Դիարանում, նայելով բանտախցի իր ընկերոջը, որին քսանհինգ տարի շարունակ տեսել էր ամեն օր, Ցայը չկարողացավ արցունքները զսպել: Նա լաց եղավ Չժանի համար, որն իր կյանքի քսանհինգ տարիներն անցկացրել էր բանտում, որպեսզի կախվի իր տան շեմին: Լաց եղավ իր համար, բոլոր այն տասը հոգու ողբերգական ճակատագրի համար, ովքեր տառապել էին բանտում: Իրենց կյանքի այդքան տարիները տվեցին Գոմինդանին, քսանհինգ տարի մնացին ճաղերի ետեւում, որ այսպիսի վախճան ունենան: Ինչպիսի՞ ողբերգություն:

Հունիսի 5-ին Թայվանի կողմից հովանավորվող «Հունկոնգ Թայմս» թերթը մի հոդված հրապարակեց՝ մեծ կարմիր տառերով վերնագրված՝ «Չժան Տիեշին կախվելով ինքնասպան է եղել հյուրանոցի սենյակում»: Հոդվածում ասվում էր. «Ինչպիսի՞ ողբերգական վախճան [նրա համար], ով Նախագահ Մաոյի կողմից օգտագործվեց որպես միասնական ճակատի գործիք»:

Քաղաքականությունը, Ցայն էր միշտ ասում, «ոչ այլ ինչ է, քան մի պոռնիկ» եւ «ախիղճ, սառնասիրտ մարդասպան»:

Այդ մարդը, ավելի քան քսան տարվա բանտարկությունից հետո ազատվելով, ոչինչ չէր ուզում, բացի իր ոսկե տարիներն ընտանիքի հետ անցկացնելուց: Վերջին հույսը մարելուց եւ սաստիկ հուսալքվելուց հետո նա դարձավ կյանքի անողոք դաժանությունից խեղված մարդու մի մարմնացում: Անսահման էին Ցայի վիշտն ու վրդովմունքը. նա չէր կարող լռել: Գրելով ցատումնալից արագությամբ՝ իր հզոր գրչով նա հոգեհանգստի մի սգերգ հյուսեց բանտախցի իր ընկերոջ համար.

«Տիեշի, ավաղ:

Այնքան անբաժան միս ու արյունը՝ բաժանված ընդմիշտ: Ծով ու երկինքը՝ արցունքերով լի: Ո՞վ է, որ չունի որդիներ, դուստրեր: Որտեղի՞ց ողջամտություն: Որտեղի՞ց մարդկություն: Ինչպե՞ս հասանք սրան: Հանրությունը պետք է արդարությունը հատուցի: Տիեշիի ողբերգությունը, նրա մահը, նրա արյունը, այդ ամենը մեղադրանք են նրանց հասցեին, ովքեր սիրո եւ ողջամտության դեմ էին: Դա նախագուշացում է. անհրաժեշտ է նոր ուղի՝ հանուն հանգուցյալների: Ժողովրդի

կամքը գիտե պատմության կամքը: Ի վերջո հայրենիքը պետք է միավորվի, իսկ ընտանիքները վերամիավորվեն»:

Որ Գոմինդանի նախկին գեներալ-մայորը հրապարակայնորեն կարտահայտեր իր խղճմտանքն այսպիսի համարձակությամբ ու խորաթափանցությամբ, չէր կարող հիացմունք չպատճառել:

Հուլիսի 17-ին Չժանի աճյունը տեղափոխվեց Թայվան նրա որդու ընկերների ջանքերով:

Գրող Յոյան Նանն իր «Չիան Չին-կուոյի կենսագրությունը» գրքում այդ դեպքի մասին այսպես է ասել.

«1975 թվականին, երբ Պեկինն ազատեց բանտարկյալներին, եթե Չին-կուոն որպես տղամարդ ինչ-որ չափով մեծահոգություն ունենար, նրանց բոլորին կընդուներ, կողջուներ եւ հարմարավետ կտեղավորեր Թայվանում: Դա արտաքին եւ ներքին հանրության համար կծառայեր որպես մարդկային արժանապատվության հանդեպ [նրա] հարգալից վերաբերմունքի եւ արժեւորման վկայություն: «Միասնական ճակատի կոմունիստ-ավազակների» արդարացումը չպետք է օգտագործվեր դրանք սառեցնելու համար: Նույնիսկ եթե նրանք, ում հետ նա կիսեց փորձություն եւ նեղություն, վերջին հաշվով շատ քիչ նպաստեցին այդ գործին, այդուհանդերձ նպաստեցին իրենց տառապանքով: Նրանց հանդեպ թշնամական վերաբերմունք ցուցաբերելը ոչ մի հիմքով արդարացված չէ, լինի դա զգացմունք, բանականություն թե օրենք: Ո՞վ կծառայի նման կառավարությանը»:

Գրող Լի Աոն, բանտում կարդալով տեղի ունեցած միջադեպի մասին, բարկացավ: Ութ տարի անց իր «Որդին եւ հոր արցունքները՝ անհանգիստ ժամանակներում. թույլատրված չէ տեսնել հորդ կենդանի կամ մեռած» ակնարկում նա գրելու էր.

«Այդ տասը հոգին երբեք չէին սպասի, որ, տասնամյակներ շարունակ հանուն Գոմինդանի աննկարագրելի զրկանքներ կրելով, այդպիսի թշվառ, ողբալի ու անողորմ ճակատագրի կարժանանան: Նրանցից ոմանք իրենց կյանքին վերջ տվեցին դեռ Հոնկոնգում: Մյուսներին ընդունեց Միացյալ Նահանգները՝ «մարդասիրական սկզբունքներից ելնելով»: Ոմանք, զուտ հուսահատությունից դրդված, վերադարձան մայրցամաքային Չինաստան: Նրանք եղել էին Գոմինդանի «հարձակվող շները» եւ այդպիսի վախճան ունենալով... այդ ամենը տեսնելով՝

## Չժան Յավեն

մի՞թե հևարավոր էր չհիասթափվել»:

Չժան Տիեշին իր ծեռքով վերջ տվեց կյանքին: Նա կարծել էր, թե այդպես անելով կարող է հույս տալ դեռ ապրողներին: Բայց ամիսներն անցան, իսկ Թայվանից դեռ ոչ մի լուր չկար: Ափին կանգնած՝ ինը տղամարդիկ նայում էին հեռուն, դեպի հեռավոր Թայվանի կողմը՝ պատկերացնելով իրենց կանանց եւ երեխաներին: Ինն էլ կանգնած էին հոգեւոր անկման եզրին: Տայը որոշեց, որ այլեւս չի կարող լռել: Նա հավաքեց մի խումբ լրագրողների՝ պահանջելու, որ Թայվանը հստակ բացատրություն տա:

Օգոստոսի 25-ին, կեսօրից հետո ժամը երեքին, ավելի քան հիսուն օտարերկրացի եւ չին լրագրողներ հավաքվեցին Հոնկոնգի «Իմպերիալ» հյուրանոցի նիստերի շքեղ սրահում: Ելույթով հանդես եկավ Տայը՝ պատասխաններ պահանջելով Թայվանի իշխանություններից. «Մենք մեր կյանքի մայրամուտին ենք հասել: Թողնելով՝ եք մեզ, թե՛ չեք թողնելու վերադառնալ Թայվան՝ տեսնելու մեր ընտանիքը եւ ընկերներին: Խնդրում եմ Թայվանի իշխանություններին՝ մեզ հստակ պատասխան տալ»: Բայց Տայի այդ հավաքը, փոխանակ ամեն բան փոխեր դեպի լավը, նրան վտանգի ենթարկեց: Այդ երեկո Տայը հեռախոսազանգ ստացավ. զանգողներն սպառնում էին նրա կյանքին: Ուշ գիշերով ինչ-որ մեկը թակեց նրա դուռը եւ ասաց, որ լավ կանի ուստիկանություն չդիմի: Հենց այդ գիշեր, ընկերների օգնությամբ, Տայը լքեց հյուրանոցի իր սենյակը եւ անհետացավ հանրության տեսադաշտից:

Անհատականությունը ճակատագիր է, եւ Տայը ո՛չ բռնությունից խուսափող էր, ո՛չ էլ հեշտությամբ պարտություն ընդունող: Այդ օրը նա չհանձնվեց Չինաստանի կոմունիստական կուսակցությանը: Այժմ նա չէր պատրաստվում ետ կանգնել Թայվանից:

Բոլոր մարդիկ եւ ազգերը հետեւում էին նրան, բոլորը նրա մեջ արժեքավոր եւ արժանավոր մի բան էին տեսնում: Նրանք շոայլ խոստումներ էին տալիս. «Պարոն Տայ, եթե միայն հայտարարություն անեք, դիմեք քաղաքական փախստականի կարգավիճակի համար, կարող եք գնալ Չեր ուզած՝ ցանկացած երկիր: Մենք կարող ենք Ձեզ ուղարկել Շվեյցարիայի նման չեզոք երկիր»:

Տայը կտրուկ մերժեց նրանց. «Ես ունեմ իմ սեփական երկիրը: Օտար երկիր մեկնելու կարիք չունեմ: Ես քաղաքական հետապնդման



չեմ ենթարկվել, ուրեմն ինչո՞ւ պիտի քաղաքական ապաստան պահանջեմ: Եթե ուզեմ վերադառնալ մայրցամաքային Չինաստան, Չինաստանի կոմունիստական կուսակցությունն ինձ կողջունի: Ես չին եմ, ես չեմ ամաչում դրանից»:

Ներում ստացած պատերազմի տասը հանցագործներից մեկը մահացավ: Երեքը վերադարձան մայրցամաքային Չինաստան: Չորսը մեկնեցին Միացյալ Նահանգներ: Միայն Վան Յունպեյը եւ Յայը մնացին Հոնկոնգում: Չորս տարի անց մնաց միայն Յայը:

«Ես ուզում եմ հանդես գալ որպես պատմության վկա, խոսել հաևուն արդարության, բոլորին դիմել ժողովրդի անունից, աղաղակել ճշմարտության համար»: Ահա թե ինչու Յայը մնաց Հոնկոնգում, ինչպես իր մտքերն էր նա շարադրել ծայրաստիճան անթաքույց եւ անխարդախ իր գրառումներում:

Նրա նպատակն էր թղթին հանձնել այն ամենն, ինչ մտածել է՝ թե թեանալով այն ամենից, ինչ տեսել եւ լսել էր, արտահայտելով իր ամբողջ զայրույթը, ցավն ու ափսոսանքը:

1975 թվականի սեպտեմբերի 1-ին մայրցամաքային Չինաստանի «Ռեֆերենս կյուզ» թերթում հայտնվեց քառօրյա հարցազրույցների շարքից առաջինը՝ վերնագրված «Հարցազրույց Չիան Չին-կուոյի նախկին ենթակա Յայ Շենսանի հետ»: Հարցազրույցները վարել էր հոնկոնգյան «1970-ականներ» ամսագրի գլխավոր խմբագիր Լի Յին: Յայն իր անկեղծ մտքերն էր ներկայացնում Թայվան վերադառնալու իր դիմումի հետ կապված, խոսում այն դժբախտության մասին, որ Հոնկոնգ ժամանելուց հետո պատահել էր ներում ստացած տասը մարդկանց, ինչպես նաեւ այն տասը տարիների մասին, որ անցկացրել էր Չիան Չին-կուոյի համար աշխատելով, եւ թե ինչպիսին էր տեսել Չիանին:

«Ռեֆերենս կյուզ»-ում ներկայացված հարցազրույցների շարքը գրավեց հիվանդ պառկած Չժոու Էլյայի ուշադրությունը, որն այս ցուցումները տվեց իր ենթականերին. «Կխնդրե՛՛ Լո Յինչանը եւ Յգյա Դոնգը կարդային չորս հրապարակումները Յայ Շենսանի մասին եւ պարզեն ճշմարտությունը նրա վիճակի մասին: Լավ կլինե՛ր՝ հետաքննվե՛ին Յայի պնդումները, եւ որոշվե՛ր դրանց ճշմարտացիությունը: Ամեն բան պարզաբանելու եւ հետաքննությունն առաջ տանելու համար լավ

Չժան Յավեն

կլիներ խոսել Վան Կունյունի եւ Տյոյ Վուի՝ Յու Յուրենի փեսայի հետ»:

Ենթադրաբար, սրանք Չժոու Էւլայի վերջին ցուցումներն էին. որպէս ապացոյց են ծառայում «Չժոու Էւլայ» ստորագրութեամբ փաստաթղթերը եւ այդ բառերը դողդոջուն ձեռքով գրած մարդու ձեռագիրը: Տասնվեց օր հետո Չժոու Էւլայը վերջին անգամ էր վիրահատութեան ենթարկվելու:

Տասնինը տարի անց՝ 1994 թվականին, Տայ Շենսանը հրավիրվեց Պեկին՝ մասնակցելու այդ տարվա Ազգային օրվա տոնակատարություններին: Լո Տինչանը՝ Չժոուի աշխատակազմի նախկին ղեկավարը, գտավ Տային եւ նրան ցոյց տվեց վարչապետի ցուցումները պարունակող թղթապանակը: Գոմինդանի ծեր զինվորը, տեսնելով վարչապետի ձեռագիր ցուցումները, չէր կարող զսպել իրեն եւ չպատռել դրանք: Երկար ժամանակ նա լուռ էր եւ սաստիկ հուզված: Նրա մտքով երբեք չէր անցել, որ երկրի վարչապետը, որը գտնվում է մահվան մահճում եւ կարճ կյանք ունի այս աշխարհում, դեռ հոգ կտաներ Չինաստան-Թայվան կապերի մասին, դեռ հոգ կտաներ ազգային միասնութեան մասին, կամ ներում ստացած՝ պատերազմի գոմինդանյան հանցագործի մասին:

Այս ամենը խիստ հուզում էր Տային, բայց նաեւ մտածելու տեղիք էր տալիս:

«Յու Յուրենը, որի մասին իր ցուցումներում նշել էր Չժոու Էւլայը, Գոմինդանի մեծ ծերունիներից մեկն էր: Նրա կինը մայրցամաքային Չինաստանում էր, իսկ նա Թայվանում էր: Իր ծեր տարիքում նա մի սրտաշարժ երգ էր գրել՝ «Նայելով մայր երկրի կողմը», որ լայն ճանաչում էր ձեռք բերել ինչպէս Չինաստանում, այնպէս էլ արտերկրում:

*Թաղէք ինձ ամենաբարձր լեռան վրա, որ երկրիս կողմն է նայում,  
Բայց չեմ կարող տեսնել երկիրն իմ, սոսկ ցավն է արցունքներ  
դառնում:*

*Թաղէք ինձ ամենաբարձր լեռան վրա, որ հայրենի քաղաքիս  
կողմն է նայում,*

*Հայրենի քաղաքս չեմ կարող տեսնել, բայց չեմ մոռանա  
Մուգ կապույտ երկինքն ու դաշտերն արծակի:  
Լեռնագագաթին պառկած է երկրիս նահատակը:*

2013 թվականի փետրվարին, Փակ հեռուստատեսային համակարգը (CCTV) ցուցադրեց «Առնչվելով Չինաստանին» ամենամյա մրցանակաբաշխությունը: Ներկայացվածներից մեկը յոթանասունութ տարեկան մի թայվանցի էր՝ Լի Բինգհան անունով: Պատանեկության տարիներին նա պատերազմի քառսի ժամանակ մեկնել էր Թայվան: Նա կարոտում էր իր տունը, կարոտում էր մորը: Ամեն գիշեր դառնորեն լաց էր լինում, վաթսունհինգ տարի շարունակ լաց էր լինում: Երբ նրան վերջապես հաջողվեց վերադառնալ իր տուն՝ Շանդուն, իմացավ, որ մայրը մահացել է ընդամենը մեկ տարի առաջ: Արարողության ժամանակ նա ասաց. «Ով ամբողջ գիշեր դառնորեն լաց չի եղել, իրավունք չունի խոսելու կյանքի մասին»: Ծերունին սկսել էր հավաքել Թայվանում մահացած զինվորների աճյունները եւ դրանք տարել մայրցամաքային Չինաստանի իրենց հայրենի քաղաքները, որպեսզի տար այդ զինվորների ընտանիքներին՝ հուղարկավորելու համար:

Քանի՞ խորամիտ այր, իրենց միս ու արյունից գատված քանի՞ մարդ էր կրել բաժանման ցավը, ճչացել, ողբացել, դառնորեն լացել իրենց երկրի մեռյալների համար:

1975 թվականի հոկտեմբերի 30-ին Ցայի նախկին կինը՝ Ցաո Յունսյան, եկավ Հոնկոնգ՝ Ցայի հետ վերամիավորվելու: Նա բաժանվել էր երկրորդ ամուսնուց՝ վերջինիս հետ քսաներեք տարի ապրելուց հետո, թողել էր իր յոթ երեխաներին (երկուսը Ցայից, հինգը՝ երկրորդ ամուսնուց) եւ միայնակ թռել Հոնկոնգ, որպեսզի միանա Ցայի հետ:

Իր երկրորդ ամուսնու՝ Չժան Վենհուայի հետ Ցաոյի ամուսնության պատմությունն ինքնին ողբերգություն է: Ցաոն իրեն ջուրն էր նետել, որպեսզի ինքնասպան լինի: Չժանը փրկել էր Ցաոյին եւ ի վերջո սիրահարվել նրան: Ցաոն ասել էր, որ Ցայ Շենսանից բացի երբեք ուրիշ ոչ ոքի հետ չի ամուսնանա: Չժանին ոչինչ չէր մնում անելու, բացի նրան զրավոր խոստում տալուց. «Եթե երբեւէ Ցայ Շենսանն ազատվի բանտից, մենք երկուսս ինքնաբերաբար կազատվենք մեր ամուսին-կին փոխհարաբերությունից»:

Քսաներեք տարի անց Ցաոն պնդեց, որ ամուսնալուծվեւ: Չժանը համաձայն չէր: Ցաոն դատարանում ցույց տվեց նրա ձեռքով գրված դեղնած թուղթը: Չժանը ստիպված էր ընդունել նրա պահանջը:

## Չժան Ցավեն

Մերը կարող է այնքան հավատարիմ, բայցե այնքան դաժան լինել: Ցայր եւ Ցանն միասին հաստատվեցին Հոնկոնգում տեղափոխվելով մի փոքրիկ սենյակ Սաու Կեյ Վանում: Ցանն աշխատում էր որպես բժիշկ, իսկ Ցայրը կարողում էր գրքեր եւ թերթեր՝ խորհրդածելով կյանքի, պատմության, Գոմինդանի եւ Չինաստանի կոմունիստական կուսակցության միջեւ տասնամյակների պայքարի մասին: Նա կարողանում էր օգտագործել իր գիտելիքները՝ խոսելու այն մասին, թե ինչ է նշանակում կյանքը զոհաբերել պառակտիչ, կործանարար պայքարում, իր խորաթափանցությունը եւ ընթացիկ իրադարձությունները ողջամտորեն վերլուծելու ունակությունը՝ օբյեկտիվ ու անաչառ կյուրեր հրապարակելու «Հոնկոնգ դեյլի կյուզ»-ի համար: Այլ լրատվամիջոցների համար նույնպես հոդվածներ էր գրում՝ ներկայացնելով իր տեսակետները օրվա իրադարձությունների վերաբերյալ, իր հույսերը՝ կապված Գոմինդանի եւ Չինաստանի կոմունիստական կուսակցության հետ եւ իր ցնցող մտքերը Չինաստան-Թայվան կապերի մասին. «Գերադասեք ամբողջական պատկերը եւ նախապատվությունը տվեք հանդուրժողականությանը», «Անցյալում թողեք ամեն մի ատելություն, մի՛ կառչեք հին չարիքից, սրտում վիրավորանք մի՛ պահեք, մի՛ ձգտեք հին հաշիվներ մաքրել եւ վրեժ լուծել», «Մարդիկ շփվելու են, սիրելու եւ խաղաղություն են փնտրելու այնտեղ, որտեղ պաշտոնյաները չեն կարող»:

Նա կնոջ հետ համատեղ լույս ընծայեց «Չիան Չին-կունն եւ Խորհրդային Միությունը» գիրքը, ինչպես նաեւ «Պատմություններ Ցզյան Ցզինգոյի եւ իր դաշնակիցների մասին», «Հուշեր Գաննանի մասին» գրքերը: Հրապարակեց քաղաքական մի շարք մեկնաբանություններ՝ «Հակահեգեմոնյան մտքեր», «Ինչպե՞ս է չին ժողովուրդը նայում Ստալինին», «Հեգեմոնիայի երեք մակարդակ», «Երեսուն տարվա կուտակված դասեր, որ փոխեցին «աղքատ կոմունիզմի» ճակատագիրը» եւ «Չորսի ավազակախմբի քննադատությունը»: Նա գրեց ակնարկներ՝ զնահատելով 1957 թվականին «Թող հարյուր ծաղիկ ծաղկի» շարժման կողմից հարձակման ենթարկված «աջերի» վերականգնումը Չինաստանում, մերժելով Սշակութային հեղափոխությունը եւ զնահատելով զոհերի իրավունքների վերականգնումը, 1976 թ. «Տյանանմենի միջադեպում» ներգրավվածների վերականգնումը, ողջունելով Բարեփոխումների ու Բաց քաղաքականության գործընթացների մեկնարկը եւ

ՉԿԿ-ի առաջնորդող սկզբունք համարվող դասակարգային պայքարի թուլացումը եւ ՉԿԿ-ի պատրաստակամությունը՝ շարունակել առաջընթացը՝ մերժելով իր ժառանգության տարրերը: Նրա կարծիքով՝ քաղաքական կուսակցությունը կարող է առաջընթաց ունենալ միայն անընդհատ շտկելով սեփական սխալները: Ցայը մի մարդ էր, ով իր կյանքը մահվան ճակատից էր խլել, պատերազմի հանցագործ, որն իր ծաղկուն կյանքի քսանհինգ տարիներն անց էր կացրել ՉԿԿ-ի բանտում: Նա կյանքից, հասարակությունից խնդրելու ոչինչ չուներ: Ուներ միայն անվախ հանդգնություն, պատրաստակամություն՝ իր վրա վերցնելու «որպես պատմության վկա հանդես գալու, հանուն արդարության խոսելու, ժողովրդի անունից խնդրելու եւ բարեխոսելու, հանուն ճշմարտության աղաղակելու» բեռը եւ մի ցանկություն՝ տեսնել իր երկիրը միավորված, քանի դեռ շնչում էր: Նա իր պարզ, անխարդախ կարծիքն էր արտահայտում եւ առաջարկները ներկայացնում ինչպես մայրցամաքային Չինաստանին, այնպես էլ Թայվանին:

1981 թվականի ապրիլի 6-ին Ցայը հրապարակեց իր հոդվածը հոնկոնգյան «Միտում» ամսագրում՝ «Հայացքներ Չինաստանի միավորման շուրջ՝ Գոմինդանի 12-րդ ազգային համաժողովի տպավորության ներքո» վերնագրով: Նա ներկայացնում էր իր տեսակետները քաղաքականության վերաբերյալ. դրանք ներառում էին տասը կետ խաղաղ միավորման վերաբերյալ, որոնք ընդհանուր առմամբ այսպիսին էին.

Առաջին՝ Թայվանի նահանգը ՉԺԿ-ի հատուկ, ինքնակառավարվող շրջան էր: Գոմինդանի ղեկավարի կարգավիճակը պետք է հարգվեր, եւ Գոմինդանը կարող էր նպաստել Թայվանում «ժողովրդի երեք սկզբունքների» վրա հիմնված քաղաքականությանը:

Երկրորդ՝ Թայվանի գործող հասարակական հաստատությունները չպետք է փոխվեին, ոչ էլ պետք է փոխեր նրա կենսածեղը: Նրա կենսամակարդակը չպետք է իջներ:

Երրորդ՝ Թայվանը կարող էր, համապատասխան ձեռով, պահպանել իր քաղաքական կառուցվածքները, եւ լիակատար իրավասություն ունենալ իր տարածքային կառավարությունների աշխատակազմի, վարչակազմի, տնտեսության, առևտրի եւ կրթության հետ կապված գործերը տնօրինելու: Այն պետք է ունենար լայն ինքնավարություն:

Չորրորդ՝ Թայվանը կարող էր ունենալ բանակ, որը կդառնար ՉԺԿ

## Չժան Ցավեն

պաշտպանության նախարարության մաս: Մայրցամաքային Չինաստանի զինված ուժերը պարտավորված են լինելու պաշտպանել Չինաստանը եւ Թայվանը հավասարապես, բայց չեն մտնելու Թայվան:

Հինգերորդ՝ Թայվանը կարող էր պահպանել կապերը արտասահմանյան երկրների հետ ոչ պետական մակարդակում, իսկ նրա տարածաշրջանային ներկայացուցիչները կարող էին մասնակից լինել միջազգային կազմակերպություններում:

Վեցերորդ՝ Թայվանը կարողանալու էր իր ներկայացուցիչներն ընտրել Ազգային ժողովրդական կոնգրեսում:

Յոթերորդ՝ Մայրցամաքային Չինաստանը ճանաչելու էր Գոմինդանի իրավական կարգավիճակը եւ թույլ էր տալու, որ նա մասնակցեր Չին ժողովրդի քաղաքական խորհրդակցական կոնֆերանսին: Գոմինդանին թույլատրվելու էր հաստատվել մայրցամաքային Չինաստանում եւ իրականացնել օրենքով ժողովրդավարական կուսակցությանը թույլատրված գործողություններ:

Ութերորդ՝ Մայրցամաքային Չինաստանը եւ Թայվանը իրականացնելու էին «Երեք օղակ» քաղաքականությունը եւ իրականացնեին մշակութային ու գիտական փոխանակումներ:

Իներորդ՝ Գոմինդանի դեմ քաղաքական խտրականության կիրառմանը պետք է վերջ տրվեր, եւ նրա նախկին կուսակցության անդամների, զինվորականների, օրենսդիրների, ոստիկանության ու հետախուզական ներկայացուցիչների ցանկացած պիտակավորում կամ խարան պետք է վերացվեր: Մայրցամաքային Չինաստանում բոլորը վայելելու էին քաղաքացիների լիարժեք իրավունքները, եւ նրանց թույլատրվելու էր տեղափոխվել Թայվան:

Տասներորդ՝ Թայվանի եւ մայրցամաքային Չինաստանի միջեւ առկա խնդիրները լուծելու համար ստեղծվելու էր մշտական կազմակերպություն:

Տասն օր անց նրա հողվածից հատվածներ տպագրվեցին մայրցամաքային Չինաստանի «Դացանկաո» ամսագրում: Յայը «Միտում» ամսագրի այդ համարը, որտեղ իր հողվածն էր տպագրվել, ուղարկել էր ՉԿԿ-ի գլխավոր քարտուղար Հու Յոբանին: Սեպտեմբերի 30-ին մարշալ Յե Ցզյանյինը, Պեկինում ունեցած ելույթի ժամանակ, հանդես գալով ազգային միասնության համար ինը առաջարկությամբ, օգտա-

գործեց Ցայի «տասը պայմանների» տարրերը: Անհնար էր չհիանալ Ցայի համարձակությամբ ու խորաթափանցությամբ:

1984 թվականի հոկտեմբերի 15-ին, տեղեկանալով, որ գրող Հենրի Լյուին ԱՄՆ-ում սպանել են Թայվանի հետախուզության գործակալների հետ համագործակցող մաֆիայի անդամները, Ցայը սոսկալի ողբերգություն ապրեց: Նա Լյուի հետ սամակագրական կապ էր ունեցել, մի քանի անգամ սամակներ էր գրել նրան՝ «Լին Լին» կեղծանունով: Ի հիշատակ իր մտերիմ ընկերոջ՝ Ցայը հոնկոնգյան ամսագրերից մեկում հրապարակեց իր եւ Լյուի՝ միմյանց գրած քառասուն սամակ:

Թայվանում շատերը կարծում էին, թե Ցայը Հոնկոնգի Հենրի Լյուին է, ՉԿԿ-ի «միացյալ ճակատի» գործիք: Բայց Ցայն անում էր այն, ինչ անում էր միշտ. հողվածներ էր գրում, ելույթներ ունենում, պատմում, թե ինչպես է երեք անգամ ՉԿԿ-ի կողմից «բռնվել եւ ազատվել», խոսում քսանհինգ տարվա իր ազատագրկման, ներում ստանալուց հետո իր դժբախտության մասին: Նա բազմիցս երաշխավոր էր եղել Տիու Կին Լենի հակակոմունիստների համար եւ նրանց համար ամեն տեսակ երաշխավորագրեր ուղարկել մայրցամաքային Չինաստանի «Միացյալ ճակատի աշխատանքի բաժին»:

Նա ոչ ոքի «միասնական ճակատի» գործիքը չէր. նա իր սեփական կամքով ու ցանկությամբ էր միասնական ճակատի աշխատանք կատարում:

1991 թվականի դեկտեմբերի 20-ին Ցային վերջապես հրավիրեցին այցելել Թայվան՝ որպես «սյունակագիր»: Դժբախտաբար, նրա հին ընկեր Չին-կուոն արդեն մահացել էր: Ցայն այցելեց Չին-կուոյի գերեզմանին՝ մեկ րոպե լռությամբ հարգելու նրա հիշատակը: Նա կարողացավ հանդիպել Տոն Չանի՝ Չին-կուոյի սիրուհի Չան Յա-ցյուոյից ծնված երկու անօրինական երկվորյակներից ավագի հետ, որն այդ ժամանակ ծառայում էր որպես Թայվանի «Անդրծովյան գործերի բաժանմունքի» «քաղաքական փոխնախարար»: Չանն ասաց, որ ինքը նոր է վերադարձել Սովետական Միության փլուզումից հետո ծնված երեք փոքրիկ երկրներ կատարած այցելությունից եւ որ դիվանագիտական աշխատանք էր կատարում չին ազգի անունից:

Ցայն անկեղծ պատասխանեց. «Չին ազգի անունից դիվանագիտական աշխատանք կատարելը մեծ գործ է: Բայց եթե այդ դիվանագի-

## Չժան Ցավեն

տություն կոչվածը շահույթ կամ վնաս է փնտրում որոշակի խմբի, կուսակցության կամ տարածաշրջանի համար, ապա դա մեծ գործ չէ: Եթե այս «դիվանագիտությունը» ենթադրյալ կողմակիցն է «Թայվանի անջատման փորձերի», դիվանագիտական աջակցության ապարդյուն որոնման մեջ դավաճանելով սեփական երկրին, ապա դա սեփական ժողովրդի ոչնչացումն է: Սա ամենեւին էլ գործ չէ»:

Ո՞վ կմտածեր, որ ներում ստացած գոմինդանյան զինվորը միացյալ ճակատի աշխատանք էր կատարելու հենց Չան Կայ-շիի թոռան հետ: Չանին հրաժեշտ տալով՝ Ցայն ասաց. «Չինաստանում բարեփոխումների հույս կա: ԽՍՀՄ-ը չի բարեփոխվում, ուստի նրա կործանումն անխուսափելի է»:

Այս խոսքերն ասելուց ինը ժամ էլ չէր անցել, երբ Գորբաչովը հայտարարեց իր հրաժարականի եւ Խորհրդային Միության կազմալուծման մասին:

1992 թվականի դեկտեմբերի 7-ին ութից վեց կազմակերպություններ Հոնկոնգից եւ Մակաոյից հանրահավաք անցկացրին Հոնկոնգում՝ ցույց տալու համար, որ երկու տեղերում էլ լայն ընդդիմություն են ցուցաբերում «Թայվանի անջատման փորձերին»: Նրանք դատապարտում էին «անջատման» կողմակիցների դավադրությունը, որ «Մեկ Չինաստան, մեկ Թայվան» կոչերով տանում էր երկրի պառակտման: Յոթանասուներեքամյա Ցայը կրքոտ ելույթ ունեցավ հանրահավաքում՝ դատապարտելով «անջատողական ամբոխին»: Նա եւ էլի ուրիշներ կտրեցին իրենց մատները՝ արյուն թափելով ի հակադրություն «Թայվանի անջատման փորձերի»: Իրենց այդ արյունով նա ցուցապաստառի վրա գրեց հետեւյալ բառերը. «Հաստատուն կանգնեք ընդդեմ Թայվանի անջատման փորձերի»՝ ցույց տալով այն կրքոտ ուժը, որով Թայվանն ու Մակաոն դեմ են Թայվանի անջատման փորձերին:

Ցայն իր հողվածներից մեկում գրել է. «Հոնկոնգը վայրի մի հովատակ է, որ ծնունդ է առել Արեւելքի եւ Արեւմուտքի ամուսնությունից: Ավելի քան հարյուր տարի Բրիտանիան իշխել է Հոնկոնգում, բայց Հոնկոնգի վայրի բնույթը, նրա Էսկան «ոչ անգլիականությունը» թողել է անձեռնմխելի: Եթե Մեծ Բրիտանիան ստիպողաբար անգլիական դարձներ Հոնկոնգը, երբեք այդպիսի շքեղ ելույթներով, բազմակողմանի արդյունք չէր ստացվի»:



Պատմական եզակի հանգամանքները նշանակում էին, որ Հոկտեմբերյանը կարողացավ մի փոքր շունչ առնելու տեղ տալ Գոմիսիոնի տասնյակ հազարավոր գիևփորներին, որոնք չգիտեին, թե ուր գնան, կարողացավ ապրելու հնարավորություն տալ նրանց: Հոկտեմբերյանը տեղ տվեց Ցայի նման իմաստուն մարդկանց, որպեսզի նրանք կարողանան իրենց ազնիվ կարծիքը բարձրաձայնել լեռնագագաթներից, ներկայացնել իրենց տեսակետները կյանքի վերաբերյալ, օգտագործել իրենց խոսքերը՝ չարը վանելու եւ բարին ավետելու համար եւ գործել որպես ազատ, անկաշկանդ քաղաքական մեկնաբաններ: Այն ժամանակ արտահայտվելու այսպիսի կերպը, ազատության այսպիսի տեսակը կարող էր միայն Հոկտեմբերյանը դրսևորվել. թե՛ մայրցամաքային Չինաստանում, թե՛ Թայվանում դա անհնար էր:

### **Երեսուն տարի հարազատներից բաժանված, երեսուն տարի՝ լարված սպասման մեջ**

Չինական լեգեոնում՝ երկնքով անցնող «կաշաղակի կամուրջը» տավարածին եւ ջուլհակուհուն հնարավորություն է տալիս տարին մեկ անգամ հանդիպելու՝ իրենց սերը վերստին նորոգելու համար: Հոկտեմբերյանը երկար ժամանակ մի յուրատեսակ «կաշաղակի կամուրջ» էր: Այստեղ Թայվանի նեղուցի երկու կողմերից էլ մարդիկ կարող էին գաղտնի հանդիպել իրենց սիրելիների հետ, թեեւ ճամփորդությունը հաճախ երկար էր տևում, եւ միավորվելն էլ առանց դժվարության չէր լինում: Ապա իրենց դժկամությունն էին արտահայտելու, շտապելու էին հրաժեշտ տալ՝ իրենց սրտերում անասելի մի տխրություն եւ վրդովմունք:

Բայց ովքե՞ր էին նրանց վրդովեցրել: Պատմության մեջ կան բաներ, որոնք մենք լիովին չենք կարող բացատրել: Մենք գիտենք միայն, որ մարդու կյանքը սահմաններ ունի: Բայց ես հույս ունեմ, որ այդ «Բեռլինի պատը» կարող է փլվել, որքան շուտ, այնքան լավ, եւ նեղուցի երկու կողմերում ընտանիքների կրած տառապանքներին կարելի է վերջ տալ:

Մի ընտանիք գործեց որպես պրիզմա՝ բեկելով պատմության լույսի այդ առանձին ճառագայթը:

1949 թվականի հոկտեմբերի 21. մի նոր կյանք, իր ծնողների սիրո

## Չժան Յավեն

արդյունքը, ճշալով աշխարհ եկավ Սի՛անի փոքրիկ մի նրբանցքում: Նա աշխարհ եկավ, երբ գենքերի ծուխը նոր էր մաքրվել, եւ նոր Չի-նաստանն էր ծնվել: Փոքրիկ տղան, դեռ աշխարհից անտեղյակ, ագահորեն իր մոր կաթն էր ծծում, որ ներծծված էր մոր արցունքների համուռոտով: Նա ոչինչ չգիտեր իր ծնողների տանջալից, հուսահատ բաժանման մասին:

1949-ի սկզբին, երբ Գոմինդանը դանդաղ նահանջում էր դեպի հարավ, նրա հայրը՝ Հուանպուի ռազմական ակադեմիայի շրջանավարտ Լո Դյանֆուն, նշանակվել էր Գոմինդանի Շանգլուո ռազմական շրջանի գլխավոր հրամանատար: Վերջինիս հրամանատարության տակ գտնվող ուժերը երբեք չէին հաղթել Ժողովրդական-ազատագրական բանակի դեմ մղված ոչ մի ճակատամարտում, որը ժամանակ առ ժամանակ հետապնդում էր պարտության էր մատնում նրանց: Այն ժամանակ, երբ նրա զորքերը Շանգլուոից նահանջել էին Հանչժուն, նրանց թիվը խիստ կրճատվել էր՝ մի քանի հազար մարդուց ու ձիերից հասնելով ընդամենը մեկ տասնյակ մարդու:

Մի անգամ ուշ գիշերով, երբ մարդիկ եւ ձիերն ուժասպառ քուն էին մտել տեղի գյուղացիներից մեկի տանը, Լո Դյանֆուն հանկարծ արթնացավ սարսափելի խշխշոց- աղմուկից: Միայն այդ ժամանակ հասկացավ՝ իրենց շրջապատել են կոմունիստները: Նա շտապեց արթնացնել իր մարդկանց, եւ հրամայեց իր հանձնակատարին՝ հանել իր վրա թաքցրած ամբողջ գումարը եւ այն բաժանել բոլորին: Ի վերջո, միայն Լոն կարողացավ դուրս պրծնել թակարդից: Նրա սպաներն ու զինվորները բոլորը դարձան Ժողովրդական-ազատագրական բանակի բանտարկյալներ եւ դրանից կարճ ժամանակ հետո անցնելու էին հակառակորդի կողմն ու պայքարելու էին Գոմինդանի դեմ:

Լոյին հաջողվեց դեկավարել Գոմինդանի տրանսպորտային միջոցները եւ պատերազմի իրարանցման ժամանակ ճանապարհ հարթել դեպի Չենդու, որտեղ մեկ այլ հանձնարարություն ստացավ Չան Կայ-չիից՝ այս անգամ հանդես գալ որպես գեներալ-լեյտենանտի կոչում ստանձնած նախագահական հատուկ հանձնախմբի ուժերի հրամանատար եւ անմիջապես ուղարկվեց, որպեսզի ստանձնի Սունպանի ճակատամարտի պատասխանատվությունը Միչուանի հյուսիս-արեւմուտքում: Նա ինքնաթիռով հասավ Սունպան, բայց թանձր մառախու-

դի պատճառով չկարողացավ վայրէջք կատարել: Վերադասները նրան հրամայեցին շարունակել թռիչքը դեպի հարավ: Ինքնաթիռն ի վերջո վայրէջք կատարեց, եւ այդ պահին Լոն տեսավ, որ Հայնան կղզում է:

Նա գրեց իր ընտանիքին եւ լուր ստացավ, որ կինը որդի է ծնել, որին ինքն անվանեց Լո Ցյունցին (երեխային տրված անունը կազմված էր Հայման կղզու եւ Շենսի նահանգի հապավումներից): Նա չէր կարող այդ ժամանակ իմանալ, որ սա իր որդու հանդեպ հայրական սիրո վերջին դրսեւորումն է:

Ինչպես պարզվեց, ոչ ոք որդուն չէր կոչում նրան տրված անունով: Բոլորը նրան ասում էին «Մուդու»\*: Երբ երեխան դպրոցահասակ դարձավ, մայրը նրան «Դուն Ցյան» անունը տվեց՝ փոխելով ազգանունը եւ իր ազգանվամբ կոչելով: Տղային տրված անունը նշանակում էր «առողջ եւ ուժեղ». մայրը հույս ուներ, որ նա կարող է լինել նույնքան առողջ եւ ուժեղ, որքան երիտասարդ ցույր:

1950 թվականի ապրիլի սկզբին, մի պարզ օր Լո Դյանֆուն, Գոմինդանի այլ զինվորների հետ մարդաշատ նավակի մեջ խցկված, նայեց դեպի հեռավոր հյուսիս-արեւմուտք եւ լուռ հրաժեշտ տվեց իր սիրեցյալին՝ մնաս բարով, իմ կին: Սպասիր ինձ: Շուտով կվերադառնամ:

Նա Գոմինդանի հետ մեկնեց Թայվան եւ ընտրվեց Գոմինդանի Ազգային ժողովի ներկայացուցիչ ու մայրցամաքային Չինաստանը ետ գրավելու ծրագրեր մշակող հանձնաժողովի անդամ: 1952-ին նա նոր ընտանիք կազմեց:

Նրա կինը՝ Դուն Հանյինը, այս ամենի մասին ոչինչ չգիտեր:

Դուն Հանյինն ավարտել էր Սի'անի բժշկական դպրոցի մանկաբարձական ընդլայնված դասընթացները: Գոմինդանի զինվոր ամուսիններ ունեցող հարյուր հազարավոր կանանց նման, ովքեր մնացել էին մայրցամաքային Չինաստանում, 1949 թվականից հետո նա ենթարկվեց քաղաքական ճնշումների: Շուտով նա դիմեց դատարան՝ ամուսնալուծության հայցադիմում տալու համար: Երեսուներկ տարեկանում նորից չէր ամուսնանալու: Երկու երեխա ուներ (Դուն Ցյանը եւ Դուն Ցինը) եւ

\* Փաղաքշական բառակազմություն չինարեն երկու գաղափարագրերից. «մու» նշանակում է երեխա, որ չգիտե ով է իր հայրը, «դու» նշանակում է երիտասարդ արու հորթ:

## Զժան Յավեն

մնաց տանը՝ հաշվելով անցնող օրերը: Դուև Հանյինը չորս հոգանոց ընտանիքի ծանր հոգսն էր կրում իր թույլ ուսերին (սրա մայրը ևույնապես իրենց ընտանիքի հետ էր ապրում): Նա իր սեփական փոքր բիզնեսն սկսեց՝ գովազդելով իր ծառայությունները հետեյալ կարգախոսով. «Տերեկ լինի թե գիշեր՝ մասնագետ մանկաբարձուհի Դուև Հանյինը ձեզ կօգնի երեխա ունենալ»: Հետագայում նա աշխատանքի տեղավորվեց հիվանդանոցում: Հարեանները հաճախ էին շոյում փոքրիկ Դուև Յոյանի գլուխը եւ ասում. «Փոքրիկ Մուդու: Զարություն չանես: Լսիր, թե մայրդ ինչ է ասում: Նա շատ է չարչարվում քեզ ու քրոջդ համար»:

Այլոց խղճահարության եւ համակրանքի ներքո փոքրիկը մեծացավ: Ուրիշների երեխաները «հայրիկ» բառն էին արտաբերում, բայց նա երբեք չէր տեսել իր հորը: Նրա համար հայրն ընդամենը տուփի տակ պահված մի քանի դեղնավուն լուսանկար էր: Մեկը 1945 թվականին նրա ծնողների հարսանիքի լուսանկարն էր: Մեկ այլ լուսանկարում նրանք էին՝ իր մեծ քրոջը գրկած: Եվս մեկ լուսանկար կար. հոր հարսանիքի լուսանկարն էր նախկին կնոջ հետ, որը հետո մահացել էր հիվանդությունից՝ թողնելով երկու երեխա: Լուսանկարները երբեք ուրիշները չէին տեսել: Միայն գիշերը, երբ լռություն էր տիրում, մայրը երբեմն դրանք հանում էր տուփից եւ արցունքներն աչքերին՝ պահում ձեռքերի մեջ: Փոքրիկ Մուդուն թաքուն նայում էր հոր լուսանկարներին՝ ոչինչ չկասկածող մոր ետևում կանգնած: Նա շրջած օձիքով կաշվե բաճկոն էր հագնում եւ սպայի լայնեզր գլխարկ դնում: Ի՛նչ գեղեցիկ էր: Մուդուն մտքում ասում էր. «Հայրի՛կ, ե՛րբ տուն կգաս: Ե՛րբ կկարողանամ քեզ տեսնել»:

Յուրահատուկ, դժվարին պայմաններում մեծացող երեխաներն ավելի ճարպիկ են, ավելի անկախ, քան իրենց հասակակիցները: Նրանք ավելի շատ են աշխատում, որպեսզի իրենց վիճակը բարելավեն: Փոքրիկ Մուդուն, իր կուչ եկած, վտիտ մարմնով, սկսեց ածուխ տեղափոխել: Մեկ բեռ տեղափոխելու համար նա քսան սենթ էր ստանում, հինգ բեռի համար՝ ամբողջ մի յուան: Հետո սկսեց շաքարեղեգ վաճառել: Երեսուն ֆունտ շաքարեղեգի համար նա կարող էր երկու յուան վաստակել: Վաստակած փողը նա թաքուն դնում էր մոր գզրոցում: Իր պատանի, թույլ ուսերին փոքրիկ Մուդուն ծանր բեռ էր տանում՝ օգնելով մորը եւ թեթևացնելով տան հոգսերը հոգալու նրա բե-

որ, ժամանակ առ ժամանակ ճակատագրի քմահաճույքներից կարողանալով պաշտպանել ընտանիքը:

Նա հորը երբեք չէր տեսել: Բայց ընտանիքի ներսում հոր ազդեցությունը միշտ զգացվում էր: Ոչ նրան, ոչ քրոջը չէին ընդունում կոմունիստական երիտասարդական միության շարքերը: Իր անձնական տվյալներում քաղաքական խնդիրներ ունենալու պատճառով քույրն ի վերջո զրկվեց համալսարան ընդունվելու հնարավորությունից: 1962-ին Հոկտեմբերի ուղարկված մի նամակ եկավ Սուդուի անհայտ կորած հորից: Նամակը ձեռքում սեղմած՝ մայրն առատ արցունք թափեց: Նա իմացել էր, որ ամուսինը դեռ կենդանի է, բայց վախենում էր, որ նամակն ընտանիքին է՛լ ավելի մեծ հոգս կպատճառի: Խնդիրներից խուսափելու հույսով՝ Դուն Յզյանը մորն ստիպեց նամակը հանձնել ոստիկանությանը:

1960 թվականին մայրն աշխատանքից պետք է ազատվեր գործատուի կողմից՝ ընտանիքը թողնելով առանց ապրուստի միջոցի: Նրա անհանգստությունը գիշեր-ցերեկ գծագրված էր դեմքի վրա: Ճիշտն ասած, գործատուն նրան դեռ չէր ազատել: Փոքրիկ Դուն Յզյանը մոր հետ գնում էր այն հիվանդանոցը, որտեղ նա աշխատում էր: Հիվանդանոցի ղեկավարը նրանց համար ոչինչ չէր խոստանում: Իրենք փորձեցին շոջանցել նրան՝ դիմելով տեղական առողջապահական վարչություն: Նախքան Դուն Յզյանի մայրը բերանը կբացեր, փոքրիկ տղան խառնվեց խոսակցությանը. «Ո՞ր եք ուզում բոլորդ, որ մայրս գնա»:

«Փոքրիկ, կրճատումներն ազգային քաղաքականություն են: Մենք այստեղ գործում ենք ըստ ազգային քաղաքականության»:

«Բայց քաղաքականությունն ասում է, որ կրճատումները չպետք է ուղղված լինեն այն մարդկանց դեմ, ովքեր ընտանիքում միակ աշխատողն են», - շարունակեց փոքրիկ Դուն Յզյանը՝ վստահ, որ արդարացի է. «Մեր մայրն ընտանիքի միակ կերակրողն է: Դուք չպետք է թույլ տաք, որ նրան ազատեն»:

Հաջորդ օրը հիվանդանոցն անսպասելիորեն համաձայնեց թույլ տալ Դուն Հանյինին վերադառնալ աշխատանքի: Բայց նրա աշխատավարձն ամսական հիսուներեք յուանից իջնելու էր ամսական քառասուներեք յուանի:

1966-ին սկսվեց մշակութային հեղափոխությունը: Դուն Յզյանը լսեց, որ կարմիր գվարդիականները գալու են իր տուն եւ խնդիրներ են

## Չժան Յավեն

ստեղծելու: Նա վազեց տուն, որպեսզի ազատվի լուսանկարներից՝ այրելով այն ամենն, ինչ պետք էր այրել: Սորը հարցրեց՝ արդյոք կա՞ որեւէ այլ բան, որ նրանք կարող են վերցնել: Մայրը մատնացույց արեց մահճակալի տակ: Նա ներքնակը մի կողմ նետեց և փոշով ծածկված մի քանի արկղ հանեց: Դրանց մեջ հոր լուսանկարներն էին Չան Կայ-չիի հետ, հնաոճ իրեր, նեֆրիտե հմայիլներ, ճապոնական մի քանի հին զինվորական դանակ և հոր բանակի հին համազգեստը, ձիավարման կոշիկները, ատրճանակի պատյան և գոմինդանյան գլխարկի ճարմանդը...

Նա մեղադրական տոնով հարցրեց մորը. «Մա՛, ի՞նչ ես մտածում: Ինչո՞ւ ես դրանք պահել»:

«Ես դրանք պահում էի մինչև քո ամուսնանալը: Պատրաստվում էի ներկել նրա բանակային համազգեստը: Դեռ կարող էիր հագնել»:

Դուն Յզյանը ճապոնական բանակի դանակները և Հուանպուի ռազմական ակադեմիայից ստացած հոր սուրը շտապեց նետել տան ետնաբակի ջրհորը: Հետո փայտե մի ձեռնասայլակ վերցրեց, այն լցրեց հոր անձնական իրերը պարունակող տուփերով և այդ նույն երեկոյան դրանք տարավ իր դպրոց՝ դպրոցի հեղափոխական կոմիտեի ղեկավարին ասելով. «Հայրս Գոմինդանի սպա է եղել: Ես տունն էի կարգի բերում, երբ գտա նրա համազգեստը, որ մայրս էր պահել: Ես դրանք այս երեկո բերել եմ այստեղ՝ ցույց տալու համար իմ հեղափոխական ինքնագիտակցությունը»:

Հաջորդ օրը կարմիր զվարդիականները նրանց տունը հիմնահատակ խուզարկեցին: Բայց հանցավոր ոչինչ չգտան:

Այդ դեռահասը փրկել էր մորը և իրենց ընտանիքը: Բայց չկարողացավ փրկել տատի ոսկե մատանին և ականջօղերը, ոչ էլ կարողացավ փրկել մորաքրոջն ու քեռուն, որոնք անցան բազմաթիվ «պայքարի և ստաշոջաններ»։ 1975 թվականին Դուն Յզյանը թերթում մի հոդված կարդաց: Չինաստանի կոմունիստական կուսակցության փոխնախագահ Ե Յզյանինը խոսելով Թայվանի քաղաքականության վերաբերյալ, ասել էր. «Թայվան մեկնած գոմինդանականների մեծ մասը սիրում է իր հայրենիքը: Քանի դեռ նրանք համաձայն են, որ երկիրը պետք է միասնական լինի, մնացած ամեն ինչը բանակցելի է»:

Եի խոսքերը Դուն Յզյանին հուսադրեցին, որ նեղուցի երկու կողմե-

րի միջեւ կապերը կարող են հեշտանալ: Դուք երբեք չէր տեսել հորը, բայց հոր վեհ, հերոսական կերպարը խորապես դրոշմվել էր նրա սրտում՝ դառնալով ցավ, որը չէր կարող թոթափել, ցավ, որ տարիքի հետ միայն աճում էր: Նա շատ էր ուզում տեսնել հորը, քանի վերջինս դեռ կենդանի էր:

Դուք մեկնեց Շան շրջանի Լո գյուղ՝ փնտրելու իր արյունակից եղբայր Լո Սինհանին: Սինհանից տեղեկացավ, որ հայրը տիկին Պեն անունով մի կնոջ միջոցով մի քանի սամակ է ուղարկել Հոնկոնգից, եւ որ երբեք չէր դադարեցրել փնտրելը՝ պարզելու, թե որտեղ է հանգրվանել իր ընտանիքը: Դրանից քիչ հետո Սինհանը Դու Զոյանի հոր կողմից ծանրոց ուղարկեց՝ լուսանկարներով լի մի ծրար:

Ձեռքում սեղմած քսանհինգ տարվա մեջ առաջին անգամ հորից ստացած այդ ծանր սամակը՝ նա տեսավ հոր ճերմակ մազերն ու երիտասարդ դեմքը, առողջություն եւ ուժ ճառագող նրա գունավոր լուսանկարները: Լուսանկարներից մեկի ետեւում հումորային մի բանաստեղծություն էր գրված. «Ոմանք ասում են, որ նման եմ Թագորին, ոմանք էլ Բեթհովենին եւ նմանեցնում: Ոմանք ասում են, որ Կոլումբոսին եմ նման, ոմանք էլ նմանեցնում են Վաշինգտոնին: Բայց ես ե՛ս եմ, բնօրինակը: Մի՛ նմանեցրեք ինձ ուրիշ մեկին»:

Դժվար էր բացատրել Դու Զոյանի չափազանց բարդ ու խառն զգացմունքները, երբ նրա աչքերը փայլում էին արցունքներից:

Այդ երեկո Դու Զոյանը սեղանին թեքված՝ արցունքներն աչքերին զայրալից գրեց եւ թղթին հանձնեց ցավով ու նվաստացումով լի, տասնամյակների դառն ու դժվարին իր կյանքի մասին տողերը: Նա հորն ասաց, որ ինքն ու ավագ քույրն արդեն մեծացել են, եւ որ մայրը հիվանդ է արգանդի վզիկի քաղցկեղով: Հաջորդ օրը նա նամակ ուղարկեց Հոնկոնգի «Հյուսիսային կետ» («North Point») գրախանութ՝ խնդրելով տիկին Պենին այն փոխանցել իր հորը:

Շատ չանցած՝ տիկին Պենը նրան հոր կողմից գրված նամակ ուղարկեց: Այն լի էր հայրական ջերմությամբ, մեղքի զգացումով եւ հեռավոր ընտանիքի հանդեպ կարոտով:

«Ես բացեցի նամակդ, երբ քայլում էի փողոցով: Այնքան հուզված ու ոգեւորված էի, որ սկսեցի ցատկել, եւ փողոցում բոլորին թվում էր, թե խելքս թռցրել եմ: Իսկ ես շտապեցի նրանց հայտնել, որ խենթ չեմ,

## Զժան Յավեն

պարզապես նամակ եմ ստացել որդուցս»: «Որքան մարդ տարիք է առնում, այնքան ավելի շատ է կարոտում իր երեխաներին... Նայում է երկնքին, ծովին եւ մտածում, թե որտեղ կարող են նրանք լինել»:

Դունի մորն ուղղված նամակում տղայի հայրը գրում էր. «Իմ Հանյին, ես երբեք չեմ կարող քո հանդեպ գործած մեղքս քավել: Երբեք չեմ կարող հատուցել քո տառապանքի, քո կրած ծանր բեռի համար: Սյուն Պինգույը եւ Վան Բառչուանը\* տասնութ տարի էին բաժանված, բայց մենք բաժանված ենք արդեն քսանհինգ տարի: Դու մարմնավորված աստվածուհի ես. իսկապես ավելի մեծ բան չկա, քան մոր սերը: Դու որդի եւ դուստր ես դաստիարակել: Ես ոչինչ չեմ կարող անել՝ քեզ ինչպես հարկն է շնորհակալ լինելու համար»: Նամակի վերջում նա գրում էր. «Ճիշտն ու սխալն անցնում են քամու հետ, ատելությունն անցնում է ժամանակի հետ, վեճ-վիճաբանությունները մղում են թյուրիմացության, երախտագիտության, իսկ վրդովմունքն անցնում է սահող ամպերի պես»:

Բայց Դուն Ցզայնը չկարողացավ իրեն ստիպել, որ մորը պատմի հոր գրած նամակի մասին: Վախեցավ, որ մայրը կտխրի, վախեցավ, որ ցավ կապրի, երբ իմանա, որ հայրը կորից ամուսնացել է: Առանց այն էլ տառապում էր քաղցկեղից: Բայց երբ հորից փոստով հազար հոնկոնգյան դոլար ստացավ, չէր կարող ճշմարտությունը մորը չասել: Մայրն իր ձեռքում երկար պահել էր հոր լուսանկարը, մինչեւ որ ասաց. «Հայրդ նույնպես տարիքն առել է: Էլի լավ է, որ դեռ կենդանի է: Նա այնտեղ կորից է ամուսնացել: Քանի դեռ կինը լավ է վերաբերվում նրան, քանի կա մեկը, ով նրան խնամում է, ես ինձ հանգիստ կզգամ... Ասա հորդ, որ մենք բոլորս աշխատավարձ ենք ստանում, ասա, որ փող չուղարկի: Հիմա նա այնտեղ ընտանիք ունի եւ շատերի մասին պետք է մտածի»:

Դուն Ցզյանի աչքերը լցվեցին արցունքներով: Երկար ժամանակ նա ոչինչ չէր ասում:

1979 թվականի ապրիլի 5-ին էր՝ Գերեզման մաքրելու փառատոնի օրը:

---

\* Չինական ավանդության մեջ՝ իրարից երկարատեւ բաժանված սիրահարներ:



Հոր հրավերով Դուն Ցզյանը վերցրեց կնոջն ու որդուն, հրաժեշտ տվեց մորը եւ ուրապտոյտ, հերոսական մի ճանապարհորդություն ձեռնարկեց. սրտի վառվող անթեղները նրան Հոնկոնգ էին տանում՝ տեսնելու հորը:

«Գերեզման մաքրելու օրը արցունքները թափվում են հորդ անձրեւի պես: Սգացողի սիրտը բեկվում է իր ճանապարհին»:

Դուն Ցզյանը սրտաբեկ վիճակ չէր ունեցել, բայց շուտով նրա հույսերի վրա սառը ջուր էր լցվելու: Կոուլունի Հուն Հոմ կայարանում ոտքը գնացքից ցած դնելով՝ նա տեսավ միայն իր կնոջ երկու հորաքույրներին: Լուսանկարների միջի ճերմակահեր, կարմիր այտերով հոր հետքն անգամ չկար:

«Հորաքույր, հայրս ինչո՞ւ այստեղ չէ», - խուճապով հարցրեց նա:

«Հայրդ Հոնկոնգում չէ»:

«Ի՞նչ: Եթե Հոնկոնգում չէ, այդ դեպքում որտե՞ղ է»:

«Թայվանում»:

«Ի՞նչ», - Դուն Ցզյանն ասես արթնացել էր երազից: Հայրը Հոնկոնգում չէր, Թայվանո՞ւմ էր: Հոնկոնգում հորաքույրներն էին, որոնք փոխանցում էին հոր ուղարկած նամակները: Դուն Ցզյանն ընտանիքի հետ գնաց Տիու Կեն Լենի մոտակայքում գտնվող՝ հորաքրոջ տուն: Հենց դռնից ներս մտան, հեռախոսը զանգ տվեց:

Հորաքույրն ասաց. «Հայրդ այսօր առնվազն տասն անգամ զանգել է: Նորից ինքն է, շուտ վերցրու եւ պատասխանիր»:

Երբ Դուն Ցզյանը լսեց, որ հայրն է զանգողը, հեռախոսի լսափողը սահեց ընկավ ձեռքից: Նա վերցրեց լսափողը, բայց ոչ մեկի ձայնը չլսեց զծի մյուս կողմում: Նայեց եւ տեսավ, որ լսափողը գլխիվայր է պահել:

«Հայրի՛կ...»: Երեսուն տարվա մեջ առաջին անգամն էր, որ հոր հետ խոսեց: Խոսքից առաջ՝ արցունքները հորդեցին աչքերից:

«Տղա՛ս: Հայրդ է: Լսո՞ւմ ես»:

Նա լսո՞ւմ էր: Լսո՞ւմ էր հոր ձայնը: Երկուսն էլ լռեցին՝ հուզմունքից խեղդվելով: Ասես երեսուն տարվա վերելքներն ու վայրէջքները խցանել էին նրանց կոկորդները: Երկար ժամանակ անցավ, մինչեւ որ Դուն Ցզյանը հարցրեց հորը. «Հայրիկ, կարոտում եմ քեզ: Ե՞րբ կարող ես գալ Հոնկոնգ»:

Հայրն ասաց, որ Հոնկոնգի կառավարությունը շատ խիստ է վերա-

## Չժան Յավեն

բերվում Հոնկոնգ այցելել ցանկացող՝ Թայվանի կառավարության կամ բանակի մարդկանց մուտքի արտոնագրեր տրամադրելու հարցին: Նա Ազգային ժողովի եւ մայրցամաքային Չինաստանը գրավելու ծրագրեր մշակող հանձնաժողովի անդամ էր: Հոնկոնգը նրան մուտքի արտոնագիր չէր տա:

«Բայց եթե դու չես կարող գալ Հոնկոնգ, ես ի՞նչ եմ անելու», - անհանգստացավ Դուն Ցզյանը:

Հայրն ասաց, որ նա եւ իր ընտանիքը կարող են դիմել փախստականի կարգավիճակ ստանալու համար եւ գալ Թայվան՝ ապրելու:

«Ի՞նչ: Ուզում ես, որ մենք բնակվենք Թայվանում?» - Դուն Ցզյանը չէր կարող ընդունել նման անսպասելի որոշումը: - «Բայց հետո ի՞նչ կլինի մայրիկիս հետ»: Նրա տատն արդեն մահացել էր՝ մորը թողնելով մենակ:

Հայրը Դուն Ցզյանին ասաց, որ նախքան ինչ-որ բան որոշելը մի լավ ծանրութեթեւ անի:

Հոնկոնգում իր առաջին գիշերը Դուն Ցզյանը հորաքրոջ տանը շուրումուր էր գալիս անկողնում: Ամբողջ գիշեր ասք չփակեց: Կարող էր համաձայնել որպես փախստական Թայվանում «ապաստան» ստանալու ծրագրին, բայց նա փախստական չէր: Փաստորեն, ինքը եկել էր Հոնկոնգ՝ հորն իր հետ տանելու համար: Եթե դիմեր՝ որպես փախստական Թայվան գնալու համար, կարող էր մոռանալ մայրցամաքային Չինաստան վերադառնալու մասին: Նա չէր կարող թողնել մորը, իր բոլոր ընկերներին եւ հարազատներին: Նա իր առջեւ երկու ճանապարհ ուներ. մեկը տանում էր Սի՛ան, մյուսը նրան պահում էր Հոնկոնգում:

Այդ ժամանակ Հոնկոնգի կառավարությունը մայրցամաքային Չինաստանից եկած ցանկացած մարդու, ում թույլատրված էր այցելել Հոնկոնգ, թույլ էր տալիս այդտեղ բնակություն հաստատել: Անցաթղթի վավերականությունն ամեն անգամ կարող էր երկարածովել երեք ամսով: Մեկ տարի Հոնկոնգում անցկացնելուց հետո տարածքում ազատ ելու-մուտք թույլատրվում էր: Հոնկոնգում յոթ տարի ապրելուց հետո մարդ կարող էր դառնալ Հոնկոնգի քաղաքացի: Բայց արդյո՞ք այդքան հեշտ կլինե՞ր Հոնկոնգում մնալը: Հողն այդտեղ բավականին թանկ էր, քաշով մեկ ոսկի էր: Դուն Ցզյանը ո՛չ տանիք ուներ գլխավերետում, ո՛չ հող, ո՛չ աշխատանք: Միեւնույն ժամանակ պայքարում էր յարդի հիվանդության

դեմ, իսկ երեխան ընդամենը մեկ տարեկան էր: Երեք հոգանոց ընտանիքով երկար ժամանակ չէր կարող ապրել հորաքրոջ մոտ:

Բնակտարածքը Հոնկոնգում հաշվարկվում էր քառակուսի ոտնաչափով (մեկ քառակուսի մետրը հավասար է 10,746 քառակուսի ոտնաչափի): Այդ ժամանակ սովորական տան մեկ քառակուսի ոտնաչափն արժեր երկու հազար հոնկոնգյան դոլար, եւ մեկ քառակուսի մետրը քսան հազարի էր հասել: Քառասուն քառակուսի մետր տարածքով տուն վարձելն ամսական արժեր երեք հազար հոնկոնգյան դոլար, այն դեպքում, երբ նորմալ աշխատողի աշխատավարձը կազմում էր մեկից երկու հազար հոնկոնգյան դոլար: Այդ ժամանակ Սի՛անում քառասուն քառակուսի մետր տարածքով տուն վարձելն արժեր ամսական վեց յուան, որից գործատուները վճարում էին ութսուն տոկոս: Անհատները միայն պետք է վճարեին երկու յուան:

Դուն Ցզյանն իմացավ, որ հայրը, որպես Թայվանի Ազգային ժողովի անդամ, ամսական վաստակում էր ավելի քան երեսուն հազար հոնկոնգյան դոլար, եւ Թայվանում բազմաթիվ տներ ուներ: Հայրն ուզել էր վաճառել դրանցից մեկը, որպեսզի Դուն Ցզյանին օգնի տան համար վճարել Հոնկոնգում, բայց Թայվանում նրա կինը կտրականապես դեմ էր եղել դրան: Կինը եւ Դուն Ցզյանի հայրը հաճախ կռվում էին: Դուն Ցզյանը չգիտեր ինչ անի:

Նա կանգ առավ ճամփեգրին, որպեսզի խոսի միջին տարիքի մի բախտագուշակի հետ: Բախտագուշակի կողքին գրված էր, որ նրա խորհրդատվությունն արժե հիսուն հոնկոնգյան դոլար: Դուն Ցզյանն ուզում էր իր բախտը նայել՝ տեսնելու, թե ինչպիսի ճակատագիր է սպասվում իրեն: Արդյո՞ք պետք է մնար Հոնկոնգում: Թե՞ պետք է վերադառնար մայրցամաքային Չինաստան: Նա գրպանից հանեց հարյուր հոնկոնգյան դոլար եւ քայլեց դեպի բախտագուշակի փոքրիկ կրպակը: Կինը՝ Սյաո Սինը, վրա հասավ, փողը խլեց նրա ձեռքից եւ բղավեց. «Դուն Ցզյան, խելքդ թռցրե՛լ ես: Մեկ էլ նայիր. հինգ յուան չէ, որ բախտդ նայես: Մեկ գրո էլ ավել է գրված: Գիտես, որ մեր ամբողջ ունեցածն այդ հարյուր յուանն է»:

Հոնկոնգյան հարյուր դոլարն այն գումարն էր, որ նրանք բերել էին հետները: Չէին կարող իրենց թույլ տալ, որ դրանից ինչ-որ բան ծախսեն: Եկած օրից՝ ամբողջ շաբաթվա ընթացքում ուտելիքը հորաքրոջ

## Չժան Յավեն

տանն էին կերել: Եվ այժմ նա ուզում էր ծախսել հիսուն հոնկոնգյան դոլար՝ իր ճակատագիրն իմանալու համար: Ինչպե՞ս կարող էր նրա կինն իրեն հանգիստ պահել:

Բայց Դուն Յոյանն ասես դիվահար լիներ: Նա ետ խլեց հոնկոնգյան հարյուր դոլարանոցը, այն պահեց գլխավերելու եւ գոռաց կնոջ վրա. «Սա՞ է մեր կարողությունը: Ամեն մեկիս այս հարյուրի կեսն է հասնում: Ես պատրաստվում եմ իմ հիսունը ծախսել: Քո բաժնին ձեռք չեմ տա»: Երկուսով կռվում էին փողի համար, հենց փողոցում: Դուն Յոյանն ու կինն ամուսնացել էին 1977-ին, եւ սա առաջին անգամն էր, որ կռվում էին:

Սյաո Սինը Հունանից էր, պարկեշտ, գեղեցիկ, երիտասարդ մի կին: Նրանք հանդիպել էին, երբ աշխատում էին Սի՛անից դուրս գտնվող նույն տեքստիլ գործարանում: Մեկն էլեկտրիկ էր աշխատում, մյուսը՝ կարող բանվորուհի: Դուն Յոյանին սիրահարվելու համար Սյաո Սինը Սի՛անի Ցոյաոտուն համալսարանի դասախոս իր հորից ապտակ էր ստացել: Նա դառնորեն բողոքել էր իր հետ աշխատող մյուս կանանց՝ նվաստացումից լաց լինելով: Մյուս կանայք վրդովվել էին եւ Սյաո Սինին բերել գործարանի ղեկավարի մոտ: Գործարանի ղեկավարը գնացել էր համալսարանի նախագահի հետ հարցը քննարկելու, հետո վերադառնալով ասել էր. «Ցոյաոտունի համալսարանի ղեկավարությունն ուշադիր հետեւում է այս միջադեպին: Նրանք կանչել են Սյաո Սինի հորը, որպեսզի հարցը քննարկեն, եւ ասել են, որ նրա դուստրը կարող է ամուսնանալ իր ընտրած մարդու հետ, ու նա իրավունք չունի միջամտելու: Նման միջադեպ այլեւս չի կրկնվի»:

Լաց լինելով՝ Սյաո Սինը Դուն Յոյանին ասել էր մի բան, որը նա հիշելու էր իր ամբողջ կյանքում. «Դուն Յոյան, ինձ համար միեւնույն է, որ քո հայրը Գոմինդանում է եղել: Դու նա ես, ում ես սիրում եմ: Նույնիսկ եթե հայրդ Չան Կայ-շին լիներ, ես չէի մտածի»:

Եվ հիմա ամուսինն ու կինը հոնկոնգյան մի փոքրիկ փողոցային թատրոն էին խաղում՝ հասարակության աչքի առջեւ կռվելով հարյուր հոնկոնգյան դոլարի համար:

Տեսնելով, թե ինչպես են ծնողները կռվում, նրանց որդին, որ մեկ տարեկանից մի փոքր էր ավելի, կարծեց, թե հայրը բռնություն է գործադրում մոր նկատմամբ: Նա փաթաթվեց հոր ոտքին եւ ուժեղ կծեց: Ցավն այնքան ուժեղ էր, որ Դուն Յոյանը ցավից գոռաց: Տեսնելով իր աչքի առ-

ջեւ տեղի ունեցածը՝ բախտագուշակը ծայն տվեց նրանց՝ մանդարինի գուանդունյան թավ հնչերանգով. «Մի՛ կովեք: Տեսնում եմ՝ մայրցամաքից եք: Տեսնում եմ, որ ամուսինդ բարձր կարծիք ունի իմ մասին, դրա համար էլ բացառություն կանեմ եւ փող չեմ վերցնի: Ձրի կգուշակեմ»:

Դուռն Ցզյանը խիստ շփոթվեց դրանից: Նա պազեց ճանապարհին՝ փորձելով խուսափել անցորդների զարմացած հայացքից: Բախտագուշակը Դուռն Ցզյանին մի քանի մանրամասն բանից հարցեր տվեց, ներառյալ նաեւ՝ թե երբ է ժամանել Հոնկոնգ, ապա թեթեւ զարկեց նրա ձեռքի կոշտուկապատ ափին ու ասես ամբողջ մի հավերժություն նայեց դրան՝ նախքան խոսելը. «Դուք եկել եք Հոնկոնգ, երբ քսանինն ու կես տարեկան էիք: Երեսուն տարի կանցկացնեք Չինաստանի արեւելքում եւ երեսուն տարի արեւմուտքում: Հոնկոնգ գալը ձեր ընտանիքի հաջողակ դադարի սկիզբն է: Հիշեք՝ դուք պետք է դիմակայեք վատ ժամանակներին, ըմբռնեք դառնությունը նախքան քաղցրը ստանալը: Հաջողություն կունենաք՝ հենց որ երեսունին հասնեք: Ձեր կինը լավ կին է: Եվ ձեր որդուն լավ ապագա է սպասվում»:

«Դուք ասում եք, որ ես պետք է մնամ Հոնկոնգում, թե՞ վերադառնամ մայրցամաք», - հուզված հարցրեց Դուռն Ցզյանը:

«Իհարկե պետք է մնաք Հոնկոնգում: Շատերն են ուզում գալ, բայց չեն կարողանում: Չպետք է այս հնարավորությունը ձեռքներիցդ բաց թողնեք, երբ ամբողջ ընտանիքով այստեղ եք: Թե չէ ամբողջ կյանքում կզղջաք»:

Դուռն Ցզյանի համար ամեն ինչ հստակվեց: Նա ոտքի կանգնեց եւ խոնարհվեց բախտագուշակին՝ անընդմեջ կրկնելով՝ «Շնորհակալ եմ: Շնորհակալ եմ»:

«Կարիք չկա ինձ շնորհակալ լինել: Ձեր ճակատագիրը երկինքն է որոշել: Ճակատագիրը գալիս է երկնքից, բայց մենք ենք մեր երջանկությունը ստեղծում: Անկախ նրանից, թե որքանով է լավը ձեր ճակատագիրը, եթե դրա համար շատ չաշխատեք, այն ձեզ կշրջանցի: Դուք պետք է աշխատեք դրա համար, ծույլ մի՛ եղեք: Օգտագործեք առիթը, եւ ամեն ինչ լավ կլինի»:

Այս հորդորը դառնալու էր Դուռն Ցզյանի նշանաբանը:

Դուռն Ցզյանն աշխատանք գտավ եւ որպես էլեկտրիկ աշխատում էր Տիու Կեն Լենի «Shiu Wing Steel» պողպատածուլական գործարանում:

## Չժան Յավեն

Օրական ստանում էր երեսունվեց հոնկոնգյան դոլար՝ արտաժամյա աշխատանքի համար հավելյալ վարձատրությամբ: Որոշ ժամանակ անց նա կարողացավ ամսական երեք հարյուր հոնկոնգյան դոլարով Տիու Կեն Լենում տասներկու քառակուսի մետր մակերեսով մի խրճիթ վարձել և տեղափոխվել հորաքրոջ տնից:

1979 թվականի օգոստոսին հայրն իր թայվանցի կնոջ հետ վերջապես Միացյալ Նահանգներով Հոնկոնգ թռավ՝ տեսնելու որդուն:

Երեկոյան ժամը 9:20-ին, Հոնկոնգի հին Կայի Տակ օդանավակայանում, Դուն Ցզյանը կարողացավ մի հայացքով նկատել սպիտակ մազերն ու վառ կարմիր այտերը: Դա նրա հոյակապ տեսքով ծերուկն էր՝ թայվանցի կնոջ հետ, որի դեմքին լայն ժպիտ էր շողում և հագնված էր շատ նորածնի:

Երեսուն տարի իրարից հեռու և բաժան ապրած, երեսուն տարի իրար չտեսած, իրար չճանաչած մարդկանց հանդիպումն ավարտվեց նրանով, որ հայրն ու որդին մեկը մյուսի վրա մի հայացք զցեցին և ամուր գրկախառնվեցին:

Արդեն շատ ուշ էր Տիու Կեն Լենի տուն վերադառնալու համար, դրա համար էլ նրանք գնացին հյուրանոց: Զրուցեցին մինչև ուշ գիշեր՝ արտահայտելով իրենց բոլոր զգացմունքները: Բայց որոշ բաներ կային, որ չէին կարող ասել հոր թայվանցի կնոջ ներկայությամբ: Գիշերվա ժամը մեկին հայրը քնելուց առաջ պետք է լվացվեր: Նա ուզեց, որ Դուն Ցզյանը գնա իր հետ և ասաց. «Տղաս, արդեն երեսուն տարեկան ես, իսկ ես, որպես հայր, հնարավորություն չեմ ունեցել քեզ համար ոչինչ անելու: Թող ես լողացնեմ քեզ»:

Հենց որ մտան լոգասենյակ, հայրը մինչև վերջ բացեց ցնցուղը և խիստ հուզված հարցրեց Դուն Ցզյանին. «Մայրդ ինչպե՞ս է»:

«Նոր է թոշակի անցել: Լավ է: Ասաց, որ քո մասին հոգ տանես, իր համար չանհանգստանաս»:

Հոր արցունքներն առատորեն հոսեցին: Նա շարունակ կրկնում էր. «Այն, ինչ արել եմ մորդ հանդեպ, երբեք չեմ կարող շտկել: Ես մեղավոր եմ: Ես մեղավոր եմ»:

«Այդպես մի՛ ասա, հայրիկ: Դու ոչ մի վատ բան չես արել»:

«Տղա՛ս, քո հայրն ամաչում է այն բանի համար, ինչ արել է մորդ, այն բանի համար, ինչ արել է քեզ և քրոջդ»:

Տնցուղի խշռոցը գուցե ծածկում-խլացնում էր հոր եւ որդու հեկեկոցի ձայնը, բայց չէր կարող ծածկել պատմության ցավը: Երկուսով թաքնվել էին փոքրիկ լոգասենյակում, մեկը մյուսի ուսին հենված անսփոփ արտասվելով՝ այտերն իրար էին հպել: Եվ լողացնում էին իրար՝ հոգատարությամբ միմյանց մեջք տրորելով:

Դուն Յգյանի մեջքը տրորելով՝ հայրը միաժամանակ տենդագին մտածում էր. «Վաղը, երբ Թայվանի մայրդ լավ տրամադրություն կունենա, ինձ հետ կգաս, որ բոլորիդ համար տուն գնեմ Հոնկոնգում»:

Հենց այդ պահին լոգասենյակի դուռը թակեցին: Լոյի թայվանցի կիևը ձայն տվեց. «Տղաներ, վերջացրի՞ք այդտեղ ձեր քչփչոց-գրոյցը: Լոգարանն ինձ պետք է»:

Դուն Յգյանի հայրը շտապ շնջաց նրա ականջին. «Թայվանի մայրդ իսկապես խելացի է: Նրան «մայրիկ» կասես, որ լավ տրամադրություն ունենա: Կյանքը խաղի պես մի բան է, պետք է քո դերը լավ խաղաս, որ այն չփչացնես: Մենք չենք ուզում, որ ամեն ինչ փչանա: Եթե այդպես լինի, շատ դժվար կլինի ինչ-որ բան նորից շտկել: Հայրդ ուզում է օգնել քեզ, բայց...»:

Դուն Յգյանը լավ տեղյակ էր, թե ինչ դժվարին վիճակում է հայրը: Նա Ազգային ժողովի անդամ էր, եւ ինչ-որ չափով հայտնի նկարիչ ու գեղագրող: Լոյս էր ընծայել իր հավաքական նկարների գիրքը՝ շապիկին տպագրված՝ Յու Յուրենի\* սեփական ձեռագրով գրված տողով. «Ռագմի դաշտում անպարտելի, մեծ մտքի եւ արժանիքի տեր մարդ»: Գրքի ներսում տեղադրված էր Սուն Յաթ-սենի որդի եւ Թայվանի գործադիր իշխանության նախագահ Սուն Ֆոյի մակագրությունը. «Ընդմիշտ որդիաբար»: Լոն Հուանպուի ռազմական ակադեմիայի շրջանավարտ էր, տաղանդավոր դաշտային հրամանատար, որ բարձրակարգ գիտնական-զինվորի համբավ ուներ: Տնից դուրս նա անսահման հարգանք վայելող մարդ էր, բայց նույնիսկ չէր կարողանում վերահսկել սեփական կնոջը: Միայն Լոն չէր այդ վիճակում. գոմիևդանյան շատ զինվորներ, որոնք տեղափոխվել էին Թայվան, հայտնվել էին նման իրավիճակներում:

Հաջորդ օրը հայրը եւ նրա թայվանցի կիևը եկան Տիու Կեն Լենում գտնվող՝ Դուն Յգյանի տուն: Նա տեսավ որդու խարխուլ ու հեղձուկ,

\* Թայվանում հայտնի գիտնական, գեղագրագետ եւ քաղաքական գործիչ:

## Զժան Յավեն

խոնավ, փայտաշեն խրճիթը: Տանը միայն մեկ աթոռ կար: Նստելու ուրիշ բան չկար: Հոր աչքերն արցունքներով լցվեցին:

Առանց սպասելու, որ Դուն Յգյանը խոսի, հորաքույրը, տանտերը եւ հարեւանները բոլորը բարեխոսեցին նրա համար՝ խնդրելով հորն ու նրա կնոջը՝ օգնել տուն գնելու, որպեսզի նա եւ իր ընտանիքը զուխը դնելու տեղ ունենան: Տիու Կեն Լենում տներն էժան էին: Երեսուն քառակուսի մետր տարածքով քարաշեն տունն արժեք ընդամենը երեք հարյուր ութսուն հազար հոնկոնգյան դոլար: Լոյի թայվանցի կնոջ դեմքը մռայլվեց: Մի պահ փոքրիկ տան մեջ քար լուռություն տիրեց:

Դունի հայրն անհանգիստ ասաց. «Յգյան, տղաս, ինչո՞ւ մորդ շնորհակալություն չես հայտնել: Նա այդքան դժվարությունների գնով Թայվանում քեզ համար տուն ունենալու հնարավորություն ստեղծեց, բայց դու չգնացիր: Կարծում եմ, այստեղ՝ Տիու Կեն Լենում կգնեմ այս տունը ձեզ համար: Երբ ետ գնամ, գումարը կփոխանցեմ քեզ: Շտապիր եւ շնորհակալություն հայտնիր մորդ»:

Դուն Յգյանը հասկացավ հոր բարի մտադրությունները: Նա ասաց. «Մայրիկ, ես դա որպես վարկ կհամարեմ: Եվ կհոգամ այն մասին, որ ետ վճարեմ ձեզ»:

Իսկ նրա թայվանցի «մայրը» միայն մի բան ուներ ասելու. «Ետ կվերադառնամ եւ կտեսնեմ, թե ինչ կարող եմ անել»:

Հայրն արագ միջամտեց. «Ես գիտեմ իմ որդուն: Իմ տղան վագր է, նա իր առջեւ պայծառ ապագա ունի»:

Դուն Յգյանի սիրտը լալիս էր: Նա վատ էր զգում հոր համար, որը դժվարին վիճակում էր հայտնվում իր որդու համար:

Չորս օր անց հոր՝ Թայվան մեկնելու ժամանակն էր: Դուն Յգյանի ամբողջ ընտանիքը նրան ուղեկցեց օդանավակայան: Օդանավակայանում Լոյի թայվանցի կինը մի պահ հեռացավ Լոյից՝ Դուն Յգյանի հետ առանձին խոսելու համար. «Մաքսատունն անցնելուց հետո ուզում եմ անմաքս ոգելից խմիչք եւ ծխախոտ ձեռք բերել, բայց ինձ մոտ փող չկա: Ինձ տուր այն ամերիկյան դոլարները, որ հայրդ տվել է քեզ. ուզում եմ օգտագործել դրանք»:

Նախորդ օրը հայրը եւ նրա թայվանցի կինը գնացել էին Հոնկոնգում գնումներ կատարելու: Հայրն իր փոխանակած ութսուն ԱՄՆ դոլարը դրել էր Դուն Յգյանի գրպանը: Դուն Յգյանն այդ ութսուն դոլարը



հանեց գրպանից եւ տվեց իր թայվանցի «մորը»: Հայրը, նկատելով դա, հարցրեց. «Ի՞նչ էր քեզից խնդրում թայվանցի մայրդ»: Լսելով Դուն Յգյանի պատասխանը՝ նա զայրացած ասաց. «Այդ տխմարը: Ի՞նչ է նշանակում մոտը փող չկա: Ծիծաղելի՛ է»:

Հրաժեշտ տալիս հայրը գրկեց Դուն Յգյանին եւ շնջաց. «Տղաս, մի՛ բարկանա: Երբ վերադառնանք Թայվան, կխնդրեմ թայվանցի մորդ, որ հնարավորինս արագ երեսունհինգ հազար հոնկոնգյան դոլար ուղարկի քեզ»:

Դուն Յգյանը միայն ասաց. «Պահպանիր քեզ»: Նա իրեն թույլ չտվեց ավելին ասել:

Երեսուն տարի շարունակ նա ապրել էր գլուխն ամպերում՝ դառն ու կարոտագին ցանկություններ փայփայելով երեսուն տարի: Վերջապես ստացել էր այն, ինչ ցանկանում էր: Հայր էր գտել: Բայց այն ամենն, ինչ զգում էր, կորստի զգացում էր, եւ ավելի խորը նվաստացում, քան երբեւէ ունեցել էր: Ընդամենն ութսուն դոլարի համար իր նման հասուն մարդը ստիպեց հորը դիմել նման հնարքների: Հորը ճանապարհելուց հետո Չինաստանի հյուսիս-արեւմուտքից եկած այդ բարձրահասակ երիտասարդ որդին կորցրեց ինքնատիրապետումը: Հենց այդտեղ՝ օդանավակայանում նա բռնեց իր կնոջ ու որդու ձեռքերը, եւ լաց եղան՝ իրենց ու միմյանց համար:

Նա նայեց երկնքին եւ հառաչեց. օ, Հոնկոնգ: Մի՞թե այստեղ ոչ մի տեղ չկա Դուն Յգյանի ու նրա ընտանիքի համար: Ո՛չ: Ճակատագիրը գալիս է երկնքից, բայց մենք ենք մեր երջանկությունը ստեղծում: Այսուհետ նա այլեւս չէր ապավինելու ուրիշների բարեգործությանը: Ի՛նքն էր հարթելու իր ճանապարհը իր իսկ ձեռքերով: Ի՛նքն էր ելնելու եւ պայքարելու իր համար: Ի՛նքն էր իր համար արժանի կյանք կորզելու այս քաղաքից: Նա անելու՛ էր դա իր մոր եւ մայրցամաքի իր հայրենակիցների համար:

Դուն Յգյանի հորաքույրը մտավախություն ուներ, որ ինչ-որ մեկը կարող է զնել փոքրիկ քարե տունը: Նա Դուն Յգյանին պարտքով երկու հազար հոնկոնգյան դոլար տվեց ու ասաց, որ շտապեր կանխավճար մուծել, նախքան մեկ ուրիշը դա կաներ: Կանխավճարը մուծելուց մեկ օր հետո հայրը զանգեց եւ այնպիսի լուր հայտնեց, որ նման էր պարզ երկնքում ճայթած ամպրոպի: Հայրն ասաց, որ տուն վերադառ-

## Չժան Յավեն

Նալուց հետո իր թայվանցի կինը միտքը փոխել է: Նա կտրականապես դեմ է փողն ուղարկելուն: Հեռախոսագծի մյուս ծայրում հայրը հուսահատ հառաչեց՝ ասելով, որ ինքը Դուն Յզյանին կուղարկի տասը հազար՝ իր անձնական խնայած միջոցներից: Դուն Յզյանն ուղիղ գնաց իր տունը վաճառողի մոտ. արդեն ուշ գիշեր էր: Նա ներս մտավ եւ ներկայացրեց ամբողջ իրավիճակը՝ բացատրելով, որ հայրը փող չի ուղարկելու: Վերջում ասաց. «Ցավում եմ, որ չեմ կատարելու իմ ստանձնած պարտավորությունը: Եթե որոշեք պահել իմ կանխավճարը, ես իսկապես ոչինչ չեմ կարող ասել: Ես ձեզ ասել եմ՝ հենց որ իմացել եմ, որ փող չունեմ տունը գնելու համար»: Այս ասելով՝ շրջվեց, որպեսզի հեռանա: Չէր ուզում, որ վաճառողը տեսնի իր դեմքի վրայով հոսող արցունքները: Ի վերջո վաճառողը ետ տվեց նրա ամբողջ կանխավճարը:

1980-ականների սկզբին Հոնկոնգում սկսեցին հայտնվել էլեկտրոնային նոր արտադրանքները: Մայրցամաքային Չինաստանում ամենապահանջվածը ցածր գներով՝ ձեռքի նորածեւ էլեկտրոնային ժամացույցներն էին: Դուն Յզյանը, որ իր ճակատագիրը փոխելու միջոցն էր փնտրում, զգաց, որ հնարավորություն կարող է ստեղծվել: Նա հասկացավ, որ եթե այդ էլեկտրոնային ժամացույցների մասերն ուղարկի մայրցամաք, հաստատ կկարողանա գումար վաստակել: Սկսեց նամակներ գրել ձեռքի ժամացույց արտադրողներին, ասելով, որ ինքը Սի'անում աշխատել է ձեռքի ժամացույցի բիզնեսի մեջ, եւ բացատրելով, թե նրանք ինչպես կարող են թափանցել մայրցամաքային շուկա:

1980 թվականի ապրիլին Դուն Յզյանը հրավեր ստացավ ժամացույց արտադրող հոնկոնգյան ընկերության տնօրենից՝ ամսական երեք հազար հոնկոնգյան դոլար աշխատավարձով լինել Չինաստանի բաժնի իրենց կառավարիչը: Նա ազատվեց պողպատածուլական ընկերությունում իր աշխատանքից. մեկ տարի չորս ամսում Հոնկոնգում շարքային բանվորից դարձել էր «սպիտակ օձիքով» ծառայող: Դուն Յզյանը երդվեց՝ փայփայել դժվարությամբ ձեռք բերված այս հնարավորությունը եւ փոխհատուցել իր տնօրենի կողմից իրեն ցուցաբերված վստահությունը: Նա նետվեց աշխատանքի գիրկը՝ ճանապարհորդելով Գուանչժոուի եւ Սի'անի միջեւ: Շատ արագ շահեց իր առաջին գործարքը: Նույնիսկ ավելի բարեհաջող վիճակ էր, որ ծանոթացավ Շենչ-

ժենի նշանավոր մարդկանցից մեկի՝ քաղաքի քաղաքաշինության վարչության պետ Վան Ֆենլունի հետ: Նրանք իրար հետ լավ հարաբերություններ հաստատեցին: Շատ արագ դարձան այնպիսի ընկերներ, որոնք կարող են խոսել ամեն ինչի մասին:

Այդ ժամանակ Շենչժենը խորդուբորդ ճանապարհների, փողոցի աղոտ լապտերների, ցածրորակ հեռախոսակապի եւ գերաճած բուսականության քաղաք էր: Ամենուր մոճակներ էին: Կար միայն մեկ հյուրանոց, եւ հնարավոր չէր գտնել պատշաճ ռեստորան: Այն ավելի շատ նման էր մի մեծ կեղտոտ գյուղի, քան վայելույժ քաղաքի:

Վան Ֆենլունը Դուն Ցզյանին ցույց տվեց Շենչժենի ապագայի նախագծերը՝ ասելով. «Պետք է Շենչժենին նայել զարգացման տեսանկյունից: Կենտրոնական կառավարությունն այն դարձրել է հատուկ տնտեսական գոտի, շատ չի անցնի, եւ այն կդառնա ժամանակակից քաղաք: Շենչժենի զարգացումը նոր է սկսվել: Դրա համար հող է պետք եւ դրա համար խոսք է պետք: Խոսք է պետք՝ նշանակում է, որ մենք ստիպված ենք լինելու ինքներս մեզ գովազդել: Հող՝ նշանակում է, որ մենք պետք է կուտակենք մեզ անհրաժեշտ փողերը: Կարող եք ընտրել այն հողակտորը, որն ուզում եք, սկզբում նույնիսկ պետք չէ վճարել դրա համար: Հենց որ ավարտեք այնտեղ կառուցված ձեր շենքի վաճառքը, կարող եք այդ [գումարն օգտագործել] հողի վճարը տալու համար: Ձեզ անհրաժեշտ է միայն հեռատեսություն եւ ամուր կամք»: Երբ Վան Ֆենլունը խոսքն ավարտեց, Դուն Ցզյանը փոքր-ինչ շփոթված էր եւ սաստիկ հուզված: Նա ուներ հեռատեսություն եւ ամուր կամք, պարզապես փող չուներ: Բայց ուներ երբեք չհանձնվելու ոգի, որ բնորոշ է հյուսիս-արեւմուտքի տղամարդկանց: Եթե չէր հասել իր նպատակին, չէր պատրաստվում տեղի տալ:

Հոնկոնգ վերադառնալուն պես նա գնաց իր տնօրենի մոտ, որ քաղաքավարի, նրբաճաշակ, միջին տարիքի մի տղամարդ էր: Տնօրենը մանդարինի սահուն հնչերանգով նրան ասաց. «Ես իրականում մայրցամաքից բան չեմ հասկանում, պատրաստվում եմ այդ ամենը քեզ թողնել: Եկ միասին աշխատենք, գրանցենք նոր ընկերություն: Մենք կսկսենք մեկ միլիոն հոնկոնգյան դոլար գրանցված կապիտալով: Քեզ պետք չէ որեւէ բան ներդնել: Դու հանդես կգաս որպես կառավարիչ Չինաստանում եւ Շենչժենում հոգ կտանես ամեն ինչի մասին: Ես հոգ

## Զժան Յավեն

կտանեմ վաճառքի մասին Հոնկոնգում: Դու կստանա տասնհինգ տոկոս քո աշխատանքի դիմաց, իսկ ընկերությանը կմնա ութսունհինգ տոկոսը: Ես համաձայնագիր կգրեմ: Դա կգրվի իմ սեփական ձեռագրով, այնպես որ կարող ես հանգիստ լինել: Եթե ես խախտեմ իմ խոսքը, կարող ես օգտագործել այն, որպեսզի ինձ դատարանում պատասխանատվության ենթարկեն»: Եվ նա Դուն Ցզյանի համար անգլերեն մի նամակ գրեց:

Դուն Ցզյանն անգլերեն չգիտեր, դրա համար էլ նամակը տուն բերեց՝ ցույց տալու կնոջը, որը մի փոքր գիտեր անգլերեն: Նրանք ցնցված էին. նամակում ասվում էր, որ Դուն Ցզյանի բաժնեմասը ոչ թե տասնհինգ, այլ տասը տոկոս է:

Հաջորդ օրը Դուն Ցզյանն ուղիղ գևաց իր տնօրենի մոտ, որը թույլ ժպտաց. «Օ, կարծես խառնել եմ ինչ-որ բան: Կուզե՞ս նորը գրեմ»:

«Ոչ, ոչ, կարիք չկա»: Դուն Ցզյանն անհանգստանում էր, որ կարող է ամեն բան փչացնել: Համենայն դեպս, կարծում էր, որ տասը տոկոսն էլ լիովին բավարար է:

Նա Շենչժենում գործադիր ղեկավարություն ուներ: Ընկերությունը, որը ստեղծել էին նախագծի համար, դառնալու էր Շենչժենում առաջին արտերկրյա ընկերությունը: Այդ պահից սկսած՝ Դուն Ցզյանն աշխատում էր անդադար, հույի պես պտտվում էր եւ միշտ վագրի մեջ էր: Ամեն շաբաթ նա երեք օր անցկացնում էր Շենչժենում եւ երեք օր Հոնկոնգում: Հաճախորդների հետ հանդիպումներից վազում էր աշխատանքային այցելությունների, ապա վաճառքի այցելությունների: Ամեն օր արթնանում էր ժամը հինգին, հապճեպ նախաճաշում, որպեսզի Տիու Կեն Լենից առավոտյան 6-ին Հոնկոնգի կենտրոն մեկնող լաստանավին հասնի: Այդտեղից ավտոբուսով հասնում էր Կոուլունի Հուն Հոմ երկաթուղային կայարան, որպեսզի հասնի Շենչժեն մեկնող գևացքին: Գևացքը Լուոհու էր հասնում առավոտյան 9:30-ին, այդ պահին նա արագ վազում էր, որ լինի մաքսակետում: Երացնում էր մաքսային ձեւերը եւ հերթ կանգնում՝ ներկայացնելու անձը հաստատող նույնակա-նացման քարտը, ապա Լուոհուի կամրջով վազում էր Շենչժեն, որտեղ ստիպված էր նորից հերթ կանգնել մաքսակետում, որտեղ թղթաբանության եւս մեկ կույտ էր նրան սպասում: Երբ մաքսակետից դուրս էր գալիս, առավոտյան 10:30 էր լինում. նետվում էր վաճառքի գրասեն-

յակ՝ նախագծի համար: Կեսօրից հետո ժամը չորսին նա ստիպված էր այդ ամենը կրկնել. մաքսակետ, մաքսակետից դուրս, գնացք նստել, ավտոբուս նստել, դեպի Տիու Կեն Լեն լաստանավ, ապա տասը րոպե բլրով վեր՝ դեպի իր տուն: Այդ ժամանակ արդեն գիշեր էր լինում: Դա պատժիչ տաժանակիր աշխատանքի մի ռեժիմ էր: Երջանկությունը նրա համար անցյալում եղած մի բան էր:

Դուն Ցզյանը լավ գրուցընկեր էր, ազնիվ ու շիտակ դեմքով: Նրա շենքի նախնական վաճառքը Հոնկոնգում առաջնակարգ էր: Շենքի ներսում մեկ քառակուսի ոտնաչափն արժեր երեք հարյուր հիսուն հոնկոնգյան դոլար կամ մեկ քառակուսի մետրն արժեր երեք հազար հինգ հարյուր: Շենքեցիները տուն գնողները կարող էին ձեռք բերել նաև արտասահմանյան գունավոր հեռուստացույցներ եւ լվացքի մեքենաներ՝ բոլորն էլ առանց հարկելու: Նրանք կարող էին նաև ստանալ երկու *հուկոու* կամ մշտական բնակության իրավունք՝ Շենքեցի սահմաններից դուրս գտնվող գյուղական վայրերից կամ չորս *հուկոու*՝ քաղաքներից ու ավաններից: Արտոնյալ քաղաքականության հետ կապված մի շարք փոփոխություններ Շենքեցիները գայթակղիչ էին դարձնում Հոնկոնգի բնակիչների համար, որ կաշկանդված ապրում էին կոշիկի տուփի չափ իրենց բնակարաններում: Առաջին օրն ընկերությունը վաճառեց քսանյոթ բնակարան: Երկրորդ օրը՝ քսանհինգ: Ինչպես կասեին հոնկոնգցիները. «Նրանք այնքան փող ունեին, որ կարող էին հաշվել իրենց ձեռքերի տվածը»: Կես տարի անց նրանք վաճառել էին իրենց պաշարների իննսուն տոկոսը եւ աշխատել ավելի քան հարյուր միլիոն հոնկոնգյան դոլար: Դուն Ցզյանի հոնկոնգյան տնօրենը երկու հարյուր քառակուսի մետր մակերեսով շքեղ մի առանձնատուն գնեց Շա Տի-նում եւ իր BMW-ն փոխարինեց Rolls-Royce-ով: Տնօրենի կրտսեր եղբայրը նույնպես նոր տարածք գնեց եւ հյուսիսում գտնվող իր հին՝ քառասուն քառակուսի մետր մակերեսով բնակարանը տվեց Դուն Ցզյանին: Վերջինս ընտանիքով վերջապես կարողացավ տեղափոխվել Տիու Կեն Լենի իրենց խարխուլ տնից եւ մորը Սի՛անից բերել իրենց մոտ: Դուն Ցզյանի աշխատավարձը ամսական հինգ հազար հոնկոնգյան դոլարից բարձրացավ՝ հասնելով մինչեւ յոթ հազար դոլարի:

Երեքուկես տարվա քրտնաջան աշխատանքից հետո Դուն Ցզյանին վերջապես հաջողվեց իր ընկերության երեսուն հարկանի շենքը վա-

## Չժան Յավեն

ճառել Շենչժենում: Սոտավոր հաշվարկը ցույց էր տալիս, որ ընկերությունը քառասուն միլիոն հոնկոնգյան դոլարի եկամուտ էր ստացել: Շենչժենում եկամտահարկից վեց միլիոն հանելուց հետո նրանց մնաց ավելի քան երեսուն միլիոն հոնկոնգյան դոլար մաքուր շահույթ: Դուր Ցզյանը գոհ էր արդյունքից. տասը տոկոս բաժնեմասով նա կստանար երեք միլիոն: Դա իրոք ճակատագրի շրջադարձ էր:

Բայց 1983-ի աշնան սկզբին Դուր Ցզյանի ականջին հասավ, որ տնօրենը չի ցանկանում իր բաժինը տալ եւ պատրաստվում է իրեն աշխատանքից ազատել: Ձեռքի էլեկտրոնային ժամացույցների իրենց գործարանի գործերը լավ չէին գնում: Ըստ էության, գործարանը փող էր կորցնում: Ընկերությունն անգամ չէր ցանկանում մարել Շենչժենի հարկային բյուրոյի միլիոնների հասնող հարկերը:

Արդյո՞ք ժամանակն էր, որ Դուր Ցզյանն այրեր կամուրջները: Արդյո՞ք պայմանագիրը խզելու ժամանակն էր: Դուր Ցզյանը չէր կարող հավատալ, որ իր քաղաքավարի, նրբաճաշակ տնօրենը նման բան կաներ: Ընկերությունը տասնյակ միլիոններ էր ստացել, իսկ իրենք չէին կարող մի քանի միլիոնի հարկ վճարել: Եթե հարկերը չվճարեին, ի՞նչ երեսով էր նա երեւալու Շենչժենում: Ոչ, նա չէր կարող թույլ տալ, որ իր տնօրենն այդպիսի բան անի: Առավել եւս՝ չէր կարող թույլ տալ, որ նա իր հեղինակությանը վնաս հասցնի: Տյուսիս-արեւմուտքի անգիջում զավակ լինելով՝ Դուր Ցզյանն իր հեղինակությունը ոսկուց էլ բարձր էր գնահատում:

Նա գնաց իր շեֆի մոտ եւ անմիջապես ուղիղ ասաց. «Պարոն Չժան, ի՞նչ կասեք, եթե մեր հաշիվներն ամբողջովին մաքրենք: Կարող եք հանել վարձավճարը, որ Ձեզ պարտք եմ, եւ իմ տասը տոկոսը վճարելու հարկ չի լինի»:

Տնօրենը կտրուկ մերժեց. «Ոչ մի գործարք: Ընկերությունն առայժմ չի կատարել իր վերջնահաշվարկը, մենք դեռ չգիտենք, թե որքան գումար ենք աշխատել»:

Այժմ Դուր Ցզյանին ականհայտ դարձավ, որ տնօրենը շահագրգռված չէ իր պարտավորությունների կատարմամբ: Դուր Ցզյանը որոշեց, որ Շենչժենի հարկային բյուրոն մուծվելիք միլիոնները կպահի ընկերությունից՝ իրենց շենքի ներքեւի երեք հարկերը որպես առեւտրային տարածք վաճառելու արդյունքում ստացված գումարներից՝ ապագա ցանկացած խեղաթյուրում կանխելու համար: Նրա տնօրենը սաստիկ

զայրացավ. երկու կողմերի միջեւ խզումն ավարտված էր:

Այդ ժամանակ քրեական ծպտյալ ավազակների եռյակները վիտում էին Հոնկոնգում: Ամեն օր հաղորդումներ էին լինում հարձակումների, սպանությունների, առեւանգումների եւ մահացած պատանդների մասին: Դուն Ցզյանի ընտանիքը սկսեց սպառնալից զանգեր ստանալ, զանգում էին լուսադեմին՝ ժամը երեքին, եւ օր ու գիշեր նրանց դռան մոտ դարանակալ մարդիկ էին հավաքվում: Դուն Ցզյանը ոստիկանություն կանչեց, բայց ոստիկանությունից ասացին, որ որեւէ ապացույց չկա, եւ ինչ-որ մեկին չեն կարող մեղադրել: Դուն Ցզյանը կարող էր միայն զգուշացնել կնոջն ու մորը, որ դուռը կողպեն եւ դուրս գալիս ուշադիր լինեն: Որպեսզի վատ բան տեղի չունենա, Դունը մի գրություն գրեց՝ բացատրելով այն ամենն, ինչ եղել էր, եւ հասկացնելով, որ դա իր տնօրենն էր անում: Նա գրության պատճեններից տվեց իր ընտանիքի յուրաքանչյուր անդամին: Դունը Թայվանում գտնվող իր հորն ասաց, թե ինչ է կատարվում, քանի որ իր տնօրենի հետ ապրող կնոջ ավագ եղբայրը Թայվանում ընկերություն էր հիմնել:

Դունի հայրն արագ փնտրեց գտավ տնօրենի ավագ եղբորն իր ընկերությունում: Բռունցքով սեղանին խփելով՝ նա որոտաց. «Լսի՛ր, եւ լա՛վ լսի՛ր: Եթե Չժանն այդքան սիրտ կանի ու տղայիս գլխի մի մազին իսկ կկաչի, դու ստիպված կլինես պատասխան տալ ինձ: Եթե որդուս ընտանիքի հետ աննշան մի բան էլ լինի, ես կգամ նրա ետեւից: Ասածիս մասին տեղյակ պահիր նրան»:

Դունի հոր մոտեցումն ապշեցուցիչ կերպով արդյունավետ եղավ: Հեռախոսազանգերն ու հետապնդումներն իսպառ վերացան: Բայց կարճ ժամանակ անց հայրը հեռախոսազանգով հարցրեց Դուն Ցզյանին. «Դու Չինաստանի կոմունիստական կուսակցության անդամ ես»:  
Նրա տնօրենը նամակ էր գրել Թայվանի իշխանություններին՝ պնդելով, որ Դուն Ցզյանը ՉԿԿ-ի շարքերում է. ստացվում էր, որ նրա հայրը պաշտպանել է ՉԿԿ-ի անդամի: Թայվանյան հետախուզությունը հետաքննություն էր սկսել:

«Ա՛յ թե ինչ պտուղն է Չժանը: Փորձում է ինձ նեղը զցել»:  
Դուն Ցզյանը վրդովված էր. «Բայց դու ՉԿԿ-ի անդամ ես, թե՞ ոչ»:

«Հայրիկ, իսկապե՞ս կարծում էիր, թե այդքան հեշտ է կուսակցությանն անդամագրվելը: Դու Գոմինդանի գեներալ-լեյտենանտ ես: Ես

## ԶԺան Յավեն

երբեք չէի անցնի ստուգումը: Եվ ոչ միայն ՉԿԿ-ի: Չեմ կարող ևս այսօր Երիտասարդ կոմունիստների միության շարքերը մտնել:»

«Տղաս, ևս այսօր վայրի զագաններն են հոգ տանում իրենց ծագերի մասին: Եթե անգամ ՉԿԿ-ի անդամ լինեիր, ես դարձյալ կպաշտպանեի քեզ»: Դուն Ցզյանի հայրն զգուշացրեց նրան. «Աշխարհը դաժան, վտանգավոր մի վայր է: Պետք է մի փոքր ավելի խորամանկ լինես, որպեսզի կարողանաս ընտանիքդ ապահով պահել»:

Շենչժենում շենքի վրա աշխատանքներն ավարտելու համար դեռ շատ անելիքներ կային, ավելին, քան բոս Չժանը կարող էր ինքնուրույն գլուխ հանել: Նա այլընտրանք չուներ, քան Դուն Ցզյանին խնդրելը, որ օգնի, համաձայնելով երեք հարյուր հազար հոսկոնգյան դոլար կանխավճար ներդնել: Ասաց, որ Դուն Ցզյանը կստանա շահույթի իր մասնաբաժինը աշխատանքների ավարտից հետո: Բայց այն բանից հետո, երբ Դուն Ցզյանն ավարտեց աշխատանքը Շենչժենի շենքի վրա, տևորեն նրան ասաց. «Ընկերությունը երեք հարյուր միլիոն հոսկոնգյան դոլար է աշխատել [Շենչժենի շենքի վրա], բայց մենք այդ ամենը ծախսել ենք ժամացույցի գործարանի վրա: Եթե մի փոքր սպասեք, պարոն Դուն, մինչև ընկերությունը մի փոքր կանխիկ գումար ունենա, հաստատ կստանաք ձեր երեք միլիոնը»:

Մի քանի օր անց, Դուն Ցզյանը լրատվական ծրագիր էր դիտում, երբ մի հաղորդումից տեղեկացավ, որ «Astoria Watch Consolidated»-ը՝ իր ընկերությունը, փակել է դռները: Աշխատողները հավաքվել էին դռան դիմաց, եւ ոչ ոք չէր կարողանում կապ հաստատել ընկերության ղեկավարների հետ: Դուն Ցզյանն ապշած էր: Չժանը վաղուց էր սկսել դա պլանավորել: Նա խաբել էր բանկերին, իր աշխատողներին եւ Դուն Ցզյանին: Նա հափշտակել էր ընկերության գումարները, ստացել ներգաղթի փաստաթղթեր եւ իր սիրուհուն տեղափոխել Միացյալ Նահանգներ: Դրանից քիչ անց բանկը Դուն Ցզյանին ասաց, որ նա պետք է տեղափոխվի: Չժանը գրավ էր դրել Դուն Ցզյանի վարձակալած քառասուն քառակուսի մետր մակերեսով բնակարանը:

Չնայած իրեն տևից հանել էին, բայց Դուն Ցզյանն այդուհանդերձ կարողացավ դիմակայել Հոնկոնգում: Շենչժենում բարեփոխումների ու բաց դռների քաղաքականության հիմնավորման հետ՝ նա սեփական փոքրիկ կարողությունը ստեղծեց՝ երեք հարյուր հազար հոսկոնգյան



դուար: Այդ ընթացքում նա ճանաչել էր Հոնկոնգը եւ հասկացել իր ուժեղ եւ թույլ կողմերը: Նա չէր կարող խոսել անգլերեն կամ Կանտոնի բարբառով, նրա ուժեղ կողմերը Հոնկոնգում չէին, այլ մայրցամաքային Չինաստանում: Նա իմացել էր, որ ամբողջ մայրցամաքային Չինաստանում գործարարները փորձում էին միջոցներ հավաքել: Նրան կանչեցին գործնական հանդիպումների՝ որպես «հոնգկոնգցու», ցանկանալով օգտվել բիզնեսի ոլորտում նրա փորձառությունից, միջոցներ հավաքել եւ ձեռք բերել ժամանակակից սարքավորումներ: Նա որոշեց հիմնել իր սեփական ընկերությունը՝ «Ցզյանցին» առևտրային կորպորացիան (Jiangyin Trade Corporation). հասցեն իր սեփական տունն էր Հոնկոնգի Հյուսիսային թաղամասում: Մի ոտքը Հոնկոնգում, եւ մայրցամաքային Չինաստանում կապեր ունենալով՝ նա շատ արագ կարողացավ մայրցամաքային մի քանի պատվիրատու ունենալ. իր հայրենի Շենսի նահանգում բամբակյա գործարաններից մեկը ցանկանում էր Ճապոնիայից Շանսի ներկրել բարձր տեխնոլոգիայով երեսուկհինգ մանող մեքենա, եւ տպագրության երկու գործարաններ ցանկանում էին Ճապոնիայից պատվիրել Mitsubishi տպագրական հաստոցներ: Հենվելով միմիայն իր սեփական քրտնաջան աշխատանքի վրա՝ նա, ի վերջո, կարողացավ Հոնկոնգում գնել մեքենա եւ տուն: Նա այժմ ուներ իր ընկերությունը: Ոչ ոք այլևս նրան վերեւից չէր նայի:

Դեկտեմբերի 28-ին, Դուն Ցզյանի ցանկությամբ, նրա հայրն իր թայվանցի կնոջ հետ հերթական այցը կատարեց Հոնկոնգ: Երեք ընտանիք,- նույն հորից, բայց տարբեր մայրերի հետ,- հավաքվեցին: Ընդհանուր թվով՝ տասնվեց մարդ եկավ Հոնկոնգ՝ Դուն Ցզյանի մոր հետ միատեղ հավաքվելու: Երբ Դուն Ցզյանի հայրը դռնից ներս մտավ, քար լռություն էր տիրում: Բոլորը շունչները պահած սպասում էին՝ թե ինչ հուզիչ տեսարանի են ականատես լինելու. ամուսին եւ կին, որ բաժանված էին եղել երեսուկյոթ տարի:

Բայց ուրախության արցունքներ կամ արտասովալից գրկախառություններ չեղան, որովհետեւ Դուն Ցզյանի հոր կողքին նրա թայվանցի կինն էր:

Լոն դողացող ձայնով կանչեց. «Հանյին, լա՛վ ես: Եկել եմ քեզ տեսնեմ»:

«Լավ եմ: Բարով ես եկել»:

Դուն Ցզյանի մայրն անուշով դիմեց Լոյի

## Զժան Յավեն

Թայվանցի կնոջը՝ անկեղծորեն ասելով. «Ցզյանի հոր հետ բարով եք հյուր եկել: Սա բոլորիս համար միասին լինելու հազվագյուտ առիթ է: Կարող եք ասել, որ սա ճակատագիր է: Երկուսդ էլ անհանգստանալու կարիք չունեք, ես Ցզյանի հորից ամուսնալուծությամբ բաժանվել եմ 1952 թվականին Սի'անի դատարանում: Այսօր բոլորս պետք է նայենք միմյանց՝ որպես բարեկամներ: Նախ՝ ամուսնուդ ետեւից չեմ ընկել: Երկրորդ՝ փողի ետեւից չեմ ընկել: Ես արդեն ծերության կենսաթոշակ եմ ստանում: Դուք երկուսդ պետք է ինքներդ ձեր մասին հոգ տանեք Թայվանում: Շնորհակալ եմ երկուսիդ էլ, որ այսօր եկել եք այստեղ ինձ տեսնելու: Ցանկանում եմ, որ բոլորն ուրախ լինեն, իրենց լավ զգան: Բոլորիս համար էլ հեշտ չէր այսօր լինել այստեղ: Հուսով եմ՝ բոլորը կարող են օգտվել այդ հնարավորությունից»:

Բոլորը նայում էին հիացախառն զարմանքով: Ոչ ոք չէր սպասում, որ Դուն Ցզյանի մայրը, որը երբեք շատ չէր խոսել եւ ամբողջ օրն աշխատել էր ապրուստի միջոց հայթայթելու համար, նման բան կասի:

Վերջին անգամ Դուն Ցզյանը հորը տեսավ 1994-ի ապրիլին, շատ չանցած՝ վերջինս մահացավ:

Երբ Թայվանում հիվանդ պառկած էր, հայրը բռնեց Դուն Ցզյանի ձեռքը եւ արցունքներն աչքերում ասաց. «Տղա՛ս, հայրդ շփոթված չէ, ոչ էլ անսիրտ է: Ես իմ կամքը վաղուց եմ հայտնել: Թայվանում իմ ունեցվածքի կեսը պետք է անցնեք թայվանցի մորդ, իսկ մյուս կեսը՝ իմ վեց երեխաներին: Բոլորը բաժին էին ստանալու: Բայց քանի որ հիվանդացել եմ, նա ամեն օր հոգիս հանում է իր փնթփնթոցով, որ փոխեմ իմ ցանկությունը, ամբողջ փողը թողնեմ իրեն... Տղա՛ս, ես պետք է փոխեմ այն: Տղա՛ս, խնդրում եմ, մի՛ առիր քո հորը»: Ծերունին բռնել էր Դուն Ցզյանի ձեռքը եւ հեկեկում էր: Տեսնելով հորը՝ այդպիսի վառ կյանքով ապրած մարդուն, այդքան ճնշված, Դուն Ցզյանը նույնպես իրեն խիստ ճնշված զգաց, ասես սիրտը երկու մասի բաժանվեց: Նա հորն ասաց, որ չտխրի, որ ինքը նրան չի առի եւ չի պատրաստվում պայքարել ժառանգության համար:

Հայրը մահացավ 1994 թվականի մայիսի 3-ին, ութսունհինգ տարեկանում: Մայրն այս աշխարհից հեռացավ նույն օրը, 2007 թվականին, իննսուն տարեկան հասակում: Սիրող զույգը հեռացել էր այս աշխարհից՝ վերամիավորվելով այն մյուս աշխարհում:

ԳԼՈՒԽ 6

ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ ՀՈՆԿՈՆԳՈՒՄ. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹ, ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**Բժշկական ապահովագրություն  
եւ հիվանդանոցներ**

Ամեն մի հարցագրույցիս հետ իրական Հոնկոնգն աստիճանաբար բացվում էր իմ առջեւ: Ես բացահայտում էի նրա զարմանալի գեղեցկությունը, բայց միաժամանակ իմանում էի թերությունների մասին, որոնցից պապանձվում էի:

Առանձնահատուկ մի առավոտ եկել էի Կոուլունի Յաու Մա Տեյ թահամասի սովորական մի բուժարան: Ինձ ընդունեց դիպլոմակիր բուժքույր, բուժարանի կառավարիչ, եւ մեկ այլ բուժարանի բաժանմունքի ղեկավար Քեթի Չունգը: Նա ջերմ դիմավորեց ինձ եւ իր արագաշարժ ոտքերով քայլեց բուժարանի տարածքում, ինչպես քամու բերանն ընկած թռչուն:

Տիկին Չունգի ծնողներն ազգությամբ չին ինդոնեզացի էին, որ վերադարձել էին Հոնկոնգ: Նա գնացել էր Պեկինի միջնակարգ դպրոց, ապա ծնողների հետ 1978 թվականին եկել էր Հոնկոնգ: Սովորել էր Հոնկոնգի բուժքույրական դպրոցում եւ Հոնկոնգի Չինական համալսարանում՝ ի վերջո բուժքույրական կրթության մեջ ստանալով մի քանի աստիճան: Բացի Յաու Մա Տեյի Jockey Club Clinic բուժարանում ղեկավար լինելուց, նա նաեւ աշխատում է «Հուն Հոմ» բուժարանի բաժանմունքում եւ Հոնկոնգի բուժքույրական քոլեջի աշխատակից է:

Ամեն օր նա առավոտյան վեցն անց երեսունին տևից դուրս է գալիս եւ գիշերը մինչեւ ինը կամ տասը չի վերադառնում: Բուժարանը տարին երեք հարյուր վաթսուևինգ օր բաց է: Քառասունինը տարեկան հասակում, չնայած աշխատանքային երկարատեւ ժամերին, նա նաեւ Մեծ Բրիտանիայի Արեւմտյան Անգլիայի համալսարանից դոկտորի կոչում ստանալու գործընթացի մեջ է:

Ես չէի կարող հիացմունքի հետ համախառն խոր հարգանք չզգալ

## Չժան Յավեն

Նրա հանդեպ, որ աշխատում եւ սովորում է այդ տարիքում:

Հոնկոնգում մարդիկ սվիրված են իրենց աշխատանքին: Ինչ էլ որ անեն, իրենց բոլոր ուժերը ներդնում են այդ գործում: Դու Յգյանն ինձ պատմել է մի պատմություն այն ժամանակից, երբ ինքը նոր էր ժամանել Հոնկոնգ եւ աշխատում էր որպես էլեկտրիկ՝ պողպատածուկական ընկերությունում: Մի օր նա զուգընկերոջ հետ դուրս էր եկել հանձնարարություններ կատարելու: Հենց որ ավարտեցին, Դու Յգյանն առաջարկեց նստել եւ մի փոքր հանգստանալ: Եթե վերադառնային, տնօրենը նրանց ավելի շատ գործ էր տալու: Գործընկերը հանդիմանեց նրան. «Ի՞նչ է, կարծում ես վերադարձել ես մայրցամաքային Չինաստան, որտեղ ամեն ինչի մասին հոգացել են»: Այդ ասելով վեր կացավ եւ դուրս եկավ:

Դու Յգյանն ստիպված էր զսպել զայրույթը եւ հետեւել նրան ու գնալ գրասենյակ: Ուղիղ երեք օր նա չխոսեց իր գործընկերոջ հետ՝ ինքն իրեն մտածելով՝ դու քեզ վաճառել ես տնօրենին, ի՞նչ է՝ ուզում ես տնօրեն լինել: Չորրորդ օրը գործընկերը նրան մի քիչ քաղցրավենիք բերեց եւ ասաց. «Դու Յգյան, մեկ շաբաթ առաջ ես ազատման դիմում եմ գրել: Այսօր իմ վերջին օրն է: Կտեսնվենք»: Դու Յգյանը զլուխը տարուբերեց եւ երկար ժամանակ լուռ էր: Հենց այդ ժամանակ էլ նա հասկացավ, թե մարդիկ Հոնկոնգում որքան լուրջ են վերաբերվում իրենց գործին: Նրանք երբեք գործը կիսատ չէին թողնում:

Հետեւելով տիկին Չենգին, երբ նա շրջում էր բուժարանում, ես կարողացա այդ ամենն ըմբռնել. սովորական պետական բուժարան, ընդհանուր առմամբ ինը պատմություն: Իրականում դա բազային հիվանդանոց է. Կոուլունում կան եւս չորս այդպիսիք: Կոուլունն ունի մեկ հիմնական հիվանդանոց, որը լիովին հագեցած է գերժամանակակից բժշկական սարքավորումներով: Հիվանդանոցը եւ բուժարաններն աշխատում են միասին: Ըստ տիկին Չունգի, Հոնկոնգում կապ չունի՝ որեւէ մեկը գործադիր տնօրեն է թե փողոցի թափառական. հենց որ Հոնկոնգի գրանցված քաղաքացին պետական հիվանդանոցի դռնից ներս մտավ, արդեն բուժառու է, եւ անկախ սոցիալական կարգավիճակից, նույն բուժումն է ստանալու՝ համաձայն Հոնկոնգի հանրային բժշկական համակարգի: Նրանք օգտագործելու են նույն հեռախոսային համակարգը նախապես գրանցում կատարելու համար, եւ ոչ ոք չի կարող

հերթից առաջ ընկնել: Եթե ուզում են առաջ ընկնել, ստիպված են լինելու զնալ մասնավոր հիվանդանոց եւ վճարել դրա համար:

Հոնկոնգի պետական հիվանդանոցները ընդունելության գրանցման համար հոնկոնգյան քառասունհինգ դոլար են վերցնում (գանձում, որը նպաստառուների դեպքում հանվում է) եւ հարյուր հոնկոնգյան դոլար՝ շտապ բուժօգնության յուրաքանչյուր այցի համար: Մասնագետի հետ առաջին հանդիպումն արժե հարյուր հոնկոնգյան դոլար, եւ դրանից հետո յուրաքանչյուր այց՝ վաթսուն: Բոլոր դեղատոմսերը տասը հոնկոնգյան դոլար են՝ անկախ տեսակից: Ախտորոշման, բուժման, լաբորատոր հետազոտությունների եւ այլ զննումների բոլոր ծեւերն անվճար են: Եթե բուժառուն ստիպված է գիշերը մնալ հիվանդանոցում, ապա ամեն գիշեր արժե հարյուր հոնկոնգյան դոլար, եւ վիրահատությունների ու մասնագիտացված բուժման բոլոր ծեւերը սովորաբար անվճար են: Հոնկոնգյան տիպիկ բուժարանում գտնվող հիվանդասենյակում մեկ մահճակալի համակարգի գինը հաշվարկվել է ավելի քան երեք հազար հոնկոնգյան դոլար:

Բուժումը Հոնկոնգում ունի երեք մակարդակ՝ հիմնական բժշկական ծառայություններ, միջանկյալ բժշկական ծառայություններ եւ մասնագիտացված բուժում ու վերականգնում: Բայց սովորական բուժարանի եւ մասնագիտացված հիվանդանոցի միջեւ որեւէ տարբերություն չկա՝ ո՛չ դրանց կարգավիճակի, ո՛չ էլ բժիշկների կարգավիճակի առումով: Դրանք ունեն նույն սարքավորումները, եւ բուժքույրերն ու բժիշկները բոլորը ստանում են նույն աշխատավարձը:

Բժիշկների եւ բուժքույրերի աշխատավարձերի հստակ աստիճանավորում գոյություն ունի: Ընդունարանում աշխատող բուժքույրը սովորաբար վաստակում է ամսական քսանից երեսուն հազար հոնկոնգյան դոլար, իսկ դիպլոմավոր բուժքույրը՝ երեսունից հիսուն հազար, ավագ բուժքույրը՝ հիսունից ութսուն հազար, բաժանմունքի վարիչը՝ ութսունից հարյուր հազար, եւ գլխավոր տնօրենը՝ հարյուր հազարից ավելի: Նորավարտ բժիշկը կարող է ակնկալել ամսական հիսուն հազար հոնկոնգյան դոլար, մասնագետը՝ հարյուր քառասունից հարյուր հիսուն հազար, իսկ բժիշկ-խորհրդուն՝ երկու հարյուր հազարից ավելի: Բժիշկները մեծ գումարներ են վաստակում, բայց նրանք պետք է նաեւ երկար սովորեն՝ երկուսից ութ տարի, իսկ բարձր որակավորման

## Զժան Յավեն

համար վեցից տասը տարի: Մեկ տարուց հետո նրանք պետք է քննություն հանձնեն՝ կրտսեր մակարդակից ավագ մակարդակի անցնելու համար:

Հոնկոնգի հիվանդանոցային կառավարումը չափազանց խիստ է կանոնակարգով սահմանվում է, որ նորմալ բուժարևում բժիշկը պետք է սպասարկի օրական յոթանասուն հիվանդի, առավոտյան քառասուն եւ կեսօրից հետո՝ երեսուն: Այն բժիշկը, որը չի բավարարում այս պահանջը, գտնվում է ղեկավարության հսկողության ներքո: Բժշկի կողմից բուժառուին նշանակած յուրաքանչյուր բուժում եւ նրա գրած յուրաքանչյուր դեղատոմս մուտքագրվում է համակարգչի մեջ: Ղեկավարությունը կարող է սահմանված ժամանակում վերահսկել իր իրավասության ներքո գտնվող բոլոր բժիշկներին: Եթե բժիշկը սխալ դեղատոմս է գրում կամ հիվանդին բժշկական սխալ խորհրդատվություն է մատուցում, ղեկավարությունն անմիջապես կարող է միջամտել: Սովորաբար, երբ շաքարային դիաբետով, արյան բարձր ճնշմամբ կամ մեկ այլ քրոնիկ հիվանդությամբ տառապող մեկը հիվանդանոցում բուժվում է մի որոշակի ժամանակահատված՝ առանց հասնելու պահանջվող ցուցանիշերին, ղեկավարությունը հարցնում է վարող բժշկին, թե ինչու: Արդյո՞ք բժիշկը սխալ դեղ է նշանակել, թե՞ հիվանդի վիճակը չափազանց լուրջ է: Եթե բժիշկը մեղավոր է մասնագիտական սխալի համար, Հոնկոնգի բժշկական խորհուրդը չեղյալ է հայտարարում նրա բժշկական արտոնագիրը: Հիվանդանոցների վարչությունը ապահովում է բժիշկների կողմից նշանակված բոլոր դեղերը՝ մրցութային միասնական գնումների միջոցով: Իր կողմից ղեկավարվող ոչ մի հիվանդանոցի չի թույլատրվում ինքնուրույն դեղեր գնել: Դեղագործական ընկերությունները չեն կարող իրենց արտադրանքը վաճառել բժիշկներին, այնպես որ՝ հիվանդանոցի գնումները կատարող անձնակազմի եւ լրացուցիչ գումարներ աշխատող բժիշկների հետ կապված խնդիրներ չեն առաջանում:

Հոնկոնգի հիվանդանոցները գործում են ընտանեկան բժշկության սկզբունքների համաձայն: Դրանք բուժառուներին առաջարկում են ամբողջական, սկզբից մինչեւ վերջ ծառայություն: Առաջին անգամ, երբ բուժառուն հիվանդանոց է այցելում, նրա անունով քարտարան է բացվում: Հիվանդներն ստանում են շարունակական բուժում եւ կանո-

նավոր ստուգումներ: Դիաբետով տառապող, արյան բարձր ճնշում, սրտի հետ կապված խնդիրներ կամ այլ քրոնիկ հիվանդություններ ունեցող հիվանդներն առնվազն տարին մեկ անգամ հետազոտվում են: Նրանց ասվում է, թե որքանով է բարելավվել իրենց վիճակը, եւ ո՞ր խնդիրներին պետք է ուշադրություն դարձնեն՝ լինի դա դեղերը ընդունելու, սննդակարգ պահելու թե վարժություն կատարելու հետ կապված: Եթե երկար ժամանակահատվածից հետո հիվանդը չի կարողացել ներկայանալ հետազոտման, բժիշկը կամ բուժքույրը նրանց զանգում են, որպեսզի խորհուրդ տան: Բժիշկներն ու բուժքույրերը հետեւում են իրենց բոլոր բուժառուների, որպեսզի նրանք ֆիզիկապես բարվոք վիճակում լինեն, եւ պայմաններ են ապահովում նրանց հնարավորինս լավագույն բուժման համար: Բժիշկների եւ բուժառուների երկարաժամկետ համագործակցությունը մշտապես ապահովված է եւ ամուր հիմքերի վրա է դրված:

Չունգը բացատրեց, որ բոլոր քաղաքացիների համար բժշկական վճարների պետական վճարման հոնկոնգյան համակարգը նպատակ ունի լինել արդար, մասնակցային, համագործակցային եւ խստորեն վերահսկվող: Հոնկոնգի քաղաքացիներն իրավունք ունեն վերահսկելու համակարգը, որպեսզի երաշխավորված լինեն, որ գումարները, որոնք իրենք մուծում են հարկեր վճարելիս, վերադառնում են իրենց՝ ծառայությունների ձեռով: Ես հարցրի տիկին Չունգին, թե նրանք «կարմիր ծրարների» հետ կապված խնդիրներ ունե՞ն այստեղ\*: Նա ասաց, որ Հոնկոնգում կարմիր ծրարներն արգելված են: Խախտումներն ուսումնասիրվում են Հոնկոնգի բժշկական խորհրդի կողմից, իսկ լուրջ խախտում կատարողներին հրավիրում են Կոռուպցիայի դեմ ակախ հանձնաժողով՝ «սուրճ խմելու եւ գրուցելու»: Քանի որ կաշառք վերցնելու համար շատ բարձր գին են վճարում, նման դեպքերը համեմատաբար հազվադեպ են:

Ապա հարցնում եմ, թե ինչպես են այստեղ հիվանդ եւ բժիշկ փոխհարաբերությունները, եւ արդյո՞ք այստեղ էլ վիճաբանություններ լինում են, ինչպես մայրցամաքային Չինաստանում: Նա ասում է, որ փոքրիկ անախորժություններ միշտ էլ լինում են, որ իր հետ էլ են նման

\* «Կարմիր ծրար» - կաշառքի մեղմասություն:

## Զժան Ցավեն

բաներ պատահել: Բայց բուժառուները համեմատաբար ողջամիտ են: Հիվանդանոցներն ունեն բաժանմունքներ, որոնք զբաղվում են բուժառուների բողոքներն ուսումնասիրելով, իսկ հիվանդանոցի ղեկավարությունն ունի բողոքների հասարակական հանձնաժողով: Եթե պարզում են, որ հիվանդանոցը կամ բժիշկը սխալ են թույլ տվել, ակտիվորեն օգնում են բուժառուներին, որպեսզի նրանց կրած վնասը փոխհատուցվի: Եթե վերջիններս դժգոհ են մնում, կարող են իրավական ճանապարհով հարցերը լուծել: Հիվանդներին էլ նրանց ընտանիքներին խստիվ արգելված է փորձել պաշտպանել իրենց իրավունքները զինված ուժի կամ հակահասարակական այլ միջոցներով: Հոնկոնգն օրենքների հասարակություն է, մի վայր, որտեղ մարդիկ օրենքն օգտագործում են՝ իրենց տարածայնությունները ողջամտորեն լուծելու համար:

Հոնկոնգի բժշկական համակարգը երկկողմանի է. պետական եւ մասնավոր հիվանդանոցները համատեղ գոյակցում են, չնայած պետական հիվանդանոցները հիմնականում առաջնային դեր ունեն: Պետական հիվանդանոցներում եւ բուժարաններում ծախսերը սուբսիդավորվում են կառավարության կողմից՝ միջին հաշվով կազմելով ինստունվեց տոկոս: Հիվանդանոցների վարչությունը Հոնկոնգի քաղաքացիներին տրամադրում է գրեթե անվճար բուժօգնություն՝ իր վերահսկողության ներքո գտնվող քառասունմեկ հիվանդանոցների եւ բուժհաստատությունների, քառասունութ մասնագիտացված բուժարանների եւ յոթանասունչորս տիպական բուժարանների միջոցով: 2008 թվականի մարտի դրությամբ՝ Հոնկոնգն ուներ 30 993 ընդհանուր հիվանդանոցային մահճակալներ՝ 27 555-ը պետական եւ 3 438-ը՝ մասնավոր հիվանդանոցներում:

Հոնկոնգի բուժհամակարգը ձգտում է արդարության եւ մատչելիության: Քաղաքի բոլոր բնակիչներն ընդգրկված են համակարգում: Ոչ ոք փողի բացակայության պատճառով չի անտեսված եւ ոչ ոք բուժման հետեւանքով չի աղքատանում: Ինչ վերաբերում է հասանելիությանը, անկախ այն բանից, թե Հոնկոնգում որտեղ եք գտնվում, կես ժամից ավելի չի տեւի, եւ համապատասխան բուժժառայությունները կհասնեն ձեզ: Նույնիսկ եթե փող չունեք, պետք չէ անհանգստանալ, թե ձեզ չեն բուժի կամ չեն ընդունի հիվանդանոց: Հարկ չկա նաեւ անհանգստանալու, թե ձեր բժիշկը գումար կուզի նախքան դեղատոմս գրելը:



Բժիշկների ու բուժքույրերի աշխատավարձերը սահմանվում են՝ հաշվի առնելով օբյեկտիվ չափորոշիչները, եւ նրանց թույլ են տալիս արժանապատիվ ապրել, փոխանակ հույսը դնելու ինչ-որ մութ գործարքներից փայաբաժին ունենալու կամ «կարմիր ծրարներով» կաշառքի ապօրինի ճանապարհով եկամուտ ստանալու վրա, որպեսզի ծայրը ծայրին հասցնեն եւ ապահովեն իրենց ընտանիքների կենսապայմանները:

Հոնկոնգում երբեք չէր զայրանա, թե պետական պաշտոնյան ձեռքից ավելի լավ բուժում է ստացել: Անկախ նրանից՝ մուրացկան եք, աղբահավաք թե վարչական հատուկ շրջանի ղեկավար, դուք նույն տիպի բուժում կստանաք: Հավասարությունն ու արդարությունը Հոնկոնգում ամենակարեւոր արժեքներն են: Հոնկոնգն ունի նաեւ բազմաթիվ բարեգործական հիվանդանոցներ, որոնք անվճար կամ ցածր գներով բուժձառայություններ են մատուցում:

Հոնկոնգի բժշկական համակարգն անցել է զարգացման երկարատեւ ու ծանր ճանապարհ՝ այսօրվա վիճակին հասնելու համար:

1984 թվականի դեկտեմբերին չին-բրիտանական համատեղ հռչակագրի հրապարակումը հսկայական քայլ էր՝ գաղութատիրական բժշկական համակարգը վերափոխելու ճանապարհին՝ Հոնկոնգի սովորական մարդկանց համար ավելի լավ խնամք ապահովելու ուղղությամբ: Սոցիալական եւ բժշկական ապահովագրության համակարգերը հսկայական փոփոխություններ կրեցին, ինչպես տարածքը մայրցամաքային Չինաստանին վերադարձնելուց առաջ, այնպես էլ դրանից հետո, եւ է՛լ ավելի մեծ փոփոխություններ եղան 2009 թվականից հետո: Հոնկոնգի բժշկական համակարգը ներկայումս միջազգայնորեն ճանաչված է որպես աշխարհի ամենահաջող բժշկական համակարգերից մեկը, իսկ քաղաքի բնակիչների առողջության ցուցանիշները եւ կյանքի տեւողությունը լավագույններից են աշխարհում:

Բուժօգնության համար նախատեսված ծախսը կազմում է Հոնկոնգի ՀՆԱ-ի հինգ տոկոսը, որ իր մեծությամբ երրորդն է՝ կրթության եւ սոցիալական բարեկեցության ապահովման ծախսերից հետո եւ համարժեք է կառավարության տարեկան բյուջեի մոտավորապես տասնյոթ տոկոսին:

Բայց ոչ մի համակարգ լիովին կատարյալ չէ: Հոնկոնգյան բժշկա-

## Զժան Յավեն

կան համակարգի ուժն ավելի ակնառու է դարձնում նրա թերությունները: Հոնկոնգի բնակչությունը ծերանում է, իսկ բժշկական ծախսերն աճում են: Պետական հիվանդանոցներում բուժումն էժան է, բայց սպասման ժամանակահատվածները երկար են: Արական սեռի մի հիվանդ ինձ ասաց, որ մեկ տարի է՝ սպասում է գաստրոսկոպիայի նշանակման համար: Այդքան ժամանակ սպասելով՝ բժշկական փոքր խնդիրները կարող են դառնալ մեծ, իսկ մեծ խնդիրները կարող են դառնալ լուրջ կամ նույնիսկ մահացու վտանգավոր:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ բնակչության շնչի հաշվով՝ Հոնկոնգի բժիշկների հարաբերակցության թիվը հազար հոգուն 1,65 է. դա ավելի ցածր է Մեծ Բրիտանիայից, Ավստրիայից եւ Սինգապուրից: Հոնկոնգի ավելի քան տասը հազար բժիշկներից մոտ կեսն աշխատում է պետական հիվանդանոցներում, այդուհանդերձ պետական հիվանդանոցներն ապահովում են մասնագիտացված ստացիոնար ծառայությունների ինստուտներու տոկոսը: Տարածաշրջանի բժշկական համակարգը պետք է հնարավորինս արագ բարեփոխվի:

Այս պահին ես չեմ կարող չմտածել մայրցամաքային Չինաստանում բժշկական համակարգի բարեփոխման զարգացման դադարի մասին: Որքան հաճախ ենք մայրցամաքային Չինաստանի հիվանդներից բողոքներ լսել դեղորայքի եւ բժշկական սարքավորումների անսահման բարձր գների վերաբերյալ, ինչպես նաեւ «կարմիր ծրարների» լրացուցիչ ծախսերի հետ կապված: Նրանք իրենց ճգնված են զգում այս երեք «վիթխարի լեռների» տակ, շատերն այն աստիճանի, որ կարծում են, թե այլեւս ի վիճակի չեն շնչել: Քանի՛ աղքատ ընտանիք է կրել չքավորության տառապանքն ու թշվառությունը: Չինաստանի ժողովուրդը դեռ սպասում է կենտրոնական կառավարության գործողություններին՝ արդար, ողջամիտ բժշկական համակարգ ստեղծելու նրանց համար, ովքեր տառապում են հիվանդությունից կամ առողջական խնդիրներ ունեն:

## Ցածր հարկերով սոցիալական ապահովության համակարգ

Ներկայումս Հոնկոնգն ունի սոցիալական ապահովության երեք հազարից փոքր-ինչ ավելի մեծ եւ փոքր կազմակերպություններ: Դրանցից ավելի քան երկու հազար վեց հարյուրը կամ ուղղակիորեն ղեկավարվում են կառավարության կողմից, կամ պետական միջոցներով գոյատևող հասարակական կազմակերպություններ են: Կան նաև մասնավոր անձանց կողմից ստեղծված փոքրաթիվ կազմակերպություններ: Սոցիալական ապահովության համակարգի համար նախատեսված միջոցները հիմնականում գոյանում են պետական հատկացումներից, վիճակախաղից, ջոկեյ-ակումբների նվիրատվություններից, այլ նվիրատվություններից եւ մասնավոր ծառայություններից: Տարածաշրջանի սոցիալական ապահովության եւ շտապ օգնության համակարգը, ի թիվս պաշտպանության այլ ձեւերի, հիմնականում ներառում է՝ տարեցների համար սոցիալական կենսաթոշակների, գործազրկության ապահովագրության, արդյունաբերական վնասվածքների համար ապահովագրության, բժշկական ապահովագրության, ապագա մայրերի պաշտպանության, սոցիալական ապահովության վճարների, եկամտի երաշխիքների ապահովման, աղետներից ապահովագրության, բռնության զոհերի եւ իրավապահ մարմինների պաշտպանության, ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժածների կամ զոհվածների պաշտպանության ոլորտները: Սոցիալական ծառայությունները ներառում են տարեցների համար ծառայությունների, վերականգնողական ծառայությունների, ընտանիքի եւ երեխաների բարեկեցության, երիտասարդների համար ծառայությունների, բժշկական սոցիալական ծառայությունների, իրավախախտ անձանց համար ծառայությունների, կրթական երաշխիքների համակարգի եւ բուժօգնության ծառայությունների ոլորտները:

Հոնկոնգը զարգացած սոցիալական ապահովության ցանցեր ունեցող արեւմտյան երկրներից տարբերվում է նրանով, որ խրախուսում է օգնություն ստացողների՝ սեփական ուժերի հանդեպ ինքնավստահությունը, այդ թվում՝ խթանում է ակտիվորեն աշխատանք փնտրելու դր-

## Զժան Յավեն

դապատճառները: Հոնկոնգում սոցիալական ապահովության վճարները մեծ չեն, եւ անսովոր չէ՝ տեսնել ավտոբուս եւ տաքսի վարող կամ ռեստորաններում մատուցող աշխատող ճերմակամազ տարեց անձանց:

Մարգահրապարակի հարթակը մաքրող տարեց մի մարդ ինձ ասաց, որ նախկինում աշխատում էր ձեռքի ժամացույցի գործարանում: Երբ վաթսուն տարեկան հասակում անցավ թոշակի, գործարանը նրան միանվազ կենսաթոշակային բռնուս տվեց՝ հոնկոնգյան հարյուր հազար դոլարից մի փոքր ավելի: Այժմ նա ամսական հազար հոնկոնգյան դոլար պետական կենսաթոշակային նպաստ է ստանում: Բայց նրա երեք հոգանոց ընտանիքի համար քսանչորս քառակուսի մետր տարածքով բնակարանի վարձավճարը ամսական ինը հարյուր հոնկոնգյան դոլար է, եւ նրանք դժվարին վիճակում են: Հիմա, յոթանասուներկու տարեկան հասակում, նա դեռ աշխատում է. փողոց է ավլում՝ ամսական վաստակելով յոթ հազար հոնկոնգյան դոլար, որ բավական է իր ընտանիքի որոշ ծախսեր հոգալու:

Դառը ժպիտով՝ ծերունին ինձ ասաց. «Մենք Հոնկոնգում տարբերվում ենք ձեզնից՝ մայրցամաքային չինաստանցիներից. բոլորիդ ամեն ամիս կենսաթոշակ է վճարվում: Հոնկոնգում, քանի դեռ չեք աշխատել կառավարության համար, երբ թոշակի եք անցնում, ձեզ միանվազ վճար են տալիս, ապա ձեռքները լվանում են եւ թողնում, որ ինքներդ հոգ տանեք ձեր մասին»:

Լսելով նրան՝ զգացի, որ սկսում եմ մի փոքր ավելի լավ հասկանալ Հոնկոնգը:

## Անվտանգ սնունդ

Երբ Հոնկոնգում էի, հաճախ էի սնվում մոտակա չինական ռեստորանում: Ես ծանոթացա սպասարկող անձնակազմի հետ, եւ երբ աշխատանքից ազատ ժամանակ էին ունենում, նրանց հետ զրուցում ու կատակում էի: Տեղեկացա նրանց եկամուտների մասին, ծանոթացա կենսապայմաններին եւ պարզեցի, որ նրանց մեկնարկային աշխատավարձը ամսական յոթ հազար հոնկոնգյան դոլար է, մինչդեռ ռեստորանում ամենաբարձր վարձատրվող ղեկավարն ստանում էր տասը հազար:

Ես մատնացույց արեցի իմ ափսեի ուտեստներից մեկը եւ հարցրի նրանց. «Այս բանջարեղենն աղտոտված չէ՞: Արդյոք ֆերմերները չափազանց շատ պարարտանյութ չէ՞ն օգտագործել»:

«Ո՛չ, ո՛չ»,- վրա բերեց ղեկավարներից մեկը: Դա փոքր-ինչ թմբկիկ, միջին տարիքի մարդ էր՝ սպիտակ վերնաշապիկով, սեւ պիջակով եւ մանուշակագույն թիթեռ-փողկապով: Նա ինձ լուրջ ասաց. «Տիկին, այստեղ հանգիստ կարող եք ուտել: Անկասկած, մեր սննդի մեջ աղտոտվածություն չկա, եւ դրանք աճեցնելիս ավելորդ պարարտանյութ չի օգտագործվել»:

Ձեռքերը որովայնին դրած՝ նա հարգալից կանգնած էր իմ առջեւ եւ ջանասիրաբար բացատրում էր, որ սնունդն առաքվում է մայրցամաքից, խստագույն ստուգման է ենթարկվում մաքսակետում եւ անվտանգ օգտագործման համար հատուկ վկայագիր ստանում: Հավելեց նաեւ, որ բացի բանջարեղենից, մրգերից եւ մսից, Հոնկոնգի ամբողջ ջուրը նույնպես մայր ցամաքից է գալիս, եւ այդ ամենն աղտազերծված է: Թախծախառն հումորով նա ասաց. «Հոնկոնգում մեր խմած ջուրը, մեր կերած սնունդը, բոլորն էլ մայրցամաքից են: Եթե մայրցամաքը մեզ չմատակարարի, մենք ուտելու բան չենք ունենա»:

Հոնկոնգում կարող եք առանց վախի սնվել՝ չանհանգստանալով անօրինական գործունեությունից, թե կարող եք ուտել պարարտանյութով աճեցված բանջարեղեն, քիմիական նյութերով վերամշակված ծովամթերք կամ հորմոններ ներարկած միս:

Հավանաբար, Հոնկոնգը պահանջում է, որ իրեն մատակարարվող

## Չժան Ցավեն

սննդի 99,99 տոկոսն անվտանգ լինի. դա աշխարհում ամենախիստ պահանջներից է: Կան հարյուրավոր մայրցամաքային մատակարարներ, որոնք Հոնկոնգին ապահովում են բանջարեղենով, մրգերով և մսով. արտահանումից առաջ նրանց բոլոր ապրանքները խստագույնս ստուգվում են:

Այստեղ ես չեմ կարող չմտածել այն աղքատ երեխաների մասին, որոնք մայրցամաքային Չինաստանում մեղամիտ թունավորված կաթի փոշու զոհ են դարձել, արդյունաբերական բոլոր տեսակի քիմիական նյութերով վերամշակված «ծովամթերքի» մասին, բորբոսը թաքցնելու համար սպիտակեցված բրնձի մասին, պարարտանյութերի և հորմոնների ավելցուկով վարակված մրգերի և բանջարեղենի մասին և վտանգավոր հավելանյութերով լեցուն սննդամթերքի մասին:

Չեմ կարող ինձ զսպել և չհարցնել՝ բոլորս չինացի ենք, բոլորս նույն ուտելիքով ենք սնվում, նույն բանջարեղենն ուտում, ինչո՞ւ մայրցամաքային Չինաստանում ստուգման մեր չափանիշներն այլ են, քան Հոնկոնգում: Ինչո՞ւ մայրցամաքում մեր սնունդն ու բանջարեղենը չեն կարող ձեռք բերվել Հոնկոնգում կիրառվող չափանիշների համաձայն: Իսկ միգրացե մայրցամաքային Չինաստանի բնակիչներն ավելի ուժեղ իմունային համակարգ ունեն և անընկալունա՞կ են թունավոր կամ վնասակար նյութերի գրոհների հանդեպ: Կամ միգրացե հարցը կարգավորող որոշակի գերատեսչություններ, վերահսկողական որոշակի մեխանիզմներ շատ թույլ են կամ թերանո՞ւմ են իրենց աշխատանքում:

Սովորական մարդկանց համար սնունդն ամեն ինչ է: Այն կապված է չին ժողովրդի առողջության և ֆիզիկական բարեկեցության, հաջորդ սերնդի առողջության և կյանքի շատ այլ ոլորտների հետ: Ժամանակն է, որ նստենք և սկսենք ուշադրություն դարձնել դրա վրա:

## Ազատ լրատվամիջոցներ

Հոնկոնգյան լրատվամիջոցները՝ որպես ազատ լրատվամիջոցներ, աշխարհում համարվում են ութերորդը, Ասիայում՝ երրորդը:

Հոնկոնգում գործում են հիսուներկու օրաթերթ, յոթ հարյուր հիսունչորս պարբերական և անհաշիվ թվայնացված հրատարակություններ: Բացի տեղական երկու անվճար հեռուստակայաններից, քաղաքն ունի տեղական հինգ վճարովի հեռուստակայան, տասներկու ոչ տեղական հեռուստակայան, պետական հեռուստաալիք և երկու լրացուցիչ առևտրային հեռուստաալիք: Հոնկոնգում խոսքի, հրատարակության և նորությունների հրապարակման ազատություն է: Տարածաշրջանի թերթերի և գրքերի վրա նետած թուուցիկ հայացքն իսկ ցույց է տալիս, որ բոլորը համարձակորեն ասում, գրում, ցուցադրում և բացահայտում են իրենց ուզածը: Նրանք չեն վախենում քաղաքական կուսակցություններից կամ կառավարության իշխանությունից: Առանց վարանելու հրապարակայնորեն հանդես են գալիս կառավարության և նրա բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև մեծահարուստների դեմ: Միակ սուբյեկտը, որ կարող է սահմանափակել լրատվամիջոցների և Հոնկոնգի քաղաքացիների ազատությունը, օրենքն է, ոչ թե կառավարության գործադիր մարմինները: Եթե անգամ հրապարակումը ծայրահեղական բնույթ է կրում, եթե անգամ դա կողմնակալ քաղաքական գրոհ է, այն արժեքավոր, բարերար վերահսկիչ դեր է խաղում հասարակության զարգացման գործում:

Լրատվամիջոցների վերահսկողությունը գործում է որպես սպիտակեղեն մաքրող յուրատեսակ մի միջոց կամ մշտառկա վերահսկիչ համակարգ, որ անընդհատ հետետում է հզորներին՝ տեսնելու, թե արդյո՞ք նրանք զսպում են իրենց, արդյո՞ք չեն յուրացնում հարկ վճարողների գումարները՝ ապօրինի ծախսերի համար: Այդպիսի վերահսկողությունը նպաստում է հասարակությանը, որը գործում է կայուն, առողջ, արդարացի նորմերի համաձայն: Իհարկե, ամբողջ ազատությունը հարաբերական է: Հոնկոնգյան լրագրողների ազատությունն անխուսափելիորեն կախված է նրանց ղեկավարի հայացքներից: Եթե շեֆը դժգոհ է, ապա

## Զժան Ցավեն

լրագրողն ամենայն հավանականությամբ կազատվի աշխատանքից:

Հոնկոնգում եղած ժամանակ ես հարցազրույցներ ունեցա լրատվամիջոցների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ և այցելեցի «Phoenix Television» ու «Asia Television» հեռուստաընկերություններ՝ փորձելով խորացնել Հոնկոնգյան լրատվամիջոցների մասին իմ իմացությունը:

Յաթ-Մին Կվոկը, միջին տարիքի եռանդուն մի տղամարդ, որը հաճախ է հայտնվում «Phoenix Television»-ի եթերում՝ որպես ընթացիկ դեպքերի մեկնաբան, նախկինում եղել է Ցզիևանի համալսարանի պրոֆեսոր Գուանչժոուում և ավելի քան քսան տարի աշխատել է Հոնկոնգի տարբեր լրատվամիջոցներում: Նա զբաղեցրել է «Sing Pao Daily News»-ի փոխնախագահի և գլխավոր խմբագրի, «Hong Kong Daily News»-ի գլխավոր խմբագրի պաշտոնները, ներկայումս աշխատում է Հենդերսոնի (Չինաստան) ներդրումային կորպորացիայի ավագ խորհրդատու, Հոնկոնգի լրագրողների միավորման փոխնախագահ, և, ի թիվս այլ պաշտոնների, Ցզիևանի համալսարանի ու Հուացյաոյի համալսարանի հրավիրված պրոֆեսոր:

Կվոկի հետ իմ հարցազրույցը խոր երկխոսության ձև է ընդունեց ընթացիկ գործերի մասին, և հնարավորություն էր՝ լսել հեղինակավոր անհատի խորիմաստ, օբյեկտիվ տեսակետները Հոնկոնգի տնտեսության ու քաղաքականության վերաբերյալ:

Կվոկի կարծիքով, լրագրողները բարձր դիրք չունեն Հոնկոնգի հասարակության մեջ: Նրանց ստացած աշխատավարձերը նրանց միջինից ցածր դասի շարքում են դասում, և նրանք չեն համարվում այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են բժիշկները, հաշվապահները կամ իրավաբանները: Լրագրողների աշխատավարձը սովորաբար սկսվում է ամսական տասը հազար հոնկոնգյան դոլարից: Աշխատանքը ծանր է. նրանք չեն վճարվում ըստ բառաքանակի, ոչ էլ վճարվում են արտաժամյա աշխատանքի համար, որեւէ «գորշ» անօրինական եկամուտ չեն ստանում: Հոնկոնգում լրատվամիջոցների դերը քննադատելն է: Լրատվամիջոցները համարվում են «հասարակական շահերի պահպան շուն»: Չվերահսկվող իշխանությունը, բնականաբար, կոռուպցիա է առաջացնում: Լրատվամիջոցների դերը, հետեւաբար, այդ կոռուպցիան փնտրել գտնելն է, վերահսկողական դեր կատարելը, ինչը երաշ-



խավորում է, որ հասարակության շահերը չեն խախտվում ուժեղների եւ իշխանավորների կողմից:

Կվոկը հավելում է, որ մայրցամաքային Չինաստանն արագ զարգանում է, եւ միջին եկամուտները կտրուկ աճում են: 1990-ականների սկզբին Հոնկոնգում աշխատավարձերը շատ ավելի բարձր էին, քան մայրցամաքային Չինաստանում. տասը հազար հոնկոնգյան դոլար նրա ամսական աշխատավարձը, երբ որպես լրագրող աշխատում էր «Wen Wei Po»- ում, բավական էր Գուանչժոուում հինգ հոգուց բաղկացած իր ընտանիքն ինչպես հարկն է պահելու համար: Հիմա այդպես չէ:

Կվոկը կարծում է, որ Հոնկոնգի վերադարձը մայրցամաքային Չինաստանին՝ եղել է բարեհաջող: Տարածաշրջանն ապրել է երկու խոշոր ֆինանսական ճգնաժամ, բայց նրա տնտեսությունը շարունակում է ծաղկել: Մրցունակության եւ բիզնեսի ոլորտում հաջողության հասնելու Հոնկոնգի վարկանիշը շարունակում է մնալ աշխարհում լավագույններից մեկը: Իհարկե, հեշտ բան չէ դա: Երբ «Fortune» ամսագիրը հրապարակեց իր «Հոնկոնգի մահը» ակնարկը, Հոնկոնգում արտագաղթի բուռն շրջան էր: Տարածքը մայրցամաքային Չինաստանին վերադարձնելու նախօրեին Հոնկոնգի լրագրողներից ոմանք արտասվելու չափ ահաբեկված էին: Կարծում էին, թե Չինաստանի կոմունիստական կուսակցությունն է գալիս: Վախն ու անհանգստությունը, որ նրանք զգում էին, կանխակալ կարծիքի արդյունք էին, որ ունեին Հոնկոնգի որոշ բնակիչներ: Հոնկոնգցիները երկար ժամանակ կրել էին արեւմտյան կրթության ազդեցությունը եւ իրենք իրենց համարում էին առանձնահատուկ երկիր ու ժողովուրդ: Նրանք անհանգստացած էին Հոնկոնգը մայրցամաքային Չինաստանին վերադարձնելու կապակցությամբ: Հատկապես վախենում էին այն մարդիկ, ովքեր ձախ ծայրահեղականների գործողությունների զոհ էին դարձել: Վերադարձնելուց հետո Հոնկոնգի բնակիչները տեսան, որ մայրցամաքային Չինաստանն առաջ է շարժվում բարեփոխման ու բաց քաղաքականության սկզբունքով, եւ հոնկոնգցի մի ստվար խումբ գործարարներ մեծ առաջընթաց ունեցան մայրցամաքում: Մարդիկ, ովքեր արտագաղթել էին մինչեւ 1997 թվականը, վերադառնում էին խմբերով, իսկ մայրցամաքային Չինաստանը Հոնկոնգին առաջարկեց արտոնյալ քաղաքականության մի շարք հնարավորություններ՝ օգնելու համար տարածաշրջանի տնտե-

## Չժան Ցավեն

սության խթանմանը, ինչպես նաև նրա բնակիչների հոգսերն ու վախերը թեթևացնելուն: Անկախ նրանից՝ դա ֆինանսների հետ է կապված թե հաստատությունների, Հոնկոնգի ժողովուրդը գերակայության զգացողություն ունի, երբ հարցը մայրցամաքային Չինաստանին է վերաբերում: Բայց փաստն այն է, որ Հոնկոնգի աճը կախված է վերջինից: Երբ մայրցամաքային Չինաստանը փակ էր, Հոնկոնգը նրա պատուհանն էր դեպի աշխարհ. դեր, որը նա դեռ կատարում է:

Ինչ վերաբերում է Հոնկոնգում ներկայիս միտումներին, Կվոկն ասում է, որ տարածաշրջանում հարուստների եւ աղքատների միջեւ անջրպետը չափազանց մեծ է, մինչդեռ նրա տնտեսությունը բավարար չափով բազմատեսակ՝ դիվերսիֆիկացված չէ: Խնդիրներից մի քանիսը եղել են մայրցամաքային Չինաստանին վերադարձվելուց առաջ, իսկ որոշ խնդիրներ հետո են առաջացել: «Մեկ երկիր, երկու համակարգ» քաղաքականությունը նոր մի բան է. նախօրինակ չկա, որին հետեւեն: Առաջընթացը կարող է լինել միայն ընդհատումներով, խարխափելով ճանապարհի հարթելով: Հատուկ վարչական շրջանի նախորդ մի քանի ղեկավարներ սխալներ են գործել իրենց կառավարման մեջ՝ տարածաշրջանի գործադիր եւ օրենսդիր ճյուղերի միջեւ հարաբերությունները դարձնելով ավելի համակցված, քան անհրաժեշտ էր: Կարծիքների ու հայացքների տարբերությունները հատկապես արտահայտված են ժողովրդավարացման եւ ազգային անվտանգության օրենսդրության իրականացման տեմպերով: 2017 եւ 2020 թվականներին Հոնկոնգում ընտրություններն ինչպես գլխավոր գործադիրի, այնպես էլ օրենսդիրի համար են: Երկուսի դեպքում էլ, անտարակույս, կատաղի մրցակցություն է բոլոր առումներով, եւ դիմադրություն է առաջանում կառավարության օրակարգի իրականացմանը: Դա ղեկավարման խիստ փորձություն է ինչպես Լյուն Չուն-ինի, այնպես էլ հատուկ վարչական շրջանի կառավարության համար:

Կվոկը կարծում է, որ Հոնկոնգը, որպես ամբողջովին բաց քաղաք, հիմքեր չունի ուժնացնելու արտաքին ուժերի ազդեցությունը, եւ վարչական խնդիրները չեն կարող օտարերկրացիների վրա դրվել: Հատուկ վարչական շրջանի կառավարությունը պետք է նախեառաջ իր վրա հույս դնի՝ գտնելու ցանկացած խնդիրների պատճառները եւ բարելավի կառավարման իր ունակությունը: Դա, Կվոկի կարծիքով, իսկական

պետական գործչի հատկանիշն է: Հոնկոնգի բնակիչների մտահոգությունները մայրցամաքային Չինաստանին վերադառնալու վերաբերյալ՝ փոփոխությունների երկար գործընթացի հետ են կապված լինելու: Կվոկին լսելուց հետո՝ նախկինում ինձ համար անհասկանալի շատ խնդիրներ այժմ պարզ դարձան:

## **«Շաոլինի տաճարի» ռեժիսորի իրական պատմությունը**

Սին-յան Չանը՝ «Շաոլինի տաճարը» հայտնի կինոնկարի ռեժիսորը, պարզ, անկեղծ, զվարճալի տեսք ունեցող յոթանասունութ տարեկան տղամարդ է: Երբ նրան հանդիպեցի, հագին ճերմակ, կարճաթել մարգաշապիկ էր եւ կապույտ ջինս, ասես թռչակի անցած բանվոր լինեք: Ինձ հետ զրուցելիս նրա դեմքն աշխարհիկ զրույցին անսովոր եւ անընդունակ մարդու ամաչկոտություն էր արտահայտում:

Չանն անշտապ ուղեկցում է ինձ իր ռեժիսորական կյանքի պատմության միջով. իմ գրառումներում խտացել-կուտակվել է շոգ եւ բոցավառ այդ օրը: Նրա պատմությունը զաղտնի է բոլորի համար, բացառությամբ մի քանիսի, եւ խորապես հուզիչ է:

Չանի պատմությունը սկսվեց 1950-ական թվականներից, երբ նրա հորեղբայրը, որ կինոյում էր աշխատում, նրան որպես աշակերտ ընդունեց աշխատանքի Հոնկոնգի ստուդիաներից մեկի հետնկարահանման բաժնում: Նա թողեց հայրենի Նինբո քաղաքը՝ հետագայում տեղափոխվելով Հոնկոնգ: Չանն ինքնամփոփ անձնավորություն էր, գերադասում էր, որ իրեն մենակ թողնեն իր ֆիլմի նյութերի հետ: Նա չէր ուզում ռեժիսոր լինել: Պատրաստ էր քրտնաջան աշխատել, տառապել իր աշխատանքի համար, եւ սկսեց ճանաչում ձեռք բերել այդ բնագավառում: 1957-ին գնաց աշխատելու «Great Wall» («Մեծ պարիսպ») կինոստուդիայում: Թե՛ դեկավարները, թե՛ գործընկերները հիանում էին նրա պահվածքով եւ նրան առաջարկեցին ռեժիսորի պաշտոնը: Մինչեւ ռեժիսոր դառնալը նա ռեժիսորներից մեկի հետ համատեղ երկու ֆիլմ նկարահանեց:

Այդ ընթացքում նա եւ իր գործընկերները հաճախ հանդիպում էին Չժոու Էլայի եւ Լյաո Չենչժիի հետ՝ նույնիսկ նրանց սիրալիր անվանում-

ներ տալով: Երկուսն էլ հումորով մարդիկ էին, և հաճախ էին կատակներ պատմում: Նրանք նաեւ կիսվում էին կուսակցության կենտրոնական կոմիտեի մտքերով. ««Great Wall»-ը պետք է կայանա Հոնկոնգում և դիմակայի Չինաստանի սահմաններից դուրս գտնվող աշխարհին: Դուք բոլորդ պետք է պատրաստեք կինոնկարներ, որ մարդկանց սովորեցնում են ակտիվորեն առաջ անցնել, որ կերտում են նրանց մարտական ոգին»:

Լյու Յզյանկանը՝ «Great Wall»-ի հիմնադիրներից մեկը, կրքոտ հայրենասեր էր: 1949 թվականի հոկտեմբերին նա արտասահմանում էր, երբ լսեց, որ Նոր Չինաստան է հիմնադրվել: Նա անմիջապես առատաձեռն նվիրաբերություն կատարեց այդ գործին՝ այդ թվում նվիրելով նաեւ երկու վիթխարի նավակ: «Great Wall»-ը վաղ սկսեց համագործակցել մայրցամաքի այլ ստուդիաների հետ. մայրցամաքային ֆիլմերը, ինչպիսիք են՝ «Ամահ գույգը», «Ավագ քույր Լյուն», «Ոսկե ծաղիկների հիևզ փունջը», «Հին ջրհորը», «Դեղին երկիրը» և «Ֆուրոնգ ավանը», բոլորը ներկայացվեցին արտերկրում՝ «Հարավային կինոնկերության» կողմից (Southern Film Corporation):

Մի օր ստուդիայի ղեկավարը եկել էր երկարատև սրտանց գրույց ունենալու Չանի հետ: Նա ասաց, որ Լյաո Չենչժիի իրեն ասել է, որ հուսով է՝ «Great Wall»-ը ֆիլմ կպատրաստի մարտարվեստի մասին, որն իրենք կկարողանան ներկայացնել արտերկրում՝ խթանելու չինական մարտարվեստի ոգին: Լյաոն ասել էր՝ հույս ունի, որ հայրենասեր կինոգործիչները կարող են իրենց ներդրումն ունենալ հայրենիքի համար:

Չանին հուզեց առաջարկը. նա անմիջապես ներկայացրեց մի շարք խնդիրներ, որոնք պետք է լուծվեին այդպիսի ռեժիսուրայով ֆիլմ նկարահանելու համար: Լյաոն պատասխանեց. «Դա ամենեւին էլ խնդիր չէ: Ասեք ինձ մնացած ամեն ինչի մասին, որոնց հետ գործ եք ունենալու: Մտածեք հապա. երբ ձեր թիկունքին կանգնած է Հոնկոնգի և Մակաոյի հարցերով գրասենյակի ղեկավարը, ինչի՞ մասին պետք է անհանգստանաք»:

ՉԺՏ սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հանձնաժողովի փոխնախագահ Սյոյ Ինչենի գրած նամակով՝ Լյաո Չենչժիի հանձնարարությամբ Չանն այցելեց մարտարվեստի խմբեր ամբողջ Չինաստանում որոնելով դերասանների: Պեկինի «Շիչախայ» մարզադպրոց կատարած այցի ժամանակ նրա հայացքը կանգ առավ Տեթ Լիի՝ այն ժամա-

Նակ Չինաստանի մարտարվեստի ազգային հնգակի չեմպիոնի վրա: Չանը նկատեց Տեթի գեղեցիկ արտաքինը և սրբազեղ, հստակ ու ճգրիտ շարժումները: Նա գերաստղի ակնհայտ տեսք ուներ:

Եվ հենց այսպես Չանն իր բացահայտումով մարտարվեստի միջազգային սենսացիա արեց: Մարտարվեստի դերասանների խումբը, որը նա աճեցրեց ու կատարելագործեց «Շաոլինի տաճարի» նկարահանումների ընթացքում, դառնալու էր Չինաստանում մարտարվեստի ֆիլմերի հիմքերից մեկը:

«Շաոլինի տաճարով» Չանն աշխարհին պարզեցրեց էր չինական կինոյի անմահ մի ստեղծագործություն և սկիզբ դրեց «Կունգ ֆուի կայսր», միջազգային գերաստղ Տեթ Լիի կարիերային: Հանրաճանաչ դառնալուց հետո Լին երբեք չէր մոռանում, թե ինչպես է Չանը հայտնաբերել իրեն, և ամեն անգամ, երբ գալիս էր Հոնկոնգ, այցելում էր Չանին:

Մեր գրույցի ավարտին Չանն ավստսանք հայտնեց. «Ես անչափ կարոտում եմ Չժոուին և Լյաոյին: Դժվար է գտնել այդպիսի լավ ղեկավարներ: Նման մարդիկ ընդամենը մեկ անգամ են աշխարհ գալիս»:

## Ծեր ձկնորսը և նրա երկու ֆիլիպինցի սպասուհիները

Հիասքանչ, արեւոտ մի առավոտ ես նստեցի Լանտաու կղզու հյուսիս-արեւմտյան անկյունում գտնվող Թայ Օ ձկնորսական ավազաններ գնացող ավտոբուսը: Իմ առջեւ բացվում էր երկու շքեղ լեռներով և դրանց միջեւ թաքնված մուգ կապույտ ծովածոցով տեսարանը: Ծովածոցի երկու կողմերում, ամբողջ ճանապարհին, մինչեւ օվկիանոսի ցլոցյուն ափը, փայտե սյուների վրա հենված սպիտակ տանիքներ էին: Հեռվում, կապույտ ծովի մակերեսային, ձգվում էր խարիսխների ամրացված ճերմակ առագաստանավերի շարքը, իսկ փայտե ծածկերի ներքո՝ ծփացող ջրերին տարուբերվում էին տեղացի ձկնորսների փոքր նավակները, որոնց վրա չորանում էին ձկնորսական ուռվանները: Ծածկերի տակ, փայտե հարթակներին, նստած էին ծեր տղամարդիկ: Նրանցից ոմանք թղթախաղով էին զբաղված, ոմանք, արեւից այրված թուխ, մերկ թիկունքներով, ձկներ էին փռում չորացնելու,

## Զժան Յավեն

մյուսներն էլ ծաղիկներ էին ջրում կամ պարզապես անխռով հանգիստ վայելում: Երիտասարդներ քիչ էին երեւում: Մոտակա փայտե կամրջի տակ անշտապ թիավարում էին փոքր նավակներով տղամարդիկ:

Թայ Օ ձկնորսական ավազանները շատ հեռու են Հոնկոնգի գործարար կենտրոնի հրմշտոցից ու թոհուբոհից՝ թաղված հինավուրց ձկնորսական գյուղի խաղաղ մեկուսացման մեջ:

Գյուղի ուր-մուր փոքրիկ փողոցները սեղմված են թարմ ու չորացրած ծովամթերք, մրգեր, դեղորայք եւ հագուստ վաճառողների կրպակ-տաղավարներով: Օղը լի է ձկան հոտով: Եվ այդուհանդերձ, փողոցները հանդարտ են ու լուռ. Լույսիսկ անցնող զբոսաշրջիկները շուկով են խոսում: Ոչ ոք չի բղավում, ասես վախենում են խանգարել ջրի վրայի ծերունիների խաղաղ լռությունը:

Ես ուզում էի խոսել ծերերից մեկի հետ, որպեսզի լսեմ հինավուրց գյուղի պատմությունը: Մտա փոքրիկ մի խանութ, ուր վաճառվում էր կաթնաշոռով քաղցր սոյա եւ մի բաժակ գետցի: Նստեցի փոքրիկ սեղանի մոտ, դեպի ծովը նայող հարթակին՝ դիտելով բնապատկերը, կամաց համտեսելով նրբահամ նախաճաշիկը եւ զրուցելով խանութ մտնող ու այդտեղ աշխատող ծեր մարդկանց հետ:

Ծերունկն իր կյանքի մեծ մասն աշխատել է որպես ձկնորս: Յոթանասուններկու տարեկան է, մուգ բրոնզագույն դեմքով: Նա մեղմ թափահարում էր արմավենու տերեւից պատրաստված հովհարը, երբ խոսում էր զուանդունյան հակկա բարբառով: Ստիպված էր շարժումներին դիմել, քանի որ դժվարանում էի հասկանալ: Ինչ-որ կերպ կարողացանք գլուխ հանել:

Ծերունու ազգանունը Զժան է: Նրա ընտանիքի անդամները սերնդեսերունդ ձկնորս են եղել, բայց զավակներից ոչ ոք ցանկություն չուներ ձկնորսությամբ զբաղվելու: Նրանք անվճար ուսում են ստացել տեղի քրիստոնեական դպրոցում եւ մեկնել Հոնկոնգ՝ սովորելու: Ուսումն ավարտելուց հետո աշխատանքի են անցել քաղաքում: Երիտասարդներից քչերն են գյուղում ձկնորսությամբ զբաղվում: Միայն ավագ սերունդն է դեռ դեպի ջուրը գնում: Օղն այստեղ մաքուր է, եւ գյուղի մարդիկ երկար են ապրում: Ծերունին ասաց, որ իր հոր մայրն ապրել է հարյուր յոթ տարի, իսկ իր պապն ապրել է իննսունչորս տարի: Հիմա տանը միայն ինքն ու իր իննսունչորս տարեկան մայրն են:

Նա ասաց, որ ինչ դադարել էր ձկնորսությամբ զբաղվել, էլ որեւէ եկամուտ չունեւ եւ ստիպված էր հույսը դնել իր երեխաների ուղարկված գումարների վրա: Ասաց, որ մայրցամաքային Չինաստանին վերադառնալուց հետո Հոնկոնգում ավելի լավ է, քան երբ կառավարում էին բրիտանացիները: Վեց տարի առաջ կառավարությունն առաջարկեց բացել Լանտաու կղզին, եւ Թայ Օ ձկնորսական գյուղը դարձավ հանրաճանաչ զեղատեսիլ վայր, ուր այցելում են մեծ թվով մայրցամաքային զբոսաշրջիկներ: Ծերուկն իր փոքր բիզնեսը սկսեց՝ մի քիչ ավելի գումար վաստակելու համար: Նա ֆիլիպինցի երկու սպասուհի վարձեց, որ հոգ տանեն տան երկու ծերերի մասին եւ օգնեն կաթնաշոռով սոյայի բիզնեսով զբաղվելուն:

Հետաքրքիր մի բան. ֆիլիպինցի մեկ սպասուհու ամսական նվազագույն օրինական աշխատավարձը 3 740 հոնկոնգյան դոլար է: Գործատուն պարտավոր է նաեւ վճարել յուրաքանչյուր սպասուհու՝ Հոնկոնգ մեկնելու ինքնաթիռի տոմսի համար, ինչպես նաեւ վիզայի հետ կապված ծախսերի, ապահովագրության, օտարերկրացուն աշխատանքի տեղավորելու հարկերի, գործակալության վարձատրության համար եւ լրացուցիչ հարկ է վճարելու, երբ սպասուհիների՝ Հոնկոնգից հեռանալու ժամանակը գա: Երբ այս ամենը գումարում ենք, տեսնում ենք, որ ֆիլիպինցի երկու սպասուհի վարձելը փոքր ծախս չէ:

Հոնկոնգում աշխատում են երկու հարյուր վաթսուն հազար օտարերկրյա սպասուհիներ, որոնցից հարյուր հազարից մի փոքր ավելին ֆիլիպինուհիներ են: Որպես խումբ՝ նրանք լավ կրթված են եւ շատ են գնահատվում նրանց վարձող հոնկոնգյան գործարարների կողմից,:

Ծեր ձկնորսը շատ չէր խոսում: Իսկ խոսելիս արտահայտվում էր պարզ ու անկեղծ եւ խոսում էր սոցիալական ցածր խավի փորձառությունների մասին: Նա երբեք չէր եղել մայրցամաքային Չինաստանում: Իրականում նա երբեք չէր լքել այս հինավուրց ձկնորսական գյուղը: Եվ այնուամենայնիվ, նստած ծովափնյա իր փոքրիկ տանը՝ կարողանում էր օգտվել Հոնկոնգի վերադարձից հետո ստեղծված առավելություններից եւ մայրցամաքային Չինաստանի ստեղծած արտոնյալ քաղաքականությունից: Ես չգիտեմ, թե արդյոք Թայ Օ-ի մյուս ձկնորսները նման են նրան, վարձո՞ւմ են ֆիլիպինցի սպասուհիներին, որպեսզի տանն աշխատեն:

## Հոնկոնգի ցնցող «վանդակ-տները»

Իմ առաջին այցը Հոնկոնգ կատարեցի 1996 թվականին՝ անմիջապես Նախքան մայրցամաքային Չինաստան վերադառնալու: Այդ ժամանակ էր, որ իմ սեփական աչքերով տեսա «վանդակ-տները»:

Դա այնպիսի խորը տպավորություն թողեց, որ Նույնիսկ հիմա՝ տասնյոթ տարի անց, այդ զգացողությունը չի մարել: Ասես տեսնում էի մարդկանց՝ կենդանիների կամ բանտարկյալների նման փակված մետաղե վանդակներում: Իրար վրա դրված երկհարկ վանդակ-տներն ուղղակի ցնցող էին:

Ես հաճախ եմ մտածել, թե ինչու Հոնկոնգի կառավարությունը փող չի ներդրել ավելի շատ բնակարաններ կառուցելու համար, որպեսզի փրկի այս մարդկանց իրենց «վանդակ-տներից» եւ նրանց տներ տա, որտեղ կկարողանան ուղիղ կանգնել:

Արդեն տասնվեց տարի է անցել, ինչ Հոնկոնգը վերադարձվել է մայրցամաքային Չինաստանին, եւ այնուամենայնիվ, խրճիթներն ու «վանդակ-տները», ինչպես սպին գեղեցիկ մարմնի վրա, առաջին հայացքից են թաքցված եւ չեն երեւում:

2013 թվականի հունվարի 17-ն էր, երեկոյան ժամը 8-ը: Ինձ ուղեկցում էր Հոնկոնգի Համայնքների կազմակերպության անդամ, տիկին Սի Լայսաանը: Երկու ընկերների հետ գնացել էի Յաու Մա Տեյում (Yau Ma Tei), Հյուսիսային ծայրամասում (North Point) եւ Խճուղու ծովախորշում (Causeway Bay) գտնվող երեք գրանցված վարձակալած վանդակ-տները տեսնելու՝ մեզ հետ վերցնելով պաքսիմատ եւ արագ եփվող մակարոնեղեն, հուսալով, որ դա ինչ-որ չափով կմխիթարի այդտեղ ապրող մարդկանց:

Եթե իմ սեփական աչքերով տեսած չլիների, եթե շնչած չլիների գարշահոտ օդը, եթե մազլցած չլիների փոքրիկ, նեղ «վանդակային մահճակալներից» մեկի վրա՝ լուսանկարվելու համար այդտեղ ապրող բնակչի հետ, երբեք չէի հավատա, որ իր բարեկեցությամբ եւ հմայքով աշխարհում հայտնի մի քաղաքում մարդիկ կարող են ապրել նման պայմաններում: Երբեք չէի պատկերացնի, որ այդպիսի բարեկեցիկ, հարուստ եւ շքեղ արտաքինը կթաքցնի այդքան ցնցող աղքատություն, այդպիսի նեղվածք եւ անհուսություն:



Բոլոր երեք վանդակ-տները բնակելի շենքերում էին՝ քաղաքի գործարար մասի խիտ շրջաններում, որտեղ լույսերն առկայծում ու շողում են շքեղ խանութներով լի անվերջ փողոցներում: Տարածքն ինքը բարձրակարգ մասն ու բարեկեցության պատկերն է ներկայացնում: Շենքերը մուտքի դռան մոտ պահակ ունեին: Մենք կանգ առանք, որպեսզի գրանցվենք, ապա գնացինք դեպի վերելակները: Վեցերորդ հարկում, երբ վերելակներից դուրս եկանք, տիկին Սին թակեց բնակարաններից մեկի՝ գողությունը կանխելու համար չժանգոտվող պողպատի ձողերով պատված դուռը եւ կանտոներեն ինչ-որ բան բացակասեց:

Երբ դուռը բացվեց, ես ապշած մնացի: Սենյակն ամբողջությամբ լեփլեցուն էր, բաժանված երկու՝ վերին եւ ստորին հարկերի, լցված փայտե միջնապատերով առանձնացված «վանդակային մահճակալներով»: Հոնկոնգում մարդիկ դրանք անվանում են «դագաղ սենյակներ»: Ճիշտն ասած, դրանք «սենյակներ» չէին, այլ պարզապես մահճակալներ: Յուրաքանչյուր «վանդակային մահճակալ» երկու քառակուսի մետրից պակաս էր, մոտավորապես նույն տիպի, ինչ մայրցամաքային գնացքի վագոնի փափուկ քնատեղը: Առաստաղները մահճակալների վերելում չափազանց ցածր էին ոտքի կանգնելու համար. բնակիչները կարող էին միայն նստել կամ կքանստել: Յուրաքանչյուր վանդակային մահճակալ ուներ օդափոխման փոքր պատուհան՝ պատրաստված չժանգոտվող պողպատի ցանցից: Դա իսկապես վանդակի նման էր՝ ընդհուպ մինչեւ մահճակալի դռան վրայի կողպեքը, որպեսզի հագուստը գողությունից պահպանվի:

«Վանդակները» մարդու գոյատևելու համար անհրաժեշտ նվազագույն տարածությունն են, որ հազիվ բավականացնում են քնելու համար: Բնակիչների բոլոր իրերը՝ շորերը, զգեստները, գլխարկները, պայուսակները, շարժերը, մահճակալի չորս կողմերից կախված փոքր հայելիները, տեղավորվում էին այս փոքրիկ տուն-վանդակում: Մահճակալների գլխին էլեկտրոնային փոքր սարքեր էին՝ հեռուստացույցներ, հովհարներ, ռադիոընդունիչներ, արդեն փոքր ու նեղ տարածքն էլ ավելի փոքրացնելով, այնքան, որ մարդ հազիվ կարող էր շնչել:

Բնակարանները բոլորը մոտավորապես նույն չափի էին՝ քառասունից հիսուն քառակուսի մետր: Դրանց մի մասը բաժանված էին քսան, իսկ մի մասն՝ անգամ քսանվեց «վանդակային մահճակալների»: Բոլոր

## Զժան Յավեն

երեք բնակարաններն ունեին ընդամենը մեկ լոգարան եւ բրնձի մեկ էլեկտրական կաթսա, որից բոլորն ստիպված էին հերթափոխով օգտվել: Ամսական վարձավճարը հազարից հազար վեց հարյուր հոնկոնգյան դոլար էր: Փոքր-ինչ լավ օդափոխություն ունեցող մահճակալներն ավելի թանկ արժեին, իսկ վատ օդափոխություն ունեցողներն ավելի էժան էին:

Տիկին Սին ինձ ասաց, որ վանդակ-տներում բնակվող մարդկանց մեծամասնությունը միջին տարիքի տղամարդիկ են, թեւէ կային նաեւ մի քանի երիտասարդներ: Մի սենյակում, որտեղ քսանից ավելի տղամարդիկ էին ապրում, ապրում էր նաեւ մոտ քառասնամյա մի կին: Ըստ երեւոյթին նոր էր մայրցամաքից Հոնկոնգ ժամանել: Ես չէի կարողանում պատկերացնել, թե ինչպիսի անհարմար իրավիճակներում կարող է հայտնվել այս կինը՝ ապրելով տղամարդկանցով կիպ սեղմված աշխարհում, ցնցուղ ընդունելով, լոգարան գնալով, հագուստ փոխելով, հնարավոր է նույնիսկ սեռական ոտնձգության ենթարկվելով:

Այդ ժամանակ արդեն գիշեր էր, եւ սենյակում գտնվող մարդկանց մեծ մասն արդեն անկողին էր մտել: Տեսնելով, որ բոլորի համար նվերներ ենք բերել, նրանք, այդուհանդերձ, բացեցին իրենց մահճակալների վարագույրները՝ նվերներն ընդունելու համար, ոմանց ընդարմացած դեմքերին՝ զարմանքի հետ խառն շնորհակալության արտահայտություն՝ նախքան նորից վար կքաշեին վարագույրները՝ հեռուստացույց դիտելու համար:

Վանդակային մահճակալներից մեկի պատին մի լուսանկար տեսա: Կարծես ընտանեկան լուսանկար էր: Լուսանկարում տղամարդն ու կինը երկուսն էլ շատ երիտասարդ էին: Մահճակալի բնակչին հարցրի, թե ով է պատկերված կինը: Ծերուկն անկեղծորեն ինձ ասաց, որ դա իր կինն է եւ որ նա Հունանից է, իսկ ինքը՝ Հոնկոնգից: Ծերունին տուն չուներ եւ ավելի քան տասը տարի ապրում էր այս վանդակ-տանը: Նա չէր կարողացել կնոջը բերել Հոնկոնգ: Յոթանասուներեք տարեկան էր, եւ չնայած ամբողջ կյանքում աշխատել էր, վերջին ժամանակներս հիվանդության պատճառով ի վիճակի չէր եղել աշխատել: Հարցրի, թե ինչու չի գնում Հունան, որ վերամիավորվի կնոջ հետ: Պարզապես ասաց. «Ես Հոնկոնգից եմ»: Նա դա կրկնեց մի քանի անգամ... Որ ինքը Հոնկոնգից է, իսկ կինը Հունանից:

Տեսնելով վանդակ-տանն ապրող, կյանքի ծանրության տակ կքած

այս յոթանասուներեքամյա տղամարդուն, որ լուսանկարին է ապավինել՝ վառ պահելու համար իր սիրելիների մասին հիշողությունները, ես ցնցված էի վիատության բարդ ու ծանր զգացումից:

Մեկ այլ ծերունի գրեթե ինքնիրեն քրթմնջում էր, որ երիտասարդ ժամանակ ինքը շինարար էր, որ օգնել է ինչ-որ աշտարակ կառուցել: Վերին անկողնակում գտնվող տղամարդը կանտոներեն ձայն էր տալիս ինձ եւ ձեռքն իմ կողմը մեկնում: Չէի հասկանում, թե ինչ է նա ուզում, ուստի անհանգստացած՝ խնդրեցի տիկին Սիին թարգմանել: Տիկին Սին ասաց, որ նա ցանկանում է լուսանկարվել ինձ հետ՝ այդ պահը հիշելու համար: Ես համաձայնեցի եւ սանդուղքով շտապ բարձրացա դեպի երկրորդ հարկ: Բռնեցի ծերունու կաշիացած ձեռքը եւ հնարավորին չափ մոտեցա նրան՝ լուսանկարվելու համար: Փորձում էի հեռու մնալ, բայց պարզապես չէի կարող:

Ինչպե՞ս կարող էի: Ես միս ու արյուն ունեցող, հույզերով լի կենդանի հոգի էի: Գրեթե լալիս էի այդ ծերունիի հետ լուսանկարվելիս: Պատճառը միայն ապրումակցումը կամ կարեկցանքը չէր: Ավելի շուտ, զգացածս ցավն այնպիսին էր, ասես իմ ներսում եղած ինչ-որ արժեք, ինքնության ինչ-որ զգացողություն էր խորտակվել: Ես այլևս չէի կարողանա ձեռացնել, թե իբր ոչինչ չի պատահել, ոչինչ սխալ չէ, չէի կարող խաղալ, թե իբր այնտեղ էի՝ մարդկանց «մխիթարելու» համար: Գիտակցությունս եւ հույզերս ինձ ուղղակի դարձրին ջախջախված, անկարող, խաղաղություն գտնելու անընդունակ: Անտանելի էր այն միտքը, որ ծեր մարդը կարիքը կզգա թաքցնելու, քողարկելու, թե ինչպես է աշխարհը խեղճացրել ու ընկճել իրեն: Չէի կարող տանել այդ դատարկ, անկյանք հայացքը նրանց աչքերում: Ես չգիտեի, թե այդ վանդակ սենյակում տղամարդիկ երբեւէ հույսեր ունեցե՞լ են, ինչ-որ բանի մասին երազե՞լ են: Չգիտեի՝ կա՞ն արդյոք նրանց սիրող մարդիկ: Ինչո՞ւ չեն գալիս նրանց տանելու:

Ստաճում էի՝ եթե հայրս ապրեր նեղ ու խեղդուկ դազաղ սենյակում, ո՛չ թե մեկ կամ երկու օր, այլ մեկ կամ երկու տարի, կամ նույնիսկ մեկ տասնամյակ եւ ավելի երկար, ի՞նչ կզգայի ես: Չէի կարող պատկերացնել: Չէի կարող ասել՝ չէի՞ խելագարվի արդյոք: Հայրս նույնպես աղքատ մարդ էր: Երբեք չէր ապրել վանդակ-տան մեջ, բայց աղքատությունն ամբողջ կյանքում հետապնդել էր նրան:

Երբ դուրս եկա երեք վանդակ-տներից, այնպիսի զգացողություն ու-

## Զժան Յավեն

նեի, ասես հոգիս բանտարկվել, ճգմվել էր դրանց լեփ-լեցուն սահմանափակ պատերի մեջ: Թվում էր՝ սիրտս հիմա կպայթի: Ազահաբար շնչեցի դրսի մաքուր օդը: Ինձ մնում էր միայն ետ նայել, որպեսզի մեկ անգամ էլ տեսնեի այն պատկերը, որից կարկամել էի: Քայլելով հեռու՝ անցանք վերգետնյա հետիոտնային անցուղով: Ես նկատեցի անցուղու մի կողմում գտնվող չորս կամ հինգ մահճակալներ, որոնց մոտ չորս կամ հինգ տղամարդ կանգնած զրուցում էին: Տիկին Սիին հարցրի, թե ինչ է կատարվում:

Նա ասաց, որ դրանք «բաց տարածքի կենվորներ են» (ժարգոն, որ չիևարեն շատ ավելի առօրեական է հնչում):

Ես չհասկացա:

Նա ասաց, որ Հոնկոնգը այդպիսի «բաց տարածքի կենվորներ» շատ ունի, մարդիկ, որ չունեն տներ, ուր կարող են վերադառնալ: Ամենամեծ կուտակումը Հոնկոնգյան մշակութային կենտրոնի մոտակայքում է գտնվում՝ Ցիմ Շա Ցույում: Հաճախ այդտեղ հարյուր եւ ավելի մարդ է լինում: Մարդիկ կատակով այն անվանում են «Մշակույթի հյուրանոց»: Ես դանդաղեցրեցի քայլերս եւ ետ նայեցի դեպի լույսերի տակ երեսացող՝ մահճակալների ներքեի շարքը: Ապա նայեցի դեպի հորիզոնի՝ կրակի պես վառվող գիծը, ուր երկնաքեր շենքերը լույսերով էին ծածկել երկինքը: Հանկարծ ինձ թվաց, թե բարձր աշտարակները կարճացել են, եւ այդ տաք երեկոյան ես ցուրտ ու սարսուռ զգացի:

Հարցնում եմ տիկին Սիին, թե այս վանդակ-տներում ապրողներն ովքեր են: Նա ասում է, որ դրանց յոթանասուն տոկոսը Հոնկոնգից է, իսկ մյուս երեսուն տոկոսը մայրցամաքից ևոր ժամանածներ են: Մեծ մասը երբեւէ չի ամուսնացել կամ ամուսնալուծված է: Ոմանք մայրցամաքում կին ունեն, որոնց չեն համարձակվում բերել Հոնկոնգ, քանի որ ապրելու տեղ չունեն: Նրանց մեծ մասը ծագումով ցածր խավից է եւ կրթություն չունի: Ոմանք թմրամոլ են կամ ազատ արձակված դատապարտյալներ: Մեծ մասն անգործ է, իսկ նրանք, ովքեր գործ ունեն, ցածր վարձատրվող աշխատանք են կատարում, օրինակ՝ զբաղվում են շինարարությամբ, մաքրման աշխատանքով կամ աշխատում են ռեստորաններում: Նրանց համար դժվար է բարելավել իրենց տեղը հասարակության մեջ. նրանք հասարակության կողմից մոռացված, քնչազուրկների խումբ են: Բրիտանական գաղութի վարչակազմը թույլ

չէր տալիս, որ չամուսնացածները դիմեն պետական բնակարաններ ստանալու համար: 1985-ին այդ քաղաքականությունը փոխվեց, բայց սպասման ժամանակահատվածներն անսահման էին. դիմողները կարող էին սպասել տասը տարուց ավելի: Այդ ժամանակ էլ նրանք մտածում էին, որ կարող են պարզապես հրաժարվել ամեն ինչից եւ շարունակել ապրել իրենց վանդակ-տներում՝ նեղ ու սեղմված կյանքով:

Տիկին Սիին հարցրի, թե Հոնկոնգում քանի հոգի է ապրում այսպիսի վանդակ-տներում: Առնվազն հարյուր հազարից ավելի՝ ասաց նա: Ասաց, որ վիճակագրության բյուրոն հաստատել է, որ տասներկու եւ ավելի մարդ վարձակալված վանդակ-տները պետք է գրանցվեն կառավարությունում եւ արտոնագիր ստանան, բայց տասնմեկ կամ պակաս վարձակալ ունեցողները գրանցման կարիք չունեն: Այդ պատճառով, մի շարք մասնավոր վանդակ-տներ չեն գրանցվել կառավարության կողմից, ինչը հնարավորություն չի տալիս հաշվառել դրանցում ապրող մարդկանց: Բացի այդ, մի շարք լքված գործարաններ վերածվել են երկհարկանի ժամանակավոր բնակտարածքների կամ վանդակ-տների եւ տրվում են վարձով: Սրանք առավել եւս անհնար է հաշվել, քանի որ հոնկոնգյան օրենսդրությամբ ապօրինի են:

Տիկին Սին տասնյոթ տարի անդամակցել է Հոնկոնգի Համայնքների կազմակերպությանը եւ լավ է հասկանում մարդկանց այս խմբին: Նա աշխատում է ավելի քան հիսուն գրանցված վանդակ-տների հետ: Նա եւ սոցիալական աշխատող իր մյուս գործընկերները նպատակ են հետապնդում օգնել անապահով խավերին, որոնց ծառայում են, որպեսզի վերջիններս գոյատևեն եւ արժանապատիվ կյանք վարեն: Փորձում են իրենց աշխատանքը կատարել արդար, ժողովրդավարական եղանակով: Ասում է, որ սոցիալական աշխատանքը դժվար է: Իրենց աշխատանքների մեծ մասը գիշերն են կատարում, եւ ամսական ստանում են ընդամենը տասը հազար հոնկոնգյան դոլարից մի քիչ ավելի: Շատ չեն այդ գործն անել ցանկացողները: Նա իրավաբանական կրթություն է ստացել Հոնկոնգի համալսարանում: Լինելով կարեկցող մարդ՝ որոշեց զբաղվել սոցիալական աշխատանքով, իր բարի սիրտը ներդնելով կարիքավորների համար աշխատանքում. մի բան, որ շարունակում է անել այսօր:

Գիշերը տասն անց է, եւ տիկին Սին ու ես գնում ենք ամեն մեկս մեր ճանապարհներով: Ես մի քանի անգամ շնորհակալություն եմ հայտ-

## Զժան Ցավեն

Նում նրան եւ իմ անկեղծ հիացմունքը հայտնում՝ իր կատարած աշխատանքի համար:

Ես շատ եմ ուզում մնալ եւս մի քանի օր, որպեսզի հարցազրույց վերցնեմ վանդակ-տների մարդկանցից: Այս մարդիկ, յուրաքանչյուրը փոքրիկ, չոր թխվածքաբլիթի նման, սեղմվում են իրենց նեղիկ սենյակներում, ամեն մեկն ունի իր պատմությունը՝ դառը կամ անհույս կամ խորն ու ցավալի: Ուզում եմ ավելի խորանալ, հարցնել նրանց իրենց կյանքի մասին, պարզել, թե ինչպես են այս վիճակին հասել: Բայց, ցավոք, վիզայիս մնացել էր ընդամենը յոթ օր: Ութերորդ օրը ես պետք է մեկնեի, այնպես որ՝ հարցազրույցներս պետք է հետաձգեի մինչեւ հաջորդ այցս: Հոնկոնգի Համայնքների կազմակերպությունից մի քանի բան գնեցի: Իմ գնած լուսանկարչական այբումներից մեկի նախաբանում գրված են հետեւյալ խոսքերը. «Հուսով եմք, որ սա վանդակային մահճակալների լուսանկարների վերջին այբումն է, որը հրապարակում ենք: Հինգ տարի առաջ մենք հրապարակեցինք վանդակային մահճակալների լուսանկարների մի այբում, որը փաստերով ներկայացնում է բացահայտում էր վանդակ-տների սողկալի միջավայրը... Այբումը մենք ուղարկեցինք ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի տնտեսական, սոցիալական եւ մշակութային հանձնաժողովին՝ որպես ապացույց, որ Հոնկոնգում ոմանց կողմից ղեկավարվում է աղքատության մատնված մարդկանց կյանքը: ՄԱԿ-ը հետագայում խստորեն դատապարտեց եւ պահանջեց, որ Հոնկոնգի կառավարությունն ամբողջությամբ վերացնի վանդակ-տները»:

Բայց վանդակ-տները դեռ կան:

Գրքերից մեկն էլ պատմում է Հոնկոնգում վանդակ-տներից դուրս՝ բնակարանների հետ կապված խնդիրների մասին, որոնցից մեկը մեծ թվով երեխաներ ունեցող այն ընտանիքներն են, որ խցկված ապրում են մարդկային բնակության համար ոչ պիտանի ժամանակավոր խուղերում: Ըստ հատուկ վարչական շրջանի կառավարության կողմից հրապարակված վիճակագրության, 2008 թվականին Հոնկոնգյան LegCo-ի տասնութ թաղամասերում 43 700 ընտանիք կար՝ 89 200 մարդ, որ ապրում էին այդպիսի տներում, 2009-ին այդ թվերը համապատասխանաբար կազմել են 45 700 եւ 91 600, իսկ 2010-ին դրանք եղել են 35 500 եւ 75 600:

Երեխաները խցկված էին այդ փոքրիկ տներում, ինչպես մայրցամաքային Չինաստանի աղքատ լեռնային շրջանների երեխաները, որոնց հույսն այլ բան չէ, քան կարողալու գիրք ունենալը: Նրանց մեծ մասը պարզապես ցանկություն ուներ մի փոքրիկ սեղան ունենալ, որպեսզի այլևս ստիպված չլինեին պառկել աստիճան-հարկերով մահճակալի վերելում՝ ուտելու, քնելու եւ իրենց տնային գործերը կատարելու համար:

Ձեռքս մի գիրք վերցրի, որը պատմում էր հենց նոր Հոնկոնգ ներգաղթած երեխաների իրական պատմությունը: «Ընտանիք» վերնագրով ակնարկներից մեկում հեղինակը գրում էր. «Ռա վեցը հինգ ոտնաչափի վրա մի սենյակ է՝ առանց պատուհանի: Կահավորված է միայն առաստաղի հովհարով: Սենյակը թաքնված է շատ այլ տների միջև, շատ դռների ետևում, ասես անկյունում կծկված լինի: Սենյակի ներսում երկու փոքրիկ երեխաներ նստած են երկտեղանոց մահճակալի վերելի մասում: Բացի անկյունի մեկ քառակուսի մետրանոց սեղանից, սենյակում այլ կահույք չկա»:

Սա հնարած, գեղարվեստական գործ չէ, այլ նոր ներգաղթած ընտանիքի կյանքի պայմանների իրական պատկերում:

Հոնկոնգում իսկապես կենսապայմանները շատ անբարենպաստ ու սահմանափակ են, բնակիչներն ասես փեթակների ներսում ապրող մեղուներ լինեն:

Առաջին իսկ օրվանից, երբ վանդակ-տուն տեսա, Հոնկոնգի փողոցներով քայլելիս, երկաթբետոնե ամրակառույց աշտարակներին նայելիս չէի կարող չմտածել՝ պայծառ լույսերի ետևում այդ շենքը չի՞ թաքցնում արդյոք վանդակ-տներ: Քանի՞ հոգի է բանտարկված ներսում:

Իմ ձեռք բերած ընթերցանության նյութերից պարզ էր դառնում, որ հիմնադրման օրվանից ի վեր բնակարանային հարցը շատ մեծ խնդիր է եղել Հոնկոնգի հասարակ մարդկանց համար:

1875 թվականին բրիտանացի մի գրող նկարագրել է Հոնկոնգի բնակիչներին, ովքեր ապրում էին փոքրիկ, խարխուլված տներում, որտեղ մարդիկ եւ խոզերը միասին մնում էին նույն սենյակում: Չինացիների կողմից վարձակալած պետական բնակարանների մի թաղամասում բրիտանական իշխանությունները բնակիչների մահճակալների տակ հայտնաբերել էին հարյուր յոթանասուններկու խոզ:

1953 թվականի Սուրբ Ծննդյան տոնի նախօրյակին Շեկ Կիպ Մեյի՝

## Զժան Յավեն

փայտե հենասյուների վրա կառուցված շենքերում հրդեհ բռնկվեց՝ ավերելով տասնյակ հազարավոր տներ: Ավելի քան հիսուն հազար մարդ հայտնվեց անօթեանության շեմին՝ աղքատության գագաթնակետին: 1971 թվականի նոյեմբերին Հոնկոնգի քսանհինգերորդ նահանգապետ Մյուրեյ ՄաքԼեհոսը որոշ բնակիչների տները գնելուց հետո ասաց. «Առավել ողբերգական վիճակում ոչ թե Սթար Ֆերիի ծովապատնեշի վերջնակայանի սովարաթոթե տուփերում ապրող մարդիկ են, այլ՝ Մոնգ Կոկի «վանդակ-տներում» ապրողները: Նրանք ընտանիք չունեն: Այդ մարդկանց միակ եկամուտը թոշակն է: Նրանց այսպես կոչված «տունը» նույնքան մեծ է, որքան այն մահճակալը, որի վրա քնում են: Այդ մարդիկ բոլոր կողմերից շրջապատված են պողպատե մետաղալարերով, որպեսզի պաշտպանեն իրենց խղճով ունեցվածքը՝ քսան հոգով ապրելով լոգարանում»:

1973 թվականին ՄաքԼեհոսը հայտարարեց իր «Տասը տարվա բնակարանային ծրագրի» եւ «Տնային սեփականության նախագծի» մասին, ըստ որոնց կկառուցվեին պետական տներ 1,535 միլիոն մարդու համար: Մինչեւ 1983 թվականը ավարտին հասցվեց առաջարկվող քանակի միայն կեսը: 1997-ի հոկտեմբերին Տուն Չի-հուան, իր վարչակազմի հրապարակած առաջին գեկույցում, առաջարկեց իր «85 000» միավորի կառուցման ծրագիրը, ըստ որի ամեն տարի կառուցվելու էին երեսուն հազար մասնավոր տներ եւ հիսունհինգ հազար պետական բնակարաններ, եւ բոլորն իրենց ցածր գներով մատչելի էին լինելու ցածր եկամուտ ունեցող բնակիչների համար: Բայց այդ առաջարկից շատ չանցած՝ ծրագիրը լուրջ ձախողում ունեցավ Ասիայի ֆինանսական ճգնաժամի պատճառով:

Հոնկոնգը մայրցամաքային Չինաստանին վերադարձվելուց ի վեր հատուկ վարչական շրջանի կառավարությունը հետեւողականորեն փորձել է բարելավել բնակիչների կենսապայմանները՝ աշխատելով ավելի բարելավել Հոնկոնգի ետնախորշերի կենսապայմանները, մշակել վարձակալության աջակցության, բնակելի շենքերի մասնավոր շինարարության ծրագրեր եւ անշարժ գույքի ձեռքբերման վարկերի հնարավորություն ստեղծել: Բայց դժվարությունները, որոնց մշտապես բախվում են սովորական հոնկոնգցիները՝ բնակարանային հարցի հետ կապված, դեռեւս ամբողջովին լուծված չեն:



ԳԼՈՒԽ 7

**ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՔՈՒՐ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ԴԺՎԱՐԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

**Ոչ մի հատուկ արտոնություն  
գլխավոր գործադիրի համար**

Հարցազրույցիս օրակարգի ամենակարևոր կետը Հոնկոնգ կատարած այցիս համար՝ մաքուր կառավարման եւ կոռուպցիայի դեմ պայքարի թեման էր:

Հոնկոնգում կարող եք վերցնել ցանկացած թերթ, արագ բացել, եւ կտեսնեք թերթի էջերից դեպի ձեզ ցատկող՝ երկրագնդի ամենակարևոր ու ցնցող հոդվածները: Ամեն գլխավոր թերթի յուրաքանչյուր առաջին էջի վերեւի վերնագիրը վերցված կլինի Հոնկոնգի հատուկ վարչական շրջանի գլխավոր գործադիր Դոնալդ Ցանգի հաշվետվություններից եւ նրա վրա կատարված քննադատական հարձակումներից: Նրան մեղադրում են, պահանջում են LegCo-ի հետաքննություն, հնչում են պաշտոնանկության, վերաքննիչ դատարանի նախկին գլխավոր դատավորի հետաքննության կոչեր: Հարձակումները կարծես երբեք վերջ չունեն, հարձակվողներն իրենց բոլոր ծախսողումներից հետո էլ ամենեւին չեն նահանջում:

Ես կարծում էի Դոնալդ Ցանգը պետք է նման լինի մայրցամաքային Չինաստանի շնորհագրկված պաշտոնյաներին՝ ամբողջովին կոռումպացված: Այլապես ինչու՞ են բոլորը մշտապես քննադատում նրան: Նա, իհարկե, այն ժամանակ, գործադիր իշխանության բարձրագույն պաշտոնատարն էր Հոնկոնգում:

Ցանգի խնդիրները հետեւյալն էին. 2011-ի ապրիլին եւ 2012-ի փետրվարին նա շրջագայել է ընկերոջ անձնական նավով՝ ամեն անգամ վճարելով հինգ հարյուր հոնկոնգյան դոլար, 2009-ի հոկտեմբերին եւ 2013-ի փետրվարին թռել է ընկերոջ անձնական ինքնաթիռով՝ վճարելով համապատասխանաբար 5 900 եւ 188 000 հոնկոնգյան դոլար, եւ վարձակալել է 603 քմ մակերեսով «առանձնատուն» Շենչժենում, ամսական ութսուն հազար յուանով, որպես կենսաթոշակային կացարան:

## Զժան Ցավեն

Հետաքննությունները պարզել են, որ պետական բյուջեի միջոցներից վճարված՝ հյուրանոցներում Ցանգի անցկացրած քառասունինը գիշերից քառասունմեկն անց է կացվել նախագահական հյուրանոցում: Յուրաքանչյուր դեպքում սենյակի արժեքը գերազանցել է կառավարության հաստատած նորմերը, ամենաթանկ դեպքում՝ քառասուներս անգամ: Քննիչները մանրակրկիտ նշել են մուտքի ժամկետը, հյուրանոցի անվանումը, սենյակի գինը եւ տոկոսը, որքանով որ գինը գերազանցել է յուրաքանչյուր դեպքի չափանիշը:

Օրինակ՝ 2009 թ. Փետրվարի 16-ից 19-ը ընկած ժամանակահատվածում Ցանգը մնացել է Տոկիոյի «Իմպերիալ» հյուրանոցում, որտեղ մեկ գիշեր մնալն արժե 283 600 իեն (կամ մոտ 27 948 հոնկոնգյան դոլար)՝ 11,2 անգամ գերազանցելով քաղաքացիական ծառայողների մեկ օրվա բյուջեն, որ 23 301 իեն է:

Ինչպես նաեւ՝ 2010 թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը Ցանգը մնացել է Մոսկվայի «Նացիոնալ» հյուրանոցում: Յուրաքանչյուր գիշեր արժեցել է 57 100 ռուբլի (կամ մոտ 13 652 հոնկոնգյան դոլար)՝ 6,6 անգամ գերազանցելով քաղաքացիական ծառայողների մեկ օրվա բյուջեն, որ 7 483 ռուբլի է:

Կարիք չկա յուրաքանչյուր դեպք մեկ առ մեկ թվարկել:

Քննիչները մանրամասն, մեկ առ մեկ նկարագրել են դեպքերի շղթան յուրաքանչյուր ավելորդ ծախսի համար, եւ տրամադրել յուրաքանչյուրի գրավոր քննադատությունը: Օրինակ, «Hilton Hawaiian Village Waikiki Beach Resort»-ում Ցանգի մնալու ընթացքն այսպիսին էր. Գլխավոր գործադիր մարմնի գրասենյակն ի սկզբանե տեղավորվել էր լեռնային տեսարանով հյուրանոցում, մեկ մահճակալանոց նախագահական լյուքս համարում՝ մեկ գիշերվա համար 1 368 ԱՄՆ դոլար արժողությամբ (գիշերը՝ մոտավորապես 10 623 հոնկոնգյան դոլար): Հոնկոնգի առեւտրի եւ նախարարության գերատեսչությունը հետագայում ծանուցել էր Գլխավոր գործադիր մարմնին, որ օվկիանոսահայաց սենյակը հասանելի է 2 849 ԱՄՆ դոլար գնով՝ մեկ գիշերվա համար: Գլխավոր գործադիր մարմնի գրասենյակը որոշել էր փոփոխություն կատարել: Քննիչները քննադատել են այս ընտրությունը՝ ասելով, որ լեռնային տեսարանով սենյակի՝ օվկիանոսահայաց սենյակով փոխելու հիմքերը գրավոր ձեռով հստակ սահմանված չեն եղել, եւ որ որոշման

անհրաժեշտությունը չի հիմնավորվել: Գլխավոր գործադիր մարմնի գրասենյակի պարտականությունն էր ապահովել, որ սենյակի ընտրության բոլոր հիմքերը գրավոր ձևով ներկայացվեն:

Օրինակները չափազանց շատ էին: Հարկ չկա բոլորը ներկայացնելու:

Առերեսվելով LegCo-ի հետաքննության հետ՝ Ցանգն անկեղծ ու սրտաբաց վերաբերմունք ցուցաբերեց: Նա լրջորեն ընդունեց հետաքննության հարցերը և ասաց, որ կիրառարվի Շենչժենում վարձակալած առանձնատանից: «Ես եկել եմ LegCo՝ այստեղ իրավիճակը պարզելու համար,-ասաց նա,- ոչ թե վերականգնելու իմ անձնական հեղինակությունը, այլ վերականգնելու հասարակության վստահությունը, որ Հոնկոնգի կառավարությունն ազնիվ կլինի իր ֆինանսական գործերում: Ինձ հետ կապված այդ դեպքերն արդեն մեծ անհանգստություն են առաջացրել հասարակության շրջանում, լրատվամիջոցների կարծիքներում, օրենսդիրների և կառավարության իմ գործընկերների մոտ, սասանել են քաղաքացիների վստահությունն իրենց հաստատությունների նկատմամբ: Դրա համար ես պետք է հասարակության առջև հայտնեմ իմ լուրջ ու խորին ավստասանքը. սա իմ կյանքի ամենակարևոր դասն էր»:

Չեմ կարող չհիանալ Հոնկոնգում բնակչության համարձակությամբ և պատասխանատվության զգացումով: Առավել հիանում եմ նրանց հարգալից վերաբերմունքով այն զաղափարի հանդեպ, որ բոլորը պետք է հավասար լինեն օրենքի առջև: Քննիչները ոչ միայն չեն հապաղել՝ մանրակրկիտ ուսումնասիրել տարածաշրջանի ամենաբարձր պաշտոնյայի սննդի և կենսապահովման ծախսերը, այլև չեն հապաղել հրապարակել և բացահայտ քննադատության ենթարկել այն հյուրանոցների անունները, որոնցում նա մնացել է ծառայողական գործերով արտասահմանում գտնվելու ընթացքում, նրա հյուրանոցային ծախսերը կարգավորող կանոնակարգերը և թե ինչ չափով է նա խախտել դրանք: Սոցիալական պատասխանատվության ուժեղ զգացումն է հենց մղում Հոնկոնգի բնակիչներին ուշադիր հետետել պետական յուրաքանչյուր պաշտոնյայի ծախսերին: Եթե պաշտոնատար անձը հատկացվածից մեկ սենթ անգամ ավել է ծախսում, դա դիտվում է որպես տարածաշրջանի հիմնարար արժեքների ոտնահարում և բարոյական ու իրավական հիմքերի խախտում:

Զժան Յավեն

Բարձրագույն վերաքննիչ դատարանի նախկին գլխավոր դատավոր Էնդրյու Լին, որ նախագահ էր նշանակվել անկախ քննչական հանձնաժողովին, որի նպատակն էր «կանխել եւ հաղթահարել շահերի հնարավոր բախումը», իր հետաքննությունից հետո մատնանշեց. «Ներկայիս համակարգը չի կարգավորում գլխավոր գործադիրի կողմից հյուրընկալության ընդունումը: Սա հիմնական թերություն է, եւ այնպես է ստացվում, որ գլխավոր գործադիր մարմնի նկատմամբ վերահսկողություն կամ սահմանափակում չկա: Որպես այդպիսին՝ մենք առաջարկում ենք ստեղծել անկախ հանձնաժողով: Եթե ապագա որեւէ գլխավոր գործադիր որեւէ նպաստ պետք է ունենա, նա պարտավոր է լինելու ստանալ հանձնաժողովի հավանությունը: Հակառակ դեպքում նման մոտեցումը կհամարվի հանցավոր վարքագիծ»:

Հոնկոնգում իրավական համակարգերը, հաստատությունները եւ հայեցակարգերը խորապես արմատավորված են հասարակության գիտակցության մեջ:

## **Հոնկոնգի մարմինը քաղցկեղի պես քայքայող կոռուպցիան**

Որքա՞ն ժամանակ էր Հոնկոնգը աշխարհում վատահամբավ՝ որպես Բրիտանական կայսրության առավել սանձարձակ կոռումպացված մասը: 1960-70-ականների ընթացքում քաղաքում կոռուպցիան բավական էր, որպեսզի մարդու շունչ կտրվեր: Եվ ամենակոռումպացվածն այն խումբն էր, որ կոչված էր պաշտպանելու հասարակական կարգը: Ոստիկանությունը:

Այն ժամանակ Հոնկոնգի ոստիկանությունը ոչ մի բանի այնքան նման չէր, որքան մաֆիայի, որը ձեւավորել էր կաշառակերության եւ կոռուպցիայի ամուր հյուսված ցանց, որ կուտակում էր հստակ բաժանված փողերը. կառույցի ավելի բարձր մակարդակները կազմակերպում են իրենց ենթակաների համագործակցությունը հանցավոր տարրերի հետ՝ վերցնելով հսկայական «սպասարկման վճարներ»՝ յուրաքանչյուր կողմին նախօրոք բաժին հանված ավարով: Ոստիկանները ոչ միայն չէին պաշտպանում հասարակական կարգը, այլևս իրենք դարձել

Էին հանցագործների պաշտպանիչ վահան, հանցակից եւ հանցավոր գործողություններին մասնակից՝ թաքցնելով ու պատասխարելով ամեն տեսակի քրեական տարրերի, Հոնկոնգը վերածելով ևողկալի մի վայրի, վայր, որտեղ հանցագործությունն ու անբարոյականությունն էին մոլեգնում: Կոռուպցիան սփռվել էր համաճարակի պես՝ խելահեղ կերպով տարածվելով քաղաքի այս փոքրիկ, ավելի ու ավելի մարդաշատ դարձող տարածքում՝ այն աստիճանի անվերահսկելի ու սանձարձակ, ուր ամեն բիզնես, ամեն փողոց, ամեն անկյուն մի խաղահրապարակ էր, որ ամենից վատթար մարդկությունն էր ներկայացնելու:

Եթե մեկի տունը հրդեհվում էր, եւ հրշեջները ժամանում էին, նախքան կրակը ջրաշիթով մարելը պետք է ստանային «կոկորդը մաքրելու վարձավճար»: Եթե մեկի ընտանիքի անդամը հիվանդանում էր, եւ շտապօգնություն էին կանչում, որպեսզի նրան տեղափոխեն հիվանդանոց, շտապօգնության անձնակազմը հաճախ ընտանիքից նախապես «թեյավճար» էր պահանջում: Հիվանդանոց հասնելուն պես անհրաժեշտ էր բուժքրոջը որոշ գումար տալ, այլապես հիվանդը ջուր կամ ջեռակ չէր ստանա: Պետական տուն ստանալու համար սպասող կամ համալսարան դիմող ցանկացած մեկի, շատուշատ այլ բաների համար մի փոքր «սեւ փող» էր անհրաժեշտ, որպեսզի մարդ ուզածին հասներ: Անգամ փողոցի շրջիկ մանրավաճառը պետք է վճարեր ոստիկանությանը, այլապես ոչինչ չէին կարողանա անել:

Բրիտանացի ոստիկանապետն, ի վերջո, խիստ վրդովված ու զայրացած՝ բացականչեց. «Աստված իմ: Այսպիսի մասշտաբի կոռուպցիա երբեք չեմ տեսել»:

Բրիտանացի մեկ այլ պաշտոնյա Հոնկոնգում ունեցած ելույթի ժամանակ ասաց. «Հոնկոնգը մոլորակի երեսին ամենակոռումպացված քաղաքն է»:

Կոռուպցիան քաղցկեղի նման տարածվել էր Հոնկոնգում՝ ներխուժելով, գավթելով նրա քաղաքային մարմնի յուրաքանչյուր վերջին բջիջը, յուրաքանչյուր վերջին նյարդը, խեղդելով քաղաքի միլիոնավոր հոգիները, որ թակարդվել էին մի վայրում, որտեղ կոռուպցիայի չարորակությունը համատարած ամենուր էր:

1971 թվականի նոյեմբերի 19-ին հիսունչորսամյա Սյուրեյ ՄաքԼեեհոգը ստանձնեց Հոնկոնգի քսանհինգերորդ գաղութային նահանգապետ

## Զժան Յավեն

տի պաշտոնը՝ փոխարինելով Դեյվիդ Թրենչին: Նրա վերելքը ողջունող քաղաքում լիակատար խառնաշփոթ էր. կոռուպցիան ծաղկում էր, եւ հասարակական կարգը զգալիորեն փլուզման էր ենթարկվել: Շորթումն ու շանտաժն ամենուր էին, դրան նպաստում էր ոստիկանության եւ ավագակախմբերի համագործակցությունը: Հոնկոնգի սովորական մարդիկ այլեւս անկարող էին դա տանել, բայց չէին համարձակվում խոսել՝ վախենալով, որ իրենց արագ կստիպեն լռել:

Նոր նահանգապետը, որ Օքսֆորդի համալսարանի շրջանավարտ էր, հյուպատոս էր եղել Հանկոուում (այժմ՝ ժամանակակից Ուհան քաղաքը) եւ 1960-ականներին աշխատել էր նաեւ որպես բրիտանական վարչակազմի քաղաքական խորհրդական Հոնկոնգում: Առերեսվելով անկման եզրին գտնվող հասարակության հետ՝ նա որոշում կայացրեց իր առաջին վարչական զեկույցում («Հոնկոնգի 1971 թվականի տարեկան զեկույցը») ներկայացնել ոգեշնչող, հավակնոտ բարեփոխումների մի օրակարգ՝ ասելով, որ կառավարությանն անհրաժեշտ է լուծել երեք հիմնական խնդիր՝ բնակարանային, կրթական եւ սոցիալական ապահովության:

Առաջադրած բարեփոխումների շարքում, որ կցանկանար կատարել, ՄաքԼեհոգի գրոհը կոռուպցիայի դեմ, վերջիվերջո, դառնալու էր նրա առավել նշանակալից ներդրումը:

1973 թվականի հունիսի 4-ին, կոռուպցիայի մասին լուրերը հասան այնպիսի մասշտաբի, որը հիմնովին ցնցեցին Հոնկոնգը: Հաղորդումներում նշվում էր, որ ոստիկանության Հոնկոնգի բաժանմունքի թիվ երեք մարդը՝ գլխավոր կառավարիչ Փիթըր Գոդբերը, յուրացրել էր 4,3 միլիոն հոնկոնգյան դոլար անհավանական չափի գումար, կամ վեց անգամ ավելի, քան այն ընդհանուր աշխատավարձը, որ ստացել էր քսանմեկ տարվա իր ծառայության ընթացքում: Կառավարությունը կասկածում էր, որ նա չարաշահել է պաշտոնեական իր դիրքը եւ կաշառք է պահանջել:

Լրատվամիջոցների հետագա քննությունը բացահայտելու էր, որ իր պաշտոնավարման ավարտին նա ընկել էր մոլեգին կոռուպցիայի մեջ՝ ամեն ամիս հավաքելով ավելի քան երեսուն հազար հոնկոնգյան դոլար «սեւ փողեր»: Վերադասները մեկ շաբաթ ժամանակ տվեցին նրան՝ պարզելու համար այդպիսի ահռելի գումարների աղբյուրները:

Հունիսի 8-ին, օգտագործելով ոստիկանության իր լիազորությունները, Գողբերը Կայ Տակի օդանավակայանով փախավ Հոնկոնգից՝ թաքնվելով Մեծ Բրիտանիայում:

Լրատվամիջոցները Հոնկոնգի բնակիչներին մոեցին մոլեգին կատաղության: Երկար ժամանակ ճնշված սրանց բողոքները դուրս հորդեցին: Մարդիկ երթով շարժվեցին՝ ձեռքներին պաստառներ, որոնց վրա գրված էր. «Պայքարել կոռուպցիայի դեմ, ձերբակալել Գողբերին», պահանջելով, որ խայտառակված կառավարիչը ձերբակալվի եւ արտահանվի Հոնկոնգից: Նրա նման կոռումպացված ոստիկանը չէր կարող օրենքից դուրս լինել: Մաքլեհոզը տեսավ, որ իրավիճակը լուրջ է: Նա նշանակեց Սըր Ուիլյամ Ալեքսանդեր Բլեր-Քերին՝ Հոնկոնգում կոռուպցիայի դեմ պայքարի բարձր մակարդակի հանձնաժողով հավաքել:

Շատ չանցած՝ Բլեր-Քերը ներկայացրեց իր հետաքննության արդյունքները, որ հայտնի էին դառնալու որպես «Բլեր-Քերի զեկույց»: Չեկույցում նշվում էր, որ կառավարության այն բաժինները, որոնց հանձնարարված է պայքարել կոռուպցիայի դեմ, ենթակա են ոստիկանության բաժանմունքին, եւ առաջարկվում էր ստեղծել հակակոռուպցիոն անկախ մի մարմին, ինչպես նաեւ ավելի խիստ պատիժներ կիրառել կոռուպցիայի համար: Չեկույցում նշվում էր, որ կառավարության ստորաբաժանումները, որոնց հանձնարարված է պայքարել կոռուպցիայի դեմ, պետք է առանձնացված լինեն ոստիկանության բաժանմունքից, հակառակ դեպքում հասարակությունը երբեք չի հավատա, թե կառավարությունն իրոք վճռական է՝ կոռուպցիան արմատախիլ անելու:

Չեկույցին խորապես արձագանքեց Մաքլեհոզը: Նա համարձակ ու վճռական որոշում կայացրեց՝ ստեղծել «մի ստորաբաժանում, որն ամբողջովին անկախ է եւ կառավարության ցանկացած գերատեսչությունից, այդ թվում ոստիկանությունից, առանձին»:

Նա ստեղծեց անկախ քննչական հանձնաժողով, որը քննելով պարզեց Գողբերի գործի էությունը՝ միաժամանակ Հոնկոնգում անցկացնելով կոռուպցիայի մանրակրկիտ ուսումնասիրություն:

Խմբի զեկույցը ցույց տվեց, որ կոռուպցիան լայնորեն տարածված էր Հոնկոնգում եւ ամենալուրջն էր բիզնեսի աշխարհում: Կառավարության ներսում, հատկապես այն մասերում, որոնք ամենասերտ կապն

Զժան Յավեն

Էին ունեցել Հոնկոնգի բնակիչների առօրյա կյանքի հետ, կային նաեւ կոռուպցիայի հետ կապված մի շարք խնդիրներ: «Կոռուպցիան Հոնկոնգի ոստիկանության ներսում դարձել է կենսակերպ, նույնքան բնական, որքան քնելը, առավոտյան արթնանալը եւ ատամները լվանալը»:

ՄաքԼեհոզն ասաց. «Կարծում եմ՝ իրավիճակը պահանջում է բարձր աստիճան եւ կարգավիճակ ունեցող մարդկանց կողմից առաջնորդվող այնպիսի մի կազմակերպություն, որը կարող է իր ամբողջ ժամանակը նվիրել այս չարիքն արմատախիլ անելուն»:

## Նահանգապետի կենսագ-մահու ընտրությունը

1974 թվականի փետրվարի 15-ին ՄաքԼեհոզը հայտարարեց Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի (ԿՊԱՀ, անգլերեն՝ ICAC) ստեղծման մասին: ԿՊԱՀ-ը ստանձնեց ոստիկանության ներսում կոռուպցիայի դեմ պայքարի գործը:

Դրանից առաջ Հոնկոնգի ոստիկանության բաժանմունքները, որոնք պարտավոր էին պայքարել կոռուպցիայի դեմ, ասես կույր եւ խուլ էին: Նրանցից օգուտ չկար. այն մարդիկ, ովքեր պարտավոր էին պայքարել կոռուպցիայի դեմ, իրականում կոռումպացված համակարգի բաղկացուցիչ մասն էին: Քանի որ նրանք զբաղված էին իրար հետ ավարները կիսելով, անօգուտ էր նրանցից սպասել, թե իրական պայքար կմղեն կոռուպցիայի դեմ:

ԿՊԱՀ-ի ստեղծման մասին օրենքում ՄակԼեհոզը սահմանում էր, որ ԿՊԱՀ-ը հրամաններն ընդունելու է միայն նահանգապետից եւ ենթակա է լինելու միայն նրա ղեկավարությանը: Այն աշխատելու էր ինքնուրույն՝ առանց Հոնկոնգի կառավարության որեւէ այլ մասի կողմից վերահսկողության կամ սահմանափակման:

Օրենքը նաեւ սահմանում էր, որ ԿՊԱՀ-ը իրավունք էր ունենալու անմիջականորեն ձերբակալելու եւ կալանավորելու կաշառք վերցնելիս բռնված անձանց: Հանձնաժողովի անդամներին տրվելու էր բարձր աշխատավարձ՝ կոռուպցիան բացառելու համար:

ԿՊԱՀ-ի առաջին հանձնակատար սըր Ջեք Քարթերը չափազանց անկախ, անողոք ու խիստ մի մարդ էր, որը նախանձելի տեղեկագիր-



հաշվետվություն էր կազմել՝ Պաղեստինի ու Աֆրիկայի գաղութային անվտանգության եւ իրավաբանական բաժիններում աշխատելիս: Նրա հանձնաժողովի առաջին խնդիրն էր ավարտին հասցնել Փիթեր Գոդբերին պատասխանատվության ենթարկելու գործընթացը:

1975 թվականի հունվարի 7-ին Գոդբերը, որը մեկուկես տարի արտաքսման մեջ էր անցկացրել Մեծ Բրիտանիայում, ԿՊԱՀ-ի կողմից կալանավորվեց եւ Լոնդոնից վերադարձվեց Հոնկոնգ: Պահպանվել են լուսանկարներ, որոնցում զայրացած ամբոխը պահանջում է խստագույնս պատժել նրան, իսկ Գոդբերն ամոթից գլուխը կախել է: Նա մկան պես երկչոտ տեսք ուներ, երբ անցնում էր իրեն մահվան դատապարտել պահանջող ամբոխով լի փողոցը:

Հոնկոնգի դատարանը Գոդբերին երկու առանձին մեղադրանք առաջադրեց՝ կաշառքի դիտավորության եւ կոռուպցիայի համար, եւ դատապարտեց չորս տարվա ազատազրկման: Նրա ստացած կաշառքն ամբողջությամբ առգրավվեց: Գոդբերը կտրականապես հրաժարվեց իրեն մեղավոր ճանաչել եւ չընդունեց դատավճիռը: Նա, դժբախտաբար, դառնալու էր ԿՊԱՀ-ի կողմից բանտարկված առաջին պաշտոնյան: Անքնությունից կարմրած աչքերով՝ նա բղավում էր դատավորի կողմը. «Ես չեմ ընդունի դատավճիռը: Ես պատրաստվում եմ բողոքարկել»:

Գոդբերի բողոքները Հոնկոնգի բարձրագույն վերաքննիչ դատարանին եւ Մեծ Բրիտանիայի գաղտնի խորհրդին մերժվեցին: Ի վերջո նա չորս տարի անցկացրեց ճաղերի ետեւում: Ազատվելուց հետո նա Իսպանիայում ապրում էր մենակյացի կյանքով եւ այլեւս երբեք չվերադարձավ Հոնկոնգ կամ Մեծ Բրիտանիա:

Դրանից կարճ ժամանակ անց ԿՊԱՀ-ը պատերազմ սկսեց կոռուպցիայի դեմ: Ընդամենը տասն ամսում այն գրանցեց 5 958 բողոք կոռուպցիայի դեմ: Դեպքերի բուռն ընթացքի մեջ բացահայտվեց քաղաքում առկա յուրաքանչյուր կոռումպացված կազմակերպություն: 1977 թվականի նոյեմբերին ԿՊԱՀ-ը հետաքննեց կոռուպցիայի վերաբերյալ 3 580 բողոք, որոնցում ներգրավված էին ոստիկանության 260 աշխատակիցներ: Մի դեպքում, մեկ ենթաբաժանմունքում կալանավորվեցին 59 սպա: Բաժանմունքի պետն ինքնասպան եղավ, իսկ ձերբակալվածներից երեքը Բրիտանիայի քաղաքացիներ էին: Կասկածյալներից շա-

## Զժան Ցավեն

տերը կապ ունենի թմրանյութերի մաքսանենգության հետ:

ԿՊԱՀ-ը վախ զգեց ոստիկանության աշխատակիցների սրտերում: Շատ սպաներ որոշեցին վաղաժամկետ կենսաթոշակի անցնել կամ փախչել այնպիսի վայրեր, ինչպիսին Թայվանն է, որ Հոնկոնգի հետ արտահանձնման պայմանագիր չէին կնքել: Այն սպաները, ովքեր սկսել էին «սեւ փողերը» համարել կենսակերպ եւ ապրուստի միջոց, մտածում էին, որ ԿՊԱՀ-ը կտրում է իրենց հիմնական եկամտի աղբյուրը, եւ կրթոտ կերպով ասում էին հանձնաժողովն ու նրա անդամներին:

1977 թվականի հոկտեմբերի 28-ին Հոնկոնգի փողոցներում ցույցի հավաքվեցին ավելի քան երկու հազար ոստիկաններ՝ բղավելով կարգախոսներ, որ պահանջում էին ազատ արձակել իրենց բանտարկյալ ընկերներին, եւ պահանջելով, որ կառավարությունը սահմանափակի ԿՊԱՀ-ի լիազորությունները: Նրանք ուզում էին ճնշում գործադրել կառավարության վրա. «Եթե ԿՊԱՀ-ի լիազորությունները չկրճատվեն, ամբողջ ոստիկանությունը պատրաստվում է գործադուլ հայտարարել եւ դադարեցնել օրենքի կիրարկումը»:

Երբ բողոքի ցույցը հասավ Կենտրոնի ոստիկանության կենտրոնակայան, նրանք բողոքի միջնորդագիր ներկայացրին ոստիկանապետին, եւ ապա անցան ԿՊԱՀ-ի դեմ գրոհի՝ ջարդուփշուր անելով նրա ունեցվածքը, ծեծելով հանձնաժողովի անդամներին,- վիրավորելով նրանցից հինգին,- ծայրահեղ ամբարտավան ագրեսիա դրսևորելով: Օրեր շարունակ ոստիկանները երթով շարժվում էին, գործադուլ անում, անկարգություններ հրահրում՝ իրարանցում եւ անախորժություններ հարուցելով, ավերելով ու ոչնչացնելով գույքը: Մռայլ եւ ծանր իրավիճակ էր:

Նոյեմբերի 5-ին ՄակԼեհոզը հրավիրեց արտակարգ ժողով եւ որոշում կայացրեց, որ հայտարարելու է արտակարգ համաներում: Մինչեւ 1977 թ. հունվարի 1-ը կատարված կոռուպցիայի գործողությունները համարվելու էին ներված (բացառությամբ այն անձանց, ովքեր արդեն կալանավորված էին կամ առանձնապես աչքի ընկնող գործողություններ էին կատարել): Ոստիկանությունը, ստանալով մեկ թիզ, փորձեց մեկ մղոն վերցնել՝ պահանջելով իրենց բոլոր ձեռքակալված ընկերների համար անվերապահ ներում եւ ԿՊԱՀ-ի անհապաղ լուծարումը:

ՄաքԼեհոզը օրենսդիր մարմինն կոչ արեց եւս մեկ արտակարգ նիստ գումարել: Երեսուն ընթացքում այն ընդունեց գաղութի կանոնակարգի փոփոխված տարբերակը, որը վերաբերում էր ոստիկանության ուժերի կառավարմանը. այն ոստիկանապետին իրավունք էր տալիս անհապաղ ազատել ոստիկանության անհնազանդ անդամներին՝ առանց բողոքարկման հնարավորության: ՄաքԼեհոզը հայտարարեց. «Մենք այլեւս զիջումների չենք գնա: Այս համայնքում մեկանգամյա առաջարկ էր, որը չի կրկնվելու»:

ՄաքԼեհոզի վճռականությունը վերջնականապես կոտրեց ոստիկանության գործադրույի մեջքը:

Այդ ընթացքում ԿՊԱՀ-ը շարունակում էր հետապնդել փախուստի դիմած ոստիկաններին եւ սառեցնել ապօրինի ճանապարհով ձեռք բերված ակտիվները: Կոռուպցիայի մեջ կասկածվող՝ ոստիկանության 118 պաշտոնյաներ ստիպված էին վաղաժամկետ թոշակի անցնել՝ առանց բողոքարկման: Հանձնաժողովը մեկը մյուսի ետեւից բացահայտում էր մեծ դեպքերը՝ անմիջապես ձերբակալելով մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում Հոնկոնգի ֆոնդային բորսայի նախագահին, տարածաշրջանի գլխավոր դատախազին եւ օրենսդիր մարմնի մի շարք անդամների:

Հաջողություն ունենալով կոռուպցիայի դեմ պայքարում՝ ԿՊԱՀ-ը նվաճեց Հոնկոնգի բնակիչների հարգանքն ու վստահությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում Հոնկոնգը ճիշտ ուղու վրա էր կանգնել: Կառավարությունը կոշտ դիրքորոշում էր որդեգրել մեղավորների դեմ: Եթե հետքը մեկ մարդու ուղղությամբ էր տանում, ապա մեկ մարդու էին ձերբակալում: Եթե տասը, ձերբակալում էին տասին: Կոռուպցիան վերածվեց ամոթալի մի բանի, իսկ ազնվությունն արդեն դարձավ հարգանքի արժանի: Ամբողջ քաղաքը կոռուպցիայի դեմ անհանդուրժողական դիրքորոշում որդեգրեց: Ստեղծվել էր առաքինի մի շրջան:

Հոնկոնգի բրիտանական վարչակազմը կոռուպցիայի հետ կապված խնդիրները նշել էր դեռ 1862 թվականին: 1898 թ.-ին գաղութային կառավարությունը գործողության մեջ դրեց օրենսգիրքը, որով նախատեսվում էին պատժամիջոցներ քրեորեն պատժելի հանցանքների համար: 1948 թ.-ին այն լրացվեց հատուկ կաշառակերության դեմ ուղղված հետագա կանոնակարգերով: Դրանով, սակայն, կոռուպցիայի

Չժան Յավեն

հետ կապված Հոնկոնգի խնդիրները չուժվեցին: Այդպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ ՄաքԼեհոգի համարձակ ու վճռական բարեփոխումների արդյունքում Հոնկոնգը վերջապես պայքարի մեջ մտավ կոռուպցիայի դեմ: Բարեփոխումներից հետո Հոնկոնգը, որը նման էր բորոտի, որի խոց ու վերքերն անբուժելի էին, դարձավ ծաղկուն, առողջ, բարձր տրամադրությամբ՝ համարձակ մի երիտասարդ: Այն, ինչ ցեխ ու կեղտով լի նեխած քաղաքի մի աղբահոր էր, դարձավ թարմորեն մաքուր կառավարման մի վայր, արեւելքի մարգարիտ, որը հայտնի է աշխարհով մեկ:

### **Հոնկոնգի պաշտոնյաների գլխին կախված դամոկլյան սուրը**

Հասնելով Հյուսիսային ծայրամասում (North Point) գտնվող ԿՊԱՀ-ի գրասենյակների դիմացի մայթեզրը՝ ակնածալից երկյուղ զգացի: Գլուխս վեր պարզեցի, որ նայեմ այդ՝ քսանհինգից ավելի հարկեր ունեցող շենքին, որի առջեւի մասում փակցված ցուցատախտակին գրված էր «ԿՊԱՀ»: Թվաց՝ տեսնում եմ կոռուպցիայի դեմ մարդու պայքարի պատմությունը, մաքուր կառավարման, մարդու՝ կառավարելու ունակության պատմությունը: Թվաց նաեւ, որ կարողանում եմ տեսնել կոռուպցիայի դեմ մարդկության պայքարի ապագան:

Ինձ հետաքրքիր էր՝ ինչպիսի՞ մարդիկ են նստած այս փակ պատուհանների հետեւում: Ինչպիսի՞ հզոր կամք պետք է ունենան, որպեսզի չհրապուրվեն կոռուպցիայի գայթակղություններով: Ինչպիսի՞ սրտեր են այդքան հավատարիմ իրենց պարտականություններին: Ինչպիսի՞ մարդկանցից էր բաղկացած ԿՊԱՀ-ը: Արդյո՞ք նրանք նման էին Կարգուկանոնի վերահսկման կենտրոնական հանձնաժողովի կամ մայրցամաքային Չինաստանի մյուս վերահսկիչ մարմիններին, պետական բոլոր պաշտոնյաներին: Եվ իրե՞նք ինչպիսի սահմանափակումների էին ենթարկվում: Ի վերջո, նրանք նույնպես ապրում էին ցանկություններով ու գայթակղություններով լի աշխարհում: Արդյո՞ք, ինչպես ասեկոսեներն էին հավաստում, նրանց մաքրությունն ու անկաշառությունը երաշխավորված էր նրանց ստացած փոխհատուցմամբ: Ինչպիսի՞ աշ-

խատավարձ էր պետք՝ մարդկային բնույթին հատուկ կոռուպցիոն ցանկությունների դեմն առնելու համար:

Հարցերի մի ամբողջ տիեզերք էր զոյացել: Ես ներս մտա՝ պատասխաններ փնտրելու:

ԿՊԱՀ-ի բարձրաստիճան մի անդամ, որ տարիներ էր անցկացրել կոռուպցիայի դեմ պայքարի խրամատներում, նստեց ինձ հետ զրուցելու: Գավաթից ժամանակ առ ժամանակ կանաչ թեյի մի կում անելով՝ նա երկու առավոտ նվիրեց ինձ հետ զրույցին: Խորագետ մարդու հայացք ուներ էլ լուրջ ու կշռադատված խոսք: Նրա արտաբերած յուրաքանչյուր նախադասություն ներկայացվում էր փորձագետի բառերով՝ ճշգրիտ էլ հիմնավորված: Զրույցն ինձ համար մեծապես օգտակար էր, գրեթե այնպես էի զգում, ասես իրավաբանական դասարան էի հաճախել:

Մեր ծավալուն զրույցում նա քննարկեց մակրո-մակարդակի գործոններ, ինչպիսիք են՝ ազգային իրավական համակարգերը, չինական էլ բրիտանական մշակույթների տարբերությունները, դրանց դրսևորման տարբեր միջավայրերը, աշխատավարձերի տարբեր մակարդակները, շարունակելով անդրադառնալ Հոնկոնգյան օրենքներից էլ կանոնակարգերից շատերին էլ Հոնկոնգում ու մայրցամաքում կոռուպցիայի դեմ պայքարի տարբեր մարտահրավերներին:

Նա պնդում էր, որ կոռուպցիայի դեմ պայքարը համակարգային գործընթաց է: Ըստ նրա, երկիր առ երկիր ապացուցված է, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար նշանակում է կանխարգելման ու ոչնչացման համատեղում, էլ մեխանիզմների ստեղծում, որոնք խրախուսում են մաքուր կառավարումը ինքնազարգացող մեխանիզմների փոխկապակցման ցանցի միջոցով: Եթե ազնիվ, թափանցիկ կառավարությունը լինի տանիք, ապա կարելի է ասել, որ այն կպահվի տասներկու սյունով՝ օրենսդիր մարմին, գործադիր իշխանություն, դատական համակարգ, վերահսկիչ ու բողոքարկման անձնակազմ, հակակոռուպցիոն հաստատություններ, հաշվեքննության (աուդիտի) հանձնաժողով, քաղաքացիական ծառայություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր ձեռնարկություններ, լրատվամիջոցներ, քաղաքացիական հասարակություն էլ միջազգային համագործակցություն:

## Զժան Յավեն

Լավ կառավարման բնագավառում Հոնկոնգի հաջողությունը ևս վերագրում էր երկար տարիների ընթացքում համեմատաբար ամբողջական իրավական համակարգի աստիճանական ձեւավորմանը: Այդ հասուն իրավական համակարգը ներառում է մի միջավայր, որտեղ հարգվում է օրենքի գերակայությունը, կան կոռուպցիան նպատակադրված արմատախիլ անելով զբաղվող հզոր հաստատություններ, խիստ, խելացիորեն մշակված համակարգեր՝ քաղաքացիական ծառայողների վերահսկողության համար եւ հասարակության համար գանազան ուղիներ՝ ամբողջովին վերահսկելու կառավարության աշխատանքը: Որպես հին գվարդիայի կապիտալիստական երկիր՝ Բրիտանիան ունի հիանալի իրավական համակարգ: Բրիտանացիները հարգում են օրենքը, ոչ թե իշխանությունը: Արեւմտյան ազդեցության տակ Հոնկոնգի անցկացրած երկար տարիները նրա ժողովրդին սովորեցրին պահանջել մաքուր կառավարություն եւ հետամուտ լինել արդարադատության ու ազնվության համընդհանուր արժեքներին: Հոնկոնգում Բրիտանիայի կառավարման օրոք, այն փաստը, որ ևսահանգապետը Մեծ Բրիտանիայից գալիս էր մենակ, առանց իր հովանավորությունը վայելող բարեկամների կամ հարազատների, անչափ օգտակար էր ազնիվ, թափանցիկ ձեւով կառավարելու նրա ունակության համար:

Ես կենտրոնակայանից հեռացա ԿՊԱՀ-ի մասին բազմաթիվ նյութերով, այդ թվում՝ նրանց բազմաթիվ կանոնների եւ կանոնակարգերի վերաբերյալ տեղեկություններով: Ժամանակ եւ տեղ խնայելու համար ես դրանց կանդրադառնամ համառոտ:

Հոնկոնգում հայտնի մի նշանաբան կա. Հոնկոնգը հաղթում է, քանի որ մենք ունենք ԿՊԱՀ:

Փող աշխատելու մեջ ոչ մի վատ բան չկա. սխալը երբեմն գալիս է նրանից, թե ինչպես եք դա անում: Արդարությունը չի նշանակում, որ բոլորը հարյուր յուան են աշխատում: Դա նշանակում է, որ եթե հարյուր յուան աշխատելու շնորհք ունես, կարող ես հարյուր յուան աշխատել, իսկ եթե քսանն աշխատելու շնորհք ունես, քսանը կաշխատես: Դա արդարություն է:

Հնարավոր է, որ այսօր դուք ավելի շատ փող աշխատեք, քան ես: Բայց եթե ես ձեզնից ավելի տաղանդավոր եմ, կգա մի օր, երբ ձեզնից ավելի շատ կվաստակեմ:

ԿՊԱՀ-ի բաղկացուցիչ մասերն են՝ ԿՊԱՀ-ի անձնակազմը, Վարչական մասնաճյուղը, Գործառնական վարչությունը, Կոռուպցիայի կանխարգելման վարչությունը եւ Համայնքի հետ կապերի վարչությունը:

ԿՊԱՀ-ի հայտարարված առաքելությունն է՝ պաշտպանել արդարությունը եւ արդարադատությունը Հոնկոնգում եւ ապահովել նրա բարգավաճումը՝ Հոնկոնգի բոլոր բնակիչների հետ միասին աշխատելով անդադար, անխոնջ վճռականությամբ՝ կանխելու կոռուպցիան եւ խթանելով լավ կառավարումը՝ օրենքը, կրթությունն ու կանխարգելումը պահպանելու միջոցով:

ԿՊԱՀ-ի անձնակազմը նշանակվում է գլխավոր գործադիրի կողմից եւ հաշվետու չէ կառավարության ոչ մի այլ ճյուղի: Գլխավոր գործադիրն անմիջականորեն նշանակում է չորս խորհրդատվական հանձնաժողովներ, որոնք վերահսկելու են ԿՊԱՀ-ի ամենօրյա աշխատանքը՝ Կոռուպցիայի հարցերով խորհրդատվական հանձնաժողով, Գործողությունների վերանայման հանձնաժողով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով եւ Համայնքային կապերի հարցերով քաղաքացիների խորհրդատվական հանձնաժողով:

ԿՊԱՀ-ն ունի ներքին հետաքննական եւ վերահսկողական միավորումներ, որ ներքին կարգով կոչվում են «Լ խումբ», որոնք հստակ խնդիր ունեն ապահովելու ԿՊԱՀ-ի աշխատանքի արդյունավետությունն ու ազնվությունը՝ իրավական, լրատվամիջոցների եւ հասարակական վերահսկողության միջոցով ուղղորդելով հանձնաժողովի անձնակազմի արդյունավետ վերահսկումը:

ԿՊԱՀ-ի հարաբերական անկախությունն արտացոլվում է նրա հանրակարգային եւ ֆինանսական տարողության մեջ, այնպես, ինչպես գործեր հարուցելու եւ սեփական անդամներ նշանակելու նրա ունակությունը: Հոնկոնգի օրենքն իր լրատվամիջոցներին մեծ ազատություն է ընձեռում՝ լրագրողներին դարձնելով ամենատես վերահսկողության յուրատեսակ մի համակարգ, որ նկատում է արձանագրում է պետական բարձրաստիճան պաշտոնյաների յուրաքանչյուր քայլն ու գործողությունը: Ցանկացած սխալ կամ սայթաքում, որքան էլ որ փոքր լինի, կտարածվի թերթերի առաջին էջերում: Համեմատաբար մանր իրավախախտումների համար օրինազանցը կարժանանա հասարակական պարսավանքի, խոշոր իրավախախտներն ստիպված կլինեն հրաժար

## Չժան Յավեն

րական տալ եւ կարող են նույնիսկ ենթարկվել իրավական պատասխանատվության:

Հոնկոնգի բնակիչները բացարձակապես անհանդուրժող են կոռուպցիայի հանդեպ: Նրանք անպայման տեղյակ կպահեն, եթե որեւէ մեկը մեկ դուրս անգամ յուրացնի: Մեկ կամ մեկ միլիոն դուրսի ապօրինի յուրացումը երկուսն էլ հանցագործություն են, եւ երկու դեպքում էլ օրինազանցը իրավական գնահատական է ստանալու: Կաշառքը նույնպես հանցանք է: Հոնկոնգը խիստ պատիժներ ունի ինչպես կաշառք տվողի, այնպես էլ կաշառք վերցնողի համար. այդպիսի բան դժվար է պատկերացնել մայրցամաքային Չինաստանում:

Վատ չէր լինի մի քանի օրինակ բերել:

Մի քանի տարի առաջ փոստատարը նամակ տարավ մի տուն: Նա տան ֆիլիպինցի սպասուհուն ասաց. «gung hey fat choy» (*Նոր տարվա, եւ ոչ միայն, շնորհավորանք ու մաղթանք - ծ. թ.*), եւ վերջինս նրան թաքուն մի «կարմիր ծրար» տվեց, որի մեջ երկու հոնկոնգյան դուրս կար: Տանտիրուհին, իմանալով այդ մասին, հայտնեց ԿՊԱՀ-ին, եւ փոստատարին անմիջապես մեղադրանք ներկայացրին: Դատարանում մեղադրող եւ պաշտպանական կողմերը բուռն կերպով բանավիճեցին՝ արդյոք փոստատարի այդ պահվածքը կաշառակերություն էր, թե՞ ոչ: Կողմերից ոչ մեկը չէր ուզում զիջել: Մեղադրող կողմը որպես վկա կանչեց ֆիլիպինցի սպասուհուն եւ հարցրեց. «Եթե դա փոստատարը չլիներ, կտայի՞ք «կարմիր ծրար»:

Սպասուհին պատասխանեց. «Ոչ, չէի տա»:

Ի վերջո դատարանը փոստատարին մեղավոր ճանաչեց կաշառք վերցնելու համար:

Հոնկոնգյան երկու դուրս կաշառք վերցնելու այս դեպքը Հոնկոնգում դարձավ հակակոռուպցիոն լեգենդի պես մի բան եւ գրված է ԿՊԱՀ-ի գործի նյութերի մեջ: Դա նշանակում էր նախազգուշացում եւ կոռուպցիայի նկատմամբ «գրոյական հանդուրժողականության քաղաքականության» դրսեւորում: Անկախ նրանից՝ տվյալ կաշառքը մեկ դուրս էր թե մեկ միլիոն, երկուսն էլ ենթակա էին օրինական պատժի:

2006 թվականի դեկտեմբերին մայրցամաքային Չինաստանի Հունանչժունի մանկավարժական համալսարանից Չեն անունով մի ուսանողուհի եկավ Հոնկոնգի համալսարան՝ մաթեմատիկական գիտու-



թյունների թեկնածուի ծանր աշխատանք սկսելու: Իր առաջադրանքներից առաջ նա տասը հազար հոսկոնգյան դոլար թողեց պրոֆեսորի օգնականի փոստարկղում, որը նույնպես մայրցամաքային Չինաստանից էր, եւ պրոֆեսորից պահանջեց առաջադրանքների հարցերն ու պատասխանները էլեկտրոնային փոստով: Դրանից շատ չանցած՝ պրոֆեսորը նրան խնդրեց հանդիպել: Հանդիպման վայրում պրոֆեսորից բացի նրան երկու սպաներ էին սպասում: Հետեւանքն այն եղավ, որ նա վեց ամիս անցկացրեց ճաղերի ետեւում:

Մայրցամաքային Չինաստանում սովորական բան է՝ ծխախոտ բերել ավտոդպրոց եւ տալ ավտոդպրոցի ուսուցչին՝ «հարաբերություններ բարելավելու» համար: Հոսկոնգում եթե մեկը փորձի նույն բանն անել, կարող է մեղադրվել կաշառք տալու համար:

Հոսկոնգում առաջին հերթին կարելու էր են ոչ թե այլ մարդկանց զգացմունքները, այլ թե որեւէ մեկի վարքագիծը համապատասխանում է արդյոք օրենքին: Կոռուպցիայի եւ կաշառակերության դեմ համակարգված պայքարը օրենքի հանդեպ մեծ հարգանք է ձեռավորել Հոսկոնգի բնակիչների շրջանում: Հեշտ չէ նրանց ստիպել՝ ինքնակամ խախտել օրենքը: Երբ մոտենում է չինական Նոր տարին, նախքան դեկավարին նվեր տալը՝ պետք է հաշվի առնել՝ արդյո՞ք նա կուզի այն ընդունել:

2004 թ.-ին Հոսկոնգի կառավարությունը հրապարակեց իր ամենամյա «Առավելությունների ընդունման (գլխավոր գործադիրի թույլտվություն) ծանուցումը», որը նախատեսում էր, որ հատուկ պայմանների դեպքում, ինչպես, օրինակ, հարսանիքների կամ հուղարկավորությունների ժամանակ, քաղաքացիական ծառայողները չեն կարող երկու հազար հոսկոնգյան դոլարից ավելի արժողության նվերներ ստանալ, իսկ այլ անձանց նվերները չեն կարող գերազանցել հազարը: Սովորական պայմաններում բարեկամներից ստացած նվերները չէին կարող գերազանցել չորս հարյուր հոսկոնգյան դոլարը, իսկ այլ անձանցից նվերներ չէին թույլատրվում: Ենթականներից վերադասներին նվերները բացառապես արգելվում էին: Հոսկոնգի «Կաշառակերությունը կանխելու մասին որոշումը» սահմանում է, որ որոշ մասնագիտությունների «չգրված կանոնները», օրինակ՝ «կարմիր ծրարներ» ընդունող բժիշկները, չեն կարող հիմք ծառայել քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

## Չժան Ցավեն

ԿՊԱՀ-ը նույնքան անողոր ի նաեւ իր շարքերում գործող իրավախախտների հանդեպ: 2003 թվականի ապրիլին «պրև. Լյուն», այն ժամանակ հետաքննության տնօրենի օգնական, գրանցվեց որպես կասկածյալ, որն ստիպել էր հանցանք խոստովանել: Լյուն պատասխանատվության ենթարկվեց արդարադատությանը խոչընդոտելու եւ կեղծ ցուցմունքներ տալու հանցանքների համար եւ դատապարտվեց ինն ամսվա ազատազրկման: 2012 թվականի ապրիլին ոմն «պրև. Չոուի»՝ գլխավոր քննիչ, եւ ոմն «պրև. Չանի»՝ ավագ քննիչ, մեղադրանքներ առաջադրվեցին արդարադատությանը խոչընդոտելու եւ պետական պաշտոնի չարաշահման համար: Նրանք ամեն մեկը դատապարտվեցին երկուսուկես տարվա ազատազրկման, մինչդեռ հետաքննության մեկ այլ տնօրենի օգնական դատապարտվեց մեկուկես տարվա ազատազրկման:

Հոնկոնգը հնարավոր ամեն բան անում է, որպեսզի տարփողի ԿՊԱՀ-ի հաջողությունները: Քաղաքը նույնիսկ ունի շարժական դասասենյակներ, ուր դպրոցականների այցելություններ է կազմակերպում, որպեսզի վաղ տարիքում նրանց մեջ սերմանի հակակոռուպցիոն ոգի եւ բարոյականություն, տեղեկատվական գրքույկներ է բաժանում, որոնք երեխաներին պատմում են, թե ինչ են նշանակում կոռուպցիա եւ կաշառակերություն: Երեխաներին սովորեցնում են հարգել օրենքը վաղ տարիքից, սովորեցնում են, որ կոռուպցիան եւ կաշառակերությունը խայտառակություն են, եւ ազնվության ու ինքնակարգապահության պատիվն է ներարկվում նրանց մատաղ միտք ու հոգիներում:

Ինձ հաջողվեց ձեռք բերել ԿՊԱՀ-ի աշխատավարձերի փաստաթղթերը: ԿՊԱՀ-ի կառավարման մասնաճյուղում հետաքննության տնօրենների օգնականներն ամենացածր վարձատրվողներն են՝ ամսական ստանալով աշխատավարձեր 16 125-ից մինչեւ 28 785 հոնկոնգյան դոլար, հետաքննության տնօրեններն ստանում են 33 205-ից մինչեւ 53 060, մինչդեռ ավագ քննիչներն ստանում են 55 405-ից մինչեւ 71 385, իսկ գլխավոր քննիչները՝ վաստակում են 74 290-ից մինչեւ 92 780 հոնկոնգյան դոլար: Հետաքննությունների ղեկավարն ամսական ստանում է 96 670-ից մինչեւ 103 900 հոնկոնգյան դոլար: ԿՊԱՀ-ի մյուս երկու մասնաճյուղերն օգտագործում են աշխատավարձի այս սանդղակը որպես ուղեցույց տեղեկանք: Բայց ԿՊԱՀ-ի աշխատակիցները քաղաքա-

ցիական ծառայողներ չեն եւ չեն օգտվում որեւէ իշխանությունից:

Սովորաբար աշխատավարձերը Հոնկոնգում ավելի բարձր են, քան մայրցամաքային Չինաստանում: Օրինակ՝ տաքսու վարորդն ամսական ստանում է մոտ տասը հազար հոնկոնգյան դոլար, հյուրանոցի նախասրահում հերթափոխի ղեկավարը կարող է ակնկալել նույնը, իսկ ռեստորանների մատուցողները ամսական ստանում են ութ հազարից տասը հազար հոնկոնգյան դոլար:

ԿՊԱՀ-ն անկեղծորեն ասում է, որ հույսը չի դնում բացառապես առատածեռն աշխատավարձերի վրա՝ ապահովելու համար իր աշխատակիցների ազնվությունը: Առավել կարելու է, ասում է նա, որ գրոյական հանդուրժողականության ոգի է սերմանվում կոռուպցիայի նկատմամբ, եւ երաշխավորվում է, որ կոռուպցիայի յուրաքանչյուր դեպք բացահայտվի, իսկ օրինախախտը ձերբակալվի եւ պատժվի: Բացի իր հանրակարգային վերահսկողությունից, կոռուպցիայի դեմ պայքարում Հոնկոնգը հենվում է չորս կարելու գործոնի վրա՝ օրենքի գերակայության հիմքը, անկախությունը կառավարության գործադիր իշխանությունից, հասարակության բարձրագույն մակարդակներում կոռուպցիայի դեմ պայքարի վճռականությունը եւ քաղաքի բնակչության շրջանում կոռուպցիայի դեմ «գրոյական հանդուրժողականությունը»:

## Կոռուպցիայի վատթարացումը վտանգում է կուսակցությունը եւ երկիրը

Մի քիչ առավոտ քայլում էի Վիկտորիա ծովածոցից անդրադարձող արեւի լույսով ողողված ստվերապատ ճանապարհով: Ընչում էի մաքուր օդը եւ փառավորվում այս վայրի պատմությամբ, որ վերածնվել էր մոխիրներից:

Անցել է երեսունինը տարի 1974 թվականից, երբ հիմնադրվեց ԿՊԱՀ-ը:

Ժամանակն անցել է ակնթարթի պես: Այս կարճ, բայց երկարատեւ ժամանակահատվածում քանի՞ կոռումպացված իշխանավոր ջախջախվեց ժողովրդի երկաթե բազուկներում, քանի՞ կոռումպացված պաշտոնյա թաղվեց արդարության հրացանափողի ներքո, նրանցից

## Չժան Ցավեն

քանի՞սը փակվեցին բանտում: Առավել ուրախալի է այն փաստը, որ Հոնկոնգը հետտնողականորեն բարձր տեղ է զբաղեցրել աշխարհի ամենաքիչ կոռումպացված երկրների շարքում, եւ ԿՊԱՀ-ը հետտնողականորեն գնահատվել է ամբողջ աշխարհում որպես «Ասիայի ամենահաջողակ հակակոռուպցիոն կազմակերպությունը»: 2011 թվականին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպությունը աշխարհի 183 երկրների կամ տարածքների ցանկում Հոնկոնգը դասակարգեց որպես տասներկուերորդ ամենաքիչ կոռումպացվածը, իսկ Ասիայում՝ երկրորդը՝ Սինգապուրից հետո:

Այս առումով, Հոնկոնգը նման է խոց ու վերքերով ծածկված բորոտի, որը դանակի տակ է անցել եւ դուրս եկել մյուս կողմից՝ որպես գեղեցկատես մի երիտասարդ, մեկը, որի գեղեցկությունն ամբողջ աշխարհն է ճանաչել: Այս փաստն ինձ խորհել է տալիս: Անցած տարիների Հոնկոնգի կոռումպացված զավեշտախաղերն այսօր մայրցամաքում բեմադրվում են էլ ավելի մեծ չափերով:

Ոչ գեղարվեստական գրողը միշտ ավելի զգայուն կլինի եւ ավելի ենթակա կլինի թափառող մտքերին՝ ավելի հեշտ մոլորության մեջ ընկնելով մարդու համար անպատասխան հարցերին՝ պատասխաններ որոնելիս: Օրինակ՝ քանի՞ «Գողթեր» է տեսել մայրցամաքային Չինաստանը: Հինգ հարյուր: Հինգ հազար: Իսկ ի՞նչ կասեք հիսուն հազարի մասին: Իսկ որքա՞ն գումար են շռայլել: Հինգ միլիարդ: Հիսուն միլիարդ: Մի՞թե հարյուր միլիարդը չափազանց շատ կլիներ:

Եվ մեկնարկային գծի վրա քանի՞ մերկ պաշտոնյա\* կա, որ պարզապես սպասում է գենքի կրակոցին:

Ըստ պաշտոնական կայքում հրապարակված վիճակագրության, պատժից խուսափած պաշտոնյաներին հետապնդելու համար Գերագույն ժողովրդական դատախազության եւ Հանրային անվտանգության նախարարության կողմից ծավալված միջոցառման ընթացքում 2000-ից մինչեւ 2011 թվականը հաջողվեց բռնել 18 487 կասկածյալի: Այդ արշավի հնգամյա ժամանակահատվածում, դատախազությունը բռ-

---

\* «Մերկ պաշտոնյա» - մայրցամաքային Չինաստանի ժարգոնով՝ այն կոռումպացված պաշտոնյան, որն իր ընտանիքին արտասահման է ուղարկել անազնիվ ճանապարհով ձեռք բերված ունեցվածքի հետ՝ պատրաստվելով իր հնարավոր արտագաղթին:

նագրավեց 54,19 միլիարդ յուանի կեղտոտ դրամական միջոցներ եւ գույք:

Որոշ գիտնականներ կարծում են, որ եթե դեռեւս արտերկրում գտնվող խոշոր կոռումպացված պաշտոնյաների թիվն, ինչպես ընդունված է, կազմում էր տասից քսան հազար, ապա նրանց կուտակված գումարները չեն կարող մեկ տրիլիոն յուանից պակաս լինել: Չկա պաշտոնական ոչ մի միասնական թիվ, որ ես կարողանայի պարզել արտասահմանում գտնվող կոռումպացված պաշտոնյաների կամ նրանց կողոպտած ակտիվների վերաբերյալ: Այս ամոթալի խմբավորման շրջանակներում կան պաշտոնյաներ կուսակցության, կառավարության ու բանակի բոլոր բաժիններից եւ յուրաքանչյուր մարզից ու քաղաքապետարանից: Նրանց ցոփությունն ու ազահությունը, արատավոր բարոյականությունը, սիրուհիների խմբերն այն աստիճանի էին հասել, որ անհնար էր լռել: Երկու նստաշրջանների տարեկան հաշվետվություններից յուրաքանչյուրում\* դատախազությունը մեկ առ մեկ թվարկել է կոռուպցիոն դեպքերը եւ առհասարակ ձերբակալված կոռումպացված պաշտոնյաներին: 2007 թվականից սկսած՝ հինգ տարիների ընթացքում այդ թվերն էին՝

2007- Ձերբակալվել է 4 547 կոռումպացված պաշտոնյա, վերականգնվել է 24,48 միլիարդ յուան կեղտոտ գումար,

2008 - Ձերբակալվել է 1 200 պաշտոնատար անձ, վերականգնված միջոցների քանակը չի հրապարակվում,

2009 - Ձերբակալվել է 1 129 պաշտոնյա (որոնցից ութը եղել են մարզային կառավարման կամ ազգային նախարարների մակարդակում), վերականգնվել է 7,12 միլիարդ կեղտոտ գումար,

2010 - Ձերբակալվել է 1 282 պաշտոնյա (որոնցից վեցը եղել են մարզային կառավարման կամ ազգային նախարարների մակարդակում), վերականգնվել է 7,4 միլիարդ կեղտոտ գումար,

2011 - Ձերբակալվել է 1 631 պաշտոնյա, վերականգնվել է 7,79 միլիարդ կեղտոտ գումար:

\* «Երկու նստաշրջաններ» արտահայտությունը վերաբերում է Ազգային ժողովրդական կոնգրեսին եւ Չինաստանի ժողովրդական քաղաքական խորհրդատվական կոնգրեսին, որոնք տեղի են ունենում միաժամանակ՝ մարտի կեսերին:

## Չժան Ցավեն

2011 թվականին Չինաստանում 142 893 պաշտոնյա է պատժի ենթարկվել կոռուպցիայի համար, 2009-ի 106 626-ից ավելի, վերականգնվել են ավելի քան 8,44 միլիարդ յուանի տնտեսական վնասներ:

2013 թվականի հունվարին Կարգապահական տեսչության կենտրոնական հանձնաժողովը\* հրապարակեց հետեյալ տեղեկությունը, որ 2012 թվականին պատժի է ենթարկվել 160 718 պաշտոնյա, վերականգնվել են 7,83 միլիարդ յուանի տնտեսական վնասներ:

Բացառությամբ 2007 թվականի, ոչ մի տարում կոռուպցիայի դեպքերը չեն նվազել. ավելի շուտ, դրանց կտրուկ աճ է արձանագրվել: Եվ ի՞նչ, քանի՞ կոռումպացված պաշտոնյա է խուսափում իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից: Հնարավոր է, որ դրանց քանակը բռնկվածների քանակից ավելի քիչ լինի:

Լայնորեն հայտնի է, որ կոռուպցիան սզովք է Չինաստանի հասարակ ժողովրդի համար, նրանց ատելության թիրախ մի շանթարգել է: Նրանք ամենուր տեսնում են կոռումպացված պաշտոնյաների, ինչպես մրջյունների գաղութ, ամեն անկյուն ու ճեղք դրանցով է լցված, ոչ մի տեղ մաքուր հողի ոչ մի կտոր չկա: Եվ, ինչպես պրասասոխն է վայրի բնության մեջ, եթե քաղիանում-հեռացնում ես մեկ կոռումպացված պաշտոնյայի, ապա մեկ ուրիշն է աճում՝ նրա տեղը զբաղեցնելու համար: «Եթե անտառային հրդեհները դրանց չայրեն, ապա զարևանային քամու հետ դրանք կրկին կաճեն»: Կոռուպցիան բացասական օրինակ է ամբողջ հասարակության համար եւ կարող է դոմինոյի սկզբունք առաջացնել: Շատերն այն կարծիքին են, թե «ցանկացած մեկը, ով հրաժարվում է կոռումպացված լինելու հնարավորությունից, կզոջա դրա համար», եւ շտապում են ընդօրինակել կոռումպացված պաշտոնյաներին՝ որքան կարող են՝ կառչելով փողից: Պարզապես ցնցող է, թե որքան նման է դա անցած տարիների Հոնկոնգին:

---

\*Չինաստանի կոմունիստական կուսակցության բարձրագույն մարմինը, որ հետաքննում է պատժի է ենթարկում իր այն անդամներին, որոնք կասկածվում են կուսակցության կանոնակարգը խախտելու մեջ:

## Նահատակի բանաստեղծություն, մահից առաջ թողած գրություն, ուշացած զոջում

Չինաստանի որդիներից ու դուստրերից քանի՞սն են արյունահեղ մարտերում կռվել այսօրվա Չինաստանի համար: Քանի՞սն են իրենց թանկարժեք կյանքը զոհաբերել: Քանի՞ հեղափոխական խաղաղ ու հանգիստ գնաց զոհվելու՝ ժպտալով դեպի մահ տանող ճանապարհին: Քանի՞ հերոսի հոգի է անդրաշխարհում մռայլ նստած տեսնում, թե ինչպես է իրենց արյունով ու կյանքով ձեռք բերված երկիրը հոշոտվում, ամբողջությամբ կուլ գնում շահախնդիր ու մակաբույծ խուժանին:

*Տղամարդը չի խոնարհի գլուխն իր վեհ,  
Վախկոտներն են խնդրում միայն՝ «ազատ» լինել:  
Ինձ համար ի՞նչ՝ ծեծը, թույնը, պատիժները,  
Նույնիսկ մահը չի պարզի իմ գաղտնիքները,  
Մահվան դեմքին ես ժպտում եմ ու ծիծաղում,  
Ձայնից՝ դեռ պալատն երկու կես է լինում,  
Կուսակցության անդամս եմ սա խոստովանում...  
Չերձ պահելով մեր ցավից մեր զավակներին՝  
Մենք պատրաստ ենք փտել բանտում անտանելի:  
Մենք նստած ենք այսօր բանտում, ուրիշ ոչինչ,  
Այդ փաստի մեջ դուք մի՛ փնտրեք հատուկ ոչինչ:  
Չերձ պահելով մեր ցավից մեր զավակներին՝  
Մենք պատրաստ ենք  
Փտել բանտում անտանելի:*

Սրանք հեղափոխական նահատակի կողմից աշխարհին թողնված վեհ բանաստեղծության տողերն են, որ նա գրել է մահապատժի գնալուց առաջ:

Իսկ հիմա տեսնենք մեկ այլ մարդու հետմահու կտակը.

Ես ծնվել եմ Ֆուցզյան սահանգի Ֆուչժու քաղաքում, 1944 թվականի դեկտեմբերին: Այդտեղ մանկահասակ անմեղ տղայից դարձա բարձրաստիճան պետական պաշտոնյա, կարելի է ասել՝ կյանքս բարեհաջող էր: Ես չեմ վատնել հորնումորս կողմից ինձ տրված կյանքի պարգևը: Կյանքիս ոլորանների ու վայրիվերումների միջով բարձր աստիճաններով վեր ելնելով՝ ժամանակ առ ժամանակ ծնողներիս եւ ընտանիքիս բերում էի երջանկություն, հուզմունք եւ հպարտություն: Ես պատիվ բերեցի մեր ընտանիքի անվանը: Եվ հիմա կյանքիս այսպիսի ավարտը՝ որպես հանրային ծաղր ու արհամարհանքի առարկա, եւ՝ ծնողներիս, եւ՝ ընտանիքիս համար սոսկալի նվաստացում է եղել:

Նույնիսկ եթե ամեն օր ամբողջ օրս անցկացնեի երազելով, երբեք չէի երազի, որ այսպիսի ավարտի կհասնեմ: Ազատագրումից ի վեր\* ես նախարարական կոչման առաջին պաշտոնատար անձն եմ, որ դատապարտվել եմ մահվան՝ «պարտականությունը չկատարելու» համար: Դատավճիռը լսելիս իմ առաջին արձագանքը ցնցումն էր, ոչ այլ բան: Երկրորդ արձագանքս այն էր, որ չէի կարող ընդունել դատավճիռը. դա չափազանց ծանր էր:

Բայց երբեք չէի սպասում, որ հանրային կարծիքը դրան կողմ կլինի: Բոլորը ծափահարում էին, երբ ինձ մահապատժի էին դատապարտում: Դա ինձ ստիպեց կանգ առնել եւ մտորել: Ինչո՞ւ էի այդպիսի զայրույթ առաջացրել ժողովրդի մեջ: Ինչպես պարզվում է, պատճառն այն էր, որ իմ գերատեսչությունը չափազանց կարետր էր: Իմ աշխատանքը չափազանց կարետր էր: Իմ ունեցած իշխանությունն ուղղակիորեն կապված էր հասարակության անվտանգության եւ ապահովության հետ: Թեեւ ես իմ սեփական ձեռքերով որեւէ մեկին չէի սպանել, քանի որ իմ աշխատանքը չէի կատարել որպես կառավարիչ եւ առաջնորդ, կեղծ դեղերի վաճառքը ծաղկեց, եւ արդյունքը ողբերգությունների շարքն էր: Ես դաս քաղեցի դրանից. երբ մարդ վեր է բարձրանում եւ դառնում ավելի հզոր, անպայման չէ, որ դա լավ բան լինի: Մարդ պետք

---

\* ՉԺՀ-ի հիմնադրումը մայրցամաքային Չինաստանում հաճախ անվանում են «Ազատագրում»:



Է պատասխանատվությամբ կատարի իր պարտականությունները: Որպես պաշտոնյա ծառայելը ինչ-որ մի խաղ չէ. բոլոր հնարավորությունները կան, որ դուք ինձ նման կավարտվեք, եթե ձեր գործը լրջորեն չեք ընդունում:

Իմ մահվան դատավճռից ես իմացա, որ կենտրոնական ղեկավարությունը խիստ վճռական է տրամադրված կոռուպցիայի դեմ պայքարում: Մահից անմիջապես առաջ Վան Հուայժունն\*\* ասել է. «Ես տեսնում եմ, որ կուսակցության Կենտրոնական կոմիտեի պայքարը կոռուպցիայի դեմ այս անգամ իրական է»:

Իմ վերջին ավստասանքն այն է, որ այդքան անփույթ էի իմ պարտականությունների մեջ: Եթե հնարավորություն ստանամ մեկ այլ կյանքով ապրելու, ապա ամեն ինչ այլ կերպ կանեմ: Վաղը ես պետք է մեկ այլ աշխարհի ճանապարհին լինեմ: Ամենաշատը վախենում եմ այն բանից, թե ինչպես եմ դիմագրավելու նրանց հոգիներին, ում մահվան պատճառ եմ դարձել: Աղոթում եմ, որ նրանք կարողանան ներել եւ խնայել ինձ: Այդ առումով արդյո՞ք իմ դատավճիռն արդեն չեմ ստացել:

Դեն Սյաոյույի վերջին նամակը  
2007 թ. հուլիսի 9

Դենի նամակը տպագրվեց «People's Daily» - ում, 2007 թվականին: «Մարդու մահից առաջ նրա խոսքերը ողջամիտ են հնչում, մահից առաջ թռչունն իր վիշտն է ճչում»:

Այն, ինչ տեսնում ենք, Չինաստանի սևնդի եւ դեղորայքի վերահսկման վարչության (ՉՍԴՎՎ) նախկին տնօրենի՝ մահկանացու այս կյանքից հեռանալուց անմիջապես առաջ գրած սրտաբուխ խոսքերն են, որը 6,49 միլիոն յուան կաշառք էր վերցրել:

Դրանք կոռումպացված պաշտոնյայի մտորումներն են իր կյանքի մասին, նրա խոստովանությունը եւ զղջումն իր հանցանքների համար,

\*\* Անհույ նահանգի միջին չափի քաղաքներից մեկի քաղաքապետ, որը մահապատժի է ենթարկվել կոռուպցիայի համար 2004 թվականին:

Զժան Յավեն

ինչպես նաև նրա խորհուրդները մեզնից նրանց համար, ովքեր շարունակում են ապրել: Բայց այդ ուշացած զոջումը, ներառյալ նրա մահվան նախօրեին գրված նամակը, որեւէ նկատելի ազդեցություն չունեցավ կոռումպացված այլ պաշտոնյաների վրա: Վերը բերված տեղեկատվությունը կոռումպացված պաշտոնյաների մասին դա է վկայում: Դենի մահապատժից հետո ամեն բան հանկարծ չբարելավվեց ՉՄԴՎ-ում: Դարձյալ ու դարձյալ շարունակվում էին նոր «միջադեպեր» ի հայտ գալ:

Տվյալների համաձայն՝ Հանչժոուի փոխքաղաքապետ Սյոյ Մայյունը հարյուր ինստունութ միլիոն յուանի չափով կաշառք է վերցրել: Հանչժոուի բնակիչները նրան անվանում էին «Երեք առատություն»՝ առատ փող, առատ տներ եւ առատ կանայք: Նա, ասում են, հարյուրից ավելի սիրուհիներ ուներ: Խայտառակ, անամոթաբար այլասերված անկման այս տեսակը, մարդկանց այսպիսի անասնական քամահրանքն ու ոտնահարումը, այս կեղծիքը, որ հավակնում է ներկայանալ որպես մարդկանց բարեկեցության մասին հոգ տանող պաշտոնյա, իրականում ծաղր է ժողովրդի եւ սեփական երկրի հանդեպ:

## Մի մեծ, պատմական առաքելություն

Կառավարության կողմից հրապարակված վիճակագրությունը ցույց է տալիս, որ պետք է լուրջ վերաբերվել կոռուպցիայի դեմ նրա պայքարին: Եվ այդուհանդերձ, կոռուպցիան դեռ պետք է արմատախիլ արվի, կոռումպացված պաշտոնյաներին դեռ պետք է մինչեւ վերջ հայտնաբերել: Եվ կոռուպցիան միայն ավելի վատ բնույթ է կրում, ավելի վատ դեպքեր են լինում, նախորդներից ավելի կոռումպացված, ավելի ցնցող, դեպքեր:

Բրիտանացի պատմաբան Տոն Դալբերգ-Էքթոնը շատ լավ է գրել. «Իշխանությունը հակված է այլասերման, իսկ բացարձակ իշխանությունը այլասերում է բացարձակապես»:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը կոռուպցիան, գլոբալ

տաքացումը եւ ահաբեկչական կազմակերպությունները համարում է աշխարհին այսօր սպառնացող երեք ամենամեծ վտանգները, իսկ Սինգապուրի նախկին վարչապետ Լի Կուան Յուն մի անգամ ասել է. «Ոչ մի կառավարություն կոռուպցիայից ապահովագրված չէ»:

Իշխանությունն ու կոռուպցիան սերտաճած՝ սիամական երկվորյակների նման են՝ մեկը մյուսից անբաժան: Իսկ ազահությունը մարդկության ամենահիմնական արատն է, որ չի կարող սահմանափակվել բարոյականությամբ կամ ինքնակարգապահությամբ: Կոռուպցիան մարդկության ընդհանուր խնդիրն է, մի խնդիր, որից ոչ մի երկիր չի կարող խուսափել, եւ ամբողջ աշխարհի մարդկանց հատուկ բնորոշ գիծ է:

Եթե նայենք ամբողջ աշխարհին, կտեսնենք, որ գրեթե յուրաքանչյուր զարգացած երկիր անցել է կոռուպցիոն բարձր փուլից ցածր փուլի՝ անողոք ու անզիջում պայքար մղելով կոռուպցիայի դեմ: Բոլոր զարգացած երկրներն աստիճանաբար դասեր քաղեցին պայքարից եւ սկսեցին հաստատել օրենքի գերակայություն: Այդ օրենքն այնուհետեւ շրջվեց կոռուպցիայի դեմ, որպեսզի հասարակությանը տանի ազնվության, թափանցիկության եւ արդարության ճանապարհով:

Ճիշտ ինչպես զարգացող մյուս երկրները, Չինաստանը ներկայումս կոռուպցիայի բուռն տարածման շրջանում է: Արագ զարգացման ընթացքում նրա կարգավորող համակարգը ետ է մնացել, եւ օրենքի գերակայությունը միայն մասնակիորեն է հաստատվել՝ թողնելով սողանցքներ, որոնց միջով հզորները կարող էին դուրս պրծնել: Նրանց համար, ովքեր կաշառակեր էին լինելու, բարոյականությունն ու խղճմտանքը սոսկ արտաբերված բառեր էին. այդ բառերը զսպելու ուժ չունեին:

Ինչու՞ է Չինաստանի կոռուպցիոն խնդիրը, որքան էլ որ եռանդուն պայքար են մղում դրա դեմ, դառնում ավելի լուրջ եւ ավելի համատարած: Ո՞րն է այդ խնդրի արմատը:

Դա բարդ խնդիր է, այնպիսի մի հարց չէ, որ ինձ նման համեստ գրչի մարդը փորձեր ամբողջն ինքնուրույն լուսաբանել: Այն ամենն, ինչ կարող եմ անել, դրան սովորական, հասարակ մարդու աչքերով նայելն է, իմ տեսակետները հայտնելը կոռուպցիայի դեմ պայքարի վերաբեր-

## Չժան Ցավեն

յալ, որպեսզի ընթերցողը եւ ես միասին կարողանանք սիրտ առնել:

Ես կարծում եմ, որ կոռուպցիայի հետ կապված Չինաստանի խնդիրները,

- մարդկային համընդհանուր թերություն ներկայացնելուց բացի, եւ օրենքի գերակայություն չունեցող անթափանցիկ համակարգի արտահայտությունը լինելուց բացի,- բխում են իշխանության մեջ գտնվողների նկատմամբ խստագույն վերահսկողություն սահմանելու հասարակության անկարողությունից: Խնդրի հիմքում ընկած է այն իրողությունը, որ իշխանություն ունեցողների վարքագիծն ու արարքները հասարակության եւ լրատվամիջոցների վերահսկողությանը ենթակա չեն: Հասարակական վերահսկողության մեխանիզմները նման են անվտանգության ամենատես տեսախցիկի եւ ուժեղ զսպիչ գործոն են իշխանության մեջ գտնվողների համար: Նման մեխանիզմների դեպքում նրանք չեն համարձակվի կոռումպացված վարքագիծ դրսևորել: Վատ մտադրություն ունեցողները չեն համարձակվի դրանք արտահայել, քանի որ երբ բացահայտվի նրանց կոռուպցիան, ստիպված են լինելու սարսափելի գին վճարել: Կոռուպցիայի համար վճարվելիք չափազանց բարձր գինը որպես զսպող ուժ է հանդես գալիս հզորների համար: Սինգապուրի ոչ պաշտոնական ազգային կարգախոսն է. «Թող կոռումպացվածները շնորհագրկվեն, եւ նրանց հարստությունն ի չիք դառնա»:

Հոնկոնգը չի հանդուրժում կոռուպցիան: Հասարակական վերահսկողությունը հսկողություն է սահմանում ոչ միայն ուժեղների, այլ նաեւ կառավարության գործադիր իշխանության, նրա կարգապահական վերստուգող հանձնաժողովի եւ նրա հակակոռուպցիոն մարմինների վրա:

Հոնկոնգյան լրատվամիջոցները եւ հաշվեքննիչ (աուդիտորական) հանձնաժողովը երկուսն էլ անողորմ էին Դոնալդ Ցանգին հետապնդելու հարցում: Դա ինձ ստիպում է մտածել՝ կարո՞ղ էին արդյոք մեր մայրցամաքային Չինաստանի հաշվեքննիչ ստորաբաժանումները համարձակվել աուդիտի ենթարկել կուսակցության գավառական հանձնաժողովի քարտուղարին կամ նահանգապետին: Եվ եթե խնդիրներ բացահայտեին, արդյո՞ք կհամարձակվեին դրանք հրապարակել:

Բայց ԿՊԱՀ-ն անկախ է եւ ենթակա չէ գործադիրի վերահսկողությանը: Թեեւ մայրցամաքային Չինաստանի հասարակությունը ամեն օր նզովում է կոռումպացված պաշտոնյաներին, բայց նզովքն այն ամենն է, ինչ կարող են անել: Չկա իրական վերահսկողության համակարգ, եւ ընդհանուր համակարգը հասարակությանը թույլ չի տալիս կառավարությանը վերահսկելու իրավասություն ունենալ: Հասարակությունն արդեն անտարբեր ու անզգա է դարձել կոռուպցիայից, համր ու ընդարմացած, չափից դուրս ուժասպառ՝ անզամ նզովելու համար կոռուպցիան:

Ոմանք ասում են, որ կոռուպցիան դարձել է կենսակերպ, հասարակության մեջ ներթափանցած միջավայր, - մի բան, որը բոլորը դատապարտում են, մինչդեռ գաղտնի ցանկանում են վայելել դրա պտուղները, հասարակության հիվանդության ախտանիշ: Կասկած չի կարող լինել, որ կոռուպցիան կապված է ազգի ճակատագրի եւ չին ժողովրդի ապագայի հետ: Այլապես ՉԿԿ կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Սի Ցզինպինը երբեք չէր հրապարակի իր հայտարարությունը՝ բավականաչափ ուժեղ եւ ազդեցիկ՝ մեռածներին արթնացնելու համար, որ «եթե կոռուպցիան վատթարանում է, ապա դա միայն կհանգեցնի կուսակցության եւ երկրի կործանմանը»:

Կոռուպցիան հզոր խավերի շրջանում կոռուպցիա է սերմանում ամբողջ հասարակության մեջ: Դա մեծապես ազդում է ամեն ինչի վրա, ինչպես, օրինակ, պաշտոնի բարձրացումն է, աշխատանք գտնելն ու բուհ ընդունվելը, նաեւ այնպիսի փոքր բաները, ինչպես, ասենք. երեխաներին մանկապարտեզում տեղավորելն է եւ դասարաններում աշակերտների տեղերը փոխելը, ամեն ինչ այն աստիճանի է հասել, որ կաշառակերությունն անհրաժեշտ է նույնիսկ ամենափոքր բանի համար: Ես հաստատ համոզված եմ, որ ոչ մի չինացի ոչ մի տեղ չէր ուզի՝ երբեւէ այնպես լիներ, որ կոռումպացված պաշտոնյաները քայքայած լինեին այլասերվածության դեմ կառուցած պատվարը, եւ այն չկարողանար կեղտոտ հեղեղի դեմն առնել: Եթե այս կերպ շարունակվի, նույնիսկ հազարավոր մղոններ երկարությամբ երկաթբետոնե Մեծ պարիսպը չի կարողանա զսպել սոցիալական այդ հիվանդության անկասելի ախորժակը: Ներողություն խնդրելով Հոնկոնգի ժողովրդից՝ Դո-

## Զժան Յավեն

Նալդ Յանգն իր խոսքում ասաց. «Ես ձգտում եմ ոչ թե իմ սեփական հեղինակությունը վերականգնել, այլ վերականգնել մարդկանց վստահությունը կառավարության՝ իր պետական պարտքն ազնվորեն կատարելու կարողության հանդեպ»:

Նա, ով շահել է ժողովրդի սիրտը, իսկապես շահել է ամեն բան երկնի ներքո: Ինչպե՞ս պետք է պատժվի կոռուպցիան: Ինչպե՞ս արմատախիլ անել կեղտն ու արատը, եւ վերադարձնել մեր մեծ երկրի մաքրությունը: Սա ծայրաստիճան կարեւորության, առավելագույն լրջության խնդիր է, որի հետ առնչվում է կենտրոնական ղեկավարությունը:

Կարծում եմ, որ մի երկրի համար առանձնապես դժվար չէ ստեղծել հակակոռուպցիոն հաստատություններ, ոչ էլ դժվար է կաշառակերությունն ու կոռուպցիան արգելող օրենքներ ստեղծել, կամ թղթի վրա ստեղծել վերահսկողության մի ամբողջ համակարգ: Դժվարն օրենքի կառուցվածքին եւ վերահսկող մեխանիզմներին խստորեն հետեւելն է, հզոր, կայուն հուսալիություն ստեղծելը, որ համակարգից թափանցում է հասարակության վերին, բարձրագույն շերտերը: Ահա թե որն է ամենակարեւորը:

Մի ակնարկում գրված էր՝ Ֆրանսիայում եւ Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած արդյունաբերական հեղափոխությունները եւ Ճապոնիայում Մեյձի հեղափոխական վերականգնումը ցույց տվեցին, որ բոլոր այդ երկրներն անցնում են կոռուպցիայի ուշագրավ շրջանների: Բայց օրենքի գերակայության եւ կոռուպցիայի դեմ պայքարի հաստատությունների ստեղծման միջոցով՝ այդ երկրները քիչ թե շատ կարողացան հաղթահարել կաթվածահար անող «բարձր կոռուպցիան», որ առաջացել էր աֆրիկյան այդքան շատ երկրների համար բնութագրական՝ արդյունաբերականացմամբ եւ արդիականացմամբ պայմանավորված ներքին հզոր պահանջարկով եւ դեպի «ցածր կոռուպցիայի մակարդակ ունեցող» պետություններ անցումով:

Ակնարկում ասվում էր. «Չինաստանը կոռուպցիայի դեմ պայքարի խաչմերուկում է: Մնում է տեսնել՝ արդյոք կանցնի՞ մյուս կողմը: Եթե չկարողանա, հավերժ կմնա զարգացող երկիր: Գիտակցելով կոռուպցիան եւ պայքարելով դրա դեմ՝ չենք կարող բավարարվել զուտ բարոյական խիստ դատապարտմամբ. ավելի շուտ, իրավական եւ սոցիալա-

կան հաստատություններ ստեղծելու միջոցով, պետք է աստիճանաբար զսպենք եւ ետ մղենք կոռուպցիան»:

«Ռոանսփարենսի Ինթերնեյշնլը»-ը նախկինում ասել է, որ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված բարեփոխումները, զսպելով շահագրգիռ խմբերին եւ ծայրահեղ բյուրոկրատիան, կարող են առաջ գնալ միայն հասարակության բարձրագույն ղեկավարների կայուն աջակցությամբ:

Կուսակցության 18-րդ համագումարից հետո Չինաստանի հասարակությունն ի գիտություն է ընդունել Չինաստանի կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարի հզոր հանձնառությունը, որն ազդարարել է հակակոռուպցիոն մի շարք միջոցառումների մասին:

2012 թվականի նոյեմբերի 15-ին, Սի Ցզինպինի՝ գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակվելու առաջին օրը, նա հրապարակեց իր հայտարարությունը, որը բավականաչափ զորեղ էր մեռյալներին արթնացնելու համար. «Մենք ունենք բազմաթիվ փաստեր, որոնցից պարզ երևում է, որ եթե կոռուպցիան վատթարանա, ապա դա միայն կհանգեցնի կուսակցության եւ երկրի կործանմանը: Մենք պետք է զգոն լինենք»:

Տեսնելով Կուսակցության կենտրոնական կոմիտեի այդ վճռակառությունը կոռուպցիայի դեմ պայքարում՝ իհարկե, հասարակությունն արտահայտել է իր գոհունակությունը:

Կոռուպցիայի դեմ այդ աննախադեպ, հասարակական լայնամասշտաբ գրոհի պատճառով՝ միջադեպերը մեկը մյուսի ետեւից հայտնվում էին համացանցում՝ անազնիվ գործարքներ, սեքս հանուն իշխանության, սրընթաց վերելքներ... յուրաքանչյուր նոր օր, թվում էր, մի նոր լուր է բերում կոռուպցիայի պատճառով պաշտոնանկ արված այս կամ այն պաշտոնյայի մասին: Հասարակությունը դարձել էր գրոհող հիմնական ուժը՝ դամոկլեսյան սրի պես ամենահաս դարձած համացանցի հետ մեկտեղ: Կոռուպցիայի դեմ այս վերից վար, հասարակական լայնամասշտաբ կեցվածքը միակ արդյունավետ միջոցն է կոռումպացված պաշտոնյաներից ազատվելու, այնպես անելու, որ «կոռումպացվածները շնորհագրկվեն, եւ նրանց հարստությունն ի չիք դառնա»: Մեծ ազգը եւ մեծ ժողովուրդը պետք է կարողանան ուղիղ նայել ճշմարտու-

### Չժան Ցավեն

թյան աչքերին, կտրել-վերացնել սեփական արատները, նույնիսկ եթե դա նշանակում է սեփական մարմնից կտրել: Դրա պարզելը առողջ, հզոր մարմինն է: Միայն այս կերպ մենք կարող ենք ստանձնել չին ազգի ուժերի վերականգնման և երիտասարդացման մեծ խնդիրը:

Ես լիովին հավատացած եմ, որ շատ շուտով Հեռավոր Արևելքում կհառնի ազնիվ և թափանցիկ կառավարվող Չինաստանը:



ԳԼՈՒԽ 8

ԻՆՉԻ՞ ԵՆ ՄԵՉ ԿՈՉՈՒՄ ԱՆՑԱԾ ԴԱՐԵՐԸ

**Նվաստացում եւ դիմադրություն**

Հարցազրույցների համար ես երկու անգամ մեկնել եմ Հոնկոնգ եւ մեկ ամսից ավելի անցկացրել եմ այնտեղ: Գիտեմ, որ Հոնկոնգը բարդ մի տեղ է, որը դժվար է հասկանալ: Ինձ նման մեկի համար, ով պարզապես անցել է այդտեղով, անհնար է թափանցել նրա գաղտնիքների մեջ եւ ըմբռնել դրանք: Ես կարող եմ միայն ներկայացնել այդտեղով անցնող դիտորդին երեւացող համայնապատկերը եւ ընթերցողին պատմել այն, ինչ տեսել եմ ու լսել, մտածել եմ ու զգացել:

Երբ ետ ենք նայում Հոնկոնգի պատմությանը, հետադարձ հայացք ենք գցում Չինաստանի նվաստացման պատմության, արյան եւ արցունքների, պատերազմի եւ դիմադրության պատմության միջով: Հոնկոնգի գաղութային տարիների պատմությունն ընթերցելիս տեսնում ենք, որ դա Չինաստանի ժողովրդի արյամբ եւ արցունքներով ներծծված պատմություն է, ասես քայլ ենք գցում մեր կախիկների ծեծված ու ջարդված կրծքավանդակի վրայով: Բոլորին են լսելի չին ազգի տանջանքի աղաղակները, նրա վշտի եւ վրդովմունքի ճիչերը, ասես նայում են արևակարմիր մայրամուտին, տեսնում անթիվ հայրենակիցների, ովքեր պայքարում են, լացում ու դիմադրում, չնայած իրենց անհույս վիճակին:

Մեծ Բրիտանիայի՝ որպես իմպերիալիստական տերության վերելքը հիմնված էր զավթողական քաղաքականության վրա: Հազիվ էր հրաժարվել սեւ ստրուկների վաճառքից, երբ սկսեց զբաղվել Չինաստանի «դեղին ստրուկների» առետրով: Բրիտանիան մեծ թվով չինացիներ էր ուղարկում Միացյալ Նահանգներ՝ որպես բանվորական ուժ, եւ դրանից մեծ գումարներ էր աշխատում: Դա անվանում էին «խոճկորների վաճառք», իսկ այն տարածքները, որտեղ պահում էին գերեզարկված չինացիներին, «խոզանոցներ»: Առետրով զբաղվող բրիտանացիները նիզակներ էին կրում, որոնցով խոցում էին անզեն չինացիներին՝ ստիպելով «կամովին» իրենց մատնահետքերը դրոշմել այն պայմանագրե-

## Զժան Յավեն

րի վրա, ըստ որոնց նրանք վաճառում էին իրենք իրենց: Եթե հրաժարվեին, ապա տեղում սաստիկ ծեծի կենթարկվեին: Չին բանվորները կարող էին միայն լաց լինել: Իրենց վաճառելով՝ նրանք բարձրում էին նավերը եւ առաքվում օվկիանոսից անդին: Նրանց ճակատագիրը ողբերգական էր, անկախ այն բանից՝ կապրեին թե կմեռնեին: Նրանց տեղափոխող նավերը համեմատվում էին «օվկիանոսը կտրող դժոխքների» հետ: Բրիտանացի գրող Ֆրենկ Ուելչն իր «Հոնկոնգի պատմություն» գրքում գրել է, որ այդպիսի մի նավ երեք հարյուր երեսուներկու չին բանվոր էր տեղափոխում, որոնցից հարյուր քսանութը նավարկության ժամանակ ինքնասպան եղան:

Արտասահմանցի մի միսիոներ հիշում էր. «Նույնիսկ հիմա չեմ կարող մոռանալ դա եւ կհիշեմ մինչեւ մահվանս օրը, այդ խղճալի հայացքը բանվորների դեմքին: Իմ համոզմամբ՝ դրանից ավելի մեծ դժբախտություն չկա մարդու համար: Այդ տարաբախտ չինացիներն ստրկությունից ավելի դաժան ճակատագրի են ընդառաջ գնում»:

Ծովից անդին վաճառված չինացիները ստիպված էին դիմանալ խտրականությանը եւ նվաստացմանը, այն բոլոր դժվարություններին, որոնք կրում են թույլ երկրի հասարակ մարդիկ, որ զուրկ են ապահովությունից ու անվտանգությունից: Նրանց ուղարկում էին արեւմտյան ԱՄՆ՝ ոսկի լվացագտելու եւ ամերիկացիների երկաթուղիները կառուցելու: Ամերիկացիները տեսնում էին կարճ կապած հյուսքերով եւ կարճահասակ չին բանվորներին, տեսնում էին, որ նրանք աշխատասեր են: Վերջիններս բարձր էին գնահատվում իրենց տերերի կողմից: Բայց դրանով մյուս բանվորների նախանձն էին միայն վաստակում, որոնք մոլեռանդորեն նվաստացնում, կողոպտում եւ նույնիսկ կոտորում էին չին բանվորներին. այդպիսի արյունալի միջադեպերն անպակաս էին: 1871 թվականի հոկտեմբերի 24-ին մի քանի հարյուր կովկասցիներ Լոս Անջելեսում, Կալե դե Լոս Նեգրոսի անկարգությունների ժամանակ, սպանեցին տասնինը չինացիների:

1880 թ. հոկտեմբերի 13-ին ավելի քան երեք հազար կովկասցիներ ներխուժեցին Կոլորադո նահանգի Դենվեր քաղաքի կենտրոն եւ շրջապատեցին չինացիների տնային տնտեսությունը: Անթիվ չինացիներ վիրավորվեցին, եւ հիսուն հազար ԱՄՆ դոլարի (այն ժամանակ դա մեծ գումար էր) կորուստ եղավ:

1885 թ. սեպտեմբերի 2-ին «Յունիոն փեսիֆիք ռեյդուոդ» ընկերության սպիտակամորթ հանքափորները մահացու ծեծի ենթարկեցին քսանութ չին բանվորների: Տասնհինգը վիրավորվեցին, իսկ երեք հարյուրին արտաքսեցին: Ավելի քան հարյուր հիսուն հազար դոլարի կորուստներ եղան:

1882 թվականի մայիսի 6-ին Լախագահ Չեսթեր Ա. Արթուրը ստորագրեց «Չինաստանի բացառման մասին օրենքը»՝ տասը տարով արգելելով չին բանվորների ներգաղթը ԱՄՆ: 1892-ին օրենքը երկարաձգվեց եւս տաս տարով: 1904-ին արգելքը երկարաձգվեց անորոշ ժամանակով: Այս անհիմն օրենքն ուժի մեջ էր մնալու մինչեւ 1943 թվականը:

Կոռումպացված, անկարող Ցին կառավարությունը, որը հազիվ իր համար էր կարողանում հոգ տանել, բացարձակապես անգոր էր օգնել հեռավոր Ամերիկայում գտնվող Չինաստանի քաղաքացիներին: Հոնկոնգի չին ժողովուրդը նույնպես անզլիացի գաղութարարների կոշտ վերահսկողության, խտրականության եւ վիրավորանքների թիրախ դարձավ:

1857 թվականի հունվարին Հոնկոնգի բրիտանական կառավարությունը հրապարակեց իր «Տեղական անվտանգության պաշտպանության մասին որոշումները», որով ոստիկանության արտոնեց «գիշերային անցաթղթեր» տալ: Եթե որեւիցե չինացի գիշերային ժամերին հայտնաբերվեր տնից դուրս, առանց այդպիսի անցաթղթի, խաղաղության պաշտպաններն իրավունք ունեին տեղում պատժի որոշում կայացնել, որը կարող էր ներառել տուգանք՝ մեկից մինչեւ հիսուն հոնկոնգյան դոլարի չափով, ազատագրելով՝ մեկից տասնչորս օր, կամ քսան եւ ավելի մտրակի հարված: Եթե որեւէ անձ կասկածվում էր զաղտնի սաղրիչ լինելու, անկարգություններ հրահրելու կամ ծովահենության համար, Լահանգապետը եւ գաղութային կառավարությունն իրավունք ունեին նրան արտաքսել մայրցամաքային Չինաստան: Եթե պարետային սահմանված ժամից հետո դրսում բռնված որեւէ չինացի կասկածվում էր ապօրինի դավադրության համար, ոստիկանությունն իրավունք ուներ տեղում մահապատժի ենթարկել նրան: Գաղութային վարչակազմը հարթակներ կառուցեց չին բնակչությանը հատուկ ի տես հանրության մտրակելու համար, այնպիսի տեղերում, որ բոլորին տե-

## Չժան Յավեն

սանելի էին: Չին բնակչությանը գցում էին ևաւ ցանկապատնէշի մէջ՝ որպէս հասարակական պատիժ:

Այդ ժամանակվա լուսանկարներում երեւում են ոտքերին փականներ դրված հանցագործներ՝ նստած փողոցում բոլորի աչքի առջեւ, ցանկապատնէշների մէջ, իսկ նրանց ետեւում կանգնած է զինված հնդիկ ոստիկանը: Այդ չինացիների համար դա խիստ նվաստացուցիչ վիճակ էր:

Չին ժողովրդին հանրության աչքի առջեւ մտրակելու պատիժը շարունակվեց քսան տարի, որից հետո փոխարինվեց սովորական բանտարկությամբ: Բայց այն ժամանակ դա լայնորեն տարածված էր: Պարզապէս հանրային վայրում միգելու համար մարդ կարող էր մտրակահարվել:

Ինչպէս Ֆրենկ Ռելշն է գրում իր «Հոնկոնգի պատմություն» գրքում, 1877 թվականին Լի Այի անունով մի չինացի չորս տարվա ընթացքում դատապարտվել էր մտրակի երկու հարյուր քառասուն հարվածի: Նրա մարմնի վերին մասը հարվածներից վերածվել էր արյունոտ, սպիւներով ծածկված մի զանգվածի:

Երբ ճապոնացիները գրավեցին Հոնկոնգը, նրա ժողովուրդն առավել վատ նվաստացումների ու զրկանքների ենթարկվեց: Չինացի մեկ բժիշկ անձամբ բուժել էր ավելի քան տասը հազար կանանց, ովքեր բռնաբարության զոհ էին դարձել: Անթիվ չինացիների ծեռքերին ճապոնական սվիններով բացված անցքեր կային, որպէսզի նրանք, միջատների նման, դրանց միջով անցնող պարանի վրա մի գծով շարված լինեին. ողբերգական մի տեսարան, որ չափազանց սարսափելի էր, որպէսզի նայողը կարողանար դիմանալ:

Գոյատեւելու եւ իր արժանապատվությունը պահելու համար Հոնկոնգի ժողովուրդը դիմադրության երկարատեւ ու համառ պատերազմ մղեց: Այն ժամանակվա գործադուլներն ու աշխատանքի դադարեցումներն աննկարագրելի էին չինական աշխատանքի պատմության մէջ: Առավել հայտնին, անկասկած, հոնկոնգյան նավաստիների գործադուլն էր: 1922 թվականի հունվարին Հոնկոնգի չին նավաստիները միացան հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչ՝ իրենց չինաստանցի հայրենակիցների հետ՝ ավելի քան հարյուր հազար մարդու մասնակցությամբ զանգվածային գործադուլ կազմակերպելու ի նշան

բողոքի ցածր աշխատավարձի, հավասար աշխատանքի համար անհավասար վարձատրության եւ իրենց նկատմամբ կիրառած շարունակական նվաստացման ու խտրականության դեմ, որ իրենց տառապանք էր պատճառում: Գործադուլավորները, փառահեղ այիքի պես հորձանք տալով, ճանապարհ ընկան դեպի Գուանչժոու, բայց բրիտանական ոստիկանությունը զենքով դիմավորեց նրանց Շա Տինում, Նոր տարածքներում: Վեց գործադուլավոր զոհվեց, իսկ տասնյակ մարդիկ վիրավորվեցին: Տնցող այդ դեպքն ամբողջ աշխարհում հայտնի դարձավ որպես «Շա Տինի կոտորած»: Գործադուլը շարունակվեց հիսուսվեց օր, որի ընթացքում «անուշահոտ նավահանգիստը» դարձավ «մեռած», «գարշահոտ» նավահանգիստ: Իշխանություններն այլընտրանք չունեին, բացի նավաստիների առաջարկած բոլոր պայմաններն ընդունելուց: Ի նշան իրենց հոնկոնգցի հայրենակիցների հետ համերաշխության՝ Գուանչժոուի բանվորները երթի հարյուր հազարավոր մասնակիցներով հսկայական բողոքի ցույց կազմակերպեցին՝ տոնելու Հոնկոնգի գործադուլավորների հաղթանակը:

1925 թվականին Շանհայում բռնկվեց Մայիսերեսուկյան շարժումը: Հոնկոնգցի բանվորները ոգետրությամբ արձագանքեցին այդ կոչին՝ բողոքելով բրիտանական իշխանությունների դեմ: 1949 թվականի նոյեմբերի 9-ին, ՉԺՀ-ի հիմնադրումից կարճ ժամանակ անց, Չինաստանի ազգային ավիացիոն կորպորացիայի գլխավոր տնօրեն Լյու Ցզինյին եւ Կենտրոնական ավիատրանսպորտային կորպորացիայի գլխավոր տնօրեն Չեն Չժուլինը Հոնկոնգում իրենց ընկերության երեք հազար աշխատակիցների, դեպի Պեկին եւ Տյանցզին թռչող տասներկու ինքնաթիռների առաջնորդեցին ապստամբության եւ Գոմինդանի վերահսկողությունից դուրս գալու, ինչը հայտնի էր դառնալու որպես «Երկու ավիառդիների ապստամբություն»: Նոյեմբերի 13-ին Չժոու Էնլայը հայտարարեց, որ ընկերությունների՝ Հոնկոնգում մնացած բոլոր ակտիվները, այդ թվում՝ յոթանասունմեկ ինքնաթիռ, այդուհետ պատկանում էին Չինաստանի ժողովրդական Հանրապետությանը:

ՉԺՀ-ի հիմնադրումից հետո Հոնկոնգում գործադուլները հաճախակի դարձան: 1960-ից 1970 թվականներին գրանցվել է 193 գործադուլ: Գործադուլավոր բանվորների երթերը դաժան ճնշման էին ենթարկվում զինված գաղութային ոստիկանության կողմից: Չինաստանի ար-

## Չժան Յավեն

տաքին գործերի նախարարությունը բազմիցս իր «ամենախիստ բողոքն» է ներկայացրել բրիտանական կառավարությանը: 1973 թվականի հունիսին Հոնկոնգի ժողովուրդը բողոքի հսկայական ցույց կազմակերպեց՝ «ընդդեմ կոռուպցիայի եւ Գողբերի [ծերբակալման պահանջով]»՝ պահանջելով ձերբակալել եւ վերադարձնել փախուստի դիմած բրիտանական ոստիկանության աշխատակից Փիթըր Գողբերին՝ փորձելով ստիպել բրիտանական իշխանություններին կտրուկ գործողություններ ձեռնարկել՝ ավագակախմբերի եւ եռյակ խմբերի կողմից դեկավարվող քաղաքի դժոխային խառնաշփոթը կարգի բերելու համար: 1970 թվականին Միացյալ Նահանգների հոնկոնգցի եւ թայվանցի ուսանողները դաշինք ստեղծեցին՝ պաշտպանելու Դյաոյույ կղզիները, դա արտասահմանում առաջացած՝ նմանատիպ ամենավաղ շարժումն էր: 1996 թվականի սեպտեմբերի 2-ին Հոնկոնգում ստեղծվեց «Դյաոյույ կղզիների պաշտպանության գործողությունների կոմիտե», սեպտեմբերի 16-ին Հոնկոնգում պաշտոնապես հայտարարվեց «Դյաոյույ կղզիների պաշտպանության համընդհանուր չինական դաշինքի» ստեղծումը:

Ճապոնիայի դեմ պատերազմի ժամանակ հոնկոնգցիները շատուշատ հեղափոխականների պատսպարեցին եւ պաշտպանեցին: Հոնկոնգից մայրցամաքային Չինաստան ուղարկվեցին խիստ անիրաժեշտ բժշկական եւ ռազմական պարագաներ: Պատմությունը վճռել էր, որ Հոնկոնգը պետք է մեկ դար անցկացներ գաղութատիրական իշխանության ներքո: Բայց ժողովրդի ոգին մնաց անկոտրում, եւ նրա ողնաշարը չճկվեց:

Հոնկոնգի ժողովուրդը պայքարում էր ազատության, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների համար:

Հոնկոնգի պատմությունից ես հստակ տեսնում եմ, որ քաղաքը Սուն Յաթ-սենի հեղափոխական մտքի հոգեւոր ծննդավայրն է, զինված ապստամբության ծրագրման հողն ու հենարանը, եւ Սինհայական հեղափոխության\* հենակետը:

Սունը եւ իր հեղափոխական ընկերները Հոնկոնգում են հիմնել «Չի-

---

\* Սուն Յաթ-սենի գաղափարներով տոգորված՝ 1911 թվականի զինված ապստամբությունը, որը տապալեց Ցին գահատոհմը:

նաստանի վերաճության ընկերությունը»՝ կատաղի հարձակումներ գործելով Ցին կառավարության անկումային եւ հետադիմական վարչակարգի վրա. «Քաղաքականությունը լավ կառավարված չէ, հիմնարկները բարոյապես վարկաբեկված են, դատարանը վաճառում է կոչումներ ու պաշտոններ եւ հրապարակայնորեն ի ցույց է դնում իր կոռուպցիոն բնույթը, մինչդեռ կառավարությունն անբարո կերպով շահագործում է ժողովրդին ու նրա հողը: Ավագակները եւ սովն ամենուր են, մինչ հասարակ մարդիկ ողբում են դաշտերում՝ հազիվ կարողանալով օրվա ապրուստը վաստակել»:

Սույն ծրագրեց տասը առանձին զինված ապստամբություն, որոնցից վեցը սկիզբ առան Հոնկոնգից: Քաղաքն, անկասկած, հայրենասիրական ապստամբության օրրան է, նրանց հայրենիքը, ովքեր ամբողջ սրտով սիրում են իրենց երկիրը:

## Ընդհանուր արյուն, ընդհանուր հաղթանակներ

Պատմությունը մեզ ասում է, որ Հոնկոնգը եւ մայրցամաքային Չինաստանը «նույնքան մոտ են, որքան շուրթերն ու ատամները», «միահյուսված միս ու ոսկոր են»:

Երբ հոնկոնգցիները գործադուլների ժամանակ հանդիպեցին բրիտանական բռնաճնշումների, նրանք փառահեղ ալիքի պես հորձանք տալով շարժվեցին դեպի Գուանչժոու՝ նետվելով հայրենիքի գիրկը: Երբ մայրցամաքի նրանց հայրենակիցները կրակի տակ ընկան որպես ծայրահեղ «ծախականներ», նրանք խմբերով փախչում էին դեպի Հոնկոնգի առաջարկած անվտանգ նավահանգիստը:

1960-ականներին, ամեն տարի Գարնանային փառատոնի ժամանակ, մայրցամաքի բնակիչները տեսնում էին, որ իրար հաջորդող երկաթուղային վագոններ՝ ավանդական մայրցամաքային մսային կերակրատեսակներով լի,- խոզի միս Հունանից, տավարի միս Շենսիից եւ Սիչուանից, գառան միս Ներքին Մոնղոլիայից,- շարժվում էին Հոնկոնգի ուղղությամբ: Չժոու Էկայն իր անձնական բարեմաղթանքներն էր հղում՝ ասելով, որ Հոնկոնգի ժողովուրդը Գարնանային փառատոնին արժանի է ամենալավ մսային ուտեստները ճաշակելու:

Չժան Յավեն

Հոնկոնգը մշտապես մաքուր ջրի խիստ պակաս է զգացել: 1950-60-ական թվականներին քաղաքում այդ թեմայով մի ոտանավոր էին արտասանում:

*Լուսինն է փայլում Հոնկոնգի վրա:*

*Լեռան լճակներում ջուր չկա, հողը ցորեն չունի:*

*Մորաքույրս գնաց ջուր բերելու, մայրիկս գնաց աղոթելու:*

*Ո՛վ գիտե՝ ե՛րբ ջուր կգտնվի:*

1960 թվականին բրիտանացի նահանգապետ Սըր Ռոբերտ Բլեքը որոշեց փոխել նախորդ նահանգապետերի «մայրցամաքային Չինաստանից ոչ մի ջուր» ծիծաղելի քաղաքականությունը՝ պատվիրակություն ուղարկելով Շենչժեն՝ տեղական իշխանությունների հետ ջրամատակարարման հարցերը քննարկելու համար, ովքեր շտապ որոշեցին Շենչժենի ջրամբարից մեկ միլիարդ գալոն ջուր բաց թողնել Հոնկոնգի օգտագործման համար: 1963 թվականին Հոնկոնգին պատուհասեց վաթսուն տարվա մեջ ամենասաստիկ երաշտը: Այդ տարվա ամռանը երկինքը կրակի պես այրվում էր, իսկ ջուրը հոսում էր յուրաքանչյուր չորս օրը մեկ՝ ընդամենը չորս ժամ: Կենցաղային ջրամբարները փակ էին, գործում էին միայն մի քանի հանրային ջրամբար: Տուրն աղամանի պես թանկ էր: Գուանդունի նահանգապետը հայտարարություն տարածեց, որ Հոնկոնգին անվճար ջուր կտրամադրվի:

1963-ի վերջին Չժոու Էլայը տեղեկացավ, որ Հոնկոնգը ջրի խիստ կարիք ունի: Նա անմիջապես հրամայեց, որ մայրցամաքային Չինաստանի Դունցյան գետից ջուրը ջրանցքով տեղափոխվի Հոնկոնգ: Վարչապետի հավանությամբ՝ տասնյակ հազարավոր զինվորներ մոբիլիզացվեցին՝ Դունցյան գետից դեպի Հոնկոնգ ջրանցք կառուցելու համար: Տրանցքի վրա աշխատանքներն սկսվեցին 1964 թվականի փետրվարի 20-ին:

Հոնկոնգի բնակիչներին Դունցյանի ջուրը հասցնելու գործընթացն արագացնելու համար զինվորների խմբերին աշխատեցնում էին որպես բանվորներ: Երիտասարդներից մեկն ամուսնացել էր ընդամենը երկու օր առաջ, հազիվ թե հասցներ մեղրամսի համար պատրաստվել, երբ զորակոչվեց շինհրապարակ: Բանվորներից ոմանք վաթսուն



Եւ ավելի տարիք ունեցող ճերմակամազ ծեր տղամարդիկ էին: Ոմանք էլ տասնութն անգամ չբոլորած երիտասարդ կին հրամանատարներ էին: Նրանք ջրանցքը կառուցում էին կոպիտ լեռնային ապարների միջով, միջատների պարսերով պարուրված: Շատերը վնասում էին ոտքերը, փտախտ ստանում: Շատերը բարկ արելից մաշկի սաստիկ այրվածքներ էին ստանում: Ոչ ոք, սակայն, Լույսիսկ չէր տրտնջում, հակառակը՝ իրենց գործն անում էին եռանդով ու խանդավառությամբ: Ամենուր հնչում էին քլունգների, մուրճերի ձայներ, մարդիկ կարգախոսներ էին բղավում: Գիշերները խռմփոցների ձայնը որոտի պես թնդում էր ճամբարներում:

Դունգուանում, Ցյաոտոու ավանի մոտի իր հյուսիսային վերջնակետից Դունցզյանի ջրանցքի հունն անցնում էր հիդրոէլեկտրակայանների ութ հարթության միջով: Դրանք ջրի հոսքը հակառակ ուղղությամբ ուղղորդում էին ավելի քան ութսուն կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շենչժենի ջրամբարը, որտեղից այն կարող էր երեքուկես կիլոմետր երկարությամբ խողովակաշարով հոսել դեպի Հոնկոնգի 3,7 միլիոն բնակչի տուն:

Նախագծի աշխատանքներն սկսվեցին 1964-ի փետրվարին Եւ ավարտվեցին 1965-ի հունվարին: 1964-ի մարտին ջուրը սկսեց հոսել լեռների Եւ հովիտների միջով՝ ուրախ կարկաչով հոսելով դեպի Հոնկոնգի միլիոնավոր երախտապարտ բնակիչների չոր ու անջուր տները:

Այդ օրվանից սկսած՝ Հոնկոնգի բնակիչներն այլևս երբեք պատճառ չունեցան կրկնելու երաշտի մասին իրենց մոռյալ քառյակը:

Ջուրը կյանքի աղբյուրն է: Այն ընդհանուր արյան խորհրդանիշն է, որը հոսում է չինաստանցիների Եւ հոնկոնգցիների երակներով: Դունցզյանի նախագիծը մեծ ներդրում էր չին ժողովրդի միասնության հանդեպ վստահության համար, Եւ Չինաստանի սիրո խոր դրսևորումն էր Հոնկոնգի մեր հայրենակիցների նկատմամբ:

Լույսիսկ տիկին Թեթչերը՝ Երկաթե լեզին է իր հուշերում հիշատակել Դունցզյանի նախագիծը՝ ասելով. «Դունցզյան գետը խոր սեր ու ջերմություն է բերում, նրա ջուրն օգուտ է տալիս Հոնկոնգի բնակչությանը: Գուանդունը Եւ Հոնկոնգը երկուսն էլ խմում են այդ ջրից Եւ միասին բարգավաճում»:

2008 թվականին, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը

## ԶԺԱՆ ՅԱՎԵՆ

հարվածեց Հոնկոնգին, վարչապետ Վեն Ցոյաբաուն Դոնալդ Ցանգին ասաց. «Կենտրոնական կառավարությունն ամեն ինչ կանի, որպեսզի աջակցի Հոնկոնգին եւ հաղթահարի այն դժվարությունները, որոնք համաշխարհային ֆինանսական ճգնաժամը բերեց Հոնկոնգի տնտեսական զարգացմանը: Հուսով եմք, որ Հոնկոնգը կշարունակի զարգանալ եւ բարգավաճել»:

Վարչապետ Վենն առաջարկեց ձեռնարկել տասնչորս առանձին միջոցառում՝ Հոնկոնգի եւ մայրցամաքային Չինաստանի միջեւ ֆինանսական համագործակցության ամրապնդում, Հոնկոնգին առնչվող ենթակառուցվածքների ամրապնդում, Հոնկոնգի եւ Մարգարտե գետի գետաբերանի շրջանի միջեւ համագործակցության խթանում, արդյունավետ գործողությունների ձեռնարկում մայրցամաքային Չինաստանում գործող հոնկոնգյան ընկերություններին, հատկապես դժվարություններ ունեցող փոքր եւ միջին ձեռնարկություններին օգնելու համար, դեպի մայրցամաքային սպասարկման ոլորտներ Հոնկոնգի հետագա բաց եւ հասանելի լինելու ապահովում, [դեպի Հոնկոնգ] անհատական ճանապարհորդների թվաքանակի ավելացում եւ հնարավոր ամեն ինչի ձեռնարկում՝ Հոնկոնգում սննդամթերքի, ջրի, էլեկտրակառուցության եւ բնական գազի անվտանգ, կայուն մատակարարումն ապահովելու համար:

Անկասկած, հայրենիքը Հոնկոնգի համար հզոր աջակից ու հովանավոր էր, մինչդեռ Հոնկոնգը եղել է հայրենիքի՝ դեպի աշխարհն ուղղված բաց պատուհանը:

Հոնկոնգի տնտեսական իրավիճակն ավելի լավ հասկանալու համար ես մի առավոտ անցկացրի փորձագետի հետ զրուցելով, որն ուսումնասիրում է տարածքի տնտեսությունը: Փորձագետն ինձ ցույց տվեց 1997-ից մինչեւ 2011 թվականը Հոնկոնգի աճը ներկայացնող տվյալներ: Նա ասաց, որ քաղաքի աճը, ձկնորսական փոքր գյուղից մինչեւ իր ներկայիս վիճակը, կարելի էր բաժանել չորս որոշակի փուլերի.

Առաջին փուլ. 19-րդ դարից մինչեւ 1940-ական թվականները՝ Հոնկոնգը հիմնականում ծովային բեռնափոխադրման (ներառյալ՝ թեյ, համեմունք, ափիոն եւ ճենապակի) կետի դեր էր կատարում:

Երկրորդ փուլ. 1940-ականներից մինչեւ 1960-ական թվականները՝ ծովային բեռնափոխադրումը սկսեց տեղը զիջել այնպիսի թեթեւ արդ-

յունաբերական ապրանքների արտադրության, ինչպիսիք են տեքստիլ, հագուստի եւ ժամացույցի արտադրությունը:

Երրորդ փուլ. 1960-ականներից մինչեւ 1970-ական թվականները Հոնկոնգը սկսեց ուսումնասիրել միջազգային առաջատար տեխնոլոգիաները եւ թեթեւ արդյունաբերության հետ մեկտեղ զարգացնել ծանր արդյունաբերությունը:

Չորրորդ փուլ. 1970-ականներից մինչեւ 1997 թվականը հոնկոնգցիները հնարավորություն սկսեցին մայրցամաքային Չինաստանում տարվող Բարեփոխման եւ Բաց դռների քաղաքականության մեջ եւ սկսեցին իրենց մշակող արդյունաբերությունների արտադրությունները տեղափոխել հյուսիս՝ Մարգարտե գետի գետաբերան, Դուլգուան եւ այլ շրջաններ: Հոնկոնգի տնտեսությունը սկսեց կենտրոնանալ ֆինանսների, ծովային բեռնափոխադրման եւ առետրի ոլորտներում:

Հոնկոնգյան տնտեսությունը զարգացել է դեմքով դեպի աշխարհը՝ իր թիկունքում ունենալով հայրենիքի 1,3 միլիարդ բնակչությունը: Իր տնտեսական յուրաքանչյուր վերափոխման ընթացքում Հոնկոնգն անբաժան մնաց մայրցամաքից եւ իսկապես սերտորեն միահյուսված էր այնտեղ տիրող ընդհանուր իրավիճակի հետ: Իհարկե, երկար տարիներ Հոնկոնգը քաղաքականապես առանձնացած է եղել մայրցամաքային Չինաստանից, եւ նրա բնակիչները կարող էին ապավինել միայն սեփական ջանքերին՝ ստանձնելու համար աշխարհի մարտահրավերները: Այժմ, սակայն, մայրցամաքը եւ Հոնկոնգը միավորել են իրենց ջանքերը՝ փոխշահավետ ամուր կապով համալրելով մեկը մյուսի ուժեղ կողմերը: Հոնկոնգը ֆինանսների, առետրի եւ նավային բեռնափոխադրման աշխարհահռչակ կենտրոն է: Մայրցամաքային Չինաստանին վերադառնալուց հետո, տարիների ընթացքում Հոնկոնգն անցել է Ասիայի ֆինանսական ճգնաժամի, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի, ոչ տիպիկ թոքաբորբի դժվարությունների միջով եւ դիմակայել մի շարք այլ մարտահրավերների: Բայց նրա տնտեսությունը շարունակել է աճել կայուն տեմպերով: 2004 թ.-ին, CEPA-ի (Ավելի սերտ տնտեսական գործընկերության պայմանավորվածություն) իրագործումից հետո, մայրցամաքային Չինաստանը հանեց ներմուծման բոլոր տուրքերը հոնկոնգյան ապրանքների վրայից:

Երկու երկրների տնտեսություններն ամեն օր ավելի են մերձենում՝

Զժան Ցավեն

օգնելով խթանել Հոնկոնգի արդյունաբերության կառուցվածքային վերականգնումը և առաջ մղել նրա տնտեսական աճը:

Տվյալները հետեւյալն են ասում: Տեղի խնայման համար ընտրել եմ մի քանի հիմնական կետ:

*1997-ին Հոնկոնգի ընդհանուր ՀՆԱ-ն կազմել է 1,365 տրիլիոն հոնկոնգյան դոլար, 2007-ին այն 1,6156 տրիլիոն էր, իսկ 2011-ին՝ 1,8939 տրիլիոն:*

*Իրական ՀՆԱ-ի աճը՝ 1997 թ.-ին՝ 5,1%, 2007 թ.-ին՝ 6,4%, 2011 թ.-ին՝ 5%:*

*Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 1997 թ.-ին՝ 27 000 ԱՄՆ դոլար, 2007 թ.-ին՝ 29 900 ԱՄՆ դոլար, 2011 թվականին՝ 34 300 ԱՄՆ դոլար:*

*Գնաճ-ը՝ 1997 թ.-ին՝ 5,8%, 2007 թ.-ին՝ 2%, 2011 թ.-ին՝ 5,3%:*

Փորձագետը նաև նշեց, որ, հասնելով զարգացման ներկայիս աստիճանին, Հոնկոնգի տնտեսությունը խոր հակասությունների առջև է կանգնել, և նրա ավանդական բիզնես մոդելները բազմիցս վիճարկվել են: Մինչ այդ գերակշռում էր առեւտուրը, և մայրցամաքային Չինաստանը դեռ պետք է բացվեր. Հոնկոնգը մայրցամաքային ապրանքների առաջնային բաշխման կենտրոնն էր: Այն բանից հետո, երբ մայրցամաքային Չինաստանը ձեռնարկեց հզոր, հիմնարար բարեփոխումներ ու անցավ բաց քաղաքականության և անմիջականորեն կապվեց միջազգային տնտեսության հետ, Հոնկոնգում առեւտրի շրջանառությունն անկում ապրեց: Այժմ Հոնկոնգը հենվում է ֆինանսների, առեւտրի, նավային բեռնափոխադրման և սպասարկման ոլորտների վրա, բայց համեմատաբար թույլ է զարգացած արտադրական և բարձր տեխնոլոգիաների հետազոտման ոլորտում: Նրա սոցիալական կառուցվածքները կարծրացած են, և նոր տնտեսական աճի աղբյուրները սահմանափակվել են: Քաղաքը պետք է սկսի զարգացնել նոր արդյունաբերություններ, ինչպես, օրինակ, հետազոտությունների և մշակման բարձր տեխնոլոգիական կենտրոններ, որպեսզի նպաստի տնտեսական անցմանը և լուծի ժողովրդի կենսապահովման խնդիրները: Անցած տարիների ընթացքում Հոնկոնգի արտադրության մեծ մասը տեղափոխվել է Մարգարտե գետի գետաբերան: Այժմ, նույնիսկ

Հոնկոնգի պես փոքրիկ վայրում, կան բավականին շատ դատարկ գործարաններ: Քաղաքը պետք է միջոց գտնի դրանք օգտագործելու համար: Հոնկոնգը պետք է ունենա իր մշակող արդյունաբերությունը:

Մեր գրույցի ավարտին փորձագետը քննարկեց կառավարության եւ տնտեսության միջեւ փոխհարաբերությունները՝ ասելով, որ այդ երկուսն անխզելիորեն կապված են: Նա նշեց, որ Հոնկոնգյան ներկայիս համակարգը դեռ կատարելագործման կարիք ունի մի քանի առումով: Գործադիր մարմնի շատ առաջարկներ չեն կարող անցնել LegCo-ով, ինչի արդյունքում կառավարության քաղաքականությունը հնարավոր չէ իրականացնել: Որպես օրինակ օգտագործելով բարձր արագությանը զննարկների համար երկաթուղու կառուցումը Հոնկոնգի եւ Մարգարտե գետի գետաբերանի միջեւ՝ փորձագետը նշեց, որ հակառակորդներն օգտագործել են հնարավոր բոլոր միջոցները՝ խոչընդոտ հանդիսանալու համար այդ՝ առնվազն շահեկան նախագծին: Նրանք հետաձգել էին նախագիծը՝ հսկայական տնտեսական կորուստներ պատճառելով:

Խոսակցությունն ինձ համար Հոնկոնգի տնտեսական զարգացման նոր, ավելի լուսավոր հեռանկար բացեց:

## **Դուք ոչ թե ազգային դրոշն եք այրում, այլ չին ժողովրդի արժանապատվությունը**

Երբ Հոնկոնգում էի, ականատես եղա երկու քաղաքական հավաքների: Մեկը երեկոյան մոմավառություն էր Վիկտորիա զբոսայգում: Մյուսը երթ էր: Ասում էին, որ երթը տեղի էր ունենում մայրցամաքային Չինաստանից եկած մի բնակչի պատճառով, որն ինքնասպան էր եղել:

Այդ օրը կեսօրից հետո ժամը 4-ին ես տաքսիով հասա Քոնսոթ ռուդի մոտ գտնվող հյուրանոց՝ տեսնելու Պեկինից եկած մի ընկերոջ, որը եկել էր Հոնկոնգ՝ արձակուրդն անցկացնելու: Տաքսին հասավ ճանապարհի ճյուղավորմանը: Երթեւեկությունն առջեւում խցանվել էր: Տաքսին չէր կարող շարժվել:

Դա ինձ տարօրինակ թվաց. ինչո՞ւ էր խցանում առաջացել: Հոնկոնգում ճանապարհները լայն չեն, բայց խցանումները դեռ համեմատա-

բար հազվադեպ են: Բացեցի պատուհանը՝ դուրս նայելու համար: Այն ամենն, ինչ կարող էի տեսնել, փողոցների երկու կողմերում հավաքված դիտողներն էին եւ ոստիկանությունը, որ կանգնած կարգն էր պահպանում՝ հետիոտներին ու ավտոմեքենաներին արգելելով անցնել: Ճանապարհն առջեւում լի էր մարդկանցով:

Սկսեցի հետաքրքրվել, թե արդյո՞ք ինչ-որ բան է տեղի ունենում: Տաքսու վարորդը մի քանի զայրացած խոսք ասաց Կանտոնի կոպիտ առողջանոթյամբ. «Խրվել մնացել ենք, ստիպված եք այստեղ դուրս ցատկել»: Նա կանգնեցրեց մեքենայի հաշվիչը:

«Ի՞նչ է կատարվում: Ինչո՞ւ եք ինձ ստիպում դուրս գալ մեքենայից: Դեռ տեղ չենք հասել»:

«Չե՞ք տեսնում: Առջեւում բողոքի ցույց է: Ճանապարհը փակ է, ոչինչ չեմ կարող անել»: Նա մի քանի անգամ զայրացած ազդանշան տվեց՝ արտահայտելով իր հուսահատ վրդովմունքը:

Ի՞նչ կարող էի անել: Դուրս եկա մեքենայից եւ մխրճվեցի մարդկանց զանգվածի մեջ: Առաջ նայեցի, բայց միայն մարդկանց խմբերն էի տեսնում: Իմ գլխավերեւում ոլորապտույտ գորշածերմակ ծուխ էր բարձրանում, ասես մեկն ինչ-որ բան էր այրում: Դա շատ հեռու էր, ես չէի կարող տեսնել, թե ինչ են այրում:

Անհանգստացած հարցրի կողքիս գտնվող միջին տարիքի տղամարդուն, թե ինչ է տեղի ունենում: Նա քրթմնջոցով պատասխանեց. «Ինչ-որ մեկն այրում է ազգային դրոշը»:

Ի՞նչ: Ինչ-որ մեկն այրում է ազգային դրոշը հենց այդտեղ փողոցում, օրը ցերեկո՞վ: Ես շփոթված էի, ապշած եւ տարակուսած: Անհանգիստ նայեցի ծխի ուղղությամբ, բայց միայն տեսա, որ մարդիկ ծխացող ինչ-որ բան էին բռնել եւ թափահարում էին:

Հանկարծ պարզ նկատեցի այրվող առարկայի գույնը: Ցանկացած չինացի կճանաչեր այդ վառ կարմիրը, այդ կենսախիղճ դեղին գույնը:

Ապշած էի: Սիրտս սկսեց ավելի արագ զարկել, արյունս եռում էր: Զգացի, որ պարուրված եմ հույզերի ալիքով, որը դժվար էր զսպել:

Բայց բանականությունս կարողացավ ինձ ետ պահել: Ես ինձ զգուշացրի. «Սա Հոնկոնգն է: Սա ազատ աշխարհն է: Սա նման չէ մայրցամաքային Չինաստանին»: Բայց ինձ պարուրած ցատումն այնպիսին էր, որ շատ դժվար էր վերահսկել:

Ես չհասկացա մայրցամաքային չինաստանցու մահվան հանգամանքները, ուստի չէի կարող խոսել այդ մասին: Բայց, ինչպես ասաց Հոնկոնգի մի քաղաքացի. «Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը ճանաչվում է ՄԱԿ-ի կողմից որպես երկիր, եւ նրա դրոշը նրա խորհրդանիշն է: Հոնկոնգը վերադարձվել է Չինաստանին ավելի քան մեկ տասնամյակ առաջ. ոչ ոք իրավունք չունի այրելու իր երկրի դրոշը: Նման վարքագիծը, որ լի է չբացահայտված շարժառիթներով, ազգային արժանապատվության հանդեպ կանխամտածված արհամարհանքի դրսևորումով, պետք է խստորեն ճնշվի»:

Ազգային դրոշը երկրի հոգին է, նրա ազգային արժանապատվության խորհրդանիշը: Անկասկած, Չինաստանի դրոշը ժողովրդական Հանրապետության հոգին է եւ նրա արժանապատվության խորհրդանիշը:

Հաստատ համոզված եմ, որ ոչ մի երկիր, ոչ մի տարածաշրջան երբեւէ թույլ չի տա, որ իր ազգային դրոշն անամոթաբար այրվի օրը ցերեկով: Ազգային արժանապատվության այդ ոտնահարումը խստորեն դատապարտվելու է, կամ նույնիսկ ենթակա է իրավական պատժի ցանկացած երկրում: Հետաքրքիր է՝ բրիտանացիներն իրենց կառավարման ժամանակ թույլ կտային, որ Մեծ Բրիտանիայի դրոշն այրվեր հենց իրենց աչքի առջեւ:

Մինչդեռ այստեղ՝ Չինաստանի հողի վրա, իր ժողովրդի աչքի առջեւ, կային մարդիկ, ովքեր այրում էին մեր երկրի դրոշը՝ ոտնահարելով մեր ազգային արժանապատվությունը, եւ ոչ ոք նրանց կանգնեցնելու փորձ իսկ չէր անում: Հավատս չէր գալիս:

Ցավն այն է, որ Հոնկոնգը չունի այդպիսի արարքներն արգելող օրենքներ:

Ոմանք ասում են, թե դրոշը սոսկ խորհրդանիշ է, եւ դրոշն այրելը պարզապես ինչ-որ մեկի համար զայրույթն արտահայտելու միջոց է:

Ճիշտ է, դրոշը խորհրդանիշ է՝ ազգի ոգու խորհրդանիշը: Դա Չինաստանի ժողովրդական Հանրապետության խորհրդանիշն է ՄԱԿ-ում եւ աշխարհի ժողովուրդների համար: Դրոշը կեղտոտ լաթի կտոր չէ, որը կարող եք ձեր կամքով ներկել կամ այրել: Առավել եւս՝ եք ինչ-որ մեկն իր անձնական տրամադրությունը կամ զայրույթն է արտահայտում:

## Չժան Յավեն

«Նա, ով ինքնակամ հնազանդվել է անարդար օրենքներին, ով հանդուրժելու է իր երկիրը ոտնահարող օտար մարդկանց, իսկական տղամարդ չէ»: Սրանք կուբացի բանաստեղծ Խոսե Մարտիի հայտնի բառերն են:

Եթե ես, որպես Կրակե կայսեր եւ Դեղին կայսեր հետևորդ, որպես չինացի, արդարության այդ փոքրիկ մասն անզամ չունեմ, այդ դեպքում մի՞թե մենք խղճահարության արժանի ժողովուրդ չենք:

Հայտնի փաստ է, որ այսօրվա Չինաստանը հեշտությամբ չի ձեռք բերվել: Չինաստանի որդիներից ու դուստրերից քանի՞սն իրենց արյունը թափեցին՝ իրենց թանկարժեք կյանքը տալով՝ Ֆեոդալական գահատոհմը տապալելու, զավթիչներին պարտության մատնելու եւ մեր երկրի ժողովրդին ազատագրելու համար: Ես նկատի ունեմ ոչ միայն Կոմունիստական կուսակցության անդամներին, այլ նաեւ Գոմինդանի եւ Չինաստանի այլ ժողովրդավարական կուսակցությունների միլիոնավոր անդամներին\*: «Հեղափոխությունը չի հաջողվել: Կամավորները պետք է շարունակեն իրենց ջանքերը ներդնել»:- Հանգուցյալ Սուն Յաթ-սենի իմաստուն այս խոսքերը դեռ հնչում են մեր ականջներում:

«Ես հառաչում եմ իմ հսկայական երկրի կորստյան համար, ամաչում եմ ապրել, քանի դեռ այն փրկելու ուղիներ չունեմ: Հուսով եմ՝ կմիավորեմ բաժանված ու ցրիվ եկած մարդկանց՝ վերակենդանացնելու համար մեռյալ Չու Լահանգը, բայց Տին շահագործող պետության վրա հարձակվելու սուր չկա: Ես միայն հիմա եմ գիտակցում, թե որքան փոքր կլինի մեր ժողովուրդը, երբ իմ ազգը ձախողվի, բայց իմ բարոյական ձգտումը չի սահմանափակվում իմ դատարկ գրպաններով: Ես իմ հեղափոխությունը չեմ հաջողել, բայց տոնում եմ ընկերներիս հետ: Արցունքները հոսում են դեմքիս վրայով, երբ բռնում եմ սուրս»:<sup>1</sup> Սրանք հանրահայտ Ցզին լճի հերոսուհի Ցյու Ցզինի վերջին խոսքերն են, որոնք նա հակահեղափոխականների կողմից իր սպանությունից առաջ փորագրել էր բանտախցի պատերին:

\* Կոմունիստական կուսակցությունից բացի, Չինաստանն ունի եւս 8 պաշտոնապես հաստատված քաղաքական կուսակցություն, որոնք բոլորն էլ ունեն համեմատաբար փոքր թվով անդամներ: Նրանց անվանում են «ժողովրդավարական» կուսակցություններ:



1949 թվականի նոյեմբերին, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից մեկ ամիս հետո, հարյուրավոր հեղափոխականներ բանտարկվեցին և նետվեցին Չունցինի բանտի թշվառ խորշը՝ դեռ չհասցրած տեսնել վերածնված Չինաստանի լույսի առաջին ճառագայթները: Գոմինդանի կողմից մահապատժի ենթարկվելուց առաջ նրանք մտադիր էին կարել ՉԺԿ-ի իրենց դրոշը: Աչքներն արցունքներով լի, շուրթերով համբուրելով նոր ծնունդ առած Չինաստանի այս խորհրդանիշը, «Կամավորների երթը» երգելով՝ նրանք նետվեցին մահապատժի հրապարակ. «Ելե՛ք: Բոլոր նրանք, ովքեր հրաժարվում են ստրուկ լինելուց: Թող մեր մարմինը և արյունը դառնան մեր նոր Մեծ պարիսպը: Քանի որ չինական ժողովուրդը կանգնած է մեծագույն վտանգի առջե՛ս...»:

Պատմության արձագանքները լսելը, ժողովրդի հոգու աղաղակները լսելը գուցե բավարար լինեն մեր քնած հոգիներն արթնացնելու համար: Ես մեծագույն հարգանք եմ տածում մեր երկրի հեղափոխականների հանդեպ, անկախ նրանից՝ Չինաստանի կոմունիստական կուսակցությունից՝ ես, Գոմինդանից, թե՛ անկուսակցական: Ի սրտե հիանում եմ նրանցով: Նրանք մեր ազգի ողնաշարն են, չին ժողովրդի ճշմարիտ Էությունը:

Մտածե՛ք այս մասին. եթե չլինեին չին ազգի այս որդիներն ու դուստրերը, ովքե՞ր էին պատրաստ ստանձնելու իրենց ժողովրդի առաքելությունը, հսկայական զոհաբերությունների գնալու, արդյո՞ք մեր երկիրը, սեխի պես բաժան-բաժան արված, Ֆեոդալիզմի ճիրաններում բանտարկված, կիսով չափ կուլ գնացած գաղութատիրությանը, երբեք կկատարեր դա մինչ օրս:

Մտածե՛ք այս մասին. եթե մեր ժողովուրդը գերադասեր իր բոլոր օրերն անցկացնել թմրամոլի մահճակալին թիկնած՝ վախկոտների նման ափիոն կլանելով, եթե բոլորը դավաճաններ լինեին, ովքեր ցանկանում էին վաճառել իրենց երկիրը մի քանի գարշահոտ մետաղադրամով, եթե բոլորը երկար տարիներ վախենային ու լռեին ինքնակալ բռնատիրության ներքո, արդյո՞ք վաղուց մեր ազգը բաժանված և կուլ գնացած չէր լինի՝ որպես արտասահմանյան տերությունների համար համեղ մի կերակուր:

Ետ նայելով մեր երկրի նվաստացման երկար պատմությանը՝ կա-

## Չժան Յավեն

րելի է տեսնել, թե ինչպիսի բնորոշումներ էին տալիս օտարերկրյա տերությունները Չինաստանի ժողովրդին. «Ասիայի հիվանդ մարդը», «խոզեր», «ափիոնային ուրվականներ», «խոզի պոչեր», «չինամարդ» և «չինացի ստրուկներ»: Տեսնելով, թե ինչպես են Սուև Յանը և Ե Շիվեն\* առաջինը ճանապարհի հարթում դեպի վերջնագիծ՝ անհերքելի տպավորիչ հաղթանակներ տանելով, իրենց կրկնվող շքերթներում ճեղքելով մրցույթի անհաղթահարելի օղակները և հասնելով հաղթողի ամբիոնին, տեսնելով, թե ինչպես է «Շենչժուու 9-ը» բարեհաջող վերադառնում երկիր, տեսնելով, թե ինչպես է չինական նավատորմը հզոր էշելոսներով նավարկում Հարավչինական ծովով, տեսնելով, որ Չինաստանը դառնում է երկրորդ ամենամեծ տնտեսությունն ունեցող երկիրն աշխարհում,- Չինաստանի ժողովուրդը հպարտության զգացում է ապրում: Որպես Կրակե և Դեղին կայսրերի հետևորդ՝ մի՞թե չի կարելի հպարտություն զգալ նման նվաճումների համար:

Վեր բարձրացող ժողովուրդը պետք է բարձր պահի իր ոգին, պետք է օգտագործի իր միասնական ուժը՝ իրեն դրսևորելու համար: Բոլորը պետք է հավաքվեն, օգտվեն իրենց տրված եզակի հնարավորությունից և միասին աշխատեն՝ գեղեցիկ ապագա կերտելու համար:

## Ի՞նչ է մեզ ասում «ՎիքիԼիքսը»

Ուշ գիշեր էր, ես չէի կարողանում քնել: Կանգնած էի հյուրանոցի պատուհանի դիմաց և նայում էի մոտակայքում գտնվող Վիկտորիա նավահանգստին: Լուսնեղջյուրը ցած էր նայում խաղաղ, կապույտ երկնքից, և մի քանի նավակ հանդարտ սահում էին ջրի մակերեսույթի վրայով: Տեսարանը հեռվից նման էր նրբագեղ գեղեցիկ թանաքանկարի և ջրանկարի:

Բայց միտքս այդքան էլ հանգիստ չէր: Երկրիս դրոշն այրելու տեսարանը ցնցել էր ինձ: Ճշմարիտն ասած՝ Հոնկոնգը դեռ Հոնկոնգ էր: Աշ-

---

\* Սուևը և Են երկուսն էլ լողի մրցումներում ոսկե մեդալներ նվաճեցին: Սուևն առաջին չինացին էր, որ արժանացավ ոսկե մեդալի:

խարհը դեռ նույնն էր: Այդ ես էի լույ ցնցված, որ գրեթե չէի տեսել դրսի աշխարհը:

Նախկինում միայն վավերագրական ֆիլմերում էի տեսել օտարերկրյա զավթիչների պատկերներ, որոնք նվաստացնում էին Չինաստանի ժողովրդի արժանապատվությունը. օրինակ՝ երբ Ճապոնիան ներխուժել էր Չինաստան՝ այրելու, թալանելու եւ սպանելու համար: Բայց սա առաջին անգամն էր, որ սեփական աչքերովս տեսա, թե չինացիներն ինչպես են ոտնահարում իրենց ազգային արժանապատվությունը:

Խոր գիշերվա մեջ հերթով մտաբերում էի այն ամենն, ինչ տեսել ու լսել էի Հոնկոնգում իմ հարցազրույցների ժամանակ:

Նորից ու նորից հարցնում էի ինքս ինձ՝ ինչպե՞ս կարող էր նման բան պատահել: Անցել էր ավելի քան մեկ տասնամյակ, ինչ Հոնկոնգը վերադարձվել էր մայրցամաքային Չինաստանին: Ինչպե՞ս կարող էին դեռ լինել մարդիկ, ովքեր այդպես ատում էին իրենց երկիրը: Ի՞նչ էր կատարվում այստեղ:

Լարված մտածում էի՝ փորձելով գտնել այնպիսի պատասխան, որին կարող էի հավատալ: Հակառակ դեպքում, վերջնաժամկետն արագ մոտենալու հետ, չէի կարողանա այս գիրքն ավարտել: Ոչ էլ կարող էի համառորեն հույզերս զսպել: Գիտեմ, որ Հոնկոնգի մարդիկ սիրում են իրենց երկիրը, եւ որ ազգային դրոշն այրելը պարզապես առանձին ծայրահեղականների արարք էր: Բայց նրանց ազդեցությունը չի չափվում նրանց քանակով:

Մի փորձագետ ասել է, որ ոչ միայն Մեծ Բրիտանիան, այլեւ, որ ավելի կարեւոր է, Միացյալ Նահանգները, Ճապոնիան եւ այլ երկրներ, բոլորը «ներկայացուցիչներ» են փնտրում Հոնկոնգում եւ պատրաստ են հսկայական գումարներ հանձնել այն մարդկանց, ովքեր պատրաստ են կատարելու իրենց գործը: Հոնկոնգը բաց, ազատ քաղաք է, եւ արդյունքում այդտեղ վիստում են բարձր պատրաստվածություն ունեցող լրտեսներ, որոնք բոլորն ուզում են Հոնկոնգն օգտագործել մայրցամաքային Չինաստանի վերաբերյալ տեղեկություն հավաքելու համար: Պատկերացրեք, եթե կցանկանաք, քանի՞ հատուկ գործակալ եւ լրտես են հավաքվել այստեղ այս քաղաքում: Ասում են, որ Միացյալ Նահանգներն ամեն տարի Հոնկոնգում լրտեսության գործի մեջ ներդրում են արելով:

## Չժան Ցավեն

Եւ Ե ավելի քան 300 միլիոն ԱՄՆ դոլար:

Ես հնարավորություն չունեմ ճշտելու՝ այդ տեղեկությունները ճշմարիտ են, թե՞ ոչ: Բայց կա մի բան, որ անհերքելի է. «ՎիքիԼիքսի» այն հատվածները, որոնք վերաբերում են Հոնկոնգին: Ըստ «ՎիքիԼիքսի» բացահայտումների, Միացյալ Նահանգները Հոնկոնգում ումանց հետ գաղտնի հանդիպումներ է ունեցել, եւ փոխանցել է հազարից ավելի ցնցող գաղտնի մանրամասն տվյալներ:

Այդ տվյալները մանրամասն ուսումնասիրվել են «Մին պառ»-ի, «Վեն վեյ պո»-ի եւ «Ուայդ Էնգըլ մեգըզին»-ի կողմից՝ ի թիվս հոնկոնգյան այլ կայքերի եւ լրատվամիջոցների:

Համաձայն «Ուայդ Էնգըլ»-ի 2011 թ. սեպտեմբերյան զեկույցի, «ՎիքիԼիքսը» պարզել է, որ Հոնկոնգում ամերիկյան հյուպատոսությունը 2005-ից 2009 թվականների ընթացքում ուղարկել է ընդհանուր 950 տվյալ, որոնց մեծ մասը գրվել են այդ ժամանակահատվածում ամերիկյան երկու հյուպատոսական գեներալների կողմից, իսկ դրանցից ավելի քան հարյուրը գրվել են հոնկոնգյան կառավարության հայտնի պաշտոնյաների վրա: Չեկույցը ցույց տվեց, որ «ՎիքիԼիքսի» կողմից հրապարակված կյուբերի թվում եղել են մոտ հազար գաղտնի տվյալներ Հոնկոնգում ամերիկյան հյուպատոսության կողմից: Դրանք բացահայտում էին, որ հյուպատոսությունը մանրակրկիտ ուսումնասիրել է բոլոր տիպի մեծ ու փոքր հարցերը քաղաքում՝ գլխավոր գործադիր ընտրությունից եւ քաղաքում ժողովրդավարության զարգացումից մինչեւ, ի թիվս այլ թեմաների, թե ինչպես է քաղաքը կարգավորել թափոնների հեռացումը, էլեկտրաէներգիայի նրա շուկան, խմելու ջրի նրա պաշարները, նրա ֆինանսական շուկաների զարգացումը, կրթության եւ մայրցամաքային Չինաստանի գիտնականների գնահատականները, որոնք բոլորը հանձնվել են այդ ամենին սպասող Վաշինգտոնի ձեռքը:

Չեկույցներում նշվում է, որ 2011 թ. սեպտեմբերի 27-ին Հոնկոնգում ՉԺՀ-ի արտգործնախարարության մի ներկայացուցիչ խստորեն դատապարտել է ԱՄՆ-ին՝ «ՎիքիԼիքսի» կողմից իր հյուպատոսության գործունեության բացահայտման հետ կապված. Միացյալ Նահանգները լրջորեն խախտել էր ՄԱԿ-ի կանոնադրությունը եւ, ի թիվս միջազգային այլ օրենքների, անցել Վիեննայի հյուպատոսական հարաբերությունների կոնվենցիայով սահմանված գործառույթային իրավական

սահմանները, եւ Չինաստանը պահանջում էր, որ Միացյալ Նահանգներն անմիջապէս դադարեցնի իր «սխալ գործողությունները»: Չինաստանը վճռականորեն դեմ էր հանդէս գալիս արտաքին ուժերի կողմից Հոնկոնգի գործերին ցանկացած միջամտության եւ պահանջում, որ Միացյալ Նահանգները խստորեն պահպանի համապատասխան միջազգային օրէնսդրությունը եւ համընդհանուր ճանաչում ստացած՝ վարքագծի նորմերը: ԱՄՆ-ը ոչ մի ձեւով չպետք է խառնվի Հոնկոնգի ներքին գործերին: Հուսով ենք, որ Միացյալ Նահանգները կարող է հրաժարվել Սառը պատերազմի ժամանակին հատուկ իր մտածելակերպից եւ քաղաքական հնարքներ չի բանեցնի Հոնկոնգում: «Համընդհանուր աղբյուրներ» («Global Sources») համացանցային կայքում\* շրջանառվող՝ ամերիկյան «Յու Էս կյուզ ընդ ուորլդ Ռիփորթս» («US News & World Reports») ամսագրի մի հոդված կոշտ քննադատությունների էր ենթարկում որոշ մարդկանց մոտեցումները. ««ՎիքիԼիքս» ապացուցում է, որ Միացյալ Նահանգները դիմում է կաշառքի՝ արտերկրում իր միևնույններին հավաքագրելու համար: Այդ միևնույնները վաճառել են իրենց հոգին՝ արեւմտյան մշակույթի գովքը երգելով, իրենց ժողովրդին հոգեւոր ափիոն վաճառելով: Նրանք փորձում են իրենց ժողովրդին գայթակղել, որպեսզի փորեն-հանեն սեփական երկրի թաղված գաղտնիքները, հարձակվում են չինական մշակույթի վրա՝ որպէս ամբողջովին անօգուտ ու անարժեք մի բանի, եւ դատապարտում են իրենց սեփական ցեղը՝ համարելով անհույս ու երբեք չնորացող՝ ասելով, որ այն արժանի է միայն օտար բանակների կողմից լիովին ոչնչացման»:

«ՎիքիԼիքս» այնպիսի գործողություններ ի հայտ բերեց, որոնք հստակորեն դուրս են ազատ խոսքի սահմաններից: Ոչ մի երկիր թույլ չէր տա նման վարքագծի դրսևորում: Մի պահ մտածեք՝ արդյո՞ք ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաները թույլ կտային իրենց երկրի կարենորագույն քաղաքական որոշումների մասին հողորդել արտասահմանյան երկրներին եւ կթողնեին, որ այդ երկրները խառնվեն իրենց ներքին գործերին: Արդյո՞ք նրանք թույլ կտային, որ արտասահ-

\* Չինալեզու նշանավոր տեղեկատվական գործակալություն եւ քննարկումների խորհուրդ:

Զժան Յավեն

մանյան երկրները պատերազմներ սկսեն՝ ամերիկյան ժողովրդին ոչնչացնելու համար:

Յավալի է, որ Հոնկոնգի հատուկ վարչական շրջանը չունի այդպիսի գործունեությանը վերաբերող օրենքներ, ինչն անհնար է դարձնում դրա վրա իրավական որեւէ սահմանափակում դնել:

Բոլորը գիտեն, որ ոչ մի երկիր չի կարող հանդուրժել դավաճանությունը: Հնագույն ժամանակներից մինչ օրս երբեք չի եղել մի ժողովուրդ, որը բացարձակ դավաճանությունը համարել է խոհեմություն, առավել եւս՝ չի եղել այնպիսի ժողովուրդ, որը որպէս հերոս երկրպագել է նրանց, ովքեր պատրաստ են նվաստացնել իրենց երկիրը եւ գրկել այն ինքնիշխանությունից:

## Պատմության բեռը կրող Հոնկոնգը

Վիկտորիա նավահանգիստն արթնանում է արեւի առաջին ճառագայթների ներքո՝ պայծառ եւ գեղեցիկ օրվա մեջ: Տրերի վրա՝ նավարկող լաստանավերի առագաստների եղջյուրներն են, որոնցից երկուսը դանդաղ սահում են դեպի ով իմանա ուր՝ իրենց հետապնդող ծովորդների ամպերի միջով: Գիշերն անհանգիստ մտքերի մեջ անցկացնելուց հետո՝ միայն լուսաբացին կարողացա փոքր-ինչ սիրիել: Այժմ մի պարզություն եմ զգում, որն օրեր շարունակ խուսափում էր ինձնից: Այստեղ եղած իմ բոլոր օրերին երբեք չէի զգացել, որ կարող եմ քաղաքին նայել այդպիսի հավասարակշռված ու ամենատես հայացքով՝ տեսնելով Հոնկոնգի վերադարձը, նրա կապերը մայրցամաքի հետ եւ այն ամենը, ինչ պատահել էր նրա վերադարձից ավելի քան տասնհինգ տարի հետո:

Գիշերը քաղաքի մասին իմ պատկերացումները մաքրվել եւ խորացել էին:

Հոնկոնգի պատմությունը բարդ է, քաղաքը կարդալն ինքնին դժվար է: Որպէս անձ՝ մարդ պետք է ունենա որոշակի բարոյական հիմքեր: Բայց որպէս գրող՝ պետք է ավելի հեռուն գնամ. պետք է առնվազն ունենամ խիղճ եւ սոցիալական պատասխանատվություն:

Ֆրենսիս Բեկոնը մի անգամ ասել է. «Պատմությունից իմաստություն ենք քաղում»:

Գիշերը, Հոնկոնգի պատմության թնջուկներն աստիճանաբար հստակվել էին ինձ համար, պարզվել իմ գլխում՝ թույլ տալով, որ դատարկ միտքս աստիճանաբար բացվի, ինչպես իմ դիմաց գտնվող Լավահան-գիստը՝ պարզ ու պայծառ: Անցել էին ամպամած գիշերվա պատրանքներն ու մշուշները, եւ արշալույսը պարզ էր ու թափանցիկ:

Պատմության դասն ինձ համար պարզ էր. ավելի քան 150 տարվա ընթացքում, որ Հոնկոնգն անցկացրել էր մայրցամաքային Չինաստանից առանձնացված, զգալի չափով տեղ էր տվել Գոմինդանի սպաներին, որոնք այն ժամանակ գնալու այլ տեղ չունեին: Հոնկոնգը ողջունել է արտերկրի չինացիներին, ովքեր իրենց երկրի սիրով տոգորված՝ Նոր Չինաստանի հիմնադրումից անմիջապես հետո վերադարձել էին մայրցամաքային Չինաստան եւ արդյունքում հետապնդվել որպես ծայրահեղ «ձախակասներ»: Հոնկոնգը տուն է դարձել այն մարդկանց համար, ովքեր «աջերի» պիտակ էին կրում աջերի դեմ պայքարի ժամանակ, պատսպարելով ևս եւ նրանց որդիներին ու դուստրերին: Նրա բնակիչներից ոմանք գյուղացիներ էին, որ փորձել էին խուսափել սովի տարիներից՝ «Դեպի առաջ Մեծ ցատկի» ժամանակ: Մյուսները մշակութային հեղափոխության ժամանակ հետապնդվող «հինգ սեւ կատեգորիայի»\* անդամներ էին եւ նրանց որդիներն ու դուստրերը... դա մի դարաշրջան էր, որտեղ երկար, տանջալից բանտարկության ստվերն ուրվականի պես կախված էր Չինաստանի ժողովրդի գլխին:

Պատմությունն ինձ ասում է, որ Մեծ Բրիտանիան իշխել էր Հոնկոնգում ավելի քան հարյուր տարվա ընթացքում: Այդ երկարուժիգ տարիների ընթացքում բրիտանացիները, իրենց հատուկ նուրբ, գաղտնի ու ճկուն ձեւերով, հոնկոնգցիների մեջ ներարկում էին արեւմտյան մշակույթը՝ նրանց գիտակցության մեջ խորապես արմատավորելով գաղութային գաղափարախոսություններ: Մեծ Բրիտանիան աշխարհի ամենահին խաղացող ձեռքն է գաղութարարության մեծ խաղում եւ հնարքների ու մեթոդների լավ պատրաստված գործիքակազմ ունի՝ մշակելու համար նրանց, ում գաղութացրել է: Այդ մեթոդները հաճախ այնպիսի հետեւանք են ունենում, որ նույնիսկ գաղութարարության

\* Կալվածատերերը, հարուստ գյուղացիները, հակահեղափոխականները, «վատ տարրերը» եւ աջերը:

## Զժան Ցավեն

ավարտից հետո նորանկախ երկրներն ու շրջանները հայտնվում են երկարատեւ քառսի ու անկարգության մեջ՝ ցեղերի, կրոնների եւ բոլոր տեսակի այլ խմբավորումների միջեւ առաջացած բախումներով՝ ստեղծելով համատարած դժոխային խառնաշփոթ, որը պահպանվում է նույնիսկ մինչեւ այսօր: Օրինակ՝ առկա բազմաթիվ խնդիրներից շատերը, որոնց այսօր առնչվում են Հնդկաստանը, Պակիստանը, Բանգլադեշը եւ Մերձավոր Արեւելքի երկրները, առաջացել են բրիտանական գաղութատիրության վերացման հետեւանքով: Բացառություն չէր նաեւ Հոնկոնգը:

Պատմությունը նաեւ ինձ ասում է, որ Հոնկոնգը Մեծ Բրիտանիայի ամենաձաղկուն գաղութն էր, գաղութը, որից նա ամենաքիչն էր ուզում բաժանվել: Այն անվանում էին «Բրիտանիայի բանկոմատ», եւ նրա համար «ոսկե ձվեր ածող սագ»:

Նույնիսկ այսօր՝ Հոնկոնգը մայրցամաքային Չինաստանին վերադարձնելուց ավելի քան մեկ տասնամյակ անց, Մեծ Բրիտանիան շարունակում է զգալի տնտեսական օգուտներ քաղել Հոնկոնգից: Երեք բանկ են պատասխանատվություն կրում Հոնկոնգի արժույթը տպագրելու համար. Չինաստանի բանկը (Bank of China) պատասխանատու է քսան տոկոսի համար, մյուս ութսուն տոկոսը բաժին է ընկնում Մեծ Բրիտանիայի HSBC եւ Standard Chartered բանկերին: «CLP Group»-ը եւ «Swire Pier»-ը, ինչպես նաեւ մի շարք այլ բիզնեսներ, բոլորը պատկանում են Մեծ Բրիտանիային: Դժվար չէ տեսնել, որ Մեծ Բրիտանիան, որն այդ տարիների ընթացքում այդքան շահույթ էր ստացել Հոնկոնգից, այդպիսի ակտիվը հեշտությամբ ձեռքից բաց չէր թողնի:

Երբ Քրայսթ Փաթենն ստանձնեց նահանգապետի իր պաշտոնը, նրա «բարյացակամ» քաղաքականությունը, ներառյալ խելահեղ մղումը՝ բարձրացնել Հոնկոնգի սոցիալական բարեկեցության նպաստները, բուժական նպաստները եւ քաղաքացիական ծառայողների աշխատավարձերը, ինչպես նաեւ մի շարք հարկերի կրճատումը եւ մշտական բնակության տրամադրումը Հոնկոնգի որոշ բնակիչների, սիրտ ու միտք գնելու ճչացող փորձ էին:

Բրիտանացի գրող Ֆրենկ Ուելշն իր «Հոնկոնգի պատմություն» գրքում բացահայտել է, որ 1990 թվականի հուլիսին բրիտանական կառավարությունը նկատի էր առել ծայրահեղ միջոցներ, այդ թվում՝ հոն-



կոնգյան 5,6 միլիոն բնակիչներից բրիտանական քաղաքացիություն ունեցող 3,3 միլիոնի համար մշտական բնակություն հաստատելու առաջարկություն: Դրան, սակայն, դեմ արտահայտվեց Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի գերատեսչությունը, քանի որ Չինաստանն արդեն հստակ հայտարարել էր. «մեծամասշտաբ մշտական բնակություն ապահովելու ցանկացած քայլ Չինաստանի կողմից կդիտվի որպես լուրջ հանցագործություն»: Ի վերջո, բրիտանական կառավարությունը որոշեց բրիտանական մշտական բնակություն տրամադրել հոնկոնգյան էլիտայից եւ նրանց ընտանիքներից 225 000 մարդու:

Անձնագրերից յոթ հազարը տրվեցին «կարգապահական վարչություններին» (ոստիկանությանը եւ մաքսատանը), վեց հազարը՝ «զգայուն բաժանմունքներին» (բարձրաստիճան պաշտոնյաներ եւ լրատվամիջոցների աշխատակիցներ), 3 650-ը՝ առանցքային պաշտոնների տերերին (փորձագետներ եւ գործարարներ), իսկ հինգ հարյուրը՝ կարեւոր ներդրողներին: Մեծ Բրիտանիան հայտնի մի հոնկոնգցու երեք ամսով հրավիրեց Դաունինգ սթրիթ՝ որպեսզի ընտրեին «էլիտայի» անդամներին, որոնց համար պետք է ապահովվեր մշտական բնակություն: Բայց ի վերջո, այդ իրավունքն ստացողներից քչերը որոշեցին տեղափոխվել Մեծ Բրիտանիա:

Չինաստանը նախապես էր խստորեն դատապարտել Մեծ Բրիտանիային՝ ասելով, որ անձնագրերով այդ կերպ ապահովելը Համատեղ հռչակագրի լուրջ խախտում է, նաեւ վիրավորանք եւ սադրանք:

Հաշվի առնելով այդպիսի բարդ պատմական նախադրյալները՝ մարդ մտածում է, որ գուցե Հոնկոնգը կարող էր տարօրինակ չհամարել այնպիսի բռնի արարքը, ինչպիսին դրոշն այրելն է: Հարցազրույցներիս ընթացքում բազմաթիվ անհասկանալի պատմություններ լսեցի...

Հոնկոնգ-Չժուհայ-Մակաո կամուրջը նախատեսված է երեք տարածաշրջաններն անմիջականորեն իրար կապելու համար: Դրա ընդհանուր երկարությունը հիսուն կիլոմետր է լինելու, որից երեսունհինգն անցնելու է ջրի վրայով, իսկ վեց կիլոմետրը լինելու է ստորջրյա թունել: Ավարտից հետո այն կլինի աշխարհի ամենաերկար ջրային կամուրջը: Նախագծի ընդհանուր արժեքը գնահատվում է յոթանասուն միլիարդ հոնկոնգյան դոլար: Շինարարությունը սկսվել է 2009-ին, եւ կամուրջը

## Չժան Ցավեն

երթելուության համար նախատեսվում է բացել 2015 կամ 2016 թվականին: Երբ կամուրջը բացվի, դրանով երթելուող մարդիկ ստիպված կլինեն մաքսային զննում անցնել՝ կամրջի կապած յուրաքանչյուր վայրի համար: Երբ ժամանակը գա, երթելուը, որի համար պահանջվում էր երեք-չորս ժամ, կտեւի մեկ ժամից էլ պակաս: 2009 թվականի դեկտեմբերի 15-ին Պետխորհրդի փոխվարչապետ Լի Կեցյանը ժամանեց Չժուհայ, որպեսզի գլխավորեր բացման արարողությունը: 2010 թվականի հունվարին, աշխատանքը սկսվելուց շատ ժամանակ չանցած, 66-ամյա մի տիկին, Չու անունով, Հոնկոնգի Գերագույն դատարանում հայց ներկայացրեց կառավարության դեմ՝ պնդելով, որ կամրջի կառուցումը ոչնչացնում է շրջակա միջավայրը, եւ պահանջելով, որ Հոնկոնգի շրջակա միջավայրի պահպանության վարչության կողմից 2009 թվականի հոկտեմբերին տրված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ երկու առանձին գեկույցների եզրակացությունները Հոնկոնգով անցնող կամրջի հատվածների հետ կապված՝ չեղյալ համարվեն, ու կամրջի շինարարությունն անմիջապես դադարեցվի:

Դրանից որոշ ժամանակ անց դատարանը լսեց գործը եւ որոշեց, որ Հոնկոնգի շրջակա միջավայրի պահպանության վարչության գեկույցների եզրակացություններն անվավեր են, պահանջելով անհապաղ դադարեցնել շինարարությունը:

Սա ցույց է տալիս օրենքի գերակայության եւ ժողովրդավարության ուժը Հոնկոնգում, որ տարեց մի կին կարող է դադարեցնել բազմամիլիարդ դոլար արժողությամբ կամուրջը: Նրա գործելակերպը խիստ դատապարտման արժանացավ Հոնկոնգի բնակիչների կողմից, ովքեր ասում էին, որ նա մի խամաճիկ է, որին խաղացնում են կուլիսների ետեւից: Հակառակ դեպքում՝ ինչպե՞ս կարող էր այդ կինը, որ ապրում էր արտակարգ պետական հիմնադրամներից ստացած օգնության հաշվին, հասկանալ այնպիսի խիստ մասնագիտացված թեմայից, ինչպիսին շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին գեկույցն էր եւ իրականությանը դրա համապատասխան լինելը:

Այսպիսով, կամրջի շինարարությունը, որ քսան տարի ընթացքի մեջ էր, դադարեցվեց: Հոնկոնգյան հանրությունը բուռն գրահներ ձեռնարկեց տիկին Չուի դեմ՝ նրա կողմնակիցներին ենթարկելով խիստ քննադատության: «Բազմաթիվ ազդեցիկ քաղաքական ուժեր կան,

որոնք օգտագործում են ծեր տիկին Չուին: Նրանք կարող են միայն մեկ նպատակ ունենալ՝ խոչընդոտ հանդիսանալ Հոնկոնգի եւ մայրցամաքային Չինաստանի միջեւ հարաբերություններին, նվազագույնի հասցնել նրանց տնտեսական կապերը եւ ստեղծել «անկախ» Հոնկոնգ»: «Մայրցամաքային Չինաստանը Հոնկոնգին առաջարկում է բոլոր տեսակի արտոնյալ քաղաքականություններ, բայց աննշան մի փոքրամասնություն որոշել է, որ դա ուզում է ստանձնել կուսակցության կենտրոնական կոմիտեն: Այն մարդիկ, ովքեր անտեսում են մայրցամաքային Չինաստանի հետ կապերի սերտացումը, լուրջ վնաս են հասցնում Հոնկոնգի զարգացմանը»:

2011 թվականի հունվարին Գերագույն դատարանը վճիռ կայացրեց հօգուտ տիկին Չուի:

Շատ չանցած դատական վճռի պատճառով դադարեցրին եւս յոթանասուն-ութուն նախագիծ: Հոնկոնգի հասարակությունը կաթվածահար էր եղել: Հատուկ վարչական շրջանի կառավարությունը բողոքարկեց եւ կարողացավ գործը կարճել գերագույն դատարանում:

Այդ ժամանակ արդեն մեկուկես ամիս էր անցել, ինչ աշխատանքն սկսվել էր կամրջի վրա: Նախատեսվում էր, որ կամրջի՝ Հոնկոնգով անցնող տասներկու կիլոմետրը կարժենա տասը միլիարդ հոնկոնգյան դոլար: Չգձգումն արժեցել էր 6,5 միլիարդ հոնկոնգյան դոլար:

Հոնկոնգցիները խիստ վրդովված էին. «6,5 միլիարդ դոլար... ո՞վ է ծախսը հոգալու: Որքա՞ն կարժենա 6,5 միլիարդ հոնկոնգյան դոլարը մեկ անձի համար»:

Տիկին Չուն դարձավ իր հարեանների արհամարհանքի թիրախը: Նույնիսկ նրա որդին ասում էր, որ նա խելքը ետ է տվել: Տիկինը գանգատվում էր այդ վերաբերմունքից՝ ասելով. «Երբեք չէի մտածում, որ նրանք այդքան չար կլինեն, ինձ այսպես մենակ թողնելով...»:

Մի կողմից՝ այս ամբողջ միջադեպը Հոնկոնգում օրենքի ուժի գերակայության, ինչպես նաեւ օրենքի առջեւ յուրաքանչյուրի հավասարության դրսեւորում էր: Մյուս կողմից՝ դա խոսում էր հոնկոնգյան օրենսդրության մեջ որոշ թերությունների մասին: Մտածեք մի պահ, թե պաշտոնյաները կարող են դադարեցնել կառավարության ցանկացած նախագիծ իրենց ուզած պատճառով: Դա շատ քիչ է տարբերվում այն բանից, թե ինչպես LegCo-ն, որ գերծ է իրավական որեւէ սահմանափա-

## Չժան Յավեն

կումից, կարող է հետաձգել մի օրենքի քննարկում այնքան ժամանակ, որքան իրենք են ցանկանում, ինչի արդյունքում շատ կարելի է հարցեր մնում են չլուծված: Այդ պրակտիկան ակնհայտորեն ձեռնադրում է հասարակության զարգացման համար և ոչ էլ օգտակար է հանրային շահի համար:

Իմ հարցազրույցների ժամանակ լսել եմ նաև Հոնկոնգի և մայրցամաքային Չինաստանի միջև «թքային պատերազմների» մասին:

Հոնկոնգում ոմանք մայրցամաքից եկած չինացիներին անվանում էին «մորեխներ» և նրանց ասում, որ «ոռո լինեն մայրցամաք», իսկ մայրցամաքիցիները հոնկոնգիցիներին անվանում էին «խոզեր» և «դավաճան գողեր»: Հոնկոնգի բնակիչները մեծապես նեղվում էին, որ մայրցամաքի չինացիները Հոնկոնգ են գալիս հսկայական քանակությամբ մանկական սնունդ\* գնելու, կամ մայրցամաքի հղի կանայք գալիս էին Հոնկոնգ՝ որպես «ծննդյան զբոսաշրջիկներ»՝ նախատեսելով քաղաքում ծնված իրենց սոր երեխայի համար Հոնկոնգի քաղաքացիություն ձեռք բերել: Հոնկոնգիցիները կարծում են, որ մայրցամաքային Չինաստանի բնակիչները բացասաբար են անդրադարձել իրենց կենսակերպի վրա և օգտվել են այն առավելություններից, որոնք արդարացիորեն պատկանում են Հոնկոնգի ժողովրդին:

Որոշ մարդիկ պարզել են Հոնկոնգի դրոշը և բղավել այնպիսի կարգախոսներ, ինչպիսին, օրինակ, սա. «Հոնկոնգն ինքը պետք է իրեն կառավարի, իսկ չինացիները պետք է ոռո լինեն Չինաստան»: Մյուսները հավաքվել են Միացյալ ճակատի գրասենյակի դիմաց՝ ծածանելով գաղութային Հոնկոնգի դրոշը և բղավելով կարգախոսներ, որոնք կոչ են անում մայրցամաքային Չինաստանին՝ չխառնվել Հոնկոնգի գործերին, իսկ իրենք երգում էին Բրիտանիայի ազգային հիմնը: Նրանց կարգախոսներից մի քանիսն այսպիսին էին. «Չինացիներ, ոռո եղեք Չինաստան», «Մենք Հոնկոնգից ենք, մենք չինացի չենք» ինչպես նաև՝ «Չինացիները մորեխ են»:

Հոնկոնգյան կառավարությունը Հոնկոնգում ծննդաբերած մայրերի

---

\* Սննդամթերքի անվտանգության հետ կապված մի շարք սկանդալների արդյունքը, որ առնչվում է նաև մայրցամաքային Չինաստանում վատ պատրաստված մանկական սննդի հետ:

խնդրին լուծում տվեց հրամանագրով, որը Հոնկոնգում կացության թույլտվություն չունեցող՝ մայրցամաքային Չինաստանի մայրերին արգելում էր գալ Հոնկոնգ աշխատելու: Նմանատիպ լուծում տրվեց նաև մանկական սննդի խնդրին՝ 2013 թվականի մարտի 1-ի հրամանագրով խստորեն խոչընդոտելով դրա արտահանումը՝ քաղաքից մեկնող որեւէ մեկին արգելելով 1,8 կիլոգրամից ավել մանկական սնունդ վերցնել իր հետ եւ մինչեւ հինգ հարյուր հազար հոնկոնգյան դոլար տուգանքներ կիրառելով կամ օրինազանցների համար մինչեւ երկու տարի ազատազրկում սահմանելով:

Կարծում եմ՝ այս տխուր օրինակներից մի քանիսը կարող են համարվել մշակույթների բախման հետեւանք, մի քանիսը՝ մայրցամաքային Չինաստանի եւ Հոնկոնգի միջեւ յուրատեսակ հուզական օտարվածության արդյունք, մի քանիսը կարելի է վերագրել ինքնության խնդիրներին, իսկ մի քանիսը՝ նույնիսկ էլ ավելի խորքային անդրկուլիսյան խնդիրների:

Որպես մեկը, որ պարզապես անցորդ է այդ կողմերում, իմ տեսակետները Հատուկ վարչական շրջանի կառավարության կողմից ընդունված երկու հրամանագրերի վերաբերյալ՝ մակերեսային բնույթ ունեն:

«Ծննդյան զբոսաշրջիկ» մայրերն իսկապես դժվարացնում էին իրավիճակը Հոնկոնգում: Քաղաքի բժշկական ռեսուրսները սահմանափակ են, եւ նրա համար դժվար էր մայրցամաքից եկած այդքան շատ մայրերի ծննդաբերության խնդիրը լուծել: Մայրերից շատերը միայն նայում են Հոնկոնգի ուժեղ կողմերին բժշկական օգնության ու կրթության ոլորտում, եւ հաշվի չեն առնում անբարենպաստ գործոնները, ինչպիսիք են բնակարանային խնդիրը, լեզուն, աշխատավարձը եւ մշակութային տարբերությունները: Նոր ներգաղթած մայրերից մեկն ինձ պատմեց, որ նա եւ իր դուստրը աղավիհների վանդակի չափ մի սենյակ էին վարձակալել: Նա չէր կարող խոսել անզվերեն կամ կանտոներեն, եւ իրեն ծայրաստիճան միայնակ էր զգում: Անհանգստանում էր, որ կարող է դեպրեսիայի մեջ ընկնել: Եվ սա ամենեւին էլ միակ դեպքը չէ: «Ծննդյան զբոսաշրջիկներից» շատերն են նմանատիպ փորձառություն ունեցել: Ինչ վերաբերում է Հատուկ վարչական շրջանի կառավարության գործողություններին՝ մանկական սննդի հետ կապված,

## ԶԺան Յավեն

կարծում եմ, արձագանքը չափազանց սուր էր. պետք չէր այդքան կտրուկ լինել: Ի վերջո բոլորս չինացի ենք:

Գնումները սահմանափակելու մեջ վատ բան չկա, բայց կարիք չկա մարդկանց հսկայական տուգանքների ենթարկել եւ երկու տարվա ազատազրկմամբ պատժել: Ընդամենը քսանվեց օր է անցել Հոնկոնգի կառավարության տեղեկագրում (Hong Kong Government Gazette) կանոնադրության հրապարակման եւ փոփոխության մասին հայտարարության միջոցով:

Լսել եմ նաեւ մայրցամաքային չինացիների հայտնած դժգոհությունները, երբ խոսում են Հոնկոնգի մասին: Նրանք ասում են, որ Հոնկոնգը Չինաստանի տարածք է, եւ «Մեկ երկիր, երկու համակարգ»-ի ամենակարեւոր կողմը ոչ թե «Երկու համակարգ»-ն է, այլ «Մեկ երկիր»-ը. Հոնկոնգն «անկախ ավատատիրություն» չէ: Հոնկոնգի՝ մայրցամաքային Չինաստանին վերադառնալուց ի վեր կենտրոնական կառավարությունը բոլոր միջոցներով հոգացել է Հոնկոնգի մասին, ներառյալ հարկային եկամուտների մեկ տոկոս իսկ չհավաքելը: Ժողովրդական-ազատագրական բանակի կայազորը Հոնկոնգում չի ծախսել Հոնկոնգի փողից մեկ տոկոս անգամ. բոլոր ծախսերը վճարվել են կենտրոնական կառավարության կողմից: Կենտրոնական կառավարությունը Հոնկոնգին առաջարկել է մի շարք արտոնյալ քաղաքականություններ, ներառյալ մաքսատուրքերից ազատ լինելը: Ծանր սուր շնչառական համախտանիշից հետո, երբ Հոնկոնգում գրոսաշրջության արդյունաբերությունն անկում ապրեց, կենտրոնական կառավարությունը սկսեց թույլ տալ, որ մայրցամաքցիները քաղաքում ճանապարհորդեն անհատապես, այլ ոչ թե բացառապես խմբերով: Մայրցամաքային Չինաստանը երաշխավորել է նաեւ ջրի, էլեկտրաէներգիայի եւ սննդամթերքի երկարաժամկետ մատակարարումներ:

Մայրցամաքային Չինաստանին Հոնկոնգի վերադառնալուց հետո ավելի քան տասնհինգ տարիների ընթացքում՝ տեսնել կարողացող յուրաքանչյուր ոք տեսնում է, որ երկու կողմերն անվիճելիորեն օգուտ են քաղել այդ պայմանավորվածությունից: Կարծում եմ միանգամայն բնական է, որ ճանապարհի վրա կարող են լինել փոքրիկ ցնցումներ, որոշ փոքրիկ բախումներ երկու կողմերի միջոց: Երկու կողմերը պետք է խոսեն իրենց տարբերությունների մասին եւ լուծեն դրանք ազգի մի-

ասնության ու եթևիկ համերաշխության հիման վրա: Հարկ չկա, որ նրանք տարածայնության մեջ լինեն: Այդպիսի բաներ արդեն շատ են եղել Չինաստանի պատմության մեջ:

Մեկ բան պետք է հստակ իմանանք. Հոնկոնգը Չինաստանի տարածք է: Ինքնիշխանության հարցերը չեն որոշվելու մի քանի մարդկանց չարամիտ մտադրությունների հիման վրա: Մենք չենք պատրաստվում ետ տալ պատմության ժամացույցի սլաքները միայն այն պատճառով, որ ոմանք որոշ կարգախոսներ էին գոռում եւ մի քանի զաղութատիրական դրոշներ ծածանում: Հոնկոնգն ավելի քան հարյուր հիսուն տարի անցկացրեց բրիտանական տիրապետության ներքո եւ երբեք անկախություն չստացավ, մինչդեռ Լի Տեն-հույը Թայվանը ղեկավարելու իր տասներկու տարին անցկացրեց՝ անընդհատ բաժանման կոչ անելով: Արդյո՞ք նա ստացավ իր ուզածը: Կարո՞ղ էր Չինաստանը թույլ տալ նրան:

Բայց «Հոնկոնգի անջատման փորձերի» հանցախմբային հարայի-րոցը վնաս են հասցրել քաղաքի զարգացմանն ու կայունությանը: «Մեկ երկիր»-ը անհրաժեշտ նախապայման է Չինաստանի համար՝ Հոնկոնգում «Մեկ երկիր, երկու համակարգ» իրականացնելու: Դա հեշտ չէր, բարդ ու դժվարին ճանապարհ էր, որը Չինաստանին հնարավորություն տվեց դառնալ աշխարհի երկրորդ խոշոր տնտեսությունն ունեցող երկիրը: Մենք պետք է փայփայենք այն, ինչը մեզ հաջողվեց ձեռք բերել: Հոնկոնգցիները պետք է հասկանան, որ իրենց քաղաքը կարող է ապահովված լինել միայն այն դեպքում, եթե Չինաստանը նույնպես ապահովված է, եւ որ Հոնկոնգն ուժեղ կարող է լինել միայն այն դեպքում, եթե Չինաստանը նույնպես ուժեղ է:

Գոմինդանի նախկին քրեական հանցագործ եւ ներկայիս քաղաքական մեկնաբան Ցայ Շենսանը գրել է. «Կենտրոնական կառավարության որոշումը՝ իրականացնել «Մեկ երկիր, երկու համակարգ» եւ «Հոնկոնգը ղեկավարում են հոնկոնգցիները» սկզբունքները, միակամայն ճիշտ էր: Ոմանք Հոնկոնգում ասում են՝ «մենք պետք է դեմ դուրս գանք կոմունիստական կուսակցության խամաճիկներին»: Նրանք քաղաքական գործիչներ են: Նրանք չեն հասկանում Չինաստանը եւ չեն հասկանում Չինաստանի սահմաններից դուրս գտնվող աշխարհը: Նրանք քաղաքական օպորտունիստներ են, եւ արդյունքում չեն դիմա-

## Չժան Յավեն

Նա: Չինաստանի զարգացումը հասանելի է տեսանելի է ամբողջ աշխարհին: Հոնկոնգը պետք է կամուրջ լինի Թայվանի և մայրցամաքյին Չինաստանի միջև, և օրինակ՝ Թայվանի վերջնական հնարավոր վերադարձի համար: Այս պահին նա սարսափելի աշխատանք է կատարում»:

Հոնկոնգում հայտնի իրավաբան Ամբրոզ Լաուն այն թիմի կազմում էր, որը գրել էր Հիմնական օրենքի նախագիծը: Նա ասում էր, որ որոշ փոքրաթիվ հոնկոնգցիներ կարոտում են բրիտանական կառավարման օրենք: Նրանք չեն հարմարվել նոր իրականությանը: Արդյունքում՝ նրանք դեռ հավատարիմ են Մեծ Բրիտանիային և փորձում են տապալել ներկայիս կառավարությունը: Կան նաև ավելի խորքային գործոններ: Երբ Մեծ Բրիտանիան տարիներ առաջ դուրս եկավ Հնդկաստանից, այն իր ետեւից թողեց խորը թաղված էթնիկական ատելությունը, որը շարունակվում է մինչ օրս:

Էլսի Լյունգն ասում էր, որ Բրիտանիայի երկարատեւ իշխանության ժամանակ կրթությունը Հոնկոնգում ձգտում էր կանխել մարդկանց ազգային գիտակցության զարգացումը: Դրա համար էլ Հոնկոնգի ժողովուրդն իրեն համարում էր աշխարհի քաղաքացի, այլ ոչ թե առանձին մի ազգ: Մայրցամաքյին Չինաստանին վերադարձից առաջ քաղաքի որոշ բնակիչներ խորապես անհանգստացած էին, քանի որ նրանք չէին կարողանում ճանաչել, ընդունել Հոնկոնգի նոր իրավիճակը և հարմարվել դրան: Հոնկոնգյան բողոքի ցույցերի երթով անցած մարդկանցից շատերը պրոֆեսիոնալ ցուցարարներ են, ովքեր իրենց ապրուստը վաստակում են փողոցում բղավելով: Գաղութային տիրապետությունից Չինաստանի քաղաքացիությանն անցնելու գործընթացը զգալի ժամանակ կպահանջի:

Հոնկոնգի կրթական համակարգի բարձրաստիճան անձանցից մեկն ասում է, որ ոմանք իրենց ժողովրդավարական լինելը ցուցադրել են՝ օգտագործելով հոնկոնգյան իրավական համակարգում առկա թերությունները, որպեսզի մշտական հակասության մեջ լինեն քաղաքի կառավարության հետ՝ ընդդիմանալով ցանկացած բանի և առաջարկած ամեն ինչի, անընդհատ հետաձգելով հանդիպումները, մշտապես հապաղելով՝ կառավարությանն ամբողջովին անզոր դարձնելու նպատակով: Ինչ վերաբերում է միջին և տարրական դասարանների աշա-



կերտների հայրենասիրական դաստիարակության խնդրին՝ ո՞ր երկիրն իր աշակերտներին նման կրթություն չի տրամադրում: Հոնկոնգն ավելի քան հարյուր հիսուն տարի է անցկացրել բրիտանական տիրապետության ներքո. արդյոք նրա երեխաները չպե՞տք է հասկանան Չինաստանի պատմությունը, իրենց քաղաքի նվաստացման պատմությունը: Պատմություն չհասկացող մարդը հիմար է, իր սեփական պատմությունը չիմացող ժողովուրդը խավարամիտ է: Եթե այդպիսի վիճակը շարունակի պահպանվել, ինչպե՞ս կարող է Հոնկոնգի զարգացումը վնաս չկրել:

Մտածում էի, որ եթե Հոնկոնգյան տնտեսությունը վնասվի, ո՞վ է վճարելու ամենաճանր գինը: Եվ ո՞վ է առավելապես շահելու: Այն քչերը, ովքեր փողոցում կանգնած՝ կարգախոսներ են բղավում եւ զաղութատիրական դրոշներ են ծածանում:

Ոչ, իհարկե ոչ:

Նրանք քիչ բան կշահեն, եւ նրանց հաղթանակը Հոնկոնգի կամ նրա ժողովրդի համար հաղթանակ չի լինի: Իսկապես շահողները կլինեն խավարում, կուլիսների ետեւում գործողները, միջազգային սադրիչները, որ ցանկանում են Չինաստանը ետ մղել քառսի գիրկը:

Հոնկոնգը հասարակություն է, որը ղեկավարվում է օրենքով, հասարակություն, որտեղ օրենքները գետնի վրա նույնքան խիտ են եւ կուռ, որքան խոտը դաշտում: Հասարակության յուրաքանչյուր ոլորտ ունի իր համապատասխան իրավական սահմանափակումները: Իսկապես ցավալի է, որ Հոնկոնգի վերադարձից հետո տասնվեց տարվա ընթացքում Հոնկոնգի LegCo- ն դեռ պետք է ընդունի ազգային անվտանգության մասին օրենք, դեռ պետք է ընդունի Հիմնական օրենքի 23-րդ կետը: Ո՞ւմ է ձեռնադրվում Հոնկոնգի ազգային անվտանգության սահմանափակումների բացակայությունը: Արդյունքում ո՞վ կարող է անել այն, ինչ ցանկանա: Կան բաներ, որոնք առաջին հայացքից կարող են թվալ անձեւ կամ անըմբռնելի, բայց որոնք վտանգներ են քողարկում, որ հնարավոր չէ գնահատել զուտ թվերով: Սովորական մարդկանց հասու չեն կուլիսներում տեղի ունեցող գործարքները, բայց դրանց բացասական ազդեցությունը Հոնկոնգի վրա օբյեկտիվ իրականություն է:

Համոզմված եմ, որ Հոնկոնգի երկար պատմությունը ներծծված է հոնկոնգյան մեր հայրենակիցների արյունով ու արցունքներով: Այդ

Չժան Յավեն

պատմությունն ավետափ լցված է Հոնկոնգի նվաստացման եւ դիմադրության դրվագներով, բայց նաեւ իր ժամանակի բրիտանական գաղութին բնորոշ՝ նյութական թալանի եւ հոգեբանական ծուլման ու կաշառակերության դեպքերով:

## «Ամբողջ պատմությունը ժամանակակից պատմություն է»

Պեկինում հարցազրույցի էի նստել Հոնկոնգի եւ Մակաոյի գործերով վարչության նախկին ղեկավար Լու Պինի հետ:

Այդ ճերմակամազ, ութսունհինգամյա տղամարդն ավելի քան մեկ տասնամյակ է անցկացրել բրիտանացիների հետ բանակցությունների սեղանի շուրջ: Նույնիսկ այն բանից հետո, երբ ենթարկվեց ստամոքսային լիմֆոմայի վիրահատության, երկու ամիս անց նա վերադարձավ բանակցությունների սեղանի մոտ: Երբ սկսեցինք խոսել փոքրամասնության մասին, այսպես կոչված «Հոնկոնգի անջատման փորձերի» մասին, նա ասաց՝ «դա միջազգային ընդհանուր իրավիճակի պատճառով է...»:

Միանգամայն ճիշտ է: Երբ մի հայացք ենք գցում աշխարհին, ի հայտ են գալիս Միացյալ Նահանգների, Ճապոնիայի եւ Հարավային Կորեայի համատեղ գորավարժությունները: ԱՄՆ-ը համատեղ գորավարժություններ է կազմակերպել Ֆիլիպինների, Ինդոնեզիայի, Մալայզիայի, Սինգապուրի, Թայլանդի եւ Բրունեյի հետ Սալաքայի նեղուցում, Ցեյեբեսի ծովում եւ Սուլու ծովում: Միաժամանակ, Ճապոնիան անցել է Դյաոյոյ կղզիներն «ազգայնացնելու» ֆարսով, իսկ Հարավչինական ծովի շրջակայքում գտնվող փոքր երկրներից ամեն մեկը նույնպես ջանք չի խնայում այդտեղ տարածքը գրավելու համար: Այնքան շատ երկրներ են աչքները հառել Չինաստանի վրա, ինչպես վագրն է հետամուտ լինում իր որսին: Դրանց մի մասը պայտածել պատնեշ են ստեղծում Չինաստանի արեւելյան եւ հարավային հատվածների շուրջը:

Ոմանք ասում են, թե Հոնկոնգը համաշխարհային միտումների բա-

րոմետր է: Լինեն դրանք քաղաքական թե տնտեսական միտումներ՝ բոլորն առաջին հերթին գրանցվում են այն բարոմետրով, որը Հոնկոնգն է:

Նույնիսկ երբ գրում եմ սա, Ճապոնիայի կողմից Դայոյույ կղզիների «ազգայնացման» ֆարսն աշխույժ առաջ է գնում: Չնայած համակարգերը կարող են տարբեր լինել, մայրցամաքային Չինաստանը, Հոնկոնգի Հատուկ վարչական շրջանը եւ Թայվանը միասնական են Չինաստանի ինքնիշխանության հարցում: 1,3 միլիարդ մայրցամաքային չինացիներ եւ նրանց արտասահմանյան հիսուն միլիոն հայրենակիցներ բոլորը մեկ մարդու պես բարբառում են. «Գլուխներ կարող են գլորվել, արցունքներ կարող են թափվել, բայց Դայոյույ կղզիները չեն կարող կորչել, ո՛չ մի դեպքում»:

Չին ազգի որդիներն ու դուստրերն ամբողջ աշխարհում, բոլորը միահամուռ, իրենց ձայնն են բարձրացրել. «Մենք չենք կարող մոռանալ մեր երկրի նվաստացումը եւ երդվում ենք պաշտպանել Դայոյույները մեր մահվան գնով»:

ՉԺՀ-ի Արտաքին գործերի նախարարությունը նույնպես անզիջում դիրքորոշում որդեգրեց՝ ցույց տալով արտաքին ոտնձգությունների նկատմամբ իր վճռականությունը:

Այդ ամբողջ ընթացքում ճապոնական իենն ազատ անկում է ապրում՝ երկրի ֆոնդային շուկաների հետ միասին: Ճապոնական արտադրանքները Չինաստանում մնում են դարակների նման, իսկ ճապոնական գործարանները Չինաստանում փակում են վաճառակետերը, եւ չին զբոսաշրջիկները, որոնք պլանավորել էին մեկնել Ճապոնիա, իրենց տոմսերը զանգվածաբար ետ են վերադարձնում:

Ահա՛, սրանք իմ չինացի հայրենակիցներն են:

Նրանք իրենց օրերն անցկացնում են հառաչելով եւ տրտունջ-բողոքով՝ դժգոհելով տան գներից, դժգոհելով սննդի գներից, դժգոհելով ոստիկանությունից, դժգոհելով կոռուպցիայից, դժգոհելով կոռումպացված պաշտոնյաներից, դժգոհելով սննդի անվտանգությունից, դժգոհելով բոլոր այն լուրջ հիվանդություններից, որոնցից բուժվելու համար գումար չունեն, դժգոհելով կրթական բարեփոխումները հետաձգելուց, դժգոհելով օրենքի գերակայության անբավարարությունից... Անհնար կլինե՞ր հերքել, որ Չինաստանը, Բարեփոխումների եւ Բաց

## Զժան Յավեն

քաղաքականության մի ժամանակաշրջանում, շրջապատված կլինի չափազանց շատ, անհամար խնդիրներով: Կոռուպցիա, կոռումպացված պաշտոնյաներ, սևնդի անվտանգություն, օրենքի գերակայություն, քաղաք արտագաղթած աշխատողների կողմից գյուղում լքված երեխաներ. սրանք հարատև խնդիրներ են, որոնք լուծում են պահանջում:

Բայց էթնիկ վերաբերմունքն ու տրամադրությունը կարևոր ելակետ են անձի կամ ժողովրդի բարձր մակարդակի կամ հիմնավորվածության չափման համար: Ժողովրդի մեծ գործերն ու ազգային միասնության հարցերն են իսկապես փորձում մարդու գիտակցությունը, խիղճն ու ոգին:

Չինաստանի ազգային ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքների ֆոնին բոլոր բողոքներն ու դժգոհությունները պետք է տեղի տան մեր երկրի ինքնիշխան ամբողջականության գերակա նշանակության առջեւ:

Երբ դուրս էի գալիս Լու Պինի տնից, արդեն մթնշաղ էր:

Գնացի ավտոբուսի կանգառ սպասելու: Ավտոբուսն եկավ: Երբ պատրաստվում էի բարձրանալ, տեսա վեց-յոթ տարեկան թմբիկ ու հմայիչ փոքրիկ մի տղայի: Նա կամակոր աղվկում էր՝ չստելով մորը, հեծկլտալով ու լալով: Տղան ավելի շուտ կմեռներ, քան ավտոբուս կնստեր, քանի որ ուզում էր, որ մայրն իր համար պաղպաղակ գնի: Մայրը փորձում էր հանգստացնել, համոզել նրան, բայց ապարդյուն: Նա ամեն գնով փորձում էր դուրս պրծնել մոր ձեռքից, վերջապես դա հաջողվեց, եւ թմբիկ ոտքերում որքան ուժ կար՝ վազեց դեպի ճամփեզրի խանութը: Մորը ոչինչ չէր մնում անելու, քան հետեւել նրան:

Երբ ավտոբուսը կանգառից մեկնեց, ես պատուհանի մոտ կանգնած՝ հետեւում էի մորն ու որդուն: Նրանց կերպարանքները հեռու սահեցին՝ ի վերջո անհետանալով ավտոբուսի ետեւում հյուսվող երթելեկի մեջ: Տեսարանն ինձ մի մտապատկեր էր ներշնչել, մի տարօրինակ, բայց ինչ-որ ձեւով համապատասխան ներշնչում...

Հանկարծ մտքովս անցավ, որ Հոնկոնգն ինչ-որ չափով երեխայի նման է, որը երկար տարիներ տնից հեռու է անցկացրել: Փոքր ժամանակ նրան առեւանգել է ավազակը, եւ նա ապրել է ավազակի հարուստ ու բարգավաճ ընտանիքում: Ավազակի խոսքերը բուն են դրել երեխա-

յի գլխում՝ դու մի մարդ ես, ով երկիր չունի: Դու «աշխարհի քաղաքացի» ես՝ համաշխարհային քաղաքացի, եւ պետք է ինձ քո հավատարմությունը հայտնես: Մանկան ենթագիտակցության մեջ մի պատկերացում է տպավորվել. հաճախ իր եւ իր նմանների մասին մտածել է, որ փոքրիկ նավակ են՝ նետված անսահման ծովը՝ առանց ճանապարհը ցույց տվող ուղեւորների եւ առանց տան, ուր կարող էին վերադառնալ: Տարիներ անց մանուկը վերջապես վերադարձել է իր մոր սիրալիք գիրկը: Բայց շատ երկար է տևից հեռու եղել, եւ մոր գրկախառնությունն այժմ տարօրինակ է իր համար, այլևս չի ճանաչում մոր բույրը, որ կլանվել է կրեմի ու սուրճի հոտերի մեջ:

Մոր բարի ու սիրալիք, թող որ ինչ-որ տեղ պարզ ու գեղջկական, մայրենի բարբառը վաղուց փոխարինվել էր օտար բառերով: Եվ երեխան, լսելով մոր հետ պատահած բոլոր սարսափելի բաների մասին, կասկածեց նրա զգվանքների ջերմությանը՝ չնայած նրա ողջ սիրուն եւ նվիրվածությանը: Երեխան կասկածում էր, թե արդյո՞ք մայրը կարող է իսկապես ընդունել իր անառակ զավակին, այն աստիճան, որ նա սկսեց իր մորը հակառակորդ համարել եւ սկսեց կարոտել ավագակի ընտանիքը: Եվ ամբողջ այդ ժամանակ այդ ավագակը, երեխաներ կողոպտողը, իր դավադիր համախոհների հետ դավեր էր կյուծում կուլիսների ետեւում եւ երեխային խոստումներ շնջում. «Փոքրիկս, ետ դարձիր ինձ մոտ: Մեր տունը միշտ բաց է քեզ համար: Դու միշտ կարող ես մնալ այնտեղ»:

Մեկուկես դար սպասելուց հետո Չինաստանի ժողովուրդը հասավ իր բաղձանքի կատարմանը՝ Հոնկոնգի վերադարձին: Եվ այդուհանդերձ, Հոնկոնգում դեռ ոմանք շարունակ ծածանում են գաղութային դրոշմը, շրջապատում կենտրոնական կառավարության հոնկոնգյան կապի գրասենյակը եւ այրում չինական դրոշմ ու չին-բրիտանական Համատեղ հռչակագիրը: Այդ գործողություններն ակնհայտորեն «ժողովրդավարության» եւ «ազատության» սահմաններից դուրս են, եւ նման պահվածքն առավել անհարիր է «աշխարհի քաղաքացի» կամ «համաշխարհային քաղաքացի» հասկացություններին: Դրանք, ավելի շուտ, անջատողականության քաղաքական դրդապատճառներով ուղղորդված գործողություններ են:

Ժողովրդավարությունը, ազատությունը եւ անջատողականությունը

## Չժան Ցավեն

բոլորն էլ հստակ սահմաններ ունեն: Այն քաղաքացիները, որոնք դժգոհ են կառավարությունից կամ նրանցից, որ իշխանության մեջ են, կամ նրանք, ովքեր իրենց պահանջներն ունեն այդ մարդկանցից, կարող են հենվել իրավական լուծումների վրա, արտահայտել իրենց տեսակետները, երթեր կամ գործադուլներ անել՝ իրենց պահանջները լսելի դարձնելու համար: Սրանք իրավունքներ են, որոնք տրվել են քաղաքացիներին ինչպես օրենքով, այնպես էլ մարդու՝ իրենց իրավունքներով, եւ առողջ միջոց են՝ ճնշելու կառավարություններին՝ հասարակության պահանջները բավարարելու համար: Պետք է միայն նայել զարգացած երկրներին, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ճապոնիան եւ եվրոպական որոշ երկրներ (ներառյալ Ռուսաստանը), տեսնելու համար, որ չկա մեկը, որ կարողանա շրջանցել այս իրավունքները: Բայց եթե ինչ-որ մեկը փորձում է արդարացնել իր ստվերային գործունեությունը «ժողովրդավարության» պատրվակով, ապա, ինչպես ասում են, դա թեյի բոլորովին այլ բաժակ է:

Այստեղ հիշում եմ ՉժՀ-ի ութսունքանի տարեկան մի բնակչի՝ այժմ Հարավային Կորեայում բնակվող Հան Շենգաոյի ասածը: 1995-ին ես ճանապարհորդեցի այդ երկիր՝ հարցազրույցներ վարելու նրա կենսագրության համար, որը գրում էի: Պարոն Հանն աներեակայելիորեն հայտնի է Հարավային Կորեայում եւ մինչ այդ արժանացել էր երկրի բարձրագույն քաղաքացիական պատվին: Իրադարձություններով հարուստ իր կյանքի ընթացքում նա շատ անգամ է կանգնել մահվան դեմահանդիման: Երբ տասնինը տարեկան էր, մայրցամաքային Չինաստանում հողային բարեփոխումների շրջափուլի ընթացքում սխալմամբ առանձնացվեց՝ որպես Գոմինդանի «հատուկ գործակալ», դատապարտվեց մահվան՝ իրական գործակալների հետ միասին, եւ մահապատժից առաջ փախավ Հարավային Կորեա: Դրանից հետո նա դարձավ էլիտար «հակակոմունիստ» եւ Չանի ընտանիքի ամենաբարձր մակարդակի լրտեսներից մեկը, որ եւ՛ հանդիպել, եւ՛ զովասանքներ էր ստացել անձամբ Չան Կայ-շիից: Հետագայում, իմանալով Գոմինդանի կոռումպացվածության մասին, նա դուրս եկավ քաղաքական շրջանակներից եւ սկսեց բժշկության ուսումնասիրման ծանր ու դժվարին գործընթացը՝ ի վերջո դառնալով Կորեայի նախագահի անձնական արտասահմանյան բժիշկը՝ սկսած Պակ Չոն Հիից:

Այն բանից հետո, երբ Ռո Դե-ուն 1988 թ.-ին հաղթեց Նախագահական ընտրություններում, Հանը նրա համար հարյուր հազարանոց հանրահավաք կազմակերպեց: Նույնն արեց Ռոյի իրավահաջորդ Կիմ Յոն-սամի համար՝ երեսուն հազարանոց հանրահավաք անցկացնելով: Արտասահմանյան հետախուզությունների շատ ծառայություններ, նրա տաղանդով հիացած, փորձում էին կաշառքների միջոցով օգտվել նրա, որպես հակակոմունիստ լրտեսի, ծառայություններից: Նա կտրուկ մերժեց բոլորին:

Նա ասում էր. «Խնդրում եմ, նույնիսկ չմտածեք ինձ գնել փորձելու մասին: Ծնողներս ինձ ողնաշար եմ տվել, մարմին եմ բնավորություն, բայց նրանք ինձ մարմնիս մի ոսկոր անգամ չեն տվել, որը պատրաստ լինի վաճառել իմ ժողովրդին: Ես չեմ պատրաստվում այդպիսի ստոր կամ արհամարհական բան անել՝ դավաճանել իմ նախնիներին»:

Ռո Դե-ուի՝ պաշտոն ստանձնելուց հինգ օր հետո նա Հանին շտապ կանչեց իր գրասենյակ՝ հանձնարարելով հատուկ առաքելությամբ մեկնել Չինաստան՝ որպես գաղտնի դեսպանորդ, ձգտելով կապ ստեղծել երկու երկրների միջև: Հանն անտեսեց ՉԿԿ-ի նկատմամբ իր նախկին ատելությունը եւ գաղտնի անցավ Շանդուն նահանգ: Երբ Կորեայում Թայբեյի առաքելությունն իմացավ Հանի առաքելության մասին, նրան հարցրին. «Հան Շենգաո, դուք աճել եք Գոմինդանի ակունքից խմելով, եւ այժմ աշխատում եք կոմունիստների համար: Մոռացե՞լ եք, արդյոք, ձեր ընտանիքին հասցրած վնասը, ձեր կնոջն ու երեխաներին տնանկ դարձնելը, մեկ օրում երեք-չորս մարդու սպանելը»:

Պարոն Հանն ի պատասխան որոտաց. «Լսե՛ք, ես հիշողության կորուստ չունեմ: Եվ ահա՛ թե ինչ. ես դա չեմ անում կոմունիստների համար: Ես դա անում եմ իմ ժողովրդի՛ համար: Ճիշտ եք, իմ ընտանիքից շատ մարդիկ մահացան: Ես հազիվ կարողացա իմ կյանքը փրկել: Առանձնակի սեր չեմ տաճում ո՛չ Գոմինդանի, ո՛չ ՉԿԿ-ի հանդեպ: Բայց իմ սերը հայրենիքիս հանդեպ երբե՛ք չի մեռնի: Հայրենիքի ուժեղ լինել-չլինելն ազդում է յուրաքանչյուր չին մարդու ճակատագրի, այդ թվում նաեւ մեր՝ արտերկրում գտնվողներին ճակատագրի վրա: Անկախ նրանից, թե որքան ուժեղ կդառնա Թայվանը, այն երբեք չի կարողանա փոխարինել Չինաստանին: Չինաստանի ժողովրդի եւ տարածքի ավելի քան իննսուն տոկոսը գտնվում է մայրցամաքում: Միայն մայրցամա-

## Չժան Յավեն

քային երկիրն ուժեղ լինելու դեպքում Չինաստանն իսկապես ուժեղ կլինի: Ես արդեն ծեր եմ և քայքայվում եմ, այլևս Էական ոչինչ չեմ կարող անել ադետից փրկված իմ հայրենիքի համար: Բայց եթե կարողանամ իմ ներդրումն ունենալ Կորեայի հետ նրա կապերն ամրապնդելու գործում, և այնպես անել, որ Չինաստանը մեկ թշնամի պակաս ունենա և մեկ բարեկամ ավելի, այդ դեպքում ի՞նչ թշնամանք կարող է լինել բարեկամների միջև: Եթե իմ ընտանիքի բոլոր անդամների մահը նպաստել է, որ չին ժողովուրդն ուժեղ լինի, ես կհամարեմ, որ նրանք երջանիկ են»:

«Առաքիլությունն ու արդարությունը գոյություն ունեն բազմաթիվ ձևերով՝ երկրի և երկնքի միջև»:

Պարոն Հանի մեջ ես տեսա մեկին, որն աշխարհի հանդեպ վեհ մոտեցում ուներ, լայնախոհ էր, անկանխակալ ու արդարամիտ, ազգայնական և մեծ մարդ:

«Աղքատ ընտանիքում ցանկալի է առաքիլի կին ունենալ, իսկ ճգնաժամի օրերին ազգը բարձրորակ գորավար է ցանկանում»: Հարյուր տարի առաջ չին ժողովուրդը ծնվում էր անվերջ պատերազմի և ադետի մեջ: Ամեն ընտանիք կորուստներ էր ունենում, լինեին դրանք «ծախ» ծայրահեղականները, որ սպանվում էին աջերի կողմից, թե պատերազմական կոտորածների գոհերը: Չինաստանի ներքին և արտաքին թուլության պատմությունն ավելի քան երկար է: Չինաստանի ժողովուրդն ստացել է ցավոտ դասերի իր բաժինը:

Իտալացի փիլիսոփա Բենեդետտո Կրոչեն մի առիթով գրել է. «Ամբողջ պատմությունը ժամանակակից պատմություն է»:

Եթե մոռանանք մեր անցյալը, ապա դա նշան կլինի այն բանի, որ մեր ազգն իսկապես մոռացկոտ է:



## Պատմությունը հայելի է

Հոնկոնգից մեկնելու և նախորդ գիշերը երկար ժամանակ զբոսնում էի Վիկտորիա պուրակի փոքրիկ ճանապարհներից մեկով՝ մտքերով տարված:

Արդեն ուշ էր, եւ զբոսաշրջիկները բոլորը վերադարձել էին իրենց հյուրանոցները: Թեթեւ քայլերով անցնում էի զբոսայգու ասֆալտապատ արահետներով: Ես ժամանակս անց էի կացրել քաղաքում՝ խորասուզված Հոնկոնգի անցյալի եւ ներկայի մեջ: Իմ գրողիս դերն է՝ մշտապես տեսողաշտումս պահել աշխարհը, մեր երկիրն ու Հոնկոնգը՝ կարոտով եւ հույսով առաջ նայելով դեպի մեր ազգի ապագան...

Ես հավատում եմ, որ Հոնկոնգի հանճարը չինական մշակույթի էության պահպանման մեջ է՝ միաժամանակ ներառելով Արեւմտյան քաղաքակրթությունը՝ իր ուրույն մշակույթն ստեղծելու համար: Իր անսկուն իմաստության շնորհիվ նա կարողացավ ընդգրկել Արեւմտյան մշակույթը՝ եզակի «Հոնկոնգյան մոդել» կերտելու համար: Այդ ընթացքում Հոնկոնգի ցուցաբերած հոգեմտավոր ամուր կերտվածքը չին ազգին բնորոշ ամենացայտուն առանձնահատկության օրինակ է: Մայրցամաքային Չինաստանին վերադառնալու եւ Չինաստանի կողմից «Մեկ երկիր, երկու համակարգ», «Հոնկոնգը ղեկավարում են հոնկոնգցիները» սկզբունքների իրականացման պահից Հոնկոնգն իր ուժեղ կողմերից,- տնտեսական, իրավական եւ մշակութային, - շատ բան բերեց մայրցամաքային Չինաստանին, ազատության եւ օրենքի գերակայության իր զորեղ գաղափարների հետ մեկտեղ: Բարեփոխման եւ Բաց քաղաքականության շրջանում գտնվող մայրցամաքային երկրի համար դա անկասկած բարիք էր: Հոնկոնգի համար, որ հույս ուներ լինել չին ազգի առաջամարտիկը, առաջատարի բեռն իր ուսերին վերցնելը չին ազգի ուժերի վերականգնման ու երիտասարդացման եւ Չինաստանը հզորացնելու մեծ գործի անբաժանելի մասն է: Հոնկոնգը նույնպես հույս ունի, որ մայրցամաքային Չինաստանը կարող է օտար մշակույթից քաղել լավագույնը եւ հաղթահարել իր իսկ ստեղծած կոռուպցիան, հակաօրինական գործողություններն ու չարաշահումները, այնպես որ, հնարավորինս շուտ, Չինաստանի ժողովուրդը կկարողա-

## Չժան Յավեն

ևս իրականություն դարձնել չինացիների երազանքը եւ ոտք դնել ազգային վերականգնման ու երիտասարդացման ճանապարհին:

Գեներալ Լյու Յաչժոուն ասել է. «Չինաստանի անդադար բարեփոխման դարաշրջան. արդյո՞ք դա չի եղել խաղաղության որոնում, ուժի եւ բարգավաճման որոնում: Հիմա, երբ հարմար պահ է մեզ համար, պետք է օգտվենք դրանից: Չենք կարող մեր ձեռքից բաց թողնել: Ի վերջո, ժողովրդի կյանքի տեսողությունը երկար է. այս հապճեպ քայլերն ամբողջ ճանապարհորդության մի կարճ մասն են լինելու միայն»:

Որքա՛ն ճիշտ են այս խոսքերը: Մի՞թե դա մեկ դար նվաստացման, դիմադրության, պայքարի միջով անցած ուժեղ ազգի երազանքը չէր, որին ձգտում էր չին ժողովուրդը:

Չինաստանի զարգացումը գրավել է ամբողջ աշխարհի ուշադրությունը: Իսկ նրա ժողովրդի կյանքն անցել է բուռն փոփոխությունների բովոյ: Եվ այդուհանդերձ, Չինաստանում դեռ հարյուր միլիոնից ավելի մարդ գյուղական բնակավայրերում ապրում է աղքատության մակարդակից ցածր կենսապայմաններում:

Չինաստանի վաղեմի հիմնախնդիրներից շատերը, ներառյալ բնակարանային, բուժօգնության, կրթության եւ սննդի անվտանգության խնդիրները, դեռ լուծված չեն:

Հարկ է նշել, որ 19-րդ դարի սկզբին աշխարհի ամենահարուստ երկիրը ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունը, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Ռուսաստանը կամ Իտալիան չէին. դա Չինաստանն էր: Նույնիսկ 1840 թվականին Չինաստանն աշխարհի ամենահարուստ երկիրն էր: Մեկ դար անց այն բաժանվում էր գաղութային տերությունների միջեւ՝ թողնելով միայն այրված երկրի բեկորներն ու միջնապատերը, որ պիտանի չէին մարդու կյանքի համար, ուր դեգերում էին զանազան աղետների զոհերը: Արտասահմանյան տերությունները հերթով ներխուժում էին Չինաստան՝ մեկը մյուսի ետեւից ստիպելով ազգին տարածք զիջել եւ «փոխհատուցում» տալ: Հարյուր տարվա ընթացքում Չինաստանի կառավարությունը օտարերկրյա տերությունների հետ ստորագրեց բոլոր ձեւերի եւ չափերի ավելի քան հազար անհավասար պայմանագրեր:

Այսպիսով, այժմ, այդ դարի կանչը, բարեկամի հետ անսպասելի հանդիպման պես, հնչում է միտք ու խոհերով ծանրաբեռնված իմ գլխում:

Ուզում եմ ասել, որ պատմությունը հայելու է նման: Այն արտացոլում է անցյալի մեր օրերը եւ դրանց նախորդած բոլոր օրերը, ճիշտ այնպես, ինչպես արտացոլում է ժողովրդի ուժեղ եւ թույլ կողմերը: Նրանք, ովքեր մոռանում են անցյալի իրենց օրերը, մոլոր ու կորուսյալ՝ կթափառեն այսօրվա մեջ:

Այդ դարի կանչն ինձ նախազգուշացնում է. աշխարհը մի վայր է, որտեղ ուժեղներն ուտում են թույլերին: Երկչտոների վարձը հարձակումների ենթարկվելն է: Թույլերի վարձը ահաբեկչության եւ սպառնալիքի ենթարկվելն է: Հինավուրց ժամանակներից մինչ օրս մարդկային ցեղը, կրկին ու կրկին, վերապրել է այս պնդման անհերքելի ճշմարտությունը:

Այսպիսով, այժմ, այս գիշեր, նախքան Հոնկոնգից մեկնելու, այդ դարի կանչը հնչում էր իմ այս՝ այլեւս ոչ երիտասարդ սրտում:

Համաձայն «China Economic Weekly» եւ «Phoenix Weekly» շաբաթաթերթերում ներկայացված հրապարակման, որ վերնագրված էր «Վտանգավոր հարեաններ Հարավչինական ծովում», «Բաց ծովերում Չինաստանի իրավունքներն ու շահերը բախվում են չորս խնդրի՝ տարածքային ջրերի բաժանում, ներխուժում կղզի եւ խութեր ու դրանց գրավում, ռեսուրսների թալան եւ սպառնալիքներ անվտանգությանը»:

Հրապարակման մեջ նշվում էր, որ այսօրվա դրությամբ Հարավչինական ծովը շրջապատող երկրները փորել են 1 380 նավթահոր, եւ որ աշխարհի բոլոր խոշորագույն նավթային ընկերությունները ձգտում են բաժնեմաս ունենալ: Հարավչինական ծովի ռեսուրսները կորցնելը կնշանակեր կորցնել Չինաստանի նավթային պաշարների մեկ երրորդը:

Վերջին երեք տարիներին Վիետնամը, Մալայզիան, Ֆիլիպինները, Բրունեյը եւ Ինդոնեզիան բոլորն սկսել են շահագործել Հարավչինական ծովը՝ ափամերձ ջրերից հետետողականորեն առաջ գնալով դեպի ծովի խորքերը: Այս հինգ երկրներն արդեն պայմանագրեր են կնքել ավելի քան երկու հարյուր արեւմտյան նավթային ձեռնարկությունների հետ՝ 1 380 նավթահորի հորատանքք բացելով՝ ամեն տարի ավելի քան հիսուն միլիոն տոննա նավթ արդյունահանելու համար: Սա համարժեք է այն քանակին, որ արդյունահանվում էր Չինաստանի Հեյլունցզյան նահանգի հյուսիս-արեւելքում գտնվող Դանցին քաղաքի նավթահորերից՝ արտադրության գազաթնակետի ժամանակ:

Հարցազրույցի ժամանակ ժողովրդական-ազատագրական բանա-

## Չժան Ցավեն

կի ռազմական գիտությունների ակադեմիայի գործողությունների տեսության եւ ուսմունքների հետազոտության բաժնի գիտաշխատող, գեներալ-մայոր Յզան Չունյանն ասաց, որ Սփրաթի կղզիների շրջայում Վիետնամը գրավել է քսանինը կղզիներ կամ խութեր, իսկ Ֆիլիպինները եւ Մալայզիան գրավել են համապատասխանաբար ինը, եւ Բրունեյն ու Ինդոնեզիան՝ մեկական: Մալայզիան եւ Ինդոնեզիան Սփրաթի կղզիների հարավային մասերում նավթի եւ գազի շահագործման ամենամեծ շահառուներն են եղել: Մինչդեռ Չինաստանը Սփրաթիներում մեկ նավթահոր իսկ չունի: Այդ երկրները լրջորեն ունահարել են Չինաստանի ինքնիշխանությունը եւ Սփրաթիներում մեր ունեցած իրավունքներն ու շահերը. մի փաստ, որը մենք բուռն կերպով բողոքարկման ենթարկեցինք: Մեր հարցազրույցի վերջում Յզյանն ասաց, որ ժողովրդական-ազատագրական բանակի նավատորմի եւ Չինաստանի ընդհանուր զենքի ուժը բավարար են Սփրաթիներում պաշտպանելու մեր իրավունքներն ու շահերը: Եթե վերելից հրաման իջնի, ասաց նա, մենք կգործենք արագ եւ ամենայն կարգուկանոնով, որպեսզի դրանք գործարկենք՝ պաշտպանելու համար մեր երկրի իրավունքներն ու շահերը Հարավչինական ծովում եւ իրականացնելու երկիրը պաշտպանելու կարեւոր առաջադրանքներ, ինչպես նաեւ պաշտպանելու չին ժողովրդի մեծ վերականգնումն ու երիտասարդացումը:

Ես քիչ բան եմ հասկանում քաղաքականությունից կամ ռազմական գործերից կամ մեր երկրի արտաքին քաղաքականությունից: Ես միայն կարող եմ խոսել սովորական մարդու ձայնով իմ անտեղյակության մասին: Ես չեմ հասկանում՝ երբ բոլոր այդ երկրները, որ վերջին երեսուն տարիների ընթացքում շարք են կանգնել Հարավչինական ծովի շուրջը՝ բոլորը՝ ազահորեն նայելով, շահագործել են նրա պաշարները՝ առանց դույզն-ինչ վարանելու եւ անհարմար զգալու, ինչո՞ւ Չինաստանի կառավարությունը համապատասխան միջոցներ եւ գործողություններ չի ձեռնարկել: Ինչո՞ւ չի կանգնել՝ հասատակամորեն պաշտպանելու Չինաստանի ինքնիշխանությունը:

Հարկ է նկատի ունենալ. Հոնկոնգն ավելի քան հարյուր հիսուն տարի գրավված էր Մեծ Բրիտանիայի կողմից, եւ այն հեշտությամբ ետ չբերվեց: Նույնիսկ հիմա, չնայած այն բանին, որ Հոնկոնգի նկատմամբ ինքնիշխանությունը ետ է նվաճվել, նրա բնակիչների սրտերը դեռ չեն

վերադարձել Չինաստան: Կամ ի՞նչ ասել ցարական Ռուսաստանի կողմից բռնագավթված՝ Բլագովեշենսկում եւ նրա շրջակայքում «վաթսունչորս գյուղերի» մասին, որոնց հազարավոր չին բնակիչներ իրենց մահը գտան Ամուր կամ, ինչպես Չինաստանում են ասում, «Նյուլոնցգայան գետում: Դրանք ետ չեն բերվի: Ճապոնիան ավելի շուտ կմահանար, քան կազատվեր Դյաոյոյ կղզիներից, որոնք անկասկած Չինաստանի տարածք են:

Համացանցում, որպես մեջբերում, շրջանառվում է ԱՄՆ նախկին պետքարտուղար Հիլարի Քլինթոնից մի հրապարակում՝ կանխատեսում Հարվարդում ունեցած ելույթի ժամանակ: Նա ասում է, որ քսան տարի անց Չինաստանը կդառնա երկրագնդի վրա ամենաաղքատ երկիրը: Քլինթոնը ներկայացնում է մի շարք հիմնավորումներ, որոնց թվում նաեւ այն, որ չին պաշտոնյաների ընտանիքների իննսուն տոկոսը եւ նրա միլիոնատերերի ութսուն տոկոսը կ'ամ դիմել էին արտագաղթելու համար, կ'ամ մտածում էին դա անել: Արտագաղթելիս նրանք իրենց հետ հսկայական հարստություն էին վերցնում:

Համացանցում շրջանառվում է մեկ այլ հրապարակում՝ Euro-Pacific Capital-ի նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրեն Փիթըր Շիֆի խոսքը, թե ինչպես հրապարակայնորեն ընդունում է, որ Միացյալ Նահանգները երբեք չի մարելու Չինաստանի հանդեպ ունեցած իր 376,3 միլիարդ ԱՄՆ դոլարի պարտքը: Շիֆն ասում էր. «Նրանք մեզ դա [այդ փողը] վարկ են տվել, եւ մենք պատրաստվում ենք վերադարձնել: Այժմ դա մեծ զոհողություն կպահանջի մեր կողմից: Ինչ-որ մեկը կարծում է, որ մենք պատրաստվում ենք դա անել: Ի՞նչ, ծաղրո՞ւմ եք ինձ: Գիտե՞ք, թե ինչ ենք պատրաստվում ասել չինացիներին: Մենք պատրաստվում ենք ասել. «Դուք, տղերք, գիշատիչներ եք: Գիշատիչ վարկատուներ: Մեզ անհրաժեշտ է փոփոխման ծրագիր: Դրա համար մեզ պետք է համախմբո՞ւմ: Երբեք չպետք է մեզ պարտք տայիք այդ ամբողջ գումարը, գիտեք, որ չենք կարող վերադարձնել: Դա մեր մեղքը չէ՛»: Նրա ելույթից ամբոխը ծիծաղից պայթեց:

Բայց անկախ այն բանից, թե արդյո՞ք Քլինթոնի կանխատեսումը պարզապես նրա կողմից խուճապ տարածելու արդյունք է, եւ անկախ այն բանից՝ արդյո՞ք Շիֆի խոսքը ճշմարիտ էր, թե ոչ, մի բան անվիճելի է. Միացյալ Նահանգները չին արտագաղթողների առաջին ընտրու-

## Չժան Ցավեն

թյունն է, հսկայական քանակությամբ չինական հարստություն ստացողը, ու նաեւ Չինաստանից 376,3 միլիարդ ԱՄՆ դոլարի վարկ ստացողը:

Շատ տարիներ առաջ արտաքին ուժերը բաժանեցին Չինաստանը, կերան մեր մարմինը եւ խմեցին մեր արյունը, նրանք այրեցին, հողին հավասարեցրին Հին ամառային պալատը եւ թալանեցին չինական մշակութային անթիվ թանկարժեք մասունքներ: Հետո շրջվեցին եւ խտրականության ու ծաղրուծանակի ենթարկեցին մեզ, նրանց նախագահները մեզ որպես օրինակ էին բերում՝ իրենց ժողովրդին սովորեցնելու համար, թե ինչպես չպետք է դեկավարվեն երկրները:

Դեռ այն օրերին «օտար սատանաներ»<sup>\*</sup> կային, ովքեր ապրուստ էին վաստակում Չինաստանի ձեռքի տակ: Նրանք ապրում էին Չինաստանում, ուտում էին մեր կերակուրը, խմում էին մեր ըմպելիքը, իրենց հետ տանում էին տասնյակ հազարավոր մշակութային մասունքներ եւ գրում հողված հողվածի ետեւից՝ քննադատելով Չինաստանը, զրպարտելով ու նսեմացնելով մեր երկրի ամենաուժեղ կողմերը: Իր անավարտ գործերից մեկում, որ կոչվում է «Ալ դրոշների տակ», գրող Լաո Շեն գրել է միականջանի մի ամերիկացու մասին, որ խրատում է իր քույրերից մեկի որդուն, որն աշխատում է Պեկինում որպես միսիոներ. «Բարբարոսական երկրում, որքան շատ լինեն վերահսկողությունից դուրս բաներ, այնքան ավելի լավ կլինի մեզ համար: Եթե նրանք իսկապես դուրս գան վերահսկողությունից, մենք գորքեր կկանչենք: Ուրեմն անհանգստանալու ի՞նչ ունեք: Եթե խելագար ոչինչ չպատահի, ապա դուք ընդամենը մեկ կամ երկու միջադեպ կստեղծեք: Իսկապե՞ս պատրաստվում եք խուսափել դրանից: Դուք քայքայում եք մեր հովվական ոգին: Ես ձեզ խաղաղություն չեմ մաղթում: Հուսով եմ, որ ամբողջ աշխարհը դժոխք կգնա»:

Այսպիսի մարդիկ պարզապես ուզում են տեսնել, որ աշխարհն այրվում է, եւ յուրաքանչյուրը նույնքան վատն է, որքան նախորդը: Անկախ նրանից՝ դա անցյալն է թե ներկան, իրենք միսիոներներ են թե բարձրաստիճան պաշտոնյաներ, նրանք բոլորն էլ պարզապես խաղում են նույն հոգնած, չար ու կործանարար հնարքները՝ շահարկելով հասարակական կարծիքը, հարվածելով ՉԼՄ-ների միջոցով՝ ստոր ու պիղծ

<sup>\*</sup> Օտարներին խարանող ստորացուցիչ բնորոշում:

ծնով փորձելով քննադատել ու վատաբանել Չինաստանը, զրպարտելով Չինաստանը՝ աղմուկ բարձրացնելով «Չինաստանի սպառնալիքի» մասին: Հետո հեզկալից ծիծաղում են, թե ինչպես Չինաստանը չի հասկանում «խաղի կանոնները», երբ այդ, այսպես կոչված, «կանոնները» ոչ այլ ինչ են, քան խորամանկ հնարք, որ սրանք միշտ կիրառում են, որպեսզի իրենցից բացի ոչ ոք չշահի:

Չեմ կարծում, թե վախենալու բան ունենք որեւէ մեկից, ով վատաբանում է Չինաստանը կամ զրպարտում: Ամենակարեւորն այն է՝ արդյո՞ք իսկապես ուժեղ ու հզոր ենք, թե՞ ոչ, արդյո՞ք Բարեփոխման եւ Բաց քաղաքականության գործընթացում այս առանցքային պահին կարող ենք ողջամտորեն համապատասխան դասեր քաղել հարյուր տարվա նվաստացումներից: Մենք կարող ենք ինքներս մեզ թույլ տալ՝ ընկղմվել կույր ու ինքնագոհ լավատեսության մեջ. միայն մենք կարող ենք ինքներս մեզ հաղթել: Սա է ամենակարեւորը:

«Ծաղկել եւ զարգանալ աղետ ու թշվառության մեջ եւ կործանվել փափուկ ու հեշտին կյանքի մեջ»:

Այս դարի կանչն արթնացրել է ոչ միայն Չինաստանի անցյալը, այլ նաեւ սրա ներկան եւ ապագան:

«Չինական երազանքի» մասին ելույթում Սի Յզինպինս ասել է. «Չին ժողովրդի կրած տառապանքը ժամանակակից պատմության մեջ եւ սրա զոհաբերության մեծությունը հազվադեպ պատահող մի բան են համաշխարհային պատմության մեջ: Չինաստանի ժողովուրդը երբեք տեղի չի տվել, երբեք չի դադարեցրել իր ոգեղեն պայքարը եւ այժմ իր ճակատագրի վերահսկողության տերն է դարձել: Նա սկսել է իր երկիրը կառուցելու մեծ նախագիծը եւ լիուպի դրսեւորել է իր ազգային մեծ ոգին՝ իր հիմքում հայրենասիրությամբ տոգորված:

Այժմ, քան երբեւէ, մենք ավելի մոտ ենք չին ժողովրդի մեծ վերականգնմանն ու երիտասարդացմանը, որն ավելի վստահ է, քան պատմության ցանկացած այլ պահի եւ ավելի ունակ է իրականացնելու այս նպատակը: Պատմությունը մեզ ասում է, որ յուրաքանչյուր մարդու ճակատագիրը, յուրաքանչյուր մարդու ներուժը սերտորեն կապված է իր ժողովրդի ճակատագրի եւ ներուժի հետ: Եթե երկիրը լավ է, եթե սրա ժողովուրդը լավ է, միայն այդ դեպքում կարող են բոլորը լավ լինել: Չին ժողովրդի մեծ վերականգնումն ու երիտասարդացումն իրականություն

## Զժան Յավեն

դարձնելը ծանր եւ դժվարին, փառավոր խնդիր է: Մի խնդիր, որ պահանջում է չին ժողովրդի սերունդների միահամուռ, համատեղ ջանքը: Դատարկ խոսակցությունը վնասում է երկիրը, մինչդեռ ծանր աշխատանքը ծաղկեցնում է ազգը...

Չին ժողովրդի զավակները, որոնք ապրում են մեր մեծ դարաշրջանում, մեր մեծ հայրենիքում, բոլորը վայելում են իրենց ներուժը գիտակցելու համատեղ հնարավորությունը, բոլորը վայելում են իրենց երազանքներն իրականացնելու համատեղ հնարավորությունը եւ բոլորը վայելում են դարաշրջանի ու իրենց երկրի հետ միասին աճելու եւ զարգանալու համատեղ հնարավորությունը: Ոչինչ սահմանափակված չէ այն ժողովրդի համար, որ ունի երազանքներ, հնարավորություններ եւ դրանց ձգտելու, դրանց համար մաքառելու կամք ու պատրաստակամություն: Այդ ժողովրդի համար բոլոր գեղեցիկ բաները հնարավոր են: Չինաստանի բոլոր ժողովուրդները պետք է հիշեն մեր առաքելությունը: Նրանց սրտերը եւ ջանքերը բոլորը պետք է ուղղվեն նույն առաջադրանքի կատարմանը: Չինաստանը պետք է կենտրոնանա 1,3 միլիարդ մարդու ուժն ու իմաստությունը օգտագործելու եւ միավորելու վրա՝ ստեղծելու համար անպարտելի, ոգետրող մի ուժ»:

Ահա ինչու եմ հիմա այսքան պարզ աղաղակում, որովհետեւ այսքան խորն եմ սիրում դժբախտության մեջ թաղված այս երկիրը:

Եթե իմ հարձակումները դաժան են, միայն այն պատճառով է, որ սաստիկ սիրում եմ խորապես դժբախտ այս երկիրը, որովհետեւ այդքան սուր եմ զգում նրա ցավը:

Եթե ձայն եմ տալիս ի լուր բոլորի, այն պատճառով է, որ իմ նախնիներն իրենք են կրել բեռը՝ պարտված ազգի ստրուկները...

Վերջում պետք է իմ սրտանց մաղթանքները հղեմ հայրենիքիս, որ նրա մեծ վերականգնումն ու երիտասարդացումը շուտով իրականանան, եւ ուժեղ երկիր դառնալու երազանքը կյանքի կոչվի:

Հոնկոնգին նույնպես մաղթում եմ մեծ բարգավաճում եւ ներդաշնակ միասնություն:

*Գիրքն ավարտին է հասցվել 2013 թվականի մայիսի 15-ին, Պեկինում:*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	5
<b>ԳԼՈՒԽ 1</b>	
<b>ՉԻՆ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՐԿԱՐ ՈՒ ԴԺՎԱՐԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	
Պատմության կանչն արթնացնում է ազգի քնած հոգին .....	7
«Հոնկոնգը Մալվինները չէ, Չինաստանն էլ Արգենտինան չէ» .....	20
Մահվան շեմին էլ կա մտածում էր Հոնկոնգը ետ բերելու մասին .....	29
Դժվարին եւ լարված բանակցությունների քսաներկու փուլ .....	35
Ծեր հոր զգուշացումն իր որդուն .....	42
Հոնկոնգի «հազարամյակի հանգագործի» թաքուն դրդապատճառները .....	62
Աշխարհի ամենաերկար, ամենադժվարին, ամենաբարդ բանակցությունները .....	75
Հարյուր հիսուն տարվա կոչն իրականանալիս .....	96
<b>ԳԼՈՒԽ 2</b>	
<b>ՀԱՅՐԵՆԻՔՆ  ՈՒԺԵՂ Է, ԶԱՆԻ ՈՐ ԻՆՉ ՈՒՆԻ:</b>	
<b>ՀՈՆԿՈՆԳՆ  ՈՒԺԵՂ Է, ԶԱՆԻ ՈՐ ԻՆՉ ՈՒՆԻ</b>	
Փող, կանայք եւ մշտական փորձություններ .....	103
Գետափին կանգնած՝ առանց կոշիկները ցեխոտելու .....	111
Առեղծվածային «Գինու բաժակ» շենքի ներսում .....	121
Հայրենիքն ուժեղ է, քանի որ ինձ ունի:	
Հոնկոնգն ուժեղ է, քանի որ ինձ ունի .....	129
<b>ԳԼՈՒԽ 3</b>	
<b>ԱՌՅՈՒԾԻ ԺԱՅՈՒ ՏԱԿ. ՀՈՆԿՈՆԳԻ ՊԱՅՔԱՐԻ ՈՐԻՆ</b>	
Ինչ ժառանգեց Տուն Չի-հուան իր հորից .....	133
Միլիոնատերերն ունե՞ն արդյոք «Ղա Վինչիի ծածկագիր» .....	142
«Երկկուսակցական» ձեռնարկատիրական զույգ .....	149
Ծանոթություն Չեն ժանի՝ Լյուն Չուն-Ինի գրասենյակի տնօրենի հետ .....	154
Դրախտ՝ պայքարողների, դժոխք՝ պարտվողների համար .....	158

**ԳԼՈՒԽ 4**  
**ԼՈՒՌ ՍԵՐ, ՄԱՔՈՒՐ ԶԳԱՑՍՈՒՆՔՆԵՐ**  
Ցան Հին-չին ինձ ստիպեց արտասվել ..... 163  
«Մեկ նպատակ ունեմ՝ ամբողջ կյանքումս փոխհատուցել  
հայրենիքիս պարտքը» ..... 168  
Բարեգործություն աղքատների հանդեպ. հոնկոնգյան ավանդույթ ..... 174  
Տարեց զույգի բարեգործությունը ..... 180  
Ճարտարագիտության պրոֆեսորի ողորմածությունը ..... 183  
Բարեգործության արմատները ..... 187

**ԳԼՈՒԽ 5**  
**ԿՈՐՈՒՄՅԱԼ ՏԱՐԻՆԵՐ ԱՐՏԱՌՈՑ ԿՅԱՆՔԻՑ**  
Հոնկոնգյան բոլոր ժամանակակից վերաբնակիչների ճգնաժամը ..... 193  
Տիու Կին Լենի տարօրինակ, սարսափելի ավանդությունը ..... 195  
Ինչու ներում ստացած մի մարդ, որին թույլ էին տվել  
վերադառնալ Թայբեյ, չկարողացավ ..... 199  
Երեսուն տարի հարազատներից բաժանված, երեսուն տարի՝  
լարված սպասման մեջ ..... 225

**ԳԼՈՒԽ 6**  
**ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ ՀՈՆԿՈՆԳՈՒՄ. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ,  
ՄՇԱԿՈՒՅՈՒ, ԼՐԱՏՎԱՍԻՏՈՑՆԵՐ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**  
Բժշկական ապահովագրություն եւ հիվանդանոցներ ..... 251  
Ցածր հարկերով սոցիալական ապահովության համակարգ..... 259  
Անվտանգ սնունդ ..... 261  
Ազատ լրատվամիջոցներ ..... 263  
«Շաուիլի տաճարի» ռեժիսորի իրական պատմությունը ..... 267  
Ծեր ձկնորսը եւ նրա երկու ֆիլիպինցի սպասուհիները ..... 269  
Հոնկոնգի ցնցող «վանդակ-տները» ..... 272

**ԳԼՈՒԽ 7**  
**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԱՔՈՒՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.**  
**ԴԺՎԱՐԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

Ոչ մի հատուկ արտոնություն գլխավոր գործադիրի համար .....	281
Հոնկոնգի մարմինը քաղցկեղի պես քայքայող կոռուպցիան .....	284
Նահանգապետի կենսագ-մահու ընտրությունը .....	288
Հոնկոնգի պաշտոնյաների գլխին կախված դամոկլյան սուրը .....	292
Կոռուպցիայի վատթարացումը վտանգում է կուսակցությունը եւ երկիրը .....	299
Նահատակի բանաստեղծություն, մահից առաջ թողած գրություն, ուշացած զոջում .....	303
Մի մեծ, պատմական առաքելություն .....	306

**ԳԼՈՒԽ 8**  
**ԻՆՉԻ՞ ԵՆ ՄԵՋ ԿՈՉՈՒՄ ԱՆՑԱԾ ԴԱՐԵՐԸ**

Նվաստացում եւ դիմադրություն .....	313
Ընդհանուր արյուն, ընդհանուր հաղթանակներ .....	319
Դուք ոչ թե ազգային դրոշն եք այրում, այլ չին ժողովրդի արժանապատվությունը .....	325
Ի՞նչ է մեզ ասում «ՎիքիԼիքսը» .....	330
Պատմության բեռը կրող Հոնկոնգը .....	334
«Ամբողջ պատմությունը ժամանակակից պատմություն է» .....	346
Պատմությունը հայելի է .....	353

ՉԺԱՆ ՅԱՎԵՆ

## ԴԱՐԵՐԻ ԿԱՆՉԸ

Ստորումներ Հոնկոնգի մասին.  
իրական պատմություն

Անգլերեն տարբերակից թարգմանեց  
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Գիրքը չիևարենից անգլերեն է թարգմանել  
Մաթ ՇՐԱԴԵՐԸ

Յրատ. խմբագիր՝ Յ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան  
Էջադրումը՝ Թ. Յարությունյանի  
Կազմի ձեռավորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 23 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Յ. Յակոբյան 25

**«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010  
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012  
«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,  
Վ.Խոդասեւիչ/ - 2012  
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռուբինշտեյն/ - 2014  
Հենրիխ Սապգիր. «Չուգահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռվությունը.  
մետամետաֆորիստներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավվածքը»- 2015  
Անդրեյ Պլատոնով. «Չեւեւգուր. Գուրբ.  
Պատմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015  
Մա Բայ. «Մրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեից պատասպարվող թռչունը» - 2016  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.  
Փախուստ դրախտից» - 2016  
Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016  
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո  
պատմությունը» - 2016  
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Մեր. երջանկություն.  
նեքվիեմ» - 2016  
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016  
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»  
(անթրոլոգիա) - 2016  
Ռուս մինիմալիստներ (անթրոլոգիա) - 2016  
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղալականությունը,  
դաստիգմը, քրիստոնեությունը եւ չինական  
մշակույթը» - 2016  
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016  
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017  
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017  
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017  
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 4) - 2017  
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» - 2017  
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017  
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017  
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017  
Սյաո Յյան. «Վիշապի սորոքներն ընդդեմ  
նախագծերի» - 2017

Ուան Յուլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017  
Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադելը» - 2018  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 5) - 2018  
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018  
Մարտիրոս Ռբն. «Մոմերն իզուր են այրվել  
մեղքերիս համար» - 2018  
Ռեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-  
թյունները: Չինաստանի համաշխարհային  
ժառանգությունը»- 2018  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 6) - 2018  
Ադի ձայնը (20-րդ դարի հետադարձական թվականների  
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019  
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 7) - 2019  
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020  
Յերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

[www.vogi-nairi.am](http://www.vogi-nairi.am)  
Էլ. հասցե՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)  
հեռ.։ +374 97252323